



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

297

2-90

4920

ան ժամակներն Լոս-Անջելոսի շինութիւնքս
այնպէս կէցա՞նք՝ Արսակաւնէն հոգիացա՞նք...

Հ. Թոմասյան

Երբ աստուծոյ անկէն զիստակէն
անպիտան հասն աստուծոյ շինքս...

Արամանյան

Ու շարեւէն - հեղու-թյամբ Լցված
Թնայաստիկ խոցված Տիրամայր...

Ա. Տերյան

2010

... աստուծոյ շինքս կաստուծոյն
... Լոս-Անջելոսի անկէն...

Չ կամեցաւ . Աստուծո՛ւ . Ես՝

Ինչպէս իցի Բացի

Ոչ Գոյո՛ւ-Բոյո՛ւն՝ ինչպէս Գեթ կայսր

Ե

Եվ իջերն էմ շրջո՛ւմ մեր անկարար սիրո՛ւ .

Ինչպէս Հազարացոյալն՝ Ավարարանն իր ո՛ւ

Պ

Այրվելէն այսպէս Գաճարներ ի մէջ . Բայց չէն՝

Ավարացոյս ուրիշ Արդանի նման Հայէն մնա

Հ

Ես ուզո՛ւմ էի Բանաստեղծո՛ւմ .

30

2001




1002

1002
1002

Գրոյ Հարկէտի Աճրովք առջ:

97
L-96




ԹԱՐԳՄԱՆԸ
Արարեբէնից Հայկ. Գր.

✠ Ա.Բ.Բ. Ա.Մ.Ի.Ր.Ի.Ա.Ն.Ե.Ա.Ն.Յ ✠

3557612

2012




Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Տպ. Տպրի Թօսորով և Ընկ.
1909

41434. vol.

15015

24268-60



1) ՍՈՒՐԷՆԻ ՖԱԹԻԼԷԹ ԻՒԼ ՔԻԹԱՊ

Մէքքէական. եօթը այէ

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Փառք լինի Աստուծուն, աշխարհքների Տիրոջը:
2. Գթած ողորմածին.
3. Դատաստանի օրւայ Տիրոջը:
4. Քեզ պաշտում ենք եւ քեզ օգնութեան ենք կանչում
5. Մեզ առաջնորդիք ուղիղ ճանապարհովը.
6. Նրանց ճանապարհովը, որոնց շնորհք ես արել.
7. Ոչ թէ բարկութեան արժանացածների, ոչ էլ ճողորւանների ճանապարհով:

2) ՍՈՒՐԷՆԻ ԲԱԳԱՐԱ

Մէգինէական. երկու հարիւր ութսուն վեց այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Մ. Սա այն գիրքն է, որի մէջ կասկած չըկայ. երկու դարերի համար ուղեցոյց է:
2. Որոնք հաւատում են աներեւոյթին, ու աղօթքը կատարում, ու ինչ իրանց աւել ենք, նրանից ողորմութիւն են տայիս.
3. Եւ որոնք հաւատում են այն բանին որ վար է իջեցրել քեզ, ու նրան որ քեզնից առաջ է վար իջեցրել ու հանդիքձեալի ժասին համոզւած են:
4. Նրանք իրանց Տիրոջ կողմանէ ուղիղ առաջնորդութեան վրայ են, ու նրանք երջանիկ են:
5. Իսկ նրանք որ չեն հաւատում, միեւնոյն է նը-

բանց համար, թէ՛ նրանց երկիւղ տաս թէ՛ նրանց երկիւղ չը տաս, չեն հաւատայ:

6. Աստուած նրանց սրտերի վրայ կնիք է դրել, նաեւ նրանց լսելիքի վրայ, ու նրանց տեսանելիքների վրայ ծածկոց կայ ու նրանց համար մեծ տանջանք կայ:

7. Եւ կան մարդկանցից որ ասում են, «մենք հաւատում ենք Աստուծուն ու վերջին օրւան», բայց նրանք չեն հաւատում:

8. Նրանք խարում են Աստուծուն ու նրանց որ հաւատում են. բայց նրանք միայն իրանց անձերն են խարում ու չեն հասկանում:

9. Նրանց սրտերումը ախտ կայ. ուրեմն Աստուած էլ նրանց աւելացնում է ախտը եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ նրա համար որ սուտ են ասում:

10. Եւ երբ նրանց ասում է, թէ երկրի մէջ ապականութիւն մի՛ գործէք. ասում են, «մենք միմիայն առաքինութիւն անողներ ենք»:

11. Ահա՛ նրանք ապականիչներ են, բայց չեն հասկանում:

12. Եւ երբ նրանց ասում է, թէ «հաւատացէք ինչպէս մարդիկը հաւատում են», ասում են «արդեօ՞ք հաւատանք ինչպէս որ յիմարներն են հաւատում»: Ահա՛ իրանք են յիմարները, բայց չը գիտեն:

13. Եւ երբ հանդիպում են հաւատացողներին, ասում են, «մենք հաւատում ենք». բայց երբ առանձնանում են իրանց աստանաների մօտ, ասում են, «մենք ձեզ հետ ենք, մենք միայն ծաղր ենք անում»:

14. Աստուած ծաղր է անում նրանց եւ շարունակ պահում է նրանց իրանց ապստամբութեան մէջ շրփոթւած:

15. Նրանք են որ ուզիղ առաջնորդութիւնը տալով ծախու առել են մոլորութիւնը. բայց իրանց առուտուրը օգուտ չէ բերել, եւ իրանք չեն առաջնորդուել:

16. Նրանց օրինակը նման է նրան, որ կրակ վառեց, եւ երբ լուսաւորեց նրա շորս կողմը, Աստուած

հանգցրեց նրանց լոյսը եւ թողեց նրանց խաւարի մէջ,
որ չը տեսնեն:

17. Խո՛ւլ, հա՛մբ, կո՛յր, եւ նրանք ետ չեն դառ-
նում:

18. Կամ ինչպէս մի փոթորիկ երկնքից որի մէջ
խաւար եւ որոտմունք եւ կայծակ կայ: Նրանք մրրկի
պատճառով մահից վախենալով իրանց մատերը իրանց
ականջների մէջ են կոխում, բայց շրջապատում է ան-
հաւատներին:

19. Քիչ է մնում որ փայլատակմունքը նրանց աչքի
լոյսը տանի. ամեն անգամ որ փայլատակում է նրանց
համար, նրանում գնում են, եւ երբ նրանց վրայ մրթ-
նում է կանգնում են: Եւ եթէ Աստուած ուզէր, կառ-
նէր նրանց լսելիքը եւ տեսնելիքը, որովհետեւ Աստ-
ուած ամենակարող է: Ո՛վ մարդի՛կ՝ պաշտեցէք ձեր Տի-
ըոջը որ ձեզ եւ ձեզնից առաջ «եղածներին» ստեղծել
է որ երկիւղած լինէք:

20. Նա է որ երկիրը ձեզ համար անկողին է շինել
եւ երկինքը շինութիւն, եւ երկնքիցը ջուր է իջե-
ցրել եւ նրանով պտուղները հանել, որ ձեզ համար
սնունդ լինի: Ուստի Աստուծուն նմանութիւններ մի
չինէք. որովհետեւ դուք գիտէք:

21. Եւ եթէ դուք կասկած ունէք այն բանի վրայ,
որ մենք վար ենք իջեցրել մեր ծառային, ուրեմն դուք
էլ նրա նման մի սուրէ բերէք եւ կանչեցէք բացի
Աստուածանից ձեր վկաներին, եթէ ճշմարիտ էք:

22. Բայց եթէ չ'անէք, եւ չէք էլ անի, ուրեմն վա-
խեցէք այն կրակիցը, որի վառելիքը մարդիկն են եւ
քարերը, պատրաստած անհաւատների համար.

23. Եւ աւետիք տուր նրանց որ հաւատում եւ բա-
րի գործեր են անում, թէ նրանց համար դրախտներ
կան. որոնց տակովը գետեր են հոսում: Եւ ամեն անգամ
երբ նրանցից մի պտուղով կերակրում են իբրեւ կե-
րակուր, ասում են «սա այն է որ առաջ էլ սրանով կե-
րակրում էինք». եւ նրանց նմանը տրում է նրանց.

և նրանց համար նրանցում մաքուր կնիկներ կան, և նրանք յաւիտեան նրանց մէջ կը մնան:

24. Իրաւ Աստուած չի ամաչի, որ մտեղ և նրանից վեր մի բան իբրև առակ բերէ: Իոկ նրանք որ հըւատում են, գիտեն, որ ճշմարիտ է իրանց Տիրոջ կողմից. իսկ նրանք որ անհաւատ են, ասում են՝ «Ի՞նչ է ուզում Աստուած այս առակով»: Եւ նրանով շատերին մոլորեցնում և նրանով շատերին էլ ուղիղ առաջնորդում է: Սակայն նա նրանով միմիայն չարագործներին է մոլորեցնում:

25. Նրանք, որ Աստուծոյ ուխտը դրժում են նրա պայտանից յետոյ, ու կարում են ինչ որ Աստուած պատւիրել է որ նրանով կապեն. և երկրի մէջ ապակաւնութիւն են գործում, նրանք են մնասողները:

26. Դուք ի՞նչպէս էք Աստուծուն ուրանում, մինչդեռ դուք մեռած էիք և նա ձեզ կենդանացրեց յետոյ ձեզ պիտի մեռցնէ յետոյ կենդանացնէ. յետոյ նրան պիպի դառնաք:

27. Նա է, որ երկրի վրայ եղածը բոլորը ձեզ համար ստեղծեց ու յետոյ երկնքի վրայ հաստատեց, ու շինեց եօթը երկինքը ու նա գիտէ ամեն բան:

28. Եւ երբ քո Տէրն ասաց հրեշտակներին թէ «ես երկրի վրայ մի փոխանորդ եմ շինում», նրանք ասացին, «նրա վրայ կը շինես արգեօ՞ք նրան որ նրանում ապականութիւն անէ ու արիւն թափէ մինչդեռ մենք քո օրհնութիւնն ենք երզում ու քեզ սուրբ փառաւորում»: Նա էլ ասաց, «ես գիտեմ այն, որ դուք չը գիտէք»:

29. Եւ նա սովորեցրեց Աղամին բոլոր անունները, յետոյ ներկայացրեց նրանց հրեշտակներին ու ասաց, «ինձ իմացրէ՛ք սրանց անունները եթէ ճշմարիտ էք»:

30. Նրանք էլ ասացին, «Սուրբ ես, մենք գիտութիւն չ'ունենք բացի նրանից, որ դու մեզ սովորեցրիր, ահա՛ դու ես գիտունը իմաստունը»:

31. Նա ասաց, «ո՛վ Աղամ, սրանց իմացրու նրանց

անուանները»: Եւ երբ նա էլ նրանց իմացրեց նրանց անուաններն ասաց, «ես չասացի ձեզ, թէ ես գիտեմ երկինքների եւ երկրի գաղտնիքը եւ գիտեմ ինչ որ յայտնում էք եւ ինչ որ ծածկում էք»:

32. Եւ այն ժամանակ մենք առացինք հրեշտակներին, «երկրպագութիւն արէք Ադամին»: Եւ երկրպագութիւն արեցին բացի սատանայից, որ մերժեց եւ հրապարտացաւ եւ անհաւատներինն եղաւ:

33. Եւ ասացինք, «ո՛վ Ադամ, ընալուի՛ր դու եւ կինդ դրախտի մէջ, եւ կերէ՛ք նրանից ըստ հաճոյից ուր էլ ուզէք, բայց այս ծառին չը մօտենաք, որովհետեւ անիրաւներիցը կը լինէք»:

34. Բայց սատանան նրանց այնտեղից սահեցրեց եւ հանեց այնտեղից ուր էին: Եւ մենք ասացինք, «վա՛ր ընկէք, մէկը միւսին թշնամի. եւ ձեզ համար երկրի վրայ կայան եւ վայելուունք կայ մինչեւ մի ժամանակ»:

35. Եւ Ադամ իր Տիրոջ խօսքերը ընդունեց եւ դէպի նրան դարձաւ. որովհետեւ նա դարձող ողորմածն է:

36. Մենք ասացինք, «վա՛ր ընկէք այնտեղից ամենքըդ. բայց իմ կողմանէ ձեզ համար առաջնորդութիւն է գալու, եւ ով որ իմ վրայ առաջնորդութեանս հետեւէ, նրանց վախ չի լինի եւ նրանք չեն տրտմի»:

37. Իսկ նրանք որ անհաւատ են եւ մեր նշանները սուտ են համարում, — նրանք կրակի ընկերներ են, նրանք յաւիտեան կը մնան նրանում:

38. Ո՛վ Իսրայէլի որդիք յիշեցէք իմ շնորհքը, որ ձեզ շնորհեցի, եւ իմ ուխտը վճարեցէ՛ք եւ ես կը վճարեմ ձեր ուխտը, եւ ինձնից վախեցէ՛ք, եւ հաւատացէ՛ք այն բանին որ ես վար եմ իջեցրել որ հաստատում է ձեր մօտ եղածը, եւ մի լինիք նրան չ'հաւատացողների առաջինը եւ փոքր գինով ծախէք իմ նշանները, եւ ինձնից վախեցէ՛ք:

39. Եւ ճշմարտութիւնը մի՛ շփոթէք փուճ բանին հետ. քանի որ դուք գիտէք:

40. Եւ կատարեցէ՛ք աղօթքը ու տւէ՛ք մաքրու-
թեան տուրքը եւ ծնրադրողների հետ ծունր դրէք:

41. Մի՞թէ մարդկանց արդարութիւն կը հրամայէք,
բայց ձեր անձերը կը մոռնաք, նրբ դուք գիրքը կար-
դում էք. մի՞թէ չէք հասկանում:

42. Եւ օգնութիւն խնդրեցէ՛ք համբերութիւնով
եւ աղօթքով. իրաւ նա մեծ բան է, բայց ոչ թէ խո-
նարհողների նամար:

43. Որոնք կարծում են թէ իրանց Տիրոջը կը դի-
մաւորեն, եւ նրանք ետ պիտի դառնան դէպի նրան:

44. Ո՛վ Իսրայէլի որդիք, յիշեցէ՛ք իմ շնորհքը որ
ձեզ շնորհեցի, եւ Լս ձեզ գերազանց արեցի աշխարհք-
ներից վեր:

45. Եւ վախեցէ՛ք այն օրից, որ մի անձ միւս անձի
տեղ մի բան տուգանք չի տայ եւ նրանից բարեխօսու-
թիւն չընդունի, եւ նրանից ի արդարութիւն չառնի
եւ նրանց օգնութիւն չը լինի:

46. Եւ երբ ձեզ ազատեցինք Փարաւօնի ժողովրդից
որ ձեզ չար տանջանքներով չարչարում էին, ձեր տը-
ղաներին մորթելով եւ ձեր կնիկներին ողջ պահելով,
— եւ սրանում ձեր մեծ Տիրոջ կողմից մի պատուհաս
կար—:

47. Եւ երբ ձեզնով ծովը ձեզ քեցինք եւ ձեզ փրո-
կեցինք՝ Փարաւօնի ժողովուրդը ընկղմեցինք, մինչդեռ
դուք նայում էիք:

48. Եւ երբ Մովսէսի հետ ուխտ էիք դնում քառա-
սուն գիշեր, այնուհետեւ դուք որթը ընդունեցրիք նրա-
նից յետոյ, եւ դուք անիրաւներ էիք:

49. Մենք էլ սրանից յետոյ ձեզ ներեցինք, որ շը-
նորհակալ լինէք:

50. Եւ երբ Մովսէսին տեցինք գիրքը ու ֆուրկա-
նը որ առաջնորդ էիք:

51. Եւ երբ Մովսէսն ասաց իր ժողովրդին, «ով
իմ ժողովուրդ, ահա՛ դուք ձեր անձերին անիրաւու-
թիւն արեցիք, որ որթն ընդունեցիք, ուրեմն դարձէք

ձեր Արարչին եւ սպանեցէք ձեր անձերը. սա բարի է ձեզ համար ձեր Արարչի մօտ. այն ժամանակ նա կը դառնայ դէպի ձեզ. որովհետեւ նա դարձող ողորմածն է:

52. Եւ երբ դուք ասացիք, «ո՛վ Մովսէս, մենք քեզ բնաւ չենք հաւատայ. մի՛նչեւ որ ակնյայտնի չը տեսնենք Աստուծուն», եւ փոթորիկը ձեզ վեր առաւ մի՛նչ-դեռ դուք նայում էիք:

53. Յետոյ մենք ձեր մեռնելուց յետոյ ձեզ յարու-թիւն տւեցինք, որպէսզի շնորհակալ լինէք:

54. Եւ ամպը ձեր վրայ շուք շինեցինք, եւ ձեր վըրայ իջեցրեցինք մանանան եւ լորաւարգին, «կերէ՛ք բարիքներից որ ձեզ տւեցինք ի կերակուր եւ մենք անիրաւութիւն չենք արել, այլ իրանք էին իրանց անիրաւութիւն անում:

55. Եւ երբ ասացինք, «մտէ՛ք այս գիւղը. եւ կերէ՛ք նրանից ուր ուզէք ըստ հաճոյից, եւ մտէ՛ք զոնովը երկրպագելով եւ ասէք «հիթթաթուն» եւ մենք կը ներենք ձեր սխալները եւ աւելին կը տանք բարեգործ-ներին:

56. Այն ժամանակ նրանք, որ անիրաւութիւն էին անում, փոխեցին իրանց ասած խօսքը մի ուրիշի, եւ այն անիրաւութիւն անողների վրայ պատուհաս ուղարկեցինք երկնքից նրա համար որ չարագործել էին:

57. Եւ երբ Մովսէս իր ժողովրդի համար ջրի մասին աղօթք արեց. մենք ասացինք, «գաւազանովդ զարկի՛ր քարին. եւ նրանից տասներկու աղբիւրներ վաղեցին, այնպէս որ արդէն ամեն մարդ իր խմելիքը գիտէք, «կերէ՛ք եւ խմեցէ՛ք Աստուծոյ կերակրիցը եւ չարու-թիւն անելով մի՛ տարածուիք երկրի երեսին»:

50. Եւ երբ ասացինք, «ո՛վ Մովսէս, մենք միայն մէկ կերակրով բնաւ չենք կարող դիմանալ. ուրեմն Տիրոջը խնդրի՛ր մեզ համար, որ մեզ համար հանէ այն բաներիցը որ երկիրը բուսեցնում է, կանաչեղէնիցը

ու վարունգիցը եւ սսպիցր եւ ստիսիցը»։ Մի՞թէ դուք ստորը նրա հետ կը փոխէք որ աւելի լաւ է։ Վա՛ր գնացէք Եգրպոսս. ա՜նա՛ ձեզ համար կայ ինչ որ ուզեցիք։ Եւ նրանց վրայ ինկաւ տառապանքը եւ թշուառութիւնը, եւ նրանք Աստուծոյ պատժին եկան։ Սա այն պատճառով էր, որ Աստուծոյ նշաններին չէին հաւատում եւ սպանում էին մարգարէներին առանց իրաւունքի։ Սա նրա համար էր, որ ապստամբութիւն արեցին եւ թշնամութիւն էին անում։

59. Իրաւ նրանք որ հաւատում են, եւ նրանք որ Հրէայ են եւ Նազովրեցիք եւ Սարէացիք, որ հաւատացել են Աստուծուն եւ վերջի օրւան եւ բարիք են գործում նրանց վարձքը իրանց Տիրոջ մօտ է, եւ նրանց վրայ վախ չըկայ եւ նրանք չեն տրտմի։

60. Եւ երբ ձեր ուխտն ընդունեցինք եւ սարը ձեր վրայ բարձրացրեցինք, «ընդունեցէ՛ք ինչ որ ձեզ տեւել ենք ուժով, եւ յիշեցէ՛ք ինչ որ նրանում կայ, որպէս զի երկիւղած լինէք»։

61. Յետոյ նրանից ետքը դուք ետ դարձաք։ Բայց եթէ Աստուծոյ շնորհքը եւ նրա ողորմութիւնը չը լինէր, դուք անպատճառ վնասուողներիցը կը լինէիք. սակայն դուք արդէն ճանաչում էք ձեզնից այն մարդկանց, որ շարաթը պղծեցին, եւ մենք նրանց ասացինք «կապիկներ դառէ՛ք, կորէ՛ք»։

62. Եւ մենք այս արեցինք, որ նրա առաջին եւ նրա ետին լինողներին համար խրատ եւ երկիւղածներին համար քարոզ լինի։

63. Եւ երբ Մովսէս ասաց իր ազգին, թէ «Աստուած ձեզ հրամայում է, որ մի կով գոհէք». նրանք էլ ասացին «արդեօ՞ք դու մեզ ծաղրում ես». ասաց, «Աստուած մի արասցէ, որ ես տգէտներիցը լինեմ». ասացին «մեզ համար աղօ՛թք արա քո Տիրոջը որ մեզ բացատրէ թէ նա ինչ է». ասաց, «ասում է, որ նա

ոչ պատաւ կով լինի եւ ոչ նորահաս, այլ միջահասակ լինի սրանց մէջտեղը. ուրեմն արէ՛ք ինչ որ ձեզ հըրամայլում է»:

64. Նրանք ասացին. «աղօթք արա մեզ համար քո Տի ոջը, որ մեզ բացատրէ թէ նրա գոյնը ինչ է». ասաց թէ ասում է, «նա մի դեղին կով է կարմիր գոյնով. որ զւարձացնում է նայողներին»:

65. Նրանք ասացին, «աղօթք արա մեզ համար քո Տիրոջը, որ մեզ բացատրէ, թէ դա ինչպիսի կով պիտի լինի. որովհետեւ մեզ համար կովերը իրար նման են, եւ մենք եթէ Աստուած կամենայ՝ հնազանդողներ ենք»:

66. Նա էլ ասաց թէ «ասում է, դա մի այնպիսի կով է որ երկիրը հերկելով եւ արտերը ջրելով տկարացած չէ, առողջ է, եւ նրանում մի պակասութիւն չըկայ»: Նրանք ասացին, «հիմայ ճամարտութիւնով եկար» եւ նրան գոհեցին, եւ քիչ չէր մնացել որ չ'անէին.

66. Եւ երբ դուք մի անձ սպանէք եւ այդ մասին վիճէք, այն ժամանակ Աստուած դուրս կը բերէ այն, ինչ դուք ծածկել էիք:

68. Այն ժամանակ մենք ասացինք, «նրան զարկեցէ՛ք նրա մի մասովը»: Աստուած այսպէս կենդանացնում է մեռածներին եւ ցոյց է տալիս ձեզ իր նըշանները, որ մտածէք:

69. Յետոյ նրանից ետքը պնդացան ձեր սրտերը՝ եղան ինչպէս քար եւ է՛լ աւելի պինդ, որովհետեւ քարեր կան որ նրանցից գետեր են բղխում, եւ այնպիսին էլ կայ որ ձեզքւում է, ջուր է դուրս գալիս, եւ այնպիսին էլ կայ, որ Աստուծոյ երկիւղիցը վար է ընկնում. ուրեմն Աստուած անգէտ չէ ձեր արածի մասին:

70. Արդեօ՞ք փափագում էք որ նրանք ձեզ հաւատան: Բայց նրանցից արդէն մէկ մասը լսել էին Աստուծոյ խօսքը. սակայն նրա հասկանալուց յետոյ նը-

բան ծոռւմ են թէեւ գիտեն:

71. Եւ երբ հանդիպում են հաւատացողներին, ասում են «մենք հաւատում ենք»․ բայց երբ միմեանց հետ առանձնանում են, ասում են «դուք մի՛թէ կը պատմէք նրանց այն բաները որ Աստուած ձեզ յայտնել է, որ ձեր Տիրոջ մասին ձեզ հետ վիճարանեն․ մի՛թէ չէք հասկանում»:

72 Բայց մի՛թէ չը գիտեն, որ Աստուած գիտէ նրանց թաքցրածը եւ յայտնածը:

73. Նրանցից ոմանք ազէտներ եւ գիրքը չը գիտեն բացի առասպելներից․ եւ նրանք միայն կարծում են․ ուրեմն վա՛յ նրանց, որ իրանց ձեռքերովը գրում են գիրքը ու յետոյ ասում, թէ «սա Աստուծոյ կողմիցն է», որպէս զի գրանոյ մի քիչ վարձք չահեն: Ուրեմն վա՛յ նրանց այն բանի համար, որ նրանց ձեռքերը գրում են, եւ վա՛յ նրանց իրանց վաստակածի համար:

74. Եւ նրանք ասում են, թէ «կրակը մեզ միայն մի քանի օր է դպչելու»: Ասա՛, «դուք Աստուծոյ հետ պայման էք արել, որ Աստուած իր պայմանը երբէք չի կտորի․ կամ Աստուծոյ մասին ա՞յն էք խօսում որ չը գիտէք»:

75. Այո՛, ով որ չարութիւն է գործում եւ նրա յանցանքները նրան չըճապատում են, նրանք կրակի ընկերներ են, եւ նրանում կը մնան յաւիտեան:

76. Իսկ նրանք որ հաւատում եւ եւ բարիքներ գործում, նրանք դրախտի ընկերներն են, եւ նրանում կը մնան յաւիտեան:

77. Եւ երբ Իսրայէլի որդիներէցը ուխտ առեցինք, թէ բացի Աստուածանից մի բան չը պաշտէք ու բարիքներ արէ՛ք սնողներին եւ ազգականներին եւ որբերին եւ խեղճերին եւ մարդկանց հետ քաղցր խօսեցէ՛ք եւ աղօթքը կատարեցէ՛ք եւ մաքրութեան տուրքը տէ՛ք այն ժամանակ ետ դարձաք բացի ձեզնից եւ մի քանիսից, եւ դուք հակառակեցիք:

78. Եւ երբ ձեզնից ուխտ առեցինք թէ ձեր արիւնը չի թափէք, եւ ձեզ չ'աքսորէք ձեր երկիրներէցը: այն

ժամանակ դուք խօսք տւեցիք եւ վկաներ էիք:

79. Բայց յետոյ դուք այն մարդիկը եղաք, որ ձեզնից մարդիկ էիք սպանում եւ ձեզնից մի քանիներին ձեր երկիրները աքսորում, նրանց դէմ օգնում էիք դուք իրար յանցանքով ու թշնամութիւնով, եւ եթէ գալիս են ձեզ մօտ իրրեւ գերիներ, նրանց փրկում էիք թէեւ սա ձեզ համար արգիլւած էր, այսինքն նրանց աքսորելը: Մի՞թէ դուք գրքի մի մասը հաւատում էք եւ մի մասը ուրանում: Եւ ի՞նչ է ձեզնից այն անձի պատիժը որ այս բանը գործում է, եթէ ոչ նախատինք այս աշխարհքի կեանքում եւ դատաստանի օրումը, նրանք ամենասաստիկ պատիժը կը կրեն: Եւ Աստուած անգէտ չէ այն բանի մասին, որ դուք գործում էք:

80. Նրանք որ այս աշխարհքի կեանքը հանդերձեալ կեանքովը ծախու առնում են, նրանցից պատիժը չի թեթեւացնւի, եւ նրանց օգնութիւն չի լինի:

81. Բայց մենք արդէն տւեցինք Մովսէսին գիրքը, եւ նրանից յետոյ ուղարկեցինք մարգարէներին եւ տւեցինք Մարիամի որդի Յիսուսին հրաշքները եւ նրան զօրացրեցինք Հոգով Սրբով. եւ ամեն անգամ որ ձեզ մի մարգարէ էր գալիս այն բանով, որ ձեր անձերին հաճելի չէր լինում, դուք հպարտանում էիք. դուք մի քանիսին սուտ էիք համարում եւ մի քանիսին սպանում:

82. Եւ նրանք ասացին, «Մեր սրտերն անթլիատ են»: Սակայն Աստուած նրանց անիծեց իրանց անհաւատութեան պատճառով, եւ քիչերն էին որ հաւատում էին:

83. Բայց երբ Աստուծոյ կողմից նրանց համար մի գիրք եկաւ, որ իրանց մօտ եղածը հաստատում էր, եւ իրանք էլ առաջուց անհաւատներ էր դէմ յաղթութիւն էին խնդրում երբ իրանց գիտեցածն եկաւ, նրանք ուրացան նրան, Աստուած էլ անհաւատներին անիծեց:

84. Մի վաս բանի ծախեցին իրանց հողինսրը որ Աստուծոյ վար իջեցրածին դէմ ապտամբելով անհաւատ եղան. որ Աստուած իր շնորհքովը իր ծառաներից ուզածին բան է իջեցնում. եւ բարկութեան վրայ բարկութեան հասան: եւ անհաւատներին համար խայտառակ տանջանք կայ:

85. Եւ երբ նրանց ասում է, թէ «հաւատացէ՛ք այն բանին որ Աստուած իջեցրել է», ասում են «մենք հաւատում ենք այն բանին որ Աստուած մեզ համար է իջեցրել»: եւ նրանից զատ մնացեալն ուրանում են. բայց նա ճշմարիտ է, հաստատում է նրանց մօտ եղածը: Եւ ինչո՞ւ համար էիք սրանից առաջ Աստուծոյ մարգարէներին սպանում, եթէ դուք հաւատացեալներ էիք:

86. Եւ երբ ձեր ուխտը ընդունեցինք եւ սարը ձեր վրայ բարձրացրեցինք, «ընդունեցէ՛ք ինչ որ ձեզ տ. ել ենք ուժով եւ լսեցէ՛ք». ասացին, «լսեցինք եւ ապրտամբեցինք»: Եւ իրանց անհաւատութեան պատճառով խմեցրին որթը նրանց սրտերի մէջ, Ասա՛. «վատ բան է այն, որ ձեր հաւատքը ձեզ հրամայում է, եթէ դուք հաւատացեալներ էք»:

88. Ասա՛, «եթէ ձեզ համար մի ուրիշ տուն լինէր Աստուծոյ մօտ միւս մարդկանցից տարբեր, այն ժամանակ մահը կը վաժիպէիք, եթէ ճշմարիտ էք»:

89. «Բայց դուք բնաւ եւ յաւիտեան նրան չէք փափագում այն բաների պատճառով, որ ձեր ձեռքերը կանխաւ գործել են եւ Աստուած գիտէ չարագործներին»:

90. Եւ դու անպատճառ կը տեսնես, որ նրանք աւելի շատ են ծարսում կեանքի քան թէ մարդիկ եւ քան թէ հեթանոսները. նրանցից մէկն ուզում է հազար տարի ապրել. բայց նա պատժիցը չի պրծնի, եթէ հազար տարի էլ ապրելու լինի. եւ Աստուած տեսնում է թէ նրանք ինչ են անում:

91. Ասա՛, «ով որ թշնամի է Գարբիէլին, որ նա է իջեցրել Աստուծոյ հրամանով նրան քո սրտի մէջ որ հաստատում է իրանից առաջ եղածը, եւ ուղիղ առաջ-

նորոգութիւնն եւ շահաբեր է հաւատացեալներին համար» :

92. Ով որ թշնամի է Աստուծուն եւ հրեշտակներին եւ նրա մարգարէներին եւ Գարբրիէլին ու Միքայէլին ահա՛ Աստուած անհաւատներին թշնամի է» :

93. Եւ մենք քեզ արդէն յայտնի նշաններ ենք իջեցրել, եւ ոչ ոք նրան չէ ուրանում բացի չարագործներէց :

94. Եւ քանի անգամ էլ նրանք ուխտ են դնում, նրանցից մի մաս մերժում է նրան, եւ մեծ մասը չէ հաւատում :

95. Եւ երբ Աստուծոյ կողմից նրանց մի մարգարէ եկաւ հաստատում է նրանց մօտ եղածը, նրանցից մի մասը, որ սուրբ գիրք է տրւած իրանց : Աստուծոյ գիրքը մերժեցին՝ գցեցին իրանց կոնակի հասելը իբր թէ չեն հասկանում :

96. Եւ հետեւում են այն բանին, որ սատանաները կատարում էին Սողոմոն թագաւորին, բայց Սողոմոնը անհաւատ չէր այլ անհաւատ էին սատանաները, որ մարդկանց սովորեցնում էին կախարդութիւնն եւ այն բանը որ վար իջեցրեց Բաբելոնում եղող երկու հրեշտակներին՝ Հարութին եւ Մարութին, որ այդ երկուսը ոչ ոքի բան չէին սովորեցնում, մինչեւ որ չ'ասէր «մենք իրաւ փորձանք ենք», ուրեմն անհաւատ մի՛ լինիր : Եւ նրանցից այն բանն էլ սովորեցին, որով այր ու կին բաժանուում են իրարից. բայց նրանք ոչ ոքի Պեօս չեն, տայ եթէ Աստուծոյ կամքը չը լինի : Եւ նրանք սովորեցնում էին այն ինչ որ ասում էր նրանց եւ օգուտ չէր բերում նրանց, եւ արդէն գիտէին, թէ ով որ այն ծախու առնէ, նա հանդերձեա լումը բաժին չունի, անպատճառ վատ բան էր ինչ որ իրանց հոգիները ծախելով առնում էրն . ո՛հ թէ հասկանային :

97. Եւ եթէ հաւատային եւ երկիւղած լինէին Աստուածանից լաւ վարձք կը լինէր . ո՛հ թէ հասկանային :

98. Ո՛վ հաւատացեալներ, մի՛ ասէք «բառնա» այլ

ասացէք «անզուրնա» եւ լսեցէ՛ք. եւ անհաւատներին համար ցաւալի տանջանք կայ:

99. Սուրբ Գրքի ժողովրդից անհաւատ եզոզները եւ կռապաշտները չեն ուզի, որ ձեր Տիրոջից ձեր վրայ մի բարիք իջնէ. բայց Աստուած իր ողորմութիւնը յատկացնում է ում որ ուզում է, եւ Աստուած մեծ շնորհաց տէր է:

100. Ինչ որ մենք Ղուրանից մի տուն ոչնչացնում կամ մոռանում ենք, նրանից աւելի լաւը կամ նրանմանը կը բերենք: Մի՞թէ չը գիտես որ Աստուած ամենակարող է:

101. Մի՞թէ չը գիտես, որ երկինքների եւ երկրի իշխանութիւնը Աստուծուն է, եւ դուք բացի Աստուածանից ոչ պաշտպան եւ ոչ օգնող չունիք:

102. Կամ ուզո՞ւմ էք ձեր մարգարէից էլ պահանջել այն, ինչ որ առաջ պահանջւեց Մովսէսից: Եւ ով որ հաւատքը փոխէ անհաւատութեան, նա արդէն մոլորւած է ուղիղ ճանապարհիցը:

103. Սուրբ Գրքի ժողովրդից շատերը ճշմարտութիւնը նրանց յայտնելուց յետոյ իրանց մէջ նախանձ ունենալով ուզեցին, որ դուք հաւատք ստանալուց յետոյ անհաւատ դառնաք, բայց դուք ներեցէ՛ք եւ մեղմ վարեցէ՛ք մինչեւ որ Աստուած իր պատէրը տայ, որովհետեւ Աստուած ամեն բանի կարող է:

104. Եւ աղօթքը կատարեցէ՛ք եւ մաքրութեան տուրքը վճարեցէ՛ք, եւ ինչ բարիք որ ձեր հոգիների համար առաջուց ուղարկէք, Աստուծոյ մօտ կը դանէք. որովհետեւ Աստուած տեսնում է ինչ որ անում էք:

105. Եւ նրանք ասում են, թէ բնաւ մէկը դրախտը չի մտնի, եթէ նա չի լինի Հրեայ կամ Քրոսոտնեայ: Այդ նրանց բաղձանքներն են: Ասա՛, «բերէ՛ք ձեր ապացոյցները, եթէ ճշմարիտ էք»:

106. Այո՛, ով որ իր երեսը Աստուծուն ուղղէ, նա բարեգործ է, եւ նրա վարձքը Տիրոջ մօտ է, եւ նրանց համար վախ չըկայ եւ նրանք չեն տրտմի:

107. Եւ հրեաներն ասում են, թէ քրիստոնեաները մի բանի վրայ չեն. եւ քրիստոնեաներն էլ ասում են, թէ հրեաները մի բանի վրայ չեն, թէ եւ նրանք կարգում են գիրքքը: Նոյնպէս էլ նրանց ասածի պէս ասում են նրանք, որ չգիտեն: Բայց Աստուած կը վճռէ այն բանը, որի մասին նրանք անհամաձայն են, յարութեան օրը:

108. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան նա որ արգելում է Աստուծոյ երկրպագութեան տեղերում նրա անուան յիշելը եւ աշխատում է նրանց քանդել նրանք իրաւունք չ'ունին նրանց մէջը մտնելու առանց երկիւղածութեան: Նրա համար այս աշխարհքում նախատինք, եւ նրանց համար հանդերձեալում մեծ տանջանք կայ:

109. Եւ Աստուծուն է արեւեքլը եւ արեւմուտքը: Դէպի որ կողմ էլ որ դառնաք, այնտեղ է Աստուծոյ երեսը որովհետեւ Աստուած ամենուրեք ամենագէտ է:

110. Եւ ասում են թէ Աստուած որդիներ է ընդունել, Աստուած մի արասցէ: Երկնքներումը եւ երկրի վրայ ինչ որ կայ նրանն է. ամէնքը հլու են նրան:

111. Երկնքների եւ երկրի արարիչն է. երբոր նա մի բան է վճռում խկոյն որ ասում է, «եղիբ», լի-նում է:

112. Եւ նրանք որ չը գիտեն, ասում են, թէ «ինչու համար Աստուած ինքը չէ խօսում մեզ հետ, կամ մեզ մի հրաշք գար»: Նրանցից առաջ եղողներն էլ են այնպէս խօսել, ինչպէս նրանց խօսքերը. դրանց սրբտերը նման են միմեանց: Մինք արդէն նշաններ ենք յայտնել համոզում ունեցող ժողովրդին:

113 Մենք քեզ իրաւի ուղարկել ենք իբրեւ աւետիք առող եւ երկիւղ առող: Եւ քեզ չեն հարցնի զժոխքի ընկերների մասին:

114. Եւ հրեաներն ու քրիստոնեաները քեզնից գոհ չեն մնայ, մինչեւ որ գու նրանց կրօնքին հետեւես: Դու ասա՛, «իրաւ Աստուծոյ առաջնորդութիւնն է առաջնորդութիւն. եւ եթէ քեզ գիտութիւն զալուց յետոյ նրանց քմահաճոյքներին հետեւես, այն ժամանակ

24268-60

96
3555
8001

քեզ համար ո՛չ պաշտպան կայ ո՛չ օգնող :

115. Նրանք, որոնց մենք տուել ենք զիրքը ուղիղ ընթերցանութիւնով են նրան կարգում, նրանք հաւատում են նրան, եւ ով որ չը հաւատայ նրան, նրանք փնտաւածներն են :

116. Ո՛վ Իսրայէլի որդիք, յիշեցէ՛ք իմ շնորհքը որ ձեզ շնորհեցի որ ես ձեզ աշխարհքներից վեր դասեցի :

117. Եւ վախեցէ՛ք մէկ օրիցը, որ մի անձ միւս անձի տեղ մի բան տուգանք չը տայ, եւ նրանից արդարութիւն չ'ընդունուի, եւ նրանց մի բարեխօսութիւն օգուտ չ'անի, եւ նրանց օգնութիւն չը լինի :

118. Եւ եբք Աբրահամին փորձեց իր Տէրը խօսքերով, եւ նա նրանց կատարեց, այն ժամանակ՝ տասց. «ես քեզ մարդկանց համար առաջնորդ եմ դրկում» : Նա էլ ասաց, «բայց իմ սերունդիցը ի՞նչ» : Ասեղծողն է ասաց, «իմ ուխտն անիրաւներին չէ վերաբերում» :

119. Եւ եբք մենք տունը ժողովքի տեղ եւ ապաստանարան շինեցինք, եւ Աբրահամի տեղ աղօթատեղի շինեցինք եւ Աբրահամին ու Իսրայէլին ուխտ արեցինք, որ իմ տունը պտոյտ անողների եւ այնտեղ նստող ու ծունր գնողների եւ երկրագողների համար մարբին :

120. Նոյն ժամանակ Աբրահամ ասաց, «ո՛վ իմ Տէր, այս վայրը ապահովացրո՛ւ եւ պտուղներովը կերակրի՛ր նրա ժողովուրդը, ով որ նրանցից հաւատայ Աստուծուն եւ վերջի օրուան» : Նա էլ ասաց, «բայց ով որ չը հաւատայ, նրան էլ վայելել կր տամ մի քիչ, սակայն յետոյ կը յանձնեմ նրան կրակի տանջանքին, եւ սա մի տատանելի ընթացք է» :

121. Եւ եբք Աբրահամը բարձրացրեց տան հիմքի եւ Իսրայէլը, ասացին, «ո՛վ մեր Տէր, բնդունի՛ր մազանից որովհետեւ դու լսող ամենազէտ ես» :

122. Ո՛վ մեր Տէր, եւ մեզ քեզ անձնատուր շինի՛ր եւ մեր սերնդիցն էլ քեզ համար մի անձնատուր ժողովուրդ, եւ ցոյց տուր մեզ մեր արարողութիւնները,

ևւ դէպի մեզ դարձի՛ր. որովհետեւ դու դարձող ողորմածն ես» :

123. «Ո՛վ մեր Տէր, եւ նրանց մէջը իրանցից մի մարդարէ ուզարկի՛ր որ քո նշանները նրանց համար կարդայ. եւ նրանց ուսուցանէ գիրքը եւ իմաստութիւնը եւ նրանց մաքրէ, որովհետեւ դու հզօր լիմաստուն ես» :

124. Եւ ո՞վ է որ զգուէ Արքանամի կրօնքից եթէ ոչ նա, որի անձը յիմար է : Մենք նրան արդէն այս աշխարհքում ընտիր գտանք, եւ անա հանդերձեալումն էլ նա արդարներիցն է :

125. Երբ նրա Տէրն ասաց նրան, «անձնատուր եղիր», ասաց, «ես աշխարհքների Տիրոջը անձնատուր չեմ եղել» :

126. Եւ Արքանամ կտակեց այդ իր որդկանցը եւ Յակոբին, «ո՛վ բրդիքս, անա Աստուած ձեզ համար ընտրել է կրօնքը, ուրիմն դուք չը մեռնէք մինչեւ որ անձնատուր (մի սլիմներ) չը լինիք :

127. Կամ դուք լկայ էիք, երբ Յակոբ մահառեւծ էր, երբ նա ասաց իր որդկանց «ի՞նչ պիտի պաշտէք այսուհետեւ» : Նրանք էլ ասային, «մենք պաշտում ենք քո Աստուծուն, եւ քո հայրեր՝ Արքանամի, Իսմայէլի եւ Իսահակի Աստուծուն, մէկ Աստուծուն, եւ մենք անձնատուր (ժուսլիմներ) են նրան» :

128. Գնացել է արդէն այս ազգը. նրան կը լինի ինչ որ շահել է, եւ ձեզ էլ կը լինի ինչ որ դուք էք շահել, եւ ձեզանից չեն հարցնի այն բաների մասին, որ նրանք գործել են :

129. Եւ նրանք ասում են, «եղի՛ք հրեաներ կամ քրիստոնեաներ, եւ ուղիղ կատաճնորդւիք» : Բայց դու ասա՛, «բայց մենք Արքանամի կրօնքիցն ենք, որ ուղղակրօն էր եւ կոտպաշտ չէք» :

130. Դուք ասացէք, «մենք հաւատում ենք Աստուծուն, եւ նրան ինչ որ իջել է մեզ համար, եւ ինչ որ իջել է Արքանամին եւ Իսմայէլին եւ Իսահակին եւ Յակոբին եւ ցեղերին, եւ ինչ որ արեւել է մարգարէ-

ներին իրանց Տիրոջից. մենք նրանց ոչ մէկի մէջ տարբերութիւն չենք գնում եւ մենք նրան անձնատուրները (միւսլիմներ) ենք:

131. Հիմայ եթէ նրանք էլ հաւատում են, ինչպէս որ դուք էք հաւատացել նրան, արդէն ուղիղ ճանապարհում են. բայց եթէ ետ դառնան, ահա այն ժամանակ նրանք ծռութեան մէջ են: Բայց Աստուած քեզ բաւական է, եւ նա լսող ամենագէտ է:

132. Աստուծո՛յ կնուները. եւ ո՞վ է կնուներով Աստուածանից լաւ. եւ մենք նրան ենք պաշտում:

133. Գու ասա՛, «արդեօ՞ք ինձ հետ վիճում էք Աստուծոյ մասին. եւ նա մեր Տէրն է եւ ձեր Տէրը, եւ մեր գործերը մեզ կը վերաբերին: եւ ձեր գործերը՝ ձեզ, եւ մենք մտերմաբար նրանն ենք:

134. Կամ ասում էք, «Եթէ Աբրահամը եւ Իսրայէլը եւ Իսահակը եւ Յակոբը եւ ցեղերը հրեայ էին կամ քրիստոնեայ», ասա՛, «արդեօ՞ք դուք լաւ գիտէք թէ Աստուած»: Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա, որ Աստուծոյ կողմից եկած վկայութիւնը, որ նրա մօտ է, ծածկում է, եւ Աստուած անգէտ չէ, թէ դուք ինչ էք անում:

135. Գնացել անցել է արդէն այս ազգը. նրան կը լինի ինչ որ նա շահել է. եւ ձեզ կը լինի ինչ որ դուք էք շահել. եւ ձեզանից չեն հարցնի այն բանի մասին որ նրանք գործել են:

136. Մարդկանց յիմարներն ասելու են, «Ի՞նչը դարձրեց նրանց իրանց ազօթարանի ուղղութիւնից որ ունէին», դու ասա՛ «արեւելք եւ արեւմուտքը Աստուծունն է, նա ուղիղ ճանապարհով առաջնորդում է քրին որ ուզում է»:

137. Եւ այսպէս մենք ձեզ միջին ժողովուրդ շինեցինք, որ մարդկանց համար վկաներ լինէք, եւ մարգարէն էլ ձեզ համար վկայ լինի:

138. Մենք միայն նրա համար այն ազօթարանի ուղղութիւնը շինեցինք, որ դու ունէիր, որ գիտե-

նանք թէ ո՞վ է մարգարէին հետեւում եւ ո՞վ է նրանից ետ դառնում: Եւ եթէ սա դժւար է թւում. ոչ թէ նրանց համար է դժւար, որոնց Աստուած է առաջնորդում: Աստուած ձեր հաւատքը չի կորցնիր. որովհետեւ Աստուած մարդկանց զթած եւ ողորմած է:

139. Մենք արդէն տեսնք, որ դու երեսդ դէպի երկինքն ես դարձնում, մենք էլ դարձրինք քո աղօթարանի ուղղութիւնը քեզ հաճելի կերպով. ուրեմն դարձրու երեսդ դէպի հարամի տաճարը. եւ ուր որ էլ լինէք, երևոներդ այն կողմը դարձրէ՛ք: Նրանք, որոնց գիրք տրւած է, գիտեն անշուշտ, որ սա ճշմարտութիւն է իրանց Տիրոջից: Եւ Աստուած անգէտ չէ նրանց արածի մասին:

140. Եւ եթէ դու նրանց համար, որոնց որ գիրք է տրւած, ամեն նշան էլ բերես, նրանք քո աղօթարանի ուղղութեանը չեն հետեւի, եւ դու էլ նրանց աղօթարանի ուղղութեանը չես հետեւի. եւ մէկը միւսի աղօթարանի ուղղութեանը չէ հետեւում: Եւ եթէ քեզ գիտութիւն գալուց յետոյ նրանց քմահաճութեանցը հետեւես, այն ժամանակ դու անիրաւունքիցն ես:

141. Նրանք, որոնց տւել ենք գիրքը, ճանաչում են նրան ինչպէս որ իրանց որդկանցն են ճանաչում. բայց նրանցից մի մասը ծածկում է ճշմարտութիւնը թէեւ իրանք գիտեն:

142. Ճշմարտութիւնը քո Տիրոջիցն է, ուրեմն կասկածողներիցը մի՛ լինիր:

143. Եւ ամեն մէկն ունի իր ուղղութիւնը, որ գէպի այն կողմն է դառնում. բայց դուք աւելի լաւերին հետեւեցէ՛ք: Ուր որ էլ լինէք, Աստուած ձեզ ամենքիդ էլ կը բերէ. որովհետեւ Աստուած ամենակարող է:

144. Եւ որտեղից էլ դուրս գաս, երեսդ դարձրո՛ւ գէպի Հարամի տաճարը, որովհետեւ սա է ճշմարիտը քո Տիրոջիցը, եւ Աստուած անգէտ չէ քո արածիցը:

145. Եւ որտեղից էլ դուրս գաս, երեսդ դարձրո՛ւ

գէպի Հարամի տաճարը. եւ ուր էլ լինէք, երեսներդ դարձրէ՛ք գէպի այն կողմը, որպէս զի մարդիկ պատճառ չուեննան ձեզ գէմ վիճելու բացի նրանցից, որ նրանց մէջ անխրաւներ են: Նրանցից մի՛ վախէք, այլ վախեցէ՛ք ինձանից, որ ես իմ շնորհքը կատարեալ անեմ ձեր վրայ որ դուք ուզիդ առաջնորդուիք:

146. Ինչպէս որ ձեր մէջը ձեզնից մի մարդարէ ուղարկեցինք, որ կարգում է ձեզ մեր նշանները, եւ ձեզ մաքրում է եւ ձեզ սովորեցնում է գիրքը եւ իմաստութիւնը, եւ սովորեցնում է այն, ինչ որ չը գիտէիք:

147. Ուրիմն յիշեցէ՛ք ինձ, եւ ես էլ ձեզ կը յիշեմ, եւ գոհացէ՛ք ինձնից եւ անհաւատ մի՛ լինիք:

148. Ո՛վ հաւատացողներ, օգնութիւն աղաչեցէ՛ք համբերութիւնով եւ աղօթքով, որովհետեւ Աստուած համբերողներին հետ է:

149. Եւ Աստուծոյ ճանապարհումը սպանուզին մի՛ ասէք «մեռած» այլ «կենդանի», բայց դուք չէք հասկանում:

150. Եւ մենք ձեզ անպատճառ փորձելու ենք մի այնպիսի բանով ինչպէս երկիրը, սովը եւ ստացւածքի եւ անձինքների եւ պտուղների պակասութիւնը: Դու էլ համբերողներին աւետիս տուր:

151. Որոնց մի արկած պատահելիս ասում են, «մենք Աստուծունն ենք, եւ մենք գէպի նրան ենք դառնալու:

152. Նրանք են, որոնց վրայ աղօթքներ են լինում իրանց Տիրոջից եւ ողորմութիւն, եւ նրանք են ուզիդ առաջնորդւածները:

153. Իրաւի Սաֆան եւ Մարվան Աստուծոյ ծէսէրից են. ուրիմն ով որ տաճարին ուխտագնացութիւն է տնում կամ այցելում, նրա հաճար փնաս չըկայ, որ նրբանց շորջը պտոյտ տայ: Եւ ով որ յօմարակամ բարիք գործէ, ահա Աստուած գոհ է եւ ամենագէտ:

154. Իրաւ նրանք, որ մենք գիրքը մարդկանց բացատրելուց յետոյ ծածկում են այն ապացույցները եւ

առաջնորդութիւնը, Աստուած անխօսէ նրանց եւ նրանց անխօսեն անխօսողները :

155. Բացի նրանցից զարծի են գալիս եւ ուզովում եւ յայանում, ահա ես էլ զէպի նրանց եւ դառնում եւ ես զարցող ողորմածն եմ:

156. Եւ նյանք որ չէին հաստատում եւ մկռան եւ անհաւատներ էին, — նրանց վրայ է Աստուծոյ եւ հրեշտակների եւ բոլոր սարգկանց անէծքը:

157. Նրանք յաւիտեան նրա մէջ կը մնան. տանջանքը նրանցից չի թեթեւցնւի, եւ նրանց չեն օգնի:

158. Իսկ ձեր Աստուածը մէկ Աստուած է մի Աստուած չըկայ բացի այն ողորմած գթածից:

159. Իրաւ երկնքների եւ երկրի ստեղծման մէջ եւ գիշեր ու ցերեկ փոխափոխման մէջ, եւ ծովի վրայ գընացող նաւին մէջ, որով մարդիկ օգուտ են քաղում, եւ այն ջրին մէջ, որ Աստուած երկնքիցն անձրեւում է եւ մեռած երկիրը նրանով կենդանեցնում եւ նրանում ամեն տեսակ կենդանիներ տարածում, եւ քամիների եւ ամպերի փոփոխութեան մէջ, որ ակամայ կատարվում են երկնքի եւ երկրի մէջ տեղը. նշաններ կան հասկացող ժողովրդի համար:

160. Եւ կան մարդկանցից ոմանք, որոնք բացի Աստուածանից պատկերներ են բնգունում, նրանց սիրում են ինչպէս Աստուծոյ սիրով. բայց նրանք որ հաւատում են, նրանց սէրը զէպի Աստուած աւելի զօրաւոր է: Ո՛հ եթէ անիրաւութիւն գործողները տանջանքը տեսնելիս այն էլ տեսնէին որ բոլոր զօրութիւնը Աստուծունն է, եւ թէ Աստուած խիստ պատժող է:

161. Երբ նրանք, որոնց հետեւում էին, հետեւողներ թիցը մաքրուին եւ տեսնեն տանջանքը եւ նրանցով կարւին պատճառները:

162. Նոյն ժամանակ կ'ասեն նրանք որ հետեւում էին, «եթէ մենք մէկ անգամ էլ պատեհութիւն ունենայինք, նրանցից կը մաքրւէինք, ինչպէս նրանք իրանց մաքրեցին մեզանից»: Սապէս Աստուած կը

ցուցնէ նրանց իրանց գործքերը, որոնց մասին կը զըզ-
ջան. բայց նրանք կրակիցը դուրս չեն գայ:

163. Ո՛վ մարդիկ, կերէ՛ք նրանից ինչ որ երկրի վրայ
սուրբ եւ մաքուր է, եւ մի հետեւիք սաստանաների
հետքերին, որովհետեւ նա ձեզ յայտնի թշնամի է:

164. Նա ձեզ միայն չար բաներ եւ զաղբագործու-
թիւններ է հրամայում, եւ որ Աստուծոյ մասին այն
բաներն ասէք, որ չը գիտէք:

165. Եւ երբ նրանց ասում է, «հետեւեցէք Աստու-
ծոյ իջեցրածին». ասում են, «ոչ մենք կը հետեւինք
այն բանին: որ մեր հայրերը մեզ սովորեցրել են»: Բայց եթէ
նրանց հայրերը մի բան չէին հասկանում եւ
ուղիղ առաջնորդւած չէին. . . :

166. Նրանք, որ չեն հաւատում, նման են մի գո-
ռացողի. որ նրանից միայն կանչելն ու ձայնն են լը-
սում. համբ. խուլ, կոյր են եւ չեն հասկանում:

167. Ո՛վ հաւատացեալներ կերէ՛ք այն բարիքներից,
որ ձեզ պարգեւել ենք եւ գոհացէ՛ք Աստուածանից,
եթէ նրան էք պաշտում:

168. Ձեզ արգիլւած են սատկածը եւ արիւնը եւ խոզի
միսը եւ այն բանը, որի մորթելու ժամանակ Աստու-
ածանից ջոկ մի ուրիշի անունն է յիշւած. բայց ով որ ա-
ռանց անհնազանդ լինելու ստիպւած լինի ակամայ
ուտելու, նրա վրայ յանցանք չըկայ. որովհետեւ
Աստուած ներող ողորմած է:

169. Իբաւ նրանք որ Աստուծոյ իջեցրած մի գիրքը
ծածկում են եւ նրանով մի փոքր բան են ծախու առ-
նում, նրանք միմիայն կրակ են ուտում իրանց փոքի
համար, եւ Աստուած յարութեան օրը նրանց հետ չի
խօսի եւ նրանց չի մաքրի, այլ նրանց համար ցաւալի
տանջանք կայ:

170. Նրանք են որ ծախու առնում են մուրրութիւ-
նը ճշմարտութիւնով եւ տանջանքն էլ՝ մեղաց ներող-
ութիւնով: Եւ ինչո՞վ կը գիժանան նրանք կրակին,

171. Ո՞ր նրա համար է որ Աստուած գիրքը իջե-

ցրել է ճշմարտութիւնով եւ նրանք որ գրքի մասին տա-
րածայնութիւններ են անում, հետու մոլորւած են :

172. Նա չէ արդարութիւնը, որ ձեր երեսները դէ-
պի արեւելք եւ արեւմուտք էք ուղղում, այլ արդա-
րութիւնը այն է որ մէկը հաւատայ Աստուծուն եւ վեր-
ջին օրւան եւ հրեշտակներին եւ գրքին եւ մարգա-
րէներին, եւ սիրով տայ իր ստացւածքներէց ազգա-
կաններին եւ որսերին եւ տնանկներին եւ ճանապար-
հորդներին եւ աղքատներին եւ կապանքի մէջ եղող-
ներին, եւ ազօթքը կատարէ եւ մաքրութեան տուրքը
վճարէ եւ ուխտերը կատարէ, եւ չարիքների ու նեղու-
թիւնների եւ պատերազմի ժամանակին համբարէ : Սրանք
են արդարները եւ սրանք են երկիւղածները :

173. Ո՛վ հաւատացեալներ, սպանւածների համար
ձեզ վրէժխնդրութիւն է պատւիրւած . ազատի տեղ
ազատ եւ ծառայի տեղ ծառայ եւ իզականի տեղ իզա-
կան . բայց եթէ մէկին մի բան ներողութիւն տրւի
իբեղբոր կողմից, այն ժամանակ օրէնքով պէտք է
վարել եւ նրան բարիքներ հատուցանել :

174. Սա ձեր Տիրոջից մի թեթեւացում եւ ողոր-
մութիւն է . բայց ով որ այսուհետեւ յանցաւոր զրտ-
նի, նրա համար ցաւալի տանջանք կայ :

175. Եւ ձեզ համար արեան վրէժխնդրութեան մէջ
կեանք կայ, ո՛վ խելացիներ, որպէս զի երկիւղածներ
լինէք :

176. Ձեզ պատւիրւած է, որ երբ ձեզանից մէկը
մահւայ մօտ է, եթէ ստացւածք է թողում, թող կտա-
կէ ծնողներին եւ ազգականներին օրինաւոր կերպով,
ինչպէս որ վայել է երկիւղածներին :

177. Բայց ով որ այն կտակը խելուց յետոյ փոխէ,
այն ժամանակ նրա մեղքը նրա փոխողների վրայ է .
որովհետեւ Աստուած լսող իմաստուն է :

178. Բայց եթէ մէկը երկիւղ ունի, թէ կտակարարը
սխալել կամ յանցանք է դործել, թող նրանց մէջը

հաշտութիւնն ձգէ. այն ժամանակ նրա համար յանցանք չբկայ. որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

179. Ո՛վ հաւատացեալներ, ձեզ ծոմ է պատիրւած, ինչպէս որ ձեզանից առաջ եղողներին պատւիրւած էր, որպէս զի երկիւզած լինէք:

180. Որոչ օրեր, բայց ձեզանից ով որ հիւանդ կամ ճանապարհորդութեան վրայ լինի, թող նա նոյնքան ուրիշ օրեր ծոմ պահէ. բայց նրանք որ կարող էին ծոմ պահել եւ չը պահեցին, պէտք է մի աղքատ քաւեն կերակրելով: Եւ ով որ յօժար կամքով բարիք անէ, դա նրա համար բարիք է: Եւ եթէ ծոմ պահէք, դա լաւ է ձեզ համար, եթէ հասկացողներ էք:

181. Բամազան ամիսը, որ նրանում դուրանր իջեցրեց իբրև ուղեցոյց մարգկանց համար եւ առաջնորդութեան ասացոյցներ եւ փրկանք: Ուրեմն ով որ այդ ամսին հանէ, թո՛ղ ծոմ պահէ. եւ ով որ հիւանդ է կամ ճանապարհորդութեան վրայ, թող նա նոյնքան ուրիշ օրեր ծոմ պահէ: Աստուած ձեզ համար դիւրութիւնն է ուզում եւ ձեզ համար յժուարութիւնն չէ ուզում, եւ որ դուք որոշած օրերը պահէք եւ Աստուծուն մեծարէք ձեզ արած առաջնորդութեան համար, որպէս զի գոհանաք:

182. Եւ երբ հարցնեն իմ ծառաները իմ մասին, ահա ես մօտ եմ, աղօթողի աղօթքին կը պատասխանեմ, երբոր ինձ աղօթէ. բայց նրանք էլ թո՛ղ ինձ պատասխանեն եւ ինձ հաւատան, որպէս զի ուղիղ առաջնորդին:

183. Իրոմապահութեան գիշերը ձեր կանանց հետ պղծութիւնը ձեզ թոյլ է տրվում: Նրանք ձեզ համար հանդերձ են եւ դուք նրանց համար հանդերձ էք: Աստուած գիտէ, որ դուք ձեր անձերը նեղել էք, գրա հալար ետ դարձաւ դէպի ձեզ եւ ներեց ձեզ. ուրեմն հիմայ գործադրեցէ՛ք եւ պահանջեցէ՛ք ինչ որ Աստուած ձեզ թոյլ է տուիս. եւ կերէք ու խմեցէք մինչև արշալոյսի ժամանակ զանազանէք սպիտակ

Թեկը սեւ թեկից, յետոյ պահեցէք ծովը մինչեւ գիշեր, եւ քանի որ մզկիթներումը մնում էք, կանանց հետ յարարերու թիւն չունենաք: Սրանք Աստուծոյ սահմաններն են: Ուրեմն նրանց մի՛ մօտենաք: Աստուած այսպէս է յայտնում իր նշանները, որպէս զի երկիւղածներ լինէք:

184. Եւ ձեր ստացւածքները զուր տեղը ձեր մէջը մի՛ սպառէք կամ նրանալ դատաւորներին մօտ մի՛ ման գաք, որ մարդկանց ստացուածքի մի մասը անիրաւութեամբ չուտէք, քանի որ դուք զիտէք:

185. Վեղ կը հարցնեն լուանի փոփոխութիւնների մասին. Դու ասա՛ «դա ժամանակներն է որոշում մարդկանց համար եւ ուխտագնացութեան համար: Նա չէ արգարութիւնը որ դուք ետեւի կողմիցն էք տրաները մտնում, այլ արգարութիւնը այն է որ մէկը երկիւղած է եւ դռներովն են տները մտնում, վախեցէ՛ք Աստուածանից որ երջանիկ լինէք:

186. Եւ սպանելու աշխատեցէք նրանց որ աշխատում են ձեզ սպանել, բայց դուք մի՛ սկսէք, սրովհետեւ Աստուած սկսողներն չէ սիրում:

187. Եւ սպանեցէ՛ք նրանց որտեղ էլ նրանց պատահէք, եւ նրանց դո՛ւրս արէք որտեղից նրանք ձեզ դուրս են արել եւ խռովութիւնն աւելի վատ է քան սպանութիւնը: Բայց նրանց հետ մի՛ պատերազմէք շարամի տաճարի մօտերումը, մինչեւ երանի այնտեղ ձեզ հետ պատերազմեն: Եւ երբոր ձեզ հետ պատերազմեն, այն ժամանակ նրանց սպանեցէ՛ք: Այսպէս է անհաւատների հատուցու՛մը:

188. Բայց եթէ դադարեն, Աստուած ներող ուղորմած է:

189. Եւ նրանց սպանելու ջանացէ՛ք մինչեւ որ սլեւեռ խռովութիւն չի լինի եւ կրօնքը Այլահինը լինի: Եւ եթէ դադարեն, այն ժամանակ թշնամութիւն չի լինի բացի անիրաւների հետ:

190. Սուրբ ամիսը սուրբ ամիսի փոխարէն դ որ ծ ա -

ձեցէք եւ սուրբ վայրերի փոխարէն՝ վրէժ: Ով որ ձեր վրայ յարձակւի, դուք էլ նրա վրայ յարձակեցէք ինչպէս որ նա է ձեր վրայ յարձակւել: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ գործեցէ՛ք, որովհետեւ Աստուած երկիւղածներէ հետ է:

191. Եւ Աստուծոյ ճանապարհին նպաստ սուէք, եւ ձեր ձեռքերովը ձեզ վաճառի մէջ մի գցէք, եւ բարիք արէք որովհետեւ Աստուած բարեգործներին սիրում է:

192. Եւ կատարեցէք Հաճճը եւ ուխտագնացութիւնը Աստուծոյ համար: Իսկ եթէ պաշարուէք, գոնէ մի թիթեւ ընծայ բերէք: Եւ ձեր գլխները մի՛ ածիլէք մինչեւ որ ընծան իր տեղը հասնի: Բայց եթէ ձեզնից մէկը հիւանդ լինի կամ գլխի ցաւ ունենայ, այն ժամանակ թող ծոմ պահէ կամ ողորմութիւն տայ կամ մի ծէս կատարէ: Իսկ երբ ապահով լինիք, եւ մի մարդ ուզէ որ ուխտագնացութիւնը յետաձգէ մինչեւ Հաճճի ժամանակը, թող գոնէ մի թիթեւ ընծայ մատուցանէ: Եւ ով որ չը գտնէ այդ, թող երեք օր ծոմ պահէ Հաճճի ժամանակը, եւ եօթն օր էլ երբոր ետ դառնաք, որ ամենքը միասին տանն են: Սա այն մարդու համար է, որի ընտանիքը Հարամի տաճարումը ներկայ չէին: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ իմացէ՛ք, որ Աստուած խտորէն պատժող է:

193. Հաճճը յայտնի ամիսներում է: Ով որ դրանցում Հաճճի ուխտին պարտաւորւի, պէտք է, ոչ կանանց հետ պղծութիւն, ոչ անիրաւութիւն եւ ոչ կռիւանէ Հաճճի ժամանակ: Եւ ինչ բարիք որ գործէք, Աստուած գիտէ այն: Եւ ճանապարհի համար պաշար առէ՛ք, բայց ամենից լաւ պաշարը երկիւղածութիւնն է: ուրեմն երկիւղած եղէ՛ք, ով խելացիներ:

194. Ձեզ համար յանցանք չէ, որ ձեր Տիրոջից շահ խնդրէք: Եւ երբոր Արաֆաթից վազելով գաք. յիշեցէ՛ք ականուծուն Հարամի մօտերը եւ յիշեցէ՛ք նրան, թէ նա ձեզ ինչպէս է առաջնորդել, եւ թէ դուք դրանից առաջ մոլորիալներ էիք:

195. Յետոյ վազեցէ՛ք ուր որ մարդիկը վազում են եւ Աստուածանից ներողութիւն խնդրեցէ՛ք, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

196. Եւ երբ ձեր ծէսերը վերջացնէք, յիշեցէ՛ք Աստուծուն, ինչպէս որ ձեր ծնողներին էք յիշում, կամ աւելի զօրաւոր կերպով յիշեցէ՛ք: Բայց կան մարդիկ, որ ասում են, «ո՛վ մեր Տէրը, այս աշխարհիցը մեզ տո՛ւր. եւ նրա համար հանդերձեալումը բաժին չը կայ:

197. Եւ նրանցից այնպիսիներ էլ կան, որ ասում են, «ո՛վ մեր Տէրը, մեզ այս աշխարհքում բարիք տո՛ւր եւ հանդերձեալումըն էլ բարիք տո՛ւր, եւ մեզ պահպանիր կրակի տանջանքիցը»:

198. Սրանք մասն ունին իրանց աշխատածիցը, եւ Աստուած չուտով հաշիւ տեսնող է:

199. Եւ յիշեցէ՛ք Աստուծուն որոշ ժամանակներում: Ով որ երկու օրւայ մէջ շտապելով վերջացնէ, նրա վրայ էլ յանցանք չըկայ, եթէ Աստուածանից վախենում է. ուստի վախեցէ՛ք Աստուածանից եւ զխտացէք որ դուք նրա մօտ պիտի ժողովուրիք:

200. Մարդ կայ որ իր խօսքովը քեզ այս աշխարհքում զարմացնում է եւ Աստուծուն վկայ է կանչում իր սրտումը եղածի վրայ. բայց նա սաստիկ թշնամի է:

201. Եւ հէնց որ ետ է գնում, աշխատում է երկրի վրայ ապականութիւն գործել նրանում, եւ փճացնում է ցանքը եւ արդիւնքը. բայց Աստուած ապականութիւնը չի սիրում:

2)2. Եւ երբ նրան ասում է, «վախի՛ր Աստուածանից», նրան բռնում է փառասիրութիւնը մեղքի հետ. եւ նրան վայելում է գժոխքը. սա ինչ վա՛տ տեղ է:

203. Եւ մարդ էլ կայ, որ Աստուծոյ հաճութիւնը փափազելով իր անձը ծախում է. եւ Աստուած գթած է ծառաներին.

204. Ո՛վ հաւատացեալներ, բոլորովին մտէ՛ք իս-

լամի մէջ և մի հետեւէք սատանայի հետքերին, որով-
հետեւ նա յայտնապէս ձեզ թշնամի է:

205. Իսկ եթէ պայծառ վարդապետութիւնը ձեզ
հասնելուց յետոյ սահէք, իմացէք, որ Աստուած հզօր
իմաստուն է:

206. Կամ սպաս՞ում են թէ Աստուած ամպի շուքի
մէջ կուգայ եւ նրա հրեշտակները հետր: Բայց բանն
արդէն վճուած է, ամին բան ևս պիտի գառնայ Աս-
տուծոյ մօտ:

207. Հարցո՛ւք Իսրայէլի որդիներին, թէ ո՞րքան
յայտնի նշաններ ենք տեսլ նրանց, և ով որ՞ Աստու-
ծոյ շնորհքը նրան գալուց յետոյ՝ նրան փոխէ, — ահա
Աստուած խտորէն պատժող է:

208. Ձըհաւատացողներին համար պատրաստած է
այս աշխարհի կեանքը, եւ նրանք ծաղրում են հաւա-
տացեալներին: Բայց երկիւղածները յարութեան օրը
նրանցից բարձր են լինելու: Եւ Աստուած կերակրում
է, որին որ ուզում է՝ առանց հաշի:

209. Մարդիկը մէկ կրօնք ունէին միայն, և Աստ-
ուած մարգարէք ուղարկեց, որ աւետիք տան եւ սպառ-
նան, եւ նրանցով իջեցրեց պիւքք ճշմարտութիւնով,
որ մարդկանց մէջ տյն բանի մասին որի համար տա-
րածայնութիւն ունէին: Եւ միմիայն նրանք են նա-
խանձով տարածայնողները, որոնց այն տրեկցա՞
յայտնութիւնները նրանց գալուց յետոյ: Բայց Աստ-
ուած ուղիղ առաջնորդեց հաւատացեալներին, որոնք
ճշմարտութեան մասին էին տարածայն: Եւ Աստուած իր
ուզածին առաջնորդում է ուղիղ ճանապարհով:

210. Կամ կարծո՞ւմ էք թէ գրախոր կը մտնէի ա-
ռանց ձեր վրայ գալու նրանց նման բաներ, որ եկան
ձեզանից առաջ եզածներին վրայ, որ նրանց հանդիպե-
ցին չարչարանքներ և նեղութիւններ, և այնպէս
սարսում էին, որ մարգարէն ասաց իր հետը եզսղ հա-
ւատացեալներին հետ, «ե՞րբ կը գայ Աստուծոյ օգնու-
թիւնը»: Հիմայ Աստուծոյ օգնութիւնը մօտ է:

211. Երանք քեզ կը հարցնեն, թէ ինչը ողորմութիւն տան: Դու ասա՛, ինչ բարիք որ իբրեւ ողորմութիւն տաք, թող լինի ծնողներին եւ մերձաւորներին եւ սրբերին եւ աղքատներին եւ ճանապարհորդներին, եւ ինչ բարիք որ անէք, աճա Աստուած գիտէ այն:»

212. «Ձեզ պատուիրուած է պատերազմը. բայց նա զըզւելի է ձեզ համար»:

213. «Սակայն կարելի է դուք մի բանից զզլուած էք, որ նա ձեզ օգտակար է եւ մէկ բան սիրուած էք, որ նա ձեզ վնաս է: Եւ Աստուած է որ գիտէ, բայց դուք չը գիտէք»:

214. Քեզ կը հարցնեն Հարամ ամսի մասին՝ պատերազմի մասին նրանու: Դու ասա՛, «նրանում պատերազմելը մեծ մեղք եւ Աստուծոյ ճանապարհիցը հեռանալ եւ նրան ուրանալ է. բայց Հարամ տաճարը եւ նրա ժողովուրդը նրա միջիցը դուրս անելը աւելի մեծ մեղք է Աստուծոյ մօտ: Եւ խոտլութիւնը աւելի մեծ մեղք է քան թէ սպանութիւնը: Եւ նրանք չեն դադարելու քեզ հետ պատերազմելուց. մինչեւ որ ձեզ ձեր կրօնքիցը ետ չգործնեն, եթէ կարողանան: Հիմա ձեզանից ով որ իր կրօնքիցը ետ կենայ եւ մեռնի իբրեւ սնհաւատ, այդպիսիները գործերը կը փճանան այս աշխարհում եւ հանդերձեալումը, եւ նրանք կրակի ընկերներն են, եւ նրանում յաւիտեան կը մնան»:

215. Իսկ նրանք, որ հաւատում են եւ գողմել են ու Աստուծոյ ճանապարհումը մտրանչում են, — այդպիսիները սպասուած են Աստուծոյ ողորմութեանը. Աստուած ներող ողորմած է:

216. Քեզ կը հարցնեն գինու եւ բախտի խաղի մասին: Դու ասա՛, «գրանցում մեծ յանցանք կայ եւ օգուտներ կան մարդկանց համար, բայց դրանց յանցանքը աւելի մեծ է քան իրանց օգուտը»: Եւ քեզ կը հարցնեն թէ ինչը ողորմութիւն տան:

217. Դու ասա՛, «ներողութիւնը»: Աստուած ձեզ այսպէս է յայանել իր նշանները, որպէս զի մտածէք»:

218. «Այս աշխարհքում եւ հանդերձեալումը»: Եւ քեզ կը հարցնեն որքերի մասին: Դու ասա՛, «նրանց դէմ մեղմութիւնը լաւ է»:

219. Եթէ ձեր ստացուած քննելը նրանց հետ խառնէք, այն ժամանակ նրանք ձեր եղբայրներն են. եւ Աստուած էլ ճանաչում տարբերում է ապականիչը լաւիցը. եւ եթէ Աստուած ուզէ, ձեզ կը նեղէ. որովհետեւ նա հօգօր իմաստուն է:

220. Եւ կոապաչտի հետ մի ամուսնանաք մինչեւ որ հաւատան: Մի հաւատացեալ աղախին լաւ է քան թէ մի կոապաչտ կին, թէեւ սա ձեզ յափշտակէ իր գեղեցկ ու թեամբը: Եւ կոապաչտ մարդկանց հետ էլ մի ամուսնանաք, մինչեւ որ հաւատան: Մի հաւատացեալ ծառայ լաւ է քան թէ մի կոապաչտ մարդ, թէեւ նա ձեզ յափշտակէ իր գեղեցկ ու թեամբը:

221. Նրանք կանչում են դէպի կրակը, բայց Աստուած կանչում է դէպի դրախար եւ թողութիւնը իր հրամանովը ու յայտնում է իր նշանները մարդկանց, որ մտաբերէք:

222. Նաեւ կանանց ամսականի մասին են քեզանից հարցնելու: Ասա՛, «դա մի տանջանք է. եւ դուք հեռացէք կնիկներից ամսականի ժամանակին եւ նրանց մի՛ մօտենաք մինչեւ որ մաքրւին. եւ նրանց մտէ՛ք որտեղից որ Աստուած ձեզ պատւիրել է. որովհետեւ Աստուած սիրում է ապաշխարողներին եւ մաքրուածներին»:

223. Ձեր կնիկները արտ են ձեզ համար. ուրեմն մտէ՛ք ձեր արտը որ կողմից որ ուղում էք: Եւ ձեր անձերի համար առաջուց բարիք ուղարկեցէ՛ք, եւ վախեցէ՛ք Աստուածանից եւ իմացէ՛ք, որ դուք նրան հանդիպողներ էք. եւ աւետի՛ր հաւատացեալներին:

224. Աստուծուն ձեր երգումների պատրուակը մի՛ շինէ՛ք, որ արդար, երկիւղած եւ բարեգործ լինէք մարդկանց մէջ. որովհետեւ Աստուած լսող է՝ զիտէ:

225. Ձեր երգումների մէջի սխալմունքների համար

Աստուած ձեզ չի պատժի, այլ կը պատժէ ձեր սրտերի արարքների համար. եւ Աստուած ներող հեզ է:

226. Նրանք, որ որոշում են իրանց կնիկները բաժանել, չորս ամիս սպասելու են. եթէ ետ առնեն — Աստուած ներող ողորմած է:

227. Եւ եթէ, ուզեն արձակումը. այն ժամանակ Աստուած լսող ամենագէտ է:

228. Իսկ արձակւած կնիկները պէտք է իրանց անձերովը երեք մաքրութեան սպասեն. եւ նրանց հրաման չըկայ որ ծածկեն թէ Աստուած ինչ է ստեղծել նրանց արգանդներումը, եթէ հաւատում են Աստուծուն եւ վերջին օրւան: Սակայն նրանց ամուսինները իրաւունք ունին այս գէպում նրանց ետ առնելու, եթէ խաղաղութիւն են կամենում: Կնիկները այնպիսի իրաւունքներ ունին ինչպէս իրանց պարտականութիւնները օրինաւորապէս: Բայց մարդկանց աստիճանը նրանց վրայ բարձր է: Եւ Աստուած զօրաւոր իմաստուն է:

229. Երկու անգամ է ապահարզանը, յետոյ կարգին պահել պէտք է կնիկը, նրան բարիքներով արձակել: Եւ ձեզ համար հրաման չըկայ մի բան վեր առնէք նրանից, որ աւել էք նրանց. բացի միայն նրանից, որ երկիւղ ունենան թէ Աստուծոյ սահմանները չը պիտի պահեն: Իսկ եթէ երկիւղ ունիք, թէ նրանք Աստուծոյ սահմանները չը պիտի պահեն, այն ժամանակ նրանք յանցանք չունեն, եթէ կիներ ինքն իրան ազատէ նրանով: Սրանք են Աստուծոյ պատուէրները: Ուրեմն զրանց զանց մի՛ անէք. ու ով որ Աստուծոյ սահմանները զանց անէ, այնպիսիները անիրաւներ են:

230. Եւ եթէ նա նրան արձակէ, նա այլեւս իրաւունք չ'ունի, մինչեւ որ նա նրանից ջսկ մի ուրիշ մարդու գնացած չը լինի, եւ նա նրան չ'արձակէ. յանցանք չի լինի նրանց երկուսի համար էլ, եթէ ետ դառնան իրար մօտ, եթէ կարծում են թէ Աստուծոյ

սահմանները կը պահեն: Եւ սրանք են Աստուծոյ սահմանները, որոնք նա յայտնել է մի ազգի, որ իմասնում է:

231. Եւ երբ դուք կնիկներին արձակէք, թո՛ղ նրանք իրանց պայմանաժամին հասնեն, եւ թողէ՛ք որ օրինաւորապէս մնան կամ ճանապարհ գրէ՛ք օրինաւորապէս, եւ նրանց բռնի մի՛ պահէք, որ անիրաւութիւն անէք: Եւ ով որ այս բանն անի, նա արդէն իր անձին անիրաւութիւն է արած: Ուրեմն Աստուծոյ նշանները մի՛ ծաղրէք, եւ յիշեցէ՛ք Աստուծոյ շնորհքը ձեր վրայ եւ ինչ գիրք եւ ինչ իմաստութիւն որ նա ձեզ ուղարկել է, որ նրանով ձեզ խրատէ: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ իմացէ՛ք որ Աստուած ամեն բան գիտէ:

232. Եւ երբ կնիկներին արձակէք, թողէ՛ք նրանք իրանց պայմանաժամին հասնեն եւ նրանց մի՛ բռնադատէք որ իրանց այրերի հետ ամուսնանան, երբոր նրանք իրանց մէջ յօժարութիւն կայացնեն օրինաւորապէս: Սա խրատ է ձեզանից այն անձին որ հաւատում է Աստուծուն եւ վերջին օրւան, սա ձեզ համար աւելի սրբութիւն եւ մաքրութիւն է: Ուրեմն Աստուած գիտէ, իսկ դուք չը գիտէք:

233. Եւ մայրերը պէտք է իրանց զաւակներին ամբողջ երկու տարի տան, եթէ նա (այրը) ուզէ, որ մանուկի ծիծ ուտելը կատարեալ լինի: Այրը պէտք է տայ կանանց ասպրուտը եւ հազուտոր օրինաւորապէս: Ոչ ոք իր կարողութիւնից վեր պարտաւոր չէ: Մի մայր չի բռնադատի իր որդու պատճառով, եւ ոչ էլ զաւակը: Հայրը պարտաւոր է զաւակի մասին, եւ նոյնպէս էլ ժառանգը: Եթէ երկուսն էլ բռնաճամբ ուղեն, պէտք է երկուսն էլ հաճութիւն ունենան եւ մրասին խորհրդակցեն: Ուտի նրանք յանցանք չունին: Եւ եթէ ուզէք որ մի ուրիշը ծիծ տայ ձեր զաւակներին, յանցանք չէ ձեզ համար, եթէ վճարէք ինչ որ պիտի տայիք օրինաւորապէս: Ու-

քեմն վախեցէք Աստուածանից, եւ գիտացէք, որ Աստուած տեսնում է ձեր արածները:

234. Եւ ձեզոնից նրանք որ մեռնում են եւ կնիկներ թողում, այդ կնիկները պէտք է անձամբ չորս ամիս եւ տասն օր սպասեն, եւ երբ այսպէս իրանց պայմանաժամին կը հասնեն, այն ժամանակը դուք յանցանք չունիք թէ նրանք ինչ կանեն իրանց անձին վերաբերմամբ օրինաւորապէս. եւ Աստուած գիտէ թէ դուք ինչ էք անում:

235. Նաեւ յանցանք չունիք, երբ այն կնիկներին նշանադրութիւն առաջարկէք կամ ձեր սրտերումը ծածուկ պահէք. Աստուած գիտէ, թէ դուք ինչ էք մտածում նրանց մասին: Սակայն նրանց հետ զաղանի կերպով պայմաններ մի՛ գն'ք, բացի այն որ օրինաւոր խօսք խօսէք:

236. Բայց դուք մի ձգտէք ամուսնութեամբ կապուելու մինչեւ որ զբւած պայմանաժամը չ' հասնի, եւ իմացէք որ Աստուած գիտէ ձեր սրտերումը ինչ կայ. ուրեմն զգուշացէք գրանից եւ իմացէք, որ Աստուած ներող հեղ է:

237. Ձեզ համար յանձանք չէ, որ դուք այն կնիկներին արձակէք, որոնց զեռ չէք շոշափել կամ նրանց մի ժողանդութիւն չէք կտակել. բայց պէտք է հարուստը իր կարողութեան չափովը նրանց հոգիքը տանէ օրինաւորապէս, ինչ որ կը վայելէ բարեգործներին:

238. Եւ եթէ դուք նրանց արձակէք՝ զեռ նրանց չը շոշափած, բայց նրանց արդէն մի բաժին էք կտակել. այն ժամանակ ձեր կտակածի կէսը նրանցը չէ, բացի այն գէպքից երբ նրանք գիջանեն, կամ նա զիջանէ որի ձեռքումն է ամուսնութեան կապը: Եւ եթէ զիջողութիւն անէք, դա ձօտ է երկիրդածութիւնից: Բայց մի՛ մոռանաք ձեզանում եղա՛ շնորհքը. որովհետեւ Աստուած տեսնում է ինչ որ անում էք:

239. Պահեցէք ազօթքները եւ միջին աղօթքը, եւ կանգնեցէք Աստուծոյ առաջին պատկառանքով:

240. Բայց եթէ վախենում էք, այն ժամանակ աղօթեցէք գնալով կամ ձիւ վրայ հեծած: Իսկ երբոր ապահով էք, յիշեցէք Աստուծուն ինչպէս նա ձեզ սովորեցրել է այն որ չը գիտէիք:

241. Եւ ձեզանից նրանք որ մեռնում են եւ կնիկներ թողում, պէտք է իրանց կնիկներին տարուստ կտակ անեն մինչեւ մէկ տարի առանց նրանց դուրս անելու: Իսկ եթէ իրանք դուրս գան, այն ժամանակ դուք յանցանք չունիք, թէ նրանք իրանք ինչ են առնում օրինաւորապէս: Եւ Աստուած զօրաւոր իմաստուն է:

242. Եւ արձակած կնիկների համար օրինաւորապէս պէտք է արգարութեամբ երկիւղածների կողմից:

243. Այս յայտնում է ձեզ Աստուած իբրեւ իր նշանները, որ խելացի լինէք:

244. Արդեօ՞ք ուշ չը դարձրիք նրանց վրայ, որ իրանց երկրիցը դուրս եկան—եւ նրանք հազարաւորներ էին—մահւան երկիւղի պատճառով: Այն ժամանակ Աստուած ասաց նրանց, «մեռէ՛ք», յետոյ նրանց կենդանացրեց, որովհետեւ Աստուած շնորհքի տէր է գէպի մարդիկ. բայց մարդկանցից շատը շնորհակալ չին:

245. Եւ սպանութիւններով պատերազմ արէ՛ք, Աստուծոյ ճանապարհումը, որովհետեւ նա լսող ամենագէտ է:

246. Ո՞վ է որ Աստուծոյն պարտք է տալիս մի՛ գեղեցիկ պարտք. այն ժամանակ նա նրան բազմապատկած հտ կը վճարէ. եւ Աստուած կարճացնում եւ երկարացնում է. եւ դուք նրա մօտն էք դարձնելու:

247. Արդեօ՞ք ուշ չը դարձրիք Իսրայէլի որդկանցից այն ժողովրդի վրայ Մովսէսից յետոյ, երբ որ նրանք ասացին իրանց մի՛ մարդարէին, «մեզ համար մի՛ թագաւոր կարգի՛ր, որ Աստուծոյ ճանապարհումը պատերազմ անենք»: Նա էլ ասաց, «մի՞ գուցէ ձեզ պատեկ բազմ հրամայելի, բայց դուք պատերազմ չ'անէք»: Բայց նրանք ասացին, «մեզ համար ի՞նչ կայ, որ չըպատե-

բազմենք Աստուծոյ ճանապարհումը. մենք եւ մեր որդիքն արդէն դուրս ենք արւել մեր երկրիցը»։ Ասկայն երբ նրանց պատերազմ հարամաւեց, նրանք ետ քաշւեցին բացի մի՛ քանի քիչերը նրանցից։ Եւ Աստուած ճանաչում է անիրաւենքին։

248. Այն ժամանակ ասաց նրանց իրանց մարգարէն, «արդէն նա Թալաթին (Սաւուղին) ձեզ համար թագաւոր է կարգել»։ Նրանք ասացին, «նա ի՞նչպէս թագաւոր կը լինի մեզ վրայ, քանի որ մենք նրանից աւելի արժանաւոր ենք թագաւորութեան եւ նրան ըստացւածքի հարստութիւն տրւած չէ»։ Նա ասաց, «Աստուած ընտրել է նրան ձեզ վրայ, եւ առատօրէն աւելացրել է նրա գիտութիւնը եւ հասակը. եւ Աստուած տալիս է իր թագաւորութիւնը որի որ ուզում է։ Եւ Աստուած հարուստ գիտուն է»։

249. Եւ իրանց մարգարէն ասաց նրանց, «անա նրա թագաւորութեան նշանը, որ տապանակը ձեզ մօտ կը գայ, որի մէջ կայ փառք ձեր Տիրոջից եւ այն բանի՞ մնացորդը, որ Մովսէսի ժողովուրդը եւ Ահարոնի ժողովուրդը թողել են. նրան կրում են հրեշտակները. ահա սրանում նշան կայ ձեզ համար, եթէ զուք հաւատացիալներ էք»։

250. Եւ երբ Թալութն իր զօրագունդերովն ճանապարհւեց, ասաց, «անա՛ Աստուած ձեզ փորձում է գետով. եւ ով որ խմէ նրանից, նա ինձանից չէ. բայց ով որ նրանից չը ճաշակէ, նա ինձանից է, բացի նրանից որ իր ձեռքի ափովը մի ափ ջուր առնէ»։ Եւ նրանցից միմիայն քիչերն էին որ խմեցին նրանից։ Բայց երբ նրանք անցան նրանով ինքը եւ նրա հետ էլ նրանք որ հաւատում էին, ասացին, «այսօր մենք զօրութիւն չ'ունինք ճալութի եւ նրա զօրագունդերի դէմ»։ Իսկ նրանք որ կարծում էին թէ հանդիպելու են Աստուծուն, ասում էին, «քանիցս արդէն մի փոքր գունդ յաղթել է Աստուծոյ հրամանովը մի բազմաթիւ

գունդի. Եւ Աստուած համբերողների հետ է»:

251. Եւ երբ նրանք ձալութի եւ նրա զօրագունդերի առաջը դուրս եկան, ասացին, «ով մեր Տէր, մեր վրայ համբերութիւն թափի՛ր, եւ հաստառի՛ր մեր ստրկերը եւ մեզ օգնի՛ր անհաւատներէ ազգի գէմ»:

252. Այն ժամանակ նրանք փախցրին նրանց Աստուծոյ հրամանովը, եւ Դաւիթը սպաննց ձալութին եւ Աստուած տաւ նրան թագաւորութիւնը եւ իմաստութիւնը եւ սովորեցրեց նրան ինչ որ կամենում էր: Եւ եթէ Աստուած մարգիկը միջիանցից հետու չը պահէր, երկիրը կապակահուէր. սակայն Աստուած գթած է աշխարհների վրայ:

253. Սրանք Աստուծոյ նշաններն են. որ մենք քեզ համար կարդացինք ճշմարտութիւնով. եւ դու իրաւի մարգարէներիցն ես:

254. Սրանք են մարգարէները, որ նրանցից մի քանին միւսներից վեր ենք դասել: Նրանցից ոմանց հետ Աստուած խօսել է եւ ոմանց աստիճանը բարձրացրել է. եւ մենք տւինք Մարիամի որդի Իսային հրաշքները եւ զօրացրինք նրան Սուրբ Հոգիովը: Եւ եթէ Աստուած կամենար, նրանցից յետոյ եղողները չէին կուի իրար հետ, երբ նրանց արդէն պարզ ապացոյցներ է եկել: Բայց նրանք իրար գէմ են: Կան նրանցից ոմանք, որ հաւատում են, եւ կան նրանցից ոմանք, որ ուրանում են, եւ եթէ Աստուած կամենար, նրանք չէին կուի. բայց Աստուած անում է ինչ որ ուզում է:

255. Ով նաւատացեալներ, նրանից որ մենք ձեզ աւել ենք, ողորմութիւն տէք այն օրը զալուց առաջ, ուր չկայ առեւտուր եւ ոչ բարեկամութիւն եւ ոչ էլ բարեխօսութիւն. եւ անհաւատները անիրաւներն են:

259. Աստուած է. մի՛ աստուած չրկայ բացի նրանից որ կենդանի է եւ յաւիտենական. նրան չի բռնի ոչ քուն եւ ոչ ննջել. նրանն է ինչ որ կայ երկինքնեքումը եւ ինչ որ կայ երկրի մէջ: Ո՞վ է որ բարեխօսէ նրա մօտ առանց նրա հրամանի, Նա գիտէ նրանց ա-

շինենք: Եւ ոսկորներին մտի՛կ տուր, թէ ինչպէս ենք նրանց յարուցանում, յետոյ նրանց միտով հազցնում»: Եւ երբ սա յայտնի եղաւ նրան, ասաց, «գիտեմ, Աստուած ամենակարող է»:

262. Եւ երբ Աբրահամ ասաց, «ով իմ Տէր, ցոյց տուր ինձ թէ զու ինչպէս ես կենդանացնում մեռելներին». ասաց, «ապա մի՞թէ չես հաւատում». ասաց, «այո՛, սակայն որպէս զի սիրտս համոզւի». նա ասաց, «հիմա վե՛ր առ չորս թռչուն եւ նրանց կտորի՛ր քեզ մօտ, յետոյ նրանցից ամեն մի սարի վրայ մի կտոր դի՛ր. յետոյ կանչի՛ր նրանց, նրանք վազելով քեզ մօտ կըզան ուրեմն իմացի՛ր, որ Աստուած զօրեղ ամենագետ է»:

263. Նրանք որ իրանց ստացւածքը զոհում են Աստուծոյ ճանապարհումը, նման են այն հացահատիկին, որ եօթը հասկ է տալիս՝ ամեն մի հատկում հարիւր հատիկներ. եւ Աստուած կրկնապատիկ է տալիս, ում որ ուզում է: Եւ Աստուած առատ ամենագէտ է:

264. Նրանք որ իրանց ստացւածքներն Աստուծոյ ճանապարհումը զոհում են եւ յետոյ իրանց բարերարութեանը համար երախտագիտութիւն չեն պահանջում եւ չեն նեղացնում միւսներին, նրանց վարձքը իրանց Տիրոջ մօտ է. նրանց համար վախ չըկայ եւ նրանք չեն տրամի:

265. Մի մեղմ խօսքը եւ ներողամտութիւնը այն ողորմութիւն տալուցը աւելի լաւ է, որին հետեւում է նեղացում: Եւ Աստուած հարուստ ամենագէտ է:

266. Ով հաւատացեալներ, ձեր ողորմութիւնները երախտագիտութիւն պահանջելով եւ նեղացնելով մի՛ ունայնացնէք այն մարդու պէս, որ իր ունեցածը ողորմութիւն էր տալիս մարդկանց երեւալու համար, եւ չէ հաւատում Աստուծուն եւ վերջին օրւան. նա նման է մի զոգւած քարի. որի վրայ հող կայ, յետոյ մեծ անձրեւ է գալիս նրա վրայ եւ նրան չոր թողում: Իրանց վատտակածիցը չեն կարող մի բան շինել. եւ

Աստուած անհաւատների ազգին չէ ստաջնորդուի:

267. Իսկ նրանք, որ իրանց ստացւածքը զոհարե-
րում են Աստուծոյ հաճութիւնը փափագելով եւ իրանց
յօժար սրտիցը նրանք նման են մի բլուրի վրայ եղող
պարտէզի, որ նրա վրայ մեծ անձրեւ է գալիս եւ նա
իր պտուղները կրկնապատիկ է տալիս՝ եւ եթէ նրա
վրայ մի մեծ անձրեւ չըգայ, այն ժամանակ ցող է
գալիս. եւ Աստուած տեսնում է ինչ որ դուք անում էք:

268. Արդեօ՞ք ձեզանից մէկը կը փափագի, որ մի
պարտէզ ունենայ արմաւենիներով, խաղողի ծառերով,
որոնց տակովը գետեր են վազում, որ նա նրանում
ամեն պտուղներիցն ունենայ, եւ նա ծերացած յինի
ու տկար զաւակներ ունենայ. եւ յետոյ նրան մի փո-
թորիկ պատահի, որի մէջ կրակ լինի եւ նա այրէ—
այսպէս յայտնում է ձեզ Աստուած նշանները, որպէս զի
խորհէք:

269. Ո՛վ հաւատացեալներ, ողորմութիւն տւէ՛ք
ձեր շահած բարիքներիցը եւ այն բանիցը, որ մենք
հանել ենք ձեզ հաճար երկրիցը. եւ մի՛ ընտրէք վատը
որ նրանից ողորմութիւն տաք:

270. Եւ դուք նրան չէք ընդունի, միայն թէ խաբ-
ւած լինիք նրա մասին, եւ իմացէք որ Աստուած հա-
րուստ օրհնւած է:

271. Սատանան ձեզ աղքատութիւնով է սպառնում
եւ ձեզ զազրագործութիւններ հրամայում. բայց Աստ-
ուած ձեզ խոստանում է իր ներողութիւնը ու շնորհ-
քը. եւ Աստուած առատ ամենագէտ է:

272. Նա իմաստութիւնը տալիս է որին որ ուզում է,
եւ որին որ տրվում է իմաստութիւնը, նրան արգէ՛ն
չատ բարիքներ է տրւած: Սակայն միմիայն խելացի-
ներն են մտաբերում:

273. Եւ ինչ ողորմութիւն որ տալիս էք, կամ ինչ
ուխտ որ ուխտում էք, ահա՛ Աստուած գիտէ այն. բայց
անիրաւներն օգնականներ չեն ունենայ. եթէ դուք
ձեր ողորմութիւնը յայտնէք, լաւ է այդ, բայց եթէ

ժածուկ անէք եւ աղքատներին տաք, այն ժամանակ դա աւելի լաւ կը լինի ձեզ համար եւ ձեր չարութիւններէց մի մասը կը քուէ, եւ Աստուած գիտէ ինչ որ անում էք:

274. Նրանց առաջնորդելը քո պարտքը չէ, սակայն Աստուած առաջնորդում է որին որ ուզում է. եւ ինչ բարիք որ ողորմութիւն էք տալիս, այդ ձեր հոգիներէ օգտին համար է. եւ ինչ որ ողորմութիւն էք տալիս միմիայն Աստուծոյ հաճութիւնը շահելու համար է եւ ինչ բարիք որ ողորմութիւն էք տալիս, փոխարէնը ձեզ պիտի վարձատրուի եւ դուք չէք զրկուի, — այն աղքատներին, որոնք զբաղւած են Աստուծոյ ճանապարհուժր, չեն կարող երկրի վրայ ճանապարհորդել, արգէտները նրանց հարուստ են համարում նրանց համեստութեան պատճառով: Նրանց տեսքիցը դու կը ճանաչես նրանց, նրանք ստիպմամբ բան չեն ուզում: Եւ ինչ բարիք որ ողորմութիւն էք տալիս անա Աստուած գիտէ:

275. Նրոնք որ իրանց ստացւածքը գիշեր եւ ցերեկ տալիս են իբրեւ ողորմութիւն ծածուկ եւ յայտնի, նրանց վարձքը իրանց Տիրոջ մօտ է, եւ նրանց համար երկիւղ չըկոյ եւ նրանք չեն արտմի:

276. Նրանք որ վաշխառութիւնով չեն ապրում, միմիայն այնպէս յարութիւն կառնեն ինչպէս շիտիւած գիւհաճարներ: Սա նրա համար է որ ասում են, թէ «առեւտուրը նման է վաշխառութեան»: Սակայն Աստուած առեւտուրին հրաման է տւել իսկ վաշխառութիւնը արգիլել: Արդ՝ ով որ Տիրոջից խրատելով դադարէ վաշխ առնելուց, նրա անցեալն օգտակար կըլինի եւ նրա բանը Աստուծուն է յանձնած բայց ով որ գործուալ կրկնէ, այնպիսիները կրակի ընկերներ են եւ նրա մէջը յաւիտեան կը մնան:

277. Աստուած սնանկացնում է վաշխառութիւնը, իսկ ողորմութիւնը անեցնում է, եւ Աստուած ոչ մի յանցաւոր անհատին չէ սիրում: Բայց նրանք որ հա-

ւատում են եւ բարի գործեր անում եւ աղօթքը կատարում ու մաքրութեան տուրքը վճարում, նրանց վարձքը իրանց Տիրոջ մօտ է եւ նրանց համար երկիրդ չըկայ եւ նրանք չեն տրամի:

278. Ո՛վ հաւատացեալներ, վախեցէք Աստուածանից եւ թողեցէք վաշխի մնացորդը, եթէ դուք հաւատում էք:

279. Իսկ եթէ չանէք, այն ժամանակ ձեզ պատերազմ է հրատարակվում Աստուծոյ եւ նրա մարգարէի կողմանէ. բայց եթէ ապաշխարէք, այն ժամանակ ձեր դրամագլուխը ձերն է. դուք անիրաւութիւն չէք անի եւ ձեզ էլ անիրաւութիւն չեն անի:

280. Եթէ մէկը դժուարութիւն ունի, համբերեցէ՛ք մինչեւ կարողանայ պարտքը տալ. բայց եթէ իրբեւողորմութիւն տաք, այդ աւելի լաւ կը լինի ձեզ համար եթէ հասկանում էք:

281. Եւ վախեցէք այն օրիցը, երբ դուք եւ պիտի գնաք Աստուծոյ մօտ. այն ժամանակ ամեն մի հոգուն պիտի մատուցանուի իր վաստակածը, եւ նրանք չեն զրկուի:

282. Ո՛վ հաւատացեալներ, երբ դուք մի որոշ ժամանակով իրարից պարտք էք անում, այդ զրեցէ՛ք, եւ թո՛ղ մի արգարամիտ գրագիր գրէ այդ ձեր մէջը եւ գրագիրը թո՛ղ չը մերժէ գրելը, ինչպէս որ Աստուած նրան սովորեցրել է. թո՛ղ նա գրէ եւ պարտատէրը թելադրէ, եւ նա վախէ իր Տէր Աստուածանից եւ նրբանից մի բան չը պակասացնէ. իսկ եթէ պարտքին տէրը ապուշ է կամ տկարամիտ, կամ կարող չէ ինքը թելադրէ, թո՛ղ այն ժամանակ նրա հոգաբարձուն թելադրէ արգարութեամբ եւ ձեր մարդկանցից երկուսը վկայ լինեն. եւ եթէ երկու մարդ չը գտնուին, այն ժամանակ մէկ մարդ եւ երկու կնիկ լինեն առ Վկաներից, որ դուք կ'հաւանէք. որ նրանցից մէկը սխալելիս այն մէկը միւսին յիշեցնէ. եւ երբ վկաները կանչվում են, չը պէտք է մերժեն եւ արհամարհեն որ գրեն այն բանը թէ՛ փոքր լինի թէ՛ մեծ մինչեւ մի որոշ ժամանակ:

Մա աւելի արդար է Աստուծոյ մօտ եւ վկայութեան համար զօրաւոր է եւ յարմար որ չի կասկածիք, բացի միայն առեւտուրը վայրկենական լինի, որ նրան ձեր միջումը կարգադրէք. այն ժամանկ յանցոնք չրկայ ձեզ համար եթէ չը գրէք: Եւ առեւտուրի ժամանակ վկաներ ունեցէք: Եւ ոչ գրագիրը եւ ոչ էլ վկան չը պէտք է ստիպեն բայց եթէ ստիպում անէք, այն ժամանակ սա ձեզանից մի շարագործութիւն է: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ Աստուած ձեզ կը սովորեցնէ, եւ Աստուած ամենագէտ է:


283. Եւ եթէ դուք ճանապարհորդելիս լինէք եւ գրագիր չը գտնէք, այն ժամանակ գրու առնել: Իսկ եթէ իրար վրայ վստահութիւն ունենաք, այն ժամանակ թո՛ղ նա, որին վրայ որ վստահութիւն գրեւած է, իրան յանձնուածը ետ տայ եւ վախենայ իր ձէր Աստուածանից, Եւ վկայութիւնը մ'ի ծածկէք. ով որ ծածկէ, նրա սիրտը չար է. եւ Աստուած գիտէ թէ դուք ինչ էք անում:

284. Երկինքներումը եւ երկրումը եղածը Աստուծունն է. եւ եթէ ձեր սրտերում եղածը յայտնէք կամ ծածկէք Աստուած նրա մասին ձեզանից հաշիւ է պահանջելու, եւ նա ներում է որին ուզում է, եւ պատժում է որին ուզում է, եւ Աստուած ամենակարող է:

285. Մարգարէն հաւատում է նրան, ինչ որ իր Տիրոջից իջեցրւած է իրան. նոյնպէս եւ հաւատացեալները, ամեն մէկը հաւատում է Աստուծուն եւ նրա հրեշտակներին եւ նրա գրքերին եւ նրա մարգարէներին. մենք նրա մարգարէների ոչ մէկի մէջ տարբերութիւն չենք անում եւ ասում են. «մենք լսում եւ հնազանդում ենք: Ների՛ր ով մեր Տէրը. եւ մենք քեզ մօտ ետ ենք դառնալու»:

286. Աստուած ոչ մի անձին նրա կարողութիւնիցը վեր պարտաւոր չէ անում: Նրա արած բարիքի վարքն իբրանն է, գործած չարիքի պատիժն էլ իբրանն է: Ո՛վ մեր Տէրը, մեզ մի՛ պատժիր, եթէ մոռանանք կամ սխալ-

ւենք: Ո՛վ մեր Տէրը, եւ մեզ վրայ ծանրութիւն մի՛ բեռցնիր, ինչպէս որ զու մեզանից առաջ եղողներին բեռցրել ես. եւ մեզ մի ծանրաբեռնիր մեր կարողութիւններիցն աւելի. եւ ների՛ր մեզ եւ թո՛ղ մեր յանցանքները եւ ողորմի՛ր մեզ, զու ես մեր պաշապանը, ուրեմն մեզ օգնի՛ր անհաւատների ազգին դէմ:



3) ՍՈՒՐԷ՝ ԱԼԸ ԻՄՐԱՆ

Մէգինէական. Երկու հարիւր այէ

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Ա . Լ . Մ . Աստուածը — Աստուած չըկայ բացի նրանից. կենդանի յաւիտենական է:

2. Որ վար իջեցրեց քեզ վրայ արդարութեամբ այն գիրքը, որ հաստատում է իրանից առաջ եղածը, եւ որ առաջուց իջեցրել է Օրէնքը եւ Աւետարանը իբրեւ առաջնորդութիւն մարդկանց, եւ իջեցրել է Ղուրանը:

3. Ահա՛ Աստուծոյ նշաններին չը հաւատացողների համար սաստիկ պատիժ կայ, եւ Աստուած զօրաւոր վրէժխնդիր է:

4. Ահա՛ Աստուածանից ծածուկ մի բան չըկայ երկրի վրայ եւ ոչ էլ երկնքումը. նա որ ձեզ ձեւակերպում է արգանդներումն ինչպէս որ կամենում է. մի Աստուած չըկայ բացի նրանից, որ զօրաւոր իմաստունն է:

5. Նա է, որ գիրքը իջեցրել է քեզ վրայ: Նորանում այէներ կան որ հաստատ են, սրանք գրքի մայրն են. եւ միւսները նմանաւորներն են: Իսկ նրանք որ սրբատերումը կասկած կայ, նրանում գտնւած նմանաւորներին են հետեւում վրգովմուսնքի փափագելով եւ նրա-

մեկնու: թիւնը փափագելով: Եւ նրա մեկնութիւնը ոչ
ով չը գիտէ բացի Աստուածանից եւ գիտութեան մէջ
ամբացած ներքիցը, որ ասում են, թէ «մենք հաւատում
ենք դրան բոլորը մեր Տիրոջ կողմիցն է»: Աւրին
միմիայն խելացիներն են տարերում:

6. Ո՛վ մեր Տէր, մեզ տաջնորդելուցդ յետոյ մեր
սրտերը կասկածոտ մի՛ անիր. եւ քո կողմիցը մեզ
ողորմութիւն շնորհի՛ր. որովհետեւ դու շնորհիչն ես:

7. Ո՛վ մեր Տէր, դու ժողովելու ես մարդկանց այն
օրը՝ որի մասին կասկած չկայ որովհետեւ Աստուած իր
խոստումը չի դրժի:

8. Իրաւ նրանք որ չեն :տառում, — ոչ նրանց
ստացւացքը եւ ոչ նրանց որդիքը կարող են օգնել նր-
անց մի բանում Աստուծոյ գէժ եւ նրանք կրակի կե-
րակութն են:

6. Փարաօնի ցեղն եւ նրանից առաջ եղածների սո-
վորութեան պէս սուտ համարեցին մեր նշանները, եւ
Աստուած էլ նրանց պատժեց իրանց մեղքերի պատճա-
ռով, եւ Աստուած խիստ պատժող է:

10. Դու ասա՛ չ՛հաւատացողներին, «դուք անպատճառ
պիտի յաղթւիք եւ գժոխքը գցւիք. որ վատ բը-
նակարան է»:

11. Հիմա այն երկու զօրագունդերի մէջ, որ իրար
հետ ճակատամարտեցին եւ որոնցից մէկը պատերազ-
մում էր Թոտուծոյ ճանապարհում, իսկ միւսն անհաւատ
էր, ձեզ համար նշան կար. աչքով տեսածին համեմատ
իրանց երկու շափն էին համարում: Սակայն Աստուած
յօրացնու՛ է իր օգնութիւնովը որին կամենում է:
Իրաւ սրանում մի խրատ կայ աչքը բաց եղողների համար:

12. Իբրեւ զւարճան տրամ է մարդկանց զւարճու-
թեան սէր գէպի կանայք եւ որդիք եւ ծանրակշիռ
գիզած ոսկի եւ արծաթ եւ ազնիւ ձիեր եւ անասուն-
ներ եւ ազարակներ: Սրանք այս աշխարհի վայել-
մունքներն են. բայց գեղեցիկ վայրը Աստուծոյ մօտ է:

13. Ասա՛, «արգեօ՞ք սրանից աւելի լաւ բան լուր

տամ նրանց որ եղկի զամ են. թէ իրանք իրանց Տիրոջ մօտ ունեն գրախաններ, որոնց տակուր գետեր են հասում. իրանք յախտեան նրանց մէջը կը մնան, եւ մաքուր կնիկներ եւ Աստուծոյ հաճութիւնը»: Եւ Աստուած տեսնում է իր ծառաներին:

14. Որոնք տեսն են, « ով մեր Տէր, մենք հաւատում ենք, ուրեմն ներիր մեզ մեր մեղքերը եւ մեզ պահիր կրակի տանջանքիցը»

15. « Համբերողներին եւ արդարներին եւ հեզերը եւ սղորմութիւն աւողներին եւ առաօտները մեղքի թողութիւն խնդրողներ ն»:

16. Աստուած վկայել է, որ բացի իրանից Աստուած չըկայ, նաեւ հրեշտակները եւ գիտունները հաստատում են իրաւունքով, որ Աստուած չըկայ ուր նրանից, որ հզօր իմաստուն է:

17 Աստուծոյ մօտ ուղիղ կրօնքը խլամն է. եւ նրանք որոնք գիրք արւած է, միայն այն ժամանակ անձանաձայնութիւն արեցին իրար նախանձելով, երբ իրանց գիտութիւն արւեց: Եւ ով որ Աստուծոյ նշաններն ուրանայ, տնա Աստուած արագ հաշտտես է:

18. Եթէ քեզ հետ վիճարանեն, տաս', « ես խլամացի եմ եւ երես Աստուծուն ուղիղ ենք եւ եւ իմ հետեւողները»:

19. Եւ տաս' նրանց որոնց գիրք արւած է, եւ անդրագէտներին, « գուք կ խլամա՞նաք». եթէ խլամանան այն ժամանակ ուղիղ կ'ասաջնորդւին. իսկ եթէ մերժեն քո պարտքը միայն առաջարկել է. եւ Աստուած տեսնում է իր ծառաներին:

20. Իրաւ նրա՞ք որ Աստուծոյ նշաններին չեն հաւատում եւ անիրաւարար սպանում են մարգարէներին եւ մաղկանցից նրանց, որ ճշմարտութիւն են հրամայում, — նրանց ցաւալի տանջանք գուշակիւր:

21. Նրանց գործքերն այս եւ միւս աշխարքումը կորած են, եւ նրանք օգնականեր չեն ունենայ:

22. Արդեօ՞ք ուշ չը դարձրիր նրանց, որոնց գրքիցը

մի մաս է տրւած, որ կանչեցին Աստուծոյ գրքի մօտ, որ սա վճռէր նրանց մէջ, բայց նրանցից մի մասը մերժեց եւ հեռացաւ:

23. Սա նրա համար էր, որ ասում էին, «կրակը մեզ միմիայն մի քանի օր կը դպչի», եւ իրան, հնարածը մոլորեցրեց նրանց իրանց կրօնքի մէջ:

24. Նա ի՞նչպէս է ապա, երբ մենք նրանց ժողովենք այն օրը որի մասին կասկած չըկայ, եւ ամեն մի հոգի իր վաստակածը կը ստանայ, եւ նրանց ա՛ իրաւութիւնն չի լինի:

25. Ասի՛ր, «ով Աստուած, իշխանութեան իշխան, դու տալիս ես իշխանութիւնը ում որ կամենում ես. եւ առնում ես իշխանութիւնը, որից որ կամենում ես. եւ պատում ես ում որ կամենում ես, եւ անարգում ում որ կամենում ես. բարիքը քո ձեռքիդ է. դու ամենակարող ես:

26. Դու մտցնում ես գիշերը ցերեկի մէջ եւ մրացնում ես ցերեկը գիշերի մէջ, եւ հանում ես կենդանին մեռածիցը եւ հանում ես մեռածը կենդանուցը. եւ կամեցածիդ ապրուստ ես տալիս առանց հաշի:

27. Հաւատացեալները թող չ'ընդունին անհաւատներին իբրեւ պաշտպան բացի հաւատացեալներից: Եւ ով որ այս բանն անէ, նա Աստուծոյ առաջին մի բանն չէ. բացի եթէ նրանցից երկիւղ էք կրում. ստուածինքը կը պաշտպանէ ձեզ, եւ դուք Աստուծուն պիտի դառնաք: Ասա՛, «եթէ ծածկէք ձեր սրտերումը եղածը կամ յայտնէք, դա Աստուած գիտէ, եւ գիտէ, թէ ինչ կայ երկինքներումը եւ երկրի մէջ, եւ Աստուած ամենակարող է,

28. Մի օր ամեն մի հոգի պատրաստ կը տեսնէ այն բարիքը որ գործել է, նաեւ իր գործած արութիւնը, կը փափագի, ո՛հ եթէ նրան եւ իր մէջտեղը մի մեծ անջըրպետ լինէր: Բայց Աստուած ինքը կը պաշտպանէ ձեզ եւ Աստուած իր ծառաներին գթած է:

29. Ասա՛, «եթէ դուք սիրում էք Աստուծուն, ինձ

— հետեւեցէ՛ք. այն ժամանակ Աստուած ձեզ կը սիրէ եւ ձեր մեղքերը ձեզ կը ներէ: եւ Աստուած ներող ուղորմած է: Ասա՛, «հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ մարգարէին. իսկ եթէ մերժէք, այն ժամանակ Աստուած անհաւատներին չի սիրի»:

30. Իրաւի Աստուած ընտրեց Ադամին եւ Նոյին եւ Աբրահամի գերդաստանը եւ Իմրանի գերդաստանը առաւել քան աշխարհքները, որոնցից ոմանք ոմանց ցեղերն են, եւ Աստուած լսող իմաստուն է:

31. Երբ Իմրանի կիսն ասաց, «ո՛վ իմ Տէր, իմ որովայնում եզածը ես քեզ եմ ուխտում իբրեւ նուէր. ընդունի՛ր ինձանից, որովհետեւ դու լսող ամենագէտ ես»: Բայց երբ ծնեց նրան, ասաց «ով իմ Տէր, ես աղջիկ եմ ծնել»: Բայց Աստուած գիտէր թէ ինչ է ծնել. եւ արուն էզի նման չէ: «Եւ ես նրան Մարիամ կոչեցի. եւ քարակոծ սատանայիցը ես քո պաշտպանութեանն եմ յանձնում նրան եւ նրա սերունդը»:

32. Եւ նրա Տէրը գեղեցիկ հաճութիւնով ընդունեց նրան եւ նրանից մի գեղեցիկ բոյս բուսեցրեց, եւ նրա խնամատար շինեց Չաքարիային: Ամեն անգամ, որ Չաքարիան նրա սենեակն էր մտնում, նրա մօտ կերակուր էր գտնում, ասաց, «ո՛վ Մարիամ, սա որտեղից է քեզ»: Նա էլ ասաց, «Աստուածանից է, որովհետեւ Աստուած իր կամեցածին կերակրում է անհաշիւ»:

33. Այստեղ աղօթք արեց Չաքարիան իր Տիրոջը աւելով, «ո՛վ իմ Տէր, ինձ մի բարի սերունդ տուր քո կողմից, որովհետեւ դու աղօթք լսող ես»: Այն ժամանակ հրեշտակը կանչեց նրան եւ նա աղօթքի կանգնած էր սենեակումը:

34. Ահա՛ Աստուած քեզ աւետում է Եանեայի մասին: որ կը հաստատէ Աստուծոյ խօսքը եւ կը լինի մեծարոյ եւ ժուժկալ եւ արդար մարգարէ»:

35. Նա էլ ասաց, «ինձ ինչպէս կարող է որդի լինել,

որ ծերութիւնը ինձ արդէն հասել է եւ կրնս էլ ամուլ է»։ Պատասխանեց, «այսպէս է. Աստուած անուամ է ինչ որ ուզում է»։

36. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ինձ մի նշան տուր»։ Պատասխանեց, «քո նշանը կը լինի, որ երեք օր չես խօսի մարդկանց հետ բացի միայն ձեւերով. ուրիմն յիշի՛ր քո Տիրոջը շատ անգամ եւ օրհնի՛ր իրիկուններն ու առաւօտները»։

37. Եւ երբ հրեշտակն ասաց Մարիամին, «ո՛վ Մարիամ, ահա՛ Աստուած քեզ ընտրել եւ քեզ մաքրել է եւ քեզ ընտրել է աշխարհքի կնիկների միջիցը»։

38. «Ո՛վ Մարիամ. հնազանդի՛ր քո Տիրոջը եւ երկրպագի՛ր ու խոնարհի՛ր խոնարհողներին հետ»։

35. «Սա մի գաղանիք է որ քեզ իմացնուում է. մենք այդ քեզ յայտնեցինք յայտնութիւնով եւ դու նրանց մօտ չէիր, երբ վիճակ ձգեցին, թէ ով պէտք է Մարիամի խնամատարը լինի. եւ դու նրանց մօտ չէիր, երբ նրանք վիճում էին»։

40. Այն ժամանակ ասաց հրեշտակը, «ո՛վ Մարիամ, ահա՛ Աստուած քեզ աւետիք է տալիս իր խօսքի մասին, նրա անունն է Յիսուս Քրիստոս որդի Մարիամի նշանաւոր այս աշխարհքում եւ հանդերձեալում, եւ ամենամերձաւորներիցը մէկն է»։

41. «Եւ նա կը խօսի մարդկանց հետ դեռ օրօրոցումը, եւ չափահաս նաեւ արդարներիցը կը լինի»։

42. Նա էլ ասաց, «ով մեր Տէր, եւ ի՞նչպէս զաւակ կ'ունենամ, քանի որ ինձ մի մարդ չէ շօշափել»։ Պատասխանեց, «այսպէս է. Աստուած ստեղծում է ինչ կամենում է. երբ մի բան է վճռել, միայն ասում է նրան «եղի՛ր», եւ նա լինում է»։

43. «Եւ նրան սովորեցնելու է գիրքը եւ իմաստութիւնը եւ օրէնքը եւ Աւետարանը. եւ նա կը լինի մարգարէ Իսրայէլի որդկանցն ուղարկւած, թէ. «ես եկել եմ ձեզ մօտ նշանով ձեր Տիրոջ կողմից, ես ձեզ համար ցելիցը թռչունի կերպարանքով մի բան կը

չինեմ, եւ յետոյ նրա մէջը շուռնչ կը փչեմ, եւ նա Աստուծոյ հրամանովը թռչուն կը դառնայ. ես կ'առողջացնեմ Աստուծոյ հրամանովը մեռելներին, եւ ձեզ կը տեղեկացնեմ թէ ինչ պէտք է ուտէք եւ ինչ պէտք է պաշար հաւաքէք ձեր տներումը: Ահա սրանում նշան կայ ձեզ համար, եթէ դուք հաւատացեալներ էք»:

44. «Եւ հաստատում եմ ինձանից առաջ եղող օրէնքը եւ ազատութիւն եմ տալիս ձեզ մի քանի բաների մասին, որ ձեզ արգիլուած էին, եւ ձեր Տէրոջը կողմից նշանով եկել եմ ձեզ մօտ: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հնազանդեցէ՛ք. որովհետեւ Աստուած իմ Տէրը եւ ձեր Տէրն է, Ուրեմն ծառայեցէ՛ք նրան, սա ճշմարիտ ճանապարհ է»:

45. Եւ երբ Յիսուս իմացաւ նրանց անհաւատութիւնը, ասաց. «ո՞վ են ինձ պատերազմի մէջ օգնողներն ի սէր Աստուծոյ». առաքեալներն ասացին, «մենք Աստուծոյ օգնականներն ենք. մենք հաւատում ենք Աստուծուն. հիմայ վկայի՛ր, որ մենք մուսլիմներ ենք»:

46. «Ով մեր Տէր, մենք հաւատում ենք քո վարիջեցրածին եւ հետեւում ենք մարգարէին. ուրեմն մեզ գրիւր վկաների հետ միասին»:

47. Եւ նրանք խորամանկութիւն արին եւ Աստուած էլ խորամանկութիւն արեց. եւ Աստուած ամենալաւ խորամանկն է:

48. Այն ժամանակ Աստուած ասաց, «ով Յիսուս ես քեզ մահ կըրտամ եւ ինձ մօտ կը բարձրացնեմ, եւ ես քեզ կը մաքրեմ անհաւատներիցը, եւ քեզ հետեւողներին կը դնեմ անհաւատներից բարձր մինչեւ յարութեան օրը. յետոյ ինձ մօտ էք դառնալու, եւ ես կը վճռեմ ձեր մէջ այն բաները, որի մասին դուք իրար հետ համաձայն էիք»:

49. «Բայց նրանք որ անհաւատ են, նրանց սաստիկ կը պատժեմ այս աշխարհքում եւ հանդերձեալումը, եւ նրանք օգնականներ չեն ունենայ»:

50. «Իսկ նրանք որ հաւատում են եւ բարի գործեր գործում, նրանց վարձքերը կը վճարւին, եւ Աստուած անիրաւեններին չէ սիրում»:

51. «Մենք սա կարգում ենք քեզ իբրեւ նշաններ եւ իմաստուն զգուշացում»:

52. Իրաւի Յիսուսի օրինակը Աստուծոյ առաջին նման է Աղա՛մի օրինակին, որ նրան ստեղծեց հողից, յետոյ նրան ասաց, «եղի՛ր», եւ եղաւ:

53. Ճշմարտութիւնը քո Տիրոջիցն է. դու կասկածողներէցը մի՛ լինիր:

54. Արդ քեզ համար գիտութիւն գալուց յետոյ քեզ հետ վիճողին ասա՛, «եկէ՛ք կանչենք մեր որդկանցը եւ ձեր որդկանցը եւ մեր կնիկներին եւ ձեր կնիկներին, եւ մեր անձերին եւ ձեր անձերին, յետոյ աղաչենք եւ Աստուծոյ անէ՛ծքը դնենք ստախօսների վրայ»:

55. Ահա՛ սա ճշմարիտ պատմութիւն է, եւ բացի Աստուածանից ուրիշ Աստուած չկայ, եւ Աստուած է զօրաւոր իմաստունը:

56. Բայց եթէ նրանք մերժեն, այն ժամանակ Աստուած գիտէ շարագործներին:

57. Ասա՛, «ո՛վ գիրք ունեցողներ, եկէ՛ք մեր ու ձեր մէջ մի համահաւասար խօսք ընդունենք որ Աստուածանից ջոկ ուրիշ Աստուծոյ չը ծառայենք, եւ նրան մի բան ընկեր չը դնենք, եւ բացի Աստուածանից միմեանց տէր չ՛ընդունենք: Հիմայ եթէ մերժեն, վկայեցէ՛ք, որ մենք մուսլիմներ ենք»:

58. Ո՛վ գիրք ունեցողներ, ինչո՞ւ էք վիճում Արահամի մասին: Օրէնքը եւ Աւետարանը միմիայն նըրանից հտքն է վար իջեցրուել: Մի՞թէ չէք հասկանում:

59. Այո՛, դուք պէտք է այն բաների մասին վիճէք, որ գիտէք: Ուրեմն ինչո՞ւ էք այն բանի մասին վիճում, որ չը գիտէք: Բայց Աստուած գիտէ, իսկ դուք չը գիտէք:

60. Աբրահամը հրեայ չէր եւ քրիստոնեայ չէր. այլ բարեպաշտ մուսլիմ էր, եւ նա կոապաշտ չէր:

61. Իրաւ մարդկանցից նրանք են Աբրահամի նմանողները, որոնք հետեւում են նրան եւ այս մարգարէն եւ հաւատացեալները. եւ Աստուած հաւատացեալների պաշտպանն է:

62. Գիրք ունեցողներից մի խումբ աշխատում է որ ձեզ մոլորեցնէ՝ բայց նրանք միմիայն իրանց են մոլորեցնում, սակայն չեն հասկանում:

63. Ո՛վ գիրք ունեցողներ, ինչո՞ւ էք Աստուծոյ նշաններն ուրանում. քանի որ դուք վկաներ էք:

64. Ո՛վ գիրք ունեցողներ, ինչո՞ւ էք ճշմարտութիւնը ունայնութեան հետ խառնում, եւ ճշմարտութիւնը ծածկում, քանի որ դուք գիտէք:

65. Գիրք ունեցողներից ոմանք ասում են, «հաւատացէ՛ք այն բանին որ իջեցրել է հաւատացեալներին ցերեկ ժամանակը, իսկ միւսն ուրացէ՛ք որպէս զի ես գան»:

66. «Եւ միմիայն նրան հաւատացէ՛ք որ հետեւում է ձեր կրօնքին»: Դու ասա՛, «իրաւ ուղիղ ճանապարհը միմիայն Աստուծոյ ճանապարհն է, որ մի ուրիշին էլ կը տրւի ինչպէս որ ձեզ է տրւած: Կամ ձեզ հետ կը վիճե՞ն ձեր Տիրոջ առաջին»: Դու ասա՛, «ամեն բարիք Աստուծոյ ձեռքին է, նա տալիս է այն որին կամենում է. եւ Աստուած սոստ իմաստուն է»:

67. «Իր ողորմութիւնը յատկացնում է, որին կամենում է. եւ Աստուած մեծ շնորհքի տէր է»:

68. Գիրք ունեցողներից այնպիսին կայ, որ եթէ նրան մի տաղանդ յանձնես, նա քեզ ետ կը դարձնէ. եւ նըրանցից այնպիսին էլ կայ, որ եթէ նրան մի դրամ յանձնես, քեզ ետ չի դարձնի, եթէ միշտ նրան չը ստիպես:

69. Սա այն պատճառով է որ ասում են, թէ, «մենք անգրագէտներին պարտական չենք, եւ Աստուծոյ մասին սուտ են ասում, թէ եւ իրանք գիտեն»:

70. Հարկաւ, ով որ իր ուխտը կատարէ եւ երկիւղած է. ահա՛ Աստուած սիրում է երկիւղածներին:

71. Իսկ նրանք, որ ծախում են իրանց արած ուխտը Աստուծուն եւ իրանց երդումները փոքր գինով, նրանք միւս աշխարհքում բաժին չ'ունին, եւ Աստուած նրանց հետ չի խօսի եւ յարութեան օրը նրանց

լերայ չի նայի եւ նրանց չի մաքրի. եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ:

72. Եւ ահա՛ նրանցից կան ոմանք, որ իրանց լեզուներովը կարգում են գիրքքը. որ դուք կարծէք թէ գրքիցն է բայց գրքիցը չէ. եւ ասում են թէ դա Աստուծոյ կողմանէ է, բայց Աստուծոյ կողմանէ չէ. եւ նրանք Աստուծոյ մասին սուտ են ասում, թէ եւ իրանք գիտեն:

73. Մարդու չի վայելի, որ Աստուած նրան գիրք եւ իմաստութիւն եւ մարգարէութիւն տայ, եւ յետոյ նա մրդկանց ասէ, «դուք ինձ ծառաներ եղէ՛ք եւ ոչ թէ Աստուծայ. բայց հոգեւորականներ եղէ՛ք այն բանի մէջ որ արդէն գիտէք Աստուծոյ խօսքիցը եւ ինչ որ սովորել էք:

74. Եւ նա ձեզ չէ հրամայում, թէ «հրեշտակներին եւ մարգարէներին ձեզ համար պաշտպաններ ընդունեցէք: Մի՞թէ նա ձեզ անհաւատութիւն կը հրամայէ, բանի որ դուք արդէն մուսլիմներ էք դառել»:

75. Եւ երբ Աստուած մարգարէների հետ դաշինք դրաւ, ասաց, «սա է իմ ձեզ տւած գիրքը եւ իմաստութիւնը: Յետոյ ձեզ մօտ մի մարգարէ է դալու որ ձեր մօտը եղած հաւատասէ, որ դուք հաւատաք նրան եւ որ դուք նրան օգնէք»: Նաեւ ասաց, «պատրաստ էք եւ կ'ընդունէ՞ք իմ այս դաշինքը»: Նրանք էլ ասացին, «պատրաստ ենք»: Եւ նա ասաց, «ապա ուրեմն վկայ եղէք, եւ ես էլ ձեզ հետ վկաներիցն եմ»:

76. Հիմայ ով որ սրանից յետոյ ետ դառնայ, այնպիսիները չարագործներ են:

77. Արդեօ՞ք նրանք Աստուծոյ կրօնքիցը ջոկ մի կրօնք են փափագում: Արդէն նրան անձնատուր է եղել այն որ երկինքներումն ու երկրի վրայ է կամայ եւ ալ կամայ. եւ նրա մօտ պիտի ետ դառնան:

78. Ասա՛, «Տենք հաւատում ենք Աստուծոյն եւ նրան ինչ որ իջեցրւած է մեզ համար եւ իջեցրւած է Աբրահամին եւ Իսմայէլին եւ Իսահակին եւ Յակոբին

եւ ցեղերին, եւ ինչ որ տրւած է Մովսէսին եւ Յիսուսին եւ մարգարէներին իրանց Տիրոջիցը. մենք նրանցիցը ոչ մէկի մէջ տարբերութիւն չենք գնում. եւ մենք նրա մուսլիմներն ենք»:

79. Եւ ով որ բացի իսլամից մի կրօնք ուզէ, դա նրանից բնաւ չի ընդունուի, եւ նա միւս աշխարհքումը վնասողներիցը կը լինի:

80. Աստուած ինչպէս առաջնորդ է մի ազգի, որ իրանց հաւատալուցը յետոյ անհաւատ են դառնում, եւ վկայել էին որ մարգարէն ճշմարիտ է եւ նրանց համար յայտնի փաստեր էին եկել. ուրեմն Աստուած անիրաների ազգին չի առաջնորդի:

81. Նրանց պատիժն այն է, որ Աստուծոյ եւ հրեշտակների եւ բոլոր մարդկանց անէծքը նրանց վրայ է:

82. Նրանք յաւիտեան նրանում կը մնան, տանջանքը նրանցից չի թեթեւացնուի եւ նրանց ժամանակ չի տրուի:

83. Բացի նրանցից, որ սրանից յետոյ ապաշխարում եւ բարի գործքեր են գործում. որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

84. Իրաւ նրանք իրանց հաւատալուցը յետոյ անհաւատ են դառնում, յետոյ անհաւատութիւնը շատացնում. նրանց ապաշխարութիւնը բնաւ չի ընդունուի. նրանք մոլորւածներ են:

85. Որովհետեւ նրանք, որ չէին հաւատում եւ մեռան եւ իրանք անհաւատներ էին, նրանց ոչ մէկիցն էլ չի ընդունուի երկիրը լիքը ոսկիով, եթէ նրանով փրկուիլ ուզէ էլ: Նրանց համար ցաւալի տանջանք կայ եւ նրանք ոչ մի օգնական չ'ունեն:

86. Դուք արգարութեանը չէք հասնի, մինչեւ ձեր սիրածիցը ողորմութիւն չ'տաք. եւ ինչ բան որ ողորմութիւն էք տալիս, ահա Աստուած գիտէ դա:

87. Ամեն կերակուր սուրբ էր Իսրայէլի որդիների համար բացի նրանից, որ Իսրայէլն ինքն էր իրան համար արգիլել օրէնքի իջնելուց առաջ: Ասա՛, «բերէ՛ք

ուրեմն օրէնք՝ եւ կարգացէ՛ք եթէ դուք արդարներ էք»:

88. Ուրեմն ով որ Աստուծոյ մասին սուտ հնարէ սրանից յետոյ նրանք անիրաւներն են:

89. Ասա՛, «Աստուած ճշմարիտ է». ուրեմն հետեւեցէ՛ք Աբրահամի կրօնքին բարեպաշտարար. եւ նա կոպաշտ չէր:

90. Ահա առաջին տաճարը, որ շինեց մարդկանց համար, Բէքքէի միջինն է, օրհնած է, աշխարհքի համար առաջնորդութիւն է:

91. Նրանում յայտնի փաստեր եղող նշաններ կան՝ Աբրահամի տեղը. եւ ով որ այնտեղ մտաւ, նա ապահով է. եւ մարդիկ պարտական են Աստուծոյ, որ այդ տաճարի ուխտին գնան, ով որ այնտեղ գնալու կարողութիւնն ունի:

92. Եւ ով որ անհաւատ է — ասա՛ Աստուած կարօտ չէ աշխարհքներին:

93. Դու ասա՛, ո՛վ գիրք ունեցողներ, ինչո՞ւ չէք հաւատում Աստուծոյ նշաններին. եւ Աստուած վկայ է ձեր արարքներին»:

94. Դու ասա՛, «ո՛վ գիրք ունեցողներ, ինչո՞ւ էք մոլորեցնում Աստուծոյ ճանապարհիցը հաւատացողին եւ նրանց ծոցնում, քանի որ դուք վկաներ էք, եւ Աստուած անտեղեակ չէ ձեր արարքներին»:

95. Ո՛վ հաւատացեալներ, եթէ գիրք ունեցողների մի մասին հնազանդէք, նրանք ձեզ անհաւատութեան կը դարձնեն ձեր հաւատալուց յետոյ:

96. Եւ դուք ինչպէս էք անհաւատ դառնում քանի որ ձեր առաջին կարգացում են Աստուծոյ նշանները եւ ձեր մէջը նրա մարգարէն կայ. եւ ով Աստուծուն պինդ բռնէ, Աստուած նրան արդէն կառաջնորդէ ուղիղ ճանապարհով:

97. Ո՛վ հաւատացեալներ, վախեցէք Աստուածամոնից, ինչպէս որ նրա երկիւղածութեանը վայելում է, եւ բնաւ պիտի չը մեռնէ՛ք առանց մուսլիմ դառնալու:

98. Ամենքդ էլ Աստուծոյ չուանիցը բռնեցէք, եւ

մի՛ բաժանուիք, եւ յիշեցէք թէ Աստուծոյ շնորհքը ձեզ վրայ էր երբ թշնամիներ էիք եւ նա ձեր սրտերը հաշտեցրեց իրար հետ եւ դուք նրա շնորհքովը եղբայրներ եղաք :

99. Եւ դուք կրակի անդունդի եզերքին էիք եւ նա ձեզ այնտեղից ետ քաշեց եւ Աստուած այսպէս ցոյց տուեց ձեզ որ ուղիղ առաջնորդուիք :

100. Եւ ձեզանից մէկ ժողովուրդ առաջ գայ, որ հրաւիրէ գէպի բարին եւ որ հրամայեն օրինաւոր բաները ու արգիլեն վատերը. գրանք են երջանիկները :

101. Եւ դուք նրանց մի՛ նմանուիք որ բաժին բաժին են դառնում եւ իրանց յայտնութիւններ դալից յետոյ իրար հետ վէճեր են անու.մ. նրանց համար մեծ տանջանք կայ :

102. Այն օրը երեսներ են սպիտականալու եւ երեսներ սեւանալու, իսկ երեսները սեւացածներին կ'ասեն. «արդեօ՞ք հաւատալուց յետոյ անհաւատ եղաք, ուրեմն ճաշակեցէ՛ք ձեր անհաւատութեան տանջանքը» :

103. Բայց երեսները սպիտակացածները Աստուծոյ ողորմութեան մէջը կը լինեն եւ յաւիտեան նրանում կը մնան :

104. Սա Աստուծոյ նշաններն են որ ճշմարտութիւնով կարգում ենք քո առաջին եւ Աստուած աշխարհքին անիրաւութիւն չի կամենայ :

105. Եւ երկինքներումն ու երկրումն եղածներն Աստուծունն են եւ բոլոր բաներն Աստուծոյ մօտ պիտի ետ դառնան :

106. Դուք ազգերի լաւագոյնն էիք. մարդկանց առաջր դուրս հանուեցիք, որ օրինաւոր բաները հրամայում եւ վատը արգիլում էք, եւ հաւատում էք Աստուծուն : Եւ եթէ գիրք ունեցողներն էլ հաւատային, աւելի լու կը լինէր նրանց համար : Նրանցից կան հաւատացիայներ, բայց նրանցից շատերը չարագործներ են :

107. Նրանք ձեզ բնաւ չեն վնասի. այլ կը նեղա-

ցըննն. եւ եթէ ձեզ հետ պատերազմեն, մէջքները կը դարձնեն եւ յետոյ օգնութիւն չեն գտնի:

108. Նրանք պիտի զարկւին նւաստութիւնով, ուր էլ գտնւին, բացի որ կը մտնեն Աստուծոյ եւ մարդկանց չւանի տակը. եւ նրանք պիտի Աստուածանից պատժին եւ նրանց վրայ թշւառութիւն պիտի գամ: Սա նրա հաւար է, որ չէին հաւատում Աստուծոյ նըշաններին եւ անիրաւաբար սպանում էին մարդարէներին, որ դրանով ապստամբում էին եւ ոճրագործներ դառնում:

109. Նրանք միեւնոյնը չեն. գիրք ունեցողներից կան ոմանք հաստատունք, որ գիշերի մէջ Աստուծոյ նշանները կարդում են եւ երկրպագութիւն անում:

110. Հաւատում են Աստուծուն ու վերջի օրւայ եւ հրամայում են օրինաւոր բաները ու արգիլում վատը, եւ աշխատում են բարիքներ անելու. որոնք արդարներ են:

111. Եւ դուք ինչ բարիք որ անէք, չէք մոռացւի բնաւ, Աստուած գիտ՝ երկրպագներին:

112. Ահա՛ անհաւատներին մի բան չի օգնի Աստուծոյ ձեռքից՝ ոչ նրանց ստացածքը եւ ոչ որդիքը. եւ նրանք կրակի ընկերներ են եւ յաւիտեան նրանում կը մնան:

113. Նրանց այս տշխարհքի կեանքումը աւած ողորմութիւնը նման է մի սառած քամու, որ իրանց հողիներին անիրաւութիւն անողների արտին վրայ փըշում եւ նրանց փչացնում է. Աստուած չէ որ նրանց անիրաւութիւն արեց, այլ նրանք անիրաւութիւն արեցին իրանց:

114. Ո՛վ հաւատացեալներ, ձեզանից ջոկ ուրիշների հետ բարեկամութիւն մի անի՛ք. նրանք չեն գաղարի ձեզ միտակուց, նրանք փափագում են ձեր կորուստը. ատելութիւնն արդէն յայտնւել է նրանց բերածներիցը, բայց իրանց ստերումը ծածկւածը աւելի մեծ է: Մենք

արդէն յայտնեցինք ձեզ նշանները, եթէ դուք հասկանում էք:

116. Այո, դուք նրանց սիրում էք. բայց նրանք ձեզ չեն սիրում, եւ դուք հաւատում էք գրքի բոլորին, բայց երբ նրանք ձեզ հանդիպում են, ասում են «մենք հաւատում ենք». սակայն երբ ձեզանից առանձնանում են, բարկութիւնից կծոտում են իրանց մատերը: Ասա՛, «սասկէ՛ք դուք ձեր բարկութիւնովը. ահա՛ Աստուած գիտէ սրտերի մէջ եղածը»:

117. Եթէ ձեզ մի բարիք է պատահում, տրամացընում է նրանց. եւ եթէ ձեզ մի չարիք է պատահում, նրանով ուրախանում են: Բայց եթէ համբերէք եւ երկիւղած լինէք, նրանց խորամանկութիւնը ձեզ ոչինչ չի վնասի, որովհետեւ Աստուած նրանց արարքները չբջապատում է:

117. Եւ երբ դու առաւօտը կանուխ վեր կացիր քո ընտանիքից, որ հաւատացեալներին տեղեր պատրաստես պատերազմի համար. եւ Աստուած լսող իմացող է:

118. Այն ժամանակ գրգռեցին ձեզանից երկու խումբ, որ թուլացան. բայց Աստուած նրանց պաշտպանն էր Ուրեմն թող հաւատացեալները նրան ապաւինեն:

119. Եւ արդէն Բէզրումը օգնեց ձեզ Աստուած քանի որ դուք սակաւիկ էիք. ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից որ շնորհակալ լինէք:

120. Երբ դու հաւատացեալներին ասացիր «ձեզ համար բաւական չէ՞, որ ձեր Տէրը ձեզ օգնէ վար ուղարկւած երեք հազար հրեշտակներով»:

121. Այո՛, եթէ համբերէք եւ երկիւղած լինէք, եւ նրանք յանկարծակի ձեր վրայ յարձակւին, ձեր Տէրը ձեզ կ'օգնէ հինգ հազար նշանաւոր հրեշտակներով:

122. Եւ Աստուած սրանով ձեզ միայն աւետիք է տալիս որ ձեր սրտերը սրանով քաջալերւին. եւ բացի զօրաւոր խմաստուն Աստուծոյ կողմից եկած օգնութիւնից ուրիշ օգնութիւն չըկայ, որ անհաւատներին

արմատախիլ կ'անէ, կամ կընւածէ, ու նրանք յուսահատուած տակնուվրայ կը լինեն:

123. Այս բանը քեզ չի վերաբերի, թէ՛ նա նրանց կողմը կը դառնայ, թէ՛ նրանց կը պատժէ իրանց անիրաւութեան համար:

124. Երկնքումն ու երկրումն եղողները Աստուծունն են. նա իր կամեցածին ներում է եւ իր կամեցածին պատժում է. եւ Աստուած ներող ողորմած է:

125. Ո՛վ հաւատացեալներ, վաշխ մի՛ ուտէք երկու անգամ կրկնապատկելով, եւ վախեցէ՛ք Աստուածանից որ երջանիկ լինէք:

129. Եւ վախեցէ՛ք անհաւատների համար պատրաստուած կրակիցը, եւ հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ մարգարէին. որպէսզի՝ ողորմութիւն գտնէք:

127. Եւ վաղեցէ՛ք զէպի մեղաց թողութիւն՝ ձեր Տիրոջից եւ զէպի այն դրախտը որի լայնութիւնը երկնքի եւ երկրի շափ է՝ պատրաստուած երկիւղածների համար:

128. Որոնք ուրախ եւ նեղ ժամանակ ողորմութիւնները են տալիս եւ բարկութիւնը յաղթում է եւ մարդկանցներում. Աստուած էլ սիրում է բարեգործներին:

129. Եւ նրանք որ անբարոյականութիւն են գործում կամ իբրանց հոգիներին վնասում, թող յիշեն Աստուծուն եւ իբրանց միղքերի ներողութիւն խնդրեն: Եւ ո՞վ մեղք կընէրէ բացի Աստուծանից: Եւ թո՛ղ չը յամառեն իրանց արածի վրայ, քանի՞ որ իրանք գիտեն:

130. Այդպիսիների վարձատրութիւնը թողութիւն է իրանց Տիրոջից եւ դրախտներ, որոնց տակովը գետեր են վազում, եւ նրանք նրանցում յաւիտեան կը մնան: Ո՛հ, ինչ գեղեցիկ է բարերարների վարձքը:

131. Արդէն ձեզանից առաջ գործեր են տեղի ունեցել: Հիմայ ման եկէք երկրի վրայ եւ տեսէ՛ք, թէ սուտ համարողների վախճանը ինչպէս է եղել:

132. Բացատրութիւն է այդ մարդկանց համար, նաեւ առաջնորդութիւն եւ քարոզ երկիւղածների համար:

133. Մի՛ յուսահատուիք եւ մի՛ տրամիք՝ դուք յարթողները պիտի լինէք, եթէ հաւատացեալ էք:

134. Եթէ ձեզ վէրք հասնի, արդէն այն ազգին էլ է նրա նման վէրք հասել. սա օրեր են, որ մենք շուռ ենք տալիս մարդկանց մէջ. որպէս զի Աստուած նրանց ճանաչէ, որ հաւատում են եւ ձեզանից վկաներ առնէ. եւ Աստուած անիրաւունքին չէ սիրում:

135. Որպէս զի Աստուած հաւատացեալներին փորձէ եւ անհաւատներին կորցնէ:

136. Կամ կարծում էք թէ դրախտը կը մտնէք տակաւին Աստուած նրանց չէ ճանաչել, ձեզանից ովքեր են կրօնքի համար պատերազմողները եւ չէ ճանաչել համբերողներին:

137. Բայց դուք արդէն փափագում էիք մահւան յառաջ քան թէ ձեզ հասել էք. իսկ հիմայ նրան տեսաք եւ կը տեսնէք էլ:

138. Մուհամմէզը միմիայն մի ուղարկւած է, նրանից առաջ էլ ուղարկւածներ կային: Արդ եթէ նա մեռնի կամ սպանի, դուք արգեօ՞ք ձեր հետքերին ետ կը դառնաք: Հիմայ ով որ իրան հետքերին ետ դառնայ, նա Աստուծուն ոչինչ չի վնասի. սակայն Աստուած անպատճառ վարձատրելու է երախտագէտներին:

139. Եւ ոչ մի մարդ չի մեռնի առանց Աստուծոյ հրամանին, որ գրւած որոշւած է: Արդ ով որ աշխարհքիս վարձքն է կամենում, նրանից կըտանք նրան, բայց ով որ հանդերձեալի վարձքն է կամենում, նրան կըտանք նրանցից, ու մենք անպատճառ վարձատրելու ենք երախտագէտներին:

140. Եւ քանի՛ քանի՛ մարգարէներ են պատերազմել, եւ նրա հետ էլ շատ բիւրաւորներ, բայց նրանք իրանց Աստուծոյ ճանապարհում պատահածի պատճառով չը յուսահատեցին եւ չը թուլացան եւ չը նւաճեցին. Աստուած էլ սիրում է համբերողներին:

141. Եւ նրանց խօսքը մի ուրիշ բան չէր եթէ ոչ «ո՛վ մեր Տէր, ների՛ր մեզ մեր մեղքերը եւ մեր շտայ-

լութիւնները մեր գործի մէջ, եւ հաստատիր մեր ոտքերը եւ մեզ օգնիր անհաւատ ազգի դէմ: Եւ Աստուած տեց նրանց այս աշխարհքի վարձքը եւ հանդերձեալի գեղեցիկ վարձքը: Եւ Աստուած սիրում է բարեգործներին:

142. Ո՛վ հաւատացեալներ, եթէ հնազանդէք անհաւատներին, նրանք ձեզ ձեր շեռքերից ետ կը դարձնեն եւ դուք ետ կը դառնաք իրբեւ վնասածներ:

143. Սակայն Աստուած ձեր պաշտպանն է եւ նա ամենալու օգնականն է:

144. Մենք անհաւատների սրտերի մէջ շուտով երկիւղ ենք գցելու նրա համար որ նրանք Աստուծուն ընկերներ են ընդունում այն բաները, որոնց համար հրաման չէ իջել. եւ նրանց բնականողին կրակն է, եւ վատ է անիրաւիների վայրը:

145. Եւ արդէն կատարել էր Աստուած իր խոստումը, երբ դուք նրա հրամանովը նրանց զարկեցիք. մինչեւ դուք թուլացաք եւ կարգադրութեան մասին կռիւ արեցիք եւ յետոյ պտտամբւեցիք, երբ նա ձեր ուղածը ձեզ ցոյց էր տել:

146. Ձեզանից կան ոմանք, որ աշխարհքս են ուզում եւ ձեզանից էլ կան, որ հանդերձեալն են ուզում. յետոյ նա ձեզ փախցրեց նրանց առաջին, որ ձեզ փորձէր. բայց արդէն ձեզ ներել էր, եւ Աստուած շնորհքի տէր է հաւատացեալների վերաբերմամբ:

147. Երբ դուք դէպի վեր էիք գնում եւ ոչ ոքի ուշ չէիք դարձնում եւ մարգարէն ձեր ետեւիցը կանչում էր. այնմ ժամանակ ձեր վրայ վշտի հետ վիշտ եկաւ, որ չը տրտմիք ձեր կորուստի վրայ եւ ձեզ պատահած գէպքի վրայ, եւ Աստուած գիտէ ձեր գործքերը:

148. Յետոյ այն վիշտից ետքը ձեր վրայ հանգստացուցիչ քուն ուղարկեց, որ ձեզանից մի քանիներին յափշտակեց, իսկ մի քանիներն արդէն չարչարում էին իրանց Աստուծոյ մասին տգիտութեան անիրաւ խորհուրդ խորհելով, թէ «արդեօք այս գործիցը» մեզ մի

բան կայ»։ Դու ասա՛, «Գործը բոլորը Աստուծունն է։ Նրանք իրանց սրտերումը բաներ են թաքցնում, որ քեզ չեն յայանում»։ Նրանք ասում են, «եթէ մեզ այս գործ իցը մի օգուտ լինէր, մենք այստեղ չէինք սպանուի»։ Դու ասա՛, «եթէ ձեր տներումն էլ լինէիք անպատճառ նրանք, որոնց սպանելը սահմանւած էր, պէտք էր իրանց պակեկու տեղերը գնային, եւ որ Աստուած փորձէր թէ կուրծքերումը ինչ է կենում եւ թէ ձեր սրտերումն ինչ կայ։ Եւ Աստուած սրտագէտ է։

149. Ձեզանից նրանք, որ զօրագունդերի իրար զարկելու օրը ետ փախան, անպատճառ սատանան էր նրանց հրապուրել մի որ եւ է շահի համար։ Բայց Աստուած արդէն ներիւ է նրանց, որովհետեւ Աստուած ներող հեզ է։

150. Ո՛վ հաւատացեալներ, դուք անհաւատների նման մի լինիք, որ իրանց եղբայրներին, որ երկրի վրայ ման են գալիս կամ պատերազմի են գնում, ասում են, «եթէ մենք տանը մնայինք, չէինք մեռնի եւ չէինք սպանուի»։ Աստուած այս թախանձը դրաւ նրանց սրտերումը։ Եւ Աստուած է որ կենդանացնամ է եւ մեռցնում։ Եւ Աստուած տեսնում է ինչ որ դուք անում էք։

Հիմայ եթէ Աստուծոյ ճանապարհումը սպանուիք կամ եռնիք։ Աստուծոյ կողմանէ մեղաց թողութիւնը եւ մողորմութիւնը աւելի լաւ է քան թէ ձեր ժողոված գանձերը։

152. Եթէ մեռնիք կամ սպանուիք, դուք անպատճառ Աստուծոյ մօտ կը ժողովուիք։

153 Իսկ Աստուծոյ ողորմութեանը, մասին—դու նրանց դէմ կակուղ ես եղել. եթէ դու սաստիկ եւ խստասիրտ եղած լինէիր, քեզանից կը հեռանային։ Ուրեմն ների՛ր նրանց եւ նրանց մեղքերին թողութիւն խնդրի՛ր, եւ գործի մասին խորհրդակցի՛ր նրանց հետ։ Բայց երբոր վճռեցիր, այն ժամանակ Աստուծուն ապաւենի՛ր որովհետեւ Աստուած սիրում է իրան ապաւինողներին։

154. Եթէ Աստուած ձեզ օգնէ, ձեզ ոչ ոք չի յաղթի, իսկ եթէ նա ձեզ նւաստացնէ, էլ ո՞վ է որ կարողանայ ձեզ օգնել: Բայց հաւատացեալները կ'ապաւինեն Աստուծուն:

155. Եւ մարդարէին չի վայելի, որ խաբէ. եւ ով որ խաբէ, յարութեան օրը միեւնոյն բանովն է ներկայանալու: Այն ժամանակ ամեն մէկ անձի կը արւի, ինչ որ նա վաստակել է. եւ նրանց անիրաւութիւնն չի լինի:

156. Մի՞թէ Աստուծոյ հանութեանը հետեւող նրա նման է, որ Աստուծոյ բարկութեանն է արժանացել եւ տեղը դժոխքն է. եւ ի՞նչ վատ ընթացք է այդ:

157. Սրանք աստիճաններ են Աստուծոյ կողմանէ, եւ Աստուած տեսնում է նրանց արարմունքները:

158. Բայց Աստուած արդէն երախտիք է ցոյց տւել հաւատացեալներին, որ իրանց մէջիցն իրանց համար մի մարդարէ է ուղարկել, որ կարող ում է նրա նշանները նրանց առաջին եւ մաքրում է նրանց եւ սովորեցնում է նրանց գիրքը եւ իմաստութիւնը. իսկ նրանք առաջ յայտնի մոլութեան մէջ էին:

159. Եւ երբ ձեզ պատուեց գգրազողութիւնը, — արդէն երկու այնպիսին ձեզ պատահել էր — դուք ասացիք, «սա որտեղից է»: Ասա՛, «սա հէնց ձեզանից է». որովհետեւ Աստուած ամենակարող է:

160. Եւ ինչ սր պատերազմի օրը ձեզ հանդիպեց, նա Աստուծոյ հրամանովն էր, որ նա ճանաչէ հաւատացեալներին եւ ճանաչէ կեղծաւորներին: Եւ նրանց ասուեց, «եկէք, Աստուծոյ ճանապարհումը պատերազմեցէ՛ք կամ ե՛տ մղեցէք». նրանք էլ ասացին, «եթէ մէնք պատերազմելը հասկոնայինք, ձեզ կը հետեւէինք»: Նրանք այն ժամանակ աւելի մօտ էին անհաւատութեանը քանթէ հաւատքին:

161. Նրանք խօսում են իրանց բերաններովն այն բանը, որ նրանց սրտերումը չ'կայ: Բայց Աստուած գիտէ նրանց ծածկածը:

162. Նրանք որ տանը նստելով ասում էին իրանց հղբայրներին, «եթէ մեզ հետեւէին, չէին սպանւի»։ Գու. ասա՛, «ուրեմն մ'ս՛ը ձեզանից հեռացրէ՛ք եթէ արդար էք»։

163. Եւ Աստուծոյ ճանապարհուով սպանւածներին մեռած մի՛ համարէք. այլ կենդանի իրանց Տիրոջ մօտ, որ կերակրվում են։

164. Նրանք ուրախ են նրանով, ինչ որ Աստուած իր շնորհքիցը նրանց տալիս է. եւ բարի լուրեր են ստանում նրանց մասին, որոնք իրանցից յետոյ իրանց հետ միացած չեն, թէ նրանց համար երկիւղ չկայ եւ նրանք չեն տրտմի։

165. Նրանք լուր են ստանում Աստուծոյ պարգեւների եւ շնորհքի մասին, եւ թէ Աստուած չի ոչնչացնի հաւատացեալների վարձքը։

166. Որոնք հնազանդեցին Աստուծուն եւ մարգարէին իրանց մեծ վիշտ պատահելուց յետոյ, թէ նրանցից բարութիւն անողների եւ երկիւղածների համար մեծ վարձք կայ։

167. Որոնց ասացին մարդիկ, թէ «մարդիկն արդէն հաւաքեւել են ձեզ դէմ, ուրեմն վախեցէ՛ք նրանցից»։ սա աւելացրեց նրանց հաւատքը եւ նրանք ասացին «Աստուած մեզ բաւական է. նա լաւ պաշտպան է»։

168. Եւ նրանք ետ եկան Աստուծոյ պարգեւովը ու շնորհքովը. նրանց մի չարիք չէր դպել։ Նրանք հետեւեցին Աստուծոյ հաճութեանը, եւ Աստուած մեծ շնորհքի տէր է։

169. Սա միմիայն ստտանան է, որ ձեզ վախեցնում է իր բարեկամներովը, բայց դուք նրանից մի՛ վախէք, միայն ինձանից վախեցէ՛ք, եթէ հաւատացեալներ էք։

170. Եւ մի՛ տրտմիք նրանց մասին, որ անհաւատութեան ետեւիցն են վազում. նրանք բնաւ չեն կարող մի բան վնասել Աստուծուն։ Աստուծոյ կամքը չէ

որ միւս աշխարհումը նրանց մի վայելմունք տայ, իսկ մեծ տանջանք կայ նրանց համար:

171. Ահա նրանք որ հաւատքը փոխում են անհաւատութեան, բնաւ չեն կարող մի բան մնասել Աստուծուն. իսկ ցաւալի տանջանք կայ նրանց համար:

172. Թող անհաւատները չը կարծեն, թէ մեր առատօրէն նրանց տւածը մի բարիք է նրանց համար. մենք միայն նրա համար ենք նրանց առատօրէն տալիս, որ մեզքը շատացնեն. իսկ նրանց համար խայտառակ տանջանք կայ:

173. Աստուած չի թողելու հաւատացեալներին այդ վիճակի մէջ. որի մէջ դուք էք, մինչեւ որ վատը լաւիցը ջոկէ:

174. Եւ ականուած ձեզ չի ի նացնի գաղտնիքը, բայց Աստուած բնորում է իր մարգարէներից մէկին, որին կամենում է. ուրեմն հաւատացէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէներին. եւ եթէ հաւատաք եւ կրկեղածներ լինէք ձեզ համար մեծ վարձք կայ:

175. Եւ թո՛ղ կարծեն ժլատները, թէ ինչ որ Աստուած իր շնորհքիցը նրանց տւել է, դա մի բարիք է նրանց համար. ո՛չ, դա մի չարիք է նրանց համար:

176. Յարութեան օրը կախուելու է նրանց վզիցը իրանց ժլատութիւնով հաւաքածը: Երկինքները եւ երկիրը Աստուծոյ ժառանգութիւնն է. եւ Աստուած գիտէ ձեր արարմունքները:

177. Աստուած արդէն լսել է այն անձանց խօսքը, որ ասու է են, թէ «Աստուած աղքատ է, բայց մենք հարուստներ ենք»: Մենք գրելու ենք նրանց ասածը. եւ այն էլ որ մարգարէներին անիրաւարար սպանել են, եւ ասելու ենք, «ճաշակեցէք այլոցի տանջանքը»:

178. «Ո՞ր ձեր ձեռքերի արածի փոխարէնն է», իսկ Աստուած իր ծառաների՝ անիրաւութիւն անող չէ:

179. Նրանք ասում են, թէ Աստուած պայման է գրել մեզ հետ, որ մի մարգարէի չը հաւատանք մինչեւ նա մի զո՞ չը բերէ որ կրակը նրան լափէ»:

180. Դու ասա՛, «արդէն ինձանից առաջ ձեզ մօտ մարգարէներն են եկել յայտնի նշաններով եւ ձեր ասածովը՝ տպա ինչո՞ւ համար սպանեցիք նրանց, եթէ արգտր էք»:

181. Ուրեմն եթէ քեզ ստախօս են շինում, արդէն քեզանից առաջ եղած մարգարէներն են ստախօսներէ տեղ գրեի, որ եկել էին յայտնութիւններով եւ գրեւածքներով եւ լուսաւոր գրքովը:

182. Պէտք է մեանի ամեն մարդ, եւ միայն յարութեան օրը կ'ստանաք ձեր վարձքը: Ուրեմն ով որ հետացնուի կրակիցը եւ մտնէ գրախար, նա արդէն երջանիկ է: Եւ ի՞նչ է այս աշխարհքի կեանքը, եթէ ոչ մի խորհրայ վայելմունք:

183. Դուք անպատճառ պիտի փորձուիք ձեր ստացւածքով եւ ձեր անձերով եւ պիտի լսէք նրանցից, որոնց ձեզանից առաջ արեի է գիրքը, եւ նրանցից որ Աստուծուն ընկերներ են գնում, շատ վիրաւորանքներ: Բայց եթէ համբերէք եւ երկիւղած լինէք, այն ժամանակ դա մեծ բան է:

184. Եւ երբ Աստուած ուխտ արեց նրանց հետ, որոնց տրեւց գիրքը, որ մարդկանց յայտնեն եւ չըծածկեն, նրանք իրանց մէջքի ետեւը գցեցին այն եւ ծախեցին մի չնչին գնով: Սակայն ի՞նչ վատ է նրանց ծախու առածը:

185. Մի՛ կարծիր, թէ նրանք իրանց ստացածովը ուրախանում են եւ իրանց չ'գործածովը գովասանել ուզում են, — եւ մի՛ կարծիր, նրանք տանջանքիցը կ'ազատին: Նրանց համար զաւալի տանջանք կայ:

186. Երկնքի եւ երկրի իշխանութիւնը Աստուծունն է, եւ Աստուած ամենակարող է:

187. Ահա երկնքի ու երկրի ստեղծմանը մէջ եւ գիշեր ու քրեկի փոփոխմանը մէջ ապացոյցներ կան խելոքների համար:

188. Որ կանգնած եւ նստած ժամանակ եւ իրանց կողքին պառկած ժամանակ յիշում են Աստուծուն եւ

մտածում երկնքի եւ երկրի ստեղծագործութեան վրայ, ասելով, «ո՛վ մեր Տէր, դու սա չստեղծեցիր դուր տեղը՝ օրհնեալ ես դու՝ ազատի՛ր մեզ կրակի տանջանքիցը»:

189. Ո՛վ մեր Տէր, ահա որին դու կրակին մէջ ես գցում, դու նրան արդէն նւաստացրել ես՝ եւ անիրաւները օգնական չեն ունենայ»:

190. «Ո՛վ մեր Տէր, մենք մի կանչող լսեցինք որ հաւատքի է կանչում, թէ հաւատացէք ձեր Տիրոջը՝ եւ մենք հաւատացինք»:

191. «Ո՛վ մեր Տէր, արդ ներքի մեզ մեր մեզքերը եւ քաւի՛ր մէզանից մեր չարութիւնները եւ մեզ վարձատրի՛ր սուրբերի հետ»:

192. «Ո՛վ մեր Տէր, եւ մեզ տո՛ւր ինչ որ խոստացել ես քո մարգարէովը, եւ մեզ մի՛ նւաստացնիր յարութեան օրը. որովհետեւ դու խոստումը զրժող չեա»:

193. եւ իրանց Տէրը լսեց նրանց, ասելով, «ես ձեզանից ոչ մէկի գործը չեմ ոչնչացնի, եթէ նա արուլինի կամ էդ»:

194. Արդ նրանք, որ գաղթեցին ու իրանց երկրիցը աքսորեցին եւ Աստուծոյ ճանապարհումը չարչարեցին եւ պատերազմեցին ու սպանեցին, մենք նրանց չարութիւնները նրանցից անպատճառ քաւելու եւ դրախտաների մէջ ենք տանելու նրանց, որոնց տակովը գետեր են վազում»:

195. Իբրեւ վարձատրութիւն Աստուծոյ կողմանէ՝ եւ Աստուծոյ մօտ ամենազեղեցիկ վարձատրութիւնը կայ:


196. Թող անհաւատների քաղաքներ ման գալը քեզ չը մոլորեցնէ. մի փոքր զւարճութիւն է, յետոյ նրանց բնակատեղին դժոխքն է, եւ դա վատ վայր է:

197. Բայց նրանք, որ վախում են իրանց Տիրոջից, նրանց համար դրախտաներ կան, որոնց տակովը գետեր են վազում. նրանք յաւիտեան նրանցում կը մնան. իջած է Աստուծոյ կողմից. եւ ինչ որ Աստուծոյ մօտ է, նա լաւ է սուրբերի համար:

198. Եւ գիրք ունեցողներինց կան ոմանք, որ հաւատում են Աստուծուն եւ ձեզ համար իջեցրածին եւ ինչ որ իջեցրել է նրանց. նրանք խոնարհվում են Աստուծոյ առաջին, Աստուծոյ նշանները փոքր գինով չեն ծախում:

199. Նրանց վարձքը իրանց Տիրոջ մօտ է, որովհետեւ Աստուած շուտով է հաշիւ տեսնում:

200. Ո՛վ հաւատացեալներ, համբերեցէ՛ք, դիմացէ՛ք, եւ միացէ՛ք եւ Աստուածանից վախեցէ՛ք, որ երջանիկ լինէք:



ՍՈՒՐԷԹ՝ ՈՒՆՆԻՍԱ

Մէդինէական. Հարիւր եօթանասուն հինգ այէ

Գթած, ողորմած Աստուծոյ անունովը

1. Ո՛վ մարդիկ, վախեցէ՛ք ձեր Տիրոջից, որ ստեղծել է ձեզ մէկ հոգուց եւ նրանից ստեղծել է նրա կնոջը, սրանցից տարածել է շատ մարդիկ եւ կնիկներ եւ վախեցէ՛ք Աստուածանից, որի միջոցով դուք բան էք խնդրում եւ ազգականներից, որովհետեւ Աստուած ձեզ վրայ հսկող էր:

2. Եւ որբերին աւէք նրանց ստացւածքը, եւ վատը լաւին հետ մի՛ փոխէք. եւ նրանց ստացւածքը ձեր ստացւածքի հետ մի՛ ուտէք, որովհետեւ սա մեծ յանցանք էր:

3. Եւ եթէ վախում էք, թէ որբերի մասին արդարութիւն չէք անի, այն ժամանակ կնիկներ առէ՛ք ձեզ համար որը կուզէք, երկու երկու եւ երեք երեք եւ չորս չորս Բայց եթէ վախում էք, թէ հաւատա-

բութիւն չէք պահի, այն ժամանակ՝ մկը կամ ինչ որ
ձեր աջ ձեռքերը վատակել են: Սա աւելի մօտ է ձեզ
որ չը ծուխք: Եւ կանանց աւէ՛ք նրանց հարստու-
թեան գինը յօժարակամ. եւ եթէ նրանք հաճեն ձեզ
մի բան թողնել նրանից իրանց կամքովը այն ժամա-
նակ դուք կերէ՛ք ազատաբար ու քախարար:

4. Եւ ձեր ստացւածքը մի տաք տկարամիտներին,
որ Աստուած յանձնել է ձեզ այլ սնուցրէ՛ք նրանց
նրանցով եւ հաղցրէ՛ք եւ նրանց հետ մեղմ խօսքեր
խօսեցէ՛ք:

5. Եւ որբերին փորձեցէ՛ք, մինչեւ որ ամուսնանալու
հասակին հասնեն: Եւ երբոր կը տեսնէք, որ նրանք
չափահաս են, յանձնեցէ՛ք նրանց իրանց ստացւածքը,
եւ շտայլութեամբ ու շուտով մի՛ փչացնէք այն,

6. Որ մեծանան: Եւ ով որ հարուստ է, թո՛ղ զգու-
շանայ. իսկ նա որ աղքատ է, թո՛ղ կարգին վայելէ:

7. Եւ երբ նրանց ստացւածքը իրանց տաք, նրանց
քէմ վկաներ առէ՛ք: Եւ Աստուած լաւ հաշւատես էր:

8. Արու մարդկանց համար բաժին կայ նրանց ինչ
որ ծնողքը եւ ազգականները թողել են. կնիկներ
համար էլ բաժին կայ նրանից ինչ որ ծնողքը եւ ազ-
գականները թողել են. թէ շատ լինի թէ քիչ լինի,
որոշեալ բաժին կայ:

9. Երբ բաժանելու ժամանակին ներկոյ լինեն ազ-
գականները եւ որբերը եւ անանկները, նրանց կերակ-
րեցէ՛ք նրանից, եւ նրանց հետ կա՛ուղ խօսք խօսե-
ցէ՛ք:

10. Եւ պէտք է վախեն նրանք որ իրանցից ետքը
տկար զաւակներ են թողնում, որ երկիւղ ունեն նը-
քանց համար. ուրիմն թո՛ղ Աստուածանից վախեն եւ
մեղմ խօսք խօսեն:

11. Իրաւի նրանք որ անիրաւաբար ուտում են որ-
բերի ստացւածքը, նրանք իրանց փորերի մէջ կրակ
են ուտում. նրանք վառւած կրակը պիտի ընկնեն:

12. Ձեր զաւակների մասին Աստուած սա է կարգալուծ. արուի բաժինը երկու էզի բաժնի չափիակ եթէ միայն էզեր են երկուսից աւելի այն ժամանակ թողածի երկու երրորդը նրանցը լինի. իսկ եթէ մէկ էզ է, այն ժամանակ կէսը նրանը լինի եւ նրա ծնողներին, եւ այն երկուսից իւրաքանչիւրին լինի թողածի մի վեցերորդը, եթէ նա զաւակ ունենայ. իսկ եթէ զաւակ չունենայ, նրան ժառանգին նրա ծնողքը, եւ մօրը լինի մի երրորդը: Եթէ նա եղբայրներ ունենայ, արած կտակի կատարելուց կամ պարտքը վճարելուց յետոյ մի վեցերորդը մօրը լինի: Ձեր ծնողներից եւ ձեր զաւակներից որն է ձեզ աւելի օգտակար, դուք չը գիտէք: Սա կարգադրութիւն է Աստուծոյ կողմանէ: Աստուած իմաստուն դատարոր է:

13. Ձեր կնիկների թողածի կէսը ձերն է, եթէ նըրանք զաւակ չունենան. իսկ եթէ նրանք զաւակ ունենան, այն ժամանակ արած կտակի կատարելուց կամ պարտքը վճարելուց յետոյ նրանց թողածի մի քառորդը ձերն է:

14. Եւ ձեր թողածի քառորդը նրանցն է. եթէ դուք զաւակ չունենաք, իսկ եթէ զաւակ ունիք, այն ժամանակ ձեր արած կտակը կատարելուց կամ պարտքը վճարելուց յետոյ ձեր թողածի մի ութերորդը նրանցն է:

15. Եւ եթէ մի այր կամ մի կին մի հետու ազգական ժառանգէ, եւ նա ունենայ եղբայր կամ քոյր, այն ժամանակ այն երկուսից ամեն մէկին է մի վեցերորդը. իսկ եթէ սրանցից աւելի լինեն, այն ժամանակ արած կտակը կատարելուց կամ պարտքը վճարելուց յետոյ նըրանք ընկերներ են մէկ երրորդումը:

16. Ոռանց վնասելու հրաման է Աստուածանից, իսկ Աստուած իմաստուն հեզ է:

17. Սա Աստուծոյ սահմաններն են, եւ ով որ Աստուծոյն եւ նրա մարգարէին հնազանդէ, նրան կը մոցնէ զբախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում եւ

նրանք յաւիտեան նրանցում կը մնան: Սա մեծ փրկութիւն է:

18. Բայց ով որ ապստամբի Աստուծոյ դէմ եւ նրա մարգարէի դէմ ու զանցանէ նրա սահմանները, նա նրան կը գցէ կրակի մէջ, որ միշտ նրանում կը մնայ, եւ նրա համար խայտառակ տանջանք կայ:

19. Եւ ձեր կնիկներիցն այնպիսիները որոնք անբարոյականութիւն են գործում, նրանց դէմ չորս վկայ կանգնեցրէք ձեզանից. արդ եթէ վկայեն, դուք նրանց վա՛ր գրէք ձեր տներումը մինչեւ որ մահը նրանց մեռցընէ, կամ Աստուած նրանց մի ճանապարհ բանայ:

20. Եւ երբոր ձեզանից երկու արունքը իրար հետ արւազիտութիւն անեն, նեղացրէք նրանց, եւ եթէ երկուսն էլ ապաշխարեն, այն ժամանակ նրանցից ետքաշւեցէք. որովհետեւ Աստուած զզջացող ողորմած է:

21. Որովհետեւ Աստուած պարտ է զզջայ նրանց վերաբերմամբ, որոնք տգիտութեամբ չար են գործում եւ յետոյ շուտով զղջում. Աստուած էլ զղջում է դէպի նրանց. որովհետեւ Աստուած գիտացող իմաստուն է:

22. Սակայն նրանց համար զղջում չըկայ, որ չար բաներ են գործում մինչեւ մահը նրանցից մէկի առաջին կանգնում է, որ ասում է, «ես հիմա զղջում եմ»: Նաեւ նրանց համար, որոնք մեռնում են անհաւատ: Նրանց համար մենք ցաւալի տանջանք ենք պատրաստել:

23. Ո՛վ հաւատացեալներ, կնիկներին բռնի մի ժառանգէք. եւ նրանց մի՛ արգիլէք որ մարդու գնան ձեր նրանց տւածի մի մասի պատճառովը, բացի այն դէպքից որ նրանք որոշ անբարոյականութիւն գործեն, եւ նրանց հետ լաւ վարւեցէ՛ք: Իսկ եթէ նրանցից զըզւելու լինէք, դուցի, մի բանից էք զզվում որ Աստուած նրանում շատ բարիք է գրել ձեզ համար:

24. Եւ եթէ դուք կամենաք մի կնիկ կնկան հետ փոխել եւ դուք նրանց մէկին առդէն մի տաղանդ էք տուել, նրանցից մի բան մի՛ առնէք: Միթէ՞ դուք ետ

կառնէք: Սա անիրութիւն եւ ակնյայտնի ոճիր կը լինի:

25. Եւ դուք ի՞նչպէս ետ կառնէք քանի որ արդէն միմեանց մօտ էք եկել եւ նրանք ձեզանից հաստատ խոստում են առել:

26. Եւ կնիկներից այնպիսիներէի հետ մի՛ ամօ սնանաք. որոնց հետ ձեր հայրերն ամուսնացած են եղել, բացի այն որ արդէն եղած անցած է. որովհետեւ դա անբարոյականութիւն եւ զաղբագործութիւն էր եւ չար ճանապարհ:

27. Ձեզ համար արդիււած են նաեւ ձեր մայրերը եւ եւ ձեր աղջիկները եւ ձեր քոյրերը եւ ձեր հօրաքոյրերը նւ ձեր մօրաքոյրերը եւ ձեր եղբօր աղջիկները եւ ձեր քրոջ աղջիկները եւ ձեր ծծմայրերը, որ ձեզ ծիծ են առել, եւ կաթնաքոյրերը եւ ձեր կնիկներէի մայրերը եւ ձեր խորթ աղջիկները, որ ձեր սենեաններուսն են ձեր այն կնիկներից, որոնց հետ դուք մերձաւորութիւն էք ունեցել (իսկ եթէ դուք մերձաւորութիւն չէք ունեցել նրանց հետ մնաս չկայ ձեզ համար.) ձեր հարազատ ծնւած որդկանց կնիկները, երկու քոյրերը միասին, բացի այն որ արդէն եղած անցած է, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

28. Եւ պարկեշտ ազատ կանայքը, բացի այն որ ձեր աջ ձեռքերը վաստակել են: Սա Աստուծոյ պատւէրն է ձեզ համար: Եւ սրտնցից զոկ մնացածը ձեզ թող է տրւած, եթէ կուզէք ձեր ստացածքին համեմատ պարկեշտ ազատ կնիկներ եւ ոչ թէ լկտւածներ առնել: Եւ դուք ինչ որ նրանցից վայելում էք, նրա փոխարէնը վճարեցէք նրանց իբրեւ պարտաւորութիւն: Բայց ձեզ համար յանցանք չէ, եթէ այր ու կիւն միասին համաձայնէք առանց օրէնքին նայելու: որովհետեւ Աստուած իմացող իմաստուն է:

29. Բայց ձեզանից ով որ կարողութիւն չ'ունի ազատ հաւատացեալ կնիկներ առնելու, այն մամանակ ձեր հաւատացեալ գերի աղախիներին առէ՛ք. եւ Աստ-

ուած գիտէ ձեր հաւատքը, որ դուք միմեանցից էք՝
Ուրեմն ամուսնացէ՛ք նրանց հետ իրանց տէրերի հա-
ճութեամբր, եւ նրանց բաժինները տէ՛ք իրանց օրի-
նաւորապէս, որ պարկեշտ են եւ ոչ թէ լկուած եւ
սիրահարներ չունենն:

30. Բայց երբոր ամուսնանալուց յետոյ շնութիւն
գործեն, այն ժամանակ նրանց պատիժը կը լինի ազատ
կնիկներնի պատիժի կէտը: Աս ձեզանից այնպիսիների
համար է, որ զազրագործութիւնից վախում են: Իսկ
եթէ համբերէք, աւելի լաւ կը լինի ձեզ համար: Եւ Աստ-
ուած ներող ողորմած է:

31. Աստուած կամենում է, որ ձեզ բացատրէ եւ ձեզ
առաջնորդէ ձեզանից առաջ եղածների սովորութիւն-
ներովը եւ դասնայ գէպի ձեզ. եւ Աստուած իմացող
իմաստուն է:

32. Եւ Աստուած կամենում է գէպի ձեզ դասնալ
եւ կամենում է նրանց, որ հետեւում են ցանկութիւն-
ներին որ դուք մեծ հակումով հակէք: Աստուած կա-
մենում է որ ձեզ համար հեշտացնէ, որովհետեւ մարդ
տկար արարած է:

33. Ո՛վ հաւատացեալներ, ձեր ստացւածքը մի՛ վայ-
ելէք պարագ տնօր բացի այն որ տեւտուր անէք
երկու կողմի հաճութեամբր: Մի՛ լինէք անձնասպան,
որովհետեւ Աստուած ձեզ ողորմած էր:

34. Բայց ով որ թշնամութեամբ կամ անիրաւու-
թեամբ անելու լինի սա, մենք նրան անպատճառ կը-
րակն ենք գցելու, եւ սա Աստուծոյ հաճութ շատ գիւ-
րին է:

35. Եթէ դուք մեծ մեղքերից զգուշանաք, որ ձեզ
արգիլւած են, մենք ձեր շարութիւնները կը քաւենք
եւ ձեզ ներս կը տանենք փառաւոր մուտքով:

36. Եւ մի՛ ցանկանաք այն բանին, որ Աստուած
ձեզանից մէկին աւելի է աւել քան թէ միւսին: Մարդ-
կանց բաժինը իրանց վաստակածն է, եւ կնիկների
բաժինը իրանց վաստակածը: Դուք Աստուածանից

խնդրեցէ՛ք նրա շնորհքը որովհետեւ Աստուած ամեն բան գիտէր:

37. Մենք ամեն մէկի համար բարեկամներ ենք շինել այն բանի համար, որ թողում են ծնողները եւ ազգականները. եւ որոնց հետ դուք պայմաններ էք կապել, աւէ՛ք նրանց բաժինը, որովհետեւ Աստուած ամեն բանի վկայ է:

38. Այբերը գերիշխանութիւն ունեն կնիկներէ վրայ, որովհետեւ Աստուած նրանցից մէկը միւսի վրայ գերազանց է արել. եւ որովհետեւ նրանց կերակրում են իրանց ստացածքովը: Լաւ կնիկները հլու են, խորհրդապահ են, որ Աստուած էլ պահէ: Իսկ նրանց, որոնց ազմուկիցը վախում էք, խրատեցէ՛ք, անկողինները բաժանեցէ՛ք եւ նրանց ձեռեցէ՛ք, իսկ երբ ձեզ հնազանդեն, այն ժամանակ պատճառ մի՛ պտրտէք, նրանց դէմ, որովհետեւ Աստուած բարձր մեծ է:

39. Իսկ եթէ նրանք երկուսի մէջ կուից վախում էք, այն ժամանակ մի դատաւոր սրա բնտանիքից եւ մի դատաւոր նրա բնտանիքից ուղարկեցէ՛ք. եթէ խաղաղութիւն ուզեն, Աստուած յաջողութիւն կը զգէ նրանց մէջը, որովհետեւ Աստուած խնայող տեղեակ է:

40. Եւ ծառայեցէ՛ք Աստուծուն եւ մի բան նրան ընկերներ մի՛ դնէք. եւ բարիք պէտք է ծնողներին եւ ազգականներին եւ որբերին եւ անանկներին եւ ժողով դրացուն եւ հետու դրացուն եւ կողքից ընկերին եւ օտարականին եւ նրանց որ քո աջ ձեռքը վաստակել է: Որովհետեւ Աստուած չէ սիրում նրան, որ հպարտ ինքնահաւան էր:

41. Նրան ո՞ր ժլատ են եւ մարդկանց ժլատութիւն են պատւիրում եւ ծածկում են ինչ որ Աստուած իր առատութիւնիցը նրանց աւել է, — մենք անհաւատների համար խայտառակ տանջանք ենք պատրաստել:

42. Իսկ նրանք, որ մարդկանց երեւելու համար իրանց ստացածքը ողորմութիւն են տալիս եւ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրւայ, եւ որի

ընկերը սատանան է. ո՛հ ինչ վատ ընկեր է —

43. Եւ ի՞նչ կար նրանց դէժ, եթէ հաւատացին Աստուծոյ եւ վերջին օրւայ եւ Աստուծոյ նրանց տա-
ծիցը ողորմութիւն տային, եւ Աստուած նրանց ճանաչում է:

44. Աստուած մի մրջիւնի ծանրութեամբ էլ անիրա-
ւութիւն չի անի. եւ եթէ մի բարերարութիւն լինի,
նա կը կրկնապատկէ եւ իր կողմից մեծ վարձք կը տայ:

45. Ուրեմն ի՞նչ կը լինի, երբ մենք ամեն մի ազգից
մի վկայ բերենք, եւ քեզ սրանց դէժ վկայ բերենք:
Նրանք եւ անհաւատները որ այն օրն մարգարէի դէժ
ապստամբել են, ուզելու են որ հողի հետ հաւասարեն
քայց չեն կարողանալու մի խօսք ծածկել Աստուածա-
նից:

46. Ո՛վ հաւատացեալներ, աղօթքին մի մօտենաք,
երբ դուք հարբած էք մինչեւ որ կը հասկանաք թէ
ինչ էք ասում. նաեւ երբ պղծւած էք, բացի նրանից
երբ ճանապարհ էք գնում, մինչեւ որ լւացէք: Եթէ
հիւանդ կամ ճանապարհի վրայ լինէք, կամ ձեզանից
մէկը հարկաւորիցն է գայիս կամ կնիկներ էք շօշափել
եւ ջուր չէք գտնում, այն ժամանակ մաքուր հողով
թաթախեցէ՛ք եւ քսեցէ՛ք ձեր երես՝ երին եւ ձեռքե-
րին, որովհետեւ Աստուած ներող թողող է:

47. Դու չես տեսնում նրանց, որ գրքից մի մասն
են ստացել, որ մոլորութիւններ ծախում եւ ուզում
են, որ ճանապարհիցը մոլորիք: Իսկ Աստուած ճանա-
չում է ձեր թշնամիներին. եւ Աստուած բաւական է
իրբեւ պաշտպան եւ բաւական է իրբեւ օգնական:

48. Հրէաներից ոմանք խօսքերը տեղերիցը փոխում
են եւ ասում են «լսել ենք եւ ապստամբում ենք» եւ
«լսի՛ր, մ՛վ չը լսող» եւ «մեր չարը» իրանց լեզունե-
քովը ծանոնելով եւ կրօնքին յիշոց տալով:

49. Ո՛հ եթէ ասէին, «լսեցինք եւ հնազանդում
ենք» եւ «լսի՛ր» եւ «մեզ նայի՛ր», նրանց համար
աւելի լաւ կը լինէր եւ աւելի հաստատ թայց Աստ-

ուած անիծէ՛ նրանց իրանց անհաւատութեան համար-
եւ նրանցից միմիայն քիչերն են հաւատում:

50. Ով գիրք ունեցողներ, հաւատացէ՛ք մեր իջե-
ցրածին, որ ձեզ մօտ եղածը հաստատում է, յառաջ
քան մենք ձեւ երեսները այլանդակ կը շինենք եւ
դէպի քամակները կը դարձնենք. կամ նրանց կ'անի-
ծենք, ինչպէս որ շարաթի մարդկանցը անիծեցինք:
Եւ Աստուծոյ հրամանը կատարեց:

51. Իրաւի Աստուած չի ների որ իրան ընկեր դնեն,
բայց սրանից ջոկ ներում է ու՛մ որ ուզում է: Եւ ով
որ Աստուծուն ընկեր է դնում, նա մեծ մեղք է գոր-
ծում:

52. Դու չե՞ս տեսնում նրանց, որ իրանք իրանց մա-
քուր են ասում: Բայց Աստուած է մաքուր ասում, որին
որ ուզում է. եւ նրանց մի թեփուկի չափ անիրաւու-
թիւն չի լինի:

53. Տե՛ս ինչպէս են Աստուծոյ վրայ սուտ հնարում:
Եւ դա ակնյայտնի մեղք է:

54. Դու չե՞ս տեսնում, որ գրքից մի մասն ստացող-
ները որ հաւատում են Ճիրթին եւ Թաղութին եւ
ասում են անհաւասաներին, թէ սրանք աւելի ուղիղ
ճանապարհի մէջ են քան թէ ճանապարհին հաւատա-
ցողները:

55. Աստուած սրանց անիծել է. եւ որին Աստուած
անիծեց, դու նրա համար օգնական չես գտնի:

56. Կամ մի՞թէ բաժին կունենան թագաւորութիւնից,
քանի որ մարդկանց մի կեղեւ անգամ չին տալիս:

57. Կամ նախանձում են մարդկանց այն բանի հա-
մար, որ Աստուած իր առատութիւնից իրանց տւել է:
Մենք իրաւ Աբրահամի ցեղին տւել ենք գիրքը եւ
իմաստութիւն եւ նրանց մեծ թագաւորութիւն ենք
տւել:

58. Նրանցից կան ոմանք, որ նրանց հաւատում
են, եւ կան ոմանք, որ նրանից խոտորել են:
Դժոխքը բաւական է իբրեւ պատիժ:

59. Իբրև նրանք, որ մեր նշաններին չեն հաւատում, մենք նրանց անպատճառ կրակն ենք պցելու: Ամեն անգամ, որ նրանց կաշին այրուց, մենք նրա փոխարէն նրանց մի ուրիշ կաշի ենք տալու որ տանջանքը ճշակեն: անա Աստուած հզօր դատար է:

60. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարի գործեր գործում, մենք նրանց գրախաների մէջ ենք մտցնելու, որոնց տակոլը զեանք են հոսում եւ նրանց յաւիտեան նրանցում կը մնան: Նրանց հա՛տը նրանցում մաքուր կնիկներ կան, եւ մենք նրանց հետ շուքի մէջ ենք մտցնելու:

61. Աստուած ձեզ հրահայում է, ձեզ յանձնուած բաները իրանց տէրերին ետ գործնէք, եւ որ մարդկանց մէջ գոտասոսան անելիս արդարութեամբ դատէք: Աստուած անա ձեզ լաւ է խրատում սրանով, որ յ՛հետեւ Աստուած լսող տեսնող է:

62. Ո՛վ հաւատադիակներ հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ հնազանդեցէ՛ք մարդարէին եւ ձեզանից եղող հրամանատարներին: Իսկ եթէ մի բանի մէջ վէճ ունենաք, այդ յանձնեցէ՛ք Աստուծուն եւ մարդարէին, եթէ դուք հաւատում էք Աստուծուն եւ վերջի օրայ: Սա աւելի լաւ է եւ նշանակութեամբ գեղեցիկ է:

63. Դու չե՞ս տեսնում նրանց, որ կարծում են թէ քեզ իջեցրածին եւ քեզանից առաջ իջեցրածին հաւատում են, ուզում են որ քեզ հետ դատի գնան Թաղութի մօտը: Սակայն արդէն հրամայուած է նրանց, որ նրան չը հաւատան. բայց սատանան ուզում է, որ նրանց հետ մոլորութիւնով մոլորեցնէ:

64. Եւ երբ նրանց ասում է, թէ «եկէ՛ք այն բանի մօտ որ Աստուած իջեցրել է եւ մարդարէի մօտը», կը տեսնես որ կեղծաւորները քեզանից շատ հեռանում են:

65. Ի՞նչպէս է ապա, երբ նրանց մի պատահաս պատահի իրանց ձեռքերի առաջուց արածի համար, յետոյ քեզ մօտ են գալիս Աստուծով երդուած անելով, թէ «մենք միմիայն բարիք եւ օգնել էինք ուզում»:

66. Սյանք այնպիսի մարդիկ են, որոնց սրտերում
եղածը Աստուած գիտէ: Դու նրանցից ետ կաց, եւ
խրատի՛ր նրանց եւ նրանց սրտերին ազդու խօսք ասո՛ւ:

67. Եւ մենք մի մարգարէ չենք ուղարկել բացի
նրա համար, որ Աստուծոյ հրամանովը նրան հնազան-
դեն եւ թէ նրանք իրանց անձերին դէմ մեղանշած
ժամանակը քեզ մօտ են գալիս եւ Աստուածանից նե-
քողութիւն խնդրում, եւ մարգարէն էլ է նրանց հա-
մար ն՛րողութիւն խնդրում, այն ժամանակ նրանք կը
գանեն, որ Աստուած զղջացող ողորմած է:

68. Ո՛չ քո Տէրդ վկայ է, որ նրան չեն հաւատայ,
մինչեւ որ իրանց մէջ եղած վէճերի համար քեզ դա-
տաւոր չը շինեն. այն ժամանակը քո արած գատաս-
տանի համար իրանց անձերումն այլեւս վեաս չեն գանի
եւ բոյորովին մուսլիմ կը գանան:

69. Եւ էթէ մենք նրանց հրահայած լինէինք, թէ
«ձեզ սպանեցէ՛ք» կամ «ձեր երկրիցը դուրս եկէ՛ք»,
նրանցից քիչերը կը կատարէին այս: Իսկ եթէ անէին
այն, որ իրանց խրատ է արվում, սա աւելի լաւ կը
լինէր նրանց համար եւ խիստ հաստատ:

70. Եւ մենք այն ժամանակը նրանց մեր կողմանէ
մեծ վարձք կը տայինք եւ նրանց ուղիղ ճանապարհով
կ'առաջնորդէինք:

71. Եւ ով որ հնազանդէ Աստուծուն եւ մարգարէին
այդպիսիները նրանց հետ կը լինին, որոնց Աստուած
ցոյց է տուլ իր շնորհքը, այսինքն մարգարէների եւ
արդարների եւ մարտիրոսների եւ սուրբերի հետ. եւ
սա ի՛նչ գեղեցիկ ընկերութիւն է:

72. Սա Աստուծոյ կողմանէ շնորհք է, եւ լաւ գիտէ
Աստուած:

73. Ո՛վ հաւատացեալներ, ձեր զգուշութիւնն արէ՛ք,
ուրեմն հաստատ պատերազմի մէջ մտէ՛ք, կա՛մ ահնաքդ
պատերազմի մէջ մտէ՛ք:

74. Եւ եթէ ձեզանից մէկը ետ է մնում եւ ձեզ մի
պատահաս է պատահում, նա ասում է «Աստուած ինձ

չնորհք ցոյց տուաւ, որ ես նրանց հետ չահասակ չ'եղայ»:

75. Իսկ եթէ ձեզ Աստուծոյ կողմանէ մի չնորհք է պատահում, նա անպատճառ ասում է, (իր բոլոր թէ ձեր ու նրա մէջ բարեկամութիւն չէ եղած), թէ «ո՛հ, երանի՛ թէ նրանց հետ եղած լինէի, այն ժամանակ ես մեծ չնորհք ստացած կը լինէի»:

76. Թո՛ղ նրանք պատերազմին Աստուծոյ ճանապարհումը, որոնք այս աշխարհքի կեանքով ծախու առնում են միւս աշխարհքը: Եւ ով որ Աստուծոյ ճանապարհումը պատերազմելիս սպանի կամ յաղթւի, մենք նրան խելոյն մեծ վարձ կը տանք:

77. Եւ դուք ի՞նչ ունէք, որ Աստուծոյ ճանապարհումը չէք պատերազմում, մինչդեռ կան տկար մարդիկ, եւ կանայք եւ երախտներ, որ ասում են, «ով Տէր, մեզ այս քաղաքիցը հանի՛ր, որի ժողովուրդը անխրաւ է, եւ մեզ համար քո կողմանէ մի պաշտպան դի՛ր, եւ մեզ համար քո կողմանէ մի օգնական պատրաստի՛ր»:

78. Հաւատացողները պատերազմում են Աստուծոյ ճանապարհումը, իսկ անհաւատները պատերազմում են Թաղութի ճանապարհումը: Ուրիմն պատերազմեցէ՛ք սատանայի ընկերների դէմ. ահա սատանայի խորամանկութիւնը տկար էր:

79. Դու չե՞ս տեսնում նրանց, որոնց ասում է, «թէ ձեր ձեռքերը ե՛տ քաշեցէք, եւ աղօթքո կատարեցէ՛ք, եւ մաքրիչ հարկը տւէ՛ք. իսկ երբ նրանց պատերազմ հրամայեց, ահա նրանցից մի մասը վախեց մարդկանցից ինչպէս Աստուածանից են վախենում, կամ էլ առաւել սաստիկ վախով. եւ ասացին, «ով մեր Տէր, ինչո՞ւ համար դու մեզ պատերազմ հրամայեցիր, մի՞թէ դու մեզ ետ ես պահելու մինչեւ մեր մօտիկ մահը»: Ասա՛, «աշխարհքիս վայելմունքները քիչ են, իսկ հանդերձեալը աւելի լաւ է նրա համար որ երկիւղածութիւն ունի: Եւ նրանք մի չըն-

չին բանի չափ անիրաւութիւն չեն կրի»:

80. Ուր էլ լինէք, մահր ձեզ հասնելու է, եթէ ամբաստմ բուրգերում էլ լինէք: Եւ եթէ նրանց մի բարիք է պատահում, ասում են, «սա Աստուծոյ կողմիցն է»: Իսկ եթէ նրանց մի չարիք է պատահում, ասում է, «սա քո կողմիցն է: Դու ասա՛, «ամեն բան Աստուծոյ կողմիցն է»»: Եւ ի՛նչ ունի այս ազգը, որ հազիւ կարողանում է խօսք հասկանալ:

81. Ինչ բարիք որ քեզ հանդիպում է, դա Աստուածանից է, բայց ինչ չարիք որ քեզ է հանդիպում, դա հէնց քեզանից է»: Եւ մենք քեզ մարգարէ ուղարկեցինք մարկանց համար. Աստուծոյ վկայութիւնը բաւական է:

82. Ով որ մարգարէին հնազանդում է, նա արդէն Աստուծուն է հնազանդել. բայց ով որ ետ է դառնում — մենք քեզ նրանց համար պահապան չենք ուղարկել:

83. Նրանք ասում են, «հնազանդութիւն», բայց երբ քեզանից հեռանում են, նրանցից մի խումբ քո սասածիցն ուրիշ բան է մտածում: Բայց Աստուած գրում է, ինչ որ նրանք մտածում են: Իսկ դու հեռացի՛ր նրանցից եւ Աստուծուն ապաւինի՛ր. Աստուծոյ պաշտպանութիւնը բաւական է:

84. Արդեօ՞ք չեն խոնարհում զուրանի վրայ, եւ եթէ նա Աստուծանից ջոկ մի ուրիշիցը լինէր, նրանում շատ հակասութիւններ էին գտնելու:

85. Եւ նրանց մի բան է գալիս թէ ապահովութիւնից թէ երկիրդից, նրան տարածում են. իսկ եթէ մարգարէին տանէին եւ նրանցից եզոզ իշխաններին, այն ժամանակ նա կը հասկացնէր նրանց այն, որ ուզում են իմանալ նրանցից: Եւ եթէ Աստուծոյ շնորհքը ձեր վրայ չը լինէր եւ նրա ողորմութիւնը, գո՛ր մի քանի քիչերից բաց սատանային կը հետեւէիք:

86. Ուրեմն Աստուծոյ ճանապարհումը պատերազմի՛ր,

և միմիայն քո անձը պարտաւորացրո՛ւ, և գրգռի՛ր հաւատացեալներին, դու ցէ Աստուած կը նւաճէ անհաւատները պատերազմասիրութիւնը. Աստուած աւելի պատերազմատէր է և աւելի պատժող է:

87. Ով որ միջնորդելով մի բարի բարեխօսութիւն անէ, նա գրանից մի բաժին կ'ունենայ, բայց ով որ միջնորդելով մի չար չարախօսութիւն անէ, նա էլ նրանից մի մասն կ'ունենայ. և Աստուած ամեն բանի հակող է:

88. Եւ երբ ձեզ բարեւ են աւրիս, դուք էլ նրանից լաւ կերպով բարեւ աւէ՛ք կամ ետ գարձրէ՛ք. որովհետեւ Աստուած ամեն բանից հաշիւ է պահանջում:

89. Աստուած — մի Աստուած չը կայ նրանից ջուկ: Նա ձեզ անպատճառ ժողովելու է յարութեան օրը, կասկած չը կայ գրանում. և ո՞վ է աւելի ճշմարիտ խօսքով քան թէ Աստուած:

90. Եւ ձե՞զ ինչ որ կեղծաւորների պատճառով երկու խումբ էք կազմել քանի որ Աստուած նրանց մերժել է իրանց արարքների համար. միթէ՞ ուղում էք մոլորքրածին ճանապարհ բերէք: Սակայն որին որ Աստուած մոլորեցնում է, նրա համար բնաւ ճանապարհ չես գտնի:

91. Նրանք փախազում են, որ դուք անհաւատ դառնայիք, ինչպէս իրանք անհաւատ են, և հաւասար դառնաք: Ուրեմն նրանց հետ բարեկամութիւն մի՛ աւնէք, մինչեւ որ Աստուծոյ ճանապարհի համար չը գաղթեն: Իսկ եթէ մերժեն, բռնեցէ՛ք նրանց և սպանեցէ՛ք նրանց, ուր էլ գտնէք նրանց: Եւ դուք նրանցից ոչ բարեկամ եւ ոչ օգնական մի՛ ընդունէք:

92. Բացի նրանցից որ մի ազգի հետ են միանում, որոնց մէջ և ձեր մէջ դաշինք կայ, կամ ձեզ մօտ են գալիս որովհետեւ նրանց կուրծքերը նեղվում են, որ ձեզ հետ պատերազմեն կամ իրանց ազգի հետ պատերազմեն: Եւ եթէ Աստուած կամեցած լինէր, նրանց ձեզ վրայ տիրել կը տար, և նրանք ձեզ հետ պատե-

քաղմ կ'անէին: Բայց եթէ նրանք հետանում են ձեզա-
նից եւ չեն պատերազմում ձեզ հետ, այլ ձեզ խաղա-
զուծ իւն են առաջարկում, այն ժամանակ Աստուած
ձեզ պատճառ չէ տալիս նրանց դէմ:

93. Գուք ուրիշ այնպիսիներ էլ կը գտնէք, որ ձեզ
հետ էլ են ուզում ապահով լինել եւ իրանց ցեղի հետ
էլ: Ամեն սնգամ, որ ետ գտնան դէպի խռովութիւն,
նրանում պէտք է կորչեն: Եւ եթէ ձեզանից չը հեռա-
նան եւ ձեզ խաղազուծ իւն չ'առաջարկեն եւ իրանց
ձեռքերը չը բարձրացնեն, այն ժամանակ բռնեցէք նը-
րանց եւ սպանեցէ՛ք նրանց, ուր որ էլ պատահէք նը-
րանց: Ահա մենք ձեզ իշխանութիւն ենք տալիս նը-
րանց վրայ:

94. Եւ մի հաւատացեալ իրատունք չունի, որ մի
հաւատացեալ սպանի բացի սխալմամբ: Ասկայն ով որ
որ սխալմամբ մի հաւատացեալ սպանի, նա պէտք է
մի հաւատացեալ գերի ազատէ եւ հարկ եղած վրկանքը
նրա ընտանիքին վճարէ: Բայց ոչ, եթէ ներնն իրրեւ
ողորմութիւն: Իսկ եթէ նա մի ցեղից է: որ թշնամի
է ձեզ դէմ, բայց ինքը հաւատացեալ էր, այն ժամա-
նակ պէտք է մի հաւատացեալ գերի ազատել: Իսկ եթէ
մի այնպիսի ցեղից է, որ ձեր եւ նրանց մէջ դաշինք
կայ, այն ժամանակ հարկ եղած վրկանքը պէտք է
տալ նրա ընտանիքին ու մի հաւատացեալ գերի ազա-
տել: Բայց ով որ անկարող է, թող երկու ամիս իրար
Խանից ծով պահէ առ Աստուած ապաշխարելով: Եւ Աստ-
ուած տեսնող իմաստուն է:

95. Իսկ ով որ դիտմամբ մի հաւատացեալին սպանէ,
նրա պատիժը դժոխքն է, որ նրա մէջ յաւիտեան պի-
տի մնայ, եւ Աստուծոյ բարկութիւնը նրա վրայ է, եւ
նա նրան կ'անխձէ եւ նրա համար մեծ տանջանք կը
պատրաստէ:

96. Ով հաւատացեալներ, երբոր դուք դուրս էք
գալիս պատերազմի Աստուծոյ համար քննեցէ՛ք, եւ ա-
մեն ձեզ բարեւ տողին մի՛ ասէք «դու հաւատացեալ

չես» այս աշխարհքի բարեքները ձեռք բերելու գիւտով, որովհետեւ Աստուծոյ մօտ շատ հարատւութիւններ կան: Դուք առաջ այսպէս էիք, բայց Աստուած ձեզ շնորհք արեց: Ուրեմն քննեցէ՛ք, որովհետեւ Աստուած ձեր գործքերը գիտէ:

97. Հաւատացեալներից այնպիսիները, որ վիսաւած չը լինելով տանը նստում են, հաւասար չեն նրանց, որ իրանց ստացւածքովը եւ անձերովը Աստուծոյ համար պատերազմի են գնում: Աստուած բարձր է դասում մի աստիճան այնպիսիներին, որ իրանց ստացւածքովը եւ անձերովը պատերազմում են, եւ ամեն մէկին բարեք է խոստանում, եւ Աստուած մեծ վարձքով բարձր է դասում պատերազմողներին նստողներիցը վերեւ:

98. Իր կողմանէ աստիճաններով եւ թողութիւնով եւ ողորմութիւնով: եւ Աստուած ներող ողորմած է:

99. Այնպիսիներին, որոնք իրանց գէժ անխրաւութիւն են արել, ասում են հրեշտակները, երբ նրանց մեղքնում են, «դուք ինչո՞ւմ էիք», նրանք էլ ասում են, «մենք տկար էինք երկրի վրայ»: Ասում են, «մի՞թէ Աստուծոյ երկիրը լայն չէր, որ գաղթէիք նրանում»: Դրանց բնակութեան տեղը դժոխքն է, եւ ո՛հ, ինչ վատ տեղ է:

100. Բացի այն տկար մարդիկներից եւ կնիկներից եւ երախաններից, որ միջոց չունէին որ ճանապարհ գտնեն, — գուցէ Աստուած նրանց կը ներէ, որովհետեւ Աստուած ներող, մեղք թողող է:

101. Եւ ով Աստուծոյ համար պատերազմելու գաղթէ, նա երկրիս վրայ շատ առատ ապաստանարան կը գտնէ, եւ ով իր տունիցը գաղթէ Աստուծոյ եւ նրամարդարէի համար եւ յետոյ մահը նրան յափշտակէ, արդէն նրա վարձքը Աստուծուն կ'ըկնի. եւ Աստուած ներող ողորմած է:

102. Եւ երբ երկրիս վրայ ճանապարհորդութիւն էք անում, ձեզ համար յանցանք չըկայ, որ աղօթքը

կարճացնէք, եթէ վախենում էք որ անհաւատները ձեզ փորձանքի մէջ կը գցեն, որովհետեւ անհաւատները ձեր յայտնի թշնամիներն են:

103. Եւ երբ դու նրանց մէջն ես եւ նրանց հետ աղօթքի ես կանգնել եւ նրանցից էլ մի խումբ քեզ հետ կանգնել է, թող նրանք ասնեն իրանց զէնքերը եւ երբ նրանք աղօթքի ծուեն, թող ձեր ետեւը լինեն, եւ մի ուրիշ խումբ գայ, որ աղօթք չէ արել, եւ քեզ հետ աղօթք անեն եւ զգուշութիւն անեն եւ իրանց զէնքերը պահեն: Անհաւատները փափագում են, որ դուք անհոգ լինէք ձեր եւ ձեր կարասիքի եւ զէնքերի մասին, որ մէկ յարձակումով ձեզ վրայ յարձակեն: Եւ ձեզ համար յանցանք չըկայ, որ, երբ անձրեւից նեղութիւն ունիք կամ հիւանդ էք, ձեր զէնքերը վար առնէք. եւ դարձեալ զգո՛յշ եղէք, որովհետեւ Աստուած անհաւատների համար խայտառակ տանջանք է պատժասեղ:

104. Եւ նրբ աղօթքը վերջացրել էք, յիշեցէ՛ք Աստուծուն կանգնած եւ նստած եւ ձեր կողքի վրայ պառկած: Բայց երբ ապահով էք, այն ժամանակ աղօթքը կատարեցէ՛ք, որովհետեւ հաւատացեալներին հրամայւած է իր ժամանակին աղօթք անել:

105. Մի թշնամի ազգի ետեւիցն ընկնելու համար անփոյթ մի՛ լինէք, թէ եւ նեղութիւն էլ քաշելու լինէք, որովհետեւ նրանք էլ են նեղութիւն քաշում. եւ ինչպէս դուք էք նեղութիւն քաշում, եւ դուք սպասում էք Աստուածանից այն բանը որ նրանք չեն սպասի, եւ Աստուած գիտուն խմաստուն էր:

106. Մենք իջեցրինք քեզ համար գիրքը ճշմարտութիւնով, որ մարդկանց մէջ դատաստան անես, ինչպէս որ Աստուած քեզ ցոյց է տւել. ուրեմն թշնամի մի՛ գառնար անհաւատարիմներին եւ թողութիւն խնդրի՛ր Աստուածանից, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

107. Եւ մի՛ պաշտպան իր նրանց, որ միմիանց խա-

բում են. որովհետեւ Աստուած խաբող մեղաւորին չի սիրի:

108. Սրանք իրանց ծածկում են մարդկանցից, բայց չեն ծածկում Աստուածանից. իսկ նրանք գիշերը խօսելիս նա նրանց հետ է եւ չէ հաւատում նրանց խօսածին. եւ Աստուած չըջապատել էր նրանց արարքները:

109. Դուք ահա՛ այն էք, որ այս աշխարհքի կեանքումը պաշտպանում էք նրանց: Բայց ո՞վ է որ յարութեան օրը պաշտպանէ նրանց Աստուածանից, կամ ո՞վ կը լինի նրանց փաստարանը:

110. Եւ ով որ չարութիւն գործէ կամ իրան զէմ անիրաւութիւն անէ, յետոյ Աստուածանից ներողութիւն խնդրէ, նա Աստուծուն ներող ողորմած կը գանէ:

111. Բայց ով որ մեղք գործէ, ահա՛ նա իր հոգուն զէմ է գործել, եւ Աստուած էլ գիտացող իմաստուն էր:

112. Եւ ով որ մի սխալմունք կամ մեղք գործէ. յետոյ մի անմեղի վրայ գցէ այդ, նա արդէն զրպարտութիւն եւ յայտնի մեղք է գործել:

113. Եւ եթէ Աստուծոյ շնորհքը եւ ողորմութիւնը չը լինէր քո վրայ, նրանցից մի խումբ քեզ վրայ կը յարձակէր, որ քեզ մոլորացնեն. բայց նրանք միմիայն իրանց անձերն են մոլորեցնում, եւ նրանք քեզ մի բան չեն մխտախ: Եւ Աստուած իջեցրել է քեզ համար գիրքը եւ իմաստութիւնը եւ ինացրել է քեզ այն, որ դու չը գիտէիր. եւ Աստուծոյ շնորհքը քեզ վրայ մեծ էր:

114. Նրանց շատ փախաւքներումը օգուտ չըկայ բացի այն որ մէկը ողորմութիւն կամ օրինաւոր բաներ կամ մարդկանց մէջ խաղաղութիւն պտուիրէ: Եւ ով Աստուծոյ հաճութիւնը ուզելով այս բանն անէ. մենք շուտով նրան հեծ վարձք կը տանք:

115. Եւ ով նրա համար ուղիղ ճանապարհը յայտնելուց յետոյ մարգարէիցը բաժանի եւ հաւատացեալների ճանապարհիցը մի ուրիշ ճանապարհով գնայ,

մենք նրան աալու ենք ինչ բանի որ ձգտում է, և նրան գցելու ենք գժոխքը. և ո՛հ ինչ վատ տեղ է:

116. Իրաւի Աստուած ՚ի ների, որ մէկը նրան ընկերներ գնէ, բայց բացի սրանից մնացածը ներում է, ում որ կամենում է. և ով որ Աստուծուն ընկերներ է ընդունում, նա արդէն հեռացել մտրուել է:

117. Նրանք Աստուածանից միմիայն էգերի են ազօթք անում և միմիայն ապտամբ սատանային են ազօթք անում:

118. Աստուած անիծել է նրան. նա էլ ասել է, «ես քո ծառաներից մի սրոշեալ մաս եմ անելու. և նրանց մգորացնելու եմ, և ես նրանց ցանկութիւններ եմ ներշնչելու. և հրամայելու եմ նրանց, որ կտրեն անասունների ականջները, և հրամայելու եմ նրանց, որ Աստուծոյ արարածները այլաժօխեն. և ով որ Աստուածանից ջսկ սատանան ընդունէ իրան պաշտպան, նա արդէն յայտնի մնասով մնասած է:

119. Նա խոստանում է նրանց և նրանց ցանկութիւնները գրգռում, բայց սատանան նրանց միմիայն խարէութիւններ է խոստանում:

102. Նրանց բնակատեղը գժոխքն է, և նրանք մի ազատող չեն գտնի նրանից:

121. Իսկ նրանք որ հաւատում են և բարի գործեր գործում, մենք նրանց գրախտների մէջն ենք սանելու, որոնց տակովը գեանք են հոսում, և նրանք յախտեան նրանց մէջ են մնալու. Աստուծոյ խոստմունքը ճշմարիտ է. և ո՛վ է Աստուածանից աւելի ճշմարիտ խօսքով:

122. Ոչ ձեր ցանկացածները և ոչ գիրք ունեցողների ցանկացածները կը կատարուեն: Ով որ չարութիւն գործէ, նրանով կը պատժուի, և Աստուծանից ջսկ նրա համար ոչ պաշտպան կայ և ոչ օգնական:

123. Եւ ով որ բարի գործքեր գործէ, թէ արօթ է կ, նա հաւատացեալ է. գրանք գրախտը կը մանեն և մի թեփուկի չափ էլ անիրաւութիւն չեն կրի:

124. Եւ ո՛վ է իր կրօնքովը աւելի լաւ լինի քան

նա, որ իր երեսը դարձնում է Աստուծուն․ դա բարե-
գործ է, եւ իբրեւ բարեպաշտ հետեւում է Արքանամբի
կրօնքին, իսկ Աստուած Արքանամբին իր բարեկամ է
ընդունել:

125. Երկնքումն ու երկրումն եղածն Աստուծունն է,
եւ Աստուած չբժապատում է բոլորը:

126. Եւ նրանք հարցնելու են քո վճիռը կանանց
մասին․ ասա՛. «Աստուած է տալիս իր վճիռը նրանց
մասին եւ ինչ որ կորցազվում է ձեզ համար իջած
գրքումը, կանանց որբերի մասին, որոնց դուք չէք
տալիս ինչ որ դրամ է նրանց օգուտի համար, եւ
փափագում էք, որ նրանց կնիկ առնէք, եւ տկար ար-
դայոց մասին, եւ որ դուք արդարութեամբ վարւէք
որբերի վերաբերմամբ, եւ ինչ բարիք որ դուք անէք,
Աստուած գիտէ այն»:

127. Եւ եթէ մի կնիկ վախում է, որ մարդը խոտ-
վութիւն կամ զզւանք է անելու, նրանց համար յան-
ցանք չըկայ, եթէ իրանց մէջը խաղաղութիւնով վեր-
ջացնեն․ եւ խաղաղութիւնը աւելի յաւ: Սիրտը արդէն
չահասիրութիւն է ներկայացնու՛մ, իսկ եթէ բարիք ա-
նէք եւ երկիրդ ւրիշէք, Աստուած ձեր արարքնեբը
գիտէ:

128. Եւ դուք բնաւ չէք կարող, որ կնիկների մէջ
արդարութեամբ վարւէք, եթէ փափագէք էլ․ ուրիմն
ձեր բոլոր հակակրօնութիւնը յայտնի մի՛ անէք․ թո՛ղ
տւէք դա կասկածի մէջ մնայ: Բայց եթէ խաղաղու-
թիւնով ապրէք եւ երկիրդ ւրիշէք, այն ժամանակ
Աստուած ներող ողորմած էք:

129. Եւ եթէ մարդ ու կնիկ բաժանուին, Աստ-
ուած ամեն մէկին էլ կը հարստացնէ իր առատութիւ-
նից․ որովհետեւ Աստուած հարուստ իմաստուն էր:

130. Եւ երկնքումն ու երկրումն եղածն Աստուծունն
է․ մենք արդէն նրանց, որոնց ձեզանից առաջ է գիրք
տրւել, եւ ձեզ խրատել ենք, որ Աստուածանից վա-
խենաք․ իսկ եթէ չըհաւատաք, ահա երկնքումն ու երկ-

բումս եղածը Աստուծունն է. եւ Աստուած հարուստ օրհնեալ էր :

131. Եւ երկնքումն ու երերումս եղածը Աստուծունն է, ու Աստուծոյ պաշտպանութիւնը բաւական է :

132. Եթէ կամենայ ձեզ կը ջնջէ, ո՛վ մարդիկ, եւ ուրիշները կը բերէ. եւ Աստուած այս բանը կարող է :

133. Ո՛վ որ կամենում է աշխարհքիս վարձքը— ահա Աստուծոյ մօտն է աշխարհքիս վարձքը եւ հանգերձեալինը. եւ Աստուած լուսն տեսնում էր :

134. Ո՛վ հաւատացեալներ, ազգարութեամբ հաստատ կայէ՛ք իբրեւ վկաներ Աստուծոյ համար, թէ եւ ձեր անձերի կամ ծնողների եւ մերձաւորների դէմ լինի, թող հարուստ լինի կամ ազքատ. արդ Աստուած երկուսի էլ տէրն է : Եւ հաճոյքին մի՛ հետեւէք, որպէս զի արդար լինէք : Իսկ եթէ դառնաք կամ ետ քաշւէք, ահա Աստուած ձեր արօքներին տեղեակ է :

135. Ո՛վ հաւատացեալներ, հաւատացէք Աստուծոյ եւ նրա մարգարէին եւ այն գրքին, որ նա առաջուց իջեցրել է. իբ մարգարէին, եւ այն գրքին, որ նա իջեցրել է եւ ով որ չըհաւատայ Աստուծուն եւ նրա հրեշտակներին եւ նրա գրքերին եւ նրա մարգարէին եւ վերջին օրուայ, նա արդէն շատ հեռու մոլորւած է :

136. Իրաւի նրանք որ հաւատացել են եւ յետոյ անհաւատ դարձել եւ յետոյ անհաւատութիւնը շատացրել Աստուած նրանց մեղքերը չի ներքի եւ ուղիղ ճանապարհում նրանց չի առաջնորդի :

137. Կնդձաւորներին կանխաւ ասա՛ թէ «նրանց համար ցաւալի տանջանք կայ» :

138. Նրանք որ հաւատացեալներին թողած անհաւատներին են իրանց ընկեր ընդունում. մի՞թէ նրանցից ոյժ են սպասում. ահա՛ բոլոր ոյժը Աստուծունն է պատկանում :

139. Նա արդէն գրքի մէջը ձեզ յայտնութիւն է իջեցրել. որ դուք Աստուծոյ նշանները լսելիս նքրանք չին հաւատալու եւ ծաղրելու են նրանց : Դրա

համար նրանց հետ մի՛ նստէք, մինչև որ նրանք մի ուրիշ զբոյց կը սկսեն. որով ետև այն ժամանակ դուք նրանց կը նմանէք. ահա՛ Աստուած հաւաքելու է կեղծաւորներն եւ անհաւատներն բոլորն էլ զժողովի մէջ:

140. Նրանք, որ հսկում են ձեզ վրայ, երբ Աստուծոյ կողմանէ ձեզ մի յաջողութիւն է արգում, ասում են, «մի՞թէ մենք ձեզ հետ չէինք», իսկ եթէ անհաւատներին է մի բաժին բնկնում, «մենք ձեզանից աւելի զօրաւոր չէ՞ինք, եւ ձեզ չը պաշտպանեցիր հաւատացեալներն զէմ»: Բայց Աստուած է ձեր մէջ դասը տեսնելու յարութեան օրը. եւ Աստուած անհաւատներն պատենութիւն չի տայ հաւատացեալներն զէմ:

141. Իրաւի կեղծաւորները խարում են Աստուծուն, եւ նա էլ նրանց է խարում. եւ երբ նրանք աղօթքի են կանգնում, կանգնում են անուշազիր, ուզում են որ մարդկանց երևան, եւ Աստուծուն չեն յիշում բացի մի քանիներից:

142. Նրանք տատանում են երկուսի մէջանդր. ոչ զէպի նրանց ոչ զէպի նրանց են գնում: Եւ որին որ Աստուած մշտրեցնում է, դու նրա համար ճանապարհ չես գտնի:

143. Ո՛վ հաւատացեալներ, հաւատացեալները թողած անհաւատներին բնկեր մի՛ բնդունէք: Ո՛րք ուզում էք, որ Աստուծուն յայնի իրաւունք տաք ձեզ զէմ:

144. Կեղծաւորները ահա՛ զժողովի կրակի խոր տեղն են, եւ դու նրանց համար օգնական չես գտնի:

145. Բացի նրանցից որ ապախարում, լաւանում եւ Աստուծուն են ապաւինում, եւ իրանց կրօնքը մաքրում Աստուծոյ համար, նրանք հաւատացեալներն հետ են: Եւ Աստուած չուսով մեծ վարձք է տալու հաւատացեալներին:

146. Աստուած ի՞նչպէս ձեզ կը տանջէ, եթէ դուք երախտադէտ էք եւ հաւատում էք: Եւ Աստուած երախտիքի տէր իմաստուն էր:

147. Վաս զբոյցը հրապարակու Աստուած չի սիրի, բացի որ մէկին անիրաւութիւն եղած լինի. որովհետեւ Աստուած լսող իմացող էր:

148. Եթէ մի բարիք յայտնի անէք, կամ ծածկէք կամ մի չար բան ներէք, որովհետեւ Աստուած ներսդ ամենակալ էր:

149. Նրանք, որ չեն հաւատում Աստուծուն եւ նրա մարգարէներին եւ ուզում են տարբերութիւն գնել Աստուծոյ եւ նրա մարգարէներին մէջ բաժանում եւ ասում են թէ «մի քանիսին հաւատում ենք եւ մի քանիսին չենք հաւատում» եւ ուզում են սրանց մէջ համոզում գցել:

150. Նրանք են ճշմարտագէտ անհասաները, եւ մենք անհաստների համար խոյտտակ տանջանք ենք պատրաստել:

151. Իսկ նրանք, որ հաւատում են Աստուծուն եւ նրա մարգարէներին եւ նրանց ոչ մէկի մէջ տարբերութիւն չեն գնում, — մենք չուսով տալու ենք նրանց իրանց վարձքը, եւ Աստուած ներող ողորմած էր:

152. Գերի ունեցողները քեզանից հարցնելու են, թէ դու նրանց համար երկնքիցը մի պիքք իջնեցնես: Բայց նրանք Մովսէսից նրանից աւելի մեծ բան պահանջեցին եւ ասացին «ցոյց տուր մեզ պարզագէտ Աստուածը»: Բայց իրանց անիրաւութեան պատճառով մրրիկը յափշտակեց նրանց, եւ յետոյ իրանց հաւաք յայտնի նշաններ գալուց յետոյ ընդունեցին հորթի իսկ մենք սա ներեցինք եւ Մովսէսին յայտնի ապացոյց տեցինք:

153. Եւ նրանց հետ ուխտ անելիս սորը բարձրացրինք եւ ասացինք նրանց, «Մտէ՛ք գոնովը», եւ ասացինք նրանց, «շաբաթը մի՛ պզտէք», եւ նրանց հետ մի խիստ ուխտ արեցինք:

154. Եւ որովհետեւ նրանք իրանց ուխտը պոճեցին եւ Աստուծոյ նշաններին չը հաւատացին եւ անիրաւաբար սպանում էին մարգարէներին եւ ասում, «մեր սրտերը անթլպատ են», նրա համար իրանց անհաւատութեան պատճառով Աստուած կնքեց նրանց սրտերը եւ միմիայն մի քանիները հաւատացին:

155. Նաեւ իրանց անհաւատութեան եւ իրանց այն խօսքին համար, որ Մարիամի մասին մեծ զբոսարտութիւն տրեցին.

156. Ասելով «մենք Աստուծոյ մարգարէ Մարիամի որդի Մեօխ Յիսուսին սպանեցինք». բայց նրան չեն սպանել եւ նրան չեն խաչել. այլ նա նրանց այնպէս էր երեւում: Իսկ նրանք այդ մասին տարածայնութիւն են խօսում, նրանք գիտութիւն չ'ունեն այդ մասին, այլ միայն կարծիքի են հետեւում, բայց իսկպէս նրան չեն սպանել. ո՛չ, Աստուած նրան բարձրացրեց իրան մօտ, եւ Աստուած հօր իմաստուն էր:

157. Բայց գիրք ունեցողներից ոմանք անպատճառ հաւատալու են նրան նրա մահից առաջ. եւ յարութեան օրը նա նրանց դէմ վկայ է լինելու:

158. Ուրեմն որովհետեւ հրէաներից ոմանք անիրաւութիւն են արել, մենք նրանց համար իբրեւ պիղծ հրատարակեցինք այն բարիքները, որ նրանց համար սուրբ էին, եւ որովհետեւ շատ խոտորւում են Աստուծոյ ճանապարհիցը:

159. Եւ վաչիս են առնում, որ նրանց արգիււած է արդէն, եւ զուր տեղը ուտում են մարգկանց ստացւածքը: Եւ մենք նրանց միջիցը անհաւատ եղողներէ համար ցաւալի տանջանք ենք պատրաստել:

160. Բայց նրանցից այնպիսիները, որ գիտութեան մէջ հաստատ են եւ հաւատացեալները հաւատում են նրան որ իջեցրւել է քեզ համար, եւ ինչ որ էլ իջեցրել ենք քեզանից առաջ, նաեւ աղօթքն անողներք եւ մաքրութեան հարկը տողները եւ Աստուծուն եւ վերջին օրւայ հաւատացողները, — մենք նրանց մեծ վարձք են տալու:

161. Մենք քեզ յայտնութիւն տեցինք, ինչպէս յայտնութիւն ենք տւել Նոյին եւ նրանից յետոյ եղող մարդարէին եւ յայտնութիւն ենք տւել Աբրահամին եւ Իսմայէլին եւ Իսահակին եւ Յակոբին եւ ցեղերին եւ

Յիսուսին եւ Յովրին եւ Յովհաննիսն եւ Էնհարոնին եւ Սողոմոնին եւ Դաւիթին աւել ևնք գրքերը :

162. Եւ մարգարէներ կան, որոնց պատմութիւնները սրանից առաջ քեզ արեւ ևնք եւ մարգարէներ էլ կան որոնց պատմութիւնները քեզ չենք արել : Եւ Յատուած խօսել է Մովսէսի հետ խօսակցութեան պէս :

163. Մարգարէներ կային, որ աւետում եւ սպանում էին, որ մարդիկ մարգարէներէից յետոյ Աստուծոյ դէկ մի փաստ չուենան : Եւ Աստուած հզօր իմաստուն էր :

164. Աստուած իր քեզ համար իջեցրածին վկայ է, որ իջեցրել է իր գիտութեամբը, նաեւ հրեշտակները պիտի վկայեն : Եւ Աստուծայ վկայութիւնը բաւական է :

165. Իրաւի նրանք որ չեն հաւատում եւ խոտորում են Աստուծոյ ճանապարհիցը, արդէն մոլորուել են հեռու մոլորութիւնով :

166. Ուրեմն նրանք որ անհաւատ են եւ անիրաւութիւն են գործում. Աստուած նրանց չի ների եւ նրանց դէպի ուղիղ ճանապարհը չի առաջնորդի :

167. Միայն դէպի դժոխքի ճանապարհը, որ նրանում կը մնան յաւիտեան. եւ սա Աստուծոյ համար զիւրին էր :

168. Ո՛վ մարդիկ ձեզ համար արդէն Տիրոջ կողմանէ եկել է մարգարէն ճշմարտութիւնով, ուրեմն հաւատացէք նրան. լաւ կը լինի ձեզ համար : Իսկ եթէ չըհաւատաք, այն ժամանակ երկնքումն ու երկրումն հղածը Աստուծունն է. եւ Աստուած գիտուն իմաստուն էր :

169. Ո՛վ գիրք ունեցողներ, ձեր կրօնքումը չափազանցութիւն մի՛ անէք եւ Աստուծոյ մասին մի՛ բան մի՛ ասէք բացի ճշմարտութիւնից : Մարիամի որդի Յիսուս Մեսիան իրաւ Աստուծոյ ուղարկւածն է եւ նրա Բանն է, որ զցել է նրա մէջը եւ հոգի է նրանից : Ուրեմն հաւատացէք Աստուծուն եւ նրա մարգարէին, եւ մի՛ ասէք «երեք» . վերջացրէ՛ք . լաւ կը լինի մեզ համար : Ուրեմն Աստուած մէկ հատ Աստուած է . օրհնեալ

է, քաւ լիցի որ ունենայ որդր: Երկնքումն ու երկրումն եղածը նրանն է, եւ Աստուած քաւական է իւրեւ սրաշտպան:

170. Մեսիան բնաւ այնքան հպարտ չի լինի, որ Աստուծոյ ծառայ լինի եւ ոչ էլ մերձաւոր հրեշտակները:


171. Բայց ով որ հպարտանայ եւ ամբարտաւանանայ, նրանց ամենն էլ իր մօտն է հաւաքելու:

172. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում, նրանց վարձքերը նա տալու է եւ իր շնորհքիցն էլ աւելցնելու է վրան: Իսկ նրանք, որ հպարտանւմ եւ ամբարտաւանում են, — նրանց տանջելու է ցաւալի տանջանքով:

173. Եւ նրանք իրանց համար պաշտպան եւ օգնական չեն գտնի բացի Աստուածանից:

174. Ո՛վ մարդիկ արդէն ձեր Տիրոջից ձեզ համար վկայութիւն է եկել, եւ ձեզ մի յայտնի լոյս ենք իջնցրել: Իսկ նրանք որ հաւատում են Աստուծուն եւ պինդ բռնում նրան, նա նրանց իր ողորմութեան եւ շնորհքի մէջ կը մտցնէ եւ ուղիղ ճանապարհով իրան մօտ կ'առաջնորդէ:

175. Քո վճիռն են հարցնում: Գու ասա՛, «Նուաւ ազգականների մասին Աստուած է վճում. եթէ մի մարդ մեռնի առանց զաւկի. եւ նա մի քոյր ունենայ, նրա թողածի կէտը նրանի լինի, նա նրան ժառանգ չինէ: Իսկ եթէ նա զաւակ չ'ունենայ, եւ իրանք երկու քոյրեր լինեն, այն ժամանակ այդ երկուսին լինի նրա թողածից երկու երրորդ մասը. եւ եթէ եղբայրներ եւ քոյրեր կան, այն ժամանակ մէկ արուին լինի երկուէզի բաժինների չափ: Աստուած ձեզ յայանում է, որ մօլորվում էք, եւ Աստուած ամենագէտ է:



5) ՍՈՒՐԷԹ՝ ՈՒՆՆԱԿԻԹԻ

Մէգիհնէական. Հարիւր և քսան այլ

Գլթած, ողորմած Աստուծոյ անուհովը

1. Ո՛վ հաւատացեալներ, ձեր դաշինքները կատարեցէ՛ք: Ձեզ համար մաքուր են անբան անատունները, բայց այն որ ձեզ արգիլած է, բացի որսի տեղերիցը, երբ դուք ուխտագնացութեան մէջ էք: Աստուած պատուիրում է, ինչ որ կամենում է:

2. Ո՛վ հաւատացեալներ, մի՛ պղծէք Աստուծոյ կանոնները և ոչ էլ սուրբ ամիսը և ոչ մատաղը և ոչ վզանոցները, և ոչ էլ նրանց, որ սուրբ տունն են գնում, որ իրանց Տիրոջից շնորհք և հաճութիւն խնդրեն:

3. Եւ երբ ուխտից ազատեցիք գնացէ՛ք որսի. թո՛ղ ձեզ չը հրատարէ մէկ ձեզի թշնամութիւնը, որ ձեզ սուրբ տաճարիցը արգելու՛ էին որ պատիրանազանց լինէք: Եւ իրար օգնեցէ՛ք դէպի բարեպաշտութեան և երկիրաճութեան, ու իրար մի՛ օգնէք դէպի մեղք և թշնամութեան, և վախեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ Աստուած խիստ պատժող է:

4. Ձեզ համար պի՛ղծ լինի դիակը և արիւնը և խոզի միսը, և ինչ որ մորթուիս Ալլահի անուհից ջոկ անուն է յիշել, և խեղդուածը և վար ինկածը և եղջիրաճարածը և զազանից պատառածը, բացի այն որ դուք մաքրած լինէք, և ինչ որ զոհուում է արձաններին և վիճակ դրելով բան բաժանելը, սա զազրագործութիւն է: Վա՛յ այսօր նրանց. որ ձեր կրօնքիցը ետ քաշելով չեն հաւատում, դուք հիմայ նրանցից մի՛ վախէք, այլ ինձանից վախեցէ՛ք:

5. Չեր կրօնքը այսօր ձեզ համար կատարեալ արւի եւ լը-
րացրի ձեզ գէմ իմ շնորհքը, եւ ընտրեցի ձեզ համար
խալամբ իբրեւ կրօնք. բայց ով որ սովածութիւնից
ստիպ ած է, առանց մեղանշելու. ակնկալութիւն ու-
նենալու.— Աստուած ներող ողորմած է:

6. Քեզանից հարցու՞մ են, թէ իրանց համար ինչ է
սուրբ: Դու ասա՛. «ձեզ համար սուրբ են հրատարակ-
վում ամեն բարիքները, եւ այն որ ձեր օրօխ շան պէս
սովորեցրած գազանները ձեզ համար որսում են, ինչպէս
Աստուած ձեզ սովորեցել է: Ինչ դրանք ձեզ համար որ-
սում են, կերէ՛ք եւ Աստուծոյ անունը յիշեցէ՛ք նրա
վրայ, եւ վախեցէ՛ք Աստուծանից, որովհետեւ նա շու-
տով հաշիւ տեսնող է:

7. Ձեզ համար այսօր սուրբ են հրատարակվում ամեն
բարիքները եւ գիրք ունեցողների կերակուրը սուրբ
լինի ձեզ համար եւ ձեր կերակուրը՝ նրանց համար:
Սուրբ են նաեւ հաւատացեալ ազատ կնիկները եւ ձե-
զանից առաջ գիրք ունեցողների ազատ կնիկները, երբ
որ դուք նրանց ամուսնական վճարելիքը ասք, ազատ
լինէք եւ ողջախոսութեամբ ապրէք նրանց հետ եւ սի-
րականներ չ'ունենաք: Բայց ով որ անհաւատ դառնայ,
նրա բանը արդէն փճացած է, եւ նա հանդերձեալու՞մը
մնասածներիցը կը լինի:

8. Ո՛վ հաւատացեալներ, երբ աղօթքի էք կանգնում,
լացէ՛ք ձեր երեսները եւ ձեռքերը մի՛նչեւ արմունկ-
ները, եւ քսեցէ՛ք ձեր գլուխներին եւ ոտքերին մի՛ն-
չեւ սրունքները:

9. Եւ եթէ պղծւած է, մաքրեցէ՛ք. եւ եթէ հի-
ւանդ էք կամ ճանապարհորդութիւնում կամ ձեզանից
մէկը հարկաւորից է եկել կամ կնիկներին էք դպչել, եւ
եթէ ջուր չէք գտնում, այն ժամանակ մաքուր հւղով
թաթախեցէ՛ք եւ քսեցէ՛ք նրանից ձեր երեսներին եւ
ձեռքերին: Աստուած չէ ուզում որ ձեզ համար մի դրժ-
ւարութիւն չի՛նէ. այլ ուզում է որ ձեզ մաքրէ եւ իր
շնորհքը ձեզ վրայ լրացնէ, որ շնորհակալ լինէք:

10. Յիշեցէ՛ք Աստուծոյ շնորհքը՝ զէպի ձեզ եւ նրա ուխտը, որ կապել է ձեզ հետ, երբ դուք ասացիք «խեցի՛նք եւ հնազանդ ենք»։ Եւ վախեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ Աստուած սրտագէտ է։

11. Ո՛վ հաւատացեալներ, Աստուծոյ առաջին արգարութեամբ վկայութիւն տւէ՛ք, եւ մի ցեղի թշնամութիւնը ձեզ մեղանշել չի տայ, որ արդարախօս չի լինէք։ Եղէ՛ք արդար։ Դա երկիւղածութեան մօտ է, եւ վախեցէ՛ք Աստուածանից. որովհետեւ Աստուած ձեր արարքներին տեղեակ է։

12. Աստուած խոստանում է նրանց, որ հաւատում են եւ բարիքներ գործում։ Նրանց համար ներողութիւն կայ եւ մեծ վարձք։

13. Իսկ նրանք, որ անհաւատ են եւ մեր նշանների համար ասում են, թէ սուտ է. նրանք զժոխքի ընկերներ են։

14. Ո՛վ հաւատացեալներ, յիշեցէ՛ք Աստուծոյ շնորհքը ձեզ դէմ, երբոր մի ցեղ որոշեց, որ ձեռքերը երկարացնեն։ ձեզ դէմ եւ նա ետ քաշեց նրանց ձեռքերը ձեզանից, եւ վախեցէ՛ք Աստուածանից, եւ Աստուծուն կ'ապաւինեն հաւատացեալները։

15. Եւ արդէ՛ն ուխտ է դրել Աստուած Իսրայէլի որդեկանց հետ, եւ մենք նրանցից տասներկու իշխաններ վեր կացրինք, եւ Աստուած ասաց, «հա ես ձեզ հետ եմ. եթէ դուք աղօթքը կատարէք եւ մաքրող տուրքը վճարէք եւ իմ մարգարէներին հաւատաք եւ նրանց օգնէք եւ Աստուծուն լաւ պարտք տաք, ես էլ ձեզ կը ներեմ ձեր չարութիւնները եւ ձեզ կը մտցնեմ դրախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում։ Ով որ ձեզանից այսուհետեւ անհաւատ դառնայ, նա արդէ՛ն կորցրել է ուղիղ ճանապարհը։

16. Բայց որովհետեւ նրանք իրանց ուխտը քանդեցին,

մենք էլ նրանց անիծեցինք և նրանց սրտերը պնդա-
ցրինք, որ խօսքերը իրանց տեղերիցը ծոռւմ են և
նրա մի մասը մոռացել են, որ նրանց յիշեցրին: Իսկ
դու անդադար տեղեակ եղի՛ր նրանց խարդախութիւն-
ներին, բացի քիչերից. և նրանց ների՛ր և թո՛ղ
տուր, որովհետեւ Աստուած սիրում է բարեզործներին:

17. Եւ նրանցից էլ, որ ասում են թէ «մենք քրիս-
տոնեաներ ենք», ուխտ ենք տուել, բայց մոռացիլ են
այն բանը, որ նրանց յիշեցրին. այդ պատճառով մենք
նրանց մէջը թշնամութիւն և ատելութիւն ենք գցել
մինչեւ յարութեան օրը. բայց յետոյ նրանց իմացնե-
լու է Աստուած իրանց արարքները:

18. Ո՛վ գիրք ունեցողներ, արդէն միւ մարդարէն
եկել է ձեզ մօտ, որ բացատրում է շատ բան, որ դուք
գրքիցը ծածկում էիք. և նա շատն էլ զանց է անե-
լու: Աստուածանից արդէն լոյս է եկել ձեզ համար և
մի յայտարար գիրք, որ նրանով Աստուած իր հաճու-
թեան հետեւողներին խաղաղութեան ճանապարհներում
ատաջնորդում է, և նրանց հանում է խաւարքից դէպի
լոյսը իր հրամանովը և նրանց առաջնորդում է դէպի
ուղիղ ճանապարհը:

19. Նրանք արդէն անհաւատ են, որ ասում են թէ
Աստուածը Մարիամի որդի Մեսիան է: Դու, ասա՛՛ սով
կարող է Աստուածանից մի բան ազատել. եթէ նա ուզէ
որ միօցնէ Մարիամի որդի Մեսիային և նրա մօրը և
երկրի վրայ բոլոր եղողներին:

20. Եւ Աստուծունն է երկնքի և երկրի իշխանու-
թիւնը և ինչ որ այդ երկուսի մէջ տեղը կայ, նա ըս-
տեղծում է, ինչ որ ուղում է, և Աստուած ամենա-
կարող է:

21. Եւ հրէաներն ու քրիստոնեաներն ասում են,
«մենք Աստուծոյ որդիները և նրա սիրելիներն ենք»: Դու ասա՛՛
«այա նա ինչօ՞ւ է ձեզ ձեք մեղքերի հա-
մար տանջում: Ո՛չ, դուք միայն մարդիկ էք նրանց
պէս, որ նա ստեղծել է: Նա ներում է որին ուղում է

եւ ասանջում է, որին ուզում է. եւ Աստուծունն է երկընքի եւ երկքի իշխանութիւնը եւ ինչ որ այդ երկուսի մէջ տեղը կայ: Եւ ետ կը դառնան նրա մօտ»:

22. Ո՛վ գիրք ունեցողներ արդէն եկել է ձեզ մօտ մեր մարգարէն որ բացատրում է ձեզ մարգարէների միջի ժամանակայ բաները, որ ասում էք, թէ մեզ ոչ աւետիք տուող եւ ոչ էլ սպասնացող չէ եկել: Բայց արդէն եկել է ձեզ մօտ աւետիք տուող եւ սպասնացող: Եւ Աստուած ամենակարող է:

23. Եւ երբ Մովսէս ասաց իր ժողովրդին, «ո՛վ իմ ժողովուրդ, յիշեցէ՛ք Աստուծոյ շնորհքը ձեզ դէմ, երբ ձեր մէջը մարգարէք էք պատրաստում եւ ձեզ թագաւորներ էք շինում, եւ ձեզ այն բաներն էր տալիս, որ ձեզանից առաջ աշխարհներից ոչ մէկին էլ չէր տրուել»:

24. «Ո՛վ իմ ժողովուրդ, մտէ՛ք սուրբ երկիրը, որ Աստուած որոշել է ձեզ համար եւ ետ մի՛ դառնաք, որովհետեւ վնասողներ կը դառնաք»:

25. Եւ նրանք ասացին, «Ո՛վ Մովսէս, ահա նրանում հականեր կան, եւ մենք նրա մէջը չենք մտնի, մինչեւ նրանք այնտեղից դուրս չգան. արդ եթէ այնտեղից դուրս գան, մենք ներս կը գնանք»:

26. Երկու մարդիկ որ երկիրդած էին եւ Աստուած նրանց ցոյց էր տուել իր շնորհքը, ասացին, «մտէ՛ք դռնովը նրանց մօտ, եւ երբ մտնէք, դո՛ք պիտի յաղթէք. արդ Աստուծուն ապաւինեցէ՛ք, եթէ հաստացեալներ էք»:

27. Եւ նրանք ասացին, «ո՛վ Մովսէս, մենք բնաւ եւ յաւիտեան չենք մտնի այնտեղ, քանի որ նրանք նրա մէջն են. դու եւ քո Տէրը գնացէ՛ք եւ դուք երկուսդ պատերազմեցէ՛ք. մենք այնտեղ նստում ենք»:

28. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ես միայն իմ անձի եւ իմ եղբոր վրայ իշխանութիւն ունեմ. արդ մեր եւ մեր ժողովրդի մէջ դատի՛ր»:

29. Նա էլ ասաց, «ահա արգիլեց այն երկիրը նրանց համար քառասուն տարի. նրանք կը տատանեն»

այդ երկրում. բայց դու անզգամ ժողովրդի մասին մի տխրիր:

30. Սակայն կարգա՛ նրանց առաջին Ադամի երկու որդեկանց պատմութիւնը ճշմարտութիւնով. երբ նրանք երկուան էլ զոհեր մատուցրին. մէկիցն ընդունեց եւ միւսիցը չ'ընդունեց: Նա ասաց, «ես անպատճառ քեզ պիտի սպանեմ»: Եւ ասաց, «Աստուած միմիայն երկիր զածներիցն է ընդունում»:

31. «Եթէ դու ձեռքդ ինձ դէմ երկարացնես, որ ինձ սպանես, ես իմ ձեռքը չեմ երկարացնի քեզ դէմ, որ քեզ սպանեմ. ես աշխարհքների Տիրոջիցը վախում եմ»:

32. «Ես ուզում եմ, որ դու կրես իմ մեղքը եւ քո մեղքը. եւ դու կրակի ընկերներիցը դառնաս»: Եւ սա է անիրաււների պատիժը:

33. Եւ սիրտը հնազանդեց իրան, որ իր եղբորն սպանէ. եւ սպանեց նրան եւ յիսուածներիցն եղաւ:

34. Եւ Աստուած մի ազաւ ուղարկեց, որ հողը քանդում էր, որ նրան ցոյց տայ թէ նա ինչպէս թաղէ իր եղբոր մարմինը: Նա էլ ասաց, «ո՛հ, վա՛յ ինձ. ես այնքան տկար եմ, որ չեմ էլ կարող այս ազաւի պէս լինել, որ իմ եղբոր մարմինը թաղեմ»: Եւ զըղջացող դառաւ:

35. Սրա պատճառով մենք գրեցինք Իսրայէլի որդեկանց համար, թէ ով որ մէկ մարդ սպանէ, որ մի սպանւածի փոխարէնը չէր, կամ երկրիս վրայ մի չարագործ չէր, նա համարեա թէ բոլոր մարդկանցն է սպանել. բայց ով որ մէկը ողջ պահէ, համարեա թէ բոլոր մարդկանցն է ողջ պահել:

36. Եւ արդէն մեր մարգարէները եկել էին նրանց մօտ յայտնի նշաններով, բայց յետոյ նրանցից շատերը սրանից յետոյ էլի շուտ էին երկրիս վրայ:

37. Տես այնպիսիների պատիժը, որ Աստուծոյ եւ նրա մարգարէի դէմ են կուռւմ եւ երկրիս վրայ ման գալիս ասպականելով, սա է որ սպանւեն կամ խաչւեն կամ ձեռները եւ ոտները դէմ առ դէմ կտրւեն, կամ

երկրիցն աքսորեն: Սա նրանց անպատուութիւնն է այս աշխարհքում եւ նրանց համար մեծ տանջանք կայ հանգերձեալումը:

38. Բացի նրանցից, որ կ'ապաշխարեն աւելի կանուխ քան թէ դուք նրանց դէմ զօրաւոր կը լինէք, եւ իմացէ՛ք որ Աստուած ներող ողորմած է:

39. Ո՛վ հաւատացեալներ, վախեցէ՛ք Աստուածանից եւ մի միջոց պտրտեցէ՛ք դէպի նրան եւ պատերազմեցէ՛ք նրա ճանապարհումը, որպէս զի երջանիկ լինէք:

40. Որովհետեւ նրանք, որ չեն հաւատում, եթէ երկրիս վրայ եղածը բոլորը եւ նոյն խոկ նրա կրկինը ունենան եւ գրանով ուզեն փրկուել յարութեան օրը, նրանցից չի ընդունուի. եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ:

41. Նրանք կուզեն որ կրակիցը դուրս գան, բայց նրանից չեն կարող դուրս գալ. եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ:

42. Եւ արու գողին եւ էգ գողին՝ երկուսի էլ ձեռները կտրեցէք ի պատիժ իրանց արածի իբրեւ խրատ Աստուծոյ կողմանէ, եւ Աստուած հզօր իմաստունն է:

43. Բայց ով որ իր անիրաւութիւնից յետոյ ապաշխարեց եւ ուղղեց, այն ժամանակ Աստուած էլ դէպի նրան կը դառնայ, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

44. Միթէ չը գիտես, որ երկնքի եւ երկրիս իշխանութիւնը Աստուծունն է. նա իր ուզածին տանջում եւ իր ուզածին ներում է: Եւ Աստուած ամենակարող է:

45. Ով մարգարէ, մի՛ տխրիր նրանց մասին, որ անհաւատութեան մէջ յամառում են: Մի քանիսը կան նրանցից, որ իրանց բերածներովն ասում են թէ «մենք հաւատում ենք», բայց նրանց սրտերը չեն հաւատում, եւ մի քանիսն էլ հրէաներից կան որ սուտ են ականջ դնում եւ լսում են ուրիշ ցեղի խօսքը. նրանք քո մօտը չեն գալիս. յետոյ նրանք ծռում են խօսքերը իրանց տեղերիցն ասելով, «եթէ սա տրուի

ձեզ, ընդունեցէ՛ք ուս. եւ եթէ սա չը տրւի ձեզ, զգուշացէք:» Եւ նա, որին Աստուած փորձանք է կամենում, — դու նրա համար բնաւ չես կարող մի բան անել Աստուծոյ դէմ: Նրանք այնպիսիներ են, որոնց սրտերն Աստուած մաքրել չի ուզի. նրանց համար այս աշխարհքում խայտառակութիւն եւ միւս աշխարհքում մեծ տանջանք կայ:

46. Նրանք սուտին են ականջ դնում եւ պիղծնուտում: Ուրեմն երբ նրանք քեզ մօտ գան, դատի՛ր նրանց մէջտեղը կամ ե՛տ քաշւիր նրանցից. եւ եթէ նրանցից հտ քաշես, նրանք քեզ ոչինչ չեն վնասի: Իսկ եթէ դատես, այն ժամանակ արդարութեամբ դատի՛ր նրանց մէջ տեղը, որովհետեւ Աստուած սիրում է ճշմարիտներին:

47. Բայց նրանք ի՞նչպէս քեզ դատաւոր կը շինեն, քանի որ նրանք Մովսիսական օրէնքն ունին, որի մէջ Աստուծոյ դատաստանը կայ. յետոյ նրանք ետ են դառնում, ուրեմն նրանք հաւատացեալներ չեն:

48. Մենք իջեցրել ենք Մովսիսական օրէնքը, որի մէջ կայ ուղիղ առաջնորդութիւն եւ լոյս: Ուղղահաւաստ մարգարէները նրանով դատում էին հրէաներին՝ նաեւ ռաբբիներն ու զպիւրները, որոնք պահպանում էին Աստուծոյ գիրքը, նաեւ եւ նրա վկաներն էին: Ուրեմն մարդկանցից մի՛ վախենաք, այլ ինձանից վախեցէ՛ք, եւ իմ նշանները չնչին գիտով մի ծախէք: Ուրեմն՝ ով որ Աստուծոյ իջեցրածովը չը դատէ, այնպիսիներն անհաւատներ են:

49. Եւ մենք նրանում պատւիրել ենք, անձի տեղ անձ եւ աչքի տեղ աչք եւ քթի տեղ քիթ եւ ականջի տեղ ականջ եւ ատամի տեղ ատամ, իսկ վէրքի տեղ վրէժ: Հիմայ ով որ սղորմութիւն չինէ այս, դա նրա համար քառութիւն կը լինի. իսկ ով որ Աստուծոյ իջեցրածովը չը դատէ, այնպիսիները անիրաւուներ են:

50. Եւ նրանց հտեւիցը ուղարկեցինք Մարիամի որդի Յիսուսին, որ հաստատում էր իրանից առաջ

եղող Մովսիսական օրէնքը, եւ նրան աւինք Աւետարանը, որի մէջ կայ ուղիղ առաջնորդութիւն եւ յոյս եւ իրանից առաջ եղածի այսինքն Մովսիսական օրէնքի հաստատութիւնը, եւ ուղիղ առաջնորդութիւն եւ քարոզ երկիւղածների համար:

51. Ուրեմն Աւետարանն ունեցողները պէտք է դատեն այն բանով որ Աստուած իջեցրել է նրանում, եւ ով որ Աստուծոյ իջեցրածովը չը դատէ, այնպիսիները չարագործներ են:

52. Եւ քեզ համար էլ իջեցրինք գիրքը ճշմարտութիւնով, որ իրանից առաջ եղած գրքերը հաստատում է եւ նրանց վրայ պահապան է. ուրիմն նրանց մէջ դատիր Աստուծոյ իջեցրածի պէս. նրանց հաճոյքներին մի՛ հետեւիր ծուեյով նրանից որ ճշմարտութեամբ քեզ մօտ է եկել: Ձեզանից ամեն մէկի համար մենք շինել ենք մի օրէնք եւ մի ճանապարհ:

53. Եթէ Աստուած կամեցած լինէր, մենք ձեզ մէկ հատ կրօնական ազգ կը շինէինք, բայց որպէս զի նա ձեզ փորձէ այն բանի մէջ, որ ձեզ աւել է, մրցեցէ՛ք բարիքների մէջ: Դուք Աստուծուն պիտի դատնաք ամենքդ, եւ նա ձեզ կը բացատրէ այն բաները որոնց մասին անհամաձայն էիք:

54. Եւ դու դատի՛ր նրանց մէջ այն բանովը, որ Աստուած իջ՛ցրել է, եւ մի՛ հետեւիր նրանց հաճոյքներին: Եւ զգուշացի՛ր նրանցից, որ քեզ կը մոյոսեցնեն մի քանի բանից սր Աստուած քեզ համար իջեցրել է: Եւ եթէ նրանք մերժեն, իմացի՛ր, որ Աստուած նրանց մի քանի մեղքերի պատճառովը մի պատուհաս պիտի հասցնէ իրանց: Իրաւի մարդկանցից շատերը չարագործներ են:

55. Բայց մի՞թէ տգիտութեան ժամանակի դատաւճիռն են պահանջում: Եւ մի համոզւած ժողովրդի համար Աստուծոյ դատաւճոյցը լաւ դատող ո՞վ կայ:

56. Ո՞վ հաւատացեալն էր, դուք իրար համար հրէաներին կամ քրիստոնեաներին պաշտպան մի՛ ընդունէք:

իսկ ձեզանից ով որ նրանց պաշտպան ընդունէ, — ահա նրանցից է. որովհետեւ Աստուած չի առաջնորդի անիրաւ ազգի:

57. Դու տեսնում ես, որ այնպիսիները, որոնց սըրտումը տկարութիւն կայ, նրանց կողմն են վազում ասելով, «վախում ենք, որ մեզ մի փորձանք պատահի»: Բայց կարելի է, Աստուած մի յաղթութիւն կըտայ կամ նրանից մի բան կը ծագէ, եւ նրանք իրանց սրտերումը զազանի պահածի համար կը զղջան:

58. Եւ հաւատացեալները կ'ասեն, «սրա՞նք են, որ պինդ երզումով երզում արին Աստուծով, որ ձեզ հետ են լինելու»: Բայց ոչնչոցան նրանց գործքերը: Նրանք վնասողներին են:

59. Ո՛վ հաւատացեալներ, ձեզանից ով որ ձգէ իր կրօնքը, Աստուած այնպիսիներէ տեղը մի ժողովուրդ կը բերէ, որոնց նա կը սիրէ եւ որոնք էլ նրան կը սիրեն իբրեւ ամօթ հաւատացեալներէ համար եւ պատիւ անհաւատներէ համար, որոնք կը պատերազմեն Աստուծոյ ճանապարհումը եւ նախատողի նախատինքից չեն վախի: Սա Աստուծոյ պարգեւն է, նա տալիս է այն որին ուզում է: Եւ Աստուած հարուստ ամենագէտ է:

60. Հիմայ ձեր պաշտպանը Աստուած է եւ նրա մարգարէն եւ նրանք են, որ հաւատացել են, որ աղօթքը կատարում են եւ մաքրութեան հարկը վճարում եւ իրանք ծուներ են զնում:

61. Ով որ իրան պաշտպան ընդունէ Աստուծուն եւ նրա մարգարէին եւ հաւատացեալներին, — ահա՛ այնպիսիները Աստուծոյ խումբն են եւ յաղթողներն իրանք են:

62. Ո՛վ հաւատացեալներ, ձեզ համար պաշտպան մի՛ ընտրէք ձեզանից առաջ զիրք ստացողներին եւ անհաւատներին այնպիսի անձինք, որ ձեր կրօնքին ծաղրում ու ծիծաղում են, եւ վախեցէ՛ք Աստուածանից եթէ հաւատացեալ էք:

63. Եւ երբ դուք նրանց աղօթքի էք կանչում, եւ

նրանք ծաղրում ու ծիծաղում են, — սա նրա համար է, որ չընասկացող մարդիկ են:

64. Դու ասա՛, «ո՛վ գիւրք ունեցողներ, դուք արդեօք միայն նրա համար էք մեզանից հրաժարվում որ հաւատում ենք Աստուծուն եւ մեզ համար իջեցրւածին եւ առաջուց իջեցրւածին: Եւ յիբաւի ձեզանից շատերը շարագործներ են»:

65. Դու ասա՛, «արդեօք ձեզ աւելի մեծ չարիք գուշակեմ քան թէ օրհնուածոյ կողմանէ գալիք վարձքը: Աստուած նրանց, որոնց անիծեց եւ որոնց վրայ բարկացաւ, նրանցից ոմանք կապիկներ եւ խոզեր շինեց, նաեւ Թաղութի պաշտողներին: Նրանց տեղը վատ եւ շիտակ ճանապարհիցը չեղւած են»:

66. Եւ երբ ձեզ մօտ են գալիս, ասում են «մենք հաւատում ենք», բայց նրանք արդէն անհաւատութեամբ են մտել. եւ նրանք նրանով էլ դուրս են գընացել: Սակայն Աստուած գիտէ նրանց ծածուկ պահածը:

67. Եւ դու կը տեսնես, որ նրանցից շատերը կը շտապեն դէպի մեղք եւ թշնամութիւն եւ պիղծ բանք կուտեն: Անշուշտ չար է նրանց արածը:

68. Եթէ ուրբերները եւ դպիրներն իրանց խօսքովը նրանց չ'արգիլեն մեղքը եւ պիղծն ուտելը, — անշուշտ չար է նրանց գործածը:

69. Եւ հրէաներն ասում են, թէ «Աստուծոյ ձեռքը կապւած է»: Իրանց ձեռքերն է կապւած եւ անիծւած են իրանց ասածի համար: Ոչ էլ նրա երկու ձեռները տարածւած են, որ շնորհէ ինչպէս որ կամենում է, որպէս զի այն որ իջեցրւել է քեզ համար քո Տէրոջիցը նրանցից շատերի համար շատացնէ անասամբութիւն եւ անհաւատութիւն, եւ մենք նրանց մէջ թշնամութիւն եւ տուելութիւն գցենք մինչիւ յարութեան օրը: Եւ ամեն անգամ, որ նրանք պատերազմի կրակ են վառում, Աստուած հանգցնում է այն,

և Երանք շտապում են Երկրի վրայ չարութիւն անելու. բայց Աստուած չարագործներին չի սիրի:

70. Եւ եթէ գիրք ունեցողները հաւատային եւ երկնչէին, մենք Երանց չարութիւնները կը ներէինք Երանց եւ երջանիկ գրախաների մէջ կը տանէինք Երանց. եւ եթէ Երանք կատարէին օրէնքը եւ Աւետարանը եւ ինչ որ իջեցրւել է Երանց համար իրանց Տիրոջ կողմանէ, այն ժամանակ Երանք կը վայելէին իրանց վերելիցը եւ իրանց սաների տակիցը: Նրանցից կան ուղղամիտ ժողովուրդ, բայց Երանցից շատերի արածներն էլ չար է:

71. Ո՛վ մարգարէ, քարոզի՛ր ինչ որ քո Տիրոջ կողմանէ քեզ իջեցրւել է. իսկ եթէ չ'անես, այն ժամանակ Երա առաքելական պատւէրը կատարած չես լինի, եւ Աստուած քեզ կը հովանաւորէ մարդկանցից, որովհետեւ Աստուած անհաւատների ազգին չի առաջնորդի:

72. Դու ասա՛, «ով գիրք ունեցողներ, դուք մէկ բանի վրայ չէք, մինչեւ որ Օրէնքը եւ Աւետարանը եւ ձեր Տիրոջ կողմանէ ձեզ համար իջեցրւածը չը կատարէք՝ եւ որ Երանցից շտերի համար շտապէնէ, քո Տիրոջ կողմանէ քեզ համար իջեցրւածը ապտամբութիւն եւ անհաւատութիւն է, իսկ դու մի՛ տխրիր անհաւատների ազգի մաս'ն»:

83. Հիմայ Երանք որ հաւատում են եւ հրէաները եւ Սարէացիք եւ քրիստոնեաները—ով որ հաւատում է Աստուծուն եւ վերջին օրւայ եւ բարիք գործում, այգւլխիների համար երկիւղ չ'կայ եւ Երանք չեն տրտմի:

74. Մենք արգէն ու խաւ ենք առել Իսրայէլի որդիներից եւ Երանց համար մարգարէներ ենք ուղարկել: Նրանց մօտ ամեն անգամ մի մարգարէ էր գալիս մի այնպիսի բանով, որ Երանց հաճելի չէր լինում. մի մասը Երանց ստախօս էր կոչում, եւ մի մասը սպանում էին:

75. Եւ կարծում են, թէ փորձանք չի լինի, բայց կոչո՞ են, եւ խուլ են. յետոյ Աստուած Երանց կը դառ

նայ, եւ նրանց շատերը դարձեալ կոյր են եւ խուլ են-
բայց Աստուած տեսնում է նրանց արածը:

76. Սակայն անշուշտ անհաւատ են նրանք, որ ասում
են թէ Աստուածը Մարիամի որդի Մեսիան է, Մինչդեռ
Մեսիան ասել է, «ով Իսրայէլի որդիք, ծառայեցէ՛ք
Աստուծուն՝ իյ Տէրոջը եւ ձեր Տէրոջը, որովհետեւ ուլ
որ Աստուծուն լնկեր դնէ, Աստուած նրա դէմ արդէն
արդիւի է դրախար, եւ նրա բնակատեղը կրակն է, եւ
անիրաւաների համար օգնականներ չը կան»:

77. Հիմայ անհաւատ են նրանք, որ ասում են թէ
Աստուած մի երբորդն է երեքիցը, բայց Աստուած
չը կայ բացի մէկ Աստուածանից: Եւ իթէ նրանք չը դա-
դարեն այն բանն ասելուց. նրանցից անհաւատ եղող-
ներին անպատճառ հանդիպելու է մի ցաւալի տանջանք:

78. Ուրեմն չեն դառնայ դէպի Աստուած եւ նրանից
ներողութիւն չեն խնդրի, բայց Աստուած ներող
ողորմած է:

79. Մարիամի որդի Մեսիան միմիայն մարգարէ է,
Արդէն նրանից ատաջ մարգարէներ եղել են, եւ նրա
մայրը մի արգար կին էր, երկուսն էլ կերակուր ուտող
էին: Նայի՛ր թէ մենք ինչպէս ենք նրանց նշաններ
շայտնել, յետոյ նայի՛ր թէ նրանք ինչպէս են մոլորուել:

80. Դու ասա՛. «մի՞թէ Աստուածանից ջոկ մէկ բան
կը պաշտէք, որ ձեզ ոչ մի միջնա եւ ոչ մի օգուտ կարող
է տալ, եւ Աստուած լսող ու ամենագէտ է»:

81. Դու ասա՛, «ո՛վ գիրք ունեցողներ, ձեր կրօնքի
մէջ բացի ճշմարտութիւնից չափազանցութիւն մի՛ ա-
անէք եւ այն ազգի հաճոյքներին մի՛ հետեւիք որ ա-
ռաջուց մոլորուած են որ նրանք ուղիղ ճանապարհիցն
մոլորուած լինելով շատերին մոլորեցնում են»:

82. Իսրայէլի որդեկանցից անհաւատ եղողները անիծ-
ւած են Դաւիթի եւ Մարիամի որդի Յիսուսի լեզուովը:
Սա նրա համար է, որ ապշտամբեցին եւ պատիրա-
նազանց եղան եւ արգիւլւած իցը չէին արգիւլում: Վատ
է անշուշտ, ինչ որ արել են:

83. Դու կը տեսնես նրանցից շատերին, որ անհաւատներին պաշտպան են ընդունում: Անշուշտ վատ է այն, ինչ որ նրանց հոգիները կանխաւ գործում են, որ Աստուած բարկացել է նրանց վրայ, եւ նրանք միշտ մնալու են տանջանքի մէջը:

84. Եւ եթէ նրանք հաւատային Աստուծուն եւ մարգարէին եւ այն բանին, որ նրա համար իջեցրել է նրանց չէին ընդունի իրանց պաշտպան. սակայն նրանցից շատերը շարագործներ են:

85. Դու անպատճառ կը գտնես հաւատացեալներէ դէմ ամենախիստ թշնամիները որ հրէաներն ու կռապաշտներն են, եւ անպատճառ կը գտնես, որ հաւատացեալներին ամենամօտիկ սիրողները նրանք են, որ ասում են, թէ «մենք քրիստոնեայ ենք». սա նրա համար է, որ նրանցից կան քահանաներ եւ վարդապետներ, եւ նրանք ամբարտաւան չեն:

86. Եւ երբ լսում են այն բանը, որ իջեցրել է մարգարէին, կը տեսնես. որ նրանց աչքերիցը արտասուք է հոսում. այն պատճառով, որ հասկացել են ճշմարտութիւնը եւ ասում են, «ո՛վ մեր Տէր, մենք հաւատում ենք, դու մեզ գրի՛ր վկաների հետ միասին»:

87. Եւ մենք ինչո՞ւ չը հաւատանք Աստուծուն եւ մեզ եկած ճշմարտութեանը. մենք որ ուզում ենք որ մեր Տէրը մեզ ներս առնէ արգար ժողովրդի հետ միասին»:

88. Եւ Աստուած նրանց ասածին վարձք է տալու զբախտներ, որոնց տակովը գետեր են հոսում եւ նրանք յաւիտեան կը մնան նրանցում. եւ սա բարեգործների վարձքն է: Իսկ նրանք որ անհաւատ են եւ մեր նշաններին ասում են թէ սուտ է. նրանք դժոխքի ընկերներն են:

89. Ո՛վ հաւատացեալներ, Աստուծոյ ձեզ համար սուրբ հրատարակած բարիքները պիղծ մի՛ համարէք, եւ պատիրանազանց մի՛ լինէք, որովհետեւ Աստուած պատիրանազանցներին չի սիրի:

90. Եւ կերէ՛ք այն բանիցը, որ իբրեւ սուրբ բարիք

ձեզ շնորհել է. եւ վախեցէ՛ք այն Աստուածանից որին դուք հաւատացել էք:

91. Դուք ձեր երգումներումը սխալ անելիս Աստուած ձեզ չի պատժի, բայց ձեզ կը պատժէ ձեր երգմամբ արած ուխտերի համար, այն ժամանակ իբրեւ քաւութիւն պէտք է տասը աղքատ կերակրել ձեր ընտանիքները կերակրելու միջին կերպովը. կամ նրանց հազուատ տալ, կամ մի գերի ազատել. բայց ով որ չըկարողանայ, թող երեք օր ծոմ պահէ իբրեւ ձեր երգմանց քաւութիւն երբ երգում էք անում. եւ պահեցէ՛ք ձեր երգումները: Աստուած այսպէս յայտնում է ձեզ իր նշանները, որ շնորհակալ լինէք:

92. Ո՛վ հաւատացեալներ, ահա գինին եւ դրամով խաղալը եւ արձանները եւ վիճակ դցելը պիղծ է, սատանայի գործ է. ուրեմն զգուշացէ՛ք, որ երջանիկ լինէք:

93. Սատանան անպատճառ ուզում է ձեր մէջը թշնամութիւն եւ ատելութիւն գցէ գինիով եւ դրամախաղով եւ ձեզ հեռացնէ Աստուծուն յիշելուցը եւ աղօթքիցը: Ապա դուք մի՞թէ կը դադարէք: Ուրեմն հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ հնազանդեցէ՛ք մարգարէին եւ զգուշացէ՛ք. իսկ եթէ մերժէք, իմացէ՛ք որ մեր մարգարէի պարտքը միմիայն յայտնապէս խրատել էր:

94. Նրանց համար որ հաւատում են եւ բարիքներ գործում, յանցանք չէ թէ ինչ են ճաշակում, քանի որ երկիւղած են եւ հաւատում են եւ բարի գործքեր կատարում, յետոյ երկիւղած են եւ հաւատում են, յետոյ դարձեալ երկիւղած են եւ բարեգործ. եւ Աստուած սիրում է բարեգործներին:

95. Ո՛վ հաւատացեալներ, Աստուած ձեզ անշուշտ մի որսի բանով էլ է փորձում, որ թէ ձեր ձեռներովը կամ ձեր նիզակներովը բռնէք, որ Աստուած բմանայ թէ ով է անյայտ տեղում նրանից վախեցողը: Ուրեմն ով որ այսուհետեւ պատուիրանազանց դառնայ, նրա համար ցաւալի տանջանք կայ:

96. Ո՛վ հաւատացեալներ, որս մի՛ սպանէք երբ ուխտի մէջ էք. հիմայ ով որ ձեզանից գիտամաք որսը սպանէ, նրա սուգանքը այնչափ լինի իրը թէ մի ընտանի անասուն է սպանել: Ձեզանից երկու արդարամիտ մարդ վճուեն այդ իբրեւ մատաղ Քէաբէյի համար, կամ տղքատների կերակրել իբրեւ քառութիւն կամ սըրանց հաւասար ծովասպահութիւն, որ իր գործած մեղքի համն առնէ. Աստուած ներել է անցեալը. բայց ով որ կրկին գործէ, Աստուած նրանից վրէժը կառնէ. եւ Աստուած հզօր վրէժ աւանդ է:

97. Ձեզ թոյլ է արուամ ձովումը որսալ եւ նրանից վախելիով ուտէք դուք եւ ճանապարհորդը. բայց արգիււած է ձեզ ցամաքի որսը, քանի որ ուխտագնացութեան մէջ էք: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից, որի մօտ պիտի ժողովուրդ:

98. Աստուած այն սուրբ տաճարը՝ Քէաբէն՝ մարդկանց համար կայան է շինել եւ ուխտի ամիսը եւ մատաղը զարդերովը միասին: Սա նրա համար, որ իմանաք թէ Աստուած երկնքներումն եւ երկրումս եզածը գիտէ. եւ անա՛ Աստուած ամենագէտ է: Իմացէ՛ք, որ Աստուած խիստ պատժող է եւ որ Աստուած ներող ուղորմած է:

99. Մարգարէի պարտքը միմիայն խրատել է, եւ Աստուած գիտէ ձեր յայտնածը եւ ձեր ծածկածը:

100. Դու ասա՛, «վտար եւ լաւը հաւատար չեն, թէեւ շատ վատ բան քեզ յափշտակէ էլ: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից, ո՛վ խելացիներ, որպէս զի երջանիկ լինէք»:

101. Ո՛վ հաւտացեալներ, այն բաների մասին մի՛ հարցնէք, որ ձեզ յայտնուելիս տրտմում էք. իսկ եթէ նրանց մասին հարցնէք, երբոր Ղուրանը իջեցնվում է, ձեզ կը յայտնուի Աստուած ներել է այն. եւ Աստուած ներող հեզ է: Ձեզանից առաջ էլ մէկ ժողովուրդ հարցրեց, բայց յետոյ նրան չը հաւատացին:

102. Աստուած մի Բահիրա եւ Սաիրա եւ Վասիլա

ևւ Համ չէ շինել. բայց անհաւատները Աստուծոյ մասին սուտեր են հնարու՛մ, եւ նրանց մեծ մասը չէ մտածում:

103. Եւ երբ նրանց ասում է թէ «եկէ՛ք Աստուծոյ իջեցրածի եւ մարգարէի մօտ», ասում են, «մեզ համար հերիք է ինչ տեսել ենք մեր հայրերի մօտ»: Բայց եթէ նրանց հայրերը քան չէին հասկանում եւ ուզիղ ճանապարհում չէին:

104. Ո՛վ հաւատացեալներ, դուք պատասխանատու էք ձեր հոգիների համար. ձեզ մ' մոլերեցուցիչ չի վնասի, եթէ դուք ուղիղ էք ատջնորդւած: Դուք ամենքդ Աստուծուն պիտի դառնաք, եւ նա ձեզ կը յատյնէ ձեր արածները:

105. Ո՛վ հաւատացեալներ, երբ ձեզանից մէկը մահի մօտ է, թող կտակի ժամանակ ձեզանից երկու արդարամիտ մարդիկ վկայ լինեն. կամ երկու ուրիշ մարդիկ, եթէ ճանապարհորդութեան մէջ էք եւ մահան պատահար ձեզ հասել է: Դուք այն երկուսին արգելքի մէջ դրէ՛ք աղօթքից յետոյ որ Աստուծով երզում անեն, եթէ կասկած ունէք, թէ «մենք սրանում չահապիրութիւն չ'ունենք թէ եւ ազգական էլ լինի, եւ Աստուծոյ վկայութիւնը չենք ծածկի. եթէ ոչ մենք սեղաւորներ կը լինէինք»:

106. Եւ եթէ հաստատուի նրանց դէմ ճշմարտապէս մի յանցանք. այն ժամանակ այն երկուսի տեղ երկու ուրիշը դրուին, որ հաստատեն նրանց դէմ իբրեւ մերձաւորներ եւ Աստուծով երզում անեն թէ «մեր վկայութիւնը այն երկուսի վկայութիւնիցը ճշմարիտ է, եւ մենք անիրաւութիւն չենք անում»: Եթէ ոչ մենք անիրաւուներ կը լինէինք»:

107. Սա էլ աւելի դիւրին կը լինի, որ իրանց վկայութիւնը նրանց ներկայութեանը տան կամ վախենան թէ իրանց երզումիցը յետոյ մի հակառակ երզում կը լինի: Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ լսեցէ՛ք եւ Աստուած չորագործների ազգին չի առաջնորդի:

108. Մէկ օր, որ Աստուած կը փողովէ մարգարէներին

եւ կ'ասեն, «մենք չը գիտենք, գազանիքները գիտացողը դու ես»:

109. Նոյն ժամանակ Աստուած կ'ասէ. «ով Մարիամի որդի Յիսուս, յիշի՛ր իմ քեզ եւ քո ծնողիդ արած շքանորհքը. երբ ես քեզ զօրացրի Սուրբ Հոգով, որ դու խօսես մարդկանց հետ օրօրոցումը եւ իբրև չափահաս»:

110. Եւ երբ ես քեզ սովորեցրի գիրքը եւ իմաստութիւնը ու Օրէնքը եւ Աւետարանը, եւ երբ դու իմ հրամանով ցեխից թռչունի կերպարանք էիր շինում, եւ վշում էիր շունչ նրանց մէջ եւ նրանք իմ հրամանով թռչուն էին դառնում, եւ կոյրին ու բորտին առողջացնում էիր իմ հրամանով, եւ երբ ես ետ պահեցի Իսրայէլի որդիներին քեզանից, երբ դու հրաշքներով նրանց մօտ եկար եւ նրանցից անհաւատներն ասում էին թէ «սա մի ուրիշ բան չէ եթէ ոչ կախարգութիւն»:

111. Եւ երբ առաքեալներին յայանութիւն աւր, թէ հաւատացէ՛ք ինձ եւ իմ մարգարէին, իրանք էլ ասացին, «մենք հաւատում ենք», ուրեմն վկայի՛ր որ մենք անձնատուրներ ենք:

112. Երբ առաքեալներն ասացին, «ով Մարիամի որդի Յիսուս, արգեօ՞ք կարող է քո Տէրը մեզ համար երկնքիցը մի սեղան իջեցնել»։ Նա էլ ասաց, «վախեցէ՛ք Աստուածանից, եթէ հաւատացեալներ էք»:

113. Նրանք էլ ասացին, «ուզում ենք նրանից ուտենք, եւ մեր սրտերը հաստատուեն եւ մենք իմանանք որ դու ճշմարիտ ես, եւ մենք դրա վկաներ լինենք»:

114. Եւ Մարիամի որդի Յիսուսն ալ ասաց, «ով Աստուած՝ մեր Տէր, մեզ համար երկնքիցը մի սեղան իջեցրու՛ւ, որ մեզ համար այսինքն մեր առաջիններէ եւ մեր վերջիններէ համար աօն լինի, եւ քեզանից մի նշան լինի, եւ դու մեզ կերակրի՛ր, որովհետեւ դու կերակրողներից ամենալաւն ես»:

115. Աստուած էլ ասաց, «ես այն կ'իջեցնեմ ձեզ համար, եւ ով որ յետոյ ձեզանից չը հաւատայ, ես

նրան կը պատժեմ մի այնպիսի պատիժով, որ աշխահք-
ներից եւ ոչ մէկին այնպէս պատժած չեմ»:


116. Եւ երբ Աստուած ասաց, «ով Մարիամի որդի
Յիսուս, արդե՞օք դու ես ասել մարդկանց, թէ բաց ի
Աստուածանից ինձ եւ իմ մայրը երկու Աստուած ըն-
դունեցէք»: Նա էլ ասաց, «քաւ լիցի քեզանից, ինձ
չի վայելի մի բան ասեմ, որ ինձ համար ճշմարիտ
չէ. եթէ ես ասած լինէի, դու արդէն կը գիտէիր այն.
դու գիտես թէ իմ սրտումս ինչ կայ եւ ես չը գիտեմ
թէ քո սրտումս ինչ կայ. որովհետեւ դու զազանիք-
ները գիտացողն ես»:

117. «Ես նրանց չեմ ասել բացի քո ինձ հրամայա-
ծիցը, թէ պաշտեցէ՛ք Աստուած՝ իմ Տէրը եւ ձեր Տէրը,
եւ ես քանի որ նրանց մէջն էի, նրանց վկան էի,
բայց երբ դու ինձ մահ կըտաս, դու կը լինես նրանց
վրայ տեսուչ. եւ դու ամեն բանի վկայ ես»:

118. «Եթէ դու նրանց պատժես, ահա նրանք քո
ծառաներն են, իսկ եթէ ներես նրանց, ահա դու հզօր
խմաստուն ես»:

119. Եւ Աստուած ասաց, այն օրը, որ արդարներին
օգուտ կը բերէ իրանց արդարութիւնը, նրանք դրախտ-
ներ կունենան, որոնց տակովը գետեր են հոսում եւ
նրանք յաւիտեան նրանցում կը մնան. Աստուած նը-
րանցից գոհ կը լինի եւ նրանք էլ նրանից գոհ կը
լինեն: Սա մի մեծ փրկութիւն է:

120. Աստուծունն է երկնքների եւ երերի իշխա-
նութիւնը, եւ ինչ որ նրանց մէջը կայ, եւ նա ամե-
նակարող է:



6) Ս Ո Ւ Ր Է Է Ն՝ Ա Մ

Մէքքէական. Հարիւր վաթսուն և հինգ այլ

Գթած, ողորմած Աստուծոյ անունովը

1. Փառքը լինի Աստուծոյն, որ ստեղծել է երկինք-ները և երկիրը և շինել է խաւարները և լոյսը, թէև անհաւատները նրան հաւատար բաներ են դնում:

2. Նա է որ ձեզ ստեղծել է ցելխից, յետոյ որոշել է մի վախճան, և որոշ վախճան կայ նրա մօտ, բայց դուք կասկածում էք:

3. Նա է Աստուած երկնքներում և երկրումս. նա գիտէ ձեր գաղտնի և ձեր յայտնի բաները և գիտէ ձեր վատակածը:

4. Եւ Աստուծոյ նշաններիցը նրանց չէ եկել, որ նրանք մերժած չը լինէին նրան:

5. Նրանք արդէն այն ճշմարտութեանն էլ որ իրենց եկաւ «սուտ է» ասացին. բայց նրանց հաճար կըզայ մի տեղեկութիւն, որը նրանք ծաղրում էին:

6. Մենք չենք տեսնում թէ իրանցից առաջ որքան ազգեր փճացրինք. մենք նրանց երկրիս վրայ տեղեր տւինք որ ձեզ չէին տւել և մենք նրանց վրայ երկինքիցն առատ անձրեւներ տեղացրինք և նրանց տակովը զեանք հոսեցրինք և մենք նրանց կորուստ տւինք իրանց մեղքերի պատճառով և նրանցից յետոյ ուրիշ ազգեր կանգնեցրինք:

7. Եթէ մենք քեզ համար թղթի վրայ գրած մի գիրք իջեցնէինք և նրանք այն շօշափէին իրանց ձեռներովը, այն փամանակ անհաւատներն անպատճառ կառտէին, «սա միմիայն յայտնի խարդախութիւն է»:

8. Եւ նրանք ասում են, «թէ նրա համար մի հրեշ-

տակ իջեցնելի չենք հաւատայ»։ բայց եթէ մի հրեշտակ էլ իջեցնէինք, արդէն բանը վճուած էր․ նրանց համար այլեւս ժամանակ չըկար։

9. Եւ եթէ մենք նրան մի հրեշտակ շինէինք, մենք նրան մարդ կը շինէինք, եւ նրանց կը հագցնէինք ինչ որ իբրանք են հագնում։

10. Բայց նրանք արդէն քեզանից առաջ են ծաղրել մարդարէներին եւ պատուհասը բռնեց նրանցից ծաղրողներին, որ արհամարհում էին նրան։

11. Դու ասա՛, «պտտեցէ՛ք երկրի վրայ եւ տեսէ՛ք թէ ինչպէս է եղել «սուտ է» ասողներին վախճանը»։

12. Դու ասա՛, «որինն է ինչ որ կայ երկնքներումը եւ երկրումս»։ ասա՛, «Աստուծունն է»։ նա ոգորմութիւնը իրան համար որոշել է իբրեւ պարտականութիւն, որ ձեզ ժողովէ յարութեան օրը, որի մասին կասկած չը կայ։ նրանք, որ վնասում են իրանց հոգիներին, նրանք չեն հաւատում։

13. նրանն է ինչ որ բնակվում է գիշերումը եւ ցերեկումը, եւ նա լսող իմացող է։

14. Դու ասա՛, «միթէ Աստուածանից ջոկ ուրիշն էք ընդունում»։ նա է երկինքն ստեղծողը եւ նա է որ կերակրում է ու չէ կերակրվում։ Դու ասա՛, «ես հրաման ունիմ, որ առաջինը լինեմ, որ մուտլիմ է դառնում»։ եւ մի՛ լինիք կուռքեր պաշտողներիցը։

15. Դու ասա՛, «ես վախում եմ մեծ օրւայ պատժիցը, եթէ իմ Տիրոջ դէմ ապստամբեմ»։

16. Ով նրանից հեռացնելի այն օրը, արդէն ողորմել է նրան եւ սա մի մեծ փրկութիւն է։

17. Եթէ Աստուած քեզ մի վնաս հասցնէ, դու մէկ ազատող չես ունենայ բացի նրանից. եւ եթէ քեզ մի քարիք հասցնէ, նա արդէն ամենակարող է։

18. նա իշխանն է իր ծառաների վրայ, եւ նա իմաստուն տեղեակն է։

19. Դու ասա՛, «որ բանն է իբրեւ մեծ վկայութիւն»։ ասա՛, «Աստուած վկայ է իմ եւ ձեր մէջ տեղը,

և. այս Ղուբանը իջեցրուց ինձ համար, որ նրանով ձեզ խրատեմ եւ որին նա կը հասնի»։ Ապա ինչպէս էք վկայում թէ Աստուծոյ հետ միասին ուրիշ Աստուած էլ կայ Գու ասա՛, «ես չեմ վկայում»։ Գու ասա՛, միմիայն նա է մէկ Աստուած, իսկ ես մաքուր եմ նրա հետ ձեր ընդունած ընկերներիցը»։

20. Նրանք, որոնց որ մենք աւել հնք գիրքը, ճանաչում են նրան ինչպէս որ իրանց որդեանցն են ճանաչում. նրանք որ վնասում են իրանց հոգիներին. նրանք են անհաւատները։

21. Եւ ո՛վ է աւելի անիրաւ քան թէ՛ այն, որ Աստուծոյ մասին սուտ է հնարում կամ նրա նշանները համար ստում, թէ «սուտ են», իրաւի անիրաւները երջանիկ չեն լինի։

22. Եւ մի օր մենք նրանց ամենն էլ պիտի հաւաքենք. այն ժամանակ ասելու են Աստուծո՛ւն ընկերներ ընդունողներին, «ո՛ւր են ձեր ընկերները, որ դուք կարծում էիք»։

23. Յետոյ նրանք էլ մի պատասխան չեն ունենայ քայ ի նրանից որ կ'ասեն, «Աստուած վկայ է, ո՛վ մեր Տէրը, որ մենք ընկերներ դնող չէինք»։

24. Տես ի՛նչպէ՞ս սուտ են ասում իրանց դէմ. եւ հեռանում է նրանցից իրանց զրպարտութիւնը։

25. Եւ նրանցից կան ոմանք, որ քեզ լսում են, քայց մենք նրանց սրտերի վրայ խուփ ենք դրել որ նրան չը հասկանան, եւ նրանց ականջների մէջ ծանրութիւն ենք դրել. եւ ել՛է ամեն նշան էլ սեսնեն, նրան չեն հաւատայ, մինչեւ որ քեզ մօտ գան եւ քեզ հետ վիճեն։ Նրանք որ չեն հաւատում, ասում են թէ սա հիների առասպելներն են։

26. Նրանք արգելում են նրանից եւ հեռանում են նրանից, եւ միմիայն իրանց հոգիներն են կորցնում, եւ չեն հասկանում։

27. Եւ եթէ դու տեսնէիր, թէ ինչպէ՞ս են գցում կրակի մէջը, եւ ասում, «ո՛հ, երանի՛ թէ հա դար-

ձընուէինք, մենք մեր Տիրոջ նշաններին «սուտ է» չէինք ասի եւ հաւատացեալներ կը լինէինք»:

28. Իրա՛ւ, կը յայտնուի նրանց համար, ինչ որ ծածկում էին ստաջ, եւ եթէ ես էլ դարձնուէին, կրկին նոյն արգելումը բանին կը վերադառնային, եւ նրանք ստախօսներ կը լինէին:

29. Եւ նրանք ստում են, «միմիայն այս աշխարհիս կեանքն է, եւ մենք յարութիւն անողներ չենք»:

30. Եւ եթէ դու տեսնէիր, որ նրանք տարլում են իրանց Տիրոջ մօտ, ստում է, «մի՞թէ սա ճշմարտութիւնը չէ՝ այո՛, վկայ է մեր Տէրը»: Նա ստում է, «ուրեմն ճաշակեցէ՛ք այն որին չէիք հաւատում»:

31. Հիմայ ինչուած են նրանք, որ Աստուծոյ դիմաւորելն ուրանում են, մինչեւ որ ժամը յանկարծ կը գայ նրանց վրայ. նրանք կասեն, «վա՛յ մեզ մեր զանց արածի համար», եւ նրանք կը կրեն իրանց բեռները իրանց մէջքների վրայ: Տե՛ս վատ է նրանց կրածը:

32. Եւ ի՞նչ է աշխարհիս կեանքը եթէ ոչ խաղ եւ կատակ, իսկ միւս աշխարհը աւելի՞լաւ է երկիւղածներ ի համար: Մի՞թէ չէք հասկանում:

33. Մենք արդէն գիտենք որ տխրեցնում է քեզ նրանց ասածը. բայց նրանք քեզ ստախօս չեն շինի, սակայն անիրաւները հակառակում են Աստուծոյ նշաններին:

34. Բայց քեզանից առաջ եղող մարգարէներին էլ են ստախօս ասել, բայց նրանք դիմացան այն զրբպարտութիւններին եւ նեղեցան, մինչեւ որ եկաւ նրանց համար մեր օգնութիւնը: Եւ Աստուծոյ խօսքերին համար փոխող չը կայ: Մարգարէներէ մասին արդէն տեղեկութիւն ստացել ես:

35. Եւ եթէ նրանց մեղքումը քեզ ծանր թւի, եւ եթէ կարողանաս մի քարայր որոնես երկրի վրայ կամ մի սանդուղք դէպի երկինք, որ նրանց մի նշան ցոյց ասս, — եւ եթէ Աստուած կամենար նրանց կը ժողովէր ուղիղ ճանապարհի վրայ: Ուրեմն տգէտներիցը մ'ի լինի՛ր:

36. Եւ միմիայն լսողներին է պատասխանում. եւ Աստուած մեռելներին յարուցանելու է, եւ յետոյ նրա մօտը կը դառնան:

37. Եւ ասում են, «եթէ իր Տերօջ կողմանէ իրան մի հրաշք չը տրուի, չենք հաւատայ»: ասա՛, «հարկաւ Աստուած կարող է որ հրաշք իջեցնէ»: բայց նըրանցից շատերը չեն հասկանում:

38. Եւ երկրի վրայ մի տնասուն եւ իր թեւերովը թռչող մի թռչուն չկայ, որ ձեզ նման ժողովուրդներ չլիինեն: Գրքումը մենք մի բան զանց չենք արել. յետոյ կը ժողովին իրանց Տիրօջ մօտ:

39. Իսկ նրանք, որ մեր նշաններին ասում են թէ սուտ է, խուլ են, համբ են խաւարնիրը մէջ: Աստուած մոլորեցնում է, որին որ կամենում է, եւ ուզիդ հանապարհով առաջնորդում է, որին որ կամենում է:

40. Դու ասա՛, «ինչ էք կարծում, եթէ, Աստուծոյ պատիժը զայ ձեզ վրայ կամ ժամը ձեզ հասնի, արդեօ՞ք Աստուածանից ջոկ ուրիշին կ'աղօթէք, եթէ հշմարիտ էք»:

41. Ո՛չ, այլ նրան կ'աղօթէք, եւ նա կը հեռացնէ ձեզանից այն բանը որի համար դուք աղօթեցիք նրան, եթէ կամենայ. եւ զուք ձեր ընդունած ընկերներին կը մոռանաք:

42. Մենք արդէն քեզանից առաջ ազգերին մարգարէն եր ենք ուղարկել եւ նրանց պատուհասներով եւ վնասներով պատժել, որպէս զի խոնարհ են:

43. Բայց մեր չարիքները նրանց վրայ եկած ժամանակը չըխոնարհեցին, այլ նրանց սրտերը ամբացան եւ նրանց անելիքը պատրաստեց նրանց համար սատանան:

44. Եւ երբոր մոռացան այն բանը, որ յիշեցրել էին նրանց, մենք նրանց դէմ բայ արեցինք ամեն բանի զընները. մինչև որ, երբ իրանց տրւածովը ուրախանում էին, մենք յանկարծակի ճարգեցինք եւ այն ժամանակ նրանք յուսանաուեցին:

45. Եւ անիրաւ ազգի արմատը կտրուեց. եւ փա՛ռք լինի աշխարհքների Տիրոջը:

46. Դու ասա՛, «ի՞նչ էք կարծում, եթէ Աստուած ձեր լուծիւնը եւ տեսողութիւնը առնէ եւ ձեր սրբտերի վրայ կնիք դնէ, այն ժամանակ ո՞վ է Աստուածանից ջոկ այն աստուածը որ նրանց ձեզ առայ»: Տես ի՛նչպէս են շատացնում նշանները. եւ նրանք դարձեալ ետ են դառնում:

47. Դու ասա՛, «ի՞նչ էք կարծում եթէ Աստուծոյ պատուհասը ձեզ վրայ յանկարծ կամ յայտնապէս գայ, արդեօք բացի անիրաւ ազգիցը մէկը կը կորչի՞»:

48. Եւ մենք մարգարէներ ուղարկեցինք, որ միայն խոստումներ եւ սպառնալիքներ տան. ուրեմն ով որ հաւատայ եւ բարիք գործէ, այդպիսիների համար երկիւղ չկայ եւ նրանք չեն տխրի:

49. Իսկ նրանք որ մեր նշաններին ասում են «սուտ է», նրանց տանջանք կը հասնի իրանց գործած չարութեան համար:

50. Դու ասա՛, «ես ձեզ չեմ ասում թէ Աստուծոյ գանձերն ինձ մօտ են, եւ ոչ էլ գաղտնիքը գիտեմ. եւ ոչ էլ ասում եմ ձեզ թէ ես հրեշտակ եմ. ես հետեւում եմ միայն ինձ յայտնութեամբ արւածին»: Դու ասա՛, «արդեօք կոյրը եւ տեսողը միեւնոյն են»: Բայց ինչո՞ւ չէք մտածում:

51. Հիմայ խրատի՛ր նրանց որ վախենում են թէ իրանց Տիրոջ մօտ պիտի ժողովին. նրանց համար մի պատուան չըկայ նրանից ջոկ, եւ ոչ էլ մի բարեխօս, որպէս զի երկնչեն:

52. Եւ դէն մի՛ անիր նրանց, ատուտ իրիկուն աղօթում են իրանց Տիրոջը նրա երեսին բաղձալով: Նրանց մասին դու ոչ մի բան պատասխանատու չես, եւ նրանք էլ քո մասին մի բան պատասխանատու չեն. բայց եթէ նրանց դէն անես, դու անիրաւներիցը կը լինես:

53. Եւ մենք այսպէս նրանց փորձել ենք մէկը միւ-

սով, որ տսին, «արդեօք Աստուած դէմ է նրանց որ մեր միջիցն են: Մի՞թէ Աստուած չէ ճանաչում երախտագէտներին:

54. Եւ երբ քեզ մօտ են գալիս նրանք, որ մեր նշաններին հաւատում են. ասա՛, «խաղաղութիւնն ձեզ ձեր Տէրը որոշել է իբրեւ իր պարտականութիւն՝ ուղործութիւնը: Արդ եթէ ձեզանից մէկը տղիտութեամբ շար բաներ անէ բայց այնուհետեւ զղջայ եւ բարիք գործէ, այն ժամանակ նա ներող ողորմած է:

55. Եւ մինք այսպէս բացատրեցինք նշանները, որ մեղաւորներին ճանապարհը յայտնի լինի:

56. Դու ասա՛, «ինձ արգիւած է, որ նրանց պաշտեմ, որոնց դուք աղօթք էք անում բացի Աստուածանից»: Ասա՛, «ես ձեր հաճոյքներին չեմ հետեւի. այն ժամանակն արդէն մոլորած կը լինեմ, եւ ես այլեւս ուղիղ առաջնորդւածներիցը չեմ յինի»:

57. Դու ասա՛ «ես վկայութիւն ունիմ իմ Տիրոջ կողմանէ, եւ դուք նրա համար ասում էք «սուտ է» ուր որ ես ունիմ. որ դուք նրա շուտով գալը ուզում էք. բայց իրաւունքը միայն Աստուծունն է, նա կը պատմէ ճշմարտութիւնը եւ նա ամենալաւ լճոողն է»:

58. Դու ասա՛, «եթէ ինձ մօտ լինէր այն բանը որի շուտով գալը դուք պահանջում էք արդէն իմ ու ձեք մէջ եղած բանը լճուած կը լինէր. բայց Աստուած ճանաչում է անիրաւնեքին»:

59. Գաղանիքի բանալիները նրա մօտ են, միայն նա գիտէ, եւ գիտէ ինչ որ կայ ցամաքումը եւ ծովումը. եւ մի տերեւ վար չի ընկնի որ նա չը գիտենայ այն: Եւ չկայ մէկ հատիկ երկրի խաւար տեղերը ոչ մի թաց եւ ոչ էլ մի շոր բան, որ չը լինի նրա յայտնի գրքումը:

60. Նա է, որ գիշերը ձեզ մահացնում է, եւ գիտէ ձեր վատտակը օրւայ մէջ. յետոյ նա ձեզ յարուցանում է նրա մէջ. որ որոշեալ նպատակը կատարւի. յետոյ նրա մօտ կօ դառնաք, յետոյ նա էլ ձեզ կը յայտնէ, թէ դուք ինչ էիք անում:

61. Նա էլ իր ծառաների իշխանն է, եւ սպահապաններ է ուղարկում ձեզ համար, որ երբ մահը ձեզանից մէկին հասնի, մեր ուղարկածները նրան կը մեռցնեն, եւ չեն դանդաղի:

62. Յետոյ իրանց պաշտպան Աստուծուն մօտ կը դասնան: Հիմայ դատաստանը նրանն է, եւ նա սմեանից շուտով հաշիւ տեսնողն է:

63. Դու ասա՛, «ով է ձեզ ազատում ցամաքի եւ ծովի խաւար տեղերիցը, որին դուք աղօթք էք անում խօնարհութիւնով եւ ծածուկ, ասելով «ազատի՞ր մեզ սրանից եւ մենք անշուշտ երախտագէտ կը լինենք»:

64. Դու ասա՛, «Աստուած է ձեզ նրանցից եւ բոլոր փորձանքից ազատում. յետոյ դուք շնորհակալ էք լինում»:

65. Դու ասա՛, «նա կարող է, որ ձեզ վրայ տանջանք ուղարկէ ձեր վերի կողմիցը կամ ձեր ոտներէ տակիցը կամ ձեզ հագցնէ կուսակցութիւններով, որ դուք միմեանց չարքէ հասցնէք»: Տե՛ս ինչպէս ենք մենք նշանները շատացնում, որ գուցէ հասկանան:

66. Բայց քո ազգը նրան սուտ է համարում, թէ եւ նա ճշմարտութիւն է: Դու ասա՛, «ես ձեր պաշտպանը չեմ, ամեն մի լուր ունի իրան սահմանը, դուք շուտով կ'իմանաք»:

67. Եւ երբ կը տեսնես, որ մեր նշանների մասին վիճում են, նրանցից ե՛տ քաշուիր, մինչեւ որ նրանք մի ուրիշ խօսք կը բանան. բայց եթէ սատանան այս բանը քեզ մոռացնէ, այլեւս մի՛ նստիր անիրաււների խումբի հետը, երբ քեզ յիշեցրել են:

68. Երկիւղածների դէմ ոչ մի պատասխանատուութիւն չը կայ այս մասին. միայն յիշեն որ երկիւղած լինեն:

69. Եւ ձգիր նրանց որ իրանց կրօնքը խաղ ու կուտակ են շինում, եւ որոնց այս աշխարհքը յափշտակում է, բայց յիշեցրո՛ւ դրանով, որ եթէ մի անձ իր արարքովը ինքը զինքը վտանգի մէջ գցէ, նրա համար Աստուածանից ջոկ պաշտպան եւ բարեխօս չըկայ եւ

եթէ ամեն փրկանք էլ վճ. բերու լինի, նրանից չի ըն-
դունուի: Նրանք իրանք են իրանց վառնդի մէջ գցում
իրանց արարքովը: Նրանց համար եռացող խմելիք եւ
ցաւալի տանջանք կայ իրանց անհաւատութեանը
համար:

70. Դու ասա՛, «արդե՞օք Աստուածանից ջուկ մի ու-
քիչի աղօթենք, որ մեզ ոչ օգուտ եւ ոչ վնաս կը տայ-
եւ Աստուած մեզ առաջնորդելուց յետոյ ե՞տ դպոնանք
դէպի մեր ետեւը այն մարդու պէս, որին ստտանա-
ները հրապուրում են, որ երկրի վրայ դարտակ ման-
դայ, որ ընկերներ ունի, որոնք նրան կանչում են
դէպի ուղիղ ճանապարհը, թէ «մեզ մօտ ե՛կ»: Դու
ասա՛, «իրա՛ի Աստուծոյ առաջնորդութիւնն է առաջ-
նորդութիւն, եւ մենք պատէր ենք ասել, որ միւ-
սիլմներ դառնանք աշխարհներէ Տիրոջը»:

71. Եւ որ աղօթքը կատարէ՛ք եւ երկիւղած լինէք
նա այն է, որ դուք նրա մօտը պիտի ժողովւիք:

72. Նա է երկիրն քնեքն ու երկիրս ստեղծել ճշմար-
տութեամբ. եւ մի օր ասում է «եղի՛ր» եւ լինում է:

73. Նրա խօսքը ճշմտբիտ է, եւ նրանն է իշխա-
նութիւնը այն օրը որ փողը կը փչւի, գաղանիքներ եւ
յայտնի բաներ գիտացողը, եւ նա է իմաստուն տեղեակը:

74. Եւ երբ Արքայն ասաց իր հօրը՝ Ազարին,
«դու կուսքի՞րն Աստուած ես ընդունում. ես տեսում
եմ, որ դու եւ քո ազգը յայտնի մոլորութեան մէջ էք»:

75. Եւ այսպէս մենք ջոյց տեսցինք Արքայն ևր-
կընքի եւ երկրի արքայութիւնը, որ ամբաշաւատնե-
րիցը լինի:

76. Բայց երբ գիշերայ մութը նրան ծածկեց, նա
մի ասող տեսաւ եւ ասաց, «սա իմ Տէրն է» բայց երբ
մար մտաւ, ասաց, ես «մար մտնողները չեմ սիրում»:

77. Եւ երբ լուսինը տեսաւ, որ ծագեց, ասաց, «սա
իմ Տէրն է». բայց երբ մար մտաւ ասաց, «եթէ իմ
Տէրն ինձ չ'առաջնորդէ, ես մոլորւած ժողովրդիցը
կը լինեմ»:

78. Բայց երբ արեգակը տեսաւ որ լագեց, ասաց, «սա է իմ Տէրը. սա աւելի մեծ է», բայց երբ նա էլ մարմտաւ, ասաց, «ով իմ ազգ, ես ձեր ընդունած աստուածընկերներիցն ազատ եմ»:

79. «Ես իմ երեսն ուղղում եմ բարեպաշտօրէն դէպի նրան, որ ստեղծել է երկինքները եւ երկիրը, եւ ես աստուածընկերներ ընդունողներէցը չեմ»:

80. «Եւ նրա ազգը՝ վիճեցին նրա հետ: Նա էլ ասաց, «Աստուծոյ մասիօն էք ինձ հետ վիճում. նա արդէն առաջնորդել է ինձ եւ ես ձեր ընդունած աստուածընկերներէցը չեմ վախում, բացի նրանից. որ իմ Տէրը մի բան կամենայ իմ Տէրն ամեկակարող է դիտութեամբ միթէ չէք խորհում»:

81. Եւ ես ինչպէս վախենամ ձեր ընդունած աստուածընկերներէց, քանի որ դուք չէք վախենում Աստուծուն ընկերներ գնելուց. որի մասին ձեզ համար պատէր չէ ի՛նչեցրած: Հիմայ գիտե՞ք, թէ այդ երկու բաժանմունքներէց որն է ճշմարիտը:

82. Նրանք որ հաւատացել են եւ իրանց հաւատքը անիրաւութեան հետ չեն խառնում, նրանք ապահովութիւն ունեն: Եւ նրանք ուղիղ առաջնորդած են:

83. Սա մեր փաստերն են, որ տեցինք Արրահամին իբ ազգին դէմ: Մենք բարձրացնում ենք որի աստիճաններն որ ուզում են. որովհետեւ քո Տէրը իմ աստուն գիտուն է:

84. Եւ մենք նրան տեցինք Իսահակը եւ Յակոբը. ամենքն էլ առաջնորդեցինք. եւ առաջուց ալ առաջնորդեցինք Նոյին եւ նրա սերունդիցը Դաւիթին եւ Սողոմոնին եւ Յակոբին եւ Յովսէփին եւ Մովսէսին. եւ Ահարոնին եւ այսպէս վարձատրու մ ենք բարեգործներին:

85. Եւ Չաքարիային եւ Յովհաննէսին եւ Յիսուսին եւ Եղիային. ամեն մէկը արդարեւերիցն է:

86. Եւ Իսմայէլին եւ Եղիսէին եւ Յովնանին եւ Ղափթին եւ ամեն մէկին գերագանց արեցինք ախարհքներէց վեր:

87. Եւ նրանց հայրերիցը եւ նրանց սիրունդնիբիցը եւ եղբայրներիցը, եւ մենք սիրեցի՛նք եւ նրանց առաջնորդեցի՛նք դէպի ուղիղ ճանապարհ։

88. Աս Աստուծոյ առաջնորդութիւնն է, Աստուած նրանով առաջնորդում է իր ծառաներից որին կամենում է․ եւ եթէ նրանք կուռքեր պաշտէին, կ'ոչնչանար նրանց համար այն որ գործել են։

89. Սրանք են, որոնց մենք աւել ենք գիրքը եւ իմաստութիւնը եւ մարգարէութիւնը․ արդ եթէ սրանք նրան չը հաւատան, մենք արդէն գրանով մի մողովութիւնը ենք որոշել, որ նրանք այդ մասին անհաւատ չեն լինի։

90. Սրանց առաջնորդել է Աստուած, ուրեմն դու հետեւիր նրանց առաջնորդութեանը։ Գու առա՛, «ես ձեզանից սրա համար մի վարձք չեմ պահանջում։ Նա միայն մի խրատ է բոլոր աշխարհքի համար»։

91. Եւ նրանք Աստուծոյ արժէքը ըստ արժանոյն չըզիտեն, քանի որ ասում են թէ Աստուած ոչ մի մարդու ոչինչ չէ յայտնել»։ Ասա՛, «ո՞վ է իջեցրել այն գիրքը որ Մովսէսը բերաւ իբրեւ լոյս եւ առաջնորդութիւն մարդկանց համար, որ դուք պիտի էք մազազաթի վրայ, որ յայտնի էք անում, բայց շատը ծածկում, եւ սովորեցիք այն բաները որ չըզիտէիք ոչ դուք եւ ոչ ձեր հայրերը»։ Ասա՛, Աստուած․ յետոյ թող տուր իրանց զրոյցներովը խաղան։

92. Եւ այս գիրքը, որ մենք իջեցրինք, օրհնւած է, հաստատում է իրանից առաջինը․ եւ դու պէտք է իրատես մայրաքաղաքին եւ նրա շուրջը զանադնիբին, եւ միւս աշխարհին հաւատացողները նրան հաւատում եւ իրանց աղօթքները կարգին կատարում են։

93. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա որ Աստուծոյ վրայ սուտեր է հնարում կամ ասում, «ինձ յայտնութիւն է եղել», քանի որ նրան մի բան յայտնութիւն եղած չէ, եւ քան թէ նա որ ասում է ձեռ յայտնութիւն կ'իջեցնեմ Աստուծոյ իջեցրածին

պէս»։ Եւ երբ տեսնես անիրաւունքին մահւան տազնապահերի մէջ եւ հրեշտակները ձեռքերը մեկնած, ասելով, «դուքս հանեցէ՛ք այսօր ձեր հոգիները. դուք պատժուելու էք խայտառակապէս, որովհետեւ Աստուծոյ դէմ բաներ էիք խօսում, որ ճշմարիտ չէր եւ նրա նշանների դէմ հպարտացած էիք»։

94. «Եւ հիմայ մեզ մօտ էք դալիս մինակ մինակ, ինչպէս մենք ձեզ ստեղծեցինք առաջին անգամը, եւ դուք ձեր հետեին էք թողել, ինչ որ մենք ձեզ տեղ էինք. եւ մենք չենք տեսնում ձեր բարեխօսներին ձեր հետը, որոնց համար կարծում էիք թէ աստուածը կերներն են ձեզ համար։ Հիմա դուք բաժանուած էք իրարէնց. եւ հեռացել են ձեզանից ձեր երեւակայածները»։

95. Ինչպէս որ բուսեցնում է հացահատիկը եւ արմաւի կորիզը, որ հանում է կենդանին մեռելիցը եւ հանում է մեռելը կենդանուցը։ Սա է ձեր Աստուածը, ապա դուք ի՞նչպէս էք մերժում։

96. Նա ծագեցնում է առաւօտը եւ գիշերը հանգրտութիւն չինում, եւ արեգակն ու լուսինը իրանց կարգովը։ Սա հզօր իմաստունի որոշածն է։

97. Նա է որ աստղերը ձեզ համար շինել է, որ ցամաքի եւ ծովի խաւարներումը նրանցով առաջնորդւիք։ Ահա այս նշանները պատրաստել ենք հասկացող ազգի համար։

98. Եւ նա է, որ ձեզ մինակ մին հոգուց յառաջ բերաւ, մի հաստա տեղ եւ հանգստութեան տեղ. մենք արդէն որոշեցինք նշանները մտածող ժողովրդի համար։

99. Եւ նա է որ երկնքիցը ջուր է իջեցնում, եւ մենք նրանով հաւանում ենք ամեն տեսակ բոյս եւ հանում ենք նրանից կանաչեղէն, հանում ենք նրանից կարգով շարուած հացահատիկներ եւ արմաւենու ճիւղերիցը լիւլի արմաւի ճիթեր եւ խաղողի ու ձիթենու եւ ռուսի այգիների միմեանց նմանող եւ չը նմանող։ Մտիկ աւէք նրանց պատուներին, երբ նրանք բուս-

նում եւ հասնում են. որովհետեւ սրանց մէջ նշաններ կան հաւատացող ժողովրդի համար:

100. Բայց նրանք դեւերին Աստուծոյ ընկերներ են շինել. որ նա է նրանց ստեղծել, եւ առանց հասկանալու նրան որդիներ եւ աղջիկներ են յարմարացրել: Քա՛ւ լիցի. Աստուած մաքուր եւ բարձր է այն բանից, որ յատկացնում են նրան:

101. Երկնքի եւ երկրի ստեղծողը—նա ի՞նչպէս զաւակ կ'ունենայ, եւ նա կ'նրիկ չ'ունի, եւ ստեղծել է ամեն բանը, եւ նա ամենագէտ է:

102. Մա է ձեր Աստուածը՝ ձեր Տէրը. նրանից ջոկ ուրիշ Աստուած չը կայ. ամեն բանի արարիչն է: Ուրեմն նրան պաշտեցէ՛ք. եւ նա է ամեն բանի ինամատարը:

103. Ոչ մի աչք կա՞ող չէ նրան ըմբռնել, բայց նա ըմբռնում է բոլոր աչքերը. նա նուրբ է եւ տեղեակ:

104. Արդէն ձեզ համար ձեր Տիրոջ կողմանէ տեսողութիւններ են եկել: Արդ ով տեսնում է, իրան օգտի համար է. եւ ով կոյր է. իրան է վիստում. եւ ես ձեզ վրայ պահապան չեմ:

105. Այսպէս մենք շատացրինք նշանները. թէ եւ ասեն էլ «դու խորագիտութիւն ես խօսում», բայց յայտնի խօսքեր են հասկացող ժողովրդի համար:

106. Դու քո Տիրոջ կողմանէ քեզ յայանութիւն եղածին հետեւի՛ր. նրանից ջոկ Աստուած չը կայ. եւ կռապաշտներիցը հեռացի՛ր:

107. Եւ եթէ Աստուած կամենար, նրանք կռապաշտութիւն չէին անի. եւ մենք քեզ նրանց վրայ պահապան չենք շինել, եւ դու նրանց պաշտպանը չես:

108. Եւ մի՛ հայհոյէք նրանց, որ Աստուածանից ջոկ ուրիշ բաների են աղօթք անում, այն ժամանակ նրանք էլ թշնամութեամբ Աստուծուն կը հայհոյեն աղիտաբար: Այսպէս մենք պատրաստել ենք ամեն մի ազգի համար նրա գործերը. յետոյ նրանք ետ կը դառ-

նան իրանց Տիրոջը մօտ, եւ նա նրանց կ'իմացնէ թէ ինչ են գործել:

109. Եւ նրանք խիստ երդումով երդում արեցին, որ եթէ մէկ հրաշք զայ նրանց համար, նրանք անպատճառ կը հաւատան: Ասա՛, «հրաշքները միմիայն Աստուծոյ մօտն են: Եւ ի՞նչը ձեզ հակացրեց, որ եթէ նա գայ, նրանք չեն հաւատայ:

110. Եւ մենք զարձրել ենք նրանց սրտերն ու աչքերը, ինչպէս որ չը հաւատացին անպարտ, եւ մենք նրանց թող տւեցինք, որ իրանց մոլորութեան մէջ տատանուեն:

111. Եւ եթէ մենք նրանց համար հըշտակներին իջեցնէինք, եւ մեռելները նրանց հետ խօսէին եւ ասալուց կղած ամեն բաներին յարութիւն տայինք նրանց անպարտ, նրանք չէին հաւատայ բացի Աստուծոյ ուղածներէրէցը: Սակայն նրանցից շատերը տգէտ են:

112. Եւ այսպէս մենք ամեն մի մարդարէի համար մի թշնամի ենք շինել՝ մարդկանց եւ դուերի սօտանւաները, որոնք մէկզմէկի համար ճոռոմարան ամբարտաւան խօսքեր են հնարում: Եւ եթէ կամենար քո Տէրը նրանք չէին անի. ուրեմն թո՛ղ տուր նրանց եւ նրանց հնարածները:

113. Հանդերձեալին չը հաւատացողների սրտերը գէպի գրանց կը թեքուեն եւ նրանց կը հաւանեն, եւ կը վայելեն ինչ որ նրանք են վայելում:

114. Մի՞թէ ես բացի Աստուածանից մի ուրիշ գատաւոր կ'ուզեմ: Նա է որ ձեզ համար իջեցրել է բացատրող գիրքը. եւ նրանք որոնց մենք տւել ենք գիրքը, գիտեն որ քո Տիրոջ կողմանէ է իջած ճշմարտութեամբ: Ուրեմն կ'սակաճողներէրէցը մի՛ լինիր:

115. Եւ կատարեալ է քո Տիրոջ խօսքը ճշմարտութեամբ եւ արդարութեամբ, նրա խօսքերի համար փոփոխիչ չըկայ. եւ նա լսող գիտացող է:

116. Եւ եթէ դու երկրի վրայ կողոններէց շատերին հնազանգես, նրանք քեզ կը մոլորեցնեն Աստուծոյ ճանապարհիցը. նրանք միմիայն կարծիքի են հետեւում, եւ միմիայն ստախօսներ են:

117. Իրաւի՛, քո՞ Տէրը գիտէ թէ՛ սվ է մոլորած նրա ճանապարհիցը, և նա գիտէ ուղիղ առաջնորդուողներին:

118. Ուրեմն կերէ՛ք այն բանը որի վրայ յիշած է Աստուծոյ անունը, եթէ նրա նշաններին հաստում էք:

119. Եւ ինչու՞ համար չ'ուտէք այն բանը, որի վրայ յիշած է Աստուծոյ անունը: Նա արդէն բացատրել է ձեզ, թէ ինչ է ձեր արգիլւած իբրեւ պիղծ, բացի նրանից երբ ստիպւած էք: Եւ ահա շատերը մոլորեցնում են ազխտաբար իրանց կիրքերով: Սակայն քո՞ Տէրը ճանաչում է պատերանազանցներին:

120. Եւ ձգեցէ՛ք մեղքի դուրսը և ներսը, որովհետեւ նրանք որ մեղանչում են, իրանց վայելածի համար անշուշտ պիտի պատժւեն:

121. Եւ մի՛ ուտէք այն բանը, որի վրայ Աստուծոյ անունը չէ յիշւած. որովհետեւ դա զազիր գործ է: Բայց ահա սատանաները ներշնչելու են իրանց բարեկամներին որ ձեզ հետ վիճեն, և եթէ դուք նրանց հնազանդէք, այն ժամանակ դուք կապաշտ էք:

122. Եւ մի՞ թէ նա որ մեռած էր և մենք նրան կենդանացրինք և նրա համար մի լոյս շինեցինք, որ մարդկանց մէջ ման գայ, նման է նրան, որ խաւարների մէջ է եւ կարող չէ դուրս գալ նրանցից: Այսպէս պատրաստւած են անհաւատների համար նրանց անելիքները:

123. Եւ այսպէս մենք ամեն քաղաքում մեծամեծ չարագործներ ենք շինել, որ նրանցում խարդախութիւններ գործեն. բայց նրանք միայն իրանց անձի դէմ են խարդախութիւններ գործում, և չեն հառկանում:

124. Եւ երբ նրանց համար նշան եկաւ, նրանք ասացին «մենք բնաւ չենք հաւատայ մինչեւ որ մեզ չը արւի այն որ արոււմ էր Աստուծոյ մարգարէներին»: Աստուած գիտէ թէ ուր պիտի ցոյց տայ իր մարգարէքը: Յանցանք գործողներին նաաստութիւն է հանգիպելու Աստուծոյ կողմանէ, նաեւ խիստ աանջանք

իրանց գործած խարդախութիւնների համար:

125. Ուրեմն, որին Աստուած առաջնորդել է կամե-
նում, բանում է նրա սիրտը դէպի Իսլամը, իսկ որին
որ ժողորեցնել է կամենում, նրա սիրտը խիստ ու նեղ
է լինում, որ կարծես թէ վեր է հլինում երկրիքը: Աստ-
ուած այսպիսի զգւանք է գնում չը հաւատացողների
վրայ:

126. Եւ սա է քու Տիրոջ ուղիղ ձանապարհը: Մենք
արդէն բացատրել ենք նշանները հասկացող ժողովրդին:

127. Նրանք խաղաղութեան տեղ ունեն իրանց Տի-
րոջ մօտ. եւ նրանց պաշտպանը նա է իրանց գործերի
համար:

128. Եւ այն օրը, որ նրանց բոլորն էլ ժողովելու
է, « ո՛վ դուերի ցեղ, դուք արդէն շատացել էք քան
թէ մարդը»: Այն ժամանակ նրանց բարեկամները որ
մարդկանցից են, ասելու են. «ով մեր Տէր, մենք
միմեանցից օգուտ ենք քաղել, բայց մեզ հասաւ այն
վախճանը, որ դու որոշել էիր մեզ համար»: Նա էլ
կ'ասի «կրակն է ձեր բնակարանը, միշտ նրանում կը
մնաք բացի նրանից որ Աստուած կամենայ. որովհետեւ
քո Տէրը իմաստուն գիտուն է:»

129. Եւ այսպէս անիրաւուններից մի քանիսը միւսներից
վեր ենք դասելու այն իրանց գործածներին համար:

130 Ո՛վ դուերի եւ մարդկանց ցեղ, ձեր միջիցը ձեզ
համար մարգարէներ չ'եկան որ պատմում էին ձեզ իմ
նշանները եւ սպասում էին ձեզ, թէ այս օրւան պի-
տի հանդիպէք,» նրանք կ'ասեն, «մենք մեզ դէմ ենք
վկայում»: Եւ այս աշխարհի կեանքը նրանց խաբել էր,
եւ նրանք վկայեցին իրանց դէմ, թէ անհաւատներ
էին:

131. Սա է, որ քո Տէրը անիրաւութեամբ մի քա-
ղաք չի ջնջի, թէ եւ նրա ժողովուրդը անհոգ էլ լինի:

132. Եւ ամեն մէկի համար աստիճաններ կան

իրանց գործերի համեմատ: Եւ քո Տէրը անգէտ չէ նրանց արածի մասին:

133. Եւ քո Տէրը հաբուստ է, ողորմած է. եթէ ուզէ, ձեզ կ'ոչնչացնէ եւ ձեզանից յետոյ իր ուզածը ձեր տեղը կը բերէ, ինչպէս ձեզ է առաջ բերել ուրիշ ազգի սերունդից:

134. Ահա՛ այն, որ ձեզ կ'սնխաւ ասւած է, գալիս է, եւ դուք նրան չէք կարող նւսձեղի:

135. Ասա՛. «ո՛վ իմ ժողովուրդ, գործեցէ՛ք ձեր կարողութեան չափ, ես էլ եմ գործում. դուք շուտով կը հասկանաք,

136. Թէ՛ միւս աշխարհքը որինը կը լինի: Հարկաւանիրաւները երջանիկ չեն լինի:

137. Եւ նրանք Աստուծոյ համար որոշել էին արտի քերքիցը եւ անասուններից մի բաժին, եւ ասել էին իրանց գաղափարով, «սա Աստուծուն է եւ սա էլ մեր աստուածը՝ նկերներինը. բայց ինչ էր նրանց աստուածը՝ նկերներինն էր՝ նա չը հասաւ Աստուծուն, եւ նա որ Աստուծուն էր՝ նա հասաւ նրանց աստուածը՝ նկերներին: Վատ բան էր նրանց որոշածը:

138. Եւ՛ այսպէս որոշել են նրանց աստուածը՝ նկերները կռապաշտներից շատերի համար, որ սպանեն իրանց մանուկներին, որ նրանց ոչնչացնեն ու փճացնեն նրանց կրօնքը: Բայց եթէ Աստուած կամեցած լինէր, չ'էին անի: Ուրեմն թո՛ղ տուր նրանց. եւ ինչ զրպարտութիւն որ անում են:

139. Եւ իրանք ասում են կարծիքով, «այս անասունները եւ բերքը մատաղ են. ոչ ով չը ճաշակէ նրանից բացի նրանից, որ մենք կ'ուզենք»: Բայց կան անասուններ, որոնց մէջքին բեռ դնելն արգելւած է, ու անասուններ որոնց վրայ Աստուծոյ անունը չի յիշուի: Զրպարտութիւններ են նրա դէմ: Նա կը պատժէ նրանց իրանց զրպարտելուն համար:

140. Եւ ասում են, «այս անասունների որովայնում եղածը կը պատկանի մեր արուններին, իսկ մեր կանանց համար պիղծ է. բայց եթէ մեռած վիժէ, նրանք

ճասնակիցներ են, նա նրանց պատժելու է իրանց սահմանած ի համար, որովհետեւ իմաստուն գիտուն է:

141. Արդէն շնաւած են նրանք, որ իրանց մանուկներին յիմարարար առանց հակացողութեան սպանել են. եւ որ Աստուծոյ պարգեւածը արգիլւած են հրատարակել Աստուծուն դէմ զրպարտութիւններ խօսելով. նրանք արդէն մոլորւած են, եւ առաջնորդւածներ չեն:

142. Եւ նա է, որ մշակւած եւ չը մշակւած այգիներ է շինել եւ արմաւենին, եւ տեսակ տեսակ ուտելու ցանքսերը եւ ձիթենին եւ նուոր իրար նման եւ ոչ իրար նման: Կերէ՛ք զրա պողիցը, երբ պտուղ կը տայ, եւ հունձքի օրը առէ՛ք ինչ որ նրա հարկն է, եւ չըռայլութիւն մի՛ անէք, որովհետեւ նա շոայլներին չի սիրի:

143. Եւ անասուններիցը կան, որ բռնակիր են եւ կան մորթւելու: Կերէ՛ք ինչ որ Աստուած ձեզ պարգեւել է, եւ սատանայի հետքերին մի՛ հետեւէք, որովհետեւ նա ձեր յայտնի թշնամին է:

144. Ութը գոյգ՝ ոչխարիցը երկու երկու եւ այծերիցը երկու երկու: Ասա՛, «արդեօ՞ք նա երկու արուններին է իբր պիղծ արգիլել կամ երկու էգերին, կամ թէ այն երկու էգերի արգանդներում եղածներին: Ինձ գիտնականապէս լուր տէ՛ք եթէ ճշմարիտ էք:

145. Եւ ուղտիցը երկու երկու եւ արջառներիցը երկու երկու: Ասա՛, «արդեօ՞ք նա երկու արուններն է իբր պիղծ արգիլել կամ երկու էգերին, կամ թէ այն երկու էգերի արգանդներում եղածներին: Կամ զուք ներկա՞յ էիք, երբ Աստուած սա ձեզ հրամայեց: Ասկայն ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա որ Աստուծոյ դէմ սուտեր է հնարում. որ մարդկանցը գիտութեամբ մոլորեցնէ: Որովհետեւ Աստուած անիրաւ մարդկանցը չի առաջնորդի»:

146. Ասա՛, «ինձ յայտնութեամբ յայտնւածի մէջ ես ուտելու համար մի ուտելիք արգիլւած չեմ գտնում

բացի նրանից որ սատկած է, կամ արիւնը թափւած, կամ խողի միտք, որ պիղծ է, կամ այն վտար որ Աստուծոյ անուշովը չէ մտրթւել: Բայց ով որ սուանց աստամբ կամ յամառ լինելու ստիպւած լինի — ահա քո Տէրը ներող ողորմած է:

147. Եւ մենք արգիլել ենք հրէաներին իբրև պիղծ ամեն կճղակաւորները եւ արջառնեքից ու ոչխարներից պիղծ ենք հրատարակել նրանց համար՝ նրանց ճարպը իրաց առնելով ինչ որ կրում են իրենց մէջքին վրայ կամ իրանց աղիքներումը կամ ինչ որ խառնւած է ոսկորի հետ: Սրանով մենք պատժեցինք նրանց իրանց անհնազանդութեան համար: Բայց մենք արգար ենք:

148. Եւ եթէ նրանք քեզ ստախօս համարեն, դու առա՛ «ձեր Տէրը ողորմած է: հարուստ է, եւ նա ի՞նչ սրբամտութիւնը ետ չի քաշի յանցաւոր մարդկանցից:

149. Աստուածը նկերները ընդունողները կ'ասեն, «եթէ Աստուած կամենար մենք ընկերներ չէինք ընդունի եւ ոչ էլ մեր հայրերը. եւ ոչ մի բան էլ պիղծ չէինք համարի»: Սակայն այսպէս էլ ստախօս համարեցին նրանցից առաջ եղողներին մինչեւ որ ճաշակեցին մեր չարիքը: Ասա՛ «դուք արդեօ՞ք գիտութիւն ունիք, ուրեմն դուրս բերէք մեզ համար. բայց դուք սոսկ կարծիքի էք հեռուում. եւ դուք միմիայն ստախօսներ էք»:

150. Ասա՛, «ամենագօրեղ փաստը Աստուած ունի. եթէ նա կամենայ, ձեզ ամենիդ էլ կտաջնորդէր անպատճառ»:

151. Դու առա՛, «ա՛ղէ, բերէք ձեր վկաները, որ ներկայ են եղել, երբ Աստուած արգիլել է սա»: Եւ եթէ նրանք վկայեն էլ, դու նրանց հետ չըվկայես, եւ նաեւ նրանց հաճոյքներին, որ մեր նշանների համար ասում են «սուտ է», չըհետեւես, եւ նաեւ նրանց որ հանդերձեալին չեն հաւատում եւ իրանց Տիրոջը նմաններ են ընդունում:

152. Դու առա՛, «եկէք եւ ձեզ համար կարգամ, թէ Աստուած ձեզ ինչ է արգիլում, այսինքն որ նրան ոչ-

Ֆինչ ընկերներ չըզնէք եւ ծնողացը բարիք անէք, եւ ձեր մանուկներին չ'սպանէք՝ ազքատութիւնից վախե- նալով. մենք ձեզ եւ նրանց կը կերակրենք. եւ յայտ- նի եւ ծածուկ զազբագործութիւնների էլ մի' մօտե- նաք եւ ինքնասպանութիւն մի' անէք, որ Աստուած արգիլել է բացի նրանից որ իրաւունքով լինի: Սա ձեզ պատիրու է նա որպէս զի խելամուտ լինէք»:

153. Եւ մի' մօտենաք որբերի ստացւածքին բայց միայն ազնիւ կերպով, մինչեւ որ չափահաս դառնան, եւ վճարեցէ՛ք չափը եւ կշռւածքը ճշդութեամբ — մենք մարդուն չենք պարտաւորի նրա կարողութիւնից վեր — եւ երբ որ մի խօսք էք տալիս, կատարեցէ՛ք, թէեւ ազգականի դէմ լինի, եւ Աստուծոյ ուխտը պանեցէ՛ք: Սա պատիրում է ձեզ, որպէս զի յիշէք:

154. Եւ սա խմ ողիղ ճանապարհն է. ուրեմն նրան հետեւեցէ՛ք. եւ ուրիշ ճանապարհների մի' հետեւիք, որովհետեւ դուք բաժին բաժին կը լինէք նրա ճանա- պարհիցը: Նա սա է ձեզ պատիրում, որպէս զի եթ- կիւղած լինէք:

155. Յետոյ մենք Մովսէսին տեսցինք գիրքը բոլորո- վին բարի բաների համար: եւ իբրեւ բացատրութիւն ամեն բանի, եւ իբրեւ առաջնորդութիւն եւ ողորմու- թիւն, որպէս զի հաւատան, որ իրանց Տիրոջը պիտի հանդիպեն:

156. Եւ այս գիրքը, որ իջեցրել ենք, օրհնւած է, ուրեմն հետեւեցէ՛ք նրան եւ երկիւղած եղէ՛ք, որ ո- զորմութիւն գտնէք:

157. Որ չ'ասէք, մեզանից առաջ միմիայն երկու ազգի է գիրք իջեցրւել եւ մենք անկարող էինք նրանց հասկանալու»:

158. Կամ չ'ասէք, «եթէ գիրքը մեզ համար իջեցրու- ւած լինէր, մենք նրանցից աւելի ուղիղ առաջնորդ- ւած կը լինէինք»: Սակայն ձեր Տիրոջ կողմանէ ձեզ համար յայտնութիւն եւ առաջնորդութիւն եւ սղոթ- մածութիւն է եկել: Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ

նա, որ Աստուծոյ նշանների համար ասում է «սուտ է» եւ նրանից ետ քաշվում: Մենք պատժելու ենք նրանց շարաչար պատիժով, որ մեր նշաններիցը ետ են քաշւում:

159. Արդեօք դրանք մի ուրիշ բան են սպասում քան թէ այն, որ հրեշտակն է նրանց մօտը գալու, կամ քո Տէրն է գալու, կամ քո Տիրոջ մի քանի նշաններն են գալու: Այն օրը որ քո Տիրոջ մի քանի նշանները կրգան, մի մարդու նրա հաւատքը օգուտ չի տայ, որ առաջուց չէր հաւատում, կամ իր հաւատքի մէջ բարիք չէ գործել: Դու ասա՛, «սպասում էք մենք էլ ենք սպասում»:

160. Ահա՛ նրանք, որ իրանց կրօնքը բաժանում են եւ իրանք հերձւածողք դառնում, դու նրանց հետ ոչ ինչ բան չունես: Նրանց բանը Աստուծուն է յանձնւած. նա յետոյ յայտննելու է նրանց, թէ ինչ էին ասում:


161. Ով որ բարեգործութեամբ եկաւ, նա տասնապատիկը կունենայ. բայց ով որ չարագործութեամբ եկաւ, նա միայն նրա պէս կը պատժւի. նրանց անիրաւութիւնն չի լինի:

162. Դու ասա՛, «ահա իմ Տէրն ինձ առաջնորդել է դէպի ուղիղ ճանապարհը հաստատ կրօնքով Աբրահամի բարեպաշտ ազգի նման. որ Աստուծուն ընկեր դնողներէցը չէր»:

163. Դու ասա՛, «իմ աղօթքը եւ իմ ծէսերը եւ իմ կեանքն ու իմ մահը աշխարհների Տիրոջ Աստուծունն է. եւ ես միւսլիմների անդրանիկն եմ»:

164. Դու ասա՛, «մի՞թէ բացի Աստուածանից ես մի ուրիշ Տէր կը պահանջեմ»: Եւ նա է ամեն բանի Տէրը, եւ մի հոգի մի վատ բան չի անի, որ իրան դէմ չի լինի. եւ ոչ մի հոգի ուրիշի կրելու քնոր չի վերցնի: Յետոյ ձեր Տիրոջ մօտ էք դառնալու, եւ նա ձեզ կը յայտնէ այն բաները, որոնց մասին իրար դէմ վիճում էիք:

165. Եւ նա է, որ ձեզ երկրի յաջորդներ է արել եւ ձեզանից մի քանիսին՝ միւսների վրայ բարձրացրել է աստիճան աստիճան, որ ձեզ փորձէ այն բանով, որ ձեզ տեւ է: Որովհետեւ քո Տէրը շուտ պատժող է եւ ներող ողորմած էլ է:



7) Ս Ո Ւ Ր Է Է Լ Ա՛ Ր Ա Յ

Մէքքէական. Երկու հարիւր հինգ այէ

Գթած, ողորմած Աստուծոյ անունովը

1. Ա. Լ. Մ. Ս. Մէկ գիրք է, որ քեզ համար իջեցրուեց: Քո սրտումը նրա մասին տազնապ չի լինի, որ նրանով խրատես, եւ նա յիշիչ է հաւատացեալներէ համար:

2. Դուք հետեւեցէ՛ք այն բանին, որ ձեզ համար իջեցրել է մեր Տիրոջ կողմանէ: Եւ նրանից բաց ուրիշ պաշտպանների մի՛ հետեւէք: Քիչերն են որ մտածում են:

3. Եւ մենք քանի՛ քանի՛ քաղաքներ ենք ոչնչացրել, որոնց վրայ մեր պատուհասը եկաւ, երբ նրանք գիշերում էին կամ կէսօրին հանգստանում էին:

4. Եւ երբ մեր պատուհասը նրանց վրայ եկաւ, նրանց ազաղակը միմիայն սա էր թէ «մենք անիրաւունք էինք»:

5. Մենք հարցուփորձ ենք անելու նրանցից, որոնց համար մաքար է ներ են ուղարկել, ու հարցուփորձ ենք անելու մաքարէնիքիցը:

6. Մենք նրանց պատմելու ենք գիտութեամբ, որ մենք բացակայ չէինք:

7. Եւ կշիռը այն օրը արգար է լինելու: Ուրեմն որի կշիռը որ ծանր եկաւ, նրանք երջանիկ կը լինեն:

8. Իսկ որի կշիռը թեթեւ եկաւ, նրանք իրանց հողիներին վնասողներ են, որ մեր նշանների դէմ անիրաւացան:

9. Մենք ձեզ արդէն հաստատել ենք երկրի վրայ եւ նրանում ձեզ համար ապրուստ ենք շինել: Քիչերն են որ շնորհակալ են:

10. Բայց արդէն մենք ենք ձեզ ստեղծել, յետոյ ձեզ կազմել, յետոյ հրեշտակներին ասել, «Աղամին երկրպագութիւն արէ՛ք»: Եւ նրանք երկրպագութիւն արեցին բացի սասանայից. նա երկրպագողներիցը չեղաւ:

11. Ասաց, «Ի՞նչ արդիւից քեզ, որ չ'երկրպագես, երբ քեզ հրամայեցի»: Նա էլ ասաց, «ես նրանից լաւ եմ. դու ինձ ստեղծեցիր կրակից, իսկ նրան ստեղծեցիր ցեխից»:

12. Ասաց, «Վա՛ր բնկիր այդ սեղից. քեզ հրաման չըկայ, որ այս սեղ հպարտանաս. դո՛ւրս. ահա՛ դու արհամարհածներիցն ես»:

13. Նա էլ ասաց, «Ինձ ժամանակ տուր մ'ինչեւ այն օրը, որ յարութիւն կանեն»:

14. Ասաց, «ահա դու էլ ժամանակ ունեցողներիցն ես»:

15. Նա էլ ասաց, «արդ որովհետեւ դու ինձ թափառական արեցիր, ես դաքան եմ նստելու նրանց համար քո ողիղ ճանապարհի վրայ»:

16. Յետոյ նրանց վրայ եմ յարձակելու առաջներիցը եւ ետեւներիցը եւ աջ կողմերիցն ու ձախ կողմերիցը, եւ դու նրանց շատերին չես տեսնի, որ շը-

նորնակալ լինեն» :

17. Ասաց, դո՛ւք աշտակելից, դու անարգւած արձ համարնւած : Ով որ քեզ հետեւէ նրանցից, այն ժամ մանակ ես դժոխքը ձեր ամեններովդ պէ՛տք է լեցնեմ» :

18. Եւ դու, ո՛վ Ադամ, բնակելի՛ք դու եւ կի՛նդ դրախտու՛մք, էւ կերէ՛ք դուք երկուսդ որակելից որ ուզէք : Բայց մի՛ մտանաք այս ծառին, եթէ ոչ՝ դուք աս՛րբաներէցը կը լինէք» :

19. Բայց աստանան նրանց փոխաց, թէ՛ դրանց ցոյց է տալու այն որ նրանցից ծածուկ էր, այսինքն նրանց պակասութիւնը, եւ ասաց, «ձեր Տէրը ի՞նչ է արգելել ձեզ այս ծառիցը բացի նրանից, որ երկուսդ երկու հրեշտակ կը դանաք կամ յաւիտեան կապրէք» :

20. Եւ երգում արեց նրանց, թէ՛ «ես ձեզ համար խորճդատու եմ» :

21. Եւ նրանց առաջնորդեց խարելով : Եւ երբոր ճաշակեցին ծառիցը, երեսեցան նրանց իրանց պակասութիւնները եւ նշանք հիւսեցին դրախտի տերեւները որ իրանց ծածկեն : Այ՛. ժամանակ նրանց Տէրը կանչեց նրանց. «ես ձեզ չ'արգելեցի՞ք այս ծառիցը եւ ասացի ձեր երկուսիդ. թէ սատանան ձեր յայտնի թըշնամին է» :

22. Նշանք էլ ասացին, «ո՛վ մեր Տէր, մենք մեր հոգիները դէմ անխառութիւն արեցինք, եւ եթէ դու մեզ չընկերես եւ մեզ չ'ողորմես, մենք անշուշտ կը կորչենք» :

23. Ասաց, «վա՛ր ընկէք դուք իբար թշնամիներ էք : Եւ դուք կը բնակւէք երկրի վրայ եւ ապրուստ կ'ունենաք մինչեւ մի ժամանակ» :

24. Նաեւ ասաց, «նրանում կ'ապրէք. նրանում կը մեռնէք, եւ նրանից դուք կը տարւիք» :

25. Ո՛վ զամի որդիք, մենք ձեզ համար հագուստ իջեցրինք. որ ծածկէ ձեր պակասութիւնը եւ ճոխ հագուստ բարեպաշտութեան : սա ատելի լաւ է յան թէ Աստուծոյ նշանները, որպէս զի յիշէք :

26. Ո՛վ Ազամի որդիք, սատանան ձեզ թո՛ղ չը խաբէ, ինչպէս որ նա ձեր ծնողներին դուրս հանեց զըրախտիցը նրանցից նրանց հագուստը մերկացնելով որպէսզի ցոյց տայ նրանց իրանց երկուսի ամօթը: Ահա՛ նա եւ իր ցեղը ձեզ տեսնում են այն տեղից, որ դուք նրանց չէք տեսնում: Ահա՛ մենք սատանաներին շինել ենք այնպիսիների համար իշխաններ որոնք չեն հաւատում:

27. Եւ նրանք զազրագործութիւն անելիս ասում են, «մենք գտանք որ մեր պապերն էլ այսպէս էին, եւ Աստուած է հրամայել մեզ այդ»: Դու ասա՛, «Աստուած զազրագործութիւն չի հրամայի, մի՞թէ դուք Աստուծոյ մասին ձեր չիմացած բանը կ'ասէք»:

28. Դու ասա՛, «Իմ Տէրը հրամայել է արդարութիւն. եւ դուք դարձրէ՛ք ձեր երեսները դէպի ամենմի աղօթարան եւ աղօթք արէ՛ք նրան ճշմարտութիւնով. կրօնքը նրանն է: Ինչպէս որ նա ձեզ ստեղծել է, դուք նրան էք դառնալու. նա մէկ մասին առաջնորդել է եւ մէկ մասին էլ արժանի համարել մոլորութեան, որովհետեւ նրանք Աստուծուն թողելով սատանաներին իրանց պաշտպաններ են ընդունել եւ կարծում են թէ առաջնորդած են»:

29. Ո՛վ Ազամի որդիք, վե՛ր առէք ձեզ համար ձեր զարդերը ամեն աղօթարանի մօտ, եւ կերէ՛ք ու խմեցէ՛ք. բայց շոայլութիւն մի՛ անէք, որովհետեւ նա շոայլներին չի սիրի:

30. Դու ասա՛, «ով է Աստուծոյ զարդարանքը, որ նա դուրս է հանել իր ծառաների համար եւ ուտեստների լաւերը արգիլել իբրեւ պիղծ»: Դու ասա՛, «զանրանց համար է, որ այս աշխարհումը հաւատում են մանաւանդ յարութեան օրւան»: Մենք այսպէս ենք քացատրում նշանները հասկացող մարդկանց համար:

31. Դու ասա՛, «Իմ Տէրը սոսկ զազրագործութիւններն է արգիլել թէ յայտնիները թէ գաղտնիները. եւ մեզ է ապստամբութիւնը առանց իրաւունքի եւ որ»

Աստուծուն ընկերներ էք դնում քանի որ դրա համար հրաման չէ իջեցրած. եւ նաեւ Աստուծոյ մասին բաներ էք ասում, որ չը գիտէք:

32. Եւ ամեն մի ազգի համար որոշւած վախճան կայ, եւ երբ նրանց վախճանը եկաւ, նրանք մի ժամ ետ չեն մնայ եւ ոչ էլ առաջ կ'անցնեն:

33. Ո՛վ Ադամի որդիք, անշուշտ ձեզանից մարգարէներ են գալու ձեզ մօտ, որ իմ նշանները պատմում են ձեզ. ով որ երկիւղած դառնայ եւ ուղղւի, այնպիսիներէ համար վախ չըկայ եւ նրանք չեն տրտմի:

34. Իսկ նրանք, որ մեր նշանները սուտ են համարում եւ նրանց դէմ հպարտանում, նրանք կրակի ընկերներ են եւ նրանում միշտ կը մնան:

35. Եւ ո՛վ է աւելի անիրաւ քան թէ նա, որ Աստուծոյ մասին սուտեր է հնարում եւ նրա նշանները սուտ է համարում: Այնպիսիներին կը հասնի իրանց բաժինը գրգիցը, մինչեւ մեր ուղարկւածները նրանց մօտ կըզան եւ նրանց կը մահացնեն, եւ կ'ասեն, «ո՛ւր են նրանք, որոնց դուք աղօթք էիք անում բացի Աստուածանից»: Նրանք էլ կ'ասեն, «մեզանից հեռացել են»: Եւ կը վկայեն իրանց դէմ, թէ իբրանք անհաւատներ էին:

36. Նա կ'ասէ, «մտէ՛ք այն դռներէ եւ մարդկանց ազգերի հետ միասին կրակի մէջը, որ ձեզանից առաջ եղել են»: Ամեն անգամ, որ մի ազգ մէջն է մտնում, անիծում է իր քրոջը մինչեւ որ բոլորն էլ ներս են մտնում: Եւ վերջինները կ'ասեն առաջիններին, «ո՛վ մեր Տէր, սրանք մեզ մոլորեցրին, նրանց կրկնապատիկ կրակով պատժի՛ր»: Նա էլ կ'ասէ, ամենին էլ կրկնապատիկ», սակայն դուք չէք իմանում:

37. Եւ առաջինները կ'ասեն վերջիններին, «դուք մեզանից գերազանց չէիք. ուրեմն ճաշակեցէ՛ք ձեր վաստակած պատիժը»:

38. Իրաւի նրանք, որ մեր նշանները սուտ են համարում եւ նրանց դէմ հպարտանում, նրանց համար

երկնքի դռները չեն բացի եւ նրանք դրախտը չեն մտնի, մինչեւ որ ուղտն ասեղի ծակովը անցնի: Մենք յանցաւորներին այսպէս ենք վարձատրում:

39. Նրանց համար դժոխքումը պառկելու տեղ կայ, եւ նրանց վերելիցը ծածկոց կայ: մենք անիրաւուններին այսպէս ենք վարձատրում:

40. Իսկ նրանք որ բարիք են գործում — մենք մարդը չենք պարտաւորում նրա կարողութիւնիցը վեր — նրանք դրախտի ընկերներն են, նրանք միշտ նրանում կը մնան:

41. Եւ մենք նրանց սրտերիցը վեր կ'անենք քէնը — որոնց տակովը գետեր են հոսում, եւ նրանք կ'ասեն, «փառք: Աստուծուն, որ մեզ այստեղ առաջնորդեց, եւ մենք առաջնորդւած չէինք լինի, եթէ Աստուած մեզ չ'առաջնորդէր»:

42. Եւ դրախտի մարդիկը կը կանչեն դժոխքի մարդկանց, թէ «մենք արդէն գտանք, ինչ որ մեզ խոստացել էր մեր Տէրը ճշմարտապէս»: Նրանք էլ կ'ասեն, «այո՛»: Այն ժամանակ մի մունետիկ կը կանչէ նրանց մէջ, թէ «Աստուծոյ անէծքը լինի անիրաւունների վրայ»:

43. «Որոնք մոլորեցնում են Աստուծոյ ճանապարհիցը եւ չարամտութեամբ ծռում են նրան եւ միւս աշխարհն ուրանում»:

44. Եւ նրանց մէջ վարագոյր կայ եւ միջնապարիսպի վրայ մարդիկը ճանաչում են ամեն մէկին նրանց դէմքիցը: Եւ դրախտի մարդիկը կը կանչեն, թէ «խաղաղութիւն ձեզ», բայց նրա մէջը չեն մտնի թէ եւ կը փափագեն:

45. Եւ երբ նրանց աչքերը կը դառնան դէպի կրակի մարդկանցը, կ'ասեն, «ո՛վ մեր Տէր, մեզ անիրաւի ժողովրդի հետ մի՛ դնիր»:

46. Եւ միջնապարիսպի մարդիկը կը կանչեն այն մարդկանցը, որոնց կը ճանաչեն նրանց դէմքիցը եւ կ'ասեն, «Ի՞նչ օգուտ ասեց ձեզ ձեր դիզածը եւ ձեր հպարտանալը»:

47. «Սրանք են, որոնց համար դուք երգում արիք, թէ Աստուած նրանց չի մտնեանայ ողորմութիւնով՝ մըտէ՛ք դրախար՝ ձեզ համար վախ չըկայ եւ դուք չէք տրտմի»:

48. Եւ կրակի ընկերները կը կանչեն դրախտի ընկերներին, թէ «մեր վրայ ջուր թափեցէ՛ք կամ նրանից ինչ որ Աստուած ձեզ պարգևել է»: Նրանք էլ կ'անհն, թէ «Աստուած այդ երկուսն էլ արգիլել է անհաւատներէ համար»:

49. Որոնք իրանց կրօնքը խաղ ու կատակ էին չինել եւ այս աշխարհքի կեանքը նրանց խաբել էր՝ եւ մենք այսօր մոռանում ենք նրանց, ինչպէս որ նրանք այսօրայ հանդիպումը մոռացան, եւ որովհետեւ մեր նշաններէ դէմ վիճում էին»:

50. Եւ մենք արդէն նրանց մի գիրք ենք տւել, որ նրան գիտնականացէս բացատրել ենք իբրեւ ճանապարհացոյց եւ ողորմութիւն հաւատացեալ ազգի համար:

51. Նրանք մի բա՞ն են սպասում նրա մեկնութիւնից ջոկ: Այն օրը որ կըգայ նրա մեկնութիւնը, կ'անեն նրանք, որ նրան մոռացել էին առաջուց «արդէն եկել էին մեր Տիրոջ մարգարէները ճշմարտագէտ՝ արդ մեզ համար բարեխօսներ կը գտնուին, որ մեզ համար բարեխօսեն, կամ մենք ետ դարձնուինք, որ մի ուրիշ բան անենք քան թէ այն որ անում էինք»: Սակայն նրանք արդէն վնասել են իրանց հոգիներին եւ նրանցից հեռացել է իրանց գրպարտածը:

52. Ահա՛ ձեր Տէրը Աստուած է որ ստեղծել է լրկինքը եւ երկիրը վեց օրուայ մէջ, յետոյ աթոռի վրայ նստել, որ ծածկում է գիշերով ցերեկը, որ ազահութեամբ փախաքում է նրան. նաեւ արեգակը եւ լուսինը եւ աստղերը, որոնք ընտանեցած են նրա հրամանովը: Ահա՛ արարչութիւնը եւ հրամանը նրանն է: Օրհնեալ է աշխարհներէ Տէրը Աստուած:

53. Աղօթեցէ՛ք ձեր Տիրոջը խոնարհութեամբ եւ լը-

ռելիայն, որովհետեւ նա պատիրանազանցներին չի սիրի:

54. Եւ երկիրը բարեկարգելուց յետոյ նրանում ապականութիւն մի՛ գործէք, եւ աղօթեցէք նրան երկիւզով եւ խնդրածքով: Ահա Աստուծոյ ողորմութիւնը մօտ է բարեգործներին:

55. Եւ նա է որ քամիներն առաջուց ուղարկում է իբրեւ աւետիչ իբր ողորմութեանը մինչեւ որ ծանրացած ամպեր է բերում որ նրանով ջրենք մեռած երկիրը. եւ մենք ջուր ենք իջնցնում նրանով: Այսպէս էլ դուրս ենք բերելու մեռելները, որպէս զի յիշէք:

56. Եւ բարի երկիրը հանում է իր բոյսը իբր Տիրոջ հրամանովը, բայց նա որ վատ է, միմիայն քիչ է բուսցընում: Մենք այսպէս ենք բացատրում նշանները եւրախտագէտ մարդկանց համար:

57. Մենք արդէն ուղարկեցինք Նոյին իբր ժողովրդի մօտ, եւ նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, պաշտեցէ՛ք Աստուծուն. դուք նրանից ջոկ ուրիշ Աստուած չունիք. ես վախում եմ որ ձեզ կրգայ մի մեծ օրւայ պատիժը»:

58. Նրա ժողովրդից մի խումբ ասաց, «մենք տեսնում ենք, որ դու յայտնի մոլորութեան մէջ ես»:

59. Նա էլ ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ինձ մօտ մօլորութիւն չըկայ, այլ ես աշխարհքների Տիրոջ կողմանէ մարգարէ եմ»:

60. «Ես ձեզ առաջարկում եմ իմ Տիրոջ պատէրները եւ խրատ եմ տալիս ձեզ, եւ Աստուծոյ մասին ես բան գիտեմ, որ դուք չըգիտէ՛ք»:

61. «Կամ զարմանում էք որ ձեր Տիրոջ կողմանէ ձեզանից մի մարդու համար յուշարարութիւն է եկել, որ ձեզ խրատէ, որ երկիւղած դառնաք եւ որպէս զի ողորմութիւն գտնէք»:

62. Սակայն նրանք սուտ համարեցին նրան, իսկ մենք նրան փրկեցինք եւ նրա հետ եղողներին տապանի մէջ, բայց մեր նշանները սուտ համարողներին

ընկղմեցինք. որովհետեւ կոյր ժողովուրդ էին:

63. Նաեւ Ա.դ ազգին ուղարկեցինք իրանց եղբայր
Հուդին: Նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, պաշտեցէ՛ք
Աստուծուն, դուք նրանից ջոկ ուրիշ Աստուած չ'ունիք.
մի՞թէ չէք վախենում:

64. Նրա ժողովրդից եղող անհաւատներ խումբն
էլ ասաց «մենք տեսնում ենք, որ դու ստախօսնե-
րիցն ես»:

65. Նա էլ ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ինձանում
յիմարութիւն չ'ըկայ, այլ ես աշխարհքների Տէրոջ կող-
մանէ մարգարէ եմ»:

66. Ես ձեզ առաջարկում եմ իմ Տէրոջ պարագաները
եւ ես ձեզ համար հաւատարիմ խրատող եմ :

67. Կամ մի՞թէ զարմանում էք որ ձեզանից եղող
մի մարդու համար յուշարարութիւն է եկել, որ ձեզ
խրատէ, ուրեմն յիշեցէ՛ք Աստուծոյ շնորհքները, որ
երջանիկ լինէք»:

68. Նրանք նլ ասացին, «դու նրա՞ համար եկար,
որ մենք մինակ Աստուծուն պաշտենք, եւ թող տանք
այն, որ մեր հայրերն էին պաշտում: Ուրեմն բե՛ր մեր
վրայ ինչ որ սպառնում ես մեզ, եթէ դու ճշմարիտ ես.

69. Նա էլ ասաց, «արդէն հասել է ձեր վրայ ձեր տի-
քոջ կողմանէ ապականութիւն եւ բարկութիւն: Արդ-
ե՞օք ինձ հետ կուի էք անելու այն անունների համար,
որոնցով դուք եւ ձեր հայրերը անւանել էք, որի հա-
մար Աստուած ձեզ հրաման չէ ուղարկել դէպի ցած. Ա-
պա սպասեցէ՛ք, ես էլ ձեզ հետ միասին սպասողներիցն
եմ»:

70. Իսկ մենք նրան եւ նրա հետ եղողներին ազա-
տեցինք մեր ողորմութիւնով եւ նրանց արժատները
կտրեցինք, որ մեր նշանները սուտ էին համարում եւ
հաւատացեալ չէին:

71. Եւ Սամուդ ազգքն ուղարկեցինք նրանց
եղբայր Սալէնին որ ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ. Աս-
տուծուն պաշտեցէ՛ք, դուք նրանից ջոկ ուրիշ Աստ-

ուած չ'ունիք. արդէն ձեզ համար յայտնութիւն է եկել ձեր Տիրոջ կողմանէ՝ Աստուծոյ այս ուղար. որ ձեզ համար հրաչք լինի. ուրեմն թո՛ղ աւէք Աստուծոյ երկրի վրայ արածէ եւ վատ կերպով նրան յի՛ր գպչէք. որովհետեւ ձեզ ցաւալի տանջանք կը բռնի»:

72. Եւ յիշեցէ՛ք, որ ձեզ յաջորդողներ չ'ինեց Ագից յետոյ եւ ձեզ բնակեցրեց երկրումը. եւ դուք գաշտբումը պալատներ կառուցրէք եւ սարերումը աներ փորեցիք: Ուրեմն յիշեցէ՛ք Աստուծոյ պարգևները եւ երկրումը ման յի՛ր գաք ապականելով»:

73. Նրա ժողովրդիցը մի խումբ, որ հպարտ էին, ասացին տկար համարւածներին, որ նրանցից հաւատում էին, «արդե՞օք դիտէք, որ Սալէնը իր Տիրոջ կողմանէ ուղարկւած է» . նրանք էլ ասացին, «մենք հաւատում ենք այն բանին, ինչով որ նա ուղարկւած է»:

74. Հպատակներն էլ ասացին, «խոյ ձեր հաւատացածին չենք հաւատում»:

75. Եւ ուղար ջլատեցին եւ զանց արեցին իրանց Տիրոջ հրամանը. եւ ասացին, «ո՛վ Սալէն, բե՛ր մեզ վրայ այն, որ մեզ սպառնացել ես, եթէ դու մարգարէներիցն ես»:

76. Այն ժամանակ յափշտակեց նրանց մի փոթորիկ, եւ միւս օրը իրանց տներումը երեսների վրայ փուած գտնւեցան:

77. Եւ նա նրանցից ետ քաշեց եւ ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ես իմ Տիրոջ պատգամը ձեզ ռ ջարկեցի՝ ես ձեզ խրատ աւի, բայց դուք խրատ առողներին չէք սիրում»:

78. Եւ ուղարկեցինք Ղովտին, որ երբ իր ժողովրդին ասաց, «մի՞թէ դուք այնպիսի զազրագործութիւն կ'անէք, որ աշխարհքի մարդիկներից եւ ոչ մինք ձեզնից առաջ չէ արել. դուք կ'նիկներին թողած արուներին էք մտանում ցանկութիւնով. այո՛, դուք անասակ ազգ էք»:

80 Եւ նրա ժողովրդի պատասխանը միայն սա էր, թէ «դու՛րս արէք նրանց ձեր քաղաքիցը, որովհետեւ իրանց մաքուր համարող մարդիկ են»:

81. Բայց մենք նրան եւ նրա ընտանիքը ազտանցինք բացի նրա կնոջիցը, որ ես միացողներինց եղաւ:

82. Եւ մենք նրանց վրայ անձրեւ թափեցինք. տե՛ս թէ ինչպէս եղաւ յանցաւորներին վերջը:

83. Եւ Մադեան ուղարկեց ինք նրանց եղբայր Շուէյբին, որ սասց, «ո՛վ իմ ժողովուրդ, պաշտեցէ՛ք Աստուծուն. դուք նրանից ջուր ուրիշ Աստուած չ'ունիք. արդէն ձեր Տիրոջ կողմէնէ ձեզ համար յայտնութիւն է եկել: Ուրեմն չափը եւ կշիւր վհարեցէ՛ք, եւ մարդկանց ոչ մի բանին վնաս մի՛ հասցնէք, եւ երկրի մէջ ապականութիւն մի՛ անէք, քանի որ նա բարեկարգուած է. սո ձեզ համար լաւ է, եթէ դուք հաւատա-
ցեալներ էք»:

84. «Եւ ամեն ճանապարհում մի՛ նստէք սպանալով եւ հեռացնելով Աստուծոյ ճանապարհիցը նրան հաւատացողին հեռացնելու. եւ ծռութիւն պահանջելով նրանից, եւ յիշեցէ՛ք երբ քիչ էիք, եւ նա ձեզ շատացրեց: Եւ տեսէ՛ք, թէ ապականիչներին վերջը ինչպէս եղաւ»:

85. «Եւ եթէ ձեզանից մի մաս մարդիկ կան, որ հաւատում են այն բանին, որով ես ուղարկեի եմ, եւ մի մաս մարդիկ էլ չեն հաւատում, սպասեցէ՛ք մինչեւ Աստուած մեր մէջը դառաստան անէ. եւ նա ամենալաւ դատաւորն է»:

86. Եւ նրա ժողովրդից եղող հպարտների խումբն ա-
սաց, «մենք քեզ անպատճառ դուրս կ'անենք, ով Շը-
ուէյբ, եւ նրանց էլ, որ հաւատում են, քեզ հետ մեր քաղաքիցը. կամ թէ կ'տ դարձիր մեր ազգին մէջ»:
Նա էլ ասաց, «բայց եթէ՞ մենք զգու՛ւմ ենք»:

87. «Մենք արդէն Աստուծոյ դէմ սուտեր հնարած կը լինենք, եթէ մենք կրկին ձեր ազգին մէջը վերադառ-

նանք, քանի որ Աստուած մեզ նրանից ազատել է, և մենք նրա մէջը եւ չենք գառնայ եթէ մեր Տէրն Աստուած չ'ուզէ: Մեր Տէրը հարուստ է գիտութեամբ ամեն բանի մէջ. մենք Աստուծուն սնք ապաւինել: Ո՛վ մեր Տէր, վճռի՛ր արդարութեամբ մեր մէջը և մեր ժողովրդի մէջը. և դու ամենալաւ լճողն ես»:

88. Եւ նրա ժողովրդից անհաւատ խումբն ասաց, «եթէ դուք Շուէյրին հետեւէք, այն ժամանակ դուք վնասուածներ էք»:

89. Եւ փոթորիկը յափշտակեց նրանց և միւս օրն իրանց աներուժը երեսների վրայ փռած գանկեցին:

90. Շուէյրին սուտ համարողները կարծես թէ նրանում բնակւած չեն եղել. Շուէյրին սուտ համարողները վնասուածներ եղան:

91. Եւ նա նրանցից ետ դարձաւ և ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ես ձեզ արդէն առաջարկեցի իմ Տիրոջ պատգամները և ձեզ խրատեցի, ուրեմն ես ի՞նչպէս ախրեմ անհաւատ ժողովրդի վրայ»:

92. Եւ մենք ոչ մի քաղաք մի մարգարէ չե՛նք ուղարկել, որ նրա բնակիչներին մենք պատժած չը լինենք պատուհասներով և կորուստներով, որպէս զի խոնարհ են:

93. Յետոյ պատուհասի տեղը փոխարինեցինք բարութիւնով չափազանցապէս, մինչև ասում էին, թէ «մեր հայրերին էլ էր կորուստներ և ուրախութիւններ պատահում»: Բայց մենք նրանց յանկարծա՛լի ջնջեցինք, և նրանք չ'գիտէին:

94. Եւ եթէ քաղաքների բնակիչները հաւատային և երկրի դած լինէին, մենք նրանց համար երկնքից և երկրից օրհնութիւններ բաց կ'անէինք, բայց նրանք սուտ համարեցին, և մենք նրանց պատժեցինք իրանց վաստակած ին համեմատ:

95. Այդ քաղաքների բնակիչները ապահով էին արդեօք, որ մեր չարիքը նրանց վրայ չի գայ գիշերով, երբ նրանք քնած են:

96. Կամ ապահով էին այդ քաղաքի բնակիչները, թէ մեր չարիքը նրանց վրայ չի գայ ցերեկով, երբ նրանք զարճանում են :

97. Արդեօք նրանք ապահով են Աստուծոյ նենգութիւնից. սակայն Աստուծոյ նենգութիւնիցը միտիայն շնատղների ժողովուրդը ապահով կը լինի :

98. Արդեօք նրանք որ երկիրը ժառանգել են նրա քնակիչներից յետոյ, չեն հասկացել, որ եթէ կամենանք նրանց կը պատժենք իրանց մեղքերի համար, եւ նրանց սրտերի վրայ կնիք կը դնենք, որ նրանք չեն լսի» :

99. Ահա՛ այս քաղաքների պատմութիւնը քեզ անում ենք, թէ նրանց արդէն եկել են մարգարէներ նրանց մօտ յայտնութիւններով, բայց նրանք չէին հաւատում այն բանին, որ առաջուց սուտ էին համարում : Ահա Աստուած այսպէս կնիք է դնում անհաւատների սրտերի վրայ :

100. Եւ մենք նրանց շատերի մօտ դաշինք չը գտանք՝ այլ նրանց շատերին գտանք որ չարագործներ էին :

101. Յետոյ նրանցից ետքը մենք Մովսէսին ուղարկեցինք մեր հրաշքներովը Փարաւօնի եւ նրա մեծամեծների մօտ, բայց նրանք անիրաւութիւն արեցին նրանց դէմ : Սակայն տե՛ս թի ի՛նչպէս եղաւ ապակա-նիչների վերջը :

102. Եւ Մովսէս ասաց, «ս'վ Փարաւօն, ես աշխարհ-ների Տիրոջ կողմիցը մի մարգարէ եմ» :

103. «Ճշմարիտ, դրա համար ես Աստուծոյ վրայ մի քան չեմ ասի բացի ճշմարտութիւնից : Ես ահա՛ հրաշքով ձեր Տիրոջ կողմանէ ձեզ մօտ եմ եկել : Արդ թո՛ղ տուր ինձ հետ Իսրայէլի որդեանցը» : Եւ նա ասաց, «եթէ մի հրաշքով ես եկել, բե՛ր՝ եթէ արգարներից ես» :

104. Եւ նա իր գաւազանը գցեց, եւ ահա՛ նա յայտնի օձ եղաւ :

105. Եւ նա հանեց իր ձեռքը, եւ ահա՛ սպիտակ էր նայողների համար :

106. Փարաւօն աղգի մեծամեծներն ասացին, «սա իրաւի մի գիտուն կախարդ է»:

107. «Սա ուզում է, որ ձեզ ձեր երկրիցը հանէ՛ ուրեմն ի՞նչ էք հրամայում»:

108. Նրանք էլ ասացին, «հեռացրօ՛ւ զրան եւ իր եղբօրը՝ եւ քաղաքները մարդիկ ուղարկիր, որ ժողովին,

109. Եւ բերին քեզ մօտ ամեն գիտուն կախարդներին»:

110. Եւ կախարդները Փարաւօնի մօտ եկան եւ ասացին, «մենք անշուշտ վա՞րձք կ'ունենանք եթէ մենք յաղթող լինենք»:

111. Նա էլ ասաց. «այո՛ւ. դուք իմ մերձաւորներիցն էք»:

112. Նրանք էլ ասացին, «ո՛վ Մովսէս, կամ դու կը գցես, կամ մենք կը լինենք գցողները»:

113. Նա էլ ասաց, «գցեցէ՛ք»։ Եւ երբ նրանք գցեցին, մարդկանց աչքերը կախարդեցին, եւ նրանց վախեցրին եւ մեծ կախարդութիւն արեցին:

114. Են մենք Մովսէսին յայտնութիւն տեցինք, թէ «գաւազանդ գցի՛ր»։ Եւ ահա՛ նա կուլ տեց նրանց շինծուները:

115. Այն ժամանակ ճշմարտութիւնը յայտնեց, եւ նրանց արտօք ոչնչացաւ:

116. Եւ նրանք յաղթեցին ու ետ գնացին խայտառակւած:

117. Եւ կախարդներ վար ընկան երկրագեցին:

118. Եւ ասացին, «մենք հաւատում ենք աշխարհքների Տիրոջը,

119. Մովսէսի եւ Ահարոնի Տիրոջը»:

120. Եւ Փարաւօն ասաց, «դուք հաւատացի՞ք նրան յառաջ քան թէ ես ձեզ հրաման եմ տալիս Ահա՛ սա նենդութիւն է, որ դուք այդ նենդութիւնը շինեցիք այս քաղաքում, որ նրա բնակիչներին հանէք նրա միջիցը՝ բայց դուք շուտով կ'իմանաք»:

121. «Ես անպատճառ կտրելու եմ ձեր ձեռներն ու տոնները դէմադէմ կողմից․ յետոյ ձեզ ամենից էլ խաշելու եմ»:

122. Նրանք էլ ասացին, «մենք էլ մեր Տիրոջը կը դառնանք»:

123. Եւ դու միայն նրա համար ես մեղանից վրէժ անում, որ մենք հաւատում ենք մեր Տիրոջ նշաններին, որ ուղարկել է մեզ համար: Ո՛վ մեր Տէր, մեզ վրայ թափի՛ր համբերութիւն, որ մենք իբրեւ միւս-լիմներ մեռնենք»:

124. Եւ Փարաւօնի ժողովրդից մեծամեծներն ասացին, «արդե՞օք բաց կը թողես Մովսէսին եւ իր ժողովրդին, որ երկրի մէջ ապականութիւն գործեն, եւ թողեն քեզ եւ քո Աստուծուն»: Նա էլ ասաց, «մենք նրանց որդկանցը սպանե՛նք եւ նրանց աղջիկներին ողջ թողե՛նք, եւ մենք նրանց վրայ կ'իշխենք»:

125. Մովսէս ասաց իր ժողովրդին, «Աստուածանից օգնութիւն խնդրեցէ՛ք եւ համբերեցէ՛ք, որովհետեւ երկիրը Աստուծունն է․ իր ծառաներից որին ուզում է, նա նրան ծառանգութիւն է տալիս: Եւ վերջը երկիւղածներինն է»:

126. Նրանք ասացին, «մենք տանջւեցինք քո դաւուց ատաջ եւ քո գալուց յետոյ էլ»: Նա էլ ասաց, «գուցէ ձեր Տէրը կը ջնջէ ձեր թշնամիներին եւ ձեզ նրանց յաջորդ կը շինէ երկրի մէջ, եւ կը տեսնէ թէ ինչ էք անում»:

127. Երգէն մենք պատժել էինք Փարաւօնի ցեղին սովով եւ պտուղների պակասութիւնով, որպէս զի խաւացիանան:

128. Բայց երբ բարիքն եկաւ, ասացին, «սա մերն է»: Բայց երբ նրանց մի չարիք էր պատահում, նրանք այն վերագրում էին Մովսէսին եւ նրա հետ եղողներին իբրեւ նրանց գուշակութիւն: Բայց նրանց գուշակութիւնը Աստուածանից էր․ սակայն նրանցից շատերը չը գիտէին:

129. Եւ նրանք ասացին, «ինչ հրաշք էլ որ բերես մեզ համար, որ մեզ կախարդես նրանով, մենք քեզ չենք հաւատայ»:

130. Եւ մենք նրանց վրայ հեղեղը եւ մորեխը եւ մուկը եւ գորտերը եւ արիւնը իբրեւ բացատրիչ նշաններ ուղարկեցինք. բայց նրանք ամբարտաւանացան եւ մի յանցաւոր ժողովուրդ եղան:

131. Եւ երբ պատուհասը նրանց վրայ եկաւ, ասացին, «ով Մովսէս, աղօթք արա մեզ համար քո Տիրոջը այն քեզ հետ արած ուղտի պէս, որ եթէ զու՛մեզանից այս պատուհասը հեռացնես, մենք քեզ անպատճառ կը հաւատանք, եւ Իսրայէլի որդիքը քեզ հետ բաց կը թողենք»: Սակայն երբ մենք նրանցից պատուհասը հեռացրեցինք մինչև այն որոշեալ ժամանակը, որին նրանք հասան, այն ժամանակ նրանք դրժեցին:

132. Եւ մենք նրանցից վրէժ առեցինք եւ նրանց ընկըղեցցնք ծովումը; որովհետեւ մեր նշանները սուտ էին համարում եւ նրանց մասին անփոյթ էին:

133. Եւ մենք ժառանգութիւն տւինք այն երկրի արեւելեան եւ արեւմտեան կողմերը այն ազգին, որին նրանք նաաստացնում էին, որը մենք նրանում օրհնել էինք, եւ քո Տիրոջ գեղեցիկ խօսքը կատարեց Խորայէլի որդկանց վրայ նրանց համբերութեան պատճառով, եւ մենք ոչնչացրեցինք Փարաւօնի եւ նրա ժողովրդի արածը եւ ինչ որ շինել բարձրացրել էին:

134. Եւ մենք ծովովն անցկացրեցինք Իսրայէլի որդիներին, եւ նրանք եկան մի ազգի մօտ, որ իբրանց կուռքերին երկրպագութիւն էին անում, ասացին, «ով Մովսէս, մեզ համար նրանց Աստուծուն նման մի Աստուած չինի՛ր»: Նա էլ ասաց, «զուք իբաւ մի տըգէտ ժողովուրդ էք»:

135. «Որովհետեւ այն բանը, որ սրանք ունեն, կորչելու է, եւ նրանց արածը ունայն է»:

136. Եւ ասաց, «արդեօք ես Աստուածանից ջոկ ձեզ

համար մի ուրիշ աստուած պարտեմ, քանի որ նա ձեզ բոլոր աշխարհքներիցը գերազանց է արեւ»։

137. «Եւ երբ մենք ձեզ ազատեցինք Փարսոսնի ցեղիցը, որ ձեզ չարաչար տանջում էին, որ ձեր որդիներին սպանում եւ ձեր աղջիկներին ողջ էին թողում, եւ սրանում մեծ տառապանք կար ձեր Տիրոջ կողմանէ»։

138. «Եւ մենք որոշեցինք Մովսէսի համար երեսուն գիշեր, եւ լրացրինք տասնով, այնպէս որ նրա Տիրոջ պայմանաժամը քառասուն գիշերով կատարեալ եղաւ, այն ժամանակ Մովսէս ասաց իր եղբօր՝ Ահարոնին, «դու իմ փոխանորդս եղի՛ր իմ ժողովրդիս մէջ եւ կարգին կա՛ց եւ ապակտնիչների ճանապարհին մի՛ հետեւի՛ր»։

139. Եւ երբ Մովսէս մեր որոշած ժամանակին եկաւ, եւ նրա Տէրը նրա հետ խօսեց, ասաց, «ո՛վ իմ Տէր, ցո՛յց տուր ինձ որ քեզ տեսնեմ»։ Նա էլ ասաց, «դու ինձ երբէք չես տեսնի՝ սակայն մտիկ արա սարին. եթէ նա իրան տեղը հաստատ մնայ, այն ժամանակ դու ինձ կը տեսնես», եւ երբ նրա Տէրը փառաւորեց սարի վրայ, նրան փոշի շինեց, եւ Մովսէս սարսափւած վաք ընկաւ։

140. Եւ երբ ուշի եկաւ, ասաց, «փառք քեզ, ես դարձի եմ գալիս դէպի քեզ եւ ես հաւատացեալներից առաջինն եմ»։

141. Նա էլ ասաց, «ո՛վ Մովսէս, ես քեզ ընտրել եմ մարդկանցից իմ պատգամներովը եւ խօսքերովը, ուրեմն ա՛ն ինչ որ քեզ աւել եմ եւ երախտագէտ եղի՛ր»։

142. Եւ մենք նրա համար տախտակների վրայ ամեն բանից խրատ եւ ամեն բանի համար բացատրութիւն գրեցինք, ուրեմն ընդունի՛ր դա հզօրապէս եւ պատուիրի՛ր քո ժողովրդին, որ այդ ընդունեն աւելի լաւ կերպով՝ այն ժամանակ եւ ձեզ ցոյց կըտամ չարագործների բնակարանը։

143. Եւ կը հեռացնեմ իմ նշանները երկրի մէջ ա-

նիրաւարար հաւատացողներին. եւ եթէ ասին հրաշք էլ տեսնեն, նրան չեն հաւատայ, եւ եթէ ուղիղ ճանապարհը տեսնեն, նրան չեն ընդունի իբրև ճանապարհ, իսկ եթէ տեսնեն անհնազանդութեան ճանապարհը, նրան կրնգունեն իբրև ճանապարհ:

144. Նրա համար որ մեր նշանները սուտ համարեցին եւ նրանց մասին անհոգ գտնեցին:

145. Եւ նրանք որ մեր նշանները եւ միւս աշխարհքի հանդիպելը սուտ հանեցին, նրանց գործերը փճացել են. մի՞թէ նրանք իրանց արածիցն ուրիշ վարձք կ'ստանան:

146. Եւ Մովսէսի ժողովուրդը նրանից յետոյ նրա զարդերիցը մի մարմնեղէն հորթ շինեց, որ պառաչեց: Մի՞թէ չը տեսան, որ նրանց հետ չէր խօսում եւ նրանց մի ճանապարհով չէր առաջնորդում:

147. Բայց նրանք ընդունեցին նրան եւ անիրաւունք եղան,

148. Եւ երբ նրանք զղջացին եւ տեսան որ սխալուել են, ասացին, «եթէ մեր Տէրը մեզ չ'ողորմէ եւ մեզ չընկերէ, մենք կը կորչենք»:

149. Եւ երբ Մովսէս ցաւելով բարկացած ետ եկաւ իր ժողովրդի մօտ, ասաց, «վատ բան էք արել ինձանից ետքը. ձեր Տիրոջ հրամանի դէ՛ր չտարեցի՞ք»: Եւ դէն գցեց տախտակները եւ բռնեց իր կրօր գլխիցն ու նրան քաշ տւեց իրան մօտ. եւ նա ասաց, «ո՛վ իմ մօր սրդի՛ ա՛նա՛ ժողովուրդն ինձ ստիպեց եւ քիչ էք մնացել որ ինձ սպանէին. արդ իմ թշնամիներքս մի՛ ուրախացնիք ինձ վրայ եւ ինձ անիրաւունքի ազգի հետ մի՛ դասիր»:

150. Եւ ասաց, «ո՛վ իմ Տէր, ների՛ր ինձ եւ իմ կրօր եւ մեզ տար քո ողորմութեան մէջ, որովհետեւ դու ամենողորմ ես»:

151. Ահա՛ նրանք, որ ընդունել են հորթը, նրանց քարկութիւն է հասնելու իրանց Տիրոջ կողմանէ եւ

Թշուառութիւն՝ այս աշխարհքի կեա՛քում. եւ մենք այսպէս ենք պատժում զբարոտողներին :

152. Եւ նրանք որ չարութիւններ են դործում եւ նրանից 'ետոյ զղջում եւ հաւատում, ահա՛ քո ՏէրԷ նրանից յետոյ ներող ողորմած է :

153. Եւ երբ Մովսէսի բարկութիւնը հանդարտեց, նա առաւ տախտակները, եւ նրա գրւածքումը կար առաջնորդութիւն եւ ողորմութիւն նրանց համար, որ վախում են իրանց Տիրոջից :

154. Եւ Մովսէս իր մողովքիյը եօթանասուն մարդ ընտրեց մեր պայմանաժամի համար, եւ երբ փոթորիկը նրանց յափշտակեց, ասաց, «ո՛վ ի՞՞ք Տէր, եթէ կամենայիր, նրանց առաջուց կը ջնջէիր՝ եւ հիմա մեզ կորցնելո՞ւ ես այն բանի համար որ մեր յիմարները գործել են. սա միմիայն մի փորձութիւնդ է, որ նրանով քո ուզածին մոլորեցնում եւ քո ուզածին առաջնորդում ես : Ի՞նչ մեր պաշտպանն ես. արդ ների՛ր մեզ եւ ողորմի՛ր մեզ, որովհետեւ դու ամենաբարի ներողն ես» :

155. Եւ մեզ համար այս եւ եկող աշխարհքում բարքիք սահմանի՛ր. մենք դէպի քեզ ենք առաջնորդւած» : Նա էլ ասաց, «իմ պատիժը կը գպչի որին որ ուզե՛վ, եւ իմ ողորմութիւնը բովանդակում է իր մէջն ամեն բան, եւ ես կը սահմանեմ նրանց համար բարիք. որ երկիւղած են եւ վճարում են մարբութեան հարկը եւ մեր նշաններին հաւատում» :

156. Նրանք որ հեռեւում են ուղարկւած անգրագէտ մարգարէին, որ նրան գանում են գրւած իրանց Օրէնքի եւ Աւետարանի մէջ, որ հրամայում է օրինաւորը եւ նրանց արգիւում է ապօրինութիւնը, եւ որ բարի կերակուրները նրանց համար սուրբ եւ վատերը նրանց համար անժաքուր է հրատարակում, եւ նրանցից թեթեւացնում է նրանց բեռը եւ շղթաները ու նրանց վրայ են : Ուրիմն որոնք որ հաւատում են նրան եւ նրան յարգում ու նրան օգնում եւ այն լոյ-

աին հետեւում, որ իջեցրուել է նրա հետ, նրանք երջանիկ են:

157. Ասա՛, «ո՛վ մարդիկ, ես Աստուծոյ մարգարէն եմ ձեր ամենից համար»:

158. Որ նրանն է երկնքի ու երկրի իշխանութիւնը. շրկայ մի ուրիշ Աստուած նրանից ջոկ. նա է կենդանացընում եւ մեռցնում, հիմայ հաւատացէ՛ք Աստուծուն եւ նրա ուղարկւած անգրագէտ մարգարէին, որ հաւատում է Աստուծուն եւ նրա խօսքերին, եւ հետեւեցէ՛ք նրան որ ուղիղ առաջնորդէք»:

159. Եւ Մովսէսի ժողովրդիցը մի խումբ կայ, որ առաջնորդում է ճշմարտութեամբ եւ ինքը նրանով արդար վարվում:

160. Եւ մենք նրանց տասներկու ցեղի ենք բաժանել իբրեւ տոհմեր, եւ Մովսէսին յայտնութիւն աւեցինք երբ նրա ժողովուրդը նրանից խմելու ջուր էր ուզում թէ «զարկ գաւազանովդ քարին», եւ տասներկու աղբիւր բղխեց այնպէս որ ամեն մարդ իր խմելու տեղը գիտէր: Եւ մենք նրանց վրայ ամպ հովանի շինեցինք եւ իջեցրեց մանանան եւ լորամարդիները նրանց, թէ «կերէ՛ք այդ բարիքներիցը, որ ձեզ տալիս ենք իբրեւ կերակուր» • եւ նրանք ոչ թէ մեզ անիրաւութիւն արեցին, այլ իրանց անձերին էին անիրաւութիւն անում:

161. Եւ նրանց աւեց, թէ «այս քաղաքում բնակւեցէ՛ք. եւ կերէ՛ք նրանից ուր որ ուզում էք » եւ ասացէ՛ք «հիթթաթուն» եւ մտէ՛ք դռնովը երկրպագելով. եւ մենք կը ներենք ձեզ ձեր սխալմունքները եւ աւելի կը տանք բարեգործներին»:

162. Այն ժամանակ նրանցից անիրաւները փոխեցին խօսքը, որ իրանց աւած էր մի ուրիշից • եւ մենք նրանց պատուհաս ուղարկեցինք երկնքից իրանց անիրաւութեան համար»:

163. Եւ հարցուր նրանցից այն քաղաքի մասին, որ ծովի մօտն էր, երբ նրանք չարաթը պղծեցին, արեւ-

բաթ օրը ձուկերը նրանց երեւացին յայտնապէս, բայց այն օրը որ շաբաթ չըպահնցին, չ'երեւացին: Մենք նրանց այսպէս փորձեցինք նրանց արած շարութեան համար:

164. Եւ երբ նրանցից մի խումբ ասաց «ինչո՞ւ համար էք խրատում մի ժողովրդի, որին Աստուած վրձացնում է եւ կամ սատրիկ պատիժով պատժում»: Նըրանք էլ ասացին, «իրբեւ ներողութեան խնդրածք ձեր Տիրոջից, եւ գուցէ երկիւղած կը դառնան»:

165. Իսկ երբ մոռացան այն որ իրանց յիշեցրած էր, մենք ազատեցինք նրանց, որ վատ բաներով զգուշացնում էին արգիլելով եւ անխրատութիւն անողներին իրանց արած շարութեան համար շարաշար պատժեցինք:

166. Իսկ երբ յամառաբար զանց էին անում այն բանը, որ մենք նրանց արգիլել էինք, ասացինք նրանց, «կապիկներ եղէ՛ք, մերժւածնե՛ր»: Եւ երբ քո Տէրը նրանց յայտարարեց թէ նրանց անպատճառ այնպիսի մարդիկ է ուղարկելու, որ նրանց շարաշար տանջեն, որովհետեւ քո Տէրը շուտով հաշիւ տեսնող է, նաեւ ներող ողորմած է:

167. Եւ մենք նրանց բաժին բաժին արեցինք իբրեւ ցեղեր երկրի վրայ, որ նրանցից ոմանք բարեպաշտ են եւ ոմանք սրա հակառակ. եւ մենք նրանց փորձեցինք բարիքներով եւ չարիքներով որպէս զի դարձի դան:

168. Նրանցից յետոյ յաջորդեց մի սերունդ, որ ժառանգեց զիրքը, որ այս աշխարհի բարիքներն են բռնում եւ ասում, «սա մեզ կը ներէ»: Եւ եթէ նրա նըման էլի մի բարիք է գալիս նրանց, էլի բռնում են: Ապա մի՞թէ նրանց հետ զրքի պայման չէ դրւած, որ Աստուծոյ մասին միմիայն ճշմարտութիւնը պիտի խօսեն: Եւ քննում ենք նրանում եղածը: Եւ հանդերձ եւալ աշխարհը աւելի լաւ է երկիւղածների համար: Մի՞թէ չէք հասկանում:

169. Եւ նրանք որ գիրքը բռնուով եւ աղօթքը կատարուով են, — ահա՛ մենք բարեգործների վարձքը չենք կորցնի:

170 Եւ երբ մենք սարը նրանց վրան բարձրացրեցինք իբրեւ հովանի եւ նրանք կարծուով էին, թէ վար է ընկնելու իրանց վրայ, ա ս ա ց ի ն ք, «ամուր բռնեցէ՛ք ինչ որ ձեզ սուեցինք, եւ նրանուով եղածը յիշիցէ՛ք, որ երկիւղած լինէք»:

171. Եւ երբ քո Տէրը Աղամի որդկանց մէջքերիցը նրանց սիրունդնեքին հանեց եւ իրանց դէմ վկայելու եց, թէ «ես ձեր Տէրը չեմ», նրանք էլ ա ս ա ց ի ն, «այո՛, մենք վկայուով ենք», որ յարութեան օրն ասէք, «մենք այս մասին անփոյթ էինք»

172. Կամ դուք ասէ՛ք «իրաւ է մեր հայրերն առա կուպաշտ էին եւ մենք նրանց սիրունդն ենք եղել նրանցից յետոյ: բայց դու մթթէ մեզ կը փճացնես այն բանի համար որ արել են ունայնագործները»:

173. Մենք այսպէս բացատրուով ենք նշանները, որ դարձի գաք:

174. Եւ դու կարգա՛ նրանց համար նրա պատմութիւնը, որ մենք նրան տեցինք մեր նշանները, բայց նա նրանցից ետ քաշեց եւ հետեւեց սատանային, եւ խարւածներէն եզաւ:

175. Եւ եթէ կամենայինք, նրան կը բարձրացնէինք նրանով, սակայն նա թեքեց դէպի երկիրը եւ հետեւեց իր հաճոյթին: Հիմայ նա նման է այն շանը, որ լեզուն դուրս է քաշում եթէ նրան քշես, եւ լեզուն դուրս է քաշում եթէ նրան թողես: Սա նման է այն ազգին որ մեր նշանները սուտ են համարում: պատմի՛ր նրանց այս պատմութիւնը, որպէսզի մտածեն:

176. Վաս է այս օրինակը այն ազգի համար, որ մեր նշանները սուտ են համարում եւ իրանք իրանց վնասում:

177. Որին Աստուած է առջնորդում, նա է առաջնորդւածը, իսկ որոնց Աստուած մոռնեցնում է, նրանք են վնասւածները:

178. Մենք արդէն զեւերից եւ մարգկանցից շատերին պատրաստել ենք գժոխքի համար, որոնք սրտերունեն որ չեն հասկանում, եւ նրանք աչքեր ունեն, որ նրանցով չեն տեսնում, եւ ականջներ ունեն, որոնցով չեն լսում, նրանք անասուններին են նման, այո՛ նրանք առաւել եւս մոլորած են. նրանք անփոյթներ են:

179. Գեղեցիկ անուներն Աստուծունն են, նրանցով աղօթք արէ՛ք նրան, եւ ձգեցէ՛ք նրանց որ հերձաւածօրէն են խօսում նրա անուների վերաբերմամբ: նրանք իրանց արածի հատուցումը ստանալու են:

180. Եւ մեր ստեղծաներիցը մի ազգ կայ, որ ճշմարտութեամբ են առաջնորդում եւ նրանով վարվում:

181. Իսկ նրանք որ մեր նշանները սուտ են համարում, մենք նրանց աստիճան աստիճան պատժելու ենք, որովհետեւ չեն հասկանում:

182. Եւ ես պիտի կատարեմ նրանց դէմ, որովհետեւ իմ դաւը հաստատ է:

183. Մի՞թէ չեն խորհում որ նրանց ընկերումը դնեն չկան, որ նա միմիայն որոշ խրատիչ է:

184. Մի՞թէ մտիկ չեն անում երկնքի եւ երկրի թագաւորութեանը եւ թէ Աստուած ինչ բան է ստեղծել եւ թէ գուցէ մօտեցել է իրանց վախճանը: Ուրեմն սրանից յետոյ էլ ի՞նչ խօսքի են հաւատալու:

185. Աստուած որին որ մոլորեցնում է, նրա համար այլեւս առաջնորդող չի լինի. եւ նա թողում է, որ ապուշանան իրանց անհնազանդութեան մէջ:

186. Վեզնից կը հարցնեն ժամի մասին, թէ երբ է նրա որոշած ժամանակը: Ասա՛, «նրա գիտութիւնը միմիայն իմ Տիրոջ մօտ է. նա միայն իրան այն ժամանակին կը յայտնէ նրան, որ երկնքի եւ երկրի համար ծանրացած կը լինի վիճակը. նա ուրիշ կերպ չի գայ, եթէ ոչ յանկարծակի»:

187. նրանք քեզանից կը հարցնեն իբր թէ տեղեակ

ևս նրան: Ասա՛, թէ «նրա գիտութիւնը միմիայն Աստուծոյ մօտ է»: Բայց մարդկանցից շատերը սա չեն հասկանում:

188. Ասա՛, «ես Աստուծոյ կամեցածիցը ջոկ իմ անձի համար մի բան չեմ կարող անել՝ ոչ օգուտ ոչ վնաս. եւ եթէ ես ծածուկ բաները գիտենայի, ես հարուստ կը լինէի բարիքներով եւ ինձ մի չարիք չէր պատահէ: Բայց ես միմիայն խրատիչ եւ աւետիչ եմ հաւատացեալ մարդկանց համար:

189. Նա ձեզ ստեղծել է մէկ հատ հոգուց, եւ նրանից շինել է նրա կինը, որ նրա մօտ բնակուի. եւ երբ նա նրան մերձացաւ, նա յղի եղաւ մի թեթեւ յղութիւնով, եւ նրանով ման եկաւ: Բայց երբ ծանրացու երկուսն էլ կանչեցին իրանց Տէր Աստուծուն, «եթէ դու մեզ մի բարեպաշտ տաս, մենք շնորհակալ կը լինենք»:

190. Եւ երբ նրանց մի բարեպաշտ աւեց այն մամանակ երկուսն էլ աստուածը նկերներ շինեցին նրանց տածի պատճառովը: Բայց քա՛ւ լիցի որ Աստուած ունենայ նրան շինած ընկերները:

191. Միթէ նրան ընկեր են տալիս այնպիսիներ, մի բան չեն ստեղծել եւ իրանք ստեղծւած են, եւ նրան չեն կարող մի օգնութիւն հասցնել եւ ոչ էլ իրանց անձերին օգնել:

192. Եւ երբ դուք նրանց դէպի ուղիղ ճանապարհը կը հրաւիրէք, նրանք ձեզ չեն հետեւի. ձեզ համար միեւնոյնն է, թէ նրանց հրաւիրէք թէ լռէք:

193. Ահա՛ նրանք, որոնց դուք բարի Աստուածանից աղօթք էք անում, ծառաներ են ձեզ պէս. արդ կանչեցէ՛ք նրանց, եւ թող տէք որ ձեզ պատասխանեն. եթէ դուք ճշմարիտ էք:

194. Նրանք սոսներ ունե՞ն որ նրանցով ման գան, կամ ձեռներ ունե՞ն որ նրանցով բռնեն, կամ աչքեր ունե՞ն, որ նանցով տեսնեն, կամ ականջներ ունե՞ն որ նրանցով լսեն: Ասա՛, «կանչեցէ՛ք ձեր աստուած»

ընկերներդ, յետոյ ինձ դաւեր գրեցէք. ես ձեզ չեմ ըս-
պասի» :

195. Ահա՛ ի՞մ պաշտպանն Աստուած է որ գիրքն
իջեցրիւ է. եւ նա պաշտպանում է բարեպաշտներին :

196. Եւ նրանք, որանց դուք բայի նրանից աղօթք
էք անում, շին կարող ձեզ օգնել եւ ոչ էլ իրանց կ'օգ-
նեն :

197. Եւ եթէ նրանց կանչէք առաջնորդութեան, չեն
լսի. եւ կը տեսնես որ քեզ սպասում են, բայց չեն
տեսնում :

198. Ներողամիտ եղի՛ր եւ օրինաւորին հրամայի՛ր
եւ ագէտներէցը հետացի՛ր :

199. Եւ եթէ ստտանայիցը մի փորձութիւն քեզ փոր-
ձելու լինի, դու Աստուծուն սպասի՛նի՛ր, որովհետեւ
նա լսում գիտում է :

200. Ահա՛ նրանք որ երկիւղած են. երբ սատանա-
յիցը նրան մի փորձանք պատահէ, կը յիշեն եւ այն
ժամանակ նրանք կը տեսնեն :

201. Եւ իրանց եզրայրները նրանց դայթակղութեան
մէջ կը տանեն եւ յետոյ նրանք չեն սրծնի :

202. Եւ երբ դու նրանց մօտ կըդաս հրաշքով, ասելու-
են, «չէ՞ որ այդ ասածներդ հաւաքած բան է» : Ասա՛,
«ես իմ Տիրոջ կողմանէ ինձ եղած յայտնութեանն եմ
հետեւում» : Սա տեսողութիւն է ձեր Տիրոջ կողմանէ
եւ ճանապարհացոյց եւ ողորմութիւն հաւատացեալ
մարդկանց համար :

203. Եւ երբ կարդացվում է Ղուբանը, ականջ դրէ՛ք
նրան եւ լսեցէ՛ք, որպէս զի ողորմութիւն գանէք :

204. Եւ յիշի՛ր քո Տիրոջը քո սրտումը խոնարհ եւ
հեզ կերպով ասանց բարձր ձայնով խօսելու՝ առաւօտ-
ները եւ իրիկունները, եւ անհոգներէցը մի՛ լինիր :

205. Ահա՛ նրանք, որ քո Տիրոջ մօտ են, նրան ծա-
ռայելուց չեն հպարտանում, փառաւորում են նրան
եւ երկրպագում :

8) Ս Ո Ւ Ր Է Է Ն Ֆ Ա Լ

Մէդիկնէական, Եօթանաւուն վեց այլէ

Գթած, ողորմած Աստուծոյ անունովը

1. Քեզնից կը հարցնեն աւարի մասին: Ասա՛ «աւարը Աստուծունը եւ նրա մարգարէինն է»: Որինքն վախեցէ՛ք Աստուածանից եւ խաղաղութիւն արեցէ՛ք ձեր մէջը եւ հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէին, եթէ հաւատացեալներ էք:

2. Անա՛ հաւատացեալները նրանք են, որ Աստուծուն յիշելիս ստկում է նրանց սրտերը, եւ երբ կարգացում է նրանց համար նրա նշանները՝ շատանում է նրանց հաւատքը եւ նրանք տպաւինում են իրանց Տիրոջը:

3. Որոնք կատարում են ազօթքը եւ ինչ որ նրանց պարգեւել ենք՝ նրանից ողորմութիւն են տալիս:

4. Սրանք են ճշմարտապէս հաւատացեալները. նրանց համար աստիճաններ կան իրանց Տիրոջ մօտ, նաեւ ներողութիւն եւ ազնիւ պարգիւ:

5. Ինչպէս Տէրը քեզ քո տանիցը դուրս բերեց ճշմարտութեամբ, — հաւատացեալներից մի մասը տաճութիւն ունէր:

6. Քեզ հետ վիճում էին ճշմարտութեան մասին թէ՛ Լաւաղէն յայտնուած էր իբր թէ գէպի մահն են քշում, մինչդեռ իրանք տեսնում էին:

7. Եւ երբ Աստուած ձեզ խոստացել էր, որ այն երկու գունդերիցը մէկը ձերն է, եւ դուք բողձում էիք որ անդէնները ձերը լինեն, իսկ Աստուած կամենում

էր, որ ճշմարտութիւնը ճշմարտացնէ իր խօսքովը եւ կտրէ անհաւատների արմատը:

8. Որ ճշմարտութիւնը ճշմարտացնէ եւ ունայնութիւնը ունայնացնէ, թէեւ տոճութիւն ունենան անհաւատները:

9. Երբ դուք պաղատեցիք ձեր Տիրոջը, նա ձեզ պատասխանեց, թէ ահա՛ ես ձեզ կ'օգնեմ հազար հրեշտակներով իրար ետեւից շարւած:

10. Եւ Աստուած սա արեց լոկ իբրեւ աւետիք, եւ որ ձեր սրտերը նրանով հանգստանան, եւ օգնութիւնը միմիայն Աստուծոյ կողմանէ է, որովհետեւ Աստուած հօօր իմաստուն է:

11. Երբ քունը ձեզ վրայ բնկաւ իբրեւ օպահովութիւն նրա կողմանէ, եւ նա ձեզ համար ջուր տեղաց երկնքիցը, որ նրանով ձեզ մաքրէ եւ սատանայի պղծութիւնը ձեզնից վեր առնէ եւ ձեր սրտերը ամրացնէ եւ ձեր ոտները հաստատէ:

12. Երբ քո Տէրը յայտնեց հրեշտակներին, թէ ահա՛ ես ձեզ հետ եմ, ուրեմն հաստատեցէ՛ք նրանց որ հաւատում են, իսկ ես անհաւատների սրտի մէջը վախ եմ գցելու, ուրեմն կտրեցէ՛ք վիզերը եւ կտրեցէ՛ք նրանց ամեն մտերը:

13. Սա նրա համար է, որ Աստուծուն եւ նրա մարգարէին հակառակեցին, եւ ով որ հակառակի Աստուծուն եւ նրա մարգարէին, ահա՛ Աստուած խիստ պատժող է:

14. Այսուէ՛ն, ուրեմն ճաշակեցէ՛ք այն, եւ ահա անհաւատների համար կրակի տանջանքը կայ:

15. Ո՛վ հաւատացեալներ, երբ դուք խումբովին անհաւատների դէմը դուրս գաք, քամակ մի՛ դարձնէք:

16. Եւ ով որ այն օր քամակը նրանց դարձնէ բացի այն որ շուռ է եկել պատերազմելու համար կամ թէ մի խումբի մօտ է գնալիս եղել, նա արդէն Աստու-

ծոյ բարկութեան տակին է, եւ նրա բնականորդը գժողութիւնն է, եւ սա մի ետ դառնալու վատ տեղ է:

17. Եւ դուք չ'սպանեցիք նրանց, այլ Աստուած սպանեց նրանց, եւ դու չը գցեցիր երբ գցեցիր, այլ Աստուած գցեց, եւ որ նա հաւատացեալներին մի գեղեցիկ փորձութիւնով փորձէ իր կողմից, որովհետեւ Աստուած լսում է, գիտէ:

18. Այսպէս, եւ ահա՛ Աստուած անհաւատների նկնգութիւնը ոչնչացնող է:

19. Եթէ յաղթութիւն էք ուզում, արդէն կեկել է յաղթութիւնը, իսկ եթէ դադարէք, աւելի լաւ կը լինի ձեզ համար: Բայց եթէ ետ դառնաք, մենք էլ ետ կը դառնանք եւ ձեր դունդը ձեզ ոչինչ չի օգնի, թէ եւ շատ էլ լինի, եւ ահա Աստուած հաւատացեալների հետքն է:

20. Ո՛վ հաւատացեալներ, հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէին, եւ նրանից ետ մի՛ քաշիք, քանի որ դուք լսում էք:

21. Եւ նրանց մի՛ նմանէք որ ասում են թէ լըսեցինք քայց չեն լսել:

22. Իրաւ Աստուծոյ առաջին ամենաչար գազանները խուլ եւ համբներն են, որ չեն հասկանում:

23. Եւ եթէ Աստուած նրանցում մի բարութիւն գիտենար, նրանց լսողութիւն կը տար, քայց եթէ նրանց լսողութիւն էլ տար, նրանք ետ կը դառնային եւ ետ կը քաշէին:

24. Ո՛վ հաւատացեալնե՛ր, պատասխան տէ՛ք Աստուծուն եւ մարգարէին, երբ նա ձեզ կանչում է այն քանին, որ ձեզ կը կենդանացնէ, եւ իմացէ՛ք որ Աստուած մարդուս եւ նրա սրտի մէջ տեղն է, եւ դուք նրա մօտ էք հաւաքելու:

25. Եւ վախեցէ՛ք ապստամբութիւնից, որ չը պղչի մանաւանդ ձեր մէջը եղող անիրաւներին եւ իմացէ՛ք Աստուած սաստիկ պատժող է:

26. Եւ յիշեցէ՛ք, երբ դուք քիչ եւ տկար էիք եր-

կրումը եւ վախենում էիք մարդիկ ձեզ կուլ կը տան, նա ձեզ պատսպարեց եւ զօրացրեց իր օգնութիւնովը եւ ձեզ կերակրեց բարիքներով, որ շնորհակալ լինէք:

27. Ո՛վ հաւատացեալներ, Աստուծուն եւ մարգարէին մի՛ խաբէք, նաեւ մի՛ դրժէք գիտենալով ձեր խոստումները:

28. Եւ իմացէ՛ք, որ ձեր ստացւածքը եւ ձեր որդիները փորձութիւն են, իսկ Աստուծոյ մօտ մեծ վարձք կ'այ:

29. Ո՛վ հաւատացեալներ, եթէ դուք Աստուածանից վախենաք, նա ձեզ համար փրկութիւն կը շինէ եւ ձեր չարութիւնները կը քաւէ ձեզանից եւ կը ներէ ձեզ . եւ Աստուած մեծ շնորհքի տէր է:

30. Եւ երբ անհաւատները դաւեր սարքեցին, որ քեզ բռնեն կամ քեզ սպանեն կամ քեզ աքսորեն եւ դաւադիր էին, եւ Աստուած էլ դաւադիր եղաւ, եւ ամենից լաւ դաւադիրը Աստուած է:

31. Եւ երբ մեր նշանները կարգացոււմ են նրանց, ասում են, «մենք լսեցինք, եթէ ուզենք, մենք էլ սրահմանը կ'ասենք, սա մի բան չէ եթէ ոչ հիւնքի առասպելները»:

32. Եւ երբ նրանք ասացին, «ով Աստուած, եթէ սա քո կողմանէ եկած ճշմարտութիւն է, այն ժամանակ երկրէքիցը մեր վրայ քարեր տեղա՛. կամ մեզ չարաչար տանջի՛ր»:

33. Բայց Աստուած նրանց չէ՛ր պատժի, որովհետեւ դու նրանց մէջն էիր. եւ Աստուած նրանց չը պատժեց որովհետեւ զղացին:

34. Եւ ինչու՞ համար Աստուած նրանց չը պիտի պատժէր. քանի որ նրանք արգիլում էին սուրբ տաճարիցը եւ իրանք նրա պաշտպանը չէին, այլ նրա պաշտպանը երկրադածներն են. բայց նրանցից շատերը չին հասկանում:

35. Նրանց աղօթքը տաճարի մօտ միայն սուլիլ ու ծափ տալ էր. ուրիմն հիմայ ճաշակեցէ՛ք ձեր չը հաւա-

տացած բանք:

36. Ահա՛ նրանք որ չեն հաւատում, իրանց ստաց-
ւածքը տալիս են, որ Աստուծոյ ճանապարհիցը արգի-
լեն: Արդ թող տան այդ, յետոյ պիտի զղջան, երբ կը
յաղթւեն:

37. Եւ նրանք որ չեն հաւատում, զէպի գոօխքն են
հաւաքելու,

38. Որ Աստուած չարը բարիցը ջոկէ, եւ չարերը
միմիանց մօտ է բերելու եւ ամենը դիզելու եւ գոօխքը
զցելու: Նրանք կորածներն են:

39. Ասա՛ նրանց որ չեն հաւատում, որ եթէ դադա-
րէն, կը ներուի նրանց ինչ որ արդէն եղած անցած է,
բայց եթէ կրկին գործեն, նախնիքների պէս է լինե-
լու:

40. Եւ զուք պատերազմեցէ՛ք նրանց հետ սպանե-
լով մինչեւ որ հակառակութիւն չը լինի եւ բոլոր
կրօնքը Աստուծունը լինի: Եւ եթէ գաղարեն, ահա
Աստուած տեսնում է նրանց արարքը.

41. Իսկ եթէ նրանք հա դառնան, զուք իմացէ՛ք
որ Աստուած ձեր պաշտպանն է: Ոհ ի՛նչ լաւ պաշտպան
եւ ի՛նչ լաւ օգնական:

42. Եւ իմացէ՛ք, թէ ինչ բան որ աւար առնէք,
նրա հինդերորդը Աստուծունը եւ մարգարէինն է եւ
ազգականներինն եւ որբերինն եւ աղքատներինն եւ
ճանապարհորդներինն է, եթէ զուք հաւատում էիք
Աստուծուն եւ այն բանին, որ փրկութեան օրը երկու
գունդերի իրար զարկած օրը մեր ծառային իջնցրինք.
Եւ Աստուած ամենակարող է:

43. Երբ զուք հովիտի այս կողմին եւ նրանք հետեւ
միւս կողմին էին եւ ձիաւորները ձեր ցած կողմին,
եւ թէեւ համաձայնել էիք. դարձեալ իրար հետ մէկ
չէիք, թէ ուր պէտք էր հանդիպէիք, բայց Աստուած
որոշեց բանը որ կատարուեց էլ:

44. Որ այն որ կորչելու էր յայտնապէս կորչէր, եւ
այն որ ապրելու էր, յայտնապէս ապրէր, եւ ահա
Աստուած լսող իմացող է:

45. Երբ նա քեզ ցոյց տւեց նրանց երազում, որ քիչ էին. եթէ նա նրանց քեզ շատ ցոյց տւած լինէր, դուք վախեցած կը լինէիք, եւ այդ բանում իրար հետ կուած. բայց Աստուած պաշտպանեց, որովհետեւ սրտագէտ է:

46. Եւ երբ դուք իրօք հանդիպեցիք, նա ձեր աչքերին նրանց քիչ երեւացրեց, եւ նոյնպէս էլ ձեզ նրանց աչքերին քիչացրեց, — Աստուած է բանը որոշում, որ կատարուում էլ է. եւ ամեն բան Աստուծոյ է վերաբերեալ:

47. Ո՛վ հաւատացեալներ, երբ մի գունդ գիմաւորէք, հաստատ կացէ՛ք եւ շատ յիշեցէ՛ք Աստուծուն որ յաջողէք:

48. Եւ հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէին եւ մի՛ վիճէք, որովհետեւ վախկոտ կը դառնաք եւ ձեր հոտը կը գնայ. ուրեմն գիմացէ՛ք, որովհետեւ Աստուած գիմացողների հետն է:

49. Եւ նրանց մի՛ նմանէք, որ անամօթաբար իրենց տներիցը, դուրս եկան, որ մարդկանց երեւան, եւ Աստուծոյ ճանապարհիցն արգիլում են, բայց Աստուած գիտէ նրանց արածը ամեն կողմից:

50. Եւ երբ սատանան պատրաստել էր նրանց անեւ լիքները, եւ ասել, «Թէ ոչ մի մարդ ձեզ այսօր չի յաղթի, որովհետեւ ես ձեզ մօտ եմ»: Բայց երբ երկու գունդերը երեւան ելան, ընկրկեցաւ նա եւ ասաց, «Ես ձեզ հետ գործ չ'ունեմ. ես բան եմ տեսնում, որ դուք չէք տեսնում, ես վախում եմ Աստուածանից», եւ Աստուած խիստ պատժող է:

51. Այն ժամանակ կեղծաւորները, այսինքն նրանք, որոնց սրտերը տկար էին ասում էին, «այս մարդկանցը խաբել է իրանց կրօնքը»: Սակայն ով որ Աստուծուն ապաւինէ, ահա Աստուած հզօր իմաստուն է:

52. Եւ եթէ տեսնէիք, որ հրեշտակները անհաւատներին մեռցնում եւ երեսներին ու քամակներին խրփում են՝ ասելով, «Ճաշակեցէ՛ք այրւելու տանջանքը»:

53. Սա ձեր ձեռքերի արածի համար է, եւ ահա Աստուած իր ծառաներին անիրաւութիւն անող չէ:

54. Փարաւօնի ցեղի պէս եւ իրանցից առաջ եղածների պէս Աստուծոյ նշաններին չը հաւատացին, եւ Աստուած էլ պատժեց նրանց իրանց մեղքերի համար, որովհետեւ Աստուած զօրաւոր է խիստ պատժող է:

55. Սա նրա համար է, որ Աստուած իր շնորհքը, որ նա շնորհել է մի ազգի, այլեւս չի փոխի մինչեւ նրանք իրանց սրտերում եղածը չը փոխեն. եւ ահա՛ Աստուած լսող իմացող է:

56. Ինչպէս Փարաւօնի ցեղը եւ նրանցից առաջ եղածները՝ սրանք էլ սուտ համարեցին իրանց Տիրոջ նշանները, եւ մենք փճացրեցինք նրանց իրանց մեղքերի պատճառով, եւ Փարաւօնի ցեղը ընկղմեցրինք, որովհետեւ բոլորն էլ անիրաւներ էին:

57. Ահա՛ գազաններից չար են Աստուծոյ աօաջին նրանք որ անհաւատներ են եւ չեն հաւատում:

58. Որոնց հետ դու դաշխնք ես դրել, բայց նրանք իրանց ուխտը դրժում են ամեն անգամ եւ չեն երկընչում:

59. Եւ եթէ դու պատերազմումը նրանց յաղթես այն ժամանակ նրանց ցիր ու ցան արա իրանց յետագայների համար որ յիշեն:

60. Իսկ եթէ մի ժողովրդի խաբէութիւնիցը վախում ես, այն ժամանակ հաւասար կերպով հատուցրու նրանց, որովհետեւ Աստուած խաբեբաններին չի սիրի:

61. Եւ անհաւատները թո՛ղ չը կարծեն, որ կը յաջողին, որովհետեւ նրանք նւաճողներ չեն:

62. Եւ որչափ որ կարող էք, պատրաստեցէք նրանց դէմ զօրքով եւ ձիաւոր դունդերով, որ վախեցնէք դրանց Աստուծոյ թշնամուն եւ ձեր թշնամուն եւ բացի նրանցից նաեւ ուրիշներին, որոնց դուք չէք ճանաչում բայց Աստուած ճանաչում է: Եւ դուք ինչ որ տալիս էք Աստուծոյ ճանապարհի, համար նա ձեզ եւ կը հատուցանուի, եւ դուք չէք գրկուի:

63. Եւ եթէ նրանք հակում ունեն դէպի խաղաղու-

Թիւնը, դու էլ հակի՛ր այն կողմը, եւ Աստուծուն
ապաւինի՛ր. որովհետեւ լսող իմացող է:

64. Եւ եթէ նրանք ուզում են քեզ խաբել, ահա՛
Աստուած քեզ բաւական է, նա է որ քեզ կը հաստատէ
իր օգնու թիւնովը եւ հաւատացեալներովը, եւ նրանց
սրտերը կապել է իրար հետ: Եթէ դու բոլոր աշ-
խարհքի ունեցածը վատնած լինէիր, նրանց սրտերը
չէիր կապի իրար հետ, բայց Աստուած կապից նրանց
իրար հետ, որովհետեւ նա հզօր իմաստուն է:

65. Ո՛վ մարգարէ, Աստուած քեզ բաւական է, եւ
նրանց էլ որ հաւատացեալներիցը հետեւում են քեզ:

66. Ո՛վ մարգարէ, գրգռի՛ր հաւատացեալներին զէ-
պի պատերազմ: Եթէ ձեզնից քսան հատ համբերող
լինեն. երկու հարիւրին կը յաղթեն. եւ եթէ ձեզնից
հարիւրը լինի. հազար անհաւատների կը յաղթեն,
որովհետեւ նրանք անհասկացող ազգ են:

67. Հիմայ Աստուած թեթեւացրեց ձեզնից, եւ
գիտէ որ ձեր մէջը տկարներ կան: Ուրեմն եթէ ձեզ-
նից հարիւր համբերողներ լինեն, նրանք երկու հա-
րիւրին կը յաղթեն, եւ եթէ ձեզնից հազարը լինեն,
Աստուծոյ հրամանովը երկու հազարին կը յաղթեն, եւ
Աստուած համբերողներին հետ է:

68. Մի մարգարէ հրաման չէ ունեցել, որ գերիներ
ունենայ, մինչեւ երկրի վրայ մի մեծ կոտորած չանէ:
Գուք այս աշխարհքի բարիքներն էք ուզում բայց
Աստուած ուզում է միւս աշխարհքը, եւ Աստուած հզօր
իմաստուն է:

69. Եւ եթէ Աստուծոյ կողմանէ գիրք չը լինէր ա-
ռաջուց, ձեր արածը համար անպատճառ մեծ պատիժ
կը դպչէր ձեզ:

70. Մ'ըզ կիրէ՛ք ձեր արած աւարիցը իբրեւ մաքուր.
Իբրեւ բարի, եւ վախեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ
Աստուած ներող ողորմած է:

71. Ո՛վ մարգարէ, ասա՛ ձեր ձեռքում եղած գերիներ-
քին, «եթէ Աստուած ձեր սրտերում մի բարիք տեսնէ,

նա ձեզնից առւածի տեղը աւելի լաւը կտայ եւ ձեզ կը ներէ, եւ Աստուած ներող ողորմած է:


72. Եւ եթէ նրանք ուզում են քեզ խարել, արգէն նրանք վաղուց են խարել Աստուծուն. եւ նա նրանց վրայ տիրեց: Եւ Աստուած գիտացող իմաստուն է:

73. Ահա՛ նրանք որ հաւատում են եւ գաղթել են ու պատերազմել իրանց ստացւած քովն ու անձերովը Աստուծոյ ճանապարհում, եւ նրանք էլ որ ապաստանաբան տեղին եւ օգնեցին, նրանք իրար պաշտպան են, իսկ նրանք որ հաւատացեալ են բայց չեն գաղթել, նրանց հետ դուք ոչ մի կապակցութիւն չունէք, մինչև կը գաղթեն: Եւ եթէ ձեզնից կրօնքի մասի օղնութիւն կը խնդրեն, դուք պարտ էք օգնել բացի այն ցեղի դէմ, որ ձեր եւ նրանց մէջ դաշինք կայ: Աստուած տեսնում է, թէ դուք ինչ էք անում:

74. Եւ անհաւատներն էլ իրար գաշնակիցներ են: Եւ եթէ սա չ'անէք, երկրի վրայ խոռլութիւն եւ մեծ ապականութիւն կը լինի:

75. Եւ նրանք որ գաղթել են եւ պատերազմել Աստուծոյ ճանապարհում, եւ նրանք էլ որ ապաստանաբան են տեղ եւ օգնել, նրանք ճշմարտապէս հաւատացեալներ են. նրանք ունեն ներողութիւն եւ ազնիւ ապրուստ:

76. Եւ նրանք որ այսուհետեւ կը հաւատան եւ կը գաղթեն ու ձեզ հետ միացած կը պատերազմեն, նրանք ձեզնից են եւ արիւնակիցները իբար գաշնակից են Աստուծոյ գրքի պէս, որովհետեւ Աստուած ամենագէտ է:



9) Ս Ո Ւ Ր Է Ք Ո Վ Բ Է

Երէզնէական. Հարիւր երեսուն այլ

1. Ազատութիւն Աստուծոյ եւ նրա մարգարէի կողմանէ նրանց համար որոնց հետ դուք կուպաշտաներիցը դաշինք էք արել:

2. Արդ երկրիս վրայ չորս ամիս ազատ ման եկէ՛ք. եւ իմացէ՛ք դուք չէք կարող Աստուծուն ակարացնել. բայց Աստուած անհաւատներին խայտառակող է:

3. Եւ մեծ ուխտագնացութեան օրը մունետիկը կանչու՛մ է Աստուծուն եւ նրա մարգարէի կողմանէ, թէ Աստուած լուծւած է կուպաշտաներիցը եւ նրա մարգարէն: Եւ եթէ ապաշխարէք, ձեզ համար աւելի լաւ կը լինի, իսկ եթէ ետ դառնաք իմացէ՛ք դուք չէք կարող Աստուծուն տկարացնել: Լո՛ւր տուք անհաւատներին մի ցաւալի տանջանք:

4. Բացի այն կուպաշտաներից, որոնց հետ դուք դաշինք էք դրել եւ նրանք ձեզ դէմ ոչ մի բան չեն դրժել եւ ոչ մէկին էլ չեն օգնել ձեզ դէմ: Ուրիմն կատարեցէ՛ք նրանց համար իրանց դաշինքը մինչեւ իրանց ժամանակը, որովհետեւ Աստուած սիրում է երկիւղածներին:

5. Բայց երբ սուրբ ամիսները վերջացան, այն ժամանակ սպանեցէ՛ք կուպաշտաներին որտեղ էլ նրանց գտնէք, եւ բռնեցէ՛ք նրանց եւ պաշարեցէք եւ նրանց համար ամեն անցքերում դարան մտէ՛ք: Եւ եթէ կ'ապաշխարեն եւ աղօթքը կը կատարեն եւ մաքրութեան հարկը կը վճարեն, այն ժամանակ նրանց ճանապարհը բաց թողեցէ՛ք, որովհետեւ Աստուած նեղ ողորմած է:

6. Եւ եթէ կոապաշաներից մէկը վարձով քո մօտք մտնել ուզէ, նրան վարձով բռնի՛ր, որ Աստուծոյ խօսքը լսէ, յետոյ նրան իր ապահով տեղը հասցրո՛ւ, նրա համար որ նրանք մի ազէտ ժողովուրդ են:

7. Ի՞նչպէս կարելի է, որ կոապաշաները Աստուծոյ եւ նրա մարգարէի հետ դաշինք ունենան, քացի նրբանցից որոնց հետ սուրբ տաճարումը դաշինք էք կապել. Լւ որքան ժամանակ նրանք ձեզ հաւատարիմ են, դուք ալ նրանց հաւատարիմ եղէ՛ք, որովհետեւ ականաւած սիրում է երկիրդածներին:

8. Ի՞նչպէս—եթէ ձեզ յաղթեն, ոչ արիւնակցութիւնը մի բանի տեղ կը դնեն եւ ոչ պարտականութիւնը. իրանց բերանովը ձեզ հաճելի են երեսում, քայց նրանց սրտերը մերժում է. եւ նրանցից շատերը անզգամներ են.

9. Աստուծոյ նշանները մի քիչ զինով ծախում են: ու նրա ճանապարհիցն արգիլում են. վա՛տ է ինչ որ նրանք անում էին:

10. Նրանք մի հաւատադեալի համար չին պահում ոչ արիւնակցութիւն եւ ոչ մի պարտականութիւն, եւ նրանք պատիրանազանցներն են:

11. Իսկ եթէ ապաշխարեն եւ աղօթքը կատարեն եւ մաքրութեպն հարկը վճարեն, այն ժամանակ ձեր կըրքօնքով եղբայրներն են. եւ մենք բացատրում ենք նըշաններս հասկացող մարդկանց համար.

12. Բայց եթէ նրանք իրանց դրած ուղտից յետոյ իրանց երգումը քանդեն եւ ձեր կրօնքին հայնոյեն, այն ժամանակ պատերազմեցէ՛ք անհաւատ ազգի հետը, որովհետեւ նրանք երգում չունեն, որպէս զի դադարեն:

13. Միթէ դուք չէ՞ք պատերազմի մի ժողովրդի հետ որ իրանց երգումը քանդում են եւ մարգարէն դուրս անելու էին աշխատում, եւ նախ եւ առաջ իրանք են սկսում: Միթէ՞ նրանցից վախում էք, աւելի կը վախելէ որ Աստուածանից վախենաք եթէ երկու դածներ էք:

14. Պատերազմեցէ՛ք նրանց հետ, եւ Աստուած էլ

նրանց պիտի պատժէ ձեր ձեռներովը, եւ պիտի ամա-
չեցնէ նրանց եւ ձեզ օգնէ նրանց յաղթելու համար եւ
առողջացնէ հաւատացեալների ժողովրդի սրտերը:

15. Եւ նրանց սրտմտութիւնը փարատէ, եւ Աստ-
ուած կը գառնայ զէպի որի կողմը որ ուզէ, եւ Աստ-
ուած զիտուն իմաստուն է:

16. Կամ կարծեցի՞ք թէ թողուցւած էք, եւ Աստ-
ուած չէ ճանաչում նրանց որ ձեզանից պատերազմում
են եւ Աստուածանից ու նրա մարգարէիցը եւ հաւա-
տացեալներիցը ջոկ մտերիմ բարեկամ չեն ընդունում:
բայց Աստուած զիտէ ձեր արարքը:

17. Կոպաշտներն իրաւունք չունեն Աստուծոյ աղօ-
թատեղիներն այցելելու, որ իրանց անհաւատութեամ-
բըն իրանց դէմ վկաներ են: Նրանց գործքերը կորած
են, եւ նրանք միշտ կրակումը պիտի մնան:

18. Ահա՛ միմիայն նա այցելէ Աստուծոյ աղօթասե-
ղիները, որ հաւատում է Աստուծուն եւ վերջի օրւան
կատարում է աղօթքը եւ տալիս է մաքրութեան հար-
կը եւ բացի Աստուածանից ոչինչից չէ վախենում:
գուցէ այսպիսիները առաջնորդեալներին են:

19. Միթէ՞ դուք ուխտաւորներին խմելիք տալը եւ
սուրբ տաճարի այցելութիւնը հաւասար էք անում նը-
րան, որ հաւատում է Աստուծոյ եւ վերջին օրւան եւ
պատերազմում Աստուծոյ ճանապարհում: Սրանք Աս-
տուծոյ առաջին հաւասար չեն. Աստուած անխրաւ-
մարդկանցը չի առաջնորդի:

20. Նրանք որ հաւատում եւ գաղթում եւ պատե-
րազմում են Աստուծոյ ճանապարհումը իրանց ստաց-
ւածքովը եւ իրանց անձերովը, — նրանք աւելի մեծ
ստախճան ունեն Աստուծոյ մօտ, եւ նրանք փրկւած
ներն են:

21. Նրանց Տէրը նրանց ողորմութիւն է խոստա-
նում եւ հաճութիւն եւ դրախտներ. որոնց մէջ նրանց
համար մշտապէս պարգեւներ կան:

22. Նրանք կը մնան յաւիտեան նրանց մէջ, որովհետեւ Աստուծոյ մօտ մեծ վարձք կայ:

23. Ո՛վ հաւատացեալներ, ձեր հոյրերին եւ եղբայրներին պաշտպան մի՛ ընդունէք, եթէ նրանք անհաւատութիւնը գերազատում են հաւատքից, ձեզնից ով նրանց զաշնակից ընդունէ, այդպիսիները անխրատներն են:

24. Աստ՛, «եթէ ձեր հայրերը եւ ձեր որդիքը եւ ձեր եղբայրները եւ ձեր կնիկները եւ ձեր ցեղը եւ այն ստացւածքը, որ դուք վաստակել էք, եւ առուտուրը, որի համար վախենում էք թէ չի ծախուի, եւ ձեր բնակարանները որոնց հաւանում էք, ձեզ համար աւելի սիրելի են քան թէ Աստուած եւ նրա մարգարէն եւ նրա ճանապարհում պատերազմելը, այն ժամանակ սպասեցէ՛ք մինչեւ որ Աստուած իր հրամանովը կը գայ, եւ Աստուած անզգամ մարդոցը չի առաջնորդի:

25. Աստուած արդէն շատ տեղերում ձեզ օգնել է եւ Հօնէյնի օրը երբ հիացած նայում էիք ձեր շատութեանը, բայց դա ձեզ ոչ մի բան էլ չ'օգնեց եւ երկիրը ձեզ համար նեղ եկաւ, որովհետեւ ինքը լայն էր. եւ դուք ետ դարձաք դէպի ետեւի կողմը:

26. Յետոյ Աստուած իր հովանին իջեցրեց իր մարգարէի եւ հաւատացեալների վրայ եւ գունդեր իջեցրեց, որոնք դու չ'էիր տեսնում եւ պատժեց անհաւատներին: Ահա սա է անհաւատների պատիժը:

27. Սակայն յետոյ Աստուած դէպի որին ուղում է՝ դառնում է, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

28. Ո՛վ հաւատացեալներ, իրաւ կռապաշտները պիղծ են, ուրիմն նրանք այս տարւանից յետոյ այլեւս չը մօտենան սուրբ տաճարին. իսկ եթէ վախենում էք սովից, այն ժամանակ Աստուած, եթէ կամենայ, ձեզ կը բաւականացնէ իր շնորհքովը, որովհետեւ Աստուած գիտուն իմաստուն է:

29. Պատերազմեցէ՛ք նրանց հետ, որ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրւան եւ պիղծ չեն

համարում Աստուծոյ եւ նրա մարգարէի պիղծ հրատարակածը եւ արդար դատաստան չեն անում նրանցից, որ գիրք է տրած նրանց, մինչեւ որ ձեռքով հարկը տան եւ ինք նւաստած լինեն:

30. Եւ հրէաներն ասում են, թէ Եզրասը Աստուծոյ որդի է. եւ քրիստոնեաներն ասում են թէ Մեսիան Աստուծոյ որդի է: Սա սոսկ նրանց բերանի խօսքն է, եւ կրկնում են այն, ինչ որ նրանցից առաջ եղող անհաւատներն ասել են: Աստուած ջարդէ՛ նրանց իրանց զբազարտութեան համար:

31. Նրանք իրանց վարդապետներին եւ ուրբիններին ընդունում են իբրեւ տէրեր բացի Աստուածանից եւ Մարիամի որդի Մեսիայից, թէ եւ նրանց պատւիրած է որ միմիայն մէկ հատ Աստուած պաշտեն. նրանից ջոկ ուրիշ Աստուած չը կայ. նա սուրբ է այն բանից որ նրան ընկերներ են դնում:

32. Նրանք ուզում են որ Աստուծոյ լոյսն իրանց բերաններովը հանգցնեն. բայց Աստուած մերժելու է այդ մինչեւ իրան լոյսը կատարեալ շինէ, թէեւ անհաւատներին անհաճելի լինի:

33. Նա է որ իր մարգարէին ուղարկել է ուղիղ առաջնորդութիւնով եւ ճշմարիտ կրօնքով, որ նրան յաղթող շինէ ամեն կրօնքների վրայ, թէեւ կոպապաշտներին անհաճելի լինի:

34. Ո՛վ հաւատացեալներ, իրաւի վարդապետներից եւ ուրբիններից շատերը ուտում են մարդկանց ստացւածքը զուր տեղը եւ մոլորեցնում են Աստուծոյ ճանապարհիցը: Արդ նրանց, որոնք դիզում են ոսկին եւ արծաթը եւ այդ չեն գործածում Աստուծոյ ճանապարհումը, ցաւալի տանջանք քարոզի՛ր:

35. Այն օրը պէտք է դրանք դժոխքի կրակումը կարմրացնուին եւ նրանցով խաբւին նրանց ճակատները, եւ կողքերը եւ մէջքերը: Սա նրա համար, որ դուք ձեր հոգիների համար հաւաքեցիք: Ուրեմն ճաշակեցէ՛ք ձեր հաւաքածը:

36. Ահա ամիսների թիւը Աստուծոյ մօտ տասներկու է Աստուծոյ գրքի մէջ, երբ նա ստեղծեց երկինքը եւ երկիրը, նրանցից չորս սուրբ են: Սա հաստատ կրօնքն է: Ուրեմն այդ ամիսներում ձեր հոգիներին անիրաւութիւն մի՛ անէք, բայց Աստուծուն ընկեր զընողների զէմ միշտ պատերազմեցէ՛ք ինչպէս որ իրանք էլ միշտ ձեզ զէմ պատերազմել են, եւ իմացէ՛ք որ Աստուած երկիւղածների հետն է:

37. Իրաւի սուրբ ամիսը մի ուրիշ ամսի հետ փոխելը անհաւատութեան մէջ մի աւելորդ բան է, նրանով մոլորուում են անհաւատները. մի տարի նրան մտքուր եւ մի տարի նրան պիղծ են հրատարակում, որ լրացնեն այն թիւը որ Աստուած պիղծ է հրատարակել, եւ այսպէս նրանք մաքուք են համարում ինչ որ Աստուած պիղծ է հրատարակել: Նրանց համար պատրաստւած են իրանց չար գործքերը: Եւ Աստուած էլ անհաւատ մարդիկներին չի առաջնորդի:

38. Ո՛վ հաւատացեալներ, ձեզ ի՞նչ կղաւ, որ երբ ասեցաւ թէ պատերազմի գնացէ՛ք Աստուծոյ ձանապարհումը, դուք կախեցիք մինչեւ հողը, մի՞թէ դուք այս աշխարհի կեանքիցը աւելի գո՛հ էք քան թէ միւս աշխարհից: Արդ ի՞նչ է այս աշխարհքի կեանքի վաշխումնքը միւս աշխարհքինի հետ բաղդատելով, հի՞թէ ոչ մի չնչին բան:

39. Եւ հի՞թէ պատերազմի չը գնաք, նա ձեզ ցաւալի տանջանքով կը տանջէ, եւ ձեզ կը փոխէ մի ուրիշ ազգով, եւ դուք նրան ոչ մի բանով չէք վնասի, եւ Աստուած ամենակարող է:

40. Եթէ դուք նրան չ'օգնէք, նրան անպատճառ Աստուած օգնել է արդէն, երբ անհաւատները նրան դուրս արեցին, եւ նա երկուսիցը երկրորդն էք, երբ նրանք քարայրումն էին, երբ նա ասում էք իր ընկերին, «մի տխրի՛ր, աստուած մեզ հետ է»: Եւ Աստուած իր հովանին իջեցրեց նրա վրայ եւ նրան կազդուրեց գունդերով, որոնք դու չէիր անում, եւ

անհաւատների խօսքը վար գցեց. եւ Աստուծոյ խօսքը քարձրն է: Եւ Աստուած հղօր իմաստուն է:

41. Պատերազմի գնացէ՛ք թիթիւ եւ ծանր. եւ պատերազմեցէ՛ք ձեր ստացւածքով եւ ձեր անձերով Աստուծոյ ճանապարհում: սա լաւ է ձեզ համար, եթէ հասկանաք:

42. Եթէ մի մօտաւոր շահ լինէր եւ ճանապարհօր, դու թիւնը յարմար, նրանք քեզ հետեւած կը լինէին, քայց տարածութիւնը նրանց համար երկայն երեւեց, եւ նրանք երզում են անելու. «եթէ կարողանայինք, ձեզ հետ դուրս կը գնայինք»: նրանք կորցնում են իրանց հոգիները: Բայց Աստուած գիտէ, որ ստախօսներ են:

43. Աստուած ներէ՛ քեզ: Դու ինչո՞ւ ականջ դրիր նրանց յառաջ քան Աստուած քեզ յայտնել էր, թէ որոնք են ճշմարիտ, եւ դու ճանաչել էիր ստախօսներին:

44. Քեզանից արձակման հրաման չեն խնդրի նրանք որ հաւատում են Աստուծուն եւ վերջի օրւան, թէ իրանք պատերազմելու են ստացւածքով եւ անձերով, եւ Աստուած գիտէ երկիւզածներին:

45. Միմիայն նրանք են հրաման խնդրելու, որ չեն հաւատում Աստուծուն եւ վերջի օրւան եւ նրանց քրտերը երկվտուրեան մէջ են, եւ նրանք իրանց երկմըտութեան մէջ տարբերվում են:

46. Եւ եթէ նրանք չեւին կամեցած լինէին, նրա համար պատրաստութիւն տեսած կը լինէին. քայց Աստուած հաճութիւն չ'ունէր նրանց չեւելուն եւ թուլացրեց նրանց, եւ աւեց «նստեցէ՛ք նստողներէ հետ»:

47. Եթէ նրանք ձեզ հետ պատերազմի չւած լինէին, նրանք ձեզ համար միայն բեռ եղած կը լինէին. նրանք ձեր մէջը խոռնելով խոռվութիւն կը գցէին ձեր մէջը, եւ ձեզանում լսողներ կան նրանց: Բայց ստուած ճանաչում է անիրաււներին:

48. Բայց նրանք առաջ էլ են խոռվութիւն ուզել եւ

խճճել են քո գործերը, մինչև եկա ճշմարտութիւնը եւ յաղթից Աստուծոյ բանը, թէ եւ նրանք տեղամուտ էին:

49. Եւ նրանցից ոմանք ասում են, «Ինձ հրաման ետ մ'նալու, եւ ինձ փորձութեան մի' տալ իր»։ Բայց ահա նրանք փորձութեան մէջ են ընկած, եւ դժոխքը չըջապատել է անհաւատներին:

50. Քեզ մի բարիք պատահելիս նրանք տխրում են, եւ եթէ քեզ մի չարիք է պատահում, ասում են, «մենք մեր բանն արդէն առաջուց շինել ենք»։ Եւ ուրախանալով ետ են դառնում:

51. Ասա՛, «մեզ Աստուծոյ որոշած ջրը ջրով մի ուրիշ բան չի պատահի. նա է մեր պաշտպանը»։ Եւ հաւատացեալները թող Աստուծուն ապաւինին:

52. Ասա՛ «արդեօք սպասում էք, որ երկու բարիքներից մէկը մեզ կը հանդիպի.» իսկ մենք սպասում ենք ձեր մասին, որ Աստուած ձեզ զարկելու է իր պատիժովը կամ մեր ձեռքովը. ուրեմն սպասեցէ՛ք, ահա մենք էլ սպասում ենք ձեզ հետ:

53. Ասա՛ օրնձայեցէ՛ք կամայ կամ ակամայ, բայց ձեզանից չի ընդունւի, որովհետեւ դուք մի անողամ ժողովուրդ էք»:

54. Ոչ մի ո բեշ բան չ'արդիւից նրանցից ընդունել նրաց ընծաները. եթէ ոչ այն որ չեն հաւատում Աստուծուն եւ նրա մարգարէին եւ աղօթքը կատարում են միմիայն անհոգութեամբ եւ ընծաները տալիս են ակամայ:

55. Դու մի՛ հիանար նրանց ստացւածքովը եւ որդիներովը. եթէ Աստուած միայն կամենայ, նրանց կը պատժէ նրանց միջոցովը այս աշխարհքի կեանքում, եւ կը ջնջեն նրանց անձինքը, որովհետեւ անհաւատ են:

56. Նրանք երեւում էլ են անում Աստուծով, թէ իրանք ձեզանից են. բայց նրանք ձեզանից չեն, այլ մի բաժանւած ժողովուրդ են:

57. Եթէ նրանք մի ապաստանարան կամ քարայրեր կամ մի թաքստարան գտնէին նրան արագութեամբ կը դիմէին:

58. Եւ նրանցից ոմանք պախարակում են քեզ ողորմութիւնների մասին. եթէ նրանց տրւի նրանից, գո՞ն կը լինեն իսկ եթէ չը տրւի նրանից, կը բարկանան:

59. Եւ եթէ նրանք գո՞ լինէին նրանով, ինչ որ Աստուած եւ մարգարէն նրանց տւեց եւ ասէին «մեզ համար Աստուած բաւական է, եւ ինչ որ Աստուած իր առատութիւնիցը եւ նրա մարգարէն կը տան. մեր ուղածը Աստուած է»:

60. Ողորմութիւնները միմիայն աղքատներինը եւ անանկներինը եւ նրա գործաւորներինն է, եւ նրանցն է, որոնց սրտերը շահում են, եւ գերինիւր ազատելու եւ պարտականների եւ Աստուծոյ ճանապարհի եւ ճանապարհորդի համար է. սա սահմանուած է Աստուածանից, եւ Աստուած գիտուն իմաստուն է:

61. Եւ նրանցից կան ոմանք, որ նեղացնում են մարգարէին եւ ասում, «նա ականջ է»: Ասա՛ բարիքի ականջ է ձեզ համար. նա հաւատում է Աստուծուն եւ հաւատացեալներին:

62. Եւ նա ողորմութիւն է ձեզնից հաւատացողների համար: Իսկ նրանք որ նեղացնում են Աստուծոյ մարգարէին, նրանց համար ցաւալի տանջանք կայ:

63. Նրանք երդում են անում Աստուծով, թէ ուզում են ձեզ հաճելի լինել. բայց աւելի արժանի է Աստուած եւ նրա մարգարէն, որ նրան հաճելի լինեն, եթէ հաւատացեալ են:

64. Միթէ չ'գիտեն, թէ ով հակառակ է Աստուծուն եւ նրա մարգարէին, նրա համար դժոխքի կրակը կայ, որ նրանում կը մնայ յաւիտեան: Սա մեծ անպատուութիւն է:

65. Կեղծաւորները վախենում են թէ նրանց դէմ սու-

բէ կ'ըջեցնուի որ կը յայտնէ, թէ ինչ կայ նրանց սրտերումը: Ասա՛ «ծալը արէք. Աստուած անպատճառ կը բերէ այն որից դուք վախենում էք»:

66. Եթէ նրանցից հարցնես, նրանք ասելու են, «մենք զրոյց էինք անում եւ կատակ»: Դու ասա՛, «մի՞թէ Աստուծուն եւ նրա խօսքերն ու նրա մարդաբէին էիք ծաղրում»:

67. Զեղ մի՛ արդարացնէք, դուք անհաւատ էք արդէն թէ եւ առաջ հաւատում էիք. եթէ ձեզնից մի խումբի ներեմք, մի ուրիշ խումբը կը պատժենք. ուրովնետեւ յանցաւորներ էին:

68. Կեղծաւորները եւ կեղծաւորուհիները միմեանց նման են պատւիրում են վատ բաները անել եւ արգելում են լաւ բաները, եւ պիտի գոցում են ձեռները, մոռանում են Աստուծուն, եւ նա էլ նրանց է մոռանալու, որովնետեւ կեղծաւորները անզգամներ են:

69. Աստուած խոստացել է կեղծաւորներին եւ կեղծաւորուհիներին եւ անհաւատներին զժողովի կրակը. որ նրանք կը մնան նրանում յաւիտեանս: Նա է նրանց բաժինը: Եւ Աստուած անիծէ՛ նրանց: Եւ նրանց համար հաստատ պատիժ կայ:

70. Դուք նման էք ձեզնից առաջ եղողներին. նրանք ձեզնից աւելի զօրաւոր էին ոյժով եւ աւելի շատ կալւածք եւ որդիք ունէին, եւ նրանք վայելեցին իրանց բաժինը. եւ դուք էլ ձեր բաժինը կը վայելէք ձեզնից առաջ եղողներին պէս, որ իրանց բաժինը վայելեցին. եւ դուք դատարկաբանութիւն էք անում ինչպէս նրանք արեցին. նրանց գործքերը փճացան այս եւ միւս աշխարհքում, եւ նրանք կորած են:

71. Մի՞թէ նրանց չէ հասել իրանցից առաջ եղածներին պատմութիւնը՝ Նոյի ժողովրդի, Ազի, Սամուելի եւ Աբրահամի ժողովրդի եւ Մագեանի եւ տակնիւնի եղածներին պատմութիւնը: Նրանց մարգարէները եկան իրանց մօտ, եւ Աստուած նրանց անիրաւութիւն շա-

քեց. այլ նրանք անիրաւութիւն արեցին իրանց հոգիներին:

72. Եւ հաւատացեալներն ու հաւատացեալուհիներն իրար պաշտպան են, պատւիրում են անել օրինաւոր բաները եւ արգելում են վատերը, եւ կատարում են աղօթքը եւ տալիս են մաքրութեան հարկը եւ հնազանդում են Աստուծուն եւ նրա մարգարէին: Աստուած ողորմելու է սրանց. որովհետեւ Աստուած հզօր իմաստուն է:

73. Աստուած խոստացել է հաւատացեալներին եւ հաւատացեալուհիներին դրախտներ, որոնց տակովը գնանք են հոսում. եւ նրանցում կը մնան յաւիտեան. քաղցր բնակարաններ Եղեմի դրախտներումը, նաեւ Աստուծոյ մեծագոյն հաճութիւնը: Սա է մեծ փրկութիւնը:

74. Ո՛վ մարգարէ, կռի՛ւ արա անհաւատների եւ կեղծաւորների դէմ եւ խի՛ստ եղի՛ր նրանց դէմ. եւ նրանց բնակարանը դժոխքն է: Եւ ի՛նչ վատ գնացք է դա:

75. Նրանք երդում են անում Աստուծով, թէ չ'են ասել. բայց նրանք ասել են անհաւատութեան խօսքը, եւ իսլամը ընդունելուց յետոյ անհաւատ են դարձել. եւ աշխատեցին մի բանի համար, որ չը յաջողեցան. եւ միմիայն նրա համար չը զայրացան, որ Աստուած նրանց առատապէս պարգեւատրեց եւ. նրա մարգարէն իր առատութիւնիցը: Ուրեմն եթէ ապաշխարեն, աւելի լաւ կը լինի նրանց համար. իսկ եթէ մերժեն, Աստուած նրանց կը պատժէ ցաւալի տանջանքով այս եւ այն աշխարհքում. եւ նրանց համար երկրիս վրայ ոչ մի պաշտպան կը լինի եւ ոչ մի օգնող:

76. Եւ նրանցից ոմանք ուխտ են արել Աստուծոյ հետ, որ «եթէ մեզ իր առատութիւնիցը տայ. անպատճառ ողորմութիւն կը տանք եւ բարեպաշտներ կը լինենք»:

77. Բայց երբ նրանց տեց իր առատութիւնիցը,

նրանք ազանութիւն արեցին եւ մերժելով ետ դարձան:

78. Եւ իբրև հետեւանք տեց նրանց սրտերին կեղծաւորութիւնը մինչև այն օրը, որ նրան պիտի պատահեն, որովհետև անհաւատարիմ եղան Աստուծոյ դէմ այն բանի մէջ, որ նրան խոստացել էին, եւ որով նրանք սուտ ասացին:

79. Մի՞թէ չը գիտեն, որ Աստուած գիտէ նրանց գաղանիքները եւ փախուճները, եւ ահա՛ Աստուած գաղանիքները գիտէ:

80. Նրանք պախարակում են հաւատեացեալներին յօժարակամ ողորմութիւն աւողներին եւ նրանց, որոնք իրանց վաստակիցը ջոկ մի բան չեն գտնում, եւ նրանց ծաղր են անում, Աստուած էլ նրանց է ծաղր անելու, եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ:

81. Նրանց համար ներողութիւն խնդրի՛ր կամ մի՛ խնդրիր. եթէ նրանց համար եօթանասուն անգամ էլ ներողութիւն խնդրես, Աստուած նրանց բնաւ չի ների. որովհետև Աստուծուն եւ նրա մարգարէին չեն հաւատում, եւ Աստուած անզգամ մարդկանց չի առաջնորդի:

82. Ետ մնացողները ուրախացան իրանց տեղը Աստուծոյ մարգարէի դէմ, եւ զղում էին. որ իրանց ստացածքովը եւ անձերովը Աստուծոյ ճանապարհում պատերազմեն եւ ասում էին, «այս տաքութիւնում դուրս մի՛ գնաք պատերազմի»: Դու ասա՛, «զժոխքի կրակը աւելի շատ տաք է եթէ հասկանան»:

83. Թող մի քիչ ծիծաղեն. յետոյ շատ պիտի լան իբրև իրանց վաստակածի հատուցում:

84. Արդ եթէ Աստուած քեզ նրանցից մի խումբի մօտ ետ դարձնէ եւ նրանք քեզնից հրաման խնդրեն, որ քեզ հետ դուրս գան, դու նրանց ասա՛, «զուք բնաւ եւ յաւիտեան ինձ հետ դուրս չէք գայ եւ զուք ինձ հետ մի թշնամու դէմ բնաւ չէք պատերազմի, որովհետև զուք առաջի անգամը նստել ուղեցիք. ուրեմն նստեցէ՛ք եւ մնացողների հետ»:

85. Եւ դու յաւիտեան չը պիտի աղօթես նրանցից մէկի համար, երբ որ մեռնէ, եւ նրա դերեզմանի մօտ չը պիտի կանգնես, որովհետեւ նրանք Աստուծուն եւ նրա մարգարէին չը հաւատացին եւ իրանք անզգամներ լինելով մեռան:

86. Եւ քեզ չը հիացնէ նրանց կալածքները եւ որդիքները, որովհետեւ Աստուած նրանց միմիայն պատժել է ուզում նրանցով այս աշխարհքում, որ նրանց հոգիները կորչեն, որովհետեւ նրանք անհաւատ են:

87. Եւ երբ մի սուրէ իջնցուեց, թէ հաւատացէ՛ք Աստուծուն եւ պատերազմեցէ՛ք նրա մարգարէի հետ միասին, այն ժամանակ նրանց մէջ կարողութեան տէր եղողները քեզ ասացին. «Թո՛ղ տուր մեզ, որ նասողների հետ լինենք»:

88. Նրանք պատրաստ էին որ ետ մնացողների հետ լինեն. բայց նրանց սրտերը խփեցան եւ նրանք չէին իմանում:

89. Սակայն մարգարէն եւ նրա հետ միասին հաւատացողները պատերազմում են իրենց ստացւածքներովը եւ անձերովը. նրանց համար բարիքներ կան եւ նրանք երջանիկ կը լինեն:

90. Աստուած նրանց համար զբախտներ է պատրաստել, որոնց տակովը գետեր են հոսում, եւ նրանք միշտ նրանց մէջ կը մնան: Սա մեծ փրկութիւն է:

91. Արարներից ոմանք եկան ու պատճառարանելով խնդրեցին, որ նրանց հրաման արեւի տուէն մնալու եւ զրանք որ Աստուծուն եւ մարգարէին սուտ ասացին, նստեցին. սակայն նրանցից անհաւատ եղողներին ցաւալի տանջանք է գպչելու:

92. Ոչ տկարների եւ ոչ հիւանդների եւ ոչ էլ նւէր տալու կարողութիւնը չունեցողների համար յանցանք է, եթէ մտերիմ են Աստուծոյ եւ նրա մարգարէին: Բարեբարների դէմ գ ժ գ ո հ ու թ ե ա ն պատճառ չը կայ: Աստուած էլ ներող ողորմած է:

93. Եւ նրանց դէմ չը կայ, որ երբ քեզ մօտ եկան

որ հետո առնես նրանց, դու ասացիր, «բան չ'ունեմ՝ որ ձեզ հետս առնեմ», նրանք իրանց աչքերիցը արտասուք հոսելով տրտում ետ դարձան, որ մի բան չ'ա նէին որ նւիրեն:

94. Բայց լոկ նրանց դէմ է գժգոհութեան պատճառը որ քեզանից ետ մտալու հրաման խնդրեցին, քանի որ իրանք հարուստ էին. նրանք ուզեցին ետ մնացողներէ հետ լինել. եւ Աստուած էլ գոցեց նրանց սրտերը, բայց նրանք չեն իմանում:

95. Նրանք իրանց ձեզ մօտ արդարացնելու են, երբ դուք ետ կը դառնաք նրանց մօտ: Դու ասա՛, «ձեզ մի՛ արդարացնէք. մենք ձեզ երբէք չենք հաւատայ. մեզ արդէն յայտնել է Աստուած ձեր լուրերիցը. եւ Աստուած տեսնում է ձեր արարքը նաեւ նրա մարդարէն. յետոյ դուք ետ կը դարձնէք ծածուկը եւ յայտնի գիտացողի մօտը, եւ նա ձեզ կը յայտնէ թէ ինչ էիք անում:

96. Նրանք ձեզ Աստուծով երդում են տալու, երբ ետ դառնաք նրանց մօտ, որ նրանցից ետ քաշէք: Ուրեմն ետ քաշեցէ՛ք նրանցից, որովհետեւ նրանք պիղծ են, եւ նրանց բնակարանը դժոխքն է իրրեւ հատուցում իրանց արարքներէ համար:

97. Նրանք ձեզ երդում են տալու, որ նրանցից գո՛հ լինէք, ահա՛ Աստուած անզգամ մարդիկներից գո՛հ չի լինի:

98. Արարներն ամենից խիստ անհաւատներ եւ կեղծաւորներ են, եւ յարմար է Աստուծոյ իր մարգարէի համար իջեցրածի սահմանները չեն հասկանում. բայց Աստուած գիտուն իմացուն է:

99. Արարներից կան եւ ոմանք, որ իրանց տւած նւէրները պարտքի տեղ են դնում. եւ սպասում են ձեզ հաւար մի փորձանք: Իրանց վրայ զա՛յ չալ՞ փորձանքը: Եւ Աստուած լսող իմացող է:

100. Եւ արարներից ոմանք ալ կան, որ հաւատում են Աստուծուն եւ վերջին օրայ եւ իրանց արած՞

նւէրնիրը մատաղ են համարում Աստուծոյ առաջին եւ իբրեւ օրհնելոյ մարգարէին համար: Չէ՞ որ սա մատաղ է նրանց համար: Աստուած նրանց իր ողորմութեան մէջն է տանելու. որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

101. Գաղթողները եւ օգնականների կանխաժամանաներից եւ առաջիններից եւ բարիքներով նրանց հետեւողներից Աստուած գոհ է, եւ նրանք էլ նրանից. եւ նա նրանց համար գրախօսներ է պատրաստել, որոնց տակովը գեաներ են հոսում, որոնց մէջ նրանք կը մնաս յաւիտեան. սա մեծ փրկութիւն է:

102. Իսկ ձեր շուրջը եղող արարներից եկան կեղծաւորներ, եւ Մէղիւնայի բնակիչներից էլ կան, որ յամառութեամբ են կեղծաւորութեան մէջ. դու նրանց չը գիտես, իսկ մենք գիտենք նրանց: Մենք նրանց պատժելու ենք կրկնապատիկ. յետոյ նրանք մեծ պատժի կը դառնան:

103. Եւ ուրիշներ խոստովանում են եւ իրանց մեղքերի հետ բարի գործքեր խառնում եւ ուրիշը՝ չարը: Գուցէ Աստուած կը դառնայ գէպի նրանց, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

1)4. Դու նրանց ստացւածքիցը ողորմութիւն ա՛ռ, նրանց մաքրի՛ր եւ սրբի՛ր նրանով եւ նրանց համար աղօթք արա. որովհետեւ քո աղօթքը նրանց համար հանգստութիւն է. եւ Աստուած լսող ինացող է:

105. Մի՞թէ չը գիտեն, որ Աստուած իր ծառաներիցը ընդունում է ապաշխարութիւնը եւ ողորմութիւններ առնում. եւ իբրեւ Աստուած ետ դարձող ողորմած է:

106. Դու ասա՛, «գործքեր արէ՛ք այն ժամանակ Աստուած կը տեսնէ ձեր գործքերը, նաեւ նրա մարգարէն եւ հաւատացեալները. եւ դուք ետ էք տարելու գաղտնիքներն ու յայտնիները գիտացողի մօտը, եւ նա ձեզ կը յայտնէ թէ ինչ էիք անում:

107. Եւ ուրիշներ էլ ապաստւում են Աստուծոյ գործին,

թէ արդիօ՞ք նրանց պատժելու է կամ թէ դէպի նրանց է դառնալու: Եւ Աստուած գիտուն խմաստուն է:

108. Եւ նրանք էլ որ մի ազօթատեղի են շինել վնասի եւ անհաւատութեան եւ հուատացեալների մէջ բաժանմունք գցելու համար, եւ իրրեւ դարանատեղի նրանց համար, որ առջ պատերազմում էին Աստուծոյ եւ նրա մարգարէի դէմ, — նրանք երգում են անելու, թէ նրանց ուղածը միմիայն բարի բաներ են, բայց Աստուած տեսնում է, որ սուտ են խօսում:

109. Նրանում երբէք չը կանգնես: Ահա՛ ազօթատեղին որ առջի օրւանից շինեց երկիւղածութեան վրայ. — սա արժանի է որ սրանում կանգնես, սրանում կան մարդիկ որոնք փափագում եւ մաքրում են, եւ Աստուած էլ սիրում է մաքրածներին:

110. Արդ ո՞րն է լաւ՝ նա որ իր սունը շինեց երկիւղածութեան եւ Աստուծոյ հաճութեան վրայ, կամ նա՞ որ հիմնեց իր շէնքը տակը հեղեղով փորած գետեղերքի վրայ, որ նրա հետ միասին գոտիքի կրակը կընկնի: Եւ Աստուած անխրաւներին չի առաջնորդի:

111. Նրանց շինած շէնքը չի դադարի նրանց սրբատեղում կասկած գնելու, մինչև որ նրանց սրտերը կտոր կտոր չը լինին: Եւ Աստուած գիտուն խմաստուն է:

112. Իրաւ Աստուած ծախու առել է հաւատացեալներից նրանց անձերը եւ ստացւածքները, որ գրախար նրանցը լինի. նրանք պատերազմում են Աստուծոյ ճանապարհումը եւ սպանում են ու սպանւում են հաւատաւորով, որ գրա համար Օրէնքումը եւ Աւետարանումը եւ Ղուրանումը եղած խոստումը ճշմարիտ է. եւ ո՞վ է իր խոստումի մէջ աւելի հաւատարիմ քան թի Աստուած: Ուրեմն ուրախացէ՛ք ձեր ստուտութեանը, որ դուք արել էք: Եւ սա մեծ փրկութիւն է:

113. Ծառայողները, ապաշխարողները, փտոաբանողները, պահեցողները, ծունկ ծոողները, երկրպագողները, բարի գործեր պատիրողները եւ վատ բա-

ներ արգիլողները և Աստուծոյ սահմանները պահողները — և հաւատացեալներին աւետիս տուր :

114. Մարգարէն և հաւատացեալներն իրաւունք չունեն կռապաշտնէրի համար մեղքի թողութիւն խնդրելու, թէ և ազգականներ էլ լինեն քանի որ նրանց Ղուբանը յատնել է : Ահա՛ նրանք գթութիւն ընկերներն են :

115. Եւ Արքահամը, որ իր հօր մեղաց թողութեան համար ազօթք արեց, միմիայն խոստման վրայ հիմնւած էր, որ Աստուած խոստացել էր նրան : Բայց երբ ինացաւ, որ նա թշնամի է Աստուծոյ, իբրև մաքրեց նրանից, և Արքահամ կակուզ սիրտ ունեցող հեղ էր :

116. Եւ Աստուած մի ազգ չի մոլորեցնի, երբ նրան արգէն ուղիղ առաջնորդել է, մինչև նրանց չը յայանէ թէ ինչից պէտք է զգուշանան, որովհետև Աստուած ամեն բան գիտէ :

117. Իրաւի երկնքի և երկրի իշխանութիւնը Աստուծունն է. նա կենդանացնում և մեռցնում է. և զուք Աստուածունից զատ ուրիշ պաշտպան օգնական չ'ունէք :

118. Արգէն դարձել է Աստուած գէպի մարգարէն և գաղթողները և օգնականները, որոնք նեղութեան ժամուս, երբ քիչ էր մնացել որ նրանցից մի խումբի սրտերը գայթակղէին, հետեւեցին նրան, բայց նա դարձաւ գէպի նրանց, որովհետև նա նրանց գթած ողորմած է :

119. Նաև այն երեքին, որոնք տանը հոռ մնացին, մինչև երկիրը, որ լայն է. նրանց նեղ եղաւ, և նրանց սրտերն էլ տառապում էին և կարծում էին, թէ Աստուծոյ կողմանէ իրանց համար բացի նրա մօտ մի ուրիշ ապաստանարան չըկայ. յետոյ դարձաւ գէպի նրանց, որպէս զի ապաշխարեն, իրաւ Աստուած է դարձողը ողորմածը :

120. Ո՛վ հաւատացեալները, վախեցէ՛ք Աստուածա-
նից եւ արդարների հետ միասին կեցէ՛ք:

121. Մեզինայի բնակիչները եւ իրանց չըջակայի ա-
քաբները իրաւունք չունէին Աստուծոյ մարգարէիցը ես-
մնալու եւ իրանց անձերը ետ քաշելու. նրանք այս-
բանն արեցին, որ նրանց ոչ ծարաւութիւն, ոչ հոգնա-
ծութիւն եւ ոչ սովածութիւն չը պատահի Աստուծոյ
ճանապարհումը. եւ նրանք մի քայլ չը քայլափոխե-
ցին, որ անհաւատներին գրգռէր, եւ թշնամուց նրանց
մի բան չը հասաւ, եթէ նրանց համար դրանով մի-
քարեզորութիւն չը տրւէր. ահա՛ Աստուած բարեգործ-
ների վարձքը չի կորցնի:

122. Եւ նրանք մի փոքր կամ մեծ նւէր չեն տայ,
եւ նրանք մի ձորով չեն անցնի, որ նրանց համար չը
սահմանուի. որ Աստուած նրանց բարիք է հատուցա-
նելու իրանց արածի համար:

123. Եւ պէտք չէ հաւատացեալներն ամենը պատե-
րազմի գնան: Ուրեմն թող նրանց ամեն մի մասից մի-
խումբ պատերազմի չը գնան, որ կրօնքի վերաբեր-
մամբ սովորեցնեն իրանց մողովուրդը խրատեն, երբ
ետ կը դառնան նրանց մօտ, որպէս զի զգուշանան:

124. Ո՛վ հաւատացեալներ, պատերազմեցէ՛ք այն
անհաւատների հետ, որոնք ձեզ զրացի են. թող ձեռք
խստութեւնը տեսնեն, որ հասկանան թէ Աստուած եր-
կիւղածների հետ է:

125. Եւ միշտ որ մի սուրէ է իջեցնուած, նրանցից
կան ոմանք, ասում են. «ձեզնից որի՞ հաւատքը շատա-
ցրեց դա»: Բայց հաւատացեալների հաւատքը շատա-
ցընում է, եւ իրանք ուրախանում են:

126. Իսկ նրանք, որոնց սրտերումը հիւանդութիւն
կայ, նրանցում աւելացնում է պղծութիւն պղծու-
թեան վրայ, եւ նրանք մեռնում են իրրեւ անհա-
ւատներ:


127. Մի՞թէ չեն տեսնում, որ իրանք ամեն տարի
մէկ անգամ կամ երկու անգամ փորձանքի մէջ են ընկ-

նում, բայց եւ այնպէս չեն ապաշխարում եւ չեն մը-
տածում:

128. Եւ ամեն անգամ որ մի սուրէ է իջեցնում,
իրար են մտիկ անում, «արդեօք ձեզ տեսնող կայ»-
յետոյ անցնում են: Աստուած ծռէ՛ նրանց սրտերը,
որովհետեւ չը հասկացող ժողովուրդ են:

129. Արդէն ձեր մէջիցը ձեզ համար մարգարէ է
եկել, զօրաւոր, նրա դէմ է որ մեղանշում էք, նա ձեզ
փափազում է եւ հաւատացեալներին գթած ողորմած է:

130. Եթէ նրանք ետ քաշեն, ասա՛, «իմ բաժինը
Աստուած է, նրանից ջոկ ուրիշ Աստուած չըկայ, ես
նրան եմ ապաւինել, եւ նա է մեծ գահի տէրը»:



10) Ս Ո Ւ Ր Է Ե Ո Ւ Ն Ը Ս

Խաղաղութիւն լինի նրան.

Մէքքէական հարիւր ինը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. ա. լ. բ. Սա իմաստուն գրքի նշաններն են:

2. Մի՞թէ զարմանալի է մարդկանց համար, որ մենք-
իրանց միջիցը մի մարդու յայտնութիւն ենք տեսլ,
թէ խրատի՛ր մարդկանցը եւ աւետիս տ՛ւր հաւատաց-
եալներին, որ արդարութեան հատուցումը իրանց Տի-
րոջ մօտ է: Անհաւատներն ասում են, «սա անպատ-
ճառ մի յայտնի կախարդ է»:

3. Իրաւի ձեռք Տէրն Աստուած է, որ ստեղծել է երկիրնքը եւ երկիրը վեց օրուայ մէջ եւ յետոյ նստել գահին վրայ, կոտաւարում է ամեն բանը՝ մի բարեխօս շրկայ առանց նրա հրամանի: Աս է Աստուած ձեռք Տէրը, ուրեմն նրան պաշտեցէ՛ք: Մի՞թէ չէք մտածում:

4 Ամենքդ էլ նրա մօտը պիտի դառնաք: Աստուծոյ խոստումը ճշմարիտ է: Նա մի արարած է գոյացնում, յետոյ ետ դարձնում, որ վարձատրէ նրանց, որ հաւատացել եւ բարի գործքեր են արել ուղղութեամբ. իսկ նրանց համար, որ չը հաւատացին, հոացող խամելիք եւ ցաւալի տանջանք կայ, որովհետեւ չէին հաւատում:

5. Նա է որ արեգակը շինել է ձաճանչեղ եւ լուսինը լուսատու, եւ նրանց համար կայարաններ է որոշել, որ գիտենաք տարիների թիւը եւ հաշիւը: Աստուած սրանց միմիայն արդարութեամբ է ստեղծել, որ բացատրում է նշանները հասկացող ժողովրդին:

6. Իրաւի գիշերի եւ ցերեկի փոփոխելումը եւ Աստուծոյ երկնքի եւ երկրի վրայ արարածներումը նշաններ կան երկրագած ժողովրդի համար:

7. Իրաւի նրանք, որ չեն յուսում թէ մեզ հանդիպելու են եւ գո՛հ են աշխարհքիս կեանքովը եւ ապահով են նրանում, նաեւ նրանք որ մեր նշանների մասին անհոգ են:

8. Նրանց բնակատեղին կրակն է իրանց վաստակածին պէս:

9. Իրաւի նրանք, որ հաւատացել եւ բարի գործքեր են արել, իրանց Տէրը տանելու է նրանց իրանց հաւատքի համար տակովը գետեր հոսող զւարձալի զըրախաների մէջ:

10. Նրանց ազօթքը իրանց մէջ է «գու սուրբ ես, ով Աստուած» եւ նրանց բարեւելը «խաղաղութիւն»:

11. Եւ ազօթքների վերջը «փառքը աշխարհքների Տիրոջը»:

12. Եւ եթէ Աստուած մարդկանց համար չարիքը շտապեցնէր, որ իրանց համար բարիքի շտապումն են

ուզում, նրանց վախճանն արդէն վճուած կը լինէր, իսկ մենք թողնում ենք նրանց, որ մեզ հանդիպելուն չեն սպասում, որ իրանց տպատամբութեան մէջ թափառեն:

13. Եւ երբ մարդուս մի չարիք է պատահում, նա աղաղակում է դէպի մեզ իր կողքին վրայ պառկած կամ նստած կամ կանգնած. իսկ երբ մենք նրանից հեռացնում ենք նրա չարիքը, նա անցնում է իրբ թէ դէպի մեզ չէ աղաղակել այն իրան պատահած չարիքի համար: Այսպէս է պատրաստուած անկարգները համար որ անում են:

14. Բայց մենք արդէն ձեզնից առաջ եղած ազգեր ջնջեցինք, որովհետեւ անիրաւութիւնն արեցին. եւ իրանց մարգարէները եկան իրանց հրաշքներով, իսկ նրանք չէին հաւատում: Մենք այսպէս ենք հատուցանում յանցաւոր մարդկանց:

15. Եւ նրանցից յետոյ մենք ձեզ նրանց յաջորդողներ շինեցինք երկրի վրայ, որ տեսնենք, թէ ինչպէս էք անում:

16. Եւ երբ մեր յայտնի նշանները կարդացիւմ են, մեր հանդիպմանը չը յուսացողներն ասում են, «մի ուրիշ դուքան բե՛ր սրանից ջոկ, կամ սա փոխի՛ր»: Դու ասա՛, «ես իրաւունք չունեմ, որ ի՛մ անձնական հաճոյքովս փոխեմ սրան. ես միայն ինձ եղած յայտնութեանն եմ հնազանդում. ես վախենում եմ մեծ օրւայ պատիժիցը. եթէ Տիրոջս դէմ ապստամբեմ»:

17. Դու ասա՛, «եթէ Աստուած կամենար, ես այդ չէի կարդալ ձեզ համար եւ դա չէի հասկացնել ձեզ բայց ես արդէն զրանից առաջ երկար ժամանակ ապրել եմ ձեր մէջը, մի՞թէ չէք հասկանում:

18. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա, որ Աստուծոյ մասին սուտեր է հնարում, կամ նրա նշանները սուտ համարում: Իրաւի յանցաւորները երջանիկ չեն լինի:

19. Եւ նրանք բացի Աստուծանից բաներ են պաշ-

տում, որ նրանց ոչ կը վնասեն ոչ օգուտ ունեն, եւ
ատում են թէ «նրանք մեր բարեխօսներն են Աստուծոյ
մօտ»: Դու ասա՛, «մի՞թէ դուք սովորեցնում էք այն
բանը որ նա չը գիտէ երկնքումը եւ ոչ էլ երկրումս:
Նա սուրբ է եւ բարձր է այն բաներիցը, որ նրան ըն-
կեր են դնում»:

20. Եւ մարգիկ միմիայն մէկ կրօնական ազգ էին,
բայց անհամաձայն եղան. եւ եթէ քո Տիրոջ կողմանէ
կանխօսաց խօսք չը լինէր, անպատճառ կը վճուէր այն
բանը նրանց մէջ, որի մասին անհամաձայն են:

21. Եւ ատում են, «եթէ նրա Տիրոջ կողմանէ նրա
համար մի հրաշք չը ի՞նչն էր, չենք հաւատայ»: բայց
դու ասա՛, «գաղտնիքներն միայն Աստուծունն են. ու-
րեմն սպասեցէ՛ք, ես էլ ձեզ հետ միասին սպասում եմ»:

22. Եւ երբ մենք մարդկանցը ողորմութիւն ճաշա-
կել տեսցինք նրանց չարիք պատահելուց յետոյ, այն
ժամանակ նրանք նենգութիւն արեցին մեր նշանների
դէմ: Դու ասա՛, «Աստուած աւելի արագ է նենգու-
թիւնով ահա՛ մեր հոգեւորականները գրում են ձեր հնարած
նենգութիւնները»:

23. Նա է, որ ձեզ ման է ամում ցամաքումը եւ ծո-
ւումը. նոյն իսկ երբ դուք նաեւրի մէջ էք լինում եւ
նորանք գնում են յարձար քամիով. եւ դուք էլ նրան-
ցում ուրախանում էք. բայց մի սաստիկ քամի է գալիս
եւ ամեն տեղից ալիքն է գալիս նրանց վրայ. եւ կար-
ծում են թէ ահա կուլ են գնում նրանցով, այն ժա-
մանակ սրտանց հաւատալով կանչու մ են Աստուծուն, թէ
«եթէ մեզ սրանից ազատես, մենք շնորհակալ կը լի-
նենք»:

23. Բայց նա նրանց ազատում է, այն ժամանակ նը-
քանք անիրաւարար ապստամբում են երկրի վրայ: Ո՛վ
մարդիկ, ձեր ապստամբութիւնը ձեր անձերի դէմ մի-
միայն այս աշխարհի շահ է. յետոյ դուք մեր մօտն էք
դառնալու, եւ մենք ձեզ կը յայտնենք ձեր արարքը:

25. Այս աշխարհի կեանքը նման է միմիայն մեք

ճրկնքից իջեցրած ջրին, որ նրանով երկրի բոյսերը խառն է՛ն բուսնում, որոնցից ուտում են մարդիկ եւ անասունք, այնպէս որ երկիրն էլ ստանում է իր պահուստանքը եւ դարգարում, եւ նրա բնակիչները կարծում են թէ իշխաններ են նրա վրայ: Բայց գալիս է մեր հրամանը գիշերը կամ ցերեկը, եւ մենք նրան հնձածի պէս ենք անում, իբր թէ երէկ չը կար: Ինչպէս բացատրում ենք նշանները մտածող մարդկանց համար:

26. Եւ Աստուած կանչում է դէպի խաղաղութեան տունը. եւ ուղիղ ճանապարհի է առաջնորդում, ում որ ուզում է:

27. Բարիք գործողների համար բարիք կայ եւ էջ աւելին. եւ նրանց երեսը չի ծածկւի սեւութիւնով կամ ամօթով. նրանք զրախտի ընկերներն են, եւ միշտ կը մնան նրանում:

28. Իսկ նրանք որ չարութիւն են գործում, նրա նման չար հատուցում կը ստանան, ամօթը կը ծածկէ նրանց. նրանց ազատող չի լինի Աստուծոյ ձեռքից. կարծես թէ նրանց երեսները ծածկւած են խոււար գիշերւայ մի կտորով: Իրանք կրակի ընկերներն են, միշտ կը մնան նրանում:

29. Եւ այն օրը որ մենք նրանց ամենքին էլ կը ժողովենք, կ'ասենք աստուածընկերներ ընդունողներին, «գնացէ՛ք ձեր տեղերը, դուք եւ ձեր ընկերները», եւ մենք նրանց կը բաժանենք իրարից եւ նրանց ընկերները կ'ասեն, «դուք մեզ չէիք պաշտում»:

30. «Աստուած արդ լաւ վկայ է մեր ու ձեր մէջը, Եթէ մենք ձեր պաշտամունքիցն անփոյթ ենք եղել:

31. Այս տեղ կը հասկանայ աւին մի հողի, թէ առաջ ինչ է գործել, եւ նրանք ետ կը տան ին Աստուծոյ մօտը, որ իրանց ճշմարիտ պաշտպանն է. եւ նրանց հնարածները կը հեռանան նրանցից:

32. Աստ' ո՞վ է ձեզ կերակրում երկնքից եւ երկրից կամ ո՞վ է լսողութեան եւ տեսողութեան Տէրը, եւ ո՞վ

է կենդանին մեռելիցը եւ մեռելը կենդանուցը հանում, եւ ո՞վ է բոլոր բաները կառավարում»: Նրան կ'ասեն, «Աստուած»: «Ապա ինչո՞ւ երկխոսած չէք»:

33. Սա է ձեր ճշմարիտ Տէր Աստուածը. ուրեմն ճշմարտութիւնից յետոյ է՛լ ի՞նչ կայ, եթէ ոչ մոլորութիւն: Ապա ինչո՞ւ էք ծովում:

34. Այսպէս ճշմարտացաւ քո Տիրոջ խօսքը անզգամների վերաբերութեամբ, որովհետեւ նրանք չեն հաւատում:

35. Դու ասա՛, «ձեր աստուածներից կայ արդեօ՞ք մէկը, որ մի արարած չի՛նէ եւ յետոյ իրան մօտը ետ դարձնէ»: Դու ասա՛, «Աստուած է շինում արարածները եւ յետոյ իրան մօտ ետ դարձնում. ապա ինչո՞ւ էք զրպարում»:

36. Դու ասա՛, «կա՞յ ձեր աստուածներից մէկը, որ առաջնորդէ գէպի ճշմարտութիւնը»: Դու ասա՛, «Աստուած է առաջնորդում գէպի ճշմարտութիւնը»: Արդ, որն է աւելի արժանի. որ նրան հետեւեն՝ նա՞ որ առաջնորդում է գէպի ճշմարտութիւնը, թէ՛ նա՞ որ չէ առաջնորդում, եթէ ինքը չ'առաջնորդէ: Հիմա դուք ի՞նչպէս էք դատում:

37. Նրանցից շատերը միան կարծիքի են հետեւում, բայց ճշմարտութեան համար կարծիքը ոչինչ նշանակութիւն չ'ունի: Իրաւ Աստուած գիտէ նրանց արածը:

38. Եւ այս Դուրանը հնարւած չէ առանց Աստուծոյ այլ հաստատում է իրանից առաջ եղածը, եւ բացատրում է այն անկասկածելի գիրքը որ աշխարհքների Տիրոջ կողմանէ է:

39. Կամ ասում են թէ «նա հնարել է»: Դու ասա՛, «ուրեմն դուք էլ սրա նման մի սուրէ բերէ՛ք. եւ Աստուածանից ջոկ կանչեցէ՛ք, որին որ կամենաք, եթէ ճշմարիտ էք»:

40. Իայց նրանք սուտ են համարում այն բանը, որին հասկանալուն իրանց խոյքը չէր հասնում. եւ երբեկաւ նրա մեկնութիւնը նրանց համար: Այսպէս էլ

նրանք են սուտ համարել, որ նրանցից առաջ են եղել Է
Բայց տե՛ս, թէ անիրաւների վախճանը ի՛նչպէս եղաւ:

41. Նրանցից կան ոմանք, որ հաւատում են նրան
և կան ոմանք որ նրան չեն հաւատում. սակայն քո
Տէրը ճանաչում է ապականիչներին:

42. Եւ եթէ նրանք քեզ սուտ համարեն, ասա՛ «ինձ
իմ գործը, եւ ձեզ ձեր գործը. դուք իմ արածին պա-
տասխանատու չէք, ես էլ ձեր արածին չեմ պատաս-
խանատու.»:

43. Նրանցից կան ոմանք որ քեզ ականջ են դնում,
բայց դու կարո՞ղ ես խուլերին լսել տալ, քանի որ չեն
հասկանում:

44. Եւ նրանցից կան ոմանք, որ քեզ մտիկ են ա-
նում, բայց դու կարո՞ղ ես կոյրերին ճանապարհ ցոյց
տալ, քանի որ չեն տեսնում:

45. Ահա Աստուած մարդկանց ոչ մի անիրաւութիւն
չի անի, բայց մարդիկ իրանք են վնասում իրանց հո-
գիներին:

46. Եւ այն օրը, որ նրանց կը ժողովէ. այնպէս կը
լինի իբր թէ նրանք օրւայ միայն մի ժամն են մնա-
ցել այստեղ. նրանք միմեանց կը ճանաչեն. բայց
արդէն վնասւած կը լինեն Աստուծոյ հետ հանդիպելը
սուտ համարողները, որ ուղիղ առաջնորդւած չէին:

47. Եւ մենք քեզ կամ տեսնել կրտանք այն բանից
մի քանիսը որ նրանց սպառնացել ենք կամ քեզ մահ
կրտանք, եւ նրանք մեզ մօտ կը դառնան. այն ժա-
մանակ Աստուած վկայ է նրանց արածներին:

48. Եւ ամեն մի ազգ մարգարէ ունի. եւ երբ նը-
րանց մարգարէն գալիս է, նրանց մէջ դատաստան է
լինում արդարութեամբ, եւ նրանք չեն զրկւի:

49. Եւ նրանք ասում են, «այս սպառնալիքը ե՞րբ
կը կատարուի, եթէ դուք ճշմարիտ էք»:

50. Ասա՛ ես իմ անձի վրայ իշխանութիւն չունեմ

մ'չ մնասի եւ ո'չ օգուտի կողմանէ. բայցի նրանից որ Աստուած կը կանխայ: Ամեն մի ազգ ունի իրան վախճանը. երբ նրանց վախճանը եկաւ, նրանք չեն կարող մէկ ժամ ուշանալ եւ ոչ ստաջ ընկնել:

51. Ասա՛, «Ի՞նչ էք կարծում, եթէ նրա պատիժը ձեր վրայ գիշերը կամ ցերեկը գայ, նրանից ի՞նչ կարող են յանցաւորները շտապել ստալ»:

62. Եւ յետոյ ի՞նչ, երբ պատահի, կը հաւատաք նրան հիմայ. թէ եւ դուք նրա շուտով գալն ուզում էիք:

53. Յետոյ կ'աւախ նրանց, որ անիրաւութիւն էին անում, «ճաշակեցէ՛ք յաւիտենական պատիժը. արդեօ՞ք ձեզ համար վաստակիցը գուրս է ձեր հտտուցումը»:

54. Եւ նրանք քեզնից տեղիկութիւն են ուզելու, թէ սա ճշմարիտ է: Ասա՛, «այո՛, իմ Տէրը վկայ է որ սա ճշմարիտ է. եւ դուք նւաճողներ չէք լինի»:

55. Եւ եթէ ամեն մի հողի, որ անիրաւութիւն է գործել, ունենար ինչ որ կայ երկրիս վրայ, նրանով փրկել կուզէք անպատճառ եւ նրանք կը կարծեն իրանց զղջումը երբ պատիժը կը տեսնեն: Բայց արդարութեամբ դատաստան կը լինի նրանց մէջ. եւ նրանք չեն զրկուի:

56. Ահա՛ Աստուծունն է ինչ որ կայ երկնքումը եւ երկրումս: Ահա՛ Աստուծոյ խոստումները ճշմարիտ են. քայց նրանցից շատերը չեն իմանում:

57. Նա կենդանացնում եւ մեռցնում է. եւ դուք ետ կը դառնաք նրա մօտը:

58. Ո՛վ մարդիկ, արդէն ձեզ համար քարոզ է եկել ձեր Տիրոջ կողմանէ, եւ անողջութիւն սրտերի մէջ եւ զածի համար, նաեւ առաջնորդութիւն եւ ողորմութիւն հաւատացեալներին:

59. Ասա՛, «Աստուծոյ շնորհքովը եւ նրա սղորմութիւնովը ուրախացէ՛ք. դա աւելի լաւ է քան թէ այն, որ զիպում էք»:

60. Ասա՛, «Ի՞նչ էք կարծում, ինչ որ Աստուած ձեզ աւել է իրբեւ կերակուր, դուք նրանից անմաքուր եւ

մաքուր էք արել»։ Առա՛, Աստուած է ձեզ հրաման ար-
ւել, թէ դուք էք Աստուծոյ վրայ գրպարտում»։

61. Եւ ի՞նչ են մտածելու յարութեան օրը նրանք,
որ Աստուծոյ նկատմամբ սուտեր են հնարում։ Իրաւի
Աստուած չնորհատու է մարդկանց դէմ. բայց նրանց
չստեբը չնորհակալ չեն։

62. Եւ դու մի գործի մէջ չես լինի եւ Ղուբանից
մի բան չես կարդայ եւ դուք մի գործ չէք անի, որ
ես ձեր վրայ վկա եղած չը լինեմ, երբ դուք նրանում
էք։ Եւ երկնքում ու երկրումս մի մըջիւնի ծանրու-
թեամբ եւ կամ սրանից փոքր եւ ոչ էլ մեծ մի բան
չըկայ ծածուկ, որ յայտնի գրեածքումը չը լինի։

63. Ահա՛ Աստուծոյ դաշնակիցների համար երկիւղ
չըկայ եւ նրանք չեն տխրի։

64. Նրանք որ հաւատում են եւ երկիւղածներ են,

65. Նրանց համար աւետիս կայ այս եւ միւս աշ-
խարհքում։ Աստուծոյ խօսքերի համար փոփոխութիւն
չը կայ, սա մի մեծ փրկութիւն է։

66. Նրանց խօսքը քեզ չը արտմեցնէ. որովհետեւ
քոլոր զօրութիւնը Աստուծունն է։ Նա յող իմացող է։

67. Ահա՛ ով որ կայ երկնքումը եւ ով որ կայ երկ-
քումս Աստուծունն է։ Եւ ի՞նչ բանի են հետեւում նը-
քանք, որ Աստուածանից ջոկ ընկերների են աղօթք
անում։ Նրանք սոսկ կարծիքի են հետեւում. եւ նրանք
միմիայն սուտ են խօսում։

68. Նա է, որ գիշերը ձեզ համար պատրաստել է,
որ նրանում հանդատանաք, եւ օրը իբրեւ լուսատես։
Ահա՛ սրանում նշաններ կան լող մարդկանց համար։

69. Ասում են, թէ Աստուած որդի ունի Գաւ լեցի
Նրանից, նա ինքնագոհ է. երկնքում եւ երկրումս եւ-
ղածը նրանն է. սրա համար փաստ կա՞, ձեզ մօտ-
կամ Աստուծոյ նկատմամբ աստ՞ւմ էք, ինչ որ չը գի-
տէք։

70. Առա՛, «Նրանք որ Աստուծոյ մասին սուտեր են
հնարում, երջանիկ չեն լինի»։

71. Աշխարհքում վայելչութիւն կայ, բայց յիտոյ ետ են դառնալու մեզ մօտ, յիտոյ մենք նրանց սաստիկ պատիժ ենք ճաշակել տալու, որովհետեւ չէին հաւատում:

72. Եւ կարգա՛ նրանց Նոյի պատմութիւնը, երբ նա ասաց իր ազգին, «ո՛վ իմ ազգ, եթէ իմ վիճակը եւ Աստուծոյ նշանները ձեզ ծանր է թւում, այն ժամանակ ես Աստուծուն եմ ապաւինում: Արդ ժողովեցէ՛ք ձեր բաները եւ ձեր աստուածընկերները, յիտոյ թո՛ղ ձեր բանը ձեզ համար խաւար չը լինի. յիտոյ ինձ յայտարարեցէ՛ք եւ մի՛ սպասէք»:

73. «Իսկ եթէ ետ դառնաք, ես ձեզնից վարձք չեմ պահանջում. իմ վարձքը միայն Աստուծոյ մօտ է, եւ ես պատէր եմ առել, որ միւսյիմ լինեմ»:

74. Բայց նրանք սուտ համարեցին նրան եւ տապա-նուժը նրա հետ եղողներին. եւ մենք նրանց յաջորդներ չինեցինք, իսկ մենք մեր նշանները սուտ համարողնե-րին ընկղմեցինք: Արդ տես թէ ինչպէս եղաւ խրատ-ւածների վախճանը:

75. Եւ նրանից յիտոյ մարդարէններ ուղարկեցինք իրանց ազգերին, եւ նրանք եկան հրաշքներով, իսկ նրանք իրանց առաջուց սուտ համարածին չէին հաւա-տում. եւ մենք այսպէս գոցեցինք պատ. իրանազանցնե-րի սրտերը:

76. Եւ նրանից յիտոյ մենք Մովսէսին եւ Ահարո-նին ուղարկեցինք մեր նշաններովը Փարաւօնի եւ նրա մեծամեծների մօտ. իսկ նրանք հպարտացան եւ մի յան-ցաւոր ազգ եղան:

77. Բայց երբ մեր կողմից եկաւ ճշմարտութիւնը, ասացին, «սա անշուշտ յայտնի կախարդութիւն է»:

78. Մովսէս ասաց, հիմայ դուք այն ճշմարտութիւնն էք ասում սրա, որ ձեզ համար եկել է. մի՞թէ սա կա-խարդութիւն է: Կախարդները երջանիկ չեն լինի:

79. Նրանք էլ ասացին, «դուք նրա՞ համար էք ե-կել, որ մեզ բաժանէք այն բաներիցը. որի վրայ մենք

տեսել ենք մեր հայրերին, որտէս զի երկրի գերիշխա-
նութիւնը ձերը լինի՝ մենք ձեզ չենք հաւատում»:

80. Եւ Փարաւօն ասաց. «բերէք ինձ մօտ մինչ գի-
տուն կախարդին»։ Եւ երբ կախարդները եկան, Մով-
սէս ասաց նրանց, «զցեցէ՛ք ձեր գցելիքը»։

81. Եւ երբ նրանք գցեցին, Մովսէսն ասաց, «ինչ
կախարդութիւն, որ դուք բերեցիք, Աստուած ան-
պատճառ փճացնելու է նրան, որովհետեւ Աստուած չա-
րագործների գործքին յաջողութիւն չի տայ»։

82. «Եւ Աստուած ճշմարտացնելու է ճշմարտութիւնը
իր խօսքովը, թէեւ ահաճելի էլ լինի յանցաւորներին»։

83. Եւ Մովսէսին միմիայն նրա ազգից մի ցեղը
հաւատաց Փարաւօնից եւ նրա մեծամեծներից վախե-
լու պատճառով, թէ նրանց փորձանքի մէջ կը գցէ.
որովհետեւ Փարաւօնը բարձր էր այն երկրումը եւ ա-
նառակ էր։

84. Մովսէս ասաց, «ո՛վ իմ ազգ, եթէ դուք հաւա-
տում էք Աստուծուն, նրան ապաւինեցէ՛ք, եթէ միւս-
լիմներ էք»։

85. Նրանք էլ ասացին, «մենք Աստուծուն ենք ա-
պաւինած. ո՛վ մեր Տէր, այս անիրաւ ազգին թող մի՛
տար, որ մեզ փորձանքի մէջ գցէ»։

86. «Եւ քո ողորմութիւնովը ազատիր՝ մեզ անհա-
ւատների ազգիցը»։

87. Եւ մենք յայտնութիւն տեսցինք Մովսէսին ու
իրան եղբօրը, «ձեր ազգի համար դուք երկուսդ բնա-
կարաններ չինեցէ՛ք, Եգիպտոսի մէջ, եւ ձեր տները ա-
ղօթարան չինեցէ՛ք, եւ կատարեցի՛ք աղօթքը. եւ
աւետիս տո՛ւր հաւատացեալներին»։

88 Մովսէս էլ ասաց, «ո՛վ մեր Տէր դու Փարաւօ-
նին եւ նրա մեծամեծներին զարդ ու ստացւածք ես տը-
ւել այս աշխարհքում. ո՛վ մեր Տէր, որ քո ճանապար-
հիցը մօլորեան. ո՛վ մեր Տէր, ոչնչացրո՛ւ նրանց ըս-
տացւածքը եւ պնդացրո՛ւ նրանց սրտերը, որ չը հա-
ւատան մինչև որ ցաւալի պատիժը տեսնեն»։

89. Նա էլ ասաց, «ձեր աղօթքն արդէն լուեց. արդ զուք երկուսդ հաստատ կացէ՛ք եւ մի՛ հետեւէք չըհասկացողների ճանապարհին»:

90. «Եւ մենք Իսրայէլի որդիներին անց կացրեցինք ծովուլը», եւ նրանց ետեւիցն ընկան Փարաւօնը եւ նրա գունդերը չարութեամբ եւ թշնամութեամբ. մինչեւ որ մօտ էր ընկղմելու. նա ասաց, «ես հաւատում եմ. որ մի ուրիշ Աստուած չ'կայ քացի նրանից. որին հաւատում են Իսրայէլի որդիքը, եւ ես միւսլիմ եմ»:

91. Հի՛մայ. դու արդէն առաջուց ապստամբ էիր եւ ապականիչներիցն էիր,

92. Բայց այսօր մենք քեզ մարմնուլը կազատենք, որ քեզանից յետոյ եկողների համար նշան լինես: Իրաւի մարդկանց շատերը անփոյթ են մեր նշանների մասին»:

93. Սակայն մենք Իսրայէլի որդկանցը համար լաւ բնակարաններ էինք պատրաստել. եւ մենք նրանց կեւրակրեցինք քարիքներով, եւ նրանք անհամաձայն չէին իրար հետ մինչեւ որ գիտութիւնը եկաւ: Քս Տէրը դատաստան է անելու նրանց մէջ յարութեան օրը այն բանի համար, որի մասին անհամաձայն էին իրար հետ:

94. Եւ եթէ դու կատկածի մէջ ես այն բանի համար որ քեզ համար իջեցրել ենք, այն ժամանակ նքանցից հարցրօ՛ւ. որ քեզանից առաջ կարգում էին գիրքը: Սակայն քեզ համար եկել է ճշմարտութիւնը քո Տիրոջ կողմից, ուրեմն երկմտողներիցը մի՛ լինիր:

95. Նաեւ նրանցից մի՛ լինիր, որ Աստուծոյ նշանները սուտ են համարում, որովհետեւ այն ժամանակ կորստեան կը գնաս:

96. Նրանք, որոնց մասին Աստուծոյ խօսքը ճշմարտացաւ, չեն հաւատալու:

97. Եւ նոյն իսկ եթէ ամեն հրաշք գալու լինի մինչեւ ցաւալի պատիժն էլ տեսնելու լինեն:

98. Եւ եթէ մի քաղաք էլ չէ եղել որ հաւատար եւ իրան հաւտքն իրան օգնէր, քացի Յօնիանի ժողովրդից, որ երբ հաւատացին, մենք նրանցից հեռացրեցինք

նախատինքի պատիժը այս աշխարհում եւ նրանց ազ-
րեցրեցինք մի առ ժամանակ :

99. Եւ եթէ քո Տէրը կամենար, երկրումս եղողները
ամենքն էլ միասին կը հաւատային, մի՞թէ դու կ'ստի-
պես մարդկանցր, որ հաւատացեալներ դառնան :

100. Եւ ոչ մի մարդ իրաւունք չունի հաւատալու
առանց Աստուծոյ հրամանի : եւ նա պղծութիւն կը բեր-
է նրանց վրայ, որ չեն հասկանում :

101. Ասա՛, «մտիկ արէք թէ ինչ կայ երկնքումս ու
երկրումս : բայց նշանները եւ խրատը օգուտ չի անի
մի ազգի : որ չէ հաւատում» :

102. Արդ՛ մի՞թէ իրանցից առաջ եղած անցած ազ-
գերի օրերի պէս բաներ են սպասում : Ուրեմն ասա՛,
«սպասեցէ՛ք, ես էլ ձեզ նեա միասին սպասողներիցն
եմ» :

103. Յետոյ մենք կ'ազատենք մեր մարգարէներին
եւ նրանց որ հաւատում են : այսպէս պարտականու-
թիւն է մեր վրայ որ հաւատացեալներին փրկենք :

104. Ասա՛, «ո՛վ մարդիկ, եթէ դուք իմ կրօնքի
մասին կասկած ունէք, ուրեմն ես չեմ պաշտի նրանց,
որ դուք բաց ի Աստուածանից պաշտում էք այլ ես պաշ-
տում եմ այն Աստուծուն, որ ձեզ մեռնել է տալիս :
Եւ ես պատէր ունեմ, որ հաւատացեալ լինեմ» :

105. Եւ թէ «երեսդ դարձրո՛ւ դէպի իմ կրօնքը
իրրեւ բարեկրօն, եւ մի՛ լինիր կոտորածներիցը» :


106. Եւ թէ «բաց ի Աստուածանից ոչնչի աղօթք
մի՛ անիր, որ քեզ ո՛չ օգուտ ունի ո՛չ վնաս : իսկ եթէ
անելու լինես, այն ժամանակ դու անպատճառ անիրաւ
ես» :

107. Եւ եթէ Աստուած քեզ մի չարիքով հարւածէ,
նեռացնող չի լինի նրա համար բացի իրանից : եւ եթէ
նա քեզ մի բարիք տալ ուզէ, նրա շնորհքը ես քաջող
չի լինի : Իբր ծառաներից որին ուղում է, տալիս է
նա ներող ողորմած է :

108. Ասա՛, «ո՛վ մարդիկ, արդէն ձեր Տիրոջ կող-

մանէ եկել է ձեզ համար ճշմարտութիւնը. ուրիմն ով որ առաջնորդուած է ուղիղ ճանապարհով, իր հոգուն համար է առաջնորդուած, եւ ով որ մոլորվում է, իրան ՚ի վնաս է մոլորվում: Իսկ ես ձեզ համար պատասխանատու չեմ»:

109. Դու հետեւիր այն բանին, որ քեզ յայտնութիւն է եղել, եւ համբերի՛ր մինչեւ Աստուած դատատան անէ, եւ նա ամենալաւ դատաւորն է:



11) Ս Ո Ւ Ր Է Զ Ո Ւ Դ

Մէքքէական. հարիւր քսաներեք այլ:

Գլժած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Ր. Մի գիրք. որի նշանները հաստատուած են, յետոյ բացատրուած մի իմաստուն գիտունի կողմանէ:

2. Թէ միմիայն Աստուծուն պաշտեցէ՛ք: Ես. նրա կողմիցը ձեզ համար խրատիչ եւ աւետող եմ:

3. Եւ թէ մեղաց թողութիւն խնդրեցէ՛ք ձեր Տիրոջից, յետոյ նրան դարձէ՛ք, որ ձեզ զեղեցիկ բարիք վայելել տայ մինչեւ մի որոշ ժամանակ, եւ նա ամեն մի շնորհաց արժանուն պիտի տայ իր շնորհքը. իսկ եթէ մերժէք, ահա ես վախ ունեմ ձեզ համար մի մեծ օրւայ պատիժից:

4. Դուք Աստուծուն էք դառնալու. եւ նա ամենակարող է:

5. Ահա՛ նրանք ծուռ մ են իրանց կուրծքերը, որ իրանց թագցնեն նրանից:

6. Ահա՛ երբ իրանց ծածկում են հանդերձներով, նա գիտէ նրանց թագցրածը եւ նրանց յայտնածը:

7. Ահա՛ նա գիտէ թէ սրտերում ինչ կայ:

8. Եւ երկրի վրայ մի անասուն չըկայ, որ նրա կերակուրը Աստուծոյ պարտականութիւնը չըլինի: Նա գիտէ նրա հանգստանալու եւ բնակեւելու տեղը՝ բոլորն էլ յայտնի գրքումն է:

9. Եւ նա է, որ ստեղծել է երկինքը եւ երկիրը վեց օրւայ մէջ, եւ նրա գահը ջրերի վրայ էր, որ ձեզ փորձէ, թէ ձեզնից որն է գործով գեղեցկագոյնը:

10. Եւ եթէ ասես, թէ «դուք մահից յետոյ յարութիւն էք առնելու», անհաւատներն անպատճառ կասեն, «սա միայն պարզ կախարդութիւն է»:

11. Եւ եթէ մենք նրանց պատիժը մինչեւ մի յայտնի սերունդ ուշացնենք, նրանք ասելու են նրան ի՞նչը հա պահեց»։ Ահա՛ այն օրը, որ նա կըզայ նրանց համար, նրան մի գարձնող չի լինի նրանցից՝ եւ այն ժամանակ կը շրջապատէ նրանց այն որ ծաղրում էին:

12. Եւ եթէ մենք մարդու մի կողմանէ ողորմութիւն ճաշակել տանք, յետոյ նա ետ առնենք նրանից, այն ժամանակ նա կը յուսահատուի, անհաւատ կը դառնայ:

13. Եւ եթէ նրան մնասներ հասնելուց յետոյ նրան պարզեւներ տանք, անպատճառ կ'ասէ, «ինձնից չաքիբները անցան գնացին», եւ նա կուրախանայ եւ կը պարծենայ:

14. Նրանցից ջուկ, որ համբերում եւ բարիք են գործում. նրանց համար թողութիւն եւ մեծ վարձք կայ:

15. Արդ գուցէ դու դէն ես դցում քեզ եղած յայտնութիւնը. քո սիրտը նեղանում է, որ ասում են, «եթէ նրա համար մի գանձ չ'իջեցնուի կամ նրա հետ մի հրեշտակ չ'գայ, չ'ենք հաւատայ. ահա՛ դու մի-

այն խրատիչ ես, եւ Աստուած է ամեն բանի կառավարիչը:

16. Կամ ասում են, թէ «նա ինքն է հնարում նրբան»: Ասա՛, «այդա ուրեմն որա նման տասը սուրէ բերէք հնարած եւ կանչեցէ՛ք բացի Աստուածանից, ուրին որ կարող էք, եթէ ճշմարիտ էք»:

17. Եւ եթէ նրանք ձեզ չը պատասխանեն, խնայէ՛ք Աստուծոյ գիտութեամբն է իջեցրած, եւ թէ մի ուրիշ Աստուած չը կայ բացի նրանից: Հիմայ գուք միւսլիմանե՞ր էք:

18. Ով կամենայ այս աշխարհքի կեանքը եւ նրա զարդը, մենք կը հատուցանենք այնպիսիներին նրանում իրանց գործերի համեմատ, եւ նրանք պակաս չեն ստանայ նրանում:

19. Բայց նրանց համար միւս աշխարհքում կայ միմիայն կրակը, եւ կը կորչէ ինչ որ նրանում արել են, եւ ունայն է, ինչ որ գործում էին:

20. Հիմայ միւսնո՞յն է նա, որ իր Տիրոջ վկայութեան վրայ է եւ նրան հետեւում է մի վկայ նրա կողմից եւ նրանից առաջ էլ Մովսէսի գիրքն է իբրեւ առաջնորդ եւ ողորմութիւն, — այսպիսիները հաւատում են նրան. բայց գու՛նգերցն ով որ նրան չէ հաւատում, նրա համար պատրաստած է կրակը: Ուրեմն նրա մասին կասկածի մէջ մի՛ լինիր, որովհետեւ նա ճշմարտութիւն է քո Տիրոջ կողմանէ: Բայց մարդկանցից շատերը չեն հաւատում:

21. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա որ Աստուծոյ վրայ սուտեր է հնարում: Սրանք իրանց Տիրոջ մօտ են տարւելու, եւ վկաներն ասելու են, «սրանք են որ իրանց Տիրոջ դէմ սուտ էին խօսում»: Ահա՛ Աստուծոյ անէծքը անիրաւների վրայ է,

22. Որ մոլորեցնում էին Աստուծոյ ճանապարհիցը եւ ուզում էին ծոցեցնել եւ միւս աշխարհքին չէին հաւատում. նրանք նւաճողներ չէին երկրի վրայ. եւ նրանք բացի Աստուածանից պաշտպաններ չեն սուսնայ:

նրանց պատիժը կրկնապատիկ է լինելու, որովհետեւ
չէին կարողանում լսել եւ չէին տեսնում:

23. Սրանք են որ իրանց հոգիներին մխատում են,
եւ հետանալու են նրանցից իրանց հնարածները:

24. Անկասկած, նրանք միւս աշխարհքում ամենա-
մխատւածներն են:

25. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարի գործեր
կատարում եւ իրանց Տիրոջ առաջին խոնարհւում, նր-
անք գրախտի ընկեքներն են. նրանք միշտ կը մնան
նրանում:

26. Այն երկու խումբերը նման են կոյրերի եւ խու-
լերի եւ տեսնողների ու լսողների. մի՞թէ սրանք ի-
րար նման են. մի՞թէ չեն մտածում:

27. Մենք արդէն ուղարկեցինք Նոյին իր ժողովրդի
մօտ թէ «ես ձեզ համար յայտնի խրատիչ եմ»:

28. «Որ միայն Աստուծուն պաշտէք. ես ձեզ համար
վախում եմ մի ցաւայի օրւայ պատիժից»:

29. Բայց իր ժողովրդի մեծամեծները, որ չէին հա-
ւատում, ասացին, «մենք տեսնում ենք, որ դու միայն
մի մարդ ես մեզ նման. եւ տեսնում ենք, որ քեզ մի-
միայն մեր նւաստներն են հետևում, որ դիւրահաւան
են. եւ բնաւ չենք տեսնում որ դուք մի գերազան-
ցութիւն ունէք մեզանից. այլ կարծում ենք որ ստա-
խօսներ էք»:

30. Եւ նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ի՞նչ էք
կարծում, եթէ ես իմ Տիրոջ վկայութիւնն ունեմ եւ
նա ինձ իր կողմանէ ողորմութիւն է աւել, որի հա-
մար դուք կոյր էք, — մի՞թէ մենք այս բաները հա-
մար ձեզ կը ստիպենք, քանի որ դուք նրանցից զըզ-
վում էք»:

31. «Ո՛վ իմ ժողովուրդ, ես սրա համար ձեզնից
զբամ չեմ պահանջում, որովհետեւ իմ վարձքը Աստու-
ծոյ մօտ է. եւ ես նրանց չեմ մերժի որ հաւատում են.
ահա՛ նրանք հանդիպելու են իրանց Տիրոջ. բայց
եւ տեսնում եմ, որ դուք մի ազէտ ժողովուրդ էք»:

32. «Ո՛վ իմ ժողովուրդ, ո՞վ կարող է ինձ օգնել եթէ ես նրանց մերժեմ՝ մի՞թէ չէք հասկանում»:

33. «Ես ձեզ չեմ ասում թէ Աստուծոյ գանձերն ինձ մօտ են, ու գաղտնիքները չը գիտեմ, եւ չեմ ասում թէ ես հրեշտակ եմ, եւ չեմ ասում նրանց մասին, որոնց արհամարհում են ձեր աչքերը, թէ Աստուած նրանց մի բարիք չի տայ՝ միայն նա գիտէ նրանց սրտերումը ինչ կայ. — այն ժամանակ ես անիրաւներիցը կը լինէի»:

34. Նրանք էլ ասացին, «դու արդէն վիճեցիր մեզ հետ եւ մեր վէճը շատցրիր՝ արդ բե՛ր այն, որով դու մեզ սպառնում էիր, եթէ ճշմարիտ մարդ ես»:

35. Նա էլ ասաց, «միմիայն Աստուած կը բերէ այն ձեզ համար, եթէ կամենայ, եւ դուք նրան չէք տկա-
րացնի»:

36. «Եւ իմ խրատը ձեզ օգուտ չի անի, եթէ ձեզ խրատել էլ ուզեմ. եթէ Աստուած կամենում է որ ձեզ մոլորեցնէ. նա է ձեր Տէրը եւ դուք նրան էք դառ-
նալու»:

37. Կամ ասում են, «նա հնարում է այն»՝ եթէ ես նրան հնարում լինեմ, այն ժամանակ մեղքը իմ վրայ է. բայց ձեր գործած մեղքիցը ես ազատ եմ:

38. Եւ Նոյին յայտնութիւն եղաւ, թէ քո ժողովրդ-
դից միայն նրանք են հաւատալու, որոնք արդէն հա-
ւատացի են. ուրեմն նրանց արածի մասին մի՛ տըրտ-
մի՛ր»:

39. «Եւ մեր աչքի առջին ու մեր յայտնութիւնով շինի՛ր տապանը, եւ անիրաւների մասին ինձ հետ մի՛ խօսակցիր, որովհետեւ նրանք պէտք է ընկղմւեն»:

40. Եւ նա շինում էր տապանը. եւ ամեն անգամ որ նրա մօտովը անցնում էին իր ժողովրդի մեծամեծները, ծաղրում էին նրան: Նա էլ ասաց, «դուք ծաղրում էք մեզ. բայց մենք էլ ձեզ ենք ծաղրելու, ինչպէս դուք էք ծաղրում: Դուք շուտով կիմանաք»:

41. Պատիժը որին դպչի, նրան կը նւաստացնէ, եւ նրան կը պատէ հաստատ պատիժը:

42. Մի նշեւ եկաւ մեր հրամանը եւ թոնիրը վառ-
ւեց եւ մենք ասացինք, «ամենիցը երկու երկու զոյգ-
ա՛ն նրա մէջը եւ քո ընտանիքը բացի նրանից, որի
համար արդէն կանխաւ խօսք է եղել, եւ ով որ հա-
ւատում է» • բայց միայն քիչեր էին, որ հաւատում
էին նրա հետ միասին :

43. Եւ նա ասաց, «վի՛ր ելէք նրա մէջը Աստուծոյ
անունովը թէ շարժի թէ կանգնի, ահա իմ Տէրը ներող
ողորմած է» :

44. Եւ տապանը գնում էր նրանցով սարերի պէս
ալիքների միջովը : Եւ Նոյը կանչեց իր որդուն, որ
առանձնացել էր. «ո՛վ իմ որդի, մեզ հետ միասին վեր
ելի՛ր, եւ անհաւատների հետ մի՛ լինիր» :

45. Նա էլ ասաց, «ես շուտով մի սարի կապաստան-
ւեմ, եւ նա ինձ կը պահէ ջրիցը» : Նա էլ ասաց, «այ-
սօր ոչ ոք Աստուծոյ հրամանիցը չի պրծնի բաց ի նը-
րանից, որին Աստուած ողորմել է» : Եւ ալիքը մտաւ
նրանց մէջ անզը եւ նա խեղդւեց :

46. Եւ ասեց, «ո՛վ երկիր, կուլ տուր ջուրդ, եւ
ո՛վ երկինք, ես պահիր» • եւ ջուրը քիչացաւ. եւ հը-
րամանքը կատարեց : Եւ տապանը կանդնեց ձուղիի
վրայ : Եւ ասեց անիրաւ մարդկանց, «կորէ՛ք» :

47. Նոյը կանչեց իր Տիրոջը եւ ասաց, «ո՛վ իմ Տէր,
իմ որդին իմ ընտանիքիցն էր, եւ ահա՛ քո խոստումը
ճշմարիտ է • եւ դու դատաւորների դատաւորն ես» :

48. Նա էլ ասաց, «ո՛վ Նոյ, նա քո ընտանիքիցը
չէ • նա ամբարիշտ գործ է • ուրեմն դու դիմացածդ ին-
ձանից մի՛ խնդրիր • եւ ես քեզ խրատում եմ. թէ մի՛
լինիր արդէտ մարդ» :

49. Նա էլ ասաց, «ես ներողութիւն եմ խնդրում,
որ քեզնից չիմացած բանս խնդրեցի • եւ եթէ դու
ինձ չը ներես եւ ինձ չ'ողորմես, ես կորածներիցը կը
լինեմ» :

50. Ասեց, «ո՛վ Նոյ, վար գնա՛ մեր մօտիցը խա-
ղաղութիւնով եւ օրհնութիւններ լինի քեզ վրայ եւ
այն քեզ հետ եղողներից մի քանի խումբերի վրայ :

խակ միւս խումբերին վայելել պիտի տամ, և յետոյ նրանց դպչելու է մեր ցաւալի պատիժը»:

51. Սա գաղտնիքների պատմութիւն է, որ քեզ յայտնում ենք. սա ո՛չ դու դիտէիր, ո՛չ էլ քո ազգը քեզնից առաջ: Ուրեմն համբերի՛ր, որ վախճանը երկրագածներինն է:

52. Եւ Ադի համար ուղարկեցինք իրանց եղբայր Հուդին: Նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, Աստուծուն պաշտեցէ՛ք. դուք նրանից զատ ուրիշ Աստուած չ'ունէք. դուք միմիայն զբազարտիչներ էք»:

53. «Ով իմ ժողովուրդ, ես սրա համար ձեզնից վարձք չեմ պահանջուի. իմ վարձքս միայն Նա է, որ ինձ օտեղծել է. մի՞թէ չէք հասկանում»:

54. «Ո՛վ իմ ժողովուրդ, թողութիւն խնդրեցէ՛ք ձեր Տի ոջից, յետոյ նրան դարձէ՛ք, և Նա երկնքիցը ձեզ համար առաօտէն անձրև կ'ուղարկէ»:

55. «Եւ Նա ձեր ոյժի վրայ ոյժ կ'աւելցնէ, և ետ մի՛ դառնաք մեղանչելով»:

56. Նրանք էլ ասացին ո՛վ Հուդ դու մեզ համար վկայութիւն չես բերել, և մենք քո խօսքովը չենք ձգի մեր աստուածներին, և մենք քեզ չենք հաւատում»:

57. «Մենք միայն ասում ենք, որ մեր աստուածներից մինը քեզ հարւածել է մի շարիքով»: Նա էլ ասաց, «ես Աստուծուն վկայ եմ կանչում, և դուք էլ վկայ էք որ ես զրանից ազատ եմ, որ դուք աստուածընկերներ էք ընդունում»:

58. «Նրանից ջոկ: Արդ բոլորդ էլ ինձ դէմ դաւտարքեցէ՛ք եւ յետոյ ինձ մի՛ սպասեցնէք»:

59. «Ես իմ եւ ձեր Տէր Աստուծուն եմ ապաւինել: Մի անասուն չկայ, որ նա նրա ճակատի մազերիցը չը բռնէ. ա՛հա՛ իմ Տէրը ուղիղ ճանապարհի վրայ է»:

60. Արդ եթէ դուք ետ քաշէք, ես ձեզ արդէն առաջարկեցի այն բանը, ինչով ես ուղարկւել եմ ձեզ մօտ. և իմ Տէրը ձեր տեղն իրան համար մի ուրիշ

ազգ կը յինէ. եւ զուք նրան ոչինչ մնաս չէք կարող հասցնել. որովհետեւ իմ Տէրը ափնն բանի պահապան է»:

61. Եւ երբ մեր հրամանը հասաւ, մենք ազատեցինք Հուդին մեր ողորմութիւնովը եւ նրա հետ միասին նըրանց էլ, որ հաւատում էին. եւ նրանց ազատեցինք խիստ պատիժից:

62. Այս Ազ ազգն էր, որ իրանց Տիրոջ նշաններին դէմ հակառակեցին եւ նրա մարգարէների դէմ ապրտամբեցին, եւ հնազանդեցին ափնն մի բռնակալի:

63. Եւ այս աշխարհում եւ յարութեան օրը անէծքի արժանացան: Ահա՛ Ազ ազգը անհաւատ եղաւ իր Տիրոջը. թող կորչի՛ Հուդի ազգը՝ Ազը:

63. Եւ Ասամուդ ազգին ուղարկեցինք նրանց եզրայր Սայէյհին». նա ասաց, «ո՛վ իմ ազգ, պաշտեցէ՛ք Աստուծուն. դուք նրանից ջոկ ուրիշ Աստուած չունէք. նա է որ ձեզ շինել է երկրիցը եւ ձեզ ապրեցնում է նրանում. ուրեմն նրանից ներողութիւն խնդրեցէ՛ք յետոյ նրան դարձրէք. որովհետեւ իմ տէրը մօտիկ է, պատասխանող է»:

65. Նրանք էլ ասացին, «ո՛վ Սալէհ, մենք արդէն նրանից առաջ քեզ վրայ յոյս էինք դրել. հիմայ դու մեզ արդիւ՞՞մ հոս, որ մեր հայրերի պաշտածը չը պաշտենք. իսկ մենք կասկած ունենք այն բանի համար, որին դու մեզ հրաւիրում ես, երկմտելի է»:

66. Եւ նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ի՞նչ էք կամենում, եթէ ես իմ Տիրոջ վկայութիւնն ունեմ եւ նա ինձ տակ է ողորմութիւնը. հիմայ ով կարող է ինձ օգնել Աստուծոյ հակառակ՝ եթէ ես նրա դէմ ապրտամբեմ. ուրեմն դուք միմիայն իմ կորուստն էք շատացնում»:

67. Ո՛վ իմ ժողովուրդ, այս Աստուծոյ ուղարկեալ համար մի նշան է. թող աւէք նա ուտէ Աստուծոյ

երկրումը, եւ նրան շարութեամբ մի դպչէք, եթէ ոչ նա ձեզ շուտով կը պատժէ»:

68. Բայց նրանք ջլատեցին նրան: Նա էլ ասաց, «դուք ձեր տներումը վայելեցէք երեք օր. սա ձեզ համար անսխալ խոստում է»:

69. Եւ երբ մեր հրամանը եկաւ, մենք ազատեցինք այն օրւայ նախատինքիցը Սալէհին մեր ողորմութիւնովը եւ նրանց, որ նրա հետ միասին հաւատացել էին որովհետեւ քո Տէրը հզօր զօրաւոր է:

70. Եւ անիրաւներին բռնեց փոթորիկը եւ միւս աստուօտը նրանք փուած էին երեսների վրայ իրանց տներումը:

71. Իբր թէ նրանում չէին բնակւած: Անա՛ այսպէս անհաւատ էր Սամուդ ազգը. թող կորչէ՛ Սամուդը:

72. Բայց արդէն Աբրահամի մօտ էլ եկան մեր դեսպանները աւետիքով եւ ասացին, «խաղաղութի՛ւն» . նա էլ ասաց, «խաղաղութի՛ւն» . եւ նա չ'ուշացրեց նրանց առաջին խկոյն մի հորթ գնելու:

73. Բայց երբ տեսաւ, նրանք ձեռք չեն հասցնում նրան, նրանց չըճանաչեց եւ վախեց նրանցից: Նըրանք ասացին, «մի՛ վախիր, մենք ուղարկւած ենք Աովտի ժողովրդի համար»:

74. Եւ նրա կինը, որ կանգնած էր, ծիծաղեց. եւ մենք նրան աւետեցինք Իսահակը եւ Իսահակից յետոյ Յակոբը:

75. Նա էլ ասաց, «ո՛հ վա՛յ ինձ. մի՞թէ ես կը ծընեմ, որ ես պառաւ եմ, եւ այս իմ մարդն էլ ծեր է»:

76. Նրանք ասացին, «դու զարմանում ես Աստուծոյ գործին. Աստուծոյ ողորմութիւնը եւ օրհնութիւնները ձեր ընտանիքի վրայ է՛նա օրհնւած փառաբանւած է»:

77. Եւ երբ երկիւղը գնաց Աբրահա՛իցը եւ աւետիքն եկաւ, նա վիճում էր մեզ հետ Աովտի մարդկանց մասին, որովհետեւ Աբրահամը հեզ, կարեկից եւ աստուածավախ էր:

78. «Ո՛վ Աբրահամ, սրանից ե՛տ քաշուի՛ր. որովհե-
տեւ քո Տիրոջ որոշումը արդէն եկել է, եւ նրանց մի
պատիժ է հասել, որ ետ չի գարձնուի»:

79. Եւ երբ մեր դեսպանները Ղովտի մօտ եկան,
նա տագնապեց նրանց մասին եւ խիստ նեղուում էր
նրանց պատճառովը, եւ ասում, «սա մի չարագուշակ
օր է»:

80. Եւ նրա ժողովուրդը, առաջուց սովոր էին չա-
րութիւններ անելու, յարձակեցին նրա վրայ. նա էլ
ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ահա՛ իմ երկու աղջիկներս,
որոնք աւելի յարմար են ձեզ համար. ուրեմն վախե-
ցէ՛ք Աստուածանից եւ ինձ ամօթահար մի՛ անէք իմ
հիւրերի մօտ: Զեզնից չըկա՞յ մի արդար մարդ»:

81. Նրանք էլ ասացին, «դու արդէն գիտես, որ
մենք արդէն իրաւունք չունենք քո աղջիկների վրայ.
եւ շատ լաւ գիտես, թէ մենք ինչ ենք ուզում»:

83. Եւ նա ասաց, «ո՛հ եթէ ես կարողութիւն ու-
նենայի ձեր դէմ. կամ մէկ հաստատ հիմնի վրայ կա-
րողանայի կոթնել»:

83. Նրանք էլ ասացին, «ո՛վ Ղովտ, մենք քո Տի-
րոջ դեսպաններն ենք. նրանք երբէք քեզ ձեռք չեն
գալցնի. գիշերւայ մի մասումդ ճամբորդի՛ր քո ընտա-
նիքովը. եւ ձեզնից ոչ մէկը ետեւին չը գառնայ բացի
կնոջիցդ. ահա՛ նրան գաչելու է ինչ որ նրանց է գըպ-
չում: Նրանց համար կատարուելու է այս խոստումը
այս առաւօտ. չէ՞ որ առաւօտը մօտ է»:

84. Եւ երբ մեր որոշումը եկաւ, մենք նրա վերելի
կողմ դարձրեցինք, եւ մենք նրանց վրայ եփած կա-
ւից քարեր տեղացրեցինք, որոնք նշանաւորւած էին
քո Տիրոջ կողմանէ: Եւ նա հեռու չէ անիրաւներիցը:

85. Եւ Մեղեան ազգին ուղարկեցինք իրանց եղ-
բայր Շուէյբին. նա ասաց, «ո՛վ իմ ազգ. պաշտեցէ՛ք
Աստուծուն. դուք ուրիշ Աստուած չունէք նրանից ջոկ»:

եւ չափն ու կշիռը մի՛ պակասացնէք: Ես տեսնում եմ ձեզ բարեքնների մէջ, բայց վախ ունեմ ձեզ համար մի պաշարող օրւայ պատժից»:

86. «Եւ ո՛վ իմ ազգ, չափն ու կշիռը հատուցրէ՛ք արդարութիւնով: Եւ մարդկանց մի՛ խարէք, որ նրանց բաներն առնէք. եւ ման մի՛ գաք երկրումը ապակա- նութիւններ անելով»:

87. «Աստուծոյ պահպանածը աւելի լաւ է ձեզ հա- մար, եթէ դուք հաւատացեալներ էք»:

88. «Իոկ ես ձեր պահպանը չեմ»:

89. Նրանք ասացին, «ո՛վ Շուէյբ, արդեօ՞ք քո ա- ղօթքներն են քեզ հրամայում, որ մենք ձգենք այն որ մեր հայրերը պաշտում էին, կամ անե՞նք մեր ստաց- ւած քովը ինչ որ կամենում ենք. ահա՛ դու ես միայն հեզ եւ արդար»:

90. Նա էլ ասաց, «ո՛վ իմ ազգ, ի՞նչ էք կարծում, եթէ ես վկայութիւն ունեմ իմ Տիրոջ կողմանէ, եւ նա ինձ կերակրել է նրանից բարի կերակրով, եւ չեմ ուզում որ ձեր հետեւեմ այն բաների մէջ, որոն- ցից ես ձեզ զգուշացնում եմ. ես իմ կարողութիւնով միայն ձեր բարւոքումն եմ ուզում. եւ իմ յաջողու- թիւնը միմիայն Աստուծով է. նրան եմ յուսացել եւ նրան եմ դառնում»:

91. «Ո՛վ իմ ազգ, թող ձեր ինձ դէմ եղած հակա- տակութիւնը ձեզ չը հանդիպեցնէ այնպիսի հարւածի, որ ստացաւ Նոյի ժողովուրդը կամ Հուդի ժողովուրդը կամ Սայէհի ժողովուրդը, եւ Ղովտի ժողովուրդը, որ ձեզնից հետու է»:

92. «Թողութիւն խնդրեցէ՛ք ձեր Տիրոջից, յետոյ զարձէ՛ք նրան. որովհետեւ իմ Տէրը ողորմած գթած է»:

93. Նրանք ասացին, «ո՛վ Շուէյբ մենք շատ բան չենք հասկանում քո ասածից, եւ մենք տեսնում ենք, որ դու մեր մէջը մի տկար մարդ ես. եթէ քո տոհմը չը լինէր, քեզ անպատճառ կը քարկոծէինք. եւ դու մեզնից զօրաւոր չես»:

94. Նա էլ ասաց, «ո՛վ իմ ազգ, մի՞թէ իմ տոհմը ձեզ համար աւելի զօրաւոր է քան թէ Աստուած. դուք մի՞թէ նրան արհամարհելով ձեր ետեւն էք գցում: Ահա՛ իմ Տէրը գիտէ ձեր բոլոր արարքները»:

95. «Եւ ո՛վ իմ ազգ, դուք գործեցէ՛ք ձեր տեղերը, ես էլ եմ գործում. շուտով կը հասկանաք»:

96. «Որին հասնէ մի պատիժ, նա նրան խայտառակելու է, նաեւ ով որ ստախոս է: Ուրեմն սպասեցէ՛ք, ես էլ սպասում եմ ձեզ հետ»:

97. Եւ երբ մեր որոշումը եկաւ, մենք ազատեցինք Շուէյբին եւ նրա հետ հաւատացեալներին մեր ողորմութիւնովը. եւ անիրաււներին բռնեց փոթորիկը, եւ նրանք առաւօտը փուած էին հրեաների վրայ իրանց տներումը.

98. Իբր թէ չէին բնակւած նրանցում: Թող կորչէ՛ Մադեանը ինչպէս կորաւ Սամուզը:

99. Եւ Մովսէսն էլ ուղարկեցինք մեր հրաշքներովը եւ յայտնի ապացոյցով Փարաւօնի եւ նրա մեծամեծների մօտ, որոնք հետեւում էին Փարաւօնի հրամաններին, բայց Փարաւօնի հրամանը արգար չէր:

100. Յարութեան օրը նա գնալու է իր ազգի առաջը, եւ նրանց տանելու է կրակի մէջը, եւ ի՛նչ վատ գնացք է, որ այնտեղ կը հասնեն:

101. Նրանք արդէն այս աշխարհքում հալածվում էին անէծքից, եւ յարութեան օրը կ'ստանան մի ընծայ. ի՛նչ վատ ընծայ:

102. Սա այն քաղաքների պատմութիւնիցն է, որ նրանց մասին քեզ պատմեցինք. կան մնացածներ եւ կան աւերակներ:

103. Եւ մենք նրանց անիրաւութիւն չարեցինք. այլ իրանք միասեցին իրանց հոգիներին. եւ իրանց աստուածները, որոնց ազօթք էին անում բաց ի Աստուածանից, նրանց ոչինչ չ'օգնեցին, երբ քո Տիրոջ որոշումը եկաւ, եւ ոչինչ չուելացրեց բաց ի կորուստից:

105. Եւ այսպէս է քո Տիրոջ պատիժը, երբ պատ-
ժեց այն անիրաւ քաղաքները, որովհետեւ նրա պա-
տիժը ցաւալի սաստիկ է :

105. Ահա՛ սրանում նշան կայ միւս աշխարհի պատ-
ժիցը վախեցողի համար. սա այն օրն է, որ մարդիկը
սրա մօտ են ժողովելու, եւ սա վկայութեան օրն է :

106. Եւ մենք նրան չենք ուշացնի որոշեալ ժամա-
նակիցը :

137, Այս օրը, որ եկաւ, մի անձ չի խօսի առանց
նրա հրամանի. եւ նրանցից ոմանք ամբարիշտ ոմանք
երջանիկ կը լինեն :

108. Իսկ ամբարիշտները կրակումը կը լինեն, եւ
նրանում կը գոռան եւ կ'աղաղակեն :

109. Միշտ նրանում կը մնան մինչեւ երկինքն ու
երկիրը կայ. բացի նրանից, որ քո Տէրը կամենայ.
որովհետեւ քո Տէրն անում է, ինչ որ ուզէ :

110. Իսկ երջանիկները դրախտումը կը լինեն, միշտ
նրանում կը մնան, մինչեւ երկինքն ու երկիրը կայ,
բացի նրանից, որ քո Տէրը կամենայ, որ պարգեւէ
անընդհատ :

111. Ուրեմն սրանց պաշտածի նկատմամբ կասկածի
մէջ մի՛ լինիր. նրանք միմիայն իրանց հայրերի ա-
ռաջուց պաշտածն են պաշտում. եւ մենք նրանց հա-
տուցանելու ենք իրանց բաժինը անպակաս :

112 Մենք Մովսէսին տեցինք գիրքը, իսկ նրանք
անհամաձայն եղան իրար հետ նրա մասին. եւ լ.թէ քո
Տիրոջ կողմանէ առաջուց որոշում եղած չը լինէր, նը-
րանց մէջ վճուած կը լինէր վէճը. բայց հիմայ նրանք
այդ մասին կասկածի մէջ են երկմտելով :

113. Եւ իրաւի քո Տէրը մի ժամանակ ամեն մէկին
հատուցանելու է նրանց գործքերի համեմատ. նա գի-
տէ թէ ի՞նչ են անում :

114, Արդ հաստատ կանգնի՛ր, ինչպէս որ քեզ պատ-
ւիրած է, եւ նրանք որ քեզ հետ սպաշխարեցին. եւ

անհնազանդ մի՛ լինէք, նա տեսնում է, թէ ինչ էք
անում :

115. Եւ անիրաւների վրայ յոյս մի՛ դնէք, կրակը
ձեզ կը դպչէ : զուք Աստուածանից զատ ուրիշ պաշտ-
պան չունէք : Եւ օգնութիւն չէք գտնի :

116. Կատարի՛ր ազօթքը օրւայ երկու ծայրերումը եւ
գիշերւայ մոտ թումը : Իրաւի բարի գործքերը քաւում
են չարութիւնները : սա յիշեցումն է հասկացողների
համար :

117. Արդ համբերի՛ր, որովհետեւ Աստուած բարե-
գործների վարձքը չի կորցնի :

118. Չեզնից սուսջ եղած ազգերիցը միայն քիչ խե-
ւացիներ կային որոնք զգուշացնում էին երկրի վրայ
ապակահոսութիւն գործելուց որոնցից մենք մի քանի-
սին ազատեցինք : իսկ անիրաւները հետեւում էին
միայն իրանց կիրքերին եւ յանցաւորներ էին :

119. Եւ քո Տէրը չէր ջնջի անիրաւարաբայն քա-
ղաքները, եթէ նրանց բնակիչները բարեբարոյ եղած
լինէին :

120. Եթէ քո Տէրը կամենար մարդիկը մէկ կըրօ-
նական ազգ կը լինէր : բայց նրանք պիտի դադարեն
իրար դէմ անհամաձայն լինելուց բացի նրանցից, ո-
րոնց ողորմել է Աստուած : Եւ հէնց սրա համար է նա
նրանց ստեղծել, որ պէտք է կատարել քո Տիրոջ խօս-
քը, թէ «ես անպատճառ լեցնելու եմ զժօխքը դուերով
եւ մարդիկներով միասին» :

121. Եւ ամենը, որ քեզ պատմեցինք մարգարէներէ
պատմութիւնից, նրա համար է, որ քո սիրաը կ'ազ-
գուրենք, եւ սրանում եկեյ է քեզ համար ճշմարտու-
թիւն եւ խրատ եւ յիշեցումն հաւատացեալների համար :

123. Ասա՛ նրանց, որ չեն հաւատում, «զուք գոր-
ծեցէ՛ք ձեր տեղերումը : մենք էլ ենք գործում, եւ
սպասեցէ՛ք, մենք էլ ենք սպասում» :

124. Եւ երկնքի ու երկրի գաղտնիքներն Աստու-
ծունն են, եւ ամեն բան նրա մօտն է եւ գառնալու :

Ուրեմն նրան ծառայի՛ր եւ նրան ապաւինի՛ր. եւ քո
քո Տէրն անտոյժ չէ, թէ դուք ինչ էք անում:



(2) Ս Ո Ւ Ր Է Ե Ո Ւ Ս Ո Ւ Ֆ

Խաղաղութիւն լինի նրան.

Մէքքէական. հարիւր տասնմէկ այէ:

Գ/Թած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Ր. սա յայտնի գրքի նշաններն են:
2. Մենք նրան արարեքէն Ղուրան իջեցրեցինք, որպէս զի հասկանաք:
3. Մենք քեզ պատմենք ամենագեղեցիկ պատմութիւնը, որով մենք քեզ յայտնում ենք այս Ղուրանը, թէ եւ դու առաջուց անտեղեակ էիր:
4. Երբ Յովսէփն ասաց իր հօրը, «ո՛վ հայր, ես տեսել եմ տասնմէկ աստղ եւ արեգակն ու լուսինը, ես տեսայ նրանց, որ ինձ երկրպագութիւն էին անում»:
5. Նա էլ ասաց, «ո՛վ իմ որդեակս, երազդ եղբայրներիդ չի պատմես. նրանք քեզ նենգութիւն կը դաւեն. որովհետեւ սատանան յայտնի թշնամի է մարդուս»:
6. Եւ այսպէս ընտրել է քեզ քո Տէրը եւ երազների մեկնութիւնը սովորեցրել եւ իր շնորհքը կատարել քեզ վրայ եւ Յակոբի տան վրայ, ինչպէս որ նա կատարել

է նրան առաջուց էլ զո Արրահամ եւ Իսահակ հայրերի վրայ. զո Տէրը գիտուն իմաստուն է»:

7. Արգէն Յովսէփի եւ նրա եղբարց մէջ նշաններ կան հարցանողների համար:

8. Այն ժամանակ ասացին, «այն Յովսէփը եւ եղբայրները մեզանից աւելի սիրելի են մեր հօր համար, թէ եւ մենք շատաւոր ենք. մեր հայրը յայտնի մտլոթու թեան մէջ է»:

9. «Ապանեցէ՛ք Յովսէփին կամ գցեցէ՛ք նրան երկրի մէջ, այն ժամանակ ձեր հօր երեսը կը բացւի մեզ համար. եւ դուք նրանից յետոյ բարեբարոյ մարդիկ կը լինէ՛ք»:

10. Նրանցից մինն ասաց, «Յովսէփին մի՛ սպանէք, այլ նրան մի խոր հորի մէջ գցեցէ՛ք. եթէ դուք այսպէս անէք, նրան ումանք ճանապարհորդի կը հանեն»:

11. Նրանք ասացին, ո՛վ մեր հայր, ի՞նչ սնես որ մեզ չես հաւատում Յովսէփի նկատմամբ. եւ մենք նրա լաւն ենք ուզում»:

12. «Թո՛ղ նա էգուց մեզ հետ գայ, զւարճանայ եւ խաղայ, եւ մենք նրա պահապաններ կը լինենք»:

13. Նա էլ ասաց, «ես տրտմում եմ, որ դուք նրան ձեզ հետ տանէք, եւ վախենում եմ թէ գայլը նրան ուտէ, մինչդեռ դուք նրա համար անհոգ եղած լինէք»:

14. Նրանք ասացին, եթէ մենք այսքան բողբոջ լինելով հանդերձ գայլը նրան ուտելու լինի, այն ժամանակ պէտք է որ մենք կորած լինենք»:

15. Բայց երբ նրան իրանց հետ տարեցին, միացան նրան մի խոր հորի մէջ գցեն, այն ժամանակ մենք նրան յայտնեցինք, թէ «դու այս բանը նրանց իմացնելու ես, թէ եւ նրանք չեն հասկանում»:

16. Եւ եկան իրանց հօր մօտ իրիկւայ ժամանակին լալով,

17. Ասացին, «ո՛վ մեր հայր, մենք վազելով մրցում էինք եւ թողուցինք Յովսէփին մեր կարասիների մօտ,

և գայլը կերաւ նրան, բայց դու մեզ չես հաւատայ եթէ ճշմարիտ էլ լինենք»:

18. Եւ բերեցին շապիկը օտար արիւնով ներկւած: Նա էլ ասաց, «դուք ինքներդ էք այս բանը յօրինել: Հիմայ համբերութիւնը լաւ է: Աստուած օգնական է ձեր ասածի համար»:

19. Եւ ճանապարհորդներ եկան և ուղարկեցին իրանց ջրկիրը ու նա վար կախեց իր դոյլը, ասաց, «ո՛հ աւետի՛ք, այստեղ մի երիտասարդ կայ»: Եւ նրան գաղտուկ պահեցին իբրև ծախելու ապրանք: Բայց Աստուած գիտէր թէ ինչ էին անում:

20. Եւ նրան ծախեցին չնչին գնով մի քանի դրամի, որովհետև նրա մասին զգոյշ էին:

21. Եւ այն եգիպտացին որ նրան ծախու առել էր, ասաց իր կնոջը, «նրան մի պատուաւոր բնակարան շինի՛ր, գուցէ մեզ համար օգտակար կըլինի, կամ նրան կ'որդեգրենք»: Եւ մենք այսպէս տեղաւորեցինք Յովսէփին այն երկրու՛ր, որ նրան սովորեցնենք խրթնարանութեանց մեկ ութիւնը, և Աստուած իր գործերումը յաղթող է բայց մարդկանցից շատերը չեն հասկանում:

22. Եւ երբ նա չափահաս եղաւ, մենք նրան իմաստութիւն և գիտութիւն տեցինք, և մենք այսպէս ենք վարձատրում բարեգործներին:

23. Եւ այն կինը, որի տանը նա կենում էր, ցանկացաւ նրան եւ վակեց դռները ու ասաց, «ե՛կ այստեղ»: Նա էլ ասաց, «Աստուած մի՛ արասցէ, նա իմ տէրն է, ինձ գեղեցիկ բնակարան տեց, անխրաւները երջանիկ չեն լինի»:

24. Նա որան ցանկացաւ, և սա էլ նրան էր ցանկանալու, եթէ իր Տիրոջ ապացոյցը տեսած չը լինէր: Մենք այսպէս հեռացրեցինք նրանից շարիքը և անբարոյականութիւնը, որովհետև նա մտերիմ ծառաներիցն էր:

25. Եւ նրանք երկուսն էլ վագեցին գէպի դուռը,

բայց կնիկը պատառեց ետեւից նրա շապիկը, եւ երկուսն էլ պատահեցին դռան մօտ կնկայ մարդուն: Կնիկն ասաց, «քո կնկան հետ շարութիւն գործել ուզողը պէտք է որ բանտարկւի կամ ցաւալի պատիժ ստանայ»:

26. Նա ասաց, «կնիկը ինքը ինձ ցանկացաւ»: Եւ նրա ընտանիքից մի վկայ վկայեց ասելով, «եթէ շապիկը պատառւած է առաջի կողմիցը, այն ժամանակ կընիկը ճշմարիտ է, եւ նա ստախօս է»:

27. «Իս'կ եթէ շապիկը պատառւած է ետեւի կողմիցը, այն ժամանակ կնիկն է ստախօսը եւ նա ճրջմարիտ է»:

28. Եւ երբ նա տեսաւ որ շապիկը պատառւած էր ետեւի կողմիցը, ասաց, «սա ձեր կնիկներիդ խարդախութիւններէն է, ձեր խարդախութիւնները մեծ են»:

29. «Ո՛վ Յովսէփ, քաշւի՛ր այստեղից • եւ դու ո՛վ կնիկ, յանդանքիդ համար ներողութիւն խնդրի՛ր • դու յանցաւոր ես»:

30. Եւ քաղաքու՛մը ասում էին կնիկները, «այն նրշանուոր մարդու կինը ցանկացել է իր ծառային • եւ ծառան էլ սիրահարւել էր նրան • մենք տեսնում ենք, որ կնիկը յայտնապէս մոլորւած է»:

31. Եւ երբ կնիկը լսեց նրանց շարամտութիւնը, մարդ ուզարկեց նրանց մօտ եւ նրանց համար մի խընճոյք պատրուեց: Եւ կնիկը նրանց ամեն մէկին մի դանա՛յ տւեց եւ ասաց, «դուքս ե՛կ սրանց մօտ»:
Բայց երբ կնիկները նրան տեսան, նրան գօլում էին եւ կարտում էին իրանց ձեռները եւ ասում, «ո՛վ Աստուած, սա մարդ չէ, սա միայն մի ազնիւ հրեշտակ է»:

32. Կնիկն էլ ասաց, «սա նա է, որի մասին դուք ինձ պախարակում էիք: Իրաւ է, ես նրան ցանկացայ, բայց նա մաքուր է • եւ եթէ նա չ'անէ, ինչ որ ես նրան կը հրամայեմ, նա անշուշտ կը բանտարկւի եւ նւաստներիցը կը դառնայ»:

33. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, բանտը ինձ համար աւելի սիրելի է քան թէ այն, որի համար ինձ կան-

չում են. եթէ դու նրանց խարդախութիւնը ինձնից չըհեռացնես, ես նրանց կը մօտենամ եւ ազէտներիցը կը դառնամ»:

34. Եւ նրա Տէրը լսեց նրան, եւ կանանց խարդախութիւնը հեռացրեց նրանից, որովհետեւ նա լսող իմացող է:

35. Բայց թէեւ տեսել էին ապացոյցները, որոշեցին նրան մի առ ժամանակ բանտարկեն:

36. Եւ նրա հետ միասին եկան բանտը թագաւորի երկու ծառաներ: Նրանցից մէկն ասաց, «ես տեսայ, գինի էի ձգում»: Եւ միւսն ասաց, «ես էլ տեսայ, գլխիս վրայ հաց էի կրում, թռչուններն էլ ուտում էին նրանից»: «Ասա՛ մեզ սրանց մեկնութիւնը. մենք քեզ բարեգործ ենք համարում»:

37. Նա էլ ասաց, «տակաւին ձեր երկուսի ուտելու կերակուրը չեկած, ես ձեզ կ'ասեմ՝ դրանց մեկնութիւնը, յառաջ քան թէ կերակուրը կըզայ ձեզ համար, այնպէս ինչպէս իմ Տէրն ինձ կ'իմացնէ: Ես ձգել եմ այն աղփի կրօնքը, որ չեն հաւատում Աստուծուն եւ ուրանում են միւս աշխարհքը»:

38. Եւ հետեւում եմ իմ հայրերի՝ Աբրահամի եւ Իսահակի եւ Յակոբի կրօնքին, եւ մենք իրաւունք չունենք Աստուծուն մի բան ընկեր գնելու: Սա Աստուծոյ մի շնորհքն է մեր վրայ եւ մարդկան վրայ. բայց մարդկանցից շատերը շնորհակալ չեն»:

39. «Ո՛րք ինչ պաշտում էք բաց ի նրանից, սոսկ անուններ են, որ անւանում էք դուք եւ ձեր հայրերը: Աստուած՝ դրա համար իրաւունք չէ ուղարկել վար: Այս բանում վճիռը միայն Աստուծունն է. նա հրամայել է, թէ «նրանից ջոկ ուրիշը մի՛ պաշտէք»:

«Ո՞րք ինչ պաշտում էք բաց ի նրանից, սոսկ անուններ են, որ անւանում էք դուք եւ ձեր հայրերը: Աստուած՝ դրա համար իրաւունք չէ ուղարկել վար: Այս բանում վճիռը միայն Աստուծունն է. նա հրամայել է, թէ «նրանից ջոկ ուրիշը մի՛ պաշտէք»:

«Ո՞րք ինչ պաշտում էք բաց ի նրանից, սոսկ անուններ են, որ անւանում էք դուք եւ ձեր հայրերը: Աստուած՝ դրա համար իրաւունք չէ ուղարկել վար: Այս բանում վճիռը միայն Աստուծունն է. նա հրամայել է, թէ «նրանից ջոկ ուրիշը մի՛ պաշտէք»:

41. «Ո՛րք իմ բանդակիցներ, իրաւի ձեզանից մէկն

իր Տիրոջը գինի է տալու խսելու, իսկ միւսը խաչելու է եւ թուշուներն ուտելու են նրա գլխիցը: Բանը վճուած է, որի համար ինձ հարցրեցիք»:

42. Եւ ասաց այն երկուսից մէկին, որի համար կարծում էր, թէ պետք է ազատւի, «յիշի՛ր ինձ քո Տիրոջ մօտ»: Եւ սատանան նրան մոռացրեց իր տիրոջը յիշելը, եւ նա մնաց բանդումը մի քանի տարիներ:

43. Եւ թագաւորն ասաց, «ես եօթը իւղոտ կովեր տեսայ, եւ եօթը վտիտներ կերան նրանց, եւ եօթը կանաչ հասկեր տեսայ եւ եօթը չոր հասկեր: Ո՛վ մեծամեծներ, բացատրեցէ՛ք ինձ համար իմ ատելիքը, եթէ տեսիլք մեկնողներ էք»:

44. Նրանք ասացին, «սա խառնիխուռն երազներ են, եւ մենք երազներ մեկնեալ գիտութիւնը չ'ունենք»:

45. Եւ այն երկուսից ազատւածը, որ երկար ժամանակից յետոյ յիշեց Յովսէփին, ասաց, «ես ձեզ կ'ասեմ դրա մեկնութիւնը, միայն ինձ թող աւէք»:

46. «Ո՛վ Յովսէփ, ճշմարտախօս, բացատրի՛ր մեզ համար եօթը իւղոտ կովերը, որոնց կերան եօթը վրտիտներ՝ ու եօթը կանաչ հասկեր եւ միւսները չոր, որ ես ետ դառնամ մարդկանց մօտը, որպէսզի իմանան»:

47. Նա ասաց, «եօթը տարի սովորաբար կը սերմէք, եւ ինչ որ հնձեցիք, թողուցէ՛ք հասկերում մնան բացի մի քիչից, որ կ'ուտենք»:

48. «Որանից յետոյ էլ կըգայ մի տարի, նրանում շատ անձրեւ կ'ունենան եւ շատ գինի կը կոխեն»:

50. Եւ թագաւորն ասաց «նրան ինձ մօտ բերէք»: Եւ երբ սուրհանդակը նրա մօտ եկաւ, ասաց, «հ'ա գնա քո Տիրոջ մօտ եւ նրանից հարցրո՛ւ, թէ ինչ եղաւ այն կնիկների բանը, որ իրանց ձեռքերը կտրտեցին՝ իմ Տէրը գիտէ նրանց խարդախութիւնը»:

51. Եւ թագաւորն ասաց կնիկներին, «ի՞նչ էր ձեր միտքը որ ցանկացաք Յովսէփին»: Նրանք ասացին, «ո՛վ Աստուած, մենք նրա պէմ մի վատ բան

չը գիտենք»: Այն նշանաւոր մարդու կինն ասաց, հիմայ յայտնուել է ճշմարտութիւնը. ես էի որ նրան ցանկացայ. բայց նա արդար է»:

52. Սա նրա համար է, որ իմանայ թէ ես նրան անհաւատարիմ չեմ եղել նրա բացակայութիւնումը, եւ Աստուած չի առաջնորդի անհաւատարիմներին»:

53. «Եւ ես ինձ չեմ արդարացնում, ոյովհետեւ մարդոս սիրտը չար է բացի նրանից որ իմ Տէրը ողորմէ նրան. իրաւի՛ իմ Տէրը ներող ողորմած է»:

54. Եւ թագաւորն ասաց, «նրան ինձ մօտ բերէք, որ ես նրան իմ մտերիմն եմ շինելու»: Եւ երբ նրա հետ խօսում էր, ասաց «այս օրից դու մեր մօտը կը կենաս իբրեւ հաւատարիմ»:

55. Նա էլ ասաց, «ինձ երկրի շտեմարանների վրայ նշանակի՛ր. ես իմանալով պահպանեմ»:

56. Մէնք Յովսէփին այս կերպով տեղ տւեցինք այն երկրում, որ նրանում ուր ուզէ բնակւի. մենք մեր ողորմութիւնը հասցնում ենք, ում ուզում ենք. եւ բարեբարոյների վարձքը չենք կորցնի»:

57. Բայց միւս աշխարհքի վարձքը աւելի լաւ է նրանց և մար, որ երկիրւած են»:

58. Եւ եկան Յովսէփի եղբայրները եւ ներս գնացին նրա մօտ, եւ նա նրանց ճանաչեց, բայց նրանք չըճանաչեցին նրան»:

59. Եւ երբ նրանց պաշարներ տւեց ասաց, «բերէ՛ք ինձ մօտ ձեր եղբօրը ձեր հօրից: Մի՞թէ չէք տեսնում. որ ես ձեզ լիութի չափով եմ տւել. եւ ես շատ հիւրասէր եմ»:

60. Եւ եթէ նրան չը բերէք, դուք ինձ մօտ մի չափ էլ չէք տնկնայ, եւ ինձ չը մօտենայք»:

61. Նրանք ասացին, «մենք նրան թախանձանօք կուզենք իբ հօրիցը, եւ մենք կ'անենք»:

62. Նա էլ ասաց իր ծառաներին, «նրանց վճարածը իրանց բեռների մէջ դրէ՛ք որ տեսնեն երբ ես կը դառնան իրանց ընտանիքի մօտ, որ կրկին գան»:

63. Եւ երբ ետ գնացին իրանց հօր մօտ, ասացին, «ո՛վ մեր հայր, ցորենը մեզնից արգելւած է. ուրեմն մեր եղբօրը մեզ հետ ուղարկի՛ր որ ցորեն բերենք. եւ մենք նրա պահապաններն ենք»:

64. Նա էլ ասաց, «նրա նկատմամբ էլ ձեզ այնպէս հաւատամ արդեօ՞ք. եթէ ոչ ինչպէս սրանից առաջ նրա եղբօր նկատմամբ ձեզ հաւատացի՛ր. բայց Աստուած է աւելի լաւ պահապանը եւ նա ողորմածների ամենաողորմածն է»:

65. Եւ երբ իրանց ապրանքները բացեցին, գտան իրանց վճարածը իրանց ետ դարձւած, եւ ասացին, ո՛վ մեր հայր, էլ ի՞նչ ենք ուզում. այս մեր վճարածն է, մեզ է ետ դարձել, նրանով հաց կառնենք մեր ընտանիքի համար, եւ կր պահպանենք մեր եղբօրը, եւ մի ուղտի բեռ էլ կաւելցնենք. այս քիչ ցորեն էր»:

66. Ասաց, «ես նրան ձեզ հետ չեմ ուղարկի, մինչեւ դուք ինձ Աստուծով երդում չ'անէք. թէ նրան ինձ մօտ ետ կը բերէք, բացի նրանից, որ ձեզ համար անհնարին լինի»: Եւ երբ նրանք երդում արեցին, ասաց, «Աստուած մեր ասածներին վկայ է»:

67. Եւ ասաց, «ո՛վ իմ որդիքս, ամենքդ մէկ զըռնով մի՛ մտնէք. այլ եւ այլ դռներով ներս մտէ՛ք, սակայն ոչ մի բան ձեզ չի օգնի առանց Աստուծոյ. հրամանը միայն Աստուծունն է. ես նրան եմ ապաւինել. ուրեմն ով որ ապաւինում է, թող նրան ապաւինէ»:

68. Եւ երբ ներս մտան այնտեղից, ինչպէս իրանց հրամայել էր իրանց հայրը, նրանք մի բան չ'օգնեց Աստուծոյ վերաբերմամբ բացի նրանից որ կատարեց Յակոբի կարիքը: Եւ նա գիտութեան տէր է, եւ մենք ենք նրան սովորեցրել. բայց մարդկանցից շատերը չեն իմանում:

69. Եւ երբ ներս մտան Յովսէփի մօտ, իր եղբօրն առաւ նա իր մօտը եւ ասաց, «ես քո եղբայրն եմ. դու մի՛ տրտմիր թէ նրանք ինչ են արել»:

70. Եւ երբ նրանց պաշարները տւեց, իր բաժակը

գրաւ իր եղբոր բուռնին մէջը, յետոյ մուռնեալկը կան-
չեց, «ո՛վ ճանապարհորդներ, դուք գողեր էք:»

71. Նրանց մօտ գալով ասացին, «ի՞նչ էք կորցրել»:

72. Նրանք ասացին, «թագաւորի բաժակը՝ եւ ով
որ նրան բերէ, նա մի ուղտի բեռ կըստանայ՝ եւ կ'ե-
րաշխաւորեմ նրա համար»:

73. Սրանք էլ ասացին, «Աստուած վկայ է՝ դուք
արդէն գիտէք, մենք չենք եկել այս երկրում վատու-
թիւն անելու, եւ մենք գողեր չենք»:

74. Նրանք էլ ասացին, «ի՞նչ է նրա հատուցումը.
եթէ դուք ստախօսներ լինէք»:

75. Ասացին. «նրա հատուցումը, որի բեռան մէջ
որ գտնւի, նա ինքն է հատուցումը: Մենք այսպէս
ենք պատժում անիրաւիներին»:

76. Այն ժամանակ սկսեց նրանց քսակները պարտել
իր եղբոր քսակը պարտելուց առաջ՝ յետոյ դուրս հա-
նեց նրան իր եղբոր քսակիցը: Մենք այս խորաման-
կութիւնը սովորեցրեցինք Յովսէփին, որովհետեւ թա-
գաւորի կանոնի համեմատ իրաւունք չունէր իր եղ-
բորը պահելու բացի նրանից, որ Աստուած կամենայ՝
մենք մեր ուղածի աստիճանները բարձրացնում ենք
նոյնիսկ խմաստունի գիտութիւնից վեր:

77. Նրանք ասացին, «եթէ նա գողացել է, արդէն
նրա եղբայրը նրանից առաջ է գողացել»: Բայց Յով-
սէփը ծածուկ պահեց իր մէջը եւ նրանց չըյայտնեց
բանը, եւ ասաց, «դուք ձեր տեղը աւելի չար էք՝ եւ
Աստուած գիտէ թէ ինչ էք անում»:

78. Նրանք ասացին, «ո՛վ իշխան, իրաւ նա մի ծեր
հայր ունի. նրա փոխարէն մեզանից մէկին պահի՛ր՝
մենք տեսնում ենք դու բարի ես»:

79. Նա էլ ասաց, «Աստուած մի՛ արասցէ, մենք
մէկին պահենք բացի նրանից, որի մօտ գտել ենք
մեր ապրանքը՝ եթէ ոչ մենք անիրաւ կը լինենք»:

80. Եւ երբ իրանց յոյսերը նրանից կտրեցին, ա-
ռանձնացան փսփալով՝ եւ նրանց մեծն ասաց, «դուք

չըզիտէ՞ք միթէ որ ձեր հայրը ձեզնից երգում առաւ Աստուծով, եւ թէ դուք առաջ էլ Յովսէփին էք անիրաւութիւն արել: Ուրեմն ես այս երկիրը բնաւ չեմ ձգի, մինչեւ իմ հայրը ինձ հրաման չ'տայ, կամ Աստուած իմ դատաստանը չ'անէ. եւ նա ամենալաւ դատաւորն է»:

81. «Ետ դարձէ՞ք ձեր հօր մօտ եւ ասացէ՞ք, «ո՛վ մեր հայր, ահա՛ քո որդին գողութիւն է արել. եւ մենք միմիայն մեր գիտեցածին ենք վկայութիւն տալիս եւ մենք անձանութի պահապանը չենք»:

82. «Եւ հարցրո՛ւ այն քաղաքիցը, որի մէջ մենք էինք, եւ այն ճանապարհորդներին, որոնց հետ մենք եկել ենք, որ մենք ճշմարիտ ենք»:

83. Ասաց, «այս բանը դուք ինքներդ էք հնարել. համբերութիւնը լաւ է. գուցէ Աստուած նրանց ամենն էլ ինձ տայ: Նա գիտուն իմաստուն է»:

84. Եւ նրանցից ետ քաշելով ասաց, «ո՛հ իմ ցաւը Յովսէփի նկատմամբ»: Եւ նրա աչքերը արտմութիւնից սպիտակացան, եւ նա վրդոված էր: Ասացին, «Աստուած վկայ է, դու չես դադարելու Յովսէփին յիշելուց. դու խիստ զրգուում ես կամ կը մեռնես»:

85. Նա էլ ասաց, ես իմ ցաւն ու կսկիծը միայն Աստուծուն եմ գանգատում. եւ ես Աստուածանից բան գիտեմ որ դուք չը գիտէք»:

87. «Ո՛վ իմ որդիք, գնացէ՞ք հարցուփորձ արէ՞ք Յովսէփի եւ նրա եղբօր մասին եւ Աստուծոյ շնորհքիցը միմիայն անհաւատներն են յուսահատում»:

88. Եւ երբ նրա մօտը մտան, ասացին, «ո՛վ իշխան, մեզ եւ մեր ընտանիքին մի փորձանք է պատահել, եւ մենք եկել ենք քիչ փողով. մեզ ցորենը տուր եւ ողորմութիւն արա, որովհետեւ Աստուած վարձատրելու է ողորմութիւն անողներին»:

89. Նա էլ ասաց, «աբղեօք գիտէք, թէ դուք ինչ էք արել Յովսէփին եւ նրա եղբօրը, երբ դուք տգէտ էիք»:

90. Նրանք ասացին, «արդեօ՞ք դու ես Յովսէփը» : Ասաց, «ես եմ Յովսէփը եւ սա իմ եղբայրն է . Աստուած մեզ երախտիք է արել : Արդ ով երկխոյզած է եւ համբերող, Աստուած բարեգործներէ վարձքը չի կորցընի» :

91. Ասացին, «Աստուած վկայ է, Աստուած քեզ բարձրացրել է մեզ վրայ, եւ մենք յանցաւորներ ենք եղել» :

92. Նա ասաց, «Թո՛ղ այսօր ձեր վրայ տխուրթիւն չըլինի . Աստուած ձեզ կը ներէ, նա ողորմածներէ ամենաողորմածն է» :

93. Առէ՛ք տարէ՛ք այս իմ շապիկը եւ գցեցէք հօրս առաջին . եւ նա կը տեսնէ, եւ ձեր բոլոր ընտանիքովը եկէ՛ք ինձ մօտ» :

94. Եւ երբ ճանապարհորդները եկան, ասաց նրանց հայրը, «ես առնում եմ Յովսէփի հօտը, թէ եւ դուք ինձ ապուշ էլ համարէք» :

95. Ասացին. «Աստուած վկայ է, դու տակաւին քո հին սխալմունքի մէջն ես» :

96. Իսկ երբ եկաւ աւետարեբը, գցեց շապիկը նրա առաջը, եւ նա կրկին տեսնող եղաւ :

97. Ասաց, «ես ձեզ չէ՛ի ասում, թէ ես Աստուածանից բան գիտեմ, որ դուք չըզիտէք» :

98. Նրանք ասացին, «ո՛վ մեր հայր, մեր մեղաց թողութեան համար աղօթք արա . մենք յանցաւորներ էինք» :

99. Նա ասաց, «ես շուտով ձեզ համար թողութիւն կը խնդրեմ իմ Տէրոջից . որովհետեւ նա ներող ողորմած է» :

100. Եւ երբ Յովսէփի մօտը մտան. նա իր ծնողներին իր մօտը առեց եւ ասաց, «մտէ՛ք Եգիպտոս ապահով, եթէ Աստուած կամենայ» :

101. Եւ նա բարձրացրեց իր ծնողներին մի գահի վրայ եւ նրա առաջին խոնարհեցին երկրպագելով . եւ նա ասաց, «ո՛վ հայրս, սա իմ այն հին երազի մեկ-

նութիւնն է. իմ Տէրը նրան ճշմարտացրել է: Արդէն ինձ բարիք արեց, երբ ինձ բանդիցը հանեց, եւ ձեզ մի անապատից բերեց, երբ սատանան իմ եւ իմ եղբայրների մէջը կռիւ էր գցել: Իմ Տէրն իրաւ բարի է, ինչ որ ուզէ. նա գիտուն իմաստուն է:

102. «Ո՛վ իմ Տէր, դու արդէն լշխանութիւն ես տւել ինձ եւ ինձ սուրբեցրել ես խրթնաբանութիւններ մեկնելը. ո՛վ երկնքի եւ երկրի արարելչ. դու ես իմ պաշտպանը այս եւ միւս աշխարհքումը. թող ես միւսեմ իբրեւ միւսլիմ, ինձ միացրո՛ւ արդարների հետ:»

103. Սա գաղտնիքների յայտնութիւնիցն է, որ յայտնութիւնով քեզ պատմեցինք, եւ դու նրանց մօտ ներկայ չէիր, երբ նրանք իրանց բանը որոշեցին եւ դաւադրութիւն արեցին. եւ մարդկանցից շատերը, թէեւ բազմաս էլ, չեն հաւատալու:

104. Նրանից մի վարձք էլ չը պահանջես դրա համար. որովհետեւ նա յիշեցումն է բոլոր աշխարհի վրայ:

105. Եւ որքան նշաններ կան երկնքումն ու երկրումն, իսկ նրանք նրանց մօտիցն անցնում են եւ ետ քաշւում նրանցից:

106. Եւ նրանցից շատերը որ հաւատում են Աստուծուն, աստուածլնկերներ էլ են ընդունում:

107. Նրանք արդեօ՞ք ապահով են, թէ Աստուծոյ պատժի դատաստանը չի գայ նրանց վրայ, կամ թէ ժամը յանկարծակի չի հասնի նրանց, այնպէս որ չեն իմանայ:

108. Ասա՛, «սա իմ ճանապարհն է. եւ ես եւ ինձ հետեւողները կանչում ենք դէպի Աստուած եւ դէպի իմացողութիւն: Եւ սուրբ է Աստուած, ես կոպակոպ չեմ»:

109. «Եւ քեզանից առաջ էլ միմիայն քաղաքացի մարդիկ ենք ուղարկել եւ նրանց յայտնութիւն տւել»:

Մի՞թէ ճանապարհորդութիւնն չեն անում երկրի մէջ
և տեսնում թէ ինչպէս է եղել իրանցից առաջ եղած-
ների վախճանը: Եւ միւս աշխարհքը աւելի լաւ է եր-
կիւղածների համար: Մի՞թէ չեն հասկանում:

110. Նաև երբ մարգարէները յուսահատում էին
և կարծում էին, թէ սուտ են համարում, գալիս էր
նրանց համար մեր օգնութիւնը և մենք մեր ուղածին
ազատում էինք. և մեր չարիքը ետ չէր դարձնում
մի յանցաւոր ազգից:

111. Նրանց պամութիւնումն արդէն խրատ կամ
խելացիներէ համար: Սա մի հնարած պատմութիւն
չէ, այլ հաստատում է այն. որ իրանից առաջ կար,
և ամեն բանի բացատրութիւն է և առաջնորդու-
թիւն և ողորմութիւն է հաւատացեալ ժողովրդի հա-
մար:



13) Ս Ո Ւ Ր Է Ր Ա Դ

Մէքքէական. քառասուն երեք այլ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Մ. Ր.: Սա գրքի նշաններն են, և այն
որ իջեցրել է քեզ համար քո Տիրոջ կողմանէ, ճշմա-
րիտ է. բայց մարդկանցից շատերը չեն հաւատում:

2. Աստուած է որ երկինքը բարձրացրել է և ա-
ռանց սիւների. որ դու տեսնում ես. յետոյ նստել է
գահին վրայ և հնազանդեցրել է արեգակը և լու-

սինը, որ ամեն մէկը գնում է սահմանած ժամանակով: Նա է կառավարում ամեն բանը. նա բացատրում է նշանները, որ ձեռք Տիրոջ հանդիպելուն համոզւիք:

3. Եւ նա է, որ երկիրը տարածել է եւ նրանում դրել է լեռները ու գետերը եւ ամեն պտուղներից երկու զոյգ է շինել: Նա ծածկում է գիշերը ցիբեկով: Արանում նշաններ կան խորհող ժողովրդի համար:

4. Երկրիս վրայ իբար դրացի հողեր, խաղողի այգիներ, ցանքսեր, արմաւենիներ՝ միատեսակ եւ ոչ միատեսակ՝ կան, որոնք միեւնոյն ջրովն են ջրվում, եւ մենք նրանցից մի քանիսը միւսներիցը գերազանց ենք շինել ուտելու նկատմամբ. ահա՛ սրանում նշաններ կան հասկացող ժողովրդի համար:

5. Եւ եթէ դու զարմանում ես, — զարմանքը նրանց խօսքն է, «մի՞թէ երբ մենք հող դարձած կը լինենք, կրկին նոր արարած կը դառնանք»:

6. Ահա՛ դրանք են, որ իրանց Տիրոջ չեն հաւատում. եւ դրանց վիզերումը շղթաներ են լինելու, եւ դրանք կրակի ընկերներն են, եւ նրանում կը մտան յաւիտեան:

7. Նրանք քեզանից պահանջում են, որ բարիքիցն առաջ չուտով սպասեն ասցած չարիքը բերես, թէեւ իրանցից առաջ օրինակներ եղել են: Սակայն քո Տէրն անիրաւ մարդկանցն էլ է թողութիւն տալիս, եւ քո Տէրը սաստիկ պատժող է:

8. Եւ անհաւատներին ասում են, «եթէ նրա համար իր Տիրոջ կողմանէ մի հրաշք չ'իջեցնուի, չենք հաւատալ»՝ ահա՛ դու սոսկ մի սպառնացող ես. եւ ամեն մի ազգ մի առաջնորդ ունի:

9. Աստուած գիտէ, թէ ամեն մի կին ինչով է յղի, եւ ինչն է արգանդները փոքրացնում եւ ինչը մեծացնում. եւ նրա մօտ ամեն բան չափով է:

10. Գաղանիքները ու յայտնիքները գիտացողն է, մեծը եւ ամենարարձրը:

11. Միեւնոյն է, թէ ձեզնից մէկը իր խօսքը թա-

գուն պահէ կամ նրան յայտնէ, եւ մէկը գիշերն ինքն իրան ծածուկ պահէ կամ ցերեկը ման գայ:

11. Նրա առջեւիցը եւ ետեւիցը փոփոխակի գնացողներ կան, որ նրան պահպանում են Աստուծոյ հրամանովը: Եւ Աստուած մի ազգի դէմ ունեցածը չի փոխի, մինչեւ նրանք չը փոխեն իրանց սրտերում եղածը: Եւ երբ Աստուած մի ժողովրդի դէմ մի չարիք կամենայ, ոչ ոք դրան ետ չի դարձնի, եւ նրանց համար բաց ի նրանցից պաշտպան չի լինի:

13. Նա է, որ ձեզ ցոյց է տալիս կայծակը երկիւղով եւ փափաքով եւ շինում է ծանր ամպերը:

14. Եւ կայծակը օրհնում է նրա օրհներգութիւնովը, նաեւ հրեշտակները նրանից վախենալուց. եւ նա ուղարկում է իր փոթորիկները եւ նրանցով հարւածում է որին որ ուզում է: Այնու ամենայնիւ նրանք վիճում են նրա մասին, որովհետեւ նա ամենակարող է:

15. Ճշմարիտ աղօթքը նրանն է, եւ նրանք որ բաց ի նրանից ուրիշի են աղօթք անում, նրանց չեն պատասխանի ոչ մի բան, միայն թէ նման են նրան, որ ձեռները տարածում է դէպի ջուրը, որ նրա բերանին հասնէ, բայց նա չէ հասնում նրան: Եւ անհաւատների աղօթքը միմիայն մոլորութիւն է:

16. Եւ երկնքումն ու երկրումս եղողները կամայ եւ ակամայ երկրպագում են Աստուծուն, նաեւ նրանց շուքերը՝ առաւօտները եւ իրիկունները:

17. Ասա՛, «ո՞վ է երկնքի ու երկրի տէրը», ասա՛, «Աստուած»: ասա՛, «ապա դուք ընդունել էք բաց ի նրանից ուրիշ պաշտպաններ, որ իրանց էլ չեն կարող ո՛չ օգուտ եւ ո՛չ էլ վնաս հասցնել»: Ասա՛, «մի՞թէ կոյրը եւ տեսնողը հաւասար են. կամ հաւասար են խաւարը եւ լոյսը, կամ նրանք աստուածընկերներն՞ որ են շինում, որոնք նրա ստեղծածի պէս ստեղծել են, որ նրանց ստեղծածի նման լինի»: Ասա՛, Աստուած է ամեն բանի ստեղծողը. նա է մէկը, կարողը:

18. Նա է երկնքիցը ուղարկում ջուրը, որ հոսում է

քր որոշւած տեղ ու վը, եւ հեղեղը տանում է լողացող փրփուրը. եւ ինչ էլ նոյն կերպով հայեցնում են կրակի մէջ, նրանից զարդարանք եւ անօթներ շինել ուղիով, ունի նրա նման փրփուր: Աստուած այսպէս օրինակ է բերում ճշմարտութիւնը եւ ունայնութիւնը. այն որ փրփուրն է, անցնում է իբրեւ կղկղանք, բայց ինչ որ օդտակար է մարդկանց հաւար. մնում է երկրումը: Աստուած այսպէս օրինակներ է բերում: Նըրանք, որ իրանց Տիրոջը հնազանդ են նրանց համար կայ բարիք. բայց նրանք, որ չեն հնազանդում նրան, եթէ երկրիս մէջ եղածի բոլորը եւ նոյն չափ էլ նրա հետ նրանցը լինի, որ դրանով իրանց փրկէին, նըրանց դատաստանը դժնդակ եւ նրանց բնակարանը զր֊ժոխքն է լինելու. որ մի վատ բնակատեղի է:

19. Եւ մի՞թէ նա, որ գիտէ թէ քո Տիրոջ կողմիցը քեզ համար իջեցրւածը ճշմարիտ է նրա նման է, որ կոյր է. միմիայն խելացիներն են հասկանում:

20. Նրանք, որ Աստուծոյ ուխտը կատարում են, եւ դրած պայմանը չեն դրժում.

21. Եւ նրանք, որ իրանց արիւնակիցներին վերաբերմամբ զօրձագրում են, ինչ որ Աստուած հրամայել է, եւ վախում են իրանց Տիրոջից եւ երկիւղ ունեն այն դժնդակ դատաստանիցը,

22. Եւ նրանք, որ իրանց Տիրոջ երեսին բաղձալով համբերում են եւ աղօթքը կատարում եւ ինչ որ իրանց շնորհել ենք՝ նրանից ողորմութիւն են տալիս, թէ ծածուկ թէ յայտնի, եւ չարագործութիւնները ուղղում են բարեգործութիւններով, — նրանցն է յաւիտենական տունը.

23. Եղեմի գրախտները, որոնց մէջը կը մտնեն ամեն գոնով նրանց հայրերից եւ կնիկներից եւ զաւակներից նրանք, որ բարի են եղել, եւ հրեշտակները:

24. «Պաղաղութիւն լինի ձեզ ձեր համբերութեան համար»: Եւ ի՞նչ գեղեցիկ է հանդերձեալ աշխարհը:

25. Իսկ նրանք, որ պայման դնելուց յետոյ դրժում

են Աստուծոյ ուխտը, եւ իրանց արիւնակիցների վերաբերմամբ գործադրում են. ինչ Աստուած հրամայել է, եւ երկրի մէջ ապականութիւն են գործում, — նրանցը արժանիքն է, եւ նրանցն է շար աշխարհը:

26. Աստուած առատօրէն ապրուստ է շնորհում, որք ուզում է, եւ կարճացնում է, եւ նրանք այս աշխարհքի կեանքովն ուրախանում են. եւ ի՞նչ է այս աշխարհի կեանքը միւս աշխարհքի հետ բաղդատելով. եթէ ոչ մի պճրանք:

27. Անհաւատներն ասում են, «եթէ նրա համար մի հրաշք չ'իջեցնւի իր Տիրոջ կողմանէ, չե՛նք հաւատալ»: ասա՛ «իրաւի՛ Աստուած իր ուզածին սոլորեցընում է, եւ գէպի իրան դարձողին առաջնորդում է»:

28. Նրանք, որ հաւատում են, իրանց սրտերն էլ Աստուծուն յիշելով վստահութիւն են գտնում: Անա՛ սիրտը Աստուած յիշելով է վստահութիւն գտնում: Նրանք, որ հաւատում են եւ բարի գործքեր են գործում, երանի՛ նրանց, նրանք գեղեցիկ մուտք ունեն:

29. Այսպէս էլ մենք քեզ ուղարկեցինք մի ազգի մէջ, որ նրանցից առաջ ազգեր են անցել գնացել, որ դու նրանց կարգաս ինչ որ մենք քեզ աւել ենք յայտնութեամբ, բայց նրանք մոռանում են Ողորմածին: Դու ասա՛, «նա իմ Տէրն է, նրանից ջսկ ուրիշ Աստուած չըկայ՝ ես նրան եմ ապաւինում, գէպի նրան եմ դառնում»:

30. Եւ եթէ Ղուրանի միջոցով սարերն էլ ճանապարհորդէին, կամ նրանով երկիրն էլ կտոր կտոր դառնար, կամ նրանով մեռելներն էլ խօսէին, չէ՛ին հաւատալ: սակայն բոլոր բանը Աստուծունն է: Բայց մի՞թէ չիմացան հաւատացեալները, որ եթէ Աստուած ուզենար մարդկանց ամենն էլ ուզիլ կառաջնորդէր:

31. Եւ նրանց, որ անհաւատ են, անգաղար պատուհաս է հանդիպելու իրանց գործերի համար, կամ նրանց տանը մօտ տեղ է բռնելու մի՛նչեւ Աստուծոյ

որոշումը գայ. որովհետեւ Աստուած իրան որոշումը չի փոխի:

32. Եւ արդէն քեզնից առաջ ծաղր են արել մարգարէներին եւ ես դարձեալ լիացրեցի անհաւատներին, յետոյ պատժեցի նրանց. եւ ի՛նչպէս եղաւ եմ պատիժը:

33. Եւ ո՞վ է ամեն մի անձի վրայ կանգնած, թէ նա ինչ է անում, բայց նրանք ընկերներ չինեցին: Ասա՝ «անւանեցէ՛ք նրանց. կամ նրան իմացրէ՛ք այն բանը որ նա երկրի վրայ չը գիտէ» . կամ խօսքի երեւո՛յթ է միայն: Սակայն անհաւատների համար պատրաստւած է իրանց խորամանկութիւնը. եւ նրանք խտտուեցին իմ ճանապարհիցը: Եւ որին որ Աստուած մոլորեցնում է, այլեւս առաջնորդող չի լինի նրա համար:

34. Նրանց համար տանջանք կայ այս աշխարհի կեանքումը. իսկ միւս աշխարհի տանջանքն աւելի սաստիկ է. եւ նրանց ոչ ոք չի պաշտպանի Աստուծոյ դէմ:

35. Այն դրախտը, որ խոստացւած է երկիւղածներին, նման է տակովը գետեր հոսողի, ուտելիքը մշտակտն է. նաեւ նրա շուաքը: Սա է երկիւղածների վախճանը, իսկ անհաւատների վախճանը կրակն է:

36. Եւ ուրախանում են նրանք, որոնց մենք տեղ ենք գիրքը այն բանի մասին որ իջեցրել է քեզ համար. բայց ամբոխիցն այնպիսիներն էլ կան, որ ուրանում են մի քանի բաներ: Ասա՛, «ես միայն հրաման եմ ստացել, որ Աստուծուն պաշտեմ, եւ նրան ընկերներ չը դնեմ. ես նրան եմ աղօթում, եւ դէպի նըրան եմ դառնալու:

37. Սրա համար էլ մենք նրա ե իջեցրեցինք իբրեւ արարելէն հրաման: Եւ եթէ քեզ գթութիւն գալուց յետոյ նրանց հաճոյքներին հետեւես, այն ժամանակ Աստուածանից քեզ պաշտպանող չի լինի, եւ ոչ ոք քեզ կը պահպանէ:

38. Բայց մենք արդէն քեզնից առաջ մարգարէներ

ենք ուղարկել, եւ նրանց կնիկներ տւել եւ զաւակներ, եւ ոչ մի մարդարէ հրաշք չէ գործել առանց Աստուծոյ հրամանի: Ամեն մի որոշում ունի իրան գրածքը:

39. Աստուած՝ ջնջում է իր ուղածը եւ հաստատում եւ մայր գիրքը նրա մօտ է:

40. Եթէ մենք քեզ տեսնել տանք այն բաներից մի քանիսր, որ նրանց համար որոշել ենք, կամ քեզ մահ տանք, քո պատիժը միայն առաջարկելն է, եւ մերը՝ հաշւառութիւնը:

41. Մթթէ չեն տեսնում, որ մենք եկել ենք այս երկիրը եւ նրան պզտիկացրել նրա կողմերիցը: Եւ Աստուած է վճռում՝ նրա հրամանը ջրող չի լինի: Նա շուտով հաշիւ տեսնող է:

42. Եւ նրանից առաջ եղողները խորամանկութիւն արեցին. բայց բոլոր խորամանկութիւնը Աստուծուն է: Նա գիտէ, թէ իւրաքանչիւր հոգի ինչ է վաստակում: Անհաւատներն էլ շուտով կ'իմանան, թէ միւս աշխարհքը ո՞ւմ համար է:

43. Եւ անհաւատներն ասում են. թէ դու ուղարկւած չես: Ասա՛, «Աստուծոյ վկայութիւնը իմ ու ձեր մէջ բաւական է: Եւ նրա մօտ է գրքի գիտութիւնը»:



14) ՍՈՒՐԷ՝ Ի ԲՐԱԶԻՄ

Խաղաղութիւն լինի նրան.

Մէքքէական. յիսուն երկու այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Ր. Մի գիրք որ մենք նրան իջեցրիւ
ենք քեզ համար, որ մարդկանցը դուրս հանես խաւա-
րիցը դէպի լոյսը իրանց Տիրոջ հրամանովը՝ դէպի զօ-
րաւոր օրհնեալ ճանապարհը:

2. Աստուծունն է ինչ կայ երկրումը. եւ վայ ան-
հաւատներին խիտ տանջանքի մասին.

3. Որոնք այս աշխարհի կեանքը աւելի են սիրում
քան թէ միւս աշխարհինը եւ խոտորեցնում են Աս-
տուծոյ ճանապարհիցը, եւ ուզում են նրան ծռել: Նը-
րանք հետեւ են մոլորել:

4. Եւ մենք մի մարգարէ չենք ուղարկել, եթէ ոչ
իր ազգի լեզուովը, որ նրանց բացատրէ եւ Աստուած
իր կամեցածին մոլորեցնում է. եւ իր կամեցածին ու-
ղիղ ճանապարհի մէջ է առաջնորդում, եւ նա զօրաւոր
խնաստուն է:

5. Եւ մենք արդէն ուղարկել ենք Մովսէսին մեր
նշաններովը, թէ հանի՛ր քո ժողովուրդը խաւարիցը
դէպի լոյսը, եւ յիջեցրո՛ւ նրանց Աստուծոյ օրերը, ո-
րովհետեւ սրանում նշաններ կան ամեն համբերող ե-
րախտագէտի համար:

6. Եւ այն ժամանակ ասաց Մովսէս իր ժողովրդին,
«յիջեցէ՛ք Աստուծոյ շնորհքները ձեզ համար, երբ ձեզ
ազատեց Փարաօնի ցեղիցը, որ ձեզ շարաշար տան-
ջում էր, ձեր որդիներին մորթում եւ ձեր աղջիկնե-

բին կենդանի թողնում: Եւ սրանում փորձանք կար ձեր մեծ Տիրոջ կողմանէ»:

7. «Եւ երբ ձեր Տէրը ձեզ յորդորեց, թէ գոհացող լինէք, ես ձեզ կը շատացնեմ, իսկ եթէ անհաւատներ լինէք, այն ժամանակ խիստ կը լինի իմ պատիժս»:

8. Եւ Մովսէս ասաց, «եթէ դուք եւ երկրի վրայ լինողները բոլորն էլ անհաւատ դառնաք, ահա՛ Աստուած անկարօտ է եւ օրհնեալ»:

9. Մի՞թէ ձեզ չեկաւ նրանց լուրը, որ ձեզնից առաջ կային, այսինքն՝ Նոյի, Ադի եւ Սամուելի ժողովրդի լուրը:

10. Եւ նրանցն էլ, որ նրանցից յետոյ են եղել: Աստուած միայն գիտէ նրանց: Նրանց մօտ եկան հրաշքներով իրանց մարգարէները, բայց նրանք իրանց ձեռները նրանց բերանների վրայ դրեցին եւ ասացին, «մենք չենք հաւատում այն բանին, որով դուք ուղարկւած էք, եւ մենք երկմտելով կասկածի մէջ ենք այն բանի մասին, որին դուք մեզ կանչում էք»:

11. Իսկ մարգարէներն ասում էին, «մի՞թէ կասկած կայ երկինքն ու երկիրը ստեղծող Աստուծոյ մասին, որ ձեզ կանչում է, որ ներէ ձեր մեղքերը եւ ձեր կեանքը երկարացնէ մինչեւ որոշ ժամանակը»:

12. Նրանք էլ ասում էին, «դուք միմիայն մեզ նրման մարդիկ էք, ուզում էք, որ մեզ ծոցնէք նրանից, որ մեր հայրերը պաշտում էին. սակայն բերէ՛ք մի յայտնի փաստ»:

13. Մարգարէներն էլ ասում էին նրանց, «մենք միայն ձեզ նման մարդիկ ենք. սակայն Աստուած իբժառանքէց որին ուզում է, նրան երախտիք է ցոյց տալիս. եւ մեր իրաւունքը չէ, որ փաստ բերենք»:

14. Միմիայն Աստուծոյ հրամանովը. եւ հաւատացեալները թող ապաւինեն Աստուծուն:

15. Եւ ի՞նչ պատճառ ունենք որ Աստուծուն չ'ապաւինենք, որովհետեւ նա մեզ առաջնորդել է մեր ճանապարհներումը: Ուրեմն մենք կը համբերենք այն ձեր

մեզ տւած ներողութիւններին: Եւ ապաւինողները թող
ապաւինեն Աստուծուն»:

16. Իսկ անհաւատներն ասում էին իրանց մարգա-
րէներին, «մենք ձեզ պիտի արտաքսենք մեր երկրիցը,
կամ ետ դարձէ՛ք մեր կրօնքին»: Բայց իրանց Տէրը
նրանց յայտնում էր, թէ մենք անպատճառ կորսա-
եան պիտի տանք անիրաււներին:

17. Եւ նրանցից յետոյ ձեզ ենք հաստատելու այդ
երկրումը: Սա այն մարդու համար է, որ վախում է
իմ վճռիցը եւ վազում է իմ որոշումիցը:

18. Եւ նրանք յաղթութիւն խնդրեցին, եւ ամեն մի
յամբն բռնակալ կորուսեց:

19. Նրա այն կողմը դժոխքն է, եւ նրան կը խմե-
ցնեն աղտոտ ջուր:

20. Նա խեղդելով կը խմէ այն, եւ դժւարութիւնով
կուլ կըտայ. եւ մահը կըզայ նրա համար ամեն տեղից,
բայց նա չի մեռնի, եւ նրանից անտի խիստ տանջանք
կայ:

21. Նրանք, որոնք չեն հաւատում իրանց Տիրոջը, —
նրանց գործերը նման են փոշու, որ մի փոթորկալից
օր հողմը սաստիկ փչում է նրա վրայ, իրանց ստաց-
ւածքովը մի բան անել չեն կարող: Սա է այն մեծ մո-
լորութիւնը:

22. Չե՞ս տեսնում, որ Աստուած ճշմարտութեամբ
ստեղծել է երկինքը եւ երկիրը. եթէ կամենայ, նա
ձեզ բնաջինջ կ'անէ եւ նոր արարածներ կը բերէ:

23. Սա Աստուծոյ համար սուտ չէ:

24. Եւ ամենն էլ պէտք է երեւան նրա ատա-
ջին: Այն ժամանակ տկարները պիտի ասեն մեծամեծ-
ներին. «մենք ձեզ էինք հետեւում. հիմա դուք կա-
րօղ էք Աստուծոյ պատժի զէմ մեզ մի բանում օգնել»:

25. Նրանք էլ կասեն. «եթէ Աստուած մեզ առաջ-
նորդած լինէր, մենք էլ ձեզ կ'առաջնորդէինք: Մեզ
համար միեւնոյն է թէ՛ տանջւենք թէ՛ համբերենք.
մեզ համար փրկութիւն չըկայ»:

26. Եւ սատանան կասէ, երբ բանը վճուած կը լինի, «Աստուած ձեզ ճշմարիտ խոստում էր խոստացել, բայց ես էլ ձեզ խոստացայ եւ ձեզ խաբեցի: Թէեւ ես ձեր վրայ իշխանութիւն չունէի»:

27. «Միայն ես ձեզ կանչեցի, եւ դուք ինձ պատասխանեցիք. ուրեմն ինձ մի՛ պախարակէք, դուք ձեզ պախարակեցէք. ես ձեզ չեմ կարող օգնել, դուք էլ ինձ օգնողներ չէք. ես չէի հաւատում, որ դուք ինձ Աստուծոյ ընկեր էիք շինում առաջուց» . ահա՛ անիրաւների համար ցաւալի տանջանք կայ:

28. Իսկ նա կը մտցնէ նրանց, որ հաւատում են եւ բարիք գործում, զրախաների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում . նրանք յաւիտեան կը մնան նրանց մէջ իրանց Տիրոջ հրամանովը . եւ նրանց բարեւը նըրանում է «խաղաղութիւն»:

29. Չե՞ս տեսնում, թէ Աստուած ինչպիսի օրինակով է բացատրում քաղցր խօսքը, թէ նման է քաղցր ծառի, որի արմատը հաստատ է եւ ճիւղը երկնքումն է:

30. Որ իր պտուղը տալիս է իր Տիրոջ հրամանովը ամեն ժամանակ: Արդ Աստուած ասում է այս առակները մարդկանց, որպէս զի մտածեն:

31. Եւ գէշ խօսքը նման է գէշ ծառի, որ երկրի վրայից պոկւած լինելով հաստատութիւն չունէ:

32. Հաւատացեալներին հաստատում է Աստուած հաստատ խօսքով այս աշխարհի կեանքումը եւ միւս աշխարհքումը . իսկ նա անիրաւներին մոլորեցնում է: Ուրեմն Աստուած անում է ինչ կամենում է:

33. Դու չե՞ս տեսնում նրանց, որ Աստուծոյ շնորհքը անհաւատութեան հետ են փոխել, եւ իրանց ազգը տանում են կորստեան տունը:

34. Այսինքն նրանք դժոխքը պիտի մտնեն, որ մի տաժանելի տեղ է:

35. Եւ նրանք Աստուծուն նմանուող բաներ են շինում, որ մոլորեցնեն նրա ճանապարհիցը: Ասա՛ «վայելեցէ՛ք. բայց ձեր ընթացքը զէպի դժոխքն է»:

36. Ասա՛, «իմ ծառաներին, որ հաւատում են, աղօթքը կատարում են եւ մեր իրանց տւած պարգեւներիցը ծածուկ եւ յայտնի ողորմութիւն են տալիս յառաջ քան թէ կրգայ այն օրը, որ նրանում ոչ առեւտուր եւ ոչ բարեկամութիւն կայ,

37. Աստուած է, որ ստեղծել է երկինքը եւ երկիրը եւ երկնքիցը ջուր է իջեցնում եւ պտուղներիցը ձեզ համար ապրուստ է հանում, եւ նաւը հնազանդեցնում է ձեզ, որ նրա հրամանովը վազէ ծովին մէջ, եւ որ գետերը հնազանդեցնում է ձեզ եւ ձեզ համար հնազանդեցնում է արեգակը եւ լուսինը իբրեւ կարգապահներ, եւ ձեզ համար հնազանդեցնում է գիշերը եւ ցերեկը, եւ ամեն բանից տալիս է ձեզ, որ նրանից խնդրում էք. եւ եթէ հաշիւ անէք Աստուծոյ շնորհքը, չէք կարող համարել: Մարդս իրաւի՛ անիրաւ ապերախս է»:

38. Եւ Արրահամ ասաց, «այս քաղաքը ապահով շինի՛ր, եւ հեռու պահիր ինձ եւ իմ որդիներին էլ կուռքեր պաշտելուց»:

39. Ո՛վ Տէր, նրանք շատ մարդկանց են մոլորեցրել. ուրեմն ով ինձ կը հետեւէ: Նա ինձանից է. բայց ով ինձ գէ՛մ կ'ապստամբւի, — ահա՛ դու ներող ուղորմած ես»:

40. Ո՛վ մեր Տէր, ահա՛ ես իմ սերունդից ոմանց բնակեցրել եմ քո սուրբ տան մօտ մի ցտնքսից զուրկ հովիտի մէջ ո՛վ մեր Տէր, որ նրանք կատարեն աղօթքը: Արդ մարդկանց սրտերին աշխոյժ տուր գէպի նրանց եւ նրանց կերակրի՛ր այդ պտուղներիցը, որ շնորհակալ լինեն»:

41. Ո՛վ մեր Տէր, դու գիտես մեր ծածուկ պահածը եւ մեր յայտնածը: Եւ Աստուծոյ համար երկրի վրայ եւ երկնքումը մի ծածուկ բան չըկայ: Փառք լինի նրան, որ նա իմ ծերութիւնումն տեւ է ինձ իսմայէլը եւ իսահակը. ահա՛ իմ Տէրը աղօթք լսող է»:

42. «Ո՛վ իմ Տէր, ինձ աղօթքը կատարօ՛ղ շինի՛ր, նաեւ իմ սերունդից մի քանիներին, ո՛վ մեր Տէր. եւ ընդունի՛ր իմ աղօթքը. ո՛վ մեր Տէր, ների՛ր ինձ եւ իմ ծնողներին եւ հաւատացեալներին այն օրը, որ հաշիւ է պահանջւելու»:

43. Եւ բնաւ մի՛ կարծիր, որ Աստուած անգէտ է, թէ անիրաււներն ինչ են անում. նրանք միայն ետ են պահուում այն օրւայ համար, ուր աչքերը մտիկ կրտան,

44. Յառաջ վազելով եւ իրանց գլուխները բարձրացընելով. նրանց նայածքը ետ չի դառնայ դէպի իրանց. եւ նրանց սրտերը պարապ կը լինեն: Արդ ըստ պառնայի՛ր մարդկանց, որ տանջանքի օրը գալու է իրանց համար:

45. Իսկ անիրաւութիւն անողները կ'առեն, «ա՛վ մեր Տէր, մեզ ետ պահի՛ր մինչեւ մի որոշ մօտ ժամանակ»:

46. Մինք քո կոչումին պիտի պատասխան տանք եւ հնազանդենք մարգարէներին»: «Արդեօ՞ք դուք առաջուց երգում չէք արեւ, թէ ձեզ համար մնաս չկայ»:

47. «Եւ դուք բնակւել էք նրանց տեղը, որոնք իրանց անձերին անիրաւութիւն են արեւ, եւ ձեզ յայտնւել է, թէ մենք նրանց հետ ինչպէս ենք վարւելու. եւ մենք ձեզ համար օտակներ էլ ասացինք. եւ նրանք արդէն խորամանկութիւն են գործել, եւ նրանց խորամանկութիւնը Աստուծոյ մօտ է, թէ եւ նրանց խորամանկութիւնը այնչափ լինէր, որ սարերն էլ նրանից հաււէին»:

48. Եւ մի՛ կարծիր թէ Աստուած կը փոխէ իր խօսքը, որ տւել է իր մարգարէներին, որովհետեւ Աստուած զօրաւոր վրէժխնդիր է:

49. Այն օրը, որ երկիրը մի ուրիշ երկրի կը փոխւինաեւ երկինքը, եւ կը ներկայանան մէկ հզօր Աստուծուն,

50. Եւ կը տեսնեն այն ժամանակ յանցաւորներին, որ շղթաների մէջ կապւած են:

51. Նրանց ներքին հագուստները կուպրից կը լինի, եւ նրանց երեսները կրակը կը ծածկէ. այսպէս է հատուցանում Աստուած ամեն մի անձի նրա վաստակը, որովհետեւ Աստուած արագ հաշիւ տեսնող է:

52. Սա մի խրատ է մարդկանց. ոարեմն թող խրատուեն եւ իմանան, որ միմիայն նա է մէկ Աստուած, եւ խելքի տէրերը մտածեն:



15) ՍՈՒՐԷ՝ Հ Է Ճ Ր

Մէքքէական. իննըսուն ինը այէ:

Գթած զորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Ր. Սա գիրքին եւ յայտնի Ղուրանի նըշաններն են:

2. Շատ անգամ փափաղելու են անհաւատները, ո՛հ թէ միւսլիմներ եղած լինէին:

3. Թող ուտեն եւ վայելեն եւ յոյսով խաղան, բայց շուտով կը հասկանան:

4. Եւ մենք ոչ մի գիւղ չենք բնաջինջ արել եթէ նա յայտնի գիրք չէ ունեցել:

5. Ոչ մի ազգ իր որոշ վախճանիցն առաջ չի անցնի եւ ոչ էլ ետ կը մնայ:

6. Եւ նրանք ասացին, «ո՛վ մարդ, որ քեզ յայտնութիւն է իջեցրել. դու գիւահար ես»:

7. «Ի ու ինչո՞ւ չես մեզ մտ հրեշտակներ բերում, եթէ դու ճշմարիտ ես»:

8. Մենք հրեշտակ չենք իջեցնում, եթէ ոչ ճշմարտութեամբ. ուրեմն այդ ժամանակ նրանք չը պիտի սպասուեն:

9. Մենք ինքներս իջեցրել ենք յայտնութիւնը, եւ մենք նրա պահապանն ենք:

10. Եւ արդէն քեզնից առաջ մարգարէներ ենք ուղարկել առաջին ցեղերին .

11. Եւ նրանց մօն մի մարգարէ չէր գալիս, որ նրան ծաղրած չըլինէին :

12. Այսպէս էլ վարում ենք յանցաւորն իւր սրտերը :

13. Նրանք չեն հաւատայ, թէ եւ նախնիքների պատմութիւնը հղել անցել է :

14. Եւ եթէ երկնքիցը նրանց համար դուռ էլ բաց անէինք, եւ իրանք վեր գնային նրա մէջը .

15. Նրանք անպատճառ կասէին, «մեր աչքերը հարթած ենք . այո՛ մենք կախարդւած մարդիկ ենք» :

16. Բայց մենք արդէն երկնքումը բոսրգեր ենք չիւնել եւ նրանց զարգարել նայողների համար :

17. Եւ մենք նրանց պահպանել ենք ամեն քարկոծւած սատանայից :

18. Բաց ի նրանից, մէկը լուր գողանալիս, նրան հետեւում է մի որոշ ասուպ .

19. Եւ մենք տարածել ենք երկիրը եւ նրանում հաստատել ենք սարերը եւ ամեն մի չափաւոր բանից բոյսեր ենք հանել .

20. Եւ ապրուստ ենք շրնել նրանում ձեզ համար, եւ այն էլ որին դուք չէք կարող կերակրել :

21. Եւ ամեն բանի գտնձերը մեզ մօտ է, եւ մենք ամեն բան միայն որոշ չափով ենք իջեցնում :

22. Եւ մենք ուղարկում ենք պտղատու քամիները, եւ երկնքիցը ջուր ենք իջեցնում, եւ ձեզ խմեցնում ենք նրանից, որը դուք չէք պահի :

23. Եւ ահա՛ մենք ենք կենդանացնողը եւ մեռցնողը, եւ մենք ենք ժառանգողները :

24. Եւ մենք արդէն ձեզնից առաջ եղածներին ճանաչում ենք, նաեւ գիտենք յաջորդողներին :

25. Եւ ահա՛ քո Տէրը նրանց ամենն էլ ժողովելու է . նա իրաւի իմաստուն գիտուն է :

26. Մենք մարդուն ստեղծել ենք չոր ցեխից եւ սեւ կաւից .

29. Եւ երբ ես նրան կը կազմեմ եւ իմ հոգուցը նրա մէջը կը փչեմ, այն ժամանակ վա՛ր ընկէք նրա առաջին երկրպագելով:

30. Եւ հրեշտակները բոլորն էլ նրան երկրպագեցին:

31. Բացի մերժող սատանայիցը, որ երկրպագողներին հետ լինէր:

32. Եւ նա ասաց, «ո՛վ սատանայ, ի՞նչ է պատճառդ, որ երկրպագողներին հետ չես»:

33. Նա էլ ասաց, «ին՞ձ չի վայելի, որ ես մի մարդու երկրպագեմ, որ դու նրան չոր ցեխից եւ սեւ կուլից ես շինել»:

34. Նա էլ ասաց «դո՛ւքսը դնա այդ տեղից. որովհետեւ դու քարկոծւած ես»:

35. Եւ ահա՛ անէծքը քեզ վրայ յինի՛ մինչեւ դատաստանի օրը:

36. Եւ նա ասաց, «ո՛վ իմ Տէր, ինձ ժամանակ տուր մինչեւ նրանց յարութեան օրը»:

37. Նա էլ ասաց, «ահա՛ քեզ ժամանակ է տրվում»:

38. «Մինչեւ որոշ ժամանակի օրը»:

39. Եւ նա ասաց, «ո՛վ իմ Տէր, ինչպէ՞ս դու ինձ փորձիչ շինեցիր, որ ես նրանց համար բաներ սարքեմ երկրի վրայ, ես էլ նրանց բոլորին փորձելու եմ»:

40. «Բացի քո ճշմարիտ ծառաներից որ նրանցից են»:

41. Նա էլ ասաց, «սա ինձ համար ուղիղ ճանապարհ է»:

42. «Որովհետեւ դու իմ ծառաների վրայ իրաւունք չունես. բացի այն խաբւածներից, որ քեզ կը հետեւեն»:

43. «Եւ ահա՛ նրանց ամենի հաւաքւելու տեղը զբժոխքն է»:

44. Նա եօթը դուռ ունի, եւ նրանցից ամեն մի

դուռը մի որոշ մասը կ'առնէ :

45. Ահա երկիւղածները դրախտների եւ աղբիւր-
ների մէջ են .

46. Նրա մէջը մտէ՛ք խաղաղութիւնով, ո՛վ ապա-
հովւածներ :

47. Նրանց սրտերիցը վեր կ'առնենք ատելութիւնը,
իրբեւ եղբայրներ բարձերի վրայ դէմ առ դէմ նստած :

48. Նրանց այնտեղ մի յոգնութիւն չի պատահի, եւ
նրանք այնտեղից դուրս չեն գայ :

49. Իմ ծառաներին լուր տուր, որ ես ներող ողոր-
մած եմ :

50. Եւ թէ իմ պատիժը ցաւալի պատիժ է :

51. Եւ նրանց լուր տուր, Աբրահամի հիւրերի մա-
սին,

52. Երբ նրանք դնացին նրա մօտը, ասացին «խա-
ղաղութիւն» . նա էլ ասաց, «մենք ձեզնից վախում
ենք» :

53. Նրանք էլ ասացին, «մի՛ վախենար, մենք քեզ մի
խելօք տղայի աւետիքն ենք տալիս» :

54. Եւ նա ասաց, «իմ ծերութեան ժամանակն էք
ինձ աւետիք տալիս. եւ ինչո՞վ էք աւետիք տալիս» :

55. Նրանք էլ ասացին . «մենք քեզ ճշմարտութեամբ
ենք աւետիք տել, ուրեմն դու մի՛ յուսահատուիր» :

56. Եւ նա ասաց, «ո՞վ կը յուսահատուի իր Տիրոջ
ողորմութիւններիցը եթէ ոչ մոլորողները» :

57. Եւ ասաց, «ուրեմն ի՞նչ է ձեր նպատակը, ո՛վ
ուղարկւածներ» :

58. Նրանք էլ ասացին, «մենք ուղարկուել ենք մի
յանցաւոր ազգի մօտ» :

59. «Բայ ի Ղովտի ընտանիքից, որոնց ամենն էլ
պիտի ազատենք» :

60. Նրա կնկանից ջոկ : Մենք որոշել ենք, որով-
հետեւ նա ետ մնացող է»

61. Եւ երբ այն ուղարկւածները Ղովտի ընտանիքի
մօտ եկան .

62. Ասաց, «դուք անձանօթ մարդիկ էք» :
63. Նրանք էլ ասացին, «այո՛, մենք ձեզ մօտ ենք ևկեկ այն բանով, որի մասին նրանք կասկածում են» :
64. Եւ մենք ճշմարտութիւնով ենք քեզ մօտ եկեկ, եւ մենք արդարներ են» :
65. «Արդ դու քո ընտանիքովը գնա՛ գիշերւայ մէկ մասուժը եւ հետեւիր նրանց ետեւիցը, եւ ձեզնից ոչ մէկը մտիկ չըտայ ետ, եւ գնացէ՛ք ուր ձեզ հրամայւած է :
66. Եւ մենք վճռեցինք այս հրամանը նրա նկատմամբ, որովհետեւ միւսներրի արմատը միւս առաւօտը բնաջինջ էր լինելու :
67. Եւ քաղաքի բնակիչներն ուրախացած եկան :
68. Նա ասաց, «սրանք իմ հիւրերն են . ինձ խայտառակ մի՛ անէք» :
69. «Եւ վախեցէ՛ք Աստուածանից, եւ ինձ մի՛ ամաչեցնէք» :
70. Նրանք էլ ասացին, «մի՞թէ մենք քեզ չենք արգիլել, որ ոչ մի մարդ չ'ընդունես» :
71. «Ահա՛ իմ աղջիկներս, եթէ պղծութիւն էք գործելու» :
72. Քո կեանքովդ երգում եմ անում, որ նրանք ցընորուել էին իրանց մոլութեան մէջ :
73. Սրա համար էլ լուսածագին յափշտակեց նրանց փոթորիկը :
74. Եւ մենք նրան տակն ի վեր հանեցինք եւ նրանց վրայ պինդ այրած քարեր տեղացրեցինք :
75. Ահա՛ սրանում նշաններ կան հասկացողների համար :
76. Եւ ահա նրանք հաստատ ճանապարհի մէջ են :
77. Ահա՛ սրանում նշան կայ հաւատացեալների համար :
78. Եւ էյքէյի մարդիկը անխրաւներ էին :
79. Եւ մենք նրանցից վրէժ առեցինք . եւ ահա նրանք երկունսն էլ յայտնի տիպաբններ են :

80. Եւ արդէն Հէճրի մարդիկն էլ են մարգարէնե-
րին ստախօս համարել:

81. Եւ մենք աւել էինք նրանց մեր հրաշքները,
բայց նրանք ետ էին քաշուած նրանցից:

82. Եւ նրանք իրանց համար սարեբումը ապահով
տուներ էին փորում:

83. Բայց փոթորիկը յափշտակեց նրանց լուսածա-
ղին:

84. Եւ նրանց վաստակածը իրանց չ'օգնեց:

85. Եւ մենք երկինքը ու երկիրը եւ այդ երկուսի
մէջտեղը եղածը միմիայն ճշմարտութիւնով ենք ստեղ-
ծել. եւ իրաւ ժամը պիտի գայ. ուրեմն անուշ ներո-
ղութեամբ ների՛ր:

86. Ահա՛ քո Տէրը իմացող Աքարիչն է:

87. Եւ մենք արդէն քեզ աւել ենք եօթը կրկնում-
ները եւ մեծ Ղուբանը:

88. Նայւածքդ մի՛ երկայնացնիր դէպի այն բաների
տեսակները, որ աւել ենք ուրիշներին վայելելու, եւ
նրանց մասին մի՛ արտմի՛ր. եւ թեւերդ տարածի՛ր հա-
ւատացեալների վրայ:

89. Եւ ասա՛, ահա՛ ես յայտնի խրատիչն եմ:

90. Ինչպէս հերձաւորներին դէմ պատիժ ուղարկե-
ցինք,

91. Նոյնպէս էլ նրանց վրայ, որոնք Ղուբանը մաս
մաս են անում:

92. Քո Տիրոջովը երզում եմ անում, որ նրանց ա-
մենիցն էլ հարցնելու ենք,

93. Թէ իրանք ինչ են արել:

94. Բայց դու ասա՛ նրանց այն, որ քեզ հրամայ-
ւած է, եւ կռապաշտներիցը ետ քաշի՛ր:

95. Ծաղրողներիցը մենք քեզ կըպաշտպանենք:

96. Նրանք, որ Աստուծոյ հետ ուրիշներն էլ են դը-
նում. ապա շուտով կ'իմանան:

97. Եւ մենք արդէն գիտենք, որ նրանց ասածի
պատճառով քո սիրտը նեղվում է:

98. Բայց գու օրհնելով գովի՛ր քո Տիրոջը, և ևերկրբազոզներինցը եղի՛ր:

99. Եւ պաշտիր քո Տիրոջը, մինչև որ քեզ վրայ համոզում գայ:



16) ՍՈՒՐԷՆ Ա Հ Լ

Մէքքէական. Հարիւր և բասն ութը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Աստուծոյ հրամանը եկել է. ուրեմն նրան մի՛ շտապեցնէք: Օրհնեալ և բարձր է նա այն բանինցը, որ նրան ընկերներ էք շինում:

2. Նա իջեցնում է հրեշտակներին հոգուն հետ իր հրամանովը իր ծառաներից որի մօտ ուղում է, թէ խրատեցէ՛ք ինձնից ջոկ ուրիշ Աստուած չըկայ. ուրեմն ինձնից վախեցէ՛ք:

3. Նա է ստեղծել երկինքը և երկիրը ճշմարտութիւնով. նա բարձր է այն աթին բանից, որ նրան ընկերներ են շինում:

4. Նա ստեղծել է մարդուս սերմի կաթիլից, բայց յետոյ սա յայտնի հակառակորդ է:

5. Նա անասուններն է ստեղծել, որոնց մէջ ձեզ համար օգուտ կայ և շահեր կան, և գուք նրանցից ուտում էք:

6. Եւ նրանցում ձեզ համար գեղեցկութիւն կայ, երբ դուք էք քշում:

7. Եւ նրանք ձեր ծանրութիւնները տանում են հետո երկիր, ուր գուք սրտի դժւարութեամբ միայն կարող էք հասնել. որովհետև ձեր Տէրը գթած ողորմած է:

8. Նաև ձին և ջորին և էշը, որ նրանց հեծնէք,

նաեւ իբրեւ զարդ, եւ նա ստեղծում է այն, որ դուք չըզիտէք:

9. Աստուծուն է վերաբերեալ ճանապարհի նպատակին հասցնելը եւ նրանից չեղեցնելը. եւ եթէ նա կամենար, ձեզ ամենիդ էլ կառաջնորդէր:

10. Նա է, որ երկնքիցը ջուր է իջեցնում, որիցը ձեզ համար խմելիք կայ, եւ նրանից էլ ծառ՝ նրանում արածացնում էք:

11. Նա նրանով բուսեցնում է ցանքսը, ձիթենիներ եւ արմաւենիներ եւ խաղողը եւ ամեն պտուղներից. ահա՛ սրանում նշան կայ մտածող մարդկանց համար:

12. Եւ նա հնազանդեցրել է ձեզ համար գիշերը եւ ցերեկը եւ արձակը նւ լուսինը եւ աստղերը. որոնք հպատակւած են նրա հրամանովը. ահա՛ սրանում նշան կայ հասկացող մարդկանց համար:

13. Եւ ամեն ինչ նա ստեղծել է ձեզ համար երկրումը այլեւայլ գոյներով. ահա՛ սրանում նշան կայ խորհող մարդկանց համար:

14. Եւ նա է որ ծովը հպատակեցրել է ձեզ, որ նրանից թարմ միս ուտէք եւ նրանից զարդեր հանէք ձեզ համար, որ հագնէք. եւ դու տեսնում ես նաւը նրանում լողալիս, որ նրանից շնորհք խնդրէք եւ երախտագէտ լինէք:

15. Եւ նա երկրի վրայ հաստատել է սարերը, որ նա ձեզ համար հաստատ լինի, նաեւ գետերը եւ ճանապարհները, որ ուղիղ առաջնորդւէք:

16. Եւ նշանները եւ աստղերով որ ճանապարհ են ցոյց տալիս:

17. Մի՞թէ նա, որ ստեղծում է, նրա նման է, որ չէ ստեղծում. մի՞թէ չէք հասկանում:

18. Եւ եթէ դուք հաշուէք Աստուծոյ շնորհքները, չէք կարող նրան համարել, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

19. Եւ Աստուած գիտէ թէ դուք ինչ էք ծածուկ պահում եւ ինչ էք յայտնում:

20. Եւ նրանք, որ Աստուածանից ջոկ ուրիշների են աղօթք անում, — սրանք մի բան չեն ստեղծել, այլ սրանք ստեղծւած են:

21. Մեռածներ են, կենդանի չեն. եւ չեն իմանում,

22. թէ ինչպէս պէտք է յարութիւն առնեն:

23. Չեր Աստուածը մէկ Աստուած է. իսկ նրանք, որ միւս աշխարհքին չեն հաւատում. նրանց սրտերը ուրացողներ են եւ իրանք էլ ամբարտաւաններ են:

24. Անշուշտ, Աստուած գիտէ, թէ նրանք ինչ են ծածուկ պահում եւ ինչ են յայտնում:

25. Իրաւի նա ամբարտաւաններին չէ սիրում:

26. Եւ երբ նրանց ասում է, թէ ի՞նչ է այն որ ձեր Տէրը իջեցրել է, ասում են, «նախնեաց առասպելները»:

27. Որ պիտի կրեն բոլորովին իրենց բռնները յարութեան օրը, եւ նրանց բռններիցն էլ, որ առանց գիտութեան նրանց մոլորեցնում էին: Ահա՛ տաժանելի է նրանց կրածը:

28. Արդէն նրանց նախորդներն էլ խորամանկութիւն արեցին, բայց Աստուած քանդեց նրանց հիմքերը. եւ տանիքը վար ընկաւ նրանց վերեւից եւ պատիժը հասաւ նրանց այն տեղից, որ չըզիտէին:

29. Յետոյ յարութեան օրը ամաչեցնելու է նրանց ասելով. «ուր են այն իմ ընկերները, որոնց մասին դուք միմեանց հետ կուռւմ էիք»: Եւ նրանք, որ գիտութիւն է տրւած իրանց, ասում են, «իրաւ այսօր ամօթ եւ պատուհաս է հասնում անհաւատներին»:

30. Նրանք, որոնց հրեշտակները մեռցրին, որ իրանց անձերի դէմ անիրաւութիւն անողներ էին, բարեւ են տալու ասելով, «մենք չարութիւն չէինք անում». այ՛ո՛, Աստուած գիտէ թէ դուք ինչ էիք անում»:

31. Արդ մտէ՛ք դժօխքի դռներովը, որ նրանում յաւելեալ են մեաք. եւ վա՛տ է ամբարտաւանների ընակասեղին:

32. Եւ երբ երկիւղածներին ասում է, թէ «այն

ինչ է, որ ձեր Տէրը իջեցրել է» • ասում են, «բարի բան նրանց համար, որ այս աշխարհքում բարեգործութիւն են անում, բարիք է, եւ բարի բան էլ միւս աշխարհքում»: Եւ երջանկաւէտ է երկիրազածների բնակարանը:

33. Եղեմական գրախտներ, որի մէջ նրանք մտնում են, որոնց ասկուլը գետեր են հոսում • նրանց համար այնչտեղ կայ իրանց ուղածը: Աստուած այսպէս վարձատրում է երկիրազածներին:

34. Նրանց, որ հրեշաակները մեռցրեցին իբրևս բարէներ, ասելու են, «խաղաղութիւնն ձեզ • մտէ՛ք զըրախտը ձեր արածների համար»:

35. Մի՞թէ նրանք մի բան են սպասում բացի նրանից, որ հրեշաակները պէտք է գան, կամ թէ քո Տիրոջ հրամանն է գալու • այսպէս են արել նրանցից առաջ եղողները • և Աստուած նրանց անիրաւութիւնն չի անի • իսկ նրանք են իրանց անիրաւութիւնն անողները:

36. Եւ զբա համար նրանց պատուհասներ հանդիպեցին իրանց գործքերի համար, եւ ճշմարտացաւ որ իրանք ծաղրում էին:

37. Կոպպաշաներն ասում են, «եթէ Աստուած կամեցած լինէր, ո՛չ մենք եւ ո՛չ ալ մեր հայրերը բացի նրանից ոչ մի բան չէինք պաշտի, եւ ոչ մի բան էլ արգելւած չէինք համարի առանց նրան»: Եւ այսպէս էին անում նրանից առաջ եղողներն էլ: Բայց մարգարէների պարտքը միայն խրատելն է:

38. Սակայն մենք ամեն մի ազգի համար մի մարգարէ ենք ուղարկել, թէ Աստուծուն պաշտեցէ՛ք, եւ կուռքերիցն զգուշացէ՛ք: Եւ նրանցից մի քանիսին Աստուած առաջնորդել է, իսկ մի քանիսի մասին ճշմարիտ է եղել մոյոթութիւնը: Արդ ճանապարհորդեցէ՛ք երկրի վրայ եւ ատէք թէ ստախօս հանողների վերջն ինչպէս է եղել:

39. Եւ եթէ դու նրանց ուղիղ ճանապարհորդութիւնը

բաղձաս էլ, Աստուած մոլորողին չի առաջնորդի, եւ նրանց համար օգնական չի լինի:

40. Եւ նրանք սաստիկ երդումով երդում են անում Աստուծով, «թէ Աստուած յարութիւն չի տայ նրան, որ մեռել է»: Այո՛, Աստուծոյ խոստումը ճշմարիտ է. քայց մարդկանցից շատերը չբոցանան,

41. Որ նրանց, որոնք վիճաբանում են այդ մասին, յայտնւի, եւ անհաւատներն իմանան, որ իրանք ստախոս էին:

42. Մեր խօսքը մեր մի ուղած բանի համար սա է, որ ասում ենք «եղի՛ր» եւ նա լինում է:

43. Եւ նրանք, որ Աստուծուն հնազանդելով դադարեցին, երբ նրանց անիրաւութիւն էին արել, մինք նրանց լաւ կերպով բնակեցնելու ենք այս աշխարհքում. բայց միւս աշխարհքի վարձքը աւելի մեծ է, եթէ հասկանան,

44. Նրանք, որ համբերում են եւ իրանց Տիրոջն են ապաւինում:

45. Եւ մինք ձեզնից առաջ միմիայն մարդիկ ենք ուղարկել, որոնց յայտնութիւն էինք տալիս. ուրեմն յայտնութիւնն ունեցողներից հարցրէ՛ք եթէ չբոցանէք:

46. Յայտնութիւններով եւ գրքերով, եւ քեզ համար էլ իջեցրեցինք յուշարարութիւնը, որ մարդկանց բացատրես, թէ նրանց համար ինչ է իջեցրուել, որ նրանք մտածեն:

47. Մի՞թէ նրանք, որ չարութիւններ են սարքում, ապահով են, որ Աստուած երկիրը նրանց համար չի ճեղքի, կամ նրանց վրայ մի պատիժ չի բերի այն տեղից, ուր որ չբոցանան:

48. Կամ նրանց չի յափշտակի իրանց ճանապարհորդութեան ժամանակ, որ նրանք չը կարողանան նրան տկարացնել:

49. Կամ նրանց չի պատժի մաս մաս. որովհետեւ ձեր Տէրը գթած ողորմած է:

50. Մի՞թէ չեն հասկանում Աստուծոյ ստեղծածիցը

մի բան որ իր շատքը գցում է աջ եւ ձախ կողմը Աստուծուն երկրպագելով եւ իրանք խոնարհելով :

51. Եւ երկնքումն ու երկրի վրայ եղած անասուններն ու հրեշտակներն Աստուծոյ են երկրպագութիւն անում, եւ չեն հպարտանում :

52. Իրանցից բարձր եղող իրանց Տիրոջը վախում են, եւ իրանց հրամայածը կատարում :

53. Եւ Աստուած ասում է երկու աստուած մի ընդունէք. նա միայն մէկ Աստուած է. ուրեմն ինձնից վախեցէ՛ք :

54. Եւ երկնքում ու երկրում ինչ կայ նրանն է. եւ նրանն է յաւէտ կրօնքը. ուրեմն մի՞թէ Աստուածանից ջոկ մի ուրիշից կը վախէք :

55. Եւ ինչ պարգեւ էլ, որ դուք ունէք, Աստուածանից է. յետոյ երբ մի մնաս ձեզ պատահում է, իսկոյն նրան էք գիմում :

56. Բայց երբ այն մնասը ձեր վրայից հեռանում է, այն ժամանանակ ձեզնից մի մաս իրանց Տիրոջը ընկերներ են շինում,

57. Որ ուրանան այն բանը, որ մենք տեսլ ենք իրանց : Արդ վայելեցէ՛ք, բայց շուտով կիմանաք :

58. Եւ այն մեր իրանց տւածիցը մի մաս տալիս են նրանց, որ բան չըղիտեն : Աստուած վկայ, ձեր արած զրպարտութեան համար ձեզ հեռացնելու են անպատճառ :

59. Եւ Աստուծուն ազջիկներ են շինում. քաւ լիցի նրանից. բայց իրանց համար կայ, ինչ որ ուզում են :

60. Եւ երբ նրանցից մէկին ազջկայ լուր են տալիս, տխրում է նրա երեսը սեւանում, եւ ինքը արտմում է :

61. Այն իրան տրւած վատ լուրի համար նա թագնավում է ժողովրդիցը, թէ արդեօ՞ք պահէ նրան կամ թաղէ նրան հողի մէջ : Վատ չէ՞ նրանց խոբհուրդը :

62. Միւս աշխարհքին չը հաւատացողների օրինակը աստանելի է, իսկ Աստուծոյ օրինակը բարձր է. նա զօրաւոր իմաստուն է :

63. Եւ Աստուած մարդկանցը պատժէր նրանց անի-

բաւութիւնների համեմատ, այն ժամանակ երկր ը վրայ մի անասուն չէր թողնի, սակայն նրանց ժամանակ է տալիս մինչեւ մի որոշ վախճան, եւ երբ նրանց որոշած վախճանը կրգայ, ո՛չ մի ժամ ետ կը մնան եւ ոչ առաջ կը գնան :

64. Բայց Աստուծոյն այն են տալիս, որից որ իրանք զգլում են, եւ իրանց լեզուն սուտն է խօսում, թէ իրանց համար բարիք կայ : Անկասկած, որ նրանց համար կրակը կայ, եւ նրանք զրկւած են :

65. Աստուած վկայ է, մենք արգէն քեզնից առաջ մարգարէներ ուղարկեցինք ազգերի, բայց սատանան նրանց համար պատրաստեց իրանց գործքերը, եւ նա այսօր նրանց պաշտպանն է, եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ :

66. Եւ մենք գիրքը քեզ համար միմիայն այն պատճառով իջեցրեցինք, որ այդ մասին վիճողներին բացատրես : Եւ նա առաջնորդութիւն եւ ողորմութիւն է հաւատացեալ մարդկանց համար :

67. Եւ Աստուած երկինքիցը ջուր իջեցրեց եւ կենդանացրեց հողը, որ արգէն մեռած էր : Եւ սրանում նշան կայ լսող մարդկանց համար :

Եւ ահա՛ անասունների մէջ ձեզ համար ուշադրելունիւթ կայ : մենք ձեզ խմեցնում ենք կաթ, որ նրանց փորի մէջ եղած աղբի եւ արեան մէջտեղումն է, մաքուր եւ գիւրմբելի :

69. Եւ արմաւենու ու խաղողի պտուղներիցը արքեցուցիչ բաներ եւ բարի սնունդ էք առնում : Եւ սրանում նշան կայ հասկացող մարդկանց համար :

70. Եւ քո Տէրը յայտնութիւն տւեց մեղուին, թէ սարերում եւ ծառերում եւ ուրիշ շինիլիքներում առն շինի՛ր :

71. Յետոյ կե՛ր ամեն պտղից եւ գնա՞ քո Տիրոջ ճանապարհներով հլութեամբ : Նրանց փորերիցը գոյն-զգոյն խմելիքներ են դուրս գալիս, որ առողջաբար են :

մարդկանց համար: Ահա սրանում նշան կայ խորհող մարդկանց համար:

72. Եւ Աստուած ձեզ ստեղծել է, յետոյ ձեզ մեռցնում է, ձեզնից մի քանիսին նա հասցնում է կեանքի խորութեան, որ իրանց գիտեցածիցը մի բան չըզտենան:

73. Եւ Աստուած ապրուստի նկատմամբ մի քանիսին գերազանց է արել միւսներից: սակայն սրանք որ գերազանց են, իրանց ապրուստիցը բան չեն տալիս իրանց զերի ծառաներին, թէև սրանք էլ այդ բանում նրանց հետ հաւասար են: Մի՞թէ Աստուծոյ պարզեւներն ուրանում են:

74. Եւ Աստուած ձեր անձերիցը ձեզ համար կնիկներ է շինել եւ ձեզ համար ձեր կնիկներիցը որդիներ է շինել եւ թոռներ, եւ ձեզ կերակրում է բարիքներով: Մի՞թէ նրանք հիմայ ունայն բաների են հաւատալու, եւ Աստուծոյ շնորհքն են ուրանալո՞ւ:

75. Եւ մի՞թէ Աստուածանից ջոկ մի ուրիշ բանի են ծառայելու, որ երկնքից եւ երկրից չէ կարող նրանց մնունդ տալ, եւ կարողութիւն էլ չունի:

76. Դուք Աստուծուն օրինակներ մի՛ բերէք, որովհետեւ Աստուած գիտէ: բայց դուք չը գիտէք:

77. Աստուած օրինակ է բերում մի ծախու առնւած ծառային, որ մի բանի վրայ իշխանութիւն չունի, ուրի՛ն մենք ամեն տեսակ ապրուստով հարստացուցեր ենք: Եւ նա նրանից ողորմութիւն է տալիս ծածուկ եւ յայտնի: Արանք իբար հաւասար են: Փառք Աստուծոյ՝ սակայն շատերը չըզտեն:

78. Եւ Աստուած օրինակ է բերում երկու մարդկանց, որոնց մէկը համբ է, եւ ոչ մի բան կարող չէ, եւ նա բոլորովին իր Տիրոջ վրայ բեռ է, եւ ուր էլ նրան ուղարկէ, նա մի բարիքով ետ չի դայ: Մի՞թէ նա հաւասար է նրան, որ արգար քան է հրամայում եւ ինքն ուզիլ ճանապարհի վրայ է:

79. Երկնքի եւ երկրի գաղանիքն Աստուծունն է,

եւ ժամի գործը միայն մի ակնթարթ է, կամ աւելի մօտ է. իրաւ Աստուած ամենակարող է:

80. Եւ Աստուած ձեզ հանել է ձեր մայրերի արգանդներինցը. զուք բան չըզխտէիք. եւ նա ձեզ համար շինել է լսողութիւնը եւ տեսողութիւնները եւ սրտերը, որ գոհ լինէք:

81. Նրանք մտիկ չե՞ն տալիս թռչուններին, որ ազատ թռչում են երկնքի օդին մէջ. նրանց ոչ ով չէ պահում բացի Աստուածանից: Ահա՛ սրանում նշաններ կան հաւատացող մարդկանց հաձար:

82. Եւ Աստուած ձեզ համար ձեր տներինցը բնակարաններ է շինել. եւ նա անասունների կաշիներինցը ձեզ համար տուններ է շինել, որ թեթեւութիւն ունենաք չուելու օրը եւ կանգնելու օրը, եւ նրանց բուրդինցը եւ մազերինցը կահկարասիք եւ ապրանքներ՝ մինչեւ մի առ ժամանակ:

83. Եւ Աստուած իր ստեղծածինցը ձեզ համար շաքաներ է շինել եւ սարերինց ձեզ համար ապաստանարաններ է շինել, եւ ձեզ համար հազուասներ է շինել որ ձեզ պաշտպանում են տաքութիւնինց եւ հազուասներ, որ ձեզ պաշտպանում են պատերազմինց: Նա այսպէս կատարել է ձեր վրայ իր շնորհքը, որ անձնատուր լինէք:

84. Եւ եթէ նրանք մերժեն, քո պարտքը միայն առաջարկելն է յայանապէս:

85. Նրանք ճանաչում են Աստուծոյ պարգեւը, յետոյ ուրանում են այն. եւ նրանցինց շատերը անհաւատ են:

86. Եւ մի օր մենք ամեն մի ազգինց մի վկայ ենք յարուցանելու. այն ժամանակ անհաւատներին իրաւունք չի տրւի, եւ նրանք շնորհք չեն վայելի:

87. Եւ երբ անիրաււները կը տեսնեն պատիժը, այն ժամանակ նա չի թեթեւացնուի նրանցինց, եւ նրանց ժամանակ չի տրւի:

88. Եւ երբ նրանք կը տեսնեն աստուածընկերներին, որոնց ընկերներ էին շինում, կ'ատեն, «ո՛վ մեր Տէր, սրանք մեր աստուածընկերներն էին, որոնց մենք

աղօթք էինք անում քեզնից ջոկ»։ Իսկ նրանք ասելու են սրանց այս խօսքը, «դուք ստախօսներ էք»։

89. Եւ այն օրը նրանք Աստուծուն են դիմելու «խաղաղութիւն» ասելով, եւ նրանց հնարածները հեռանալու են նրանցից։

90. Նրանք որ անհաւատ են եւ ծուլում են Աստուծոյ ճանապարհիցը, մենք պէտք է նրանց արած չարութիւններէ համար աւելացնենք նրանց համար պատիժ պատժի վրայ։

91. Եւ մի օր որ մենք ամեն մի ազգից իրանց մէջ իցն իրանց դէմ մի վկայ կը յարուցանենք, քեզ էլ վկայ կը բերենք որանց դէմ։ Եւ մենք իջեցրել ենք քեզ համար գիրքը իբրեւ բացատրութիւն ամեն բանի եւ իբրեւ առաջնորդութիւն եւ ողորմութիւն եւ աւետիք միւսլիմների համար։

92. Իբաւ Աստուած հրամայում է արդարութիւն եւ բարեգործութիւն, եւ տալ ազգականներին, եւ արգելում է զազրագործութիւնից, վատութիւնից եւ ապրստամբութիւնից, նա խրատում է ձեզ որ յիշէք։

93. Եւ կատարեցէ՛ք Աստուծոյ ուխտը, որ ուխտում էք եւ դաշինք դնելուց յետոյ մի՛ դրժէք։ Եւ դուք Աստուծուն արդէն երաշխաւորել էք։ Իբաւ գիտէ Աստուած, թէ՛ դուք ինչ էք գործում։

94. Եւ մի՛ լինէք այն կնկան պէս, որ իր մանածը ամբացնելուց յետոյ թելերը քանդում է, որ դուք ձեր երգումները խաբելու միջոց շինէք իրար դէմ, որ մի ցեղը միւս ցեղի վրայ բազմաթիւ լինի։ Ահա՛ Աստուած ձեզ փորձում է դրանով, եւ նա ձեզ բացատրելու է յարութեան օրը այն. որի մասին վիճում էիք։

95. Եւ եթէ Աստուած կամենար, ձեզ մէկ կրօնքի ժողովուրդ կը շինէր, բայց նա իր ուզածին մոլորեցրնում եւ իր ուզածին ուղիղ առաջնորդում է. եւ դուք հաշիւ պիտի տաք ձեր արարքներէ համար։

96. Եւ դուք ձեր երգումները խաբելու միջոց մի շինէք իրար դէմ, որ այն ոտքը, որ հաստատ էր, սահի։

եւ զուք ճաշակէք շարիքը, որ Աստուծոյ ճանապարհիցը շնդւել էք, եւ ձեզ համար մեծ պատիժ կը լինի:

97. Աստուծոյ ուխտը չնչին գինով մի՛ ծախէք. իրաւի Աստուծոյ մօտ նա է ձեզ համար լաւ, եթէ հասկանում էք:

98. Ձեր ունեցածը կորչելու է. բայց ինչ որ Աստուծունն է, նա մնայուն է. եւ մենք պէտք է վարձատրենք բարի վարձքով նրանց նրա համար, որ արեւ են համբերութիւնով:

99. Ով որ գործում է մի բարի գործ, թէ արու լինի թէ էգ, նա հաւատացեալ է, եւ մենք անպատճառ նրան անուշ կեանքով վարձատրելու ենք եւ իրանց արածի համար գեղեցիկ վարձքով վարձատրելու ենք:

100. Եւ երբ դու կարգում ես նրանց համար Ղուբանը, այն ժամանակ քարկոծեալ սատանայից ապաստան խնդրի՛ր Աստուծոյ մօտ:

101 Իրաւ նա իշխանութիւն չունէ հաւատացեալներին եւ իրանց Տիրոջ ապաւինողներին վրայ:

102. Ահա՛ նրա իշխանութիւնը նրանց վրայ է, որ մերժում են նրան եւ նրա ընկերներ են դնում:

103. Իւ երբ մենք մէկ այլ փոխում ենք մի այլի տեղը, եւ Աստուած գիտէ, թէ ինքը ինչ է իջեցրել, նրանք ասում ենք թէ «դու զրպարտիչ ես», բայց նրբանցից շատերը չեն հասկանում:

104. Ասա՛, «դրան իջեցրել է Սուրբ Հոգին քո Տիրոջից ճմարտութեամբ, որ հաստատէ հաւատացեալներին, եւ է իբրեւ առաջնորդութիւն եւ աւետիք միւս լիմներին համար:

105. Եւ մենք արդէն գիտենք նրանց, որ ասում են, «իրաւի նրան մի մարդ է սովորեցնում»: Այն մարդը, որի մասին ակնարկութիւն են անում, օտարացեղ է, իսկ սա յայտնի արարերէն լեզու է:

106. Իրաւի նրանք չեն հաւատում Աստուծոյ նշաններին, — Աստուած նրանց չի առաջնորդի, եւ նրանց համար ցաւալի պատիժ կայ:

107. Ահա՛ նրանք, որ սուտեր են հնարում, չեն հաւատում Աստուծոյ նշաններին եւ նրանք ստախոսներ են :

108. Ով Աստուծուն չըհաւատայ, որ սուտ չհաւատում էր, եթէ մէկ ստիպւածը չէ եւ սիրտը հաստատ է հաւատքի մէջ, — եւ ով որոշակի անհատա զառնայ սրտանց, նրանց վրայ կը լինի Աստուծոյ բարկութիւնը, եւ նրանց համար մեծ պատիժ կայ :

109. Սա նրա համար է, որ այս աշխարհքի կեանքն աւելի սիրեցին քան թէ միւս աշխարհքինը, եւ իրաւ Աստուած չի առաջնորդի անհաւատ մարդկանցը :

110. Աստուած կնիք է դրել նրանց սրտերի, նրանց լսողութեան եւ նրանց տեսողութեան վրայ, եւ նրանք տգէտներ են, նրանք միւս աշխարհքում անպատճառ վնասւածներ են լինելու :

111. Յետոյ իրաւի քո Տէրը նրանց համար, որ հաւածւելուց յետոյ գազթել են, յետոյ պատերազմել են եւ համբերել, ահա՛ քո Տէրը դրանից յետոյ ներող ուզորմած է :

112. Մի օր ամեն մի հոգի գալու է իր անձի դէմ մաքառելով. եւ ամեն մի հոգու կը տրւի իր գործածի հատուցումը. եւ նրանց անիրաւութիւն չի լինի :

113. Եւ Աստուած մի գիւղ է օրինակ բերում որ պահճով հանգիստ էր, որի ապրուստը առատօրէն գաւիթ էր ամեն տեղից, բայց Աստուծոյ շնորհքն ուրացաւ. եւ Աստուած ճաշակել տւեց նրանց իրանց գործածի պատճառով սովի եւ պատերազմի երկիւղը :

114. Եւ արդէն մի մարգարէ եկաւ նրանց համար իրանցից բայց նրանք ստախոս համարեցին նրան. եւ պատիժը յափշտակեց նրանց, որովհետեւ անիրաւներ էին նրանք :

115. Ուրեմն կերէ՛ք ինչ Աստուած ձեզ պարգեւել է, իրբեւ մաքուր եւ սնուչ, եւ Աստուծոյ շնորհքի համար գոհացէ՛ք, թէ դուք պաշտում էք նրան :

116. Չեզ համար անմաքուր է հրատարակւած միմիայն սատկածը, արիւնը, խոզի միսը եւ ամեն ինչ,

117. Եւ ձեր լեզուի խօսած սուտերը մի' ասէք, թէ սա մաքուր է, իսկ սա պիղծ է, որ Աստուծոյ վրայ սուտ գրպարտութիւն անէք: Ահա' նրանք, որ Աստուծոյ մասին գրպարտութիւն են անում, երջանիկ չեն լինի:

118. Մի քիչ վայելումն, եւ նրանց ցաւալի տանտանք կայ:

119. Եւ մենք պիղծ ենք հրատարակել հրէաների համար այն. որ քեզ արդէն սրանից առաջ պատմել ենք, եւ մենք նրանց անիրաւութիւն չենք արել, իսկ նրանք են իրանց անիրաւութիւն արել:

120. Յետոյ քո Տէրը նրանց, որ գիտութեամբ չարութիւն են գործել եւ այնուհետեւ ապաշխարել եւ բարիք գործել, ահա' քո Տէրը նրանից յետոյ ներող ուղորմած է:

121. Իրաւի Արրահամը մի բարեկրօն բարեպաշտ ուղղափառ մարդ էր Աստուծոյ առաջին եւ նա կուպաշտ չէր:

122. Նա երախտագէտ էր նրա շնորհացը համար. նա էլ նրան ընտրեց եւ առաջնորդեց զէպի ուղիղ ճանապարհը:

123. Եւ մենք նրան այս աշխարհքում բարիքներ տուցինք, եւ նա միւս աշխարհքումն էլ արդարնորիցն է:

124. Յետոյ մենք քեզ յայտնութիւն տուցինք, թէ ուղղափառօրէն հետեւի՛ր Արրահամի կրօնքին, եւ նա կուպաշտներիցը չէր:

125. Շարաթը միմիայն նրանց համար տուեց, որ այդ մասին վիճու մ էին. եւ իրաւ քո Տէրը դատաստան է անելու նրանց մէջտեղը այն բանի համար, որ վիճում էին:

126. Կանչի՛ր նրանց քո Տիրոջ ճանապարհի մէջ իմաստութիւնով եւ անուշ քարոզելով եւ վիճարանու-

թիւն արա՛ նրանց հետ անուշ կերպով. ահա՛ քո Տէրը ճանաչում է նրան, որ նրա ճանապարհիցը մոլորուել է, եւ նա ճանաչում է ուղիղ առաջնորդողներին:

127. Եւ եթէ դաւք վրէժ էք առնում, ձեր կրած վընասին չափ վրէժ առէ՛ք. իսկ եթէ համբերէ՛ք, դա աւելի լաւ է համբերողներին համար:

128. Ուրեմն համբերի՛ր, եւ քո համբերութիւնը մեծաբայն Աստուծով կը յինի: Եւ դու մի՛ տխրիր նրանց մասին, եւ մի՛ նեղանար նրանց արած խորամանկութեան պատճառով. իրաւի Աստուած երկիւղածներին եւ բարեգործներին հետ է:



17) ՍՈՒՐԷ Ա Ս Ր Ա

Մէքքէական. Հարիւր ասանակ ալէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Բարձրեալ է նա, որ գիշերը իրան ծառայի հետ ճանապարհորդեց սուրբ Տաճարից դէպի Աղասայի տաճարը, որի շուրջը մենք օրհնեցինք, որ նրան ցոյց տանք մեր նշանները. ահա՛ նա լսող տեսնող է:

2. Մենք Մովսէսին տեցինք զիւրքը, եւ նրան ուղեցոյց շինեցինք Իսրայէլի որդկանց համար, թէ բացի ինձնից ուրիշ պաշտպան մի՛ ընդունէք:

3. Այն անձի սերունդը, որ մենք կրեցինք նոյլ հետ, որովհետեւ նա մի երախտագէտ ծառայ էր:

4. Եւ մենք վճռեցինք զբքումը Իսրայէլի որդկանց մասին, թէ «երկրի վրայ երկու անգամ անպատճառ ապականութիւն գործեցէք, եւ մեծ հպարտութեամբ հպարտացէ՛ք»:

5. Բայց երբ այն երկուսից առաջինի սպառնալիքն եկաւ, մենք մեր ծառաներին ձեզ մօտ ուղարկեցինք

որ ձեզ հետ խիստ վարուեցին եւ պարտեցին տուների մէջը. եւ սպառնալիքը կատարուեց:

6. Յետոյ մենք ձեզ յաղթութիւն տւեցինք նրանց դէմ եւ ձեզ օգնեցինք ստացւածքներով եւ որդիքներով. եւ ձեզ մի բազմաթիւ ժողովուրդ շինեցինք:

7. Եթէ բարիք էք անում, ձեր անձերին էք բարիք անում, եւ եթէ վնաս էք տալիս, էլի նրանց էք տալիս. եւ երբ այն երկրորդի սպառնալիքն եկաւ, որ ձեզ դէմ չարիք գործեն եւ տաճարը մտնեն, ինչպէս որ առաջի անգամը մտան, եւ քարուքանդ անեն, ինչպէս որ առաջ քարուքանդ արեցին:

8. Գուցէ ձեր Տէրը ձեզ ողորմէ, եւ եթէ դուք ետ դառնաք, մենք էլ ետ կը դառնանք. եւ մենք դժոխքը անհաւատների համար պաշարման տեղ ենք շինել:

9. Իբաւ այս Ղուբանը առաջնորդում է դէպի հաստատուն ճանապարհը, եւ աւետիք է տալիս հաւատացողներին,

10. Որոնք բարիք են գործում, եւ ահա՛ նրանց համար մեծ վարձք կայ:

11. Իսկ նրանք որ միւս աշխարհքին չեն հաւատում, նրանց համար ցաւալի տանջանք ենք պատրաստել:

12. Եւ մարդս չարիքի համար է աղօթում բարիք աղօթելով. եւ մարդս շատապող է:

13. Եւ մենք գիշերը եւ ցերեկը երկու նշաններ ենք շինել. մենք ջնջում ենք գիշերուայ նշանը եւ բերում ենք ցերեկուայ նշանը ակնյայտնի, որ ձեր Տիրոջից չընորհք խնդրէք, եւ իմանաք տարիների թիւը, եւ ամեն բանի հաշիւը մենք մասերի ենք բաժանել:

14. Եւ ամեն մարդու վզի վրայ պնդացրել ենք նրա թուշունը եւ յարութեան օրը մենք մի գիրք պիտի հանենք բացւած եւ նրան առաջարկենք:

15. «Կարգա՛ քո գիրքը՝ այսօր հօգին ձեզնից բաւական հաշիւ պահանջող է»:

16. Ով որ ուղիղ առաջնորդւած է, իր հոգուն համար է ուղիղ առաջնորդւած. ով որ մոլորւած է, իրան

հոգուն զէմ է մոլորւած. եւ մէկ արդէն բեռնւածը ուրիշի բեռնովը չի բեռնուի. եւ մենք պատիժ տւած չենք մինչեւ որ մարգարէ չէինք ուղարկել:

17. Եւ երբ մենք ուզում էինք, մի գիւղ փճացնենք նրա մեծամեծներին հրամայում էինք. բայց նրանք չարութիւն էին գործում նրանում, եւ խօսքը ճշմարտանում էր նրա մասին եւ մենք նրան բոլորովին բռնաջինջ էինք անում:

18. Եւ ո՛րչափ ազգեր ենք բնաջինջ արել Նոյից յետոյ, եւ քո Տէրը բաւական տեղեակ է եւ տեսնում է իր ծառաների մեղքերը:

19. Ով այս վաղանցուկն է ուզում, մենք շուտով տալիս ենք նրան ինչ կամենում ենք. յետոյ որոշում ենք նրա համար դժոխքը. նա այնտեղ կայրւի ամօթահար արտաքուստ:

20. Եւ ով միւս աշխարհքն է ուզում եւ ջանք է անում նրա համար իր ջանքովը, նա հաւատացեալ է, եւ նրանց ջանքը արգասաւոր կը լինի:

21. Ամեն մէկին՝ սրանց էյ նրանց էլ, կըտանք քո Տիրոջ պարգեւից՝ եւ քո Տիրոջ պարգեւը չի խնայուի:

22. Նայի՛ր, թէ ինչպէս մէկը միւսից գերազանց են դասում. բայց միւս աշխարհքի աստիճաններն աւելի գերազանց են:

23. Աստուծոյ հետ մի ուրիշ Աստուած էլ մի՛ շինիր. որովհետեւ կը նստես իբրեւ յանցաւոր ամօթահար:

24. Եւ քո Տէրը որոշել է, որ բացի նրանից ուրիշին չը պաշտես, եւ ծնողներին բարիք անես, եթէ ծերանալու լինի քեզ մօտ նրանցից մինը կամ թէ երկուսն էլ. եւ նրանց ո՛ւֆ չասես, եւ նրանց չը հայնոյես. եւ նրանց հետ կակուղ խօսես:

25. Եւ ողորմութեամբ կախի՛ր նրանց վրայ խոնարհութեան թեւը եւ ասա՛, «ո՛վ Տէր, ողորմի՛ր սրանց, ինչպէս որ նրանք ինձ իմ փոքր ժամանակը սնուցրել են»:

26. Ձեր Տէրը գիտէ, թէ ձեր սրտերումը ինչ կայ, եթէ դուք բարեպաշտ էք:

27. Որովհետեւ նա ներող է նրանց, որոնք ապաշխարում են:

28. Ազգականին տուր նրա հասնելիքը, եւ տնանկին եւ ճանապարհորդին, բայց շոայլօրէն մի՛ շոայլիբ:

29. Որովհետեւ շոայլողները սատանաների եղբայրներն են, իսկ սատանան ապերախտ է իր Տիրոջ դէմ:

30. Իսկ եթէ պէտք է, որ նրանցից հեռանաս, քո Տիրոջ կողմանէ ողորմութիւն խնդրելով եւ յուսալով, գոնէ նրանց հետ մեղմ խօսքեր խօսի՛ր:

31. Եւ ոչ ձեռքդ վզիդ կապի՛ր, եւ ոչ էլ բոլոր տարածութեամբ տարածի՛ր, եթէ ոչ կը նստես նախատւած եւ կարօտացած:

32. Ահա՛ քո Տէրը առատօրէն ապրուստ է տալիս իր ուղածին, եւ ետ է քաշում. նա տեղեակ է եւ տեսնում է իր ծառաներին:

33. Եւ աղքատութիւնից վախենալով մի՛ սպանէք ձեր որդկանցը. մենք նրանց կը կերակրենք. որովհետեւ նրանց սպանելը մեծ մեղք կը լինի:

34. Եւ շնութեան էլ մի՛ մօտենաք, որովհետեւ դա զազրագործութիւն է, եւ չար ճանապարհ է:

35. Եւ մարդ էլ մի՛ սպանէք, որովհետեւ Աստուած արգիլի է, եթէ ոչ իրաւունքով. իսկ ով մի անմեղին սպանէ, մենք նրա մօտիկ ազգականներին իրաւունք ենք տալիս վրէժի, բայց նա չափազանցութիւն չ'անէ վրէժխնդրութեան մէջ, որովհետեւ նրան օգնութիւն է եղել:

36. Եւ որբերի ստացւածքին էլ մի՛ մօտենաք, եթէ ոչ միայն օրինաւոր կերպով, մինչեւ չափահաս կը լինի. եւ պայմանը կատարեցէ՛ք, որովհետեւ պայմանի համար պատասխանատուութիւն կայ:

37. Եւ չափելիս ճի՛շդ չափեցէ՛ք, եւ ուղղութեամբ կշռեցէ՛ք. սա բարի է եւ գեղեցիկ է բացասելում:

38. Մի բան մի՛ պնդեր, որ չը գիտես, որովհետեւ

լսողութիւնը եւ տեսողութիւնը եւ սիրտը՝ սրանց բուրն էլ այդ մասին պատասխանատու են :

39. Եւ երկրիս վրայ հպարտութեամբ մի՛ պտտիր, որովհետեւ չես կարող երկիրը ձեռքել եւ երկայնութիւնով սարհրին հասնել :

40. Այս բոլորը զգեալի չարութիւնն են քո Տիրոջ առաջին :

41. Սա յայտնութիւնն է քեզ համար քո Տիրոջ կողմանէ իբրեւ իմաստութիւնն եւ դու Աստուծոյ հետ ուրիշ Աստուած չը շինես՝ որովհետեւ նախատուած եւ արտաքուստ կը գցուես զժոխքը :

42. Մի՛թէ ձեր Տէրը ձեզ նախադասելով որդիներ է տուել, իսկ նրան համար հրեշտակներից էզերվեր առել՝ սա մեծ մեղք է, որ դուք ասում էք,

43. Մենք այս Ղուբանի մէջ շատ փաստեր հոլովեցինք, որ մտածեն, սակայն սա միմիայն նրանց զգուանքը շատացրեց :

44. Ասա՛, «եթէ նրա հետ միասին մի աստուածունի էլ լինէր, ինչպէս ասում են, այն ժամանակ նրանք էլ կ'աշխատէին ճանապարհ գտնելու դէպի աթոր :

45. Սուրբ է նա, բարձր է մեծ բարձրութիւնով այն բանից որ ասում են :

46. Սուրբ են ասում նրան գովաբանելով եօթը երկինքները եւ երկիրը, եւ ով որ նրանցում կայ եւ մի բան չըկայ որ նրան գովելով չ'օրհնաբանէ՝ բայց դուք նրանց օրհնաբանութիւնը չէք հասկանում, որովհետեւ նա հեզ ներող է :

47. Երբ դու նրանց կարգում ես Ղուբանը մենք քո եւ միւս աշխարհքին չը հաւատացողներին միջեւ ծածկող վարագոյր ենք շինում :

48. Եւ նրանց սրտերի վրայ խուփ ենք շինում, որ չը հասկանան, եւ նրանց ականջներում ծանրութիւն ենք դնում :

49. Եւ երբ դու Ղուբանի մէջ յիշում ես քո Տիրոջ,

թէ նա մէկ է, նրանք ետ են դառնում չգրանքով :

50 Մենք գիտենք, թէ նրանք ինչու են ականջ դնում, երբ քեզ ականջ են դնում, եւ երբ նրանք գաղտուկ փսփսում են, երբ անիրաւնեւն ասում են, «դուք միմիայն մի կախարդւած մարդու էք հետեւում» :

51. Տես թէ քեզ ինչի են նմանեցնում. բայց մտւորւած են, եւ ճանապարհ գտնել չեն կարող :

52. Եւ ասում են, «մի՞թէ երբ մենք ոսկորներ եւ փոշի դառնանք, յարութիւն կառնենք իրբեւ նոր արարածներ» :

53. Ասա՛, «թէ կուզ քարեր լինէք կամ երկաթ լինէք կամ մի արարած, որ աւելի ամուր լինի ձեր կարծեօք» . բայց նրանք ասելու են, «ո՞վ է մեզ ետ դարձնելու» . ասա՛, «նա որ ձեզ ստեղծել է առաջի անգամը» : Բայց նրանք իրանց գլուխները շարժելով կ'ասեն ձեզ, «դա ե՞րբ է լինելու», ասա՛, «կարելի է որ շուտով կը լինի» :

54. Այն օրը նա ձեզ կանչելու է, եւ դուք նրան օրհնարանելով կը պատասխանէք, եւ կը կարծէք թէ միմիայն մի քիչ ժամանակ էք մնացել :

55. Եւ ասա՛ իմ ծառաներին, որ զեղեցիկ կերպով խօսեն . իրաւ ստտանան գժտութիւն է զգում նրանց մէջ, որովհետեւ ստտանան յայտնի թշնամի է մարդուս :

56. Չեր Տէրը ձեզ ճանաչում է . եթէ կամենայ, ձեզ կողորմէ. կամ եթէ կամենայ, ձեզ կը տանջէ . եւ մենք քեզ չենք ուղարկել իրբեւ նրանց պաշտպան :

57. Եւ քո Տէրը գիտէ երկնքում եւ երկրի վրայ եղողներին, եւ մենք արդէն մարգարէներէց ոմանց գերադասել ենք քան թէ միւսներին, եւ տւել ենք Դաւիթին Չէրուրը :

58. Ասա՛, «ազօթեցէ՛ք դէպի նրանց, որոնց դուք ընդունում էք բացի Աստուածանից . նրանք չեն կարող ձեզնից մի վլաս հեռացնել կամ փոխել» :

58. Նրանք որ այսպէս ազօթում են, միջնորդ են ուղում դէպի իրանց Տէրը թէ որն է աւելի մօտ, եւ

սպասում են նրա ողորմութեանը եւ վախենում են նրա պատփից. իրաւի քո Տիրոջ պատիժը երկիրը ալի է :

60. Եւ մի քաղաք չրկայ, մենք նրան բնաջինջ չ'անենք յարութեան օրից առաջ կամ սաստիկ պատիժով չը պատենք. սա արդէն գրեած է գրքումը :

61. Եւ միմիայն սա արգիլեց մեզ, որ քեզ հրաշքներով չ'ուղարկենք, որովհետեւ առաջինները սուտ էին համարում հրաշքները : Եւ մենք Սամուղցիներին տեղցինք ակնյայանի այն ուղար, բայց նրանք անիրաւութիւն արեցին նրան : Եւ մենք հրաշքներով չենք ուղարկում մի մարգարէ, եթէ ոչ վախեցնելու համար :

62. Եւ երբ քեզ ասացինք, թէ «ահա՛ քո Տէրը շքապատած է մարդկանց» եւ մինք այն տեսիլքը որ քեզ ցոյց տեցինք եւ Ղուրանի մէջ այն անիծեալ ծառը միմիայն փորձութիւն ենք շինել մարդկանց համար եւ նրանց վախեցնում ենք. եւ սա միայն նրանց մեծ ապտամբութիւնն է շատացնելու :

63. Եւ երբ մենք ասացինք հրեշտակներին, «երկրպագութիւն ար՛ք Ազամին» . եւ նրանք երկրպագեցին բացի սատանայից, որ ասաց. «մի՞թէ ես երկրպագեմ նրան, որ դու ստեղծել ես ցեխից» :

64. Նա էլ ասաց, «ի՞նչ ես կարծում սրա մասին, որին դու ինձնից տեղի ես պատում. եթէ դու ինձ ժամանակ տաս մինչեւ յարութեան օրը, ես նրա սերունդը կը կորցնեմ բացի մի քանի քիչերիցը» :

65. Եւ նա ասաց, «գնա՛, ով որ քեզ հետեւէ, ահա՛ ձեր հատուցումը դժոխքն է լինելու, որ ատատ հատուցում է» :

66. Եւ նրանցից որին որ կարողանաս հրապուրի՛ր քո ձայնովը, եւ յարձակի՛ր նրանց վրայ քո ձիաւորներով եւ հետիոտներով, եւ ըեկիրացի՛ր նրանց ըստացւածքում եւ զաւակներում եւ նրանց խօսք տուր : Բայց սատանայի խոտուկները միմիայն խարէութիւն են :

67. Բայց իմ ծառաների վրայ դու իշխանութիւն

չունես, եւ քո Տէրը քեզ համար բաւական է իբրեւ պաշտպան:

68. Ձեր Տէրը, որ ձեզ համար ընթացք է տալիս նաւերին ծովի մէջ՝ որ նրանից մի պարգեւ սպասէք՝ իբաւ նա ողորմած է դէպի ձեզ:

69. Եւ երբ ձեզ ծովու մի վնաս է պատահում, մոլորած էք դուք, որ նրանից բաց մի ուրիշին էք ազօթում. եւ երբ նա ձեզ ազատէ ու ցամաքը դուրս հանէ, դուք ետ էք քաշուում. եւ մարդս ապերախտ է:

70. Եւ դուք ապահո՞ւմ էք որ նա ձեզ կուլ տալու համար երկիրը չի ճեղքի, կամ մի փոթորիկ չի ուղարկի ձեզ վրայ. այն ժամանակ դուք ձեզ համար մի պահպան չէք գտնի:

71. Կամ դուք ապահո՞ւմ էք, որ նա նոյնը չի կրկնի ձեզ համար: որ ձեզ վրայ մի սաստիկ հողմ՝ փչէ եւ ձեզ խորասակէ ջրի մէջ, որովհետեւ անհաւատ էիք. յետոյ դուք ձեզ համար մի պաշտպան չէք գտնի մեզ դէմ:

72. Բայց մենք արդէն պատուել ենք Ադամի որդեանցը եւ նրանց տանում ենք ցամաքում եւ ծովում, եւ կերակրում ենք նրանց բարիքներով, եւ մենք մեր արարածներից շատերիցը նրանց աւելի գերազանց ենք արել:

73. Մի օր մենք բոլոր մարդկանց կանչելու ենք իբանց ղեկավարների հետ, եւ որոնց գիրքն իրանց աջ ձեռքին կը տրւի, այն ժամանակ նրանք կը կարգան իբանց գիրքը եւ մի մազի չափ էլ անիրաւութիւն չի լինի նրանց:

74. Եւ ով որ այս աշխարհքում կոյր էր, նա միւսումն էլ կոյր է լինելու, եւ ճանապարհիցը մոլորուելու է:

75. Եւ քիչ էր մնացել, որ քեզ հրապուրէին այն բանիցը, որ քեզ յայտնել ենք, որ դու մեզ դէմ մի ուրիշ բան զրոպարտես, որ այն ժամանակ նրանք քեզ բարեկամ կ'ընդունէին:

76. Եւ եթէ մենք քեզ հաստատած չը լինէինք, ար-

դէն մի քիչ բան էր մնացել, որ նրանց կողմը թեք-
ւէիր:

77. Այն ժամանակ մենք քեզ ճաշակել կըտայինք
կեանքի տկարութիւնը եւ մահւայ տկարութիւնը. եւ
զու մեզ դէմ մի օգնող չէիր գտնի:

78. Եւ քիչ էր մնացել, որ քեզ համոզէին երկրիցը
հեռանա, որ քեզ նրանից հանէին, բայց այն ժամա-
նակը նրանք քեզնից միայն մի քիչ կը մնային այն
տեղ:

79. Սա այն մարգարէնորին եղած սովորութիւնն է,
որ քեզնից առաջ ուղարկել ենք, եւ զու մեր սովորու-
թեան համար փոփոխուած ինչ չես գտնի:

80. Աղօթքը կատարի՛ր արեւը մտնելիս մինչեւ գի-
շերւայ մութը եւ արշալոյսի ընթերցւածքը. իրաւ ար-
շալոյսի ընթերցւածքը յայտնի է:

81. Եւ գիշերւայ մի մասն էլ աւելորդ աղօթքով ան-
ցո՛ւր. զուցէ քո Տէրը քեզ մի գովասանակտն տեղ
բարձրացնէ:

82. Եւ ասա՛, «ո՛վ իմ Տէր, ինձ մի արդար մուտ-
քով մացրո՛ւ, եւ մի արդար ելքով դո՛ւրս հանիր, եւ
ինձ տուր քո օգնող կարողութիւնը»:

83. Եւ ասա՛, եկաւ ճշմարտութիւնը, եւ կորաւ ու-
նայնութիւնը. որովհետեւ ունայնութիւնը կորուելու է:

84. Եւ մենք Ղուբանից մասեր ենք իջեցրել, բժըշ-
կութիւն եւ ողորմութիւն է հաւատացեալների համար,
եւ անիրաւնների համար միայն վնասն է աւելացնելու:

85. Եւ երբ մենք մարդուս ցոյց աւեցինք, նա հտ-
քաչեց եւ հեռացաւ մէկ կողմ. եւ երբ նրան մի փոր-
ձանք է հանդիպում, նա յուսահատում է:

86. Ասա՛, «Թող ամեն մէկն իր կերպովը դորձէ».
եւ ձեր Տէրը գիտէ. թէ որն է ուղիղ ճանապարհում
առաջնորդողը:

87. Եւ քեզանից հարցնում են, թէ ինչ է հոգին:
Ասա՛, «հոգին իմ Տիրոջ հրամանովն է. եւ ձեզ միմի-
այն քիչ գիտութիւն է տրւած»:

87. Եւ եթէ մենք կամենայինք, վեր կ'առնէինք քեզնից այն, որ քեզ յայտնել ենք, յետոյ դու մեզ համար մի պաշտպան չէիր գտնի մեզ դէմ:

88. Եթէ քո Տիրոջ կողմանէ ողորմութիւնը չը լինէր, իրաւի նրա շնորհքը քեզ վրայ մեծ է:

90. Ասա՛, «եթէ մարդիկը եւ դեւերը ժողովուէին» որ այս Ղուբանի նմանը բերէին, նրա նմանը չէին բերի, եթէ միմեանց էլ օգնէին:

91. Բայց մենք այս Ղուբանում արդէն ամեն տեսակ առակներ հոլովեցինք, սակայն մարդկանցից շատերը մերժում են նրան անհաւատութեամբ:

92. Եւ նրանք ասում են, «մենք քեզ չենք հաւատայ, մինչեւ մեզ համար դեանիցը մի աղբիւր չը բըղխեցնես»:

93. «Կամ դու մի արմաւենու եւ խաղողի այգի չունենաս եւ գետեր չ'ըղխեցնես, որ նրանց մէջ բղխեն»:

94. «Կամ ինչպէս դու մեզ սպառնացել ես. երկինքը կտոր կտոր մեր վրայ չ'ընկնի. կամ Աստուծուն եւ հրեշտակներին քեզ հետ առած չ'բերես»:

95. «Կամ դու մի ոսկուց տուն չ'ունենաս, կամ վեր չ'բարձրանաս երկինքը. եւ մենք քո վեր բարձրանալուդ էլ չենք հաւատայ, մինչեւ որ մեզ վրայ մի զիրք չ'իջեցնես, որ մենք նրան կարդանք»: Ասա՛. «սուրբ լինի իմ Տէրը. մի՞թէ ես միմիայն ուղարկած մարդ չեմ»:

96. Ի՞նչ է արգելում մարդկանց որ իրանց համար եղած առաջնորդութեան հաւատան բացի նրանից, որ ասում են «մի՞թէ Աստուած մի մարդ կ'ուղարկէ իբրեւ մարգարէ»:

97. Ասա՛, «եթի երկրիս վրայ ապահով ման եկող հրեշտակներ լինէին, մենք էլ երկնքից նրանց համար մի հրեշտակ կ'ուղարկէինք իբրեւ մարգարէ»:

98. Ասա՛, «իմ ու ձեր մէջը Աստուծոյ վկայ լինելը բաւական է»:

99. Եւ որին Աստուած առաջնորդում է, նա առաջնորդած է, եւ որին նա մոլորեցնում է, նրա համար երբէք պաշտպաններ չեն գտնուի բացի նրանից, եւ մենք յարութեան օրը նրանց ժողովելու ենք իրանց երեսների վրայ իրրեւ կոյրեր, համբեր եւ խուլեր, նրանց ընկալանը զժոխքն է. ամեն անգամ երբ ուզում է հանգել, մենք աւելացնելու ենք նրանց կրակը:

100. Սա նրանց հատուցումն է, որ չեն հաւատում մեր նշաններին եւ ասում են, «մի՞թէ մենք ոսկորներ եւ փոշի դառնալուց յետոյ յարութիւն կ'առնենք իրրեւ նոր արարածներ»:

101. Մի՞թէ չեն տեսնում, որ Աստուած ստեղծել է երկինքը եւ երկիրը. կարող է նրանց նմանը ստեղծել եւ նրանց համար մի որոշ վախճան է դրել, նրա մասին կասկած չըկայ, եւ անիրաււները միայն անհաւատութեան պատճառով մերժում են այս բանը:

102. Ասա՛, «եթէ դուք տիրէիք իմ Տիրոջ ողորմութեան գանձերին, դուք կը պահէիք ծախսելուց վախճանալով. եւ մարդս տկար է»:

103. Եւ մենք արդէն տւել ենք Մովսէսին ինը յայտնի նշաններ (հրաշքներ), ուրեմն հարցրո՛ւ. Իսրայէլի որդկանցը: Երբ նա եկաւ նրանց մօտ, Փարաօնը ասաց, «ես քեզ, ո՛վ Մովսէս, կախարդւած եմ կարծում»:

104. Նա էլ ասաց, «դու արդէն գիտես, որ այս բաները միմիայն երկնքի եւ երկրի Տէրը կուղարկէ իրքեւ փաստեմք. եւ ես կարծում եմ. որ դու, ո՛վ Փարաօն, կորած ես»:

105. Եւ նա ուղեց որ դուրս անէ նրանց այն երկրիցը, բայց մենք նրան եւ նրա հետ լինողների բոլորին էլ ընկղմեցինք:

106. Եւ յետոյ ասացինք Իսրայէլի որդկանցը, «բընակւեցէ՛ք այդ երկրումը. եւ երբ կըզայ միւս աշխարհքի ժամանակը, մենք ձեզ հետ խառնուած կըզանք. եւ ճշմարտութեամբ ենք մենք նրան իջեցրել. եւ նա

ճշմարտութեամբ է իջել. եւ մենք քեզ միմիայն իբրեւ աւետիչ եւ խրատիչ ենք ուղարկել:


107. Եւ մենք Ղուրանը մասերի ի ենք բաժանել, որ դու կամաց կամաց կարդաս նրան մարդկանց առաջին եւ մենք նրան իջեցրել ենք կտոր կտոր:

108. Ասա՛, «հաւատացէ՛ք նրան կամ մի՛ հաւատաք», ահա՛ նրանք, առաջուց գիտութիւն ունէին, երբ կարգացվում է նրանց համար, խոնարհվում են երեսներ ի վրայ երկրպագելով եւ ասում են, «բարձր է մեր Տէրը, ահա մեր Տիրոջ խոստումը կատարվում է»:

109. Եւ նրանք ընկնում են իրանց երեսներ ի վրայ, լալով, եւ նա աւելացնում է նրանց երկիւղածութիւնը:

110. Ասա՛, «կոչիցէ՛ք նրան Աստուած կամ կոչեցէ՛ք նրան Ողորմած, ինչպէս էլ որ նրան կանչէք. նա գեղեցիկ անուններ ունի: Աղօթքիդ մէջ ոչ ձայնդ բարձրացուր ոչ էլ ծածկի՛ր. եւ այս երկուսի մէջ տեղի ճանապարհը բռնի՛ր»:

111. Եւ ասա՛, «փառքը Աստուծուն, որ որդի չէ ընդունում, եւ նա ընկեր չունէ իր թագաւորութեան մէջ, եւ նա պաշտպան չունէ տկարութեան համար: Եւ դու նրան փառաւորի՛ր փառաւորելով»:



18) ՍՈՒՐԷ՝ Ք Է Ա Հ Յ

Մէքքէական. հարիւր տասը այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Փառքը Աստուծուն, որ իջեցրել է իր ծառայի համար գիրքը, եւ նրանում մի ծոռութիւն չէ չինել:

2. Իբր մի հաստատ բան. որ խիստ չարիք սպառնայ նրա կողմանէ, եւ աւետիք տայ հաւատացեալներին:

որ ասում են ըստ ի գործքերը նրանց համար գեղեցիկ վարձք, որի մէջ պիտի մնան յաւիտեան:

3. Եւ սպառնալիքներ անէ նրանց, որ ասում են, թէ Աստուած որդի է ընդունում:

4. Նրանք այդ մասին գիտութիւն չունեն, եւ ոչ էլ նրանց հայրերն ունէին. մեծ մեղք է այդ խօսքը, որ նրանց բերանիցը դուրս է գալիս. նրանց ասածը միմիայն սուտ է:

5. Բայց գուցէ դու ուզում ես անձնասպան լինել նրանց արարքի պատճառով, դաւելով, որ նրանք այս պատմութեան չեն հաւատում:

6. Մենք երկրի վրայ եղած բաները նրա համար զարդարանք ենք շինել, որ փորձենք նրանց, թէ որի գործքերն են լաւ:

7. Եւ ինչ նրա վրայ կայ, մենք նրան չոր հող ենք շինելու:

8. Կամ կարծող էիր, թէ քարայրի եւ Ալ-Բագիմի մարդիկը մեր զարմանալի հրաշքներին են:

9. Երբ երիտասարդները քարայրն իրանց պաշտպան արեցին, ասացին, «ժ՛վ մեր Տէր մեզ քո կողմից ուղորմութիւն արա՛, եւ դու մեր բանը ուղիղ առաջնորդի՛ր»:

10. Եւ մենք նրանց քննցրինք քարայրումը բաւական տարիներ:

11. Յետոյ մենք նրանց վեր կացրեցինք, որ խնայանք, թէ այն երկու խումբից որն է հաշուել, թէ որքան ժամանակ են այնտեղ մնացել:

12. Մենք քեզ պատմենք նրանց դէպքը ճշմարտութեամբ: Նրանք երիտասարդներ էին, որ իրանց Տիրոջ հաւատում էին, եւ մենք միշտ առաջնորդում էինք նրանց:

13. Եւ հաստատել էինք նրանց սրտերը, երբ նրանք կանգնեցին եւ ասացին, «մեր Տէրը Երկնքի եւ երկրի Տէրն է. մենք բացի նրանից ուրիշ Աստուած չենք կանչի. եթէ ոչ մենք մեծ սուտ ասած կը լինենք»:

14. «Մեր այս ազգակիցները բաց ի Աստուածանից քնդունում են ուրիշ Աստուած․ բայց չեն կարող յայտնի փաստեր բերել դրա համար: Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ այն, որ Աստուծոյ մասին սուտ է հնարում:

15. Եւ երբ նրանցից եւ այն բաներից, որ նրանք բաց ի Աստուածանից պաշտում են, հեռանաք առանձնանաք, ապաստանեցէ՛ք քարայրումը եւ ձեր Տէրն իր ողորմութիւնը կը տարածէ ձեր վրայ, եւ ձեր բանը լաւ կը զեկալարէ:

16. Եւ դու տեսնէի՛ր արեգակը, որ դուրս էր գալիս նրանց քարայրիցը եւ գէպի աջ կողմն էր անցնում, եւ մար մանեկիս գէպի ձախ կողմն էր խոյս տալիս․ եւ նրանք նրա խորքումն էին: Սա Աստուծոյ հրաշքներիցն է․ Աստուած որին առաջնորդում է նա ուղիղ է առաջնորդւած, եւ որին նա մոլորեցնում է, դու նրա համար ուղիղ ճանապարհ ցոյց տւող պաշտպան չես դանի:

17. Եւ դու նրանց արթուն կը համարէիր, թէ եւ նրբանք քնացած էին, եւ մենք նրանց գէպի աջ կողքն էինք դարձնում. եւ նրանց շունը թաթիրը երկարացրած էր մուտքումը: Եթէ դու նրանց պատահէիր, նրբանցից փախչելով ետ կը դառնայիր եւ նրանցից վախով կը լցւէիր:

18. Եւ երբ մենք նրանց զարթնեցրինք, նրանք իբարից հարցնում էին․ նրանցից մէկ ասողն ասաց, «դուք ո՞րքան մնացիք», նրանք էլ ասացին, «մենք մնացել ենք մէկ օր կամ օրւայ մէկ մասը»: Եւ միւսներն ասացին, «ձեր Տէրը գիտէ, թէ որքան էք մնացել․ արդ ձեզնից մէկին ձեր այս փողովը քաղաքն ու զարկեցէ՛ք, որ տեսնէ թէ ով է մաքուր կերակուր ծախում, եւ թող ձեզ համար նրանից ուտելիք բերէ, բայց թող նա զգոյշ լինի, որ ձեր մասին մէկին չ'իմացընէ»:

19. «Որովհետեւ եթէ ձեր մասին տեղեկանան, նրբանք ձեզ կը քարկոծեն կամ ձեզ իրանց կրօնքին կը

դարձնեն, եւ դուք այն ժամանակ յախտեան երջանիկ չէք լինի» :

20. Եւ մենք այսպէս իմացրեցինք նրանց մասին, որ հասկանան, թէ Աստուծոյ խոստումը ճշտարիտ է, եւ թէ ժամի նկատմամբ կասկած չ'կայ: Այն ժամանակ նրանք սկսեցին վիճել իրար հետ այս բանի համար եւ ասացին, «նրանց վրայ մի շինութիւն չ'ինեցէ՛ք. նըրանց Տէրը ամենից լաւ է ճանաչում նրանց»: Բայց նրանք, որ իրանց այս բանի մէջ յաղթող եղան, ասացին, «մենք նրանց վրայ մի ազօթատեղի չ'ինենք» :

21. Ոմանք ասում էին, «երեք էին, նրանց չորրորդը նրանց շունն էր»: Եւ միւսներն ասում էին, «հինգ էին, բայց վեցերորդը նրանց շունն էր»: Պարագ խօսում էին իրանց չ'գիտեցածի վրայ: Եւ ուրիշներն ասում էին, «եօթն էին, եւ ութերորդն իրանց շունն էր»: Ասա՛, իմ Տէրն աւելի լաւ գիտէ նրանց թիւը, միայն քիչերը գիտեն նրանց» :

22. Ուրեմն նրանց մասին մի՛ վիճիր, եթէ ոչ յայտնի յայտնութիւնով: Եւ նրանց մասին ոչ ոքին մի՛ հարցնիր:

23. Եւ երբ մի բանի համար չ'ասես, թէ «ես էգուց կանեմ այս բանը», բայց միայն թէ «եթէ Աստուած կամենայ», եւ երբ դու մոռանաս, ասա՛, «գուցէ իմ Տէրն ինձ առաջնորդէ ուղղութեամբ եւ սրանից աւելի մօտիկին» :

24. Եւ նրանք մնացին իրանց քարայրումը երեք հարիւր ինը տարի:

25. Ասա՛, «Աստուած գիտէ, թէ նրանք որքան մընացին. երկնքի եւ երկրի գաղտնիքները նրանն են: Նրան մտիկ արա եւ լսի՛ր: Նրանից ջոկ նրանք մի ուրիշ պաշտպան չունեն. եւ նա իր վճիռներումը մէկին ընկեր չի ընդունի» :

25. Եւ կարդա՛ քո Տիրոջ գրքիցը, ինչ քեզ յայտնըւել է, նրա խօսքերը չեն փոխւի. էւ դու բաց ի նըրանից մի ապաստանատեղի չես գտնի:

27. Եւ զու ինքդ համբերի՛ր նրանց հետ, որ ազօթում են իրանց Տիրոջը առաւօտներն եւ իրիկունները նրա երեսը տեսնելու տենչանքով: զու այս աշխարհի զարդն ուղեւորվ մի՛ դարձնիր աչքերդ նրանցից, եւ մի հնազանդիւր նրան, որի սիրտը մենք անտարբեր ենք չինել մեզ յիշելու նկատմամբ, որ նա իր ցանկութիւններին է հետեւում: Եւ նրա գործը չափազանցութիւններ են:

28. Ասա՛, «ճշմարտութիւնը ձեր Տիրոջ կողմից է: ով որ կուզէ թող հաւատայ, եւ ով որ կուզէ թող չը հաւատայ: մենք անիրաւների համար կրակ ենք պատրաստել, որի ծուխը նրանց շրջապատելու է: Եւ եթէ օգնութիւն կը խնդրեն, նրանց օգնութիւն կը լինի միջուրով, որ հալած մեռաղի պէս է, եւ երեսներ է այրում: Դաժանիլ՛ խմելիք, եւ վա՛տ հանգստավայր:

29. Իրաւ նրանք, որ հաւատում են եւ բարի գործում, մենք ոչ մի բարեգործի իրաւունք չենք կորցնի:

30. Նրանց համար եղեմական զրախաներ կան, որոնց տակովը գետեր են հոսում. նրանց մէջ նրանք կը զարդարւեն ոսկի ապարանջանքներով եւ կանաչ հագուստներ կը հագնեն սունգուսից եւ խթերրազից, որ նրանում նստարանների վրայ թեքնւած են: Ի՛նչ զըւարճալի վարձք եւ ի՛նչ զեղեցիկ հանգստավայր:

31. Եւ զու նրանց համար մի առակ աստ՛, թէ «երկու մարդ կային, նրանցից մէկին մենք երկու խաղողի այգիներ տւեցինք եւ նրանց շրջապատեցինք արմաւենիներով, եւ նրանց միջեւ մի արտ: Այդ երկու այգիների մահն մին իր պտուղը տալիս էր, եւ ոչ մի վնաս չէր ունենում:

32. Եւ մենք նրանց երկուսի մէջտեղովը մի գետ հոսեցրեցինք: Եւ նա պտուղ էր ստանում. եւ նա խօսակցութեան մէջ ասաց իր ընկերին, «ես քեզնից ա-

ւելի հարուստ եմ ստացւածքով եւ աւելի մեծ՝ զաւակներով» :

23. Եւ նա՝ սիրան անիրաւութիւնով լիքը՝ գնաց իր այգին եւ ասաց, «չեմ կարծում, թէ սա երբէք կը փճանայ» :

34. «Եւ չեմ կարծում թէ վերջի ժամը հասել է՝ եւ եթէ ես ետ պիտի դարձնեմ իմ Տիրոջ մօտ, ես նըրանից մի աւելի լաւը կըստանամ նրա փոխարէն» :

35. Նրա ընկերն ասաց նրան հեաը խօսակցելիս, «մի՞թէ դու չես հաւատում նրան, որ քեզ ստեղծել է հողից, յետոյ սերմի ջրից եւ յետոյ քեզ մարդ կազմել» :

36. Իսկ ես, — նա է Աստուած՝ իմ Տէրը եւ ես ոչ մէկին իմ Տիրոջ հետ չիմ չինի :

37. Եւ մի՞թէ դու քո այգին մանելիս չես ասի, «ինչ Աստուած կամենայ» — մի գօրութիւն չ'կայ բացի Աստուծով : Եթէ ինձ մտիկ անես, ես քեզնից քիչ ստացւածք եւ զաւակներ ունեմ :

38. Բայց գուցէ իմ Տէրը ինձ աւելի բարիք կըտամ քան թէ քո այգին՝ եւ նրա վրայ երկնքից պատուհաս կուղարկէ եւ նա չոր փոշի կը դառնայ :

39. Կամ նրա ջուրը խորը կը գնայ, որ դու ամենեւին չես կարողանայ նրան ուզել էլ» :

40. Եւ նրա պտուղները չրջապատուեցին, եւ նա իր երկու ձեռքերն իրար իսիեց նրա վրայ վատնածի համար. եւ այգին աւերակ էր դարձել իր նեցուկների վրայ. եւ նա ասաց, «ո՛հ երանի՛ թէ իմ Տիրոջը ընկեր արած չը լինէք» :

41. Եւ ժողովուրդը նրան չէր օգնում բացի Աստուածանից, եւ ինքն էլ չէր կարողանում իրան օգնել :

42. Այստեղ պաշտպանութիւնը միտիայն ճշմարիտ Աստուծոյ մօտ է. նա է տալիս բարի վարձքը եւ բարի վախճանը :

43. Եւ նրանց այս աշխարհքի կեանքի առակը ասա՛, թէ նման է այն, որ մենք երկնքիցն իջեցնում ենք, որ խառնվում է երկրի բոյսերի հետ, այնպիսի մղեղ է

զատնում, որ քամիները նրան ցրել են տալիս, եւ Սատուած ամենակարող է:

44. Ստացւածքը եւ զաւակները այս աշխարհքի կենաց զարդերն են: բայց մնայուն բարի գործքերը աւելի լաւ են: Բո Տիրոջ մօտ վարձք կայ եւ լաւագոյն յոյս:

45. Եւ այն օրը որ մենք ման կ'ածենք սարերին եւ դու կը տեսնես երկիրը տափարակցած, այն ժամանակ մենք նրանց կը ժողովենք եւ նրանց ոչ մէկին էլ անիրաւութիւն չենք անի:

46. Եւ նրանք կը ներկայացնեն քո Տիրոջ առաջին կարգ կարգ. «անա դուք մեզ մօտ էք գալիս ինչպէս մենք ձեզ ստեղծել ենք տոաջի անգամբ: Բայց դուք կարծում էիք, թէ մենք մեր խոստումը ձեզ համար չենք կատարի»:

47. Այն ժամանակ գիրքը կը տրւի, եւ դու կը տեսնես, թէ յանցաւորներն ինչպէս են սոսկում նրա բովանդակութիւնից եւ ասում. «վա՛յ մեզ, սա ինչ գիրք է. նրանում սխալւած չէ ո՛չ փոքրը ո՛չ մեծը. ամենն էլ հաշիւ է անում. եւ նրանք իրանց արածները ներկայ են գտնում. եւ քո Տէրը ոչ մէկին էլ անիրաւութիւն չի անի:

48. Եւ երբ ասացինք հրեշտակներին «երկրպագեցէ՛ք Ադամին», այն ժամանակ երկրպագութիւն արեցին ամենը բացի սատանայից. նա դեւերիցն էր եւ չարացած իր Տիրոջ հրամանի դէմ. Արդ ինձ լինելով թողած դուք նրան եւ նրա սերունդին պաշտպան կ'առնէք, եւ նրանք ձեզ թշնամի են: Ի՛նչ վատ փոխանակութիւն է սա անիրաւուների համար,

49. Ես նրանց վկաներ չեմ շինել երկիրքը եւ երկիրն ստեղծելիս, եւ ոչ էլ հէնց իրանց ստեղծելիս. եւ մոլորեցուցիչներին օգնական չեմ ընդունել:

50. Մի օր նա ասելու է, «կանչեցէ՛ք նրանց, կարծում են թէ ընկերներս են», եւ նրանք կանչելու են

նրանց, բայց նրանք պատասխան չեն տալու. և մենք մի անդունդ ենք շինելու նրանց մէջը:

51. Եւ յանցաւորները կրակը տեսնելիս կարծելու են, որ նրա մէջն են գցելու և նրանից ազատում չեն գտնելու:

52. Մենք արդէն ամեն տեսակ առակներ բերեցինք այս դուրանում, բայց մարդս շատ բաների համար վիճում է:

53. Եւ ի՞նչ է արգիլում մարդկանց, որ հաւատան քանի որ նրանց համար ճանապարհացոյց է եկել, որ իրանց Տիրոջից ներողութիւն խնդրեն, եթէ ոչ կըզայ նրանց վրայ յառաջիկայ պատիժը:

54. Եւ մեր ուղարկած մարգարէները միմիայն սպառնացողներ և աւետիչներ էին. բայց անհաւատները պարապ տեղը հակառակում են, որ ճշմարտութիւնը հերքեն և իմ նշանները և իրանց խզած խրատները ծաղր անեն:

55. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան նա, որ նրա Տիրոջ նշաններն իրան յիշեցնւում են, և նա մերժում է նրանց և մոռանում, թէ իր ձեռներն առաջ ինչ են գործել: Իրաւ մենք նրանց սրտերը խտացրիւ ենք, որ այդ չը հասկանան, և նրանց ականջներումը ծանրութիւն կայ:

56. Եւ երբ դու նրանց դէպի ուղիղ առաջնորդութիւնն և կանչում, նրանք երբէք չեն առաջնորդուի:

57. Բայց քո Տէրը ներող ողորմած է. եթէ նա նրանց արարմունքի պէս նրանց պատժելու լինէր, կը շտապեցնէր նրանց համար պատիժը, բայց նրանց համար որոշում կայ, և նրանք բաց ի սրիչ պաշտպան չեն գտնի:

58. Եւ այն քաղաքները, որ մենք բնաջինջ ենք արել, որովհետեւ անիրաւացել էին, — նրան կործանման համար էլ էինք կանխասացութիւն արել:

59. Եւ երբ Մովսէս ասաց իր ծառային, «ես չեմ դադարելու, մինչև հասնեմ երկու ծովերի միացման

տեղին, թէեւ մէկ հուգր էլ ման գալու լինեմ՝

60. Եւ երբ երկուսի միացման տեղին հասան, մուսացել էին իրանց ձուկը, որ մի առուով ծովին մէջ ճանապարհորդեց:

61. Եւ երբ անցան այն տեղից, նա ասաց իր ծառային, ճաշը բեր այստեղ. մենք մեր ճանապարհորդութիւնիցը հողնել ենք»:

62. Նա էլ ասաց, ի՞նչ ես կարծում. եւ մենք այնտեղ ծառին վրայ նստել էինք, ես ձուկը մոռացել էի, որ ես նրան չի յիշեմ, եւ նա զարմանալի կիրպով ճանապարհորդեց դէպի ծովը»:

63. Եւ նա ասաց, «ահա այն տեղը մենք պըտրբառում էինք, եւ նրանք, իրանց եկած հետքերովը ես գարձան խօսակցելով:

65. Եւ նրանք մեր ծառաներից մէկին գտան, որին մենք մեր կողմից ողորմութիւն ենք տւել եւ մեր կողմից նրան գիտութիւն սովորեցրել:

66. Մովսէս նրան ասաց, «արդեօ՞ք քո հտելից գամ, որ ինձ սովորեցնես ուղիղ ճանապարհը, որ դու գիտես»:

67. Նա էլ ասաց, «դու ինձ մօտ համբերութիւն չես կարող ունենալ»:

68. «Եւ դու ինչպէս ես կարող դիմանալ այն բանին, որ դու բոլորովին չես ըմբռնի»:

69. Եւ նա ասաց, «եթէ Աստուած կամենայ, դու ինձ համբերող կը գտնես, եւ ես ոչ մի բանում քեզ չեմ հակառակի»:

70. Նա էլ ասաց, «հիմա ինձ հետեւում ես, ինձնից մի բան չես հարցնի մինչեւ ես քեզ նրան բացատրեմ»:

71. Եւ երկուսը գնացին մինչեւ մտան մի նաւ, որը նա պատեց: Նա ասաց. «դու դրան պատեցի՞ր որ դրա մարդկանցը ընկզմես, դու մի ահռելի բան ես արել»:

71. Եւ նա ասաց, «ես քեզ չ'ասեցի՞, որ դու ինձ մօտ համբերութիւն չես կարող ունենալ»:

72. Նա էլ ասաց, «ինձ մի՛ պատժիր, որ մոռացել եմ, եւ ինձ համար մի գործ մի՛ գժւարացնի՛ր»:

73. Եւ նրանք գնացին, որ մինչեւ մի երիտասարդի պատահեցին, եւ նա նրան սպանեց: Նա էլ ասաց, մի՞թէ մի անմեղ հոգին սպանեցիր, որ մարդ չէր սպանել. դու արդէն մի անիրաւ գործ արեցիր»:

74. Եւ նա ասաց, «ես քեզ չ'ասացի թէ դու ինձ մօտ համբերութիւն չես կարող ունենալ»:

75. Նա էլ ասաց, «եթէ ես այսուհետեւ քեզնից մի բան հարցնեմ, այլեւս ինձ ընկեր մի՛ ընդունիր, սա թող ներողութիւն խնդրել լինի քեզ համար»:

76. Եւ նրանք էլի գնացին մինչեւ եկան մի քաղաքի ժողովրդի մօտ, որոնցից կերակուր ուզեցին. բայց սրանք մերժեցին, որ նրանց հիւրընկալեն: Եւ նրանք նրանում մի պարիսպ գտան, որ ուզում էր վար ընկնել, եւ նա նրան կանգնեցրեց: Նա էլ ասաց, «եթէ ուզէիր, դրա համար վարձք կըստանայիր»:

77. Եւ նա ասաց, «սա հիմա կը բաժանէ ինձ եւ քեզ: Սակայն քեզ համար բացատրեմ այն բաները, որոնց համար դու համբերութիւն չունեցար»:

78. «Ինչ վերաբերում է այն նախն, նա մի քանի աղքատներինն էր, որոնք աշխատում էին ծովի վրայ, եւ ես ուզեցի որ նրան վնասեմ, որովհետեւ նրանց ետեւիցը մի իշխան կար, որ ամեն նաւ յափշտակում էր»:

79. Իսկ այն երիտասարդը—նրա ծնողքը հաւատացեալներ էին եւ մենք վախեցինք, որ նրանց վարարակէր ասպտամբութիւնով եւ անհուատութիւնով»:

80. «Եւ ուզեցինք, որ նրանց Տէրն իրանց նրանից մի լաւ մաքուր եւ աւելի ողորմասիրտ որդի տայ նրա փոխարէն»:

81. Բայց այն պարիսպը—նա երկու որբ պատանիներինն էր այն քաղաքումը, եւ նրա տակին մի գանձ կար այն երկուսի համար, եւ նրանց հայրը բարեպաշտ էր, եւ քո Տէրը կամեցաւ, երբ չափահաս կը դառնան

նրանք հանեն իրանց համար իրանց գանձը քո Տիրոջ ողորմութեամբը. եւ ես իմ հրամանովը չ'արեցի: Աս է բացատրութիւնը այն բաների որոնց համար դու համբերութիւն չունեցար»:

82. Եւ նրանք քեզ կը հարցնեն Ծուլ-Գարնէյնի մասին: Ասա՛, «ես նրա մասին ձեզ մէջ պատմութիւն անեմ»:

83. Մենք նրա համար հաստատեցինք երկրի վրայ մի տէրութիւն, եւ նրան տեղեցինք ամեն բանի միջոցը, եւ նա գործադրում էր այդ միջոցները.

84. Մինչեւ որ գնաց հասաւ արեգակը մար մտնելու տեղին, եւ տեսաւ որ մար էր մտնում մի ճահճոտ հորի մէջ, եւ տեսաւ նրա մօտ մի ազգ:

85. Մենք ասացինք, «ո՛վ Զուլ-Գարնէյն, կամ տանջի՛ր նրանց կա՛մ դրանց մէջ լաւ վարե՛ր»:

86. Նա էլ ասաց, «ով որ անիրաւութիւն անէ, մենք նրան տանջելու ենք, յետոյ ետ կը դառնայ իր Տիրոջ մօտ, եւ նա սրան աւելի սաստիկ կը տանջէ:

87. Իսկ ով որ հաւատայ եւ բարիք գործէ, նրա համար լաւ վարձք կայ, եւ մենք մեր հրամանիցը զիւրիւր կասենք նրան:

88. Յետոյ նա գործադրեց մի միջոց,

89. Մինչեւ նա հասաւ արեգակի ելքի տեղին. տեսաւ արեգակը զուրս էր գալիս մի ազգի վրայ, որոնց մենք մի բան չենք տեսի, որ նրանոնով ծածկեն նրանից:

90. Այսպէս է. մենք նրա մօտ եղածները արդէն իմ մանալով շրջապատել էինք:

91. Յետոյ նա մի միջոց գործադրեց.

92. Մինչեւ հասաւ երկու պարիստների մէջ տեղը. նա տեսաւ այնտեղ մի ազգ բաց ի այն երկուսից, որ հազիւ կարողանում էին մի խօսք հասկանալ:

93. Նրանք ասացին, «ո՛վ Զուլ-Գարնէյն, անա՛ Յաճուճը եւ Մաճուճը փճացնում են երկիրը. արդե՞օք

քեզ հարկ վճարենք, որ դու մեր եւ նրանց մէջ տեղը մի պարիսպ շինես:

94. Նա էլ ասաց, «ի՞նչ բանի մէջ, որ իմ Տէրն ինձ ուժովացնէ, նա աւելի լաւ է: Ուրեմն ինձ գօրութիւնով օգնեցէ՛ք, եւ ես ձեր ու նրանց մէջտեղը մի պարիսպ կը շինեմ»:

95. «Ինձ մօտ երկաթի մեծ մեծ կտորներ բերէ՛ք, որ երկու ապառաժների միջոցը հաւասարացնեմ»: Նաեւ ասաց, «փշեցէ՛ք միւսին: Նրան կրակի պէս շինէ»: Եւ ասաց, «ի՞նձ մօտ բերէ՛ք, որ իբրեւ հալած մետաղ նրա վրայ թափեմ»:

96. Այնուհետեւ այլեւս չր կարողացան նրա վրայ ելնել, եւ ոչ էլ կարողացան նրան փորել:

97. Եւ նա ասաց, «սա մի ողորմութիւն է իմ Տիրոջ կողմանէ:

98. Բայց երբ իմ Տիրոջ խոստացածը դայ, նա նրան կը փշրէ, եւ իմ Տիրոջ խոստումը ճշմարիտ է:

99. Բայց մենք թողնելու ենք այն օրը մարդիկ ալիքների պէս միմեանց վրայ յարձակւեն. եւ փշելու ենք փողը եւ ժողովելու ենք ամենին:

100. Այն օրը մենք դժոխքը առաջարկելու ենք անհաւատներին,

101. Որոնց աչքերը գոց էին իմ յորդորի դէմ. եւ չէին կարողանում լսել:

102. Մի՞թէ անհաւատները կարծում են, թէ իմ ծառաներիս իրանց պաշտպան կը շինեն ինձ թողած լինելով: Մենք դժոխքը անհաւատների համար բնակարան ենք շինել:

103. Պատմե՞նք ձեզ նրանց մասին. որոնք ամենապիտաններն են գործքերով:

104. Որոնց ջանքը կորած է այս աշխարհքումը, որոնք կարծում են թէ իրանք բարեգործներ են:

105. Սրանք են. որ իրանց Տիրոջ նշաններին եւ նրան հանդիպելուն չեն հաւատում. նրանց գործքերը

կորած են. և և մենք յարութեան օրը նրանց վրայ մի արժէք չենք դնելու:


106. Այսպէս է. նրանց հատուցումը դժօխքն է, որովհետեւ անհաւատ են, և և իմ նշաններին և և իմ մարգարէներին ծաղրել են:

107. Իսկ նրանք, որ հաւատում և և բարի գործքեր են գործում, նրանց բնակարանը լինելու է դրախտի պարտէզը.

108. Նրանք յաւիտեան նրանում կը մնան, և այնտեղից փոխադրուել չեն ուզի:

109. Ասա՛, «եթէ ծովը թանաք դառնայ իմ Տիրոջ խօսքերին համար, ծովը կը սպառէր իմ Տիրոջ խօսքերը սպառելուց առաջ, և թէ նրա չափ մի ուրիշ թանաքի ծով էլ աւելցնէինք»:

110. Ասա, «ես սոսկ ձեզ պէս մի մարդ եմ. ինձ այտնութիւն է հղել, որ ձեր Ատուածը մէկ Ատուած է. և ով յոյս ունէ իր Տիրոջն հանդիպելով թող բարի գործքեր գործէ և իր Տիրոջ պաշտամունքում նրանքնկերներ չընդունէ»:



19) ՍՈՒՐԷ՝ Մ ԱՐ Ի ԱՄ

Մէքքէական. իննըսուն ութ այէ:

Քիթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ք. Հ. Ե. Է. Ս. Քո Տիրոջ ողորմութեան յիշատակը իր ծառայ Զաքարիայի համար.

2. Եբբ ծածուկ տեղ ազօթելով կանչեց Տիրոջը:

3. Նա ասաց, «Ո՛վ իմ Տէր, ի՞նչ ոսկորները տկարացել են, և զլխիս մաղերն էլ սպիտակացել են».

4. «Եւ ո՛վ իմ Տէր, ես քեզ աղօթելիս ամբարիշտ չեմ եղել».

5. Բայց ես վախենում եմ ինձնից յետոյ իմ մօտ ազգականների համար. եւ իմ կիներ ամուլ է. արդ ինձ քո կողմէ մի պաշտպան տուր»:

6. «Որ ժառանգէ Յակոբի տանիցը, եւ նրան, ո՛վ իմ Տէր, հաճելի արա՛»:

7. Ո՛վ Զաքարիա, մենք քեզ մի որդու աւետիքն ենք տալիս, նրա անունը Յահնա:

8. Այդ անունը դրանից առաջ դուրս չէ մէկի:

9. Նա էլ ասաց, «Ո՛վ իմ Տէր, ինձ ինչպէս մի որդի կը լինի, քանի որ իմ կիներ ամուլ է եւ ես էլ խոր ծերութեան եմ հասել»:

10. Եւ նա ասաց, «այսպէս է». ասաց քո Տէրը, «ինձ համար դիւրին է. ես արդէն շքեզ կանխաւ եմ ստեղծել, քանի որ դու մի բան չէիր»:

11. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ինձ մի նշան տուր»:
Եւ նա ասաց, «քո նշանը լինի, որ երեք գիշեր շարունակ չես խօսի մարդկանց հետ»:

12. Եւ նա դուրս եկաւ իր ժողովրդի մօտ աղօթարանիցը եւ նշան արեց նրանց թէ «օրհնարանեցէ՛ք առաւօտ եւ իրիկուն»:

13. «Ո՛վ Յահնա, ա՛ն գիրկը հզօրապէս». եւ մենք տեցինք նրան իմաստութիւն քանի որ նա երեխայ էր.

14. Եւ մեր գթութիւնը եւ ողորմութիւնը, եւ նա երկիւղած էր եւ գովալից իր ծնողաց զէմ, եւ նա հրպարտ եւ ապստամբ չէր:

15. Եւ խազաղութիւն լինի նրան իր ծնած օրը, եւ մեռած օրը եւ այն օրը որ կենդանի յարութիւն է առնելու:

16. Եւ յիշի՛ր գրքի մէջ Մարիամին, երբ նա իր ընտանիքից բաժանուեց գնաց մի արեւելեան երկիր:

17. Եւ միւսների զէմ մի վարագոյր առեց: Մենք այն ժամանակ նրա մօտ մեր հօգին ուղարկեցինք, եւ նա նման էր նրա համար մի բարեհաս մարդու:

18. Մարիամ ասաց, «ես քեզնից վախենալով Ողորմածին եմ ապաստանւում. եթէ դու երկիրւղած ես»:

19. Նա էլ ասաց, «ես քո Տիրոջ ուղարկածն եմ որ քեզ մի մաքուր որդի տամ»:

20. Մարիամ ասաց «ինչպէս կարող է ինձ որդի լինել, քանի որ մի մարդ ինձ չէ դպեւ, եւ ես անբարոյական չեմ»:

21. Նա էլ ասաց, «այսպէս է. ասաց քո Տէրը թէ դա ինձ համար հեշտ է. եւ մենք նրան մարդկանց մինչան ենք շինելու եւ մեր ողորմութիւնը. եւ բանը արդէն վճուած է»:

22. Եւ նա յղացաւ նրանով, եւ նրանով գնաց մի հետու տեղ:

23. Եւ ծննդեան ցաւերը բռնեցին նրան մի արմաւենի ծառի ճիւղի տակին: Մարիամ ասաց, «ո՛հ երանի թէ սրանից առաջ մեռած մոռացւած գնացած լինէի»:

24. Եւ նա կանչկց Մարիամին նրա տակիցը, թէ «մի՛ տխրիր, քո Տէրն արդէն քո տակին մի աղբււր է բացել»:

25. «Արդ թափ տուր քո վրայ արմաւենու ճիւղը. քեզ վրայ վար են ընկնելու հասած արմաւենիներ»:

26. Այն ժամանակ կե՛ր եւ խմբ՛ք եւ աչքդ լոյս լինի. եւ եթէ դու մարդկանցրց մէկին տեսնես,

27. Այն ժամանակ ասա՛, «ես Ողորմածի համար ծոմ եմ ուխտել, եւ ես այսօր ոչ մի մարդու հետ չեմ խօսի,

28. Եւ Մարիամ նրա հետ միասին եկաւ իր ժողովրդի մօտ նրան կրելով. նրանք էլ ասացին «ո՛վ Մարիամ, դու մի օտարոտի բան ես արել»:

29. «Ո՛վ Ահարոնի քոյր, քո հայրը վատ մարդ չէր եւ մայրդ էլ անբարոյական չէր»:

30. Եւ Մարիամը նշան արեց նրան: Նրանք էլ ասացին, «մենք ինչպէս խօսակցենք մէկի հետ, որ երեսայ է օրօրոցում»:

31. Եւ նա ասաց, «ես Աստուծոյ ծառայ եմ, նա ինձ աւել է գիրքը եւ ինձ շինել է մարգարէ»:

32. «Եւ նա ինձ օրհնել է, ուր էլ լինեմ, եւ նա ինձ յանձն է արել աղօթքը եւ մաքրութեան տուրքը, որչափ կենդանի եմ»:

33. Եւ հնազանդ լինել ծնողաց. եւ նա ինձ հպարտ եւ չար չէ շինել»:

34. «Եւ խաղաղութիւնն լինի այն օրւայ, որ ես ծնւել եմ. եւ այն օրւայ, որ կը մեռնեմ եւ այն օրւայ որ կենդանի կը յարուցանուեմ»:

35. Ու է Յիսուսը Մարիամի որդին. ճշմարտութեան խօսքը, որի մասին կասկածում են:

36. Աստուծուն չի վայելի, որ որդի ունենայ. նա սուրբ է. երբ նա մի բան է որոշել, նա միայն ասում է նրան «եղի՛ր» եւ նա լինում է:

37. Եւ իրաւ Աստուած իմ Տէրն է եւ ձեր Տէրն է, ուրեմն նրան պաշտեցէ՛ք. սա է ուղիղ ճանապարհը:

38. Եւ հերձաւորները վիճում են իրանց միջումը. բայց վա՛յ նրանց որ չեն հաւատում, եւ երբ այն մեծ օրը յայտնի:

39. Լսել տո՛ւր նրանց եւ տեսնել տո՛ւր այն օրը, որ նրանք մեզ մօտ պիտի գան, բայց անիրաււները այսօր յայտնի մոլորութեան մէջ են:

40. Եւ նրանց խրատի՛ր, այն զղջման օրւայ համար երբ իրանց բանը պիտի վճուի, եւ նրանք անհողութեան մէջ են եւ չեն հաւատում:

41. Մենք ենք երկիրը ժառանգելու, եւ նրա վրայ հղողներին, եւ նրանք մեզ մօտ են եւ դառնալու:

42. Եւ յիշի՛ր գրքումը Արրահամին, որ արգար մարգարէ էր:

43. Եւ երբ նա ասաց իր հօրը, «ո՛վ հայրս, ինչո՞ւ ես այն բանը պաշտում որ չէ լսում եւ չէ տեսնում եւ քեզ ոչինչ օգուտ չ'ունէ»:

44. «Ո՛վ հայրս, ես գիտութիւն ունեմ, որ դու չունես. ուրեմն դու հետեւի՛ր ինձ եւ ես քեզ շիտակ ճանապարհով կառաջնորդեմ»:

45. «Ո՛վ հայրս, գու սատանային մի պաշտի՛ր, որովհետեւ սատանան Աստուծոյ դէմ ապստամբ է»:

46. «Ո՛վ հայրս, ես վախենում եմ որ Ողորմածի կողմից քեզ մի տանջանք պատահէ, եւ դու սատանայի ընկեր դառնաս»:

47. Նա էլ ասաց, «դու մերժում ես իմ Աստուծոյս, ո՛վ Արբանամ. եթէ չը դադարես այդ բանից, ես անպատճառ կը քարկոծեմ քեզ. հետացի՛ր ինձնից մի առժամանակ»:

48. Եւ նա ասաց, «խաղաղութի՛ւնն լինի քեզ, ես քեզ համար ներողութիւն եմ խնդրելու իմ Տիրոջից. իրաւ նա ողորմած է ինձ դէմ»:

49. «Եւ ես կ'առանձնանամ քեզնից եւայն բաներից, որ դուք բացի Աստուածանից կանչում էք, եւ ես իմ Տիրոջը պիտի կանչեմ. գուցէ իմ Տիրոջը կանչելով ամբարիշտ չը լինեմ»:

50. Եւ երբ նա նրանցից առանձնացաւ եւ այն բաներից, որ նրանք բացի Աստուածանից պաշտում էին, մենք սուեցինք նրան Իսահակը եւ Յակոբը, եւ ամենին էլ մարգարէներ շինեցինք:

51. Եւ մենք նրանց սուեցինք մեր ողորմութիւնիցը եւ նրանց համար բարձր ճշմարտախօս լեզու շինեցինք:

52. Եւ գրքումը յիշի՛ր Մովսէսին, որ արդարամիտ եւ ուղարկւած մարգարէ էր:

53. Եւ մենք նրան կանչեցինք Սինայի աջ կողմիցը եւ կամաց կամաց մեզ մօտ բերեցինք:

54. Եւ մեր ողորմութիւնիցը սուեցինք իրան իր եղբայր Ահարոնը իբրեւ մարգարէ:

55. Եւ յիշի՛ր գրքումը Իսայէլին, որ իր խոստմանը հաւատարիմ էր, եւ ուղարկւած մարգարէ էր:

56. Եւ նա իր ընտանիքին պատւիրում էր աղօթքը եւ մաքրութեան տուրքը եւ իր Տիրոջ առաջին հաճելի էր:

57. Եւ յիշի՛ր գրքումը Իգրիսին, որ արդար մարգարէ էր:

58. Եւ մենք նրան բարձրացրինք մի բարձր տեղ:
59. Սրանք են, որոնց Աստուած Ազամի սերունդիցը մարգարէութիւն է պարգեւել, եւ որոնցից մենք մի քանիսին Նոյի հետ տապանի մէջ տարանք եւ Արբա-համի եւ Իսրայէլի սերունդիցը մեր առաջնորդածներիցը եւ ընտրածներիցը: Երբ նրանց կարգացվում է Ողոր-մածի նշանները խոնարհվում են երկրպագելով եւ լա-լով:
60. Նրանցից յետոյ եկաւ մի սերունդ, որ կորցրե-ցին ազօթքը եւ հեռեւեցին ցանկութիւններին, եւ նրանք կընկնեն կորստեան մէջ,
61. Նրանից բաց որ կապաշխարէ եւ կը հաւատայ եւ բարի գործքեր կանէ. նրանք կը մանեն դրախտը եւ նրանց անիրաւութիւն չի լինի:
62. Եզեմական դրախտներ, որ Ողորմածը աներե-ւոյթ տեղը խոստացել է իր ծառաներին. եւ նրա խոս-տումները կը կատարեն:
63. Նրանցում չեն լսի մի վատ խօսք բաց ի խա-ղաղութիւնից, եւ նրանց համար ուտելիք կայ նրանց մէջ առաւօտ եւ իրիկուն:
64. Սա այն դրախտն է, որ մենք մեր ծառաներից երկիւղած լինողին ծառանդութիւն ենք տալիս:
65. Եւ մենք վար չենք իջեցնում, եթէ ոչ քո Տի-բոջ հրամանովը, նրանն է ինչ որ կայ մեր առաջին եւ մեր ետեւ եւ ինչ կայ սրանց մէջը, եւ քո Տէրը մոռա-ցող չէ:
66. Նա երկնքի եւ երկրի եւ այդ երկուսի մէջը ե-ղողների Տէրն է. ուրեմն նրան պաշտեցէ՛ք եւ տեւե-ցէք նրան ծառայելու մէջ: Գիտե՞ս նրան մի համանուն:
67. Եւ մարդս ասում է, «եբբ ես մեռել եմ, արդ-եօ՞ք կենդանի դուրս կըգա՞մ»:
68. Բայց մի՞թէ մարդս չէ յիշում, որ մենք նրան առաջ ստեղծեցինք, եւ ինքը մի բան չէր:
69. Եւ քո Տէրը վկայ է, որ մենք նրանց ժողովելու

ենք՝ նաեւ սատանաներին, եւ յետոյ նրանց զնկու-
ենք դժոխքի շուքը Երեսների վրայ ընկած :

70. Յետոյ ամեն մի բաժանմունքից այնպիսիներին
ենք դուրս քաշելու. որ Ողորմածին հակառակ էին :

71. Յետոյ աւելի լաւ մենք ենք ճանաչում նրանց,
որոնք աւելի լաւ արժանի են այրելու :

72. Եւ ձեզնից մէկը չլկայ, որ նրան չըհասնէ : Քո
Տիրոջ կողմանէ որոշւած վճուած է :

73. Յետոյ մենք փրկելու ենք երկիւղածներին, բայց
անիրաււներին թողելու ենք Երեսի վրայ ընկած :

74. Եւ երբ մեր յայտնութեան նշանները կարգաց-
վում է նրանց, ասում ենք նրանց որ չեն հաւատում
այն հաւատացողներին, թէ ո՞ր մասի տեղն է լաւ եւ
վիճակը՝ գեղեցիկ :

75. Եւ ո՞րչափ ցեղեր ենք բնաջինջ արել նրանցից
առաջ, որոնց տունը տեղը աւելի գեղեցիկ էր :

76. Ասա՛, «ով որ մոլորւած էր, Ողորմածը նրան
օգնելով կ'օգնէ» :

77. Մինչեւ կը տեսնեն այն սպառնացւածը կամ
տանջանքը կամ վերջին ժամը. այն ժամանակ կը հաս-
կանան, թէ որի տեղն է վատ եւ զօրքերով տկար :

78. Եւ Աստուած ուղիղ առաջնորդւածների առաջ-
նորդութիւնն էլ կ'աւելացնէ :

79. Եւ մնայուն բարի գործքերը Աստուածանից ա-
ւելի լաւ վարձք եւ աւելի լաւ հատուցում կը ստանան :

80. Արդեօք տեսա՞ր դու նրան, որ մեր նշաններին
չէ հաւատում եւ ասում է, «ես անպատճառ ստացւածք-
ներ եւ զաւակներ եմ ունենալու» :

81. Նա գիտէ՞ զաղանիքները, կամ Ողորմածի հետ
դաշինք ունի գրած :

82. Բնա՛ւ : Մենք կը գրենք ինչ որ նա ասում է,
եւ նրա պատիժը երկարացնելով կ'երկարացնենք :

83. Եւ մենք ժառանգել կըտանք նրան, ինչ որ ա-
տել է, եւ միակ նա կըզայ մեզ մօտ :

84. Եւ նրանք բայ ի Աստուածանից ուրիշ աստուած ունեն, որ նրանց համար ոյժ լինեն:

85. Բնա՛ւ: Շուտով ուրանալու են իրանից պաշտամունքը եւ նրանց դէմ հակառակելու են:

86. Չե՞ս տեսնում, որ մենք սատանաներին ուղարկել ենք անհաւատներ լրայ, որ նրանց նրապուրանքով հրապուրեն:

87. Ուրեմն դու նրանց դէմ մի՛ շտապիր. որովհետեւ մենք նրանց համար մի որոշ ժամանակ ենք որոշել:

88. Ս ի օր մենք երկիւղածներին ժողովելու ենք Ողորմածի մօտ դեսպանօրէն:

89. Իսկ յանցաւորներին քշելու գցելու ենք դժոխքը:

90. Եւ բարեխօսութիւն չեն գտնի բաց ի նրանցից, որոնք Ողորմածի հետ դաշինք ունեն կռած:

91. Եւ ասում են, թէ «ողորմածը որդի ունէ»: սակայն սոսկալի բան էք ասում:

92. Քիչ էք մնացել որ երկինքը դրանից պատառ պատառ դառնար եւ երկիրը ճեղքէր եւ սարերը վաքընկնէին,

93. Որ Ողորմածին որդի են վերագրում. բայց Ողորմածը պէտք չունէ որդի ունենայ:

94. Երկնքում եւ երկրի վրայ եղողները Աստուծուն կը մօտենան միմիայն իբրեւ ծառայ: Նա արդէն նրանց հաշուել համարել է համարով:

95. Եւ նրանք ամենը յարութեան օրը նրա մօտ կը գան մինակ մինակ:

96. Իրաւի նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում, Ողորմածը նրանց անպատճառ սէր ցոյց կըտայ:

97. Արդ մենք քո լեզուով իրաւ հեշտացրեցինք, որ նրանով աւետիք տաս երկիւղածներին եւ նրանով ըսպառնաս կուարար մարդկանց:

98. Եւ ո՛րքան սերունդներ ենք մենք բնօջինջ արել. դու նրանցից մինը տեսնո՞ւմ ես, կամ նրանցից մի ձայն լսո՞ւմ ես:



20) ՍՈՒՐԷ՛ ԹՒԱՀԱ

Մէքքէական. հարիւր երեսուն հինգ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Թահա՛. Մենք Ղուրանը քեզ համար չենք իջեցրել որ ապօրինանաս:
- 2 Այլ իբրեւ յուշարար երկիւղածների համար:
3. Իբրեւ իջեցրած մի բան նրա կողմից, որ ստեղծել է երկիրը եւ բարձր երկինքը:
4. Ողորմածը նստեց աթոռի վրայ:
5. Նրանն է, ինչ կայ երկնքումը եւ երկրումը եւ ինչ նրանց միջում է, եւ ինչ հողի տակին է:
6. Եւ եթէ խօսքդ բարձրացնես, նա գիտէ ծածուկը եւ գաղանին:
7. Աստուած է, նրանից բաց աստուած չըկայ, նա ունէ գեղեցիկ անունները:
8. Արդե՛օք Մովսէսի պատմութիւնը քեզ հասել է:
9. Երբ նա կրակ տեսաւ, ասաց իբր ընտանիքին, «կացէ՛ք, ես կրակ եմ նշմարել»:
10. «Գուցէ նրանից մի քիչ ատնեմ բերեմ ձեզ համար, եւ առաջնորդութիւն կը գտնեմ դէպի այդ կրակը»:
11. Եւ երբ նրա մօտ եկաւ, մենք կանչեցինք, «ո՛վ Մովսէս»,
«Ահա՛ ես քո Տէրն եմ. կօշիկներդ հանի՛ր, որովհետեւ, դու թօվա սուրբ հովիտումն ես»:
13. «Եւ ես քեզ ընտրել եմ, ուրեմն լսի՛ր, թէ ինչ է յայնպիսում»:
14. «Աստուածը ես եմ. ինձանից ջոկ ուրիշ աստ-

ուած չըկայ՝ ուրեմն ինձ պաշտի՛ր եւ աղօթքը կատարի՛ր իմ յիշատակիս» :

15. Իրաւի վերջի ժամը գալու է՝ հազիւ թէ նրբան ծածուկ պահեմ՝ :

16. «Որ ամեն մի անձի հատուցանեմ, ինչ աշխատել է» :

17. «Ուրեմն քեզ թող չըծառայեցնէ նրանից նրան չըհաւատացողը, որ իր ցանկութիւնն է հետեւում, եւ դու կը կորչես» :

18. «Եւ սա ի՞նչ է քո աջ ձեռքիդ, ով Մովսէս» :

19. Նա էլ ասաց, «իմ գաւազանս է, որ նրա վրայ կոթնում եմ եւ նրանով տերեւներ եմ թափում իմ հօտի համար, եւ ինձ համար նրանում ուրիշ ծառայութիւններ էլ կան» :

20. Եւ նա ասաց, «վար գցի՛ր դրան, ո՛վ Մովսէս» :

21. Եւ նա նրան վար գցեց, եւ նա իսկոյն մի վազող օձ դառաւ :

23. Եւ նա ասաց, «մոնի՛ր դրան, եւ մի՛ վախիբ մենք դրան իրան առաջի վիճակին կը զարձնենք» :

23. «Եւ մտցո՛ւր ձեռքդ թեւիդ տակը, հանի՛ր սպիտակ առանց մի փնասի, երկրորդ հրաշք» :

24. «Մենք քեզ մեր հրաշքներից մեծն էլ ենք ցոյց տալու» :

25. «Գնա՛ Փարաւօնի մօտ, նա ապստամբուել է» :

26. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, բա՛ց իմ սիրտը» :

27. «Եւ հեշտացրու՛ւ իմ գործը» :

28. «Եւ լեզւիցս լու՛ծի՛ր կապը» :

29. «Որ իմ խօսքը հասկանան» :

30. «Եւ իմ ընտանիքից ինձ մի օգնական շինիր» :

31. «Իմ Ահարօն եղբորը» :

32. «Նրանով ամբացրո՛ւ իմ գորութիւնը»,

33. «Եւ նրան ինձ ընկեր շինի՛ր»,

34. «Որ մենք քեզ շատ օրհնարանենք եւ քեզ շատ յիշենք» :

35. «Ահա՛ դու մեզ տեսել ես» :

36. Եւ նա ասաց, «արդէն քեզ արւեց քո ուղածը, ո՛վ Մովսէս»:

37. «Արդէն միւս անգամ է, որ քեզ երախտիք ենք ցոյց տալիս»:

38. Երբ մենք քո մօր յայանեցինք ինչ յայանւեց»,

39. «Թէ նրան գցի՛ր մի կողովի մէջ եւ նրան գցի՛ր ծովի մէջ. նա էլ նրան գցեց ծովը՝ եզերքի մօտը իմ թշնամին եւ նրա թշնամին վեր կ'առնէ նրան. եւ ես քեզ վրայ կը գցեմ իմ սէրը»:

40. «Նւ դու կը կրթւես իմ աչաց առաջին»:

41. «Եւ երբ քո քոյրը եկաւ եւ ասաց. «ձեզ տանեմ դէպր այն անձը, որ նրան խնամէ». եւ մենք քեզ ետ դարձրեցինք դէպի քո մօրը, որ նրա աչքերին լոյս լինես եւ նա չը տրտի. եւ դու մի մարդ սպանեցիր, եւ մենք քեզ ազատեցինք ախրութիւնից եւ փորձեցինք ձեզ փորձութիւններով»:

42. «Եւ դու տարիներ մնացիր Մադիամի մարդկանց մօտ, յետոյ դու եկար ըստ նախասահմանութեան, ո՛վ Մովսէս»:

43. «Եւ ես քեզ ընտրել եմ ինձ համար»:

44. «Գնա՛ դու եւ եղբայրդ իմ հրաշքներովը եւ անփոյթ չը լինէք ինձ յիշելու»:

45. «Երկուսդ գնացէ՛ք Փարաօնի մօտ, որովհետեւ ապստամբուել է»:

46. «Եւ ասացէ՛ք նրան մեզմ խօսք, գուցէ մտածէ կամ երկիւղած դառնայ»:

47. Նրանք էլ ասացին, «ո՛վ մեր Տէր, ահա՛ մենք վախենում ենք, որ մեզ վրայ բարկանայ կամ կատաղի»:

48. Եւ նա ասաց «մի՛ վախենաք, ահա՛ ես ձեզ հետ եմ. լսում եմ եւ տեսնում եմ»:

49. Այն ժամանակ նրանք եկան նրա մօտ եւ ասացին. «մենք երկուսս քո Տիրոջ ուղարկածներն ենք. թո՛ղ Իսրայէլի օրդ ինքերին, որ մեզ հետ գնան, եւ դու նրանց մի՛ տանջիր. մենք արդէն քո Տիրոջ կողմից հրաշքով ենք եկել քեզ մօտ. եւ խաղաղութիւն լինի

նրան որ հետևում է ուղիղ առաջնորդութեան» :

50. «Արդէն մեզ յայտնութիւն է եղել, թէ տանջանք կայ նրա համար, որ սուտ է համարում եւ ետ դառնում» :

51. Նա էլ ասաց, «Էւ ո՞վ է ձեր երկուսիդ Տէրը, ո՞վ Մովսէս» :

52. Եւ նա ասաց, «մեր Տէրն այն է, որ ամեն բան տեղ է իր արարածներին եւ յետոյ նրանց առաջնորդել» :

53. Նա էլ ասաց, «դրա գիտութիւնը իմ Տիրոջ մօտ է մի գրքում. իմ Տէրը ո՛չ կը մոլորւի, ո՛չ էլ կը մոռանայ» :

55. «Որ երկիրը ձեզ համար օրօրոց է շինել եւ նրա վրայ ձեզ համար ճանապարհներ պատրաստել, եւ որ երկնքիցը ջուր է իջեցնում. եւ մենք այլ եւ այլ բոյսեր ենք դուրս բերում» :

56. «Կերէ՛ք եւ արածացրէ՛ք ձեր հօտերը, ահա՛ սըրանում նշաններ կան խելացիների համար» :

57. «Մենք ձեզ նրանից ենք ստեղծել, եւ ձեզ նըրան ենք դարձնելու, եւ նրանից ենք ձեզ դուրս բերելու միւս անգամը» :

58. Եւ մենք նրան ցոյց տւեցինք մեր նշանները բոլորը. բայց նա սուտ համարեց եւ հակառակեց :

59. Նա ասաց, «արդեօ՞ք դրա համար եկաք, որ մեզ քո կախարդութիւնովը հանէք մեր երկրիցը, ո՞վ Մովսէս» :

60. «Եւ մենք էլ քեզ դէմ կը դանք դրա նման կախարդութիւնով. ուրեմն մեր մէջ եւ քո մէջ ժամանակ որոշի՛ր, որ ոչ մենք փոխենք եւ ոչ դու, եւ մի որոշ տեղ» :

61. Եւ նա ասաց, «ձեր որոշ ժամանակը լինի զարգարանքի օրը, որ մարդիկը լոյսով ժողովեն» :

62. Բայց Փարաօնը ետ գնաց, ժողովեց իրան խորամանկութիւնը եւ եկաւ :

63. Մովսէս ասաց նրանց, «վա՛յ ձեզ, Աստուծոյ մասին սուտ գրպարտութիւն չը խօսէ՛ք»:

64. «Նա ձեզ պատժելով բնաջինջ կ'անէ. արդէն ամեն ով որ գրպարտեց՝ փչացաւ»:

65. Եւ նրանք իրանց գործի մասին վիճարանութիւն արեցին եւ իրանց փախուքը ծածուկ պահեցին.

66. Նրանք ասացին, «այս երկուսս կախարդներ են, որ կամենում են, որ ձեզ ձեր երկրիցը հանեն իրանց կախարդութիւնովը եւ ոչնչացնեն ձեր աննման օրէնքը»:

67. «Ուրեմն ժողովեցէ՛ք ձեր խորագիտութիւնը եւ եկէ՛ք շաքք շաքք, եւ արդէն երջանիկ է այսօր. նա որ յաղթէ»:

68. Նրանք էլ ասացին, «ո՛վ Մովսէս, կամ դու կը գցես, կամ առաջ մենք կը գցենք»:

69. Եւ նա ասաց, «լաւ, գցեցէ՛ք». եւ նրանց շուանները եւ գաւազանները նրան այնպէս էին երեւում նրանց կախարդութիւնիցը իբր թէ վազվազում են:

70. Եւ իր սրտումը շատ վախով վախեց Մովսէսը:

71. Մենք ասացինք, «մի՛ վախիր, որովհետեւ դու ես յաղթել»:

72. «Եւ գցի՛ր քո աջ ձեռքիդ եղածը, որ կուլ տայ նրանց շինածը. որովհետեւ նրանց շինածը միմիայն կախարդի խարդախութիւն է. եւ կախարդը ուր էլ գնայ չի յաջողւի»:

73. Եւ կախարդները վար ընկան երկրպագելով եւ ասացին, «մենք հաւատում ենք Ահարօնի եւ Մովսէսի Տիրոջը»:

74. Նա էլ ասաց, «դուք հաւատացի՞ք առաջ քան թէ ես ձեզ հրաման տւի. ահա նա ձեր մեծաւորը եղաւ, որ ձեզ սովորեցնելու է կախարդութիւնը. սակայն ես կը կարեմ ձեր ձեռքերը եւ ոտքերը դէմ առ դէմ կողմից եւ ձեզ կը կախեմ արմաւենու ճիւղերից, որ իմանաք, թէ մեզանից ո՞րն է սաստիկ եւ մնայուն կերպով պատժողը»:

75. Նրանք ասացին, «մենք քեզ աւելի չենք հա-

մարի քան այն հրաշքները, որ մեզ մօտ եկան եւ քան այն, որ մեզ ստեղծել է: Ուրեմն վճռի՛ր, ինչ դու վճռում ես. ահա՛ դու միայն այս աշխարհի կեանքին բանը կը վճռես. մենք հաւատում ենք մեր Տիրոջ, նա կը ներէ մեր սխալները եւ այն կախարդութիւնը, որ դու մեզ ստիպեցիր անելու. բայց Աստուած բարի է եւ մնայուն»:

76. Իբրաւ, ով իբրեւ յանցաւոր գայ իր Տիրոջ մօտ, ահա՛ նրա համար գոթութիւն կայ. նա չի մեռնի նրանում եւ չի ապրի:

77. Եւ ով իբրեւ հաւատացեալ գայ նրա մօտ եւ բարի գործեր գործած լինի. նրանց համար բարձր աստիճանները կան:

78. Եղեմական գրախաներ, որոնց տակովը գեաւեր են հոսում. նրանք յաւիտեան կը մնան նրանցում: Սա նրա վարձքն է, որ մարութ է:

79. Եւ մենք Մովսէսին յայտնել էինք, թէ գիշերը ճանապարհ ընկի՛ր մեր ծառաների հետ եւ նրանց համար ծովումը չոր ուղի բաց:

80. Մի՛ վախիր յարձակումից եւ մի՛ երկնչիր:

81. Բայց նրան հետեւում էր Փարաւօնը իր գունդերովը եւ նրանց ծածկեց ծովովը ինչ որ ծածկեց նրանց: Եւ Փարաւօնը մոլորեցրել էր իր ժողովրդին եւ չէր առաջնորդել:

82. Ո՛վ Իսրայէլի որդիներ, մենք ձեզ ազատեցինք ձեր թշնամուցը եւ ձեզ հասցրեցինք Սինայ սարի աջ կողմը, եւ մենք ձեզ վրայ իջեցրեցինք մանանան եւ լորը. ա ս ե լ ո վ ,

83. «Կերէ՛ք այն բարիքներէից, որ ձեզ պարգեւել ենք եւ անհնազանգ մի՛ լինիք այդ տեղ, որ իմ բարկութիւնը թափուի նա շարգէն կորած է»:

84. «Եւ ես ներող եմ այն մարդուն, որ ապաշխարում եւ հաւատում ու բարիք է գործում. եւ յետոյ ուղիղ առաջնորդւում»:

85. «Եւ քեզ ի՞նչ է շտապեցնում քո ժողովրդիցն, ո՛վ Մովսէս»:

86. Նա էլ ասաց, «սրանք իմ ետեւ իցն են պալիս, իսկ ես շտապում եմ քեզ մօտ դալու, ո՛վ իմ Տէր, որ ինձ հաւանես»:

87. Եւ նա ասաց, «մենք արդէն փորձել ենք քո ժողովրդին, բայց մոլորեցրել է նրանց Սամարացիին»:

88. Եւ Մովսէս ետ դարձաւ իր ժողովրդի մօտ զըզ-
ջալով բարկացած:

89. Եւ ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, ձեր Տէրը ձեզ բարի խոստում չը խոստացա՞ւ. մի՞թէ պայմանը ձեզ համար երկար եղաւ. կամ ուզեցիք ձեր Տիրոջ կողմանէ ձեր վրայ բարկութիւն թափուի, եւ դրա՞ համար դըր-
ժեցիք ձեր ինձ աւած խօսքը»:

90. Նրանք էլ ասացին, «մենք մեր քեզ աւած խօս-
քը մեր իշխանութիւնով չը դրժեցինք, այլ մենք ժո-
ղովրդի զարդերիցը բեռներ կրեցինք եւ գցեցինք նը-
րանց կրակի մէջը, նոյնպէս գցեց եւ Սամարացին,
եւ նրանց համար մի հորթ հանեց մարմինով, եւ նա
պառաչում էր. եւ ասացին, «սա ձեր աստուածն է եւ
Մովսէսի աստուածը, որ մոռացել է»:

91. Մի՞թէ չէին տեսնում թէ նրանց պատասխան չէր տալիս, եւ նրանց մի միաս կամ օգուտ հասցնել չէր կարող:

92. Բայց Ահարօն ասաց նրանց առաջուց. «ո՛վ իմ ժողովուրդ դուք արդէն փորձեցիք զրանով, եւ ձեր Տէրը Ողորմածն է. ուրեմն ինձ հետեւեցէ՛ք եւ իմ նը-
բամանին հնազանդեցէ՛ք»:

93. Նրանք էլ ասացին, «մենք չինք դադարի նը-
բան պաշտելուց, մինչեւ ետ գայ մեզ մօտ Մովսէսը»:

94. Եւ Մովսէս ասաց, «ով Ահարօն, քեզ ի՞նչն ար-
գիլեց որ ինձ չը հետեւես. երբ տեսար նրանք մոլոր-
ւել են. դո՞ւ էլ իմ նըբամանիս անհնազանդ եղար»:

95. Նա էլ ասաց, «ո՛վ իմ մօր որդի, մի՛ քաշեր
մօրուքիցս եւ գլխիս մազերիցը, ես վախեցի թէ

դու կ'ասես, «խաբայէլի որդեկանցը բաժինն բաժին ա-
րեցիր, եւ խօսքս չես պահել»:

96. Եւ նա տասց, «քո բանը ի՞նչ էք, ով Սաճա-
րացի»: Նա էլ ասաց, «ես մի բան տեսայ, որ նը-
րանք չէին տեսնում, եւ ես ուղարկեամի հետքիցը մի
բուռ լիքը վերցրեցի եւ գցեցի մէջը. եւ իմ սիրան ինձ
այսպէս թելադրեց»:

97. Նա էլ ասաց, «գնա՛ւ անա՛քո կեանքումը սա-
լինի, որ ասես «մի՛ դպչէք», եւ անա սա քեզ համար
մի որոշում է, որ նրան երբէք չես կարող փոխել. եւ
նայի՛ր քո աստուածին, որին դու պաշտում էիր, մենք
նրան այրելու ենք եւ յետայ իբրեւ փոշի ծովի մէջը
թափելու»:

98. Չեր աստուածը միմիայն Ալլահն է, որ բացի
նրանից ուրիշ աստուած չկայ. նա ամեն բանն ընդար-
ձակօրէն գիտէ»:

99. «Այսպէս մենք քեզ անցած բաներից պատմե-
ցինք, եւ քեզ մեր կողմից զգուշութիւն տեցինք»:

100. «Ով որ նրան մերժէ, անա՛ նա յարութեան օրը
պէտք է կրէ իր բեռը»:

101. «Յաւիտեան պիտի մնան նրանում. եւ յարու-
թեան օրը տաժանելի բեռ է լինելու նրանց համար»:

102. «Այն օրը որ փողը կը փչի, եւ յանցաւորներն
այն ժամանակ կը հաւաքուին կուրացած»:

103. «Միմեանց ասելով, թէ «միայն տասն օր էք
մնացել»:

104. «Մենք գիտենք նրանց ասածը, երբ նրանց
վարքով մեծամեծները կ'ասեն, թէ դուք միայն մէկ
օր էք մնացել»:

105. Եւ նրանք քեզ կը հարցնեն սարերի մասին,
ասա՛ւ, «Իմ Տէրը նրանց մանր փոշի է շինելու»:

106. «Եւ նրանց զրեւելու է տափարակ գաշտեր շի-
նելու, որ նրանցում մի ծուռ բան չես տեսնի եւ ոչ
էլ խօրատուպորտ բան»:

107. «Այն օրը կը հետեւեն այն կանչողին, որ ծուռ

բան չ'ունէ եւ ձայները խոնարհելու են Ողորմածի առաջին, եւ դու միայն ոտների խշխշոց ես լսելու»:

108. «Այն օրը ոչ մի բարեխօսութիւն օգուտ չի ա- նի բացի նրա բարեխօսութիւնիցը. որին Ողորմածը հրաման կը տայ, եւ որին խօսքը նրան հաճելի կը լինի»:

109. «Նա դիտէ նրանց առաջին եղածը եւ նրանց ետեւ եղածը, նրանք իրանց գիտութեամբը չեն ըն- գուներ»:

110. «Եւ նրանց երեսները կը խոնարհեն կենդանի ինքնազոյի առաջին, եւ կորած է նա որ անիրաւու- թիւն է կրում»:

111. «Եւ ով բորբքներ է գործում եւ ինքն էլ հա-ւատացել է, նա ոչ անիրաւութիւնից կը վախենայ եւ ոչ կորուստից»:

112. Եւ մենք յայսպէս օրարեւէն Ղուրան իջեցրեցինք եւ նրանում սղառնայիքներ կրկնէցինք, նրանք եր- կիւզած լինեն եւ նրանց մէջ գոյանայ յիշելը:

113. Եւ բարձրեալ է Աստուած, թագաւորը, ճշմա- րէտը. եւ դու մի՛ շտապիր Ղուրանով նրա յայտնու- թիւնը քեզ համար գալուց պրծնելուց առաջ. եւ ասա՛ «ո՛վ իմ Տէր, իմ գիտութիւնն աւելցո՛ւր»:

114. Եւ մենք արդէն սրանից առաջ մի պատէր էինք տւել Ադամին, բայց նա մոռացաւ նրան, եւ մենք նրանում հաստատամտութիւն չգտանք:

115. Եւ երբ ասացինք հրշտակներին, «երկրպագե- ցէ՛ք Ադամին», այն ժամանակ երկրպագեցին նրանք բացի սատանայիցը, որ մերժեց. եւ մենք ասացինք, «ո՛վ Ադամ, ա՛նա՛ սա քեզ եւ քո կնոջ թշնամի է. թող նա ձեզ դուրս չը հանէ դրախտիցը, այն ժամանակ դու- թշուառ կը լինես»:

116. «Անա՛՛ դու նրանում ոչ կը սովածանաս եւ ոչ էլ մերկ կը լինես»:

117. «(Եւ ոչ կը ծարաւես, եւ ոչ արեւից կայրւես»):

118. Բայց սատանան նրան հրապուրեց եւ ասաց,

«ճ'վ Ադամ, ես քեզ առաջնորդեմ դէպի այն յաւիտեանական ծառը եւ այն թագաւորութիւնը որ չի անցնի» :

119. Եւ նրանք երկուսն էլ նրանից կերան եւ իրանց մեկնութիւնը երեւաց իրանց, եւ նրանք սկսեցին գրախաթ տերեւներից իրանց համար իրար կտրել, եւ այսպէս Ադամը անհնազանդ եղաւ իր Տըրոջը եւ ապրատամբեց :

120. Բայց յետոյ Տէրը նրան ընդունեց եւ առաջնորդեց նրան :

121. Նա ասաց, «վա՛ր քնկէք այստեղից ամենդ էլ, դուք միմեանց թշնամի էք՝ բայց ինձնից ձեզ համար առաջնորդութիւն է գալու» :

121. «Եւ ճ'վ որ հետեւէ իմ առաջնորդութեանը, նա ոչ կը մոլորուի եւ ոչ թշուառ կը լինի» :

123. «Բայց ով որ իմ խրատից ետ քաշուի, նա մի գժրազ կենցաղ պիտի ունենայ» :

124. «Եւ մենք յարութեան օրը նրան ժողովելու ենք կուրացած» :

125. Նա էլ ասելու է, «ճ'վ իմ Տէր, ինձ ինչո՞ւ համար կոյր յարութիւն տւիր, որ տեսողութիւն ունէի» :

126. Նա էլ ասելու է, «նրա համար որ մեր նշանները եկան քեզ մօտ, բայց դու մոռացար զրանց, դու էլ այսպէս այսօր մոռացվում ես» :

127. Եւ մենք այսպէս հատուցանում ենք շոայլնեւրին, որ չեն հաւատում իրանց Տըրոջ հրամաններին՝ եւ միւս աշխարհքի տանջանքն աւելի խիստ է լինելու եւ երկարատեւ :

128. Նրանց յայտնի չէ՞ արդեօք, թէ ճ'րքան ցեղեր մենք նրանցից առաջ բնաջինջ արեցինք, որ ման են գալիս իրանց բնակարաններումը։ Ահա՛ սրանում նշաններ կան խելք ունեցողների համար :

129. Եւ եթէ քո Տըրոջ կողմանէ կանխաւ խօսք եղած չը լինէր, արդէն վաղուց հարկ եղած կը լինէր՝ բայց վախճանը նախաստհմանուած է :

130. Ուրեմն համբերութիւնով տա՛ր, ինչ որ ասում

են եւ օրհնարանի՛ր քո Տիրոջ փառարանութեամբը արեգակը ծագելուց առաջ եւ նրա մօր մանկուց առաջ եւ գիշերայ մասերումը եւ օրւայ մէջ, որ հաճելի լիսնիս:

131. Եւ քո աչքերդ մի՛ ուղղիր դէպի այն վայելմունքները, որ մենք նրանցից մասնց աւել ենք իրքեւ այս աշխարհքի դարդ, որ նրանց փորձենք գրանու մինչդեռ քո Տիրոջ խնամքը աւելի լաւ է եւ մնայուն:

132. Եւ հրամայի՛ր քո ընտանիքին աղօթելը եւ դու էլ յարատեւի՛ր նրանում: Մենք քեզնից ապրուստ չենք պահանջում. մենք կրտանք քեզ քո ապրուստը, եւ երկրւղածութեան վերջը բարի է:

133. Բայց նրանք ասում են, թէ իր Տիրոջ կողմանէ մի հրաշքով չըզայ մեզ մօտ, բայց մի՞թէ նրանց յայտնութիւն չեկաւ առաջի գրքերումը:

134. Եւ եթէ մենք պատժելով նրանց ՚ի սկզբանէ բնաջինջ արած լինէինք, նրանք կ'ասէին, «ո՛վ մեր Տէր, եթէ դու մեզ համար մի մարգարէ ուղարկած լինէիր, մենք քո խօսքերիդ էլ հնազանդւած կը լինէինք նւաստանայուց ու ամօթահար լինելուց առաջ»:

135. Ասա՛, «ամեն մէկը սպասում է. ուրեմն սպասեցէ՛ք. եւ դուք պիտի հասկանաք, թէ ով է ուղիղ ճանապարհում, եւ ով է ուղիղ առաջնորդւած»:



21) ՍՈՒՐԷ ԷՆ Բ Ի Ա

Մէքքէական. Հարիւր աասներկու այէ:

Գթած սղորմած Աստուծոյ անունովը:

1. Մարդկանց հաշիւը մօտեցել է, իսկ նրանք յանհոգութեան մէջ մերժում են:

2. Ինչ որ նորերս նրանց համար իրանց Տիրոջ կողմից եկել է իբրև յիշեցում, նրանք միայն լսում են դա և խաղում:

3. Նրանց սրտերը զւարճանում է, և նրանք որ անիրաւութիւն են գործում՝ փախում են ծածուկ, «միթէ սա ձեզ նման մի մարդ չէ՝ դուք գնում էք նրա կախարհութիւնները տեսնելու, որ դուք հասկանում էք»:

4. Նա էլ ասաց, «իմ Տէրը գիտէ երկնքում և երկրումն եղած խօսքը. և նա լսող իմացող է»:

5. Բայց նրանք ասում են, «ցնորքների հաւաքածոյ է, որ նա հնարում է, սակայն դա մի բանաստեղծ է՝ ապա թէ ոչ, թող մի հրաշք բերէ ինչպէս առաջի մարգարէները»:

6. Նրանից առաջ եղած քաղաքները չեն հաւատացել, որոնց մենք բնաջինջ արեցինք. հիւսյ միթէ գլորածն և նա հաւատալու:

7. Եւ մենք քեզնից առաջ միմիայն մարդիկ ենք ուղարկել, որոնց մենք յայանութիւններ ևնք տւել՝ արդ դուք յայանութիւնն ունեցողներին հարցրէ՛ք եթէ չէք իմանում:

8. Եւ մենք նրանց համար այնպիսի մարմին չը շինեցինք, որ կերակուր չուտէ, և նրա մշտակեաց չէին:

9. Բայց մենք ճշմօրիւ կատարեցինք նրանց տւած խոստումները և նրանց ազատեցինք, և որին ուզեցինք և շայններին բնաջինջ արեցինք:

10. Բայց ձեզ համար իջեցրեցինք զիրքը, նրանում կայ ձեր խրատները. միթէ չէք իմանում:

11. Եւ ս'ըչափ քաղաքներ ևնք մենք տակն ու վրայ արել որ անիրաւ չէին, և նրանցից յետոյ ուրիշ ազդ հաստատել նրանց տեղը:

12. Եւ երբ նրանք մեր պատիժը զգացին, իսկոյն փախան այն տեղերից:

13. «Մի՛ փախչէք, այլ ե՛տ դարձէք ձեր զւարճու-

թիւններին եւ ձեր բնակարաններին . զուցէ կը հարցընէք :

14. Նրանք էլ ասացին, «ո՛հ վա՛յ մեզ . մենք անիրաւներ էինք» :

15. Նրանց այս աղաչանքը միայն այն ժամանակ դադարեց, երբ մենք նրանց հունձքի պէս արմատիցը կտրեցինք :

16. Եւ մենք երկիրքը եւ երկիրը եւ նրանց մէջը կղածները չենք ստեղծել զւարճութեան համար :

17. Եթէ մենք խաղաղ ուզեցած լինէինք, մենք խաղը մեր մէջը գտած կը լինէինք, եթէ խաղացողներ եղած լինէինք :

18. Սակայն մենք ճշմարտութիւնով ուղղում ենք ունայնութիւնը ջրել ոչնչացնել, եւ ահա՛ նա կորչում է բայց վա՛յ ձեզ նրա համար, որ զուք որակութիւն էք չինում :

19. Եւ նրանն է, ինչ որ կայ երկնքումը եւ երկրի վրայ եւ ինչ որ նրա մօտ կայ՝ չեն հպարտանում նրան ծառայելուց եւ չեն զղջում :

20. Նրանք փառաբանում են նրան գիշեր եւ ցերեկ, եւ չեն դադարում :

21. Մի՞թէ սրանք աստուած են ընդունում, որ երկրիցն է առաջ եկել :

22. Եթէ նրանց երկուսի միջեւ բաց ի Աստուածանից ուրիշ աստուած լինէր, անպատճառ կը փճանային. բայց բարձրեալ է Աստուած այն բանիցը, որ վերագրում են նրան :

23. Նրան չեն հարցնի, թէ ինչ է արել. իսկ նրանց կը հարցնեն :

24. Կամ նրանից ջոկ ուրի՞շ աստուած են ընդունելու . ասա՛, «բերէք ձեր ապացոյցը» : Սա ինձ մօտ եղած եւ ինձնից առաջ եղած յայտնութիւնն է, ոսկայն նրանից շատերը չեն հասկանում ճշմարտութիւնը, եւ նրանք մերժողներ են :

25. Եւ մենք քեզնից առաջ մի մարգարէ չենք ու-

զարկել, որ նրան յայտնած չը լինէինք, թէ ինձնից ջոկ ուրիշ աստուած չըկայ. ուրեմն ինձ պաշտեցէ՛ք:

26. Նրանք ասում են, թէ Ողորմածը որդի ունի. քա՛ւ լիցի Աստուածանից, նրանք պատուար ծառաներ են:

27. Նրանք առաջ չեն գնայ նրանից իրանց խօսքով, եւ նրանք կատարում են նրա հրամանը:

28. Նա գիտէ նրանց ապագան եւ անցեալը, եւ նըրանք չեն միջնորդի.

29. Բացի նրանից որին նա հաճութիւն տայ, եւ նրանք դողում են նրա վախովը:

30. Եթէ նրանցից մէկն ասէր, թէ «ես աստուած եմ նրանից ջոկ». մենք նրան կը պատժէինք դժսւքով. մենք այսպէս ենք պատժում անիրաււներին:

31. Մի՞թէ անհաւատները չեն տեսում, որ երկինքը եւ երկիրը մի գունդ էին, եւ մենք նրանց երկուսի բաժանեցինք, եւ ամեն բան ջուրից կենդանի կազմեցինք. մի՞թէ չեն հաւատում:

32. Եւ մենք երկրի վրայ սարեր դրեցինք, որ նըրանցով հաստատ կենայ. եւ նրանց մէջ ընդարձակ գընացքներ շենեցինք, որ շիտակ առաջնորդեն:

33. Եւ մենք երկինք պահպանող ծածկոց շինեցինք, բայց դրանք նրա նշանները մերժում են:

34. Նա է, որ գիշերը եւ ցերեկը ստեղծել է, նաեւ արեգակը եւ լուսինը. ամեն մէկը փառաբանում է մի երկնքում:

35. Եւ մենք քեզնից առաջ ոչ մէկ մարդու անմահութիւն չենք տւել. հիմայ որ դու մեռնես, նրանք անմահակա՞ն են յինելու:

36. Ամեն մարդ պէտք է ճաշակէ մահը, եւ մենք ձեզ փորձում ենք չարիքով եւ բարիքով իբրեւ փորձ, եւ դուք մեզ մօտ էք ետ գալու:

37. Եւ երբ անհաւատները քեզ տեսնում են, քեզ միայն ծաղր են անում ասելով, «սա է որ յիշում է

ձեր աստուածները», և նրանք ուրանում են Ողորմածի յիշատակը:

38. Մարդս շտապելով է ստեղծւած: Ես ձեզ ցոյց կըտամ իմ նշանները, և դուք չէք շտապի:

39. Եւ նրանք ասում են, «երբ է կատարելու այդ խոստումը եթէ դոք ճշմարիտ էք»:

40. Ո՛հ թէ իմանային անհաւատները, որ մի ժամանակ նրանք չեն հեռացնի կրակը իրանց երեսներէց և ոչ էլ իրանց մէջքերիցը, և օգնող էլ չեն ունենայ:

41. Բայց յանկարծակի գալու է նրանց վրայ և նրանց բնաջինջ է անելու, և նրանք չեն կարողանալու նրան հեռացնել, և նրանց ժամանակ չի տրւելու:

42. Եւ արդէն քեզնից տաջ էլ են մարգարէներ ծաղր արել, բայց պաշարել է ծաղր անողներին այն բանը, որ ծաղր էին անում:

43. Ասա՛, «ո՞վ ձեզ կը պաշտպանէ գիշերը և ցերեկը Ողորմածից»: Բայց նրանք իբրանց Տիրոջ յիշատակը մերժում են:

44. Կամ նրանք մեզնից ջոկ ուրիշ աստուածներ ունեն, սր նրանց ետ են քաշում, նրանք չեն կարող իրանց օգնել և ոչ էլ ընկերներ գտնել մեզ գէմ:

45. Ասկայն մենք սրանց և իրանց հայրերին վա՛յ յիմունքներ ենք տւել, որ ապրում էին: Մի՞թէ չեն տեսնում որ մենք եկել ենք երկիրը և նրան նեղացրել ամեն կողմից: Արդ նրա՞նք են յաղթողները:

46. Ասա՛, «անա ևս ձեզ քարոզում եմ յայտնութիւնը». բայց խուլերը խրատելիս չեն լսի կոչումը:

47. Եւ երբ նրանց շօշափում է մի քամի քո Տիրոջ պատիժիցը, նրանք իսկոյն ասում են, «ո՛հ, վա՛յ մեզ, մենք անիրաւներ էինք»:

48. Եւ յարութեան օրը մենք արդարութեան կշիռք նեքը գնելու ենք, և ոչ մի անիրաւութիւն չի լինի մի հողու համար, և եթէ մի մանանիսի հատի ծանրութեամբ էլ լինի, մենք նրան կը բերենք, և մենք բաւական լաւ հաշւաբար ենք:

49. Եւ մենք արդէն Մովսէսին եւ Ահարօնին տւել
ենք ֆուրգանք, որ լոյս է եւ յիշեցուցիչ երկիւղած-
ների համար:

50. Արօնք վախում են իրանց աներեւոյթ Տիրօջից
եւ վերջի ժամիցը դողում են:

51. Եւ սա մի օրհնեալ յիշեցուցիչ է, որ մենք ի-
ջեցրել ենք, մի՞թէ դուք սրան կանարգէք:

52. Առաջուց էլ մենք Աբրահամին տւել էինք իրան
ճանապարհացոյցը, եւ մենք նրան ճանաչում էինք:

53. Երբ ասաց իր հօրը եւ իր ժողովրդին, «սա ի՞նչ
նմանութիւններ են, որոնց դուք երկրպագում էք»:

54. Նրանք էլ ասացին, «մենք տեսանք, որ մեր
հայրերն էլ էին նրանց պաշտում»:

55. Եւ նա ասաց, «բայց դուք էլ եւ ձեր հայրերն
էլ մոլորութեան մէջ էիք»:

56. Եւ նրանք ասացին, «դու ճշմարտութիւնով ե-
կար, թէ կատակ անող ես»:

57. Նա էլ ասաց, «ձեր Տէրը երկնքի եւ երկրի Տէ-
րն է որ նրանց ստեղծել է, եւ ես վկայ եմ ձեզ
դէմ»:

58. «Եւ Աստուած վկայ է, որ ես խորամանկութիւն
եմ մտածում ձեր կուռքերի դէմ, երբ դուք ես դար-
ձած հրաժարւէք»:

59. Եւ նա նրանց փշուր փշուր արեց բացի նրանց
մեծիցը, որ նրան դառնան:

60. Նրանք էլ ասացին, «սա ո՞վ է արել մեր աստ-
ուածներին. նա անիրաւ է»:

61. Ասացին, «մի երիտասարդ որին յիշում էին, եւ
որը կոչվում է Աբրահամ»:

62. Նրանք էլ ասացին, «նրան բերէ՛ք ժողովրդի
առաջ, որ նրա դէմ վկայեն»:

62. Եւ նրանք ասացին «դու ես արել այս բանը
մեր աստուածների հետ, ով Աբրահամ»:

64. Նա էլ ասաց, «ոչ, նրանց մեծն է արել այդ
բանը, նրանց հարցրէ՛ք, եթէ խօսող են»:

65. Եւ նրանք հա քաշուեցին իրանց մօտ եւ ասացին, «անա՛ անիրաւուները դուք էք»:

66. Յետոյ իրանց գլուխների վրայ ծուեցին, ասելով, «դու արդէն դիտես, որ սրանք խօսող չեն»:

67. Նա էլ ասաց, «բայց մի՛թէ դուք Սատուածանից ջոկ ուրիշ բաներ կը պաշտէք, որ ձեզ մի բան օգուտ չի տայ եւ վնաս չի տայ. թի՛ւն ձեր վրայ ու նրանց վրայ, որ դուք Սատուածանից զատ պաշտում էք: Մի՛թէ չէք հասկանում»:

68. Եւ նրանք ասացին, «այրեցէ՛ք դրան, եւ օգնեցէ՛ք ձեր աստուածներին, եթէ ուզում էք գործել»:

69. Մենք ասացինք, «ո՛վ կրակ, ցուրտ դարձի՛ր եւ հանդարտ եզի՛ր Արքանամի համար»:

70. Եւ նրանք մի խորամանկութիւն հնարեցին նրա դէմ, բայց մենք նրանց ամօթահար արեցինք»:

71. Եւ մենք ազատեցինք Ղովտին ու բերեցինք այն երկիրը, ուր մենք օրհնութիւններ տւեցինք աշխարհքներին:

72. Եւ մենք տւեցինք նրան իրբեւ ընծայ Իսահակը եւ Յակոբը եւ սրանց ամեն մէկին էլ բարեպաշտ շինեցինք:

73. Եւ մենք նրանց առաջնորդներ արեցինք, որ առաջնորդեն մեր հրամանովը եւ նրանց յայտնութիւն տւեցինք բարիք գործել եւ ազօթքը կատարել, մաքրութեան տուրքը տալ. եւ նրանք մեզ պաշտում էին:

74. Եւ Ղովտին էլ տւեցինք իմաստութիւն եւ գիտութիւն եւ ազատեցինք նրան այն չարութիւններ գործող քաղաքներից, որովհետեւ նրանք մի անզգամ ապականիչ ժողովուրդ էին:

75. Եւ մենք նրան մօցրեցինք մեր ողորմութեան մէջ, որովհետեւ նա բարեպաշտ էր:

76. Եւ Նոյին, երբ առաջուց կանչեց եւ մենք նը-

րան պատասխանեցին եւ աղատեցինք նրան եւ իր ընտանիքը մեծ ցաւից։

77. Երբ մենք նրան օգնեցինք այն ժողովրդից, որ մեր նշանները սուտ էին հանում, որովհետեւ նրանք մի վաս ժողովուրդ էին, եւ մենք նրանց բոլորն էլ խեղդեցինք ջրով։

78. Նաեւ Դաւիթը եւ Սողոմոնը, երբ մի արտի համար դատաստան էին անում, որի մէջ մի գիշեր մի ժողովրդի հօտերը արածել էին. եւ մենք նրանց դատաստանին ներկայ էինք։

79. Եւ մենք հարցրել էինք Սողոմոնին այդ բաները եւ ամեն մէկին աւել էինք իմաստութիւն եւ գիտութիւն, եւ Դաւիթին հնազանդեցրել էինք սարերը, որ փառաբանեն նրա հետ, եւ թռչունները, եւ մենք գործում էինք։

80. Եւ մենք սովորեցրեցինք նրան ձեզ համար զբահներ շինելու արհեստը որ ձեզ պաշտպանէ ձեր չարիքներից. հիմայ դուք շնորհակալ էք։

81. Եւ մի սաստիկ քամի էինք հնազանդեցրել, որ նրա հրամանովը գնում էր այն երկիրը որ մենք օրհնել ենք. եւ մենք ամեն բանը գիտէինք։

82. Եւ սատանաներ էլ, որ նրա համար ծովի մէջ խորասուզեն եւ սրանից զատ էլ ուրիշ գործեր կատարեն, եւ մենք նրանց պահպանում էինք։

83. Եւ Յովբը, երբ կանչեց իր Տիրոջը թէ սինձ ցաւ է հանդիպել, եւ դու ողորմածների ամենաողորմածն ես»։

84. Եւ մենք նրան պատասխան տեցինք եւ վերցրեցինք ցաւը եւ տեցինք նրան իրան ընտանիքը եւ նոյնչափ էլ հետը իրրեւ ողորմութիւն մեր կողմանէ եւ յիշատակ աստուածապաշտների համար։

85. Նաեւ Իսայէլը եւ Իդրիսը եւ Զուլ-Քէֆլը որոնք ամենն էլ համբրողներ էին։

86. Եւ մենք նրանց մտցրել ենք մեր ողորմութեան մէջ, որովհետեւ նրանք բարեպաշտներ էին։

87. Եւ Զուռնունը, որ բարկացած գնաց, եւ կարծում էր, թէ նրա վրայ իշխանութիւն չենք ունենայ, եւ նա աղաչեց խաւարի մէջ, թէ քեզնից զատ մի ուրիշ աստուած չկայ՝ դու սուրբ ես. իսկ ես ամբարիշտ եմ եղել»:

88. Եւ մենք նրան պատասխան տւեցինք եւ նրան ազատեցինք այն վտանգիցը, եւ մենք այսպէս ենք ազատում հաւատացեալներին:

89. Եւ Զաքարիային, երբ կանչեց իր Տիրոջը, թէ «ո՛վ իմ Տէր, ինձ մինակ մի՛ թողուր, որովհետեւ դու ամենալաւ ժառանգն ես»:

90. Եւ մենք նրան պատասխանեցինք եւ տւեցինք նրան Յովհաննէսը եւ յարմարեցրեցինք նրա համար իջած կնոջը, որովհետեւ նրանք ջանք էին անում բաքիք գործելու մէջ եւ աղօթք էին անում զէպի մեզ փափաքով եւ երկիւղով, եւ նրանք մեր առաջին խոնարհում էին:

91. Եւ նա իր կուսութիւնը պահեց, եւ մենք փշեցինք նրա մէջ մեր հոգուցը եւ մենք նրան եւ իրան որդուն մի հրաշք շինեցինք աշխարհների համար:

92. Որովհետեւ այս ձեր կրօնական ժողովուրդը մէկ ժողովուրդ է, եւ ես ձեր Տէրն եմ, ուրեմն ինձ պաշտեցէ՛ք:

92. Բայց նրանք բաժին բաժին արեցին իրանց բանը իրանց մէջ. բայց նրանք պէտք է մեզ մօտ դառնան:

94. Եւ ով որ բարի գործքեր անէ, նա հաւատացեալ է, եւ նրա ջանքը չի ուրացւի, այլ մենք կը գրբենք նրա համար:

95. Բայց նզովք կայ այն քաղաքի վրայ որ բնաջինջ արեցինք. ահա՛ նրանք ետ չեն դառնայ.

96. Մինչեւ Յաճուճ եւ Մաճուճը կը յաղթուեն, եւ ամեն թումբից դուրս կը գան:

97. Եւ մօտեցած կը լինի ճշմարիտ նախասացածքը. եւ այն ժամանակ անհաւատներն աչքերը մտիկ կըրտան:

ասելով, «վա՛յ մեզ, մենք անհոգ էինք այս մասին-
այս՝ մենք անիրաւներ էինք»։

98. «Իսկ դուք եւ ձեր բացի Աստուածանից պաշ-
տածները զժոխքի բաժին էք. դուք նրա մէջն էք գը-
նալու»։

99. Եթէ սրանք աստուածներ լինէին, այնտեղ չէին
գնայ. նրանում ամեն մէկը յաւիտեան կը մնայ։

100. Նրանք այնտեղ պիտի հառաչեն. բայց նրանում
մի բան պիտի չը լսեն։

101. Իսկ նրանք, որոնց համար մենք բարիքներ
ենք սահմանել, նրանք այնտեղից հեռու կը պահեն։

102. Մի ճիշն անգամ չեն լսի, եւ նրանք իրանց
սրտի ուզած տեղը յաւիտեան կը մնան։

103. Ամենամեծ սարսափը նրանց վրայ չի ազդի, եւ
հրեշտակները նրանց կը դիմաւորեն ասելով, «սա ձեր
օրն է որ ձեզ խոստացւած է»։

104. Ո՛յն օրը երկինքը կը ոլորենք ինչպէս մի գըր-
ւած մագաղաթն է ոլորվում։ Ինչպէս որ մենք առաջի
անգամը սկսեցինք ստեղծագործութիւնը. մենք նոյնը
խոստանում ենք խոստմունքով իբրեւ մեր պարտակա-
նութիւն. մենք անպատճառ կատարելու ենք։

105. Մենք արդէն գրել ենք սաղմոսումը յիշատակից
յետոյ թէ, «բարեպաշտ ծառաներս կը ժառանգեն եր-
կիրը»։

106. Իրաւ սրանում յորդորանք կայ աստուածապաշտ
ժողովրդի համար։

107. Եւ մենք քեզ միմիայն իբրեւ ողորմութիւն
ուղարկեցինք աշխարհների համար։

108. Ասա՛, «իրաւի ինձ սա է յայտնել, որ ձեր
Աստուածը մէկ հաս Աստուած է. հիմայ դուք միւս-
լի՞մ էք»։

109. Իսկ եթէ ետ գտնաք, այն ժամանակ ասա՛,
«ես ձեզ հաւասարապէս հրատարակում եմ. եւ չը գի-
տեմ թէ այն որ ձեզ համար գուշակվում է, մօտ է թէ
հեռու»։

110. Նա է որ գիտէ ձեր յայտնի խօսածը եւ այն, որ դուք գաղտնի էք պահում:

111. Նաեւ չը գիտեմ, գուցէ ձեզ համար միայն մի փորձանք է եւ վայելմունք է մի առժամանակ:

112 Նա ասաց, «ո՛վ իմ Տէր, դատի՛ր ճշմարտութիւնով»: Մեր Տէրը ամենողորմածն է, որ օգնող է այն քաների դէժ, որ դուք վերագրում էք նրան:



22) ՍՈՒՐԷ Հ Ա Ճ Ճ՝

Մէքքէական. Եօթանասուն ութը այէ:

Գթած «զորմած Աստուծոյ անունովը:

1. Ո՛վ մարդիկ, վախեցէ՛ք ձեր Տիրոջից, որովհե-
զիրջի ժամայ երկրաշարժը մեծ է:

2. Ոյն օրը տեսնելու էք նրան—ամեն ծեծ աւող
կնիկ մոռանալու է նրան որ ինքը ծեծ է տալիս. եւ
ամեն մի յղի իր յղացածը ծնելու է, եւ տեսնելու ես
մարդկանց հարբած, բայց նրանք հարբած չեն այլ
Աստուծոյ պատիժն է խիստ:

3. Եւ կան մարդիկ, որ Աստուծոյ մասին վիճում են
ստանց գիտութիւն ունենալու, եւ հետեւում են ամեն
մի խարերայ օստանայի:

4. Նրա դէմ գրած է. թէ ով որ նրան ընդունէ իր-
բեւ պաշտպան, նա նրան մոլորեցնելու է եւ առաջ-
նորդելու դէպի դժոխքի տանջանքը:

5. Ո՛վ մարդիկ, եթէ դուք յարութեան մասին կաս-
կած ունիք, իմացէ՛ք որ մենք ձեզ ստեղծել ենք
հողից, յետոյ սերմի ջրից, յետոյ թանձրացած արիւ-
նից յետոյ մի կտոր մսից, որ կերպարանք էր սրա-

ցել կամ կերպարանք չէր ստացել, որ ձեզ բացատրենք. եւ մենք թողնում ենք, մինչեւ մի որոշ ժամանակ մնան մեր կամեցածի պէս արգանդներումը, յետոյ դուրս ենք բերում ձեզ իբրեւ երախաներ, յետոյ հասնում էք ձեր չափահասութեանը: Ձեզնից ոմանք մեռնում են, եւ ոմանք հասնում են կեանքի խեղճութեանը, որ իրանց իմացած բաներիցը մի բան չը գիտեն: Եւ դու տեսնում ես երկիրը չոր. բայց մենք նրա վրայ ջուր ենք իջեցնում, նա շարժում է, ուսչում է եւ ամեն տեսակ պարարտ բոյս է բուսցնում:

6. Սա նրա համար է, որ Աստուած ճշմարիտ է, եւ նա մեռածներին կենդանութիւն է տալիս, եւ նա ամենակարող է:

7. Եւ իրաւ վերջի ժամը դալու է, զբանում կասկած չըկայ. եւ ահա՛ Աստուած յարուցանելու է գերեզմաններում եղողներին. եւ կան մարդիկ, որ Աստուծոյ մասին վիճում են առանց գիտութիւն ունենալու. առանց առաջնորդութեան եւ առանց լուսատու գիրքի:

8. Նա դարձնում է իր գլուխը, որ մոլորեցնէ Աստուծոյ ճանապարհիցը. նրա համար այս աշխարհքում նախատինք կայ, եւ յարութեան օրը մենք նրան ճաշակել ենք տալու այրող տանջանքը:

10. Սա նրա համար է ինչ որ քո ձեռքերը կանխաուղարկել են. եւ իրաւ Աստուած անիրաւ չէ իր ծառաների դէմ:

11. Եւ կան մարդիկ, որ Աստուծուն պաշտում են մէկ ծայրից, եւ եթէ նրան մի բարիք է պատահում, հաստատ մնում է, բայց եթէ մի վտանգ է պատահում, երեսը դարձնում է վնասուելով այս աշխարհքի եւ միւս աշխարհքի վերաբերմամբ. սա յայտնի վնաս է:

12. Նա կանչում է բացի Աստուածանից այնպիսիներին, որ ոչ կարող են նրան վնասել, ոչ էլ օգուտ տալ: Սա մեծ մոլորութիւն է:

13. Նա կանչում է մի այնպիսիներին, որի վնասը ա-

ւելի մօտ է քան թէ օգուտը: Ի՞նչ վատ պաշտպան. եւ ի՞նչ վատ ընկեր:

14. Իրա՛ւ, Աստուած նրանց, որ հաւատում են եւ բարիք գործում, կը մտցնէ դրախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում. ահա՛ Աստուած անում է ինչ որ ուզում է:

15. Ով որ կարծում է, թէ Աստուած նրան ոչ այս աշխարհքում եւ ոչ միւս աշխարհքում չի օգնի, թող մի չուան կապէ մինչեւ երկինքը երկայն, նրա նից կախուի, եւ յետոյ կտրէ եւ մտիկ տայ թէ նրա խորամանկութիւնը կարող է ոչնչացնել այն բանը, որ նրան բարկացնում է:

16. Եւ մենք այսպէս յայտնի նշաններ ենք վար իջեցրել. եւ ահա՛ Աստուած առաջնորդում է իր ուղածին:

17. Ահա՛ նրանք որ հաւատում են, եւ նրանք սը հրէայ են եւ սարէացիք եւ քրիստոնեաները եւ մոզքերը, եւ նրանք որ աստուածընկերներ են ընդունում, — Աստուած յարութեան օրը նրանց մէջը զատաստան է անելու: Աստուած ամեն բանի վկայ է:

18. Մի՞թէ չես տեսնում, որ Աստուծուն երկրպագութիւն են անում երկնքում ու երկրումս եղողները եւ արեգակը եւ լուսինը եւ աստղերը եւ սարերը եւ ծառերը եւ անասունները եւ մարդկանցից շատերը. եւ շատերի վրայ էլ ճշմարտանում է տանջանքը:

19. Եւ որին Աստուած նւաստացնում է, նորան ոչ ով պատուօրը չի շինի: Աստուած անում է ինչ որ ուզում է:

20. Սրանք երկու հակառակ խումբեր են, որ իրանց Տիրոջ մասին իրար հակառակում են. եւ նրանք որ չեն հաւատում, — նրանց գլուխների վրայ եռացող ջուր է թափելու:

21. Նրանով քայքայելու է, ինչ որ կայ նրանց փորերումը եւ նրանց կաշիները, եւ նրանց համար երկաթի սեպեր կան:

22. Ամեն անգամ որ ուզում են այնտեղից դուրս

գալ տանջւելու պատճառով, եւ կը դարձնեն նրա մէջը, այս խօսքերով, թէ «ճաշակեցէ՛ք այրւելու տանջանքը :

23. Բայց Աստուած նրանց, որ հաւատում են եւ բարիք գործում, կը մտցնէ դրախաների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում, զարդարած նրանցում ոսկի ապարանձաններով եւ մարգարիտներով. եւ նրանց հագուտը այնտեղ մետաքսեայ է :

24. Եւ նրանք ման են ածւում անուշ խօսքով եւ ման են ածւում օրհնեալ ճանապարհի վրայ :

25. Ան՝ նրանք, որ չեն հաւատում եւ հեռանում են Աստուծոյ ճանապարհիցը եւ սուրբ տաճարիցը, որ մենք նրան հաւատարապէս ամեն մարդու համար ենք որոշել, թէ նրանում նստող թէ օտար լինի :

26. Եւ ով ուզէ նրանում պղծութիւն գործել անխառնար, մենք նրան ցաւալի տանջանք ճաշակել կրտանք :

27. Եւ երբ մենք այդ տան տեղը Արբանամին յատկացրեցինք իբրեւ բնակատեղի, թէ ինձ հետ մի բան ընկեր մի՛ շինիր եւ մաքրի՛ր իմ տունը նրա շուրջովը վազողների համար :

28. Եւ մարդկանց մի ուխտապնայցութիւն հրատարակի՛ր, եւ քեզ մօտ գտն ոտքով կամ ամեն տեսակ նիհար ուղտի վրայ, ամեն տեսակ խոր ձորերից գալով :

29. Որ իրանց եղած օգուտների համար վկայութիւն տան, եւ Աստուծոյ անունը յիշեն որոշւած օրերում այն շորտտանի անասունների համար, որ նա նրանց տել է իբրեւ կերակուր. թէ կերէ՛ք դրանից եւ կերակրեցէ՛ք թշուառներին եւ ազքատներին :

30. Յետոյ մարմնի ազտերը մաքրեն եւ իրանց ուխտերը կատարեն եւ հին տաճարի շուրջովը վազեն :

31. Այսպէ՛ս. Եւ ով որ Աստուծոյ սրբարանները մեծարէ, նրա համար բարիք կայ իր Տիրոջ մօտ : Ամեն անասուն մաքուր է ձեզ համար բացի նրանից, որ

կարդացել է ձեզ: Ուրեմն կուռքերի պղծութիւնիցն զգուշացէ՛ք. եւ զգուշացէ՛ք ստախօսութիւնից:

32. Ուղղափառ եղէ՛ք Աստուծոյ դէմ առանց աստուածընկերներ ընդունելու: Բայց ով որ Աստուծուն ընկերներ ընդունէ, նա նման է նրան, որ երկնքիցը վար ընկնէ եւ թաչունները նրան գիշատեն կամ քամին նըրան մի հետու տեղ տանէ:

33. Այսպէս Բայց ով որ Աստուծոյ ծէսերը մեծարէ, ահա՛ դրանք սրտի երկիւղածութիւնից է:

34. Նրանցում ձեզ համար մի առ ժամանակ օգուտներ կան, յետոյ պէտք է հին տան մօտ մորթւին:

35. Եւ ամեն մի ազգի համար մենք ծէսեր ենք շինել, որ Աստուծոյ անունը յիշեն նրանց իբրեւ ասկրուստ արած չորստասնի անասունների համար. եւ ձեր Աստուածը մէկ Աստուած է. նրան անձնատուր եղէ՛ք. եւ աւետիք տո՛ւր այն խոնարհներին,

36. Որոնց սրտերը երկիւղով լցվում է Աստուած յիշուելիս, եւ որոնք իրանց պատահածներին համբերում եմ, եւ որոնք կատարում են աղօթքը եւ մեր իրանց պարգեւածներիցը ողորմութիւն են տալիս:

37. Եւ ողտերն էլ—մենք նրանց էլ ենք ձեզ համար իբրեւ Աստուծոյ կանոններ շինել. նրանցում ձեզ համար բարիք կայ. ուրեմն յիշեցէ՛ք Աստուծոյ անունը իրանց վրայ. երբ նրանց ոտները կարգին են, եւ երբ մեռած վար ընկնեն, կերէ՛ք նրանցից եւ կերակրեցէ՛ք զո՛հ եղողին եւ զժգոհին: Մենք այսպէս ընտելացրել ենք նրանց ձեզ, որ զուք շնորհակալ լինէ՛ք:

38. Ոչ նրանց միտը եւ ոչ նրանց արեւնը ընդունելի է Աստուծոյ. բայց միայն ձեր երկիւղածութիւնն է նրան ընդունելի: Այսպէս մենք ընտելացրել ենք նըրանց ձեզ որ Աստուծուն մեծացուցանէք նրա համար, որ ձեզ ուղիղ առաջնորդել է. եւ աւետիք տո՛ւր բարեզործներին.

39. Թէ Աստուած հետի է անելու հաւատացեալներ

բիցը՝ որովհետեւ Աստուած ոչ մի խարդախ ասպերախտին չի սիրի:

40. Հրաման է տրւած նրանց, որ անխրաւութիւնս են կրել, որ պատերազմեն՝ իրաւ Աստուած կարող է օգնել նրանց:

41. Նրանք, որ առանց իրաւունքի դուրս են հանուել իրանց երկրբիցը միմիայն նրա համար, որ ասում էին «մեր Տէրը Աստուած է»: Եւ եթէ Աստուած հետացրած չը լինէր մարդկանց իրարբից, անպատճառ քանդուած կը լինէին վանքերը, եկեղեցիները, ժողովարանները եւ մզկիթները, ուր շատ յիշում է Աստուծոյ անունը՝ եւ Աստուած կ'օգնէ նրան, որ օգնում է Աստուծուն, որովհետեւ Աստուած հզօր զօրաւոր է:

42. Երբ նրանց հաստատենք երկրումը, նրանք կը կատարեն աղօթքը եւ կըտան մաքրութեան տուրքը եւ կը հրամայեն օրինաւորը եւ կարգիլին վատը: Եւ զորձերի վերջը Աստուծունն է:

43. Եւ եթէ նրանք քնդ ստախօս են համարում, արդէն առջ էլ ստախօս են համարել Նոյի ժողովուրդը եւ Աղացիներին եւ Սա՛ուդցիներին եւ Արրահամի ժողովրդին եւ Դովաի ժողովրդին եւ Մադիանի մարդկանցը՝ եւ Մովսէսն էլ ստախօս համարուեց, եւ ես ժամանակ էի աւել անհաստներին. բայց յետոյ պատժեցի նրանց՝ եւ ի՛նչպէս եղաւ իմ պատուհասը:

44. Եւ որքա՛ն քաղաքներ ենք բնաջինջ արել. որովհետեւ անխրաւներ էին, որոնք հիմայ իրանց հիմքերի վրայ աւերակներ են՝ փչացած հորհ'ր եւ քանդուած զղեակներ:

45. Նրանք երկրումը ման չե՞ն զալիս, որ նրանց սրտերը խելօքանան նրանցով, կամ ականջները լսեն այդ բաները: Իրաւ նրանց աչքերը կոյր չեն. բայց կոյր են նրանց սրտերը, որ իրանց կուրձքերումն են:

46. Եւ նրանք շտապեցնում են քեզ, որ պատիժը բերես՝ բայց Աստուած երբէք չի փոխի իր խօսքը՝ եւ

անհա՛ մէկ օրը քո Տիրոջ մօտ հաղար տարու չափ է, որք
դուք հաշուում էք:

47. Եւ որքա՛ն քաղաքների ես ժամանակ տւեցի որ
անիրաւ էր, բայց յետոյ պատժեցի նրանց, եւ նրանք
ինձ մօտ պիտի գան:

48. Ասա՛, «ո՛վ մարդիկ, ես ձեզ համար միայն մի
որոշ խրատիչ եմ»:

49. Իսկ նրանք որ հաւատում են եւ բարիք գործում
նրանք թողութիւն ունեն եւ գովական ապրուստ:

50. Իսկ նրանք որ աշխատում են որ մեր նշանները
տկարայնեն. նրանք կբակի ընկերներն են:

51. Եւ մենք քեզնից առաջ ոչ մի ուղարկւած եւ ոչ
մի մարգարէ չենք ուղարկել, որ երբ ուզում էր կար-
գալ, սատանան նրա կամքին մէջը բան գցած չըլինէր.
բայց ւստուած հերքում է սատանային գցածը. յետոյ
Աստուած վճռում է ըր խօսքերը, եւ Աստուած գիտուն
խմաստուն է,

52. Որ Աստուած սատանայի գցածը փորձութիւն է
չիհում նրանց համար. որոնց սրտերում հիւանդութիւն
կայ եւ նրանց սրտերի խստութիւնը. եւ իրաւ անի-
րաւները մեծ սխալմունքի մէջ են.

53. Եւ որ ճանաչէ նրանց. որոնց գիտութիւն է
տրւած, որովհետեւ ճշմարտութիւնը քո Տիրոջ կողմանէ
է, եւ որ նրան հաւատան եւ իրանց սրտերը հանդար-
տի, եւ որովհետեւ Աստուած առաջնորդում է հաւատա-
ցողներին գէպի ուղիղ ճանապարհը:

54. Եւ նրանք, որ չեն հաւատում, չեն դադարի
կասկածելուց մինչեւ որ կըգայ վերջի ժամը յանկար-
ծակի, կամ կըգայ այն աւերիչ օրը:

55. Այն օրը իշխանութիւնը Աստուծունը կը լինի,
որ նրանց մէջ կը դատէ. իսկ նրանք որ հաւատում են
եւ բարիք գործում, նրանք երջանիկ դրախտներում
կը լինեն:

56. Իսկ նրանք, որ չեն հաւատում եւ մեր նշաննե-

քին ասում են թէ սուտ է, նրանց համար ամօթալից տանջանք կայ:

57. Եւ նրան, որ դաղթում են Աստուծոյ ճանապարհի համար, եւ յետոյ սպանվում են կամ մեռնում Աստուած նրանց գիղեցիկ պարգեւներով կը պարգեւատրէ, որովհետեւ Աստուած ամենալաւ պարգեւողն է:

50. Նա նրանց մի մուտքով է մտցնելու. որին նրանք հաւանելու են: Իրաւ Աստուած գիտուն հեղ է:

59. Այսպէ՛ս: Ով որ վրէժ առնէ իրան հղած անիրաւութեան չափ եւ յետոյ նրա վրայ յարձակի, Աստուած այնպիսուն անպատճառ կ'օգնէ. որովհետեւ Աստուած ներող թողող է:

60. Այսպէ՛ս: Որովհետեւ նա մտցնում է գիշերը ցերեկի մէջ եւ մտցնում է ցերեկը գիշերի մէջ, եւ իրաւ Աստուած լսող տեսնող է:

61. Այսպէ՛ս: Ըշմարիտը Աստուած է եւ ինչ որ բացի նրանից աղօթքով կանչում են, ունայն է, եւ բարձրը եւ մեծը Աստուած է:

62. Մի՞թէ չես տեսնում, որ Աստուած երկնքից ջուր է իջեցնում եւ երկիրը կանաչում է. որովհետեւ Աստուած զթոտ տեղեակ է:

63. Երկնքումը եւ երկրումը եղածը նրանն է. եւ Աստուած է անկարօտ օրհնեալը:

64. Մի՞թէ չես տեսնում, որ Աստուած ձեզ համար հնազանդ է շինել ինչ որ կայ երկրի վրայ եւ նաւը, որ սահում է նրա հրամանովը ծովի վրայ, եւ նա պահում է երկինքը, որ երկրի վրայ չ'ընկնի, եթէ նրա կամքը չը լինէր. որովհետեւ Աստուած մարդկանց զբթած ողորմած է:

65. Նա է, որ ձեզ կենդանացնում է, յետոյ մեռցնում եւ յետոյ կենդանացնում. բայց մարդս ապերախտ է:

66. Ամեն մի ազգի համար մենք ձէսեր ենք շինել, նրանք կատարում են այն ձէսերը. թո՛ղ նրանք այս քանում քե՛զ հետ չը վիճեն, եւ դու աղօթի՛ր քո Տի-

բողջը, որովհետեւ դու ուղիղ առաջնորդութեան վրայ ես :

67. Եւ եթէ նրանք քեզ հետ վիճեն, դու առա՛, «Աստուած գիտէ ձեր արածը» :

68. «Յարութեան օրը Աստուած վճռելու է ձեր մէջը այն բանը, որի համար դուք անհամաձայն էք» :

69. Մի՞թէ :ը գիտես, որ Աստուած գիտէ թէ ինչ կայ երկնքումը կամ երկրի վրայ. ահա՛ սա մի գրքում կայ, ահա՛ սա զիւրին է Աստուծոյ համար :

70. Եւ նրանք պաշտում են բացի Աստուածանից ուրիշ բաներ, որոնց մասին նրանց համար հրաման չէ իջել եւ որոնց մասին նրանք գիտութիւն չ'ունեն. եւ անիրաւներին օգնող չի լինի :

71. Եւ երբ մեր որոշ նշանները կարգացվում են նըրանց, դու տեսնում ես տնհաւատների երեսների վրայ ուրացած թիւն, եւ քիչ է մնում որ մեր նըշանները նրանց կարգացողների վրայ յարձակեն : Ասա՛, «ես նրանից աւելի չարը ձեզ ասե՞մ. այն կրակը, որ Աստուած անհաւատներին կանխաւ ասել է. եւ ի՛նչպէս վատ ընթացք է» :

72. Ո՛վ մարդիկ, մի առակ է ասվում. ականջ դրէ՛ք դրան : Այն որ դուք Աստուածանից ջոկ կանչում էք ազօթքով, նրանք մի ճանճ անգամ ստեղծել չեն կարող, եթէ ամենն էլ միասին հոււաքեն դրա համար. եւ եթէ ճանճը նրանցից մի բան խլէ, նրանք չեն կարող նրանից ետ առնել : Տկար է ազօթքով պահանջողը եւ նա որից պահանջում է :

73. Նրանք Աստուծուն չեն գնահատում ինչպէս որ գնահատելն արժան է : Իրաւ Աստուած հօր զօրաւոր է :

74. Աստուած հրեշտակներիցը եւ մարդկանցիցը ընտրում է ուղարկածներ, որովհետեւ Աստուած լսող տեսնող է :


75. Նա գիտէ նրանց առաջին եղածը եւ նրանց ետեւ եղածը. եւ բաները Աստուծոյ մօտ են ետ դառնալու :

76. Ո՛վ հաւատացեալներ, ծուեցէ՛ք, երկրպագեցէ՛ք

և պաշտեցէ՛ք ձեր Տիրոջը, և բարիք գործեցէ՛ք որ
երջանիկ լինէք:

77. Եւ արդար ջանքով աշխատեցէ՛ք նրա համար պա-
տերազմելով, նա է ձեզ ընտրել. և նա ձեզ համար կը-
րօնքի մասին մի դժւարութիւն չի չինի: Ձեր հօր Աբ-
րահամի կրօնքն է, և նա ձեզ միւսլիմ է կոչել:

78. Առաջ եւ հիմայ, որ մարգարէն ձեզ դէմ վկայ
լինի և զուք վկաներ լինէք մարդկանց դէմ, և կա-
տարէք ազօթքը և տաք մաքրութեան տուրքը և յա-
րէք Աստուծուն. նա է ձեր պաշտպանը. և ի՛նչ լաւ
պաշտպան, և ի՛նչ լաւ ընթացք:



23) ՍՈՒՐԷ՝ ՄԷՍՄԸՆԻՆ

Մէքքէական. հարիւր տասնութ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Արդէն երջանիկ են հաւատացեալները,
2. Որոնք իրանց ազօթքներումը խոնարհվում են,
3. Եւ որոնք մերժում են զուր խօսքերը,
4. Եւ որոնք կատարում են մաքրութեան տուրքը:
5. Եւ որոնք իրանց սեռական անդամներին զզու-
շութիւն են անում, որ չըխառնակւեն,

6. Բայ ի իրոնց կնիկները և իրանց ստրկուհի-
ները հետ, որովհետեւ այդ բանում նրանք պախարա-
կելի չեն:

7. Բայց ով որ սրանից աւելի բան պահանջէ, այն-
պիսիքը պատ իրանազանց են:

8. Եւ նրանք, որ իրանց յանձնուած բաները եւ իրանց ուխտերը պահում են՝

9. Եւ որոնք իրանց աղօթքներումը յարատեւում են՝

10. Դրանք են ժառանգողները՝

11. Որ ժառանգելու են զբախտը եւ մնալու նրանում յաւիտեան:

12. Մենք ստեղծել ենք մարդը մաքրւած կաւից,

13. Յետոյ նրան շինել ենք սերմի ջուր մի որոշ տեղ,

14. Յետոյ սերմի ջուրը շինել ենք հաստացած արիւնից մի կտոր միս եւ շինեցինք այն մի կտոր միսիցը ոսկորներ եւ ծածկեցինք ոսկորները միտով եւ յետոյ մի ուրիշ ստեղծուած շինեցինք: Եւ օրհնեալ լինի ամենափառաւոր Արարիչը:

15. Յետոյ դուք այնուհետեւ պէտք է մեռնէք:

16. Բայց յետոյ յարութեան օրը դուք պէտք է յարութիւն առնէք:

17. Բայց մենք արդէն եօթը կարգ երկինքներ ենք ստեղծել ձեզնից վեր, եւ մենք աննոյ չէինք ստեղծելուց,

18. Եւ մենք երկնքիցը ջուր իջեցրեցինք շափով եւ նրան թողեցինք որ մնայ երկրի վրայ, եւ մենք կարող ենք նրան կրկին վեր առնել:

19. Եւ մենք նրանով ձեզ համար արմաւի եւ խաղողի այգիներ ենք շինում, որոնցում կան շատ պլուտուղներ, որոնցից դուք ուտում էք:

20. Եւ մի ծառ, որ բուսնում է Սինայ սարիցը, որ ձէթ է բղխում եւ հիւթ՝ ուտելու համար:

21. Եւ իրաւ անասունների մէջ էլ ձեզ համար խրատ կայ: Մենք նրանց փորերումը եղածներիցը ձեզ խմելիք ենք տալիս, եւ նրանցից ձեզ համար շատ օգուտներ կան, եւ դուք նրանցից ուտում էք:

22. Եւ նրանց վրայ եւ նաւերի վրայ նստած գնում էք:

23. Եւ մենք արդէն Նոյին ուղարկեցինք իրան ժո-

զովրդի մօտ, եւ նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, պաշտեցէ՛ք Աստուծուն. զուք բաց ի նրանից ուրիշ Աստուած չունիք. զուք մի՞թէ չէք վախնում»:

24. Իսկ նրա ժողովրդի մեծամեծները, որ չէին հաւատում, ասացին, «սա մի բան չէ եթէ ոչ ձեզ նման մի մարդ. նա ուզում է ձեզնից գերազանցել. եւ եթէ Աստուած կամեցած լինէր, մի հրեշտակ ուղարկած կը լինէր. մենք մեր վազեմի հայրերից այսպիսի բան չենք լսել»:

25. «Նա մի ուրիշ բան չէր եթէ ոչ մի մարդ, որի մէջ գուեր կան, եւ մի առ ժամանակ սպասեցէ՛ք նրա նկատմամբ»:

26. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ինձ օգնի՛ր այն բանի դէմ, որով ինձ ստախօս են համարում»:

27. Եւ մենք նրան յայտնութիւն տւեցինք, թէ տապանը չինի՛ր մեր աչքի առաջ. եւ մեր յայտնութեան համեմատ: Եւ երբ մեր որոշումը կը գայ եւ թռնիրը կը վառին,

28. Այն ժամանակ վեր ա՛ռ ամեն տեսակից երկու երկու եւ քո ընտանիքին, բացի նրանից, որի համար արդէն կանխասացութիւն է եղել. եւ զու ամբարիշտանքի համար ինձ մի՛ գիմիր, որովհետեւ նրանք պէտք է ճրով խեղդուեն:

29. Եւ զու եւ քեզ հետ եղողները տապանը կը մըտնէք, այն ժամանակ ասա՛. «վառք լինի Աստուծուն որ մեզ ազատեց անիրաւ ժողովրդից»:

30. Եւ ասա՛, «ո՛վ իմ Տէր, ինձ մի օրհնեալ իջեւանում իջեցրո՛ւ. որովհետեւ զու ամենաբարի իջեցնող ես »:

31. Անա՛ սրանում նշաններ կան, եւ մենք նրանց փորձում էինք:

32. Այնուհետեւ մենք նրանցից ետքը մի ուրիշ սերունդ կազմեցինք:

33. Եւ մենք նրանցից գլանց մէջը մի մարդարէ ուղարկեցինք թէ Աստուծուն պաշտեցէ՛ք. զուք նրա-

նից զատ Աստուած չունէր. մի՞թէ չէք վախենում»:

34. Եւ նրա ժողովրդի մեծամեծները, որ չէին հաւատում եւ միւս աշխարհքի գոյութիւնը սուտ էին համարում եւ մենք իրանց առատ պարգևներ էինք տուել այս աշխարհքի կեանքի մէջ, ասացին, «սա միայն ձեզ պէս մի մարդ է, որ նրանից է ուսում, ինչ որ դուք էք ուսում»:

35. «Եւ ձեր խմածիցն է խմում»:

36. «Եւ եթէ հնազանդէք ձեզ նման մի մարդու, այն ժամանակ դուք մլասուածներ էք»:

37. Արդեօ՞ք ձեզ նրանով է վախեցնում, թէ երբ մեռնէք ու հող եւ ոսկորներ դառած լինէք, դուք յարութիւն էք առնելու»:

38. «Երբէ՛ք. երբէ՛ք. ինչ որ ձեզ սպանում է»:

39. «Միմիայն մեր այս աշխարհքի կեանքը կայ. մենք մեռնում ենք եւ ապրում ենք. եւ մենք յարութիւն չենք առնելու»:

40. «Սա միայն մի մարդ է. որ Աստուծոյ մասին սուտեր է հնարում, եւ մենք դրան չենք հաւատում»:

41. Նա էլ ասաց, «ս'վ իմ Տէր, ինձ օղնի՛ր այն բանի մէջ, որի մասին ինձ ստախօս են համարում»:

42. Եւ նա ասաց «մի քիչ ժամանակ միայն... եւ նրանք կը զզջան»:

43. Եւ փոթորիկը յափշտակեց նրանց իրաւամբ, եւ մենք նրանց ցնդող փրփուրի պէս շինեցինք: Ուրիմն կորչէ՛ ամբարիշտ ժողովուրդը:

44. Նրանցից յետոյ ուրիշ սերունդներ կազմեցինք:

45. Մի ազգ իրան վախճանիցը առաջ չի անցնի եւ ետ չի մնայ:

46. Յետոյ մենք ուղարկեցինք մեր մարգարէներին իրար ետեւից՝ Ամեն անգամ, որ մի ազգի մօտ գալիս էր նրա մարգարէն, նրանք ստախօս էին համարում նրան. եւ մենք մէկը միւսի ետեւից ուղարկեցինք եւ

նրանց պատմութեան նիւթ շինեցինք: Բայց թող կորչի՞ն անհաւատ ազգերը:

47. Յետոյ ուղարկեցինք Մովսէսին եւ նրա եղբայրը Ահարոնին մեր նշաններովը եւ յայտնի իշխանութիւնով:

48. Փարաւօնի մօտ եւ նրա մեծամեծների մօտ, բայց նրանք ամբարտաւանացան եւ հպարտ մարդիկ եղան:

49. Եւ ասացին, «մենք մեզ նման երկու մարդկանց հաւատանք, մինչդեռ նրանց ազգը ծառայում է մեզ»:

50. Եւ նրանց երկուսին էլ ստախօս համարեցին, իսկ իրանք էլ բնաջինջ եղան:

51. Բայց մենք Մովսէսին տեցինք գիրքը, որ ուղիւ ճանապարհով գնան:

52. Եւ մենք Մարիամի սրդուն եւ նրա մօրը նշան շինեցինք եւ նրանց մի բարձր տեղ հաստատ եւ որոշ բնակարան տեցինք:

53. Ո՛վ մարգարէներ, կերէ՛ք բարիքներից եւ բարի բան գործեցէ՛ք: Ես ձեր արածը գիտեմ:

54. Եւ ահա՛ ձեր այս ազգը մէկ ազգ է, եւ ես ձեր Տէրն եմ, ուրեմն ինձնից վախեցէ՛ք:

55. Բայց նրանք իրանց կրօնքը հերձաւորի բաժանեցին եւ ամեն մի խումբ իր մօտ ունեցածովն ուրախանում էր:

56. Բայց դու թող զրանց իրանց մոլորութիւններումը մի առ ժամանակ:

57. Մի՞թէ կարծում են, որ մենք նրանց առատապէս ստացւածքներ եւ որդիք ենք տեւ,

58. Եւ նրանց դէպի բարիք ենք թելադրում. բայց նրանք չեն հասկանում:

59. Իսկ նրանք, որ իրանց Տիրոջ երկիւղիցը դողում են,

60. Եւ նրանք, որ իրանց Տիրոջ նշաններին հաւատում են,

61. Եւ նրանք, որ իրանց Տիրոջը ընկերներ չեն շինում:

62. Եւ նրանք, որ տալիս են ինչ որ մենք ենք ի-

քանց տեւի, եւ նրանց սրտերը զողում են, որովհետեւ իրանք ետ են դառնալու իրանց Տիրոջ մօտ,

63. Նրանք շուտով բարեխնորհի են հասնելու, եւ նրանք այդ բաներում մրցում են միմեանց հետ:

64. Եւ մեկք ոչ մի անձից մի բան չենք պահանջում նրա կարողութիւնիցը դուրս. եւ մեզ մօտ կայ մի գիրք, որ ճշմարտութիւնն է խօսում եւ նրանց անիրաւութիւն չի լինի:

65. Սակայն նրանց սրտերն այս բանի նկատմամբ սխալման մէջ են, եւ նրանք սրանից դուրս գործքեր ունէին, որ իրանք գործում էին:

66. Մինչեւ մինք նրանց գլխաւորներին պատիժով պատուհասեցինք, որ նրան գոռում էին:

67. Մի՛ գոռաք այսօր՝ դուք մեզնից օգնութիւն չէք ստանայ:

68. Արդէն իմ նշանները ձեզ համար կարգացում էին, բայց դուք ետ ետ էիք գնում:

69. Նրա գէժ հպարտանալով գիշերներն ուրիշ պարագ զրոյցներ էիք անում:

70. Մի՞թէ նրանք չեն մտածում այն խօսքի վրայ, կամ նրանց մի բան է տրեւի. որ չէ տրեւի իրանց նախնի հայրերին:

71. Կամ չե՞ն ճանաչում իրանց մարգարէին, եւ նրան ուրանում են:

72. Կամ ասո՞ւմ են, թէ նրանում դեւեր կան. սակայն նա ճշմարտութեամբ է եկել նրանց մօտ բայց նրանցից շատերը զզվում են ճշմարտութիւնիցը:

73. Եւ եթէ ճշմարտութիւնը հետեւէր նրանց հաճոյքներին, այն ժամանակ երկինքը եւ երկիրս եւ նրանցում եղածը կը փճանար: Բայց մինք նրանց տեւի ենք իրանց խրատը, եւ նրանք մերժում են իրանց խրատը:

74. Կամ դու նրանցից ծախք ես ուզում. բայց քո Տիրոջ ոռճիկը աւելի լաւ է. որովհետեւ նա ամենալաւ կերակրողն է:

75. Թէեւ դու նրանց կտնչում ես ուղիղ ճանապարհի,
76. Բայց նրանք որ միւս աշխարհքին չեն հաւատում հրաժարում են ճանապարհից:

77. Եւ եթէ նրանց գթայինք եւ նրանցից վերցընէինք այն վտանգը, որ ունէին, նրանք ապուշութեամբ կը յամառէին իրանց ազատամբութեան մէջ:

78. Բայց մենք նրանց պատժեցինք տանջանքով, իսկ նրանք չը խոնարհեցին իրանց Տիրոջ առաջին եւ չը մեղմացան:

79. Մինչեւ անգամ երբ նրանց վրայ մի խիստ պատիժի դուռ բացեցինք, այն ժամանակ նրանք դրանով յուսահատեցին:

80. Նա է, որ ձեզ լսողութիւն եւ տեսողութիւն եւ սրտեր է տել. բայց քիչեր են շնորհակալները:

81. Նա է որ ձեզ այս երկրիս մէջ գոյացրել է, եւ դուք նրա մօտ էք ժողովուելու:

82. Եւ նա է կենդանացնողը եւ մեռցնողը, եւ գիշեր ու ցերեկի փոփոխումը նրանն է. մի՞թէ չէք հասկանում:

83. Բայց նրանք ասում են, ինչպէս որ ասել են նախնիքը.

84. Ասում են, «մի՞թէ երբ մեռած եւ հող ու ոսկորներ դառած լինենք, մենք յարութիւն կառնենք»:

85. «Այս բանը արդէն վաղուց մեզ եւ մեր հայրերին խոստացած է, բայց սա միայն նախնիքների ասասպել է»:

86. Ասա՛. «ո՛ւմ է երկիրը եւ ինչ որ կայ նրանում. ի՞նչ գիտէք»:

87. Նրանք ասելու են, «Աստուծունը». ասա՛, «ապա չէ՞ք մտածում»:

88. Ասա՛, «ո՞վ է եօթը երկիրքների Տէրը եւ մեծ աթոռի Տէրը»:

89. Նրանք ասելու են, «Աստուծունն է». ասա՛, «ապա դուք չէ՞ք վախենում»:

90. Ասա՛. «ս մեն բանի իշխանութիւնը ո՞ւմ ձեռ-

քին է, որ ինքը պաշտպանում է, իսկ չի պաշտպանում. եթէ գիտէք» :

91. Նրանք ասելու են «Աստուծունը. ասա՛, «ասպ ինչպէս էք կախարդուել» :

92. Սակայն մենք ճշմարտութեամբ ենք եկել իրանց մօտ, իսկ իրանք ստախօսներ են :

93. Ալլահը որդի չ'ունէ եւ նրա հետ միասին ուրիշ Աստուած չըկայ. եթէ ոչ ամեն մի աստուած իր սպեղծածը վեր կ'առնէր եւ նրանցից մէկը միւսի վրայ կը բարձրանար: Աստուած մաքուր է այն բանից որ վերադրում են նրան :

94. Նա գիտէ գազտնին եւ յայտնին, եւ նա բարձր է նրանից, որ ընկերներ են շինում նրա համար :

95. Ասա՛, «ո՛վ Տէր ցո՞յց կրտաս, ինչ որ նրանց սպառնացւած է» :

96. «Ո՛վ իմ Տէր, ինձ ամբարիշտ ազգի մէջ մը՛ գնի՛ր» :

97. Էւ մենք կարող ենք քեզ ցոյց տալ այն, որ բանց սպառնացել ենք :

98. Բայց դու հոռացրո՛ւ չարիքը բարի եզանակով, մենք գիտենք թէ նրանք ինչ են որակում :

99. Եւ ասա՛, «ո՛վ իմ Տէր, ես սատանաների փորձութիւններիցը քեզ մօտ եմ փախչում» :

100. «Ես քեզ մօտ եմ ապաստանում, ո՛վ իմ Տէր, երբ նրանք ներկայանում են» :

101. «Ի՞նչեւ մահը նրանցից մէկին բռնէ, նա կ'ուսէ «ո՛վ իմ Տէր, ինձ ե՛տ դարձուր» :

102. «Որ բարի բաներ գործեմ, որ ձգած էի» : Բընա՛ւ. սա այն խօսքն է, որ նա ասելու է. եւ նրանից յետոյ մի անդունդ կայ մինչեւ այն օրը որ յարութիւն կ'առնեն :

103. Եւ երբ փողը փչւի, այն ժամանակ այլեւս բարեկամութիւն չի լինի նրանց մէջ, եւ նրանք իրար չեն հարցնի :

104. Եւ որոնց կշիռքը ծանրացաւ, նրանք են երջանիկները

105. Իսկ որոնց կշիռքը թեթեւացաւ, նրանք են որ իրանց հոգիներին վնասել են, նրանք միշտ կը մնան դժոխքումը:

106. Կրակը խանձելու է նրանց երեսները եւ նրանք ծումսելու են իւրեք բերանները նրանում:

107. Ձեզ չը կարգացւեցի՞ն իմ նշանները, որ դուք նրանց սուտ էիք համարում:

108. Նրանք էլ կ'ասեն, «ո՛վ մեր Տէր, մեր թշուառութիւնը յաղթում էր մեզ, եւ մենք մի մոլորած ժողովուրդ էինք»:

109. «Ո՛վ մեր Տէր, մեզ այտուցից հանի՛ր. եւ եթէ կրկին անենք, այն ժամանակ մենք ամբարշտներ ենք»:

110. Նա էլ ասելու է, «կորուեցէք դրա մէջ, եւ մի՛ խօսէք»:

111. Այն ժամանակ իմ ծառաներից մի խումբ կար, որ ասում էր, «ո՛վ մեր Տէր, մենք հաւատում ենք, ների՛ր մեզ եւ ողորմի՛ր մեզ, եւ դու ամենողորմածն ես»:

112. Բայց դուք նրանց ծաղրի էք բռնել, մինչեւ նրանք ձեզ մոռացրեցին ինձ յիշելը, եւ դուք նրանց վրայ ծիծաղում էիք:

113. Իսկ ես այսօր վարձատրում եմ նրանց համբեցութեան համար, որովհետեւ նրանք երջանիկ են:

114. Նա ասելու է, «քանի՞ տարի մնացիք երկրումը»:

115. Նրանք էլ կ'ասեն, «մենք մնացինք մի օր կամ օրւայ մի մասը. բայց հարցրա՛ւ հաշիւ անողներին»:

116. Նա էլ կ'ասէ, «դուք միայն մի քիչ էք մնարել եթէ դուք իմանայիք»:

117. Բայց մի՞թէ դուք կարծում էիք, թէ մենք ձեզ դարտակ տեղն ենք ստեղծել, եւ թէ դուք ետ չէք դառնալու մեզ մօտ: Սակայն բարձր է Աստուած, ճշը-

մարիտ թագաւորը, նրանցից զատ ուրիշ Աստուած չըկայ, որ է աթոռի փառաւոր Տէրը. եւ ով որ Ալլահի հետ միասին ուրիշ Աստուծոյ էլ աղօթք անէ, սրի համար նա մի փաստ չ'ունէ. այն ժամանակ նրա հաշիւը մատուծոյ մօտ է, որովհետեւ անհաւատները երջանիկ չեն լինի:

118. Եւ ասա՛, «ո՛վ ի՞մ Տէր, ների՛ր եւ ողորմի՛ր եւ դու ամենողորմած Լս»:



24) ՍՈՒՐԷՆ Ն ՈՒՐ.

Մէդիհնէական, վաթսուն չորս այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մի սուրէ, որ մենք իջեցրել ենք եւ նրան պարտաւորիչ արել, են մենք նրան իջեցրել ենք, որի մէջ կան յայտնի նշաններ, որ մտածէք:
2. Շնացող կնկան եւ շնացող մարդուն՝ ամեն մէկին հարիւր գաւազան զարկէ՛ք իբրեւ Աստուծոյ դատաստան, եթէ դուք հաւատում էք Աստուծուն եւ միւս աշխարհքին. եւ հաւատացեալներից մի խումբ ներկայ լինի նրանց այդ պատժին:
3. Շնացող մարդը պէտք է միմիայն մի շնացող կամ կռապաշտ կնկան հետ ամուսնանայ. եւ շնացող կնկայ հետ էլ միմիայն մի շնացող կամ կռապաշտ մարդ ամուսնանայ. եւ սա արդիււած է հաւատացեալներին:
4. Եւ նրանք, որ մաքուր կնիկներին զրպարտում են եւ յետոյ չեն կարողանում չորս վկաներով ապացուցանել, նրանց զարկէ՛ք ութսուն գաւազան եւ նրանց վկայութիւնը յախտեան մի՛ ընդունէք. որովհետեւ նրանք ապականիչներ են:

5. Բացի նրանցից, որ կ'ապաշխարեն զբանից լետոյ եւ կ'ուղղուեն, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

6. Նրանք, որ զբազարտում են իրանց կնիկներին եւ իրանցից զատ վկաներ չ'ունեն, այն ժամանակ նրանցից մէկը պէտք է չորս անգամ երգում անէ Աստուծով, թէ ինքը ճշմարիտ է:

7. Եւ հինգերորդը սա լինի թէ, Աստուծոյ անէծքը նրա վրայ լինի՛, եթէ նա ստախոս է:

8. Սակայն այն կնկանից էլ պատիժը վեր կ'առնուի, եթէ նա էլ չորս անգամ Աստուծով նրգում անէ, թէ նա սուտ է ասել:

8. Եւ իններորդը սա է թէ Աստուծոյ բարկութիւնը լինի՛ նրա վրայ, եթէ մտրղը ճշմարիտ է:

10. Եւ եթէ Աստուծոյ շնորհքը չը լինէր ձեր վրայ զւ նրա ողորմութիւնը. եւ անա՛ Աստուած դարձող ուղորմած է:

11. Ահա՛ նրանք, որ զբազարտութիւն են անում, նրանք ձեզ աղգակոն են, նրանց վնասակար մի՛ համարէք ձեզ հա՛մար, այլ նրանք ձեզ օգուտ են. նրանցից ամեն մի մարդու կը վայելէ այն պատիժը ինչ անցանք որ գործել է, եւ նա որ նրանցից մեծ սուան է ասել, նրա համար մեծ պատիժ կայ:

12. Ձէ՞ որ երբ հուատացեալ մարդիկը եւ հաստացեալ կնիկները այս բանը լսեցին իրանց մտքերումը բարի բան կարծելով ասացին «սա զուտ զբազարտութիւն է»:

13. Ձէ՞ որ պէտք էր զրա համար չորս վկայ բերէին: Բայց երբ վկաներին չը բերեցին, այն ժամանակ սրտախօսներն իրանք են Աստուծոյ առաջին:

14. Եթէ Աստուծոյ շնորհքը եւ ողորմութիւնն այս եւ միւս աշխարհքումը ձեր վրայ չը լինէր, ձեր արած զբազարտութեան համար ձեզ մեծ պատիժ պիտի պատահէր, որ ձեր լեզուները զրա մասին երկայնացրիք եւ ձեր բերաններովը բաներ ասացիք, որ չը գիտէիք, եւ

թեթեւ բանի տեղ էիք դնում, բայց նա Աստուծոյ առաջին մեծ բան է:

15. Եւ չէ՞ որ երբ գուք սա լսեցիք, պէտք է ասէիք մեր բանը չէ, որ սրա մասին խօսենք: Սուրբ եւ դու, սա մեծ գրգռարտութիւն է»:

16. Աստուած ձեզ զգուշացնում է որ սրա նման մի՛ բան այլեւս յախտեան չ'անէք, եթէ հաւատացեալներ էք:

17. Եւ Աստուած ձեզ յայտնում է նշանները. եւ Աստուած գիտուն իմաստուն է:

18. Իրաւ նրանք որ հաւատացեալների վերաբերմամբ սիրում են զազրութիւններ տարածել, — նրանց համար ցաւալի տանջանք կայ:

19. Այս եւ միւս աշխարհքում. եւ Աստուած գիտէ եւ դուք չք գիտէք:

20. Եւ եթէ Աստուծոյ շնորհքը չը լինէր ձեր վրայ եւ նրա ողորմութիւնը, եւ ահա՛ Աստուած գթառատ ողորմած է:

21. Ո՛վ հաւատացեալներ, սատանայի ոտքի հետքերին մի՛ հետեւէք. եւ ով որ սատանայի ոտքի հետքերին հետեւէ, նա զազիր եւ արգիլւած գործեր է հրամայում: Եւ եթէ Աստուծոյ շնորհքը չը լինէր ձեր վրայ եւ նրա ողորմութիւնը, ձեզնից եւ ոչ մէկը մաքուր չէք լինի յախտեան. բայց Աստուած իր ուզածին մաքրում է, եւ Աստուած լսող իմացող է:

22. Ձեզնից կարողութեան եւ հարստութեան տէր լինողները թող երդում չ'անեն, թէ ազգակսաններին եւ աղքատներին եւ Աստուծոյ ճանապարհի համար գաղթողներին բան չեն տալ. այլ թող մեղմ վարեն: Մի՛թէ դուք չէք սիրում, որ Աստուած ձեզ ներէ. եւ Աստուած ներող ողորմած է:

23. Իրաւ նրանք որ մաքուր անմեղ հաւատացեալ կնիկներին գրգռարտում են, նրանք այս եւ միւս աշխարհքումը անիծւած են, եւ նրանց համար մեծ տանջանք կայ:

24. Այն օրը նրանց լեզուները եւ ձեռները եւ ոտները վկայեցու են, եւ նրանց դէմ, թէ ինչ էին անում,

25. Այն ժամանակ Աստուած պիտի արդար դատատանով նրանց հատուցուր տայ. եւ նրանք կ'իմանան, որ Աստուած յայտնի ճշմարտութիւն է:

26. Չար կնիկները չար մարդկանցն են, եւ չար մարդիկը չար կնիկներինն են. եւ բարի կնիկները բարի մարդկանցն են եւ բարի մարդիկը բարի կնիկներինն: Սրանք կ'արդարանան այն բաներից, որ ասում են ուրիշները, սրանց համար մեղաց ներողութիւն եւ ազնիւ ապրուստ կայ:

27. Ո՛վ հաւատացեալներ, բացի ձեր տներից ուրիշ տներ մի՛ մտնէք, մինչեւ չի ծանօթանաք եւ բարեւ չ'տաք նրանում բնակեողներին. սա լաւ է ձեզ համար որպէս զի յիշէք:

28. Եւ եթէ նրանում մի մարդ չէք գտնում, այն ժամանակ մի՛ մտնէք այնտեղ, մինչեւ ձեզ հրաման տրւի. եւ եթէ ձեզ ասի «ետ դարձէ՛ք». այն ժամանակ ետ դարձէ՛ք: Սա աւելի յարմար է ձեզ համար. եւ Աստուած գիտէ ձեր արածները:

29. Ձեզ համար յանցանք չէ, որ անբնակ տներ մտնէք, նրանցում օգուտ կայ ձեզ համար. եւ Աստուած գիտէ թէ ինչ էք յայտնում եւ ինչ ծածկում:

30. Ասա՛ հաւատացեալ մարդկանց, որ իրանց աչքերը մէկ կողմ դարձնեն եւ իրանց սեռական անդամներին զգուշութիւն անեն. սա մաքուր է նրանց համար, որովհետեւ Աստուած գիտէ, թէ ինչ են անում:

31. Եւ ասա՛ հաւատացեալ կնիկներին, որ իրանց աչքերը մի կողմ դարձնեն եւ իրանց սեռական անդամներին զգուշութիւն անեն. եւ իրանց զարդերը բաց չ'անեն բացի նրանից որ ինքն իրան բաց է լինում. եւ իրանց լաշակներովն իրանց կուրծքերը ծածկեն, եւ իրանց զարդերը միայն իրանց այրերին ցոյց տան կամ իրանց հայրերին կամ իրանց այրերի հայրերին:

կամ իրանց որդիներին կամ իրանց այրերի որդիներին կամ իրանց եղբայրներին կամ իրանց եղբայրների որդիներին կամ իրանց քեռորդիներին կամ իրանց սպասաւորող կնիկներին կամ իրանց ստրուկներին կամ մարդկանցից այնպիսիներին, որ իրանց հետեւում են բայց ցանկութեան տէր չեն, կամ փոքր տղաներին, որոնք կանանց ծածուկ տեղերին ուշադրութիւն չեն անում. եւ իրանց ոտքերովն այնպէս չը խփեն, որ հասկացել թէ իրանց զարգերիցը ի՛նչ են ծածկել. եւ ամենդ էլ զարձէ՛ք դէպի Աստուած, ո՛վ հաւատացեալներ, որպէս զի երջանիկ լինէք:

32. Ամուսնացի՛ք ձեր ամուրիների հետ, եւ ձեր բարեպաշտ ծառաների եւ տղախինիների հետ. եթէ աղքատ էլ լինեն, Աստուած նրանց անկարօտ կ'անէ իր հարստութիւնիցը. որովհետեւ Աստուած հարուստ գիտուն է:

33. Թո՛ղ ողջախոհ լինեն նրանք, որ ամուսնանալ չեն կարող, մինչեւ Աստուած նրանց հարստացնէ իր առատութիւնիցը: Եւ ձեր ստրուկներից նրանք, որ ազատութեան թուղթ են ուզում, նրանց տէ՛ք թուղթը եթէ գրանում մի բարիք էք տեսնում. եւ Աստուծոյ ձեզ տւած ստացածքիցը տէ՛ք նրանց: Եւ այս աշխարհքի կեանքի զւարճալիքներն ուզելով ձեր ազախիններին մի՛ զսպէք անբարոյականութեան, եթէ նրանք անբարոյականութիւն են կամենում. բայց ով որ նրանց զսպէ, ահա՛ Աստուած նրանց զսպելուց յետոյ ներսդ ողորմած է:

34. Մենք ձեզ արդէն յայտնի նշաններ եւ նրանց օրինակը բերեցինք, որ ձեզնից առաջ անցել դնացել են եւ խրատ երկիւղածների համար:

35. Աստուած երկնքի եւ երկրի լոյսն է. նրա լոյսը նման է պատի խորշի, որի մէջ կայ մի ճրագ եւ ճրագը եւ ապակու մէջ եւ ապակին իբր թէ մի փայլուն աստղ է, որ մի օրհնեալ ձիթենու ծառից վառւած է, որ ոչ արեւելեան եւ ոչ արեւմտեան է, եւ

քիչ է մնում որ ձէթը փայլէ, եւ եթէ նրան կրակ չը
դոյնէ, լոյս կը լինի լոյսի վրայ: Աստուած առաջնոր-
դում է իր լոյսովը որին ուզում է: Աստուած այսպէս
օրինակներ է բերում մարդկանց համար, եւ Աստուած
գիտէ ամեն բան:

36. Այն աներում, ուր Աստուած հրաման տւեց որ
բարձրացնուի եւ յիշուի նրա անունը, նրան փառաբա-
նում են առաւօտները եւ իրիկուէնները:

37. Այնպիսի մարդիկ, որոնց արգելք չէ լինում ոչ
վաճառականութիւնը եւ ոչ առուտուրը Աստուծուն յիշե-
լու եւ աղօթքը կատարելու եւ մաքրութեան տուրքը
վճարելու համար, նրանք վախենում են այն օրից, որ
նրանում սրտերը եւ աչքերը փոփոխուում են:

38. Որ Աստուած նրանց լաւ վարձատրէ իրանց գոր-
ծերի համար եւ իր շնորհքիցը աւելացնէ նրանց, եւ
Աստուած կերակրում է, որին ուզում է առանց հաշիւ:

39. Անհաւատների գործքերը նման են անապատի
ջրի ցնորքին. որ ծառաւածը նրան ջուր է համարում,
բայց երբ նրա մօտ է գալիս. մի բան չի գտնում, եւ
նա գանում է միմիայն Աստուծուն իր մօտ, վճարում
է նրա հաշիւը: Եւ Աստուած շատ հաշիւ տեսնող է:

40. Կամ նման են խոր ծովի խաւարներին, որին
ծածկում է ալիքը. նրա վերելիցը ալիք, եւ նրա վե-
րելիցը մի ամպ խաւար իրար վրայ. երբ ձեռքը հա-
նում է, հազիւ տեսնում է նրան, եւ որի համար Աստ-
ուած լոյս չէ չինում, նա լոյս չունէ:

41. Չես տեսնում Աստուծուն փառաբանում են եր-
կընքում եւ երկրումս եղողները եւ խումբ խումբ թրո-
շուէնները: Ամեն մէկը գիտէ իր աղօթքը եւ իր փառա-
բանութիւնը, եւ Աստուած էլ գիտէ, թէ նրանք ինչ
են գործում:

42. Եւ երկնքի ու երկրի իշխանութիւնը Աստու-
ծունն է, եւ ընթացքը գէպի Աստուած է:

43. Միթէ չես տեսնում, որ Աստուած քշում է, ւս-

պերը, յետոյ միմեանց հետ միացնում, յետոյ նրանց իրար վրայ դիզում. եւ յետոյ տեսնում ես թէ տարափը թափուում է նրա միջիցը եւ իջնում է երկնքիցը իբրեւ թէ սաքերից. նրանում կարկուտ է լինում. եւ նա նըրանով դիպչում է որին ուզում է, եւ խոյս է տալիս որից ուզում է. քիչ է մնում նրա կայծակի փայլատակումը կուրացնէ աչքերը:

44. Աստուած փոփոխում է գիշերը եւ ցերեկը. ահա սրանում խրատ կայ հասկացողների համար. եւ Աստուած ստեղծել է ամեն անասուն ջրից, եւ նրանցից կան որ փորի վրայ են գնում եւ կան՝ երկու ոտքով են գնում, եւ կան՝ չորս ոտքով են. Աստուած ստեղծում է իր ուզածը. եւ սրով հետեւ Աստուած ամենակարող է:

45. Մենք արդէն յայտնի նշաններ ենք իջեցրել, եւ Աստուած առաջնորդում է իր ուզածին դէպի ուղիղ ճանապարհը:

46. Եւ նրանք ասում են, «մենք հաւատում ենք Աստուծուն եւ մարգարէին եւ հնազանդ ենք». իսկ յետոյ նրանցից մի խումբ ետ է դառնում. եւ սրանք հաւատացեալ չեն:

47. Եւ երբ նրանք հրաւիրում են դէպի Աստուած եւ դէպի նրա մարգարէն, որ նրանց մէջը դատէ, այն ժամանակ նրանցից մի խումբ մերժում է:

48. Եւ եթէ ճշմարտութիւնը նրանց կողմին լինէր, կըզային նրա մօտ:

49. Նրանց սրտերումը արդեօք հիւանդութիւն կայ. կամ կասկածո՞ւմ են. կամ վախենո՞ւմ են, թէ Աստուած եւ նրա մարգարէն անիրաւութեամբ կը վարեն նրանց դէմ: Բայց նրանք իրանք են անիրաւները:

50. Սակայն հաւատացեալների խօսքը պէտք է լինի, երբ կանչում են դէպի Աստուած եւ դէպի նրա մարգարէն որ նրանց մէջը դատէ, եւ ասեն, «մենք լսեցինք եւ հնազանդ ենք». եւ սրանք են երջանիկները:

51. Եւ ով հնազանդ է Աստուծուն եւ նրա մարգա-

բէին եւ վախենում է Աստուածանից եւ երկիւղած է նրա դէմ, — այսպիսիներն են բարեբաղդները :

52. Եւ նրանք իրանց հաւատքի խտուրթեամբը երդում են արել. եթէ հրամայես, նրանք անպատճառ դուրս են գալու : Դու ասա՛, «Յրդում մի՛ անէք. հրնազանդութիւնն է օրինաւոր : Իրաւ Աստուած գիտէ թէ դուք ինչ էք անում» :

53. Դու ասա՛, «Հնազանդ եղէ՛ք Աստուծուն եւ հրնազանդ եղէ՛ք մարգարէին . իսկ եթէ ետ քաշէք, ասն ժամանակ նա ունի իրան պարտականութիւնները. եւ եթէ հնազանդ լինէք, կ'տոաջնորդէք : Եւ մարգարէի պարտքը միայն յայտնի խրատն է :

54. Աստուած խօսք է տալիս ձեզնից այն անձինքներին որ հաւատում են եւ բարի գործեր գործում, որ նա նրանց ուրիշների յաջորդներ կը չինէ երկրումը, ինչպէս նրանցից առաջիններին է յաջորդ չինել, եւ նրանց կը հաստատէ այն կրօնքի մէջ, որ ինքը կը հաւանէ նրանց համար, եւ նրանց երկիւղը վստահութեան կը փոխէ : Նրանք ինձ կը պաշտեն, եւ ինձ մի բան ընկեր չեն չինի : Եւ ով սրանից յետոյ անհաւատ լինի, իրաւ նրանք են ամբարիշտները :

55. Ու կատարեցէ՛ք աղօթքը, եւ տէք մաքրութեան տուրքը եւ հնազանդեցէ՛ք մարգարէին, որ ողորմութիւն գանէք :

56. Մի՛ կարծէք, թէ անհաւատները երկրի վրայ յաղթողներ են . եւ նրանց հանգստատեղին կրակն է, եւ ո՛հ ի՛նչ տաժանելի ընթացք :

57. Ո՛վ հաւատացեալներ, թող ձեր ստրուկները եւ ձեզնից նրանք, որ արականօրէն չափահաս չեն երեք անգամ ներս մտնելու հրաման խնդրեն, արեւածագի աղօթքից առաջ եւ կէսօրայ ժամանակ կրք ձեր հագուստները հանում էք, եւ իրիկայ աղօթքից յետոյ՝ սրանք հրեք առանձնանալու ժամանակներ են ձեզ համար : Եւ ձեզ եւ նրանց համար յանցանք չէ, որ դրանից յետոյ ձեզ մօտ գան ծառայելու կամ դուք իրար

մօտ գնաք: Աստուած իրան նշաններն այսպէս է յայտնում: Եւ Աստուած գիտուն իմաստուն է:

58. Եւ երբ ձեր տղերքը հասնեն արական չափանաւթեան թող նրանք այնպէս հրաման խնդրեն ինչպէս միւսները նրանցից առաջ: Աստուած այսպէս է յայտնում ձեզ իր նշանները. եւ Աստուած գիտուն իմաստուն է:

59. Եւ այլեւս չըծնող կանայքը եւ նրանք որ այլեւս յոյս չունեն ամուսնանալու, նրանց համար յանցանք չըկայ, որ նրանք իրանց հազուատները վար դրնեն եւ իրանց զարդովը չը պարծենան. եւ եթէ ողջախոհ մնան, աւելի լաւ է նրանց համար. եւ Աստուած լսող գիտացող է:

60. Կոյրին համար յանցանք չըկայ եւ ոչ էլ յանցանք կազին համար, եւ ոչ յանցանք հիւանդին համար, եւ ոչ էլ ձեզ համար, որ ուտէք ձեր տներումը կամ ձեր հայրերի տներումը կամ ձեր մայրերի տներումը կամ ձեր եղբայրների տներումը կամ ձեր քոյրերի տներումը կամ ձեր հօրեղբայրների տներումը կամ ձեր հօրաքոյրների տներումը կամ ձեր քեռիների տներումը կամ ձեր մօրաքոյրների տներումը կամ նրանցում, որոնց բանալիքները ունէք կամ ձեր ընկերների տներումը. ձեզ համար յանցանք չըկայ եթէ միասին ուտէք թէ առանձին:


61. Եւ երբ դուք մի տուն կը մտնէք, այն ժամանակ իրար բարեւ տէք Աստուծոյ կողմանէ բարիք եւ բարի օրհնութիւն մաղթելով: Աստուած ձեզ այսպէս է յայտնում, որ իր նշանները հասկանաք:

62. Իրաւ միայն նրանք են հաւատացեալ, որ հաւատում են Աստուծուն եւ նրա մարգարէին. եւ երբ նրանք մի բանի համար նրա հետ միտսին են, չեն օգնում մինչեւ նրանից հրաման չեն առնում: Ահա՛ նրանք որ քեզանից հրաման են առնում, նրանք են որ հաւատում են Աստուծուն եւ նրա մարգարէին: Եւ եթէ նրանք իրանց մի որ եւ է գործի համար քեզնից հը-

բաման են խնդրում, հրաման տուր նրանցից որին
կ'ուզես, եւ նրանց համար մ'իզքի թողութիւն խնդրի՛ր
Աստուածանից, որովհետեւ Աստուած ներող ողոր-
մած է:

63. Մարգարէին ձեզ կանչելը դուք ձեզ իրար կան-
չելու պէս մի՛ համարէք որովհետեւ Աստուած ճանա-
չում է ձեզնից նրանց, որոնք ետ են քաշվում ու-
րիշնորի ետքին թաքնվում: Թո՛ղ զգուշանան նրանք,
որ նրա հրամանին հակառակում են, սր նրանց մի
փորձանք չը պատահէ կամ նրանց մի ցտաւի տանջանք
չը պատահէ:

64. Չէ՞ որ ինչ որ երկնքումը եւ երկրումը կայ
Աստուծունն է: Նա գիտէ թէ դուք ինչ բանի վրայ
էք, եւ այն օրը, որ դուք ետ էք դառնալու նրա մօտ,
նա ձեզ կը յայտնէ, թէ դուք ինչ էք արել, որովհետեւ
Աստուած ամենագէտ է:



25) ՍՈՒՐԷ՝ ԷԼ-ՖՈՒՐԳԱՆ

Մէքքէական. եօթանասուն եօթը այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Օրհնեալ լինի նա որ իջեցրել է Ֆուրգանը իր
ծառային, որ նա աշխարհներին խրատիչ դառնայ:

2. Որ նրանն է երկնքի եւ երկրի իշխանութիւնը,
եւ նա որդի չէ ընդունում, եւ ընկեր չ'ունի իր իշ-
խանութեան մէջ, եւ որ ստեղծել է ամեն բան եւ սահ-
մաններով սահմանել:

3. Բայց նրանք աստուածներ են ընդունում նրա-

նից զատ, որոնք մի բան չեն ստեղծել, իսկ իրանք ստեղծւած են:

4. Որոնք չեն կարող իրանց անձերին ոչ փնասու եւ ոչ օգուտ տալ, եւ չեն կարող ոչ մահ եւ ոչ կեանք տալ եւ ոչ յարութիւն:

5. Սակայն անհաւատներն ասում են, «սա սուտ է որ նա հնարում է, եւ այդ բանում օգնում են նրան ուրիշները»: Սակայն անիրաւութիւն են ասում եւ ստախօսութիւն:

6. Նրանք ասում են, թէ «նախնեաց առասպելներ են, որ օրինակել է տալիս, որ իրան թելադրում են առաւօտները եւ իրիկունները»:

7. Ասա՛, «սա նա է իջեցրել, որ գիտէ երկնքի եւ երկրի մէջ եղած գաղտնիքը, որովհետեւ նա ներող ուղորմած է»:

8. Եւ նրանք ասում են, «սա ի՛նչ մարգարէ է. սա կերակուր է ուտում եւ փողօցներումը ման գալիս, եթէ նրա համար մի հրեշտակ չ'իջեցնուի որ նրա հետ միասին քարոզէ»:

9. Կամ նրան մի գանձ չը տրուի, կամ նա մի այգի չունենայ որ նրանից ուտէ . . . » եւ ասում են անիրաւները, «դուք միմիայն մի կախարդւած մարդու էք հետեւում»:

10. Մտիկ արա՛ տե՛ս, թէ քեզ ինչի են նմանեցրնում: Նրանք մոլորւած են, ճանապարհը չեն գտնի:

11. Որհնեալ լինի՛ նա, որ եթէ կամենայ քեզ դրանից լաւագոյնը կըտայ՝ դրախտներ, որոնց տակովը գետեր են հոսում եւ քեզ համար դգեակներ կը շինէ:

12. Սակայն նրանք սուտ են համարում վերջի ժամը. բայց մենք այն ժամը սուտ համարողների համար պատրաստել ենք դժոխքը:

13. Երբ նրանց տեսնեն հեռու տեղից, կը լսեն նրանցից գոռում գոչում:

14. Եւ երբ նրանք կաշկանդուած մի նեղ տեղ կը գցուին, այն ժամանակ նրանք կը կորչեն «բնաջնջում» :

15. «Դուք այսօր միայն մէկ հատ բնաջնջում մի՛ կանչէք, այլ կանչեցէ՛ք շատ բնաջնջումներ» :

16. Ասա՛, «սա՞ է լաւ թէ յաւիտենական դրա՞խտը, որ խոստացուած է երկիւղածներին, որ նրանց համար վարձք եւ բնակավայր պիտի լինի» :

17. «Նրա մէջ կունենան նրանք իրանց ուզածը, միշտ կը մնան նրանում. այդ խոստումը կատարելը քո Տիրոջ պարտքն է :

18. Եւ նա մի օր ժողովելու է նրանց եւ տյն բաները, որ նրանք պաշտում էին բացի Աստուածանից, եւ ասելու է. «գո՞ւք էք որ իմ այս ծառաներին մոլորեցնում էիք, կամ նրանք էին մոլորել ճանապարհիցը» :

19. Նրանք կ'ասեն, «գու. սուրբ ես. մեզ չէր վայելի, որ քեզնից զատ ուրիշ պաշտպաններ ընդունէինք. բայց դու նրանց եւ իրանց հայրերին այնչափ վայելչու թիւններ տուցիր, որ քեզ յիշելը մոռացան եւ ոչինչ մարդիկ եղան» :

20. Սրանք արդէն սուտ են հանում ձեր ասածը եւ դուք չէք կարող ետ մղել եւ ոչ օգնել :

21. Եւ ձեզնից ով անիրաւո թիւն անէ, մենք նրան մեծ տանջանք ճաշակել կըտանք :

22. Մենք քեզից առաջ միայն այնպիսի մարգարէներ ենք ուղարկել, որ կերակուր էին ուտում եւ փողոցներում ման գալիս, եւ մենք նրանցից մէկը միւսին համար փորձութիւն էինք շինում, ասելով, «կը համբերէ՞ք» : Եւ քո Տէրը տեսնում է :

23. Եւ նրանք որ յոյժ չունեն, թէ մեզ հանդիպելու են, ասում են, «եթէ մեզ համար մի հրեշտակ չ'իջեցնուի եւ չը տեսնենք մեր Տիրոջը . . . » նրանք արդէն հպարտացել են, եւ մեծ ոճիր են գործում :

24. Այն օրը որ հրեշտակներին կը տեսնեն, այն յանցաւորներին համար աւետիք չի լինի. այլ պիտի

ասեն, «հետո՛ւ հեռացէ՛ք» :

25. Եւ մենք մօտեցանք նրանց այն գործած դործերին, եւ նրանց ցիրուցան հղած մղեղ շինեցինք :

26. Այն օրը դրախտի մարդիկը լաւ բնակատեղի են ունենալու եւ անուշ կէսօրեայ հանգստութիւն :

27. Այն օրը երկիրքը պիտի ձեղքւի ամպերով, եւ հրեշտակները պիտի իջնեն իջանելով :

28. Այն օրը ճշմարիտ իշխանութիւնը Աստուծուն է, եւ սա անհաւատների համար մի դժար օր է իննչու :

29. Այն օրը ամբարիշտը կծոտելու է իբր երկու ձեռները եւ ասելու, «երանի՛ թէ մարդարէի հետ միասին ճանապարհ գնացած լինէի» :

30. «Ո՛հ, վա՛յ ինձ, երանի՛ թէ այն ինչ մարդուն ընդունած չը լինէի իբրեւ բարեկամ» :

31. Որովհետեւ նա ինձ մոլորեցրեց Աստուծուն յիշելուց, երբ նա ինձ արեւ էր, եւ սատանան մարդկանց համար խաբող է» :

32. Եւ մարգարէն տառամ է, «ո՛վ իմ Տէր, ահա իմ ժողովուրդը դատարկաբանութիւն է համարում այս Ղուրանը» :

33. «Եւ մենք այսպէս ամեն մի մարգարէի համար թշնամի ենք պատրաստել յանցաւորներին, եւ քո Տէրը բաւական լաւ ուղեցոյց եւ օգնական է :

34. Եւ անհաւատներն ասում են, «իթէ Ղուրանը քոլորը մէկ անգամ չիջեցնւի նրա համար...» Այսպէս մենք ամրացնելու ենք քո սիրտը նրանով, եւ կրկնում ենք նրան կրկին եւ կրկին անգամ :

35. Եւ նրանք քեզ առակ չեն բերի, միայն մենք կը բերենք քեզ համար ճշմարտութիւնը եւ գեղեցիկ մեկնութիւնը :

36. Նրանք, որ իրանց երեսներին վրայ կը հաւաքւեն դէպի դժոխքը, նրանց տեղը վատ է, եւ նրանք շատ կորցրած են ճանապարհը :

37. Բայց մենք արդէն տեւել ենք գիրքը Մովսէսին,

եւ նրա եղբայր Ահարօնին նրան օգնական ենք շինել :

38. Եւ ասել, զուք երկուսդ գնացէ՛ք այն ժողովրդի մօտ որ մեր նշանները սուտ են համարում եւ մենք նրանց բուրբուրն բնաջինջ ենք անելու» :

39. Եւ Նոյի ժողովուրդը—երբ նրանք մարգարէններին սուտ էին համարում, մենք նրանց խեղդեցինք ջրում, եւ նրանց նշան շինեցինք մարդկանց համար, եւ ամբարիշտների համար ցաւալի տանջանք պատրաստեցինք :

40. Նաեւ Ադեցիք եւ Սամուղեցիք եւ Ռասի մարդիկը, եւ սրանց մէջ եզոզ շատ ազգեր :

41. Սրանց ամեն մէկին մենք առականք բերեցինք, եւ ամենն էլ փճացրեցինք հիմնայատակ անելով :

42. Նրանք արդէն գնացել են այն քաղաքի մօտովը, որի վրայ վատ անձրեւ է տեղացել. նրանք մի՞թէ չեն տեսել նրան. սակայն նրանք յոյս չուենն յարութեան համար :

43. Եւ երբ նրանք քեզ տեսնում են, նրանք քեզ միմիայն ծաղր են անում ասելով, «սա նա՞ է որին Աստուած ուղարկել է իրբեւ մարգարէ» :

44. Իրաւ քիչ էր մնացել, որ նա մեզ մոլորեցնէր մեր աստուածներէց, եթէ մենք համբերած չ'լինէինք այդ մասին. բայց յիտոյ կ'իմանան երբ կը տեսնան նրա պատիժը, որի ճանապարհը մոլորւած է :

45. Դու տեսե՞լ ես նրան, որ իր հաճոյքը իրան աստուած է ընդունում, դու մի՞թէ նրա երաշխաւորը կը դառնաս :

46. Կամ կարծո՞ւմ ես, թէ նրանցից շատերը լսում են կամ հասկանում. բայց նրանք միմիայն անասուններ են. այո՛ նրանք շատ մոլորւած են ճանապարհիցը :

47. Դու մտիկ չ'արեցի՞ր քո Տիրոջը, թէ նա ինչպէս է երկայնացնում շուաքը. եւ եթէ նա ուզէ նրան կը կանգնեցնէ. բայց մենք արեզակը նրա համար ճանապարհ ցոյց տուող ենք շինել :

48. Եւ յիտոյ հեշտ կերպով առնում ենք մեզ մօտ :

49. Եւ նա է, որ գիշերը ձեզ համար հագուստ է շինել եւ քունը իբրեւ հանգստութիւն եւ ցերեկը զարթնելու համար է շինել:

50. Նա է, որ քամիները ուղարկում է իր ողորմութիւնից առաջ իբրեւ աւետիք տուղներ եւ մենք երկընթիցը մաքուր ջուր ենք իջեցնում:

51. Որ նրանով մեռած երկիրը կենդանացնենք եւ մեր ստեղծած անասուններին նաեւ շատ մարդկանց խումբիւք տանք:

52. Եւ մենք արգէն նրան տարածել ենք նրանց մէջը, որ յիշեն. բայց մարդկանցից շատերը մերժում են ապերախտութեամբ:

53. Եւ եթէ ուղէինք, ամեն մի քաղաք մի քարոզիչ կ'ուղարկէինք:

54. Եւ դու մի՛ հնազանդիր անհաւատներին, եւ մեծ ջանքով պատերազմի՛ր դրանով նրանց հետ:

55. Եւ նա է, որ երկու ծովերը իբարբից հեռու է պահում, սա անուշ եւ թարմ, իսկ միւսը աղի եւ լեղի, եւ դրանց մէջը մի անդունդ է գրել եւ իբարբից հեռու հեռացրել:

56. Եւ նա է, որ ջրիցը մարդ է ստեղծել եւ նրան արիւնակից շինել եւ խնամացրել. եւ քո տէրը կարող է:

57. Եւ նրանք պաշտում են բացի Աստուածանից այնպիսի բաներ. որ նրանց ոչ օգուտ ունեն եւ ոչ կը վնասեն. եւ անհաւատ օղնող է իր Տիրոջ հակառակ:

58. Եւ մենք քեզ միմիայն իբրեւ աւետիք տուղ եւ սպառնացող ենք ուղարկել:

59. Ասա՛, «ես ձեզնից սրա համար մի վարձք չեմ ուզում, բացի այն որ մէկն ինքը ուղէ. որ ընդունէ այս ճանապարհը դէպի իր Տէրը»:

60. Եւ ապաւինի՛ր այն կենդանուն, որ չի մեռնի, եւ օրհնի՛ր նրան փառաբանելով. եւ նրա համար բաւական է, որ գիտէ իր ծառաների մեղքերը, որ ստեղծել է երկինքը եւ երկիրը եւ նրանց մէջը եղածները

վեց օրւայ մէջ. յետոյ նստեց Ողորմածը աթոռին վրայ. եւ դու նրանով տեղեկութիւն խնդրի՛ր:

61. Եւ երբ նրանց ասում է, թէ Ողորմածին երկրպագեցէ՛ք». նրանք ասում են, թէ «ո՞վ է Ողորմածը, մենք մի՞թէ նրան երկրպագենք, որը դու մեզ հրահայում ես». եւ սա աւելի է շատացնում նրանց զգւանքը:

62. Օրհնեալ լինի՛ նա, որ երկնքումը աստեղատուներ է շինել, եւ նրանում ճրագ է շինել եւ լուսատու լուսինը:

63. Եւ նա է, որ գիշերը եւ ցերեկը փոփոխողներ է շինել նրա համար, որ ուզում է նրան յիշել եւ ուզում է շնորհակալ լինել:

64. Եւ Ողորմածի ծառաները նրանք են, որ երկրի վրայ հեղ ման են զալիս, եւ երբ տգէտները նրանց գիմաւորում են, ասում են «բարեւ»,

65. Եւ որոնք երկրպագում են իրանց Տիրոջը եւ կանգնում:

66. Եւ որոնք ասում են, «ով մեր Տէր, խուսափեցրո՛ւ մեզնից դժոխքի տանջանքը, որովհետեւ նրա պատիժը տրվում է. եւ նա վատ բնակարան ու բնակավայր է»:

67. Եւ նրանք, որ ողորմութիւն են տալիս, շոյալութիւն չեն անում եւ ժլատութիւն չեն անում, եւ այս երկուսի մէջ տեղը կանգնած են:

68. Եւ որոնք Աստուծոյ հետ էլ մի ուրիշ ւստուած չեն կանչում. եւ Աստուծոյ արդեւտժ մարդուն չեն սպանում քացի արդարութեամբ, եւ շնութիւն չեն անում. եւ ով որ անէ այս բաները նրան կը հանդիպէ մեղքին պատիժը:

69. Նրա պատիժը կը կրկնապատկի յարութեան օրը, եւ նա միշտ կը մնայ նրանում խայտառակաւ:

70. Բացի նրանից, որ կ'աղաչխարէ եւ կը հաւատայ եւ բարի գործ կը գործէ, եւ Աստուած զրանց չա-

բութիւնները բարեգործութիւնների կը փոխէ. որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

71. Եւ ով ապաշխարէ եւ բարիք գործէ, ահա՛ նա Աստուծուն է դառնում իբրեւ զղջացող:

72. Եւ որոնք սուտ վկայութիւն չեն տալիս, եւ վստ խօսակցութեան մօտով անցնելիս, ազնիւ կերպով են անցնում:


73. Եւ որոնք իրանց Տիրոջ խօսքերը, երբ իրանց յիշեցնւում են, վար չեն ընկնում նրանց պատճառով իբրեւ խուլեր եւ կոյրեր:

74. Եւ որոնք ասում են, «ով մեր Տէր, մեր կնիկներից եւ մեր զաւակներից մեզ աչքի ուրախութիւն տո՛ւր. եւ մեզ երկիրղածների համար օրինակ շինի՛ր»:

75. Նրանք իրանց համբերութեան համար կը վարձատրեն երկնային ապարանքով, եւ նրանց կը զիմաւորեն բարեւոյ եւ խաղաղութի՛ւն ասելով:

76. Նրանք միշտ նրանում կը մնան: Ի՛նչ գեղեցիկ բնակարան եւ վայր:

77. Ասա՛, «իմ Տէրն անփոյթ է ձեր մասին, թէ դուք կը կանչէք նրան աղօթքով. բայց դուք սուտ համարեցիք. սակայն չուտով կը լինի պատիժը»:



26) ՍՈՒՐԷ՝ ԷԼ-ՇՈՒԱՐԱ

Մէքքէական. երկու հարիւր քսան ութը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Թ. Ո. Մ. Սա յայտնի գրքի նշաններն են:
2. Գուցէ անձդ սպանես, որ նրանք չեն հաւատում,

3. Եթէ մենք ուզենք նրանց համար երկնքից: նը-
շան կ'իջեցնենք եւ նրանց վիզերը կը ծուէին նրա
առաջին:

4. Եւ նրանց համար մի նոր յիշում չ'եկաւ Ողորմածի
կողմից, որ նրանք ետ չը քաշէին նրանից:

5. Բայց նրանք սուտ են համարել: Սակայն չուտով
նրանց համար լուր կը գայ իրանց արած ծաղրաբանու-
թեան համար:

6. Եւ մի՞թէ մտիկ չեն տալիս երկրին. թէ մենք
նրանից ո՞րքան բարի տեսակներ ենք բուսցրել:

7. Ահա՛ սրանում նշան կայ. բայց նրանցից շատերը
հաւատացեալ չեն:

8. Եւ ահա՛ քո Տէրը զօրաւոր ողորմած է:

9. Եւ երբ քո Տէրը կանչեց Մովսէսին, թէ «գնա
ամբարիշտների ազգի մօտ»,

10. Փարաօնի ազգի մօտ, թէ արդեօ՞ք երկիւղած
չեն դառնայ:

11. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, վախում եմ, թէ
ինձ սուտ համարեն»:

12. «Եւ իմ սիրաբը նեղանայ եւ լեզուս կապւի ու-
րեմն ուղարկի՛ր Ահարօնի ետեւից»:

13. «Եւ նրանք ինձ վրայ մի ո՞ճիր ունեն. վախում
են որ ինձ կը սպանեն»:

14. Նա էլ ասաց, «ամենեւի՛ն. դուք երկուսդ մեր
հրաշքներովը գնացէ՛ք. եւ մենք ձեր հետ լուռ ենք»:

15. «Եւ նրանք Փարաօնին գնացին եւ ասացին,
«մեր աշխարհների Տիրոջ ուղարկածներն ենք»:

16. «Խորայէլի որդիներին ուղարկի՛ր մեզ հետ»:

17. Նա էլ ասաց, «մենք քեզ չը մեծացրեցի՛նք մեր
մէջ իբրեւ զաւակ, եւ դու քո կեանքի մր քանի տա-
րիները մեր մէջ անցկացրիր»:

18. «Եւ քո գործքը գործեցիր, որ գործել ես եւ դու
ամբարիշտներին ես»:

19. Եւ նա՛ ասաց, «ես այդ արել եմ այն ժամանակ
եւ ես սխալած եմ եղել»:

20. «Ես ձեր մօտիցը վախայ, երբ վախեցի ձեզնից, բայց իմ Տէրն ինձ իմաստութիւն տւել եւ ինձ մարգարէ է շինել»:

21. «Ուս է այն շնորհքը, որ դու ինձ արել ես իբրեւ երախտիք, որ դու Իսրայէլի որդկանցը ծառայեցըրել ես»:

22. Փարաւօն ասաց, «Եւ աշխարհքների Տէրը ի՞նչ է»:

23. Նա էլ ասաց, «Երկիրնքների եւ երկրի եւ նրանց մէջ եղածի Տէրը, եթէ համոզւէք»:

24. Նա էլ ասաց իր չորս կողմին եղողներին, «լըսօւմ էք»:

25. Նա էլ ասաց, «ձեր Տէրը եւ ձեր առաջի հայրերի Տէրը»:

26. Եւ նա ասաց, «ահա՛ ձեր մարգարէն, որ ձեզ մօտ է ուղարկւած, գիււհար է»:

27. Նա էլ ասաց, «Նա արեւելքի եւ արեւմուտքի եւ նրանց միջեւ եղածին Տէրն է, եթէ հասկանաք»:

28. Եւ նա ասաց, «Եթէ դու բացի ինձնից մի ուրիշին ընդունես իբրեւ աստուած, ես քեզ բանդը կը դնեմ»:

29. Նա էլ ասաց, «բայց եթէ քեզ մի յայտնի բան բերե՞մ . . .

30. Եւ նա ասաց, «բե՛ր նրան, եթէ ճշմարտախօս ես»:

31. Նա գցեց իր գաւազանը, եւ ահա՛ նա յայտնի օձ եղաւ:

32. Եւ նա հանեց իր ձեռքը, եւ ահա՛ նա սպիտակ էր երեւում մտիկ անողներին:

33. Նա ասաց իր շուրջը եղող մեծամեծներին, «ահա՛ սա գիտուն կախարդ է»:

34. «Կամենում է, որ ձեզ հանէ ձեր երկրիցը իր կախարդութիւնովը, արդ ի՞նչ էք հրամայում»:

35. Նրանք էլ ասացին. «դո՛ւրս արա դրան եւ իր եղբօրը, եւ ուղարկի՛ր քաղաքները, որ մողովեն»:

36. «Ամեն մի գիտուն կախարդին քեզ մօտ բերեն»:

37. Կախարդներն էլ հաւաքւեցին մի որոշ օրւայ ժամանակին.

38. Եւ ասացին այն մարդկանցը, «արդեօ՞ք դուք հաւաքւել էք»:

39. «Քուցէ մենք կը հետեւինք կախարդներին, եթէ յաղթողը իրանք լինեն»:

40. Եւ երբ կախարդներն եկան, ասացին Փարաւօնին, «ի՞նչ է մեր վարձքը, եթէ մենք յաղթենք»:

41. Նա էլ ասաց, «այն ժամանակ դուք ինձ մօտ կը լինէք»:

42. Մովսէսն ասաց նրանց, «զցեցէ՛ք ինչ որ դուք գցում էք»:

43. Նրանք էլ զցեցին իրանց չուանները եւ գաւազանները եւ ասացին, «Փարաւօնի փառքովը երդում ենք անում, որ մենք ենք յաղթելու»:

44. Մովսէսն էլ զցեց իր գաւտզանը, եւ ահա՛ կուլ տուաւ ինչ որ նրանք դարձրել էին:

45. Այն ժամանակ կախարդները վար ընկան երկրպագեցելով,

46. Ու ասացին, «մենք հաւատում ենք աշխարհների Տիրոջը»:

47. Մովսէսի եւ Ահարօնի Տիրոջը»:

48. Նա էլ ասաց, «դուք նրան հաւատօ՞ւմ էք յառաջ քան թէ ես ձեզ հրաման եմ տւել: Հիմայ նա ձեր մեծն է, որ ձեզ սովորեցնելու է կախարդութիւնը, եւ դուք շուտով կիմանաք»:

49. Չեր ձեռներն ու ձեր ոտները եւ կտրելու եմ գէմաղէ՛մ կողմից եւ ես ձեզ ամենիդ խաչելու եմ»:

50. Նրանք ասացին, «յիաս չուենի՛ մենք մեր Տիրոջն ենք դառնում»:

51. «Մենք բաղձանք ունենք, որ մեր Տէրը ներէ մեզ մեր յանցանքները, որ հաւատացեալների անգրանիկները լինենք»:

52. Մենք էլ յայանեցինք Մովսէսին, թէ գիշերը

ճանապարհ ընկի՛ր իմ ծառաների հետ, որովհետեւ հա-
լածւելու էք :

53. Փարաւօնն էլ մարդիկնէր ուղարկեց քաղաք-
ները, որ ժողովին.

54. Թէ սրանք մի բանակի՛ փոքր ժողովուրդ են.

55. Եւ նրանք մեզ դէմ բարկացած են.

56. Բայց մենք մի պատրաստուած խումբ ենք :

57. Մենք էլ նրանց հանեցինք այգիներից եւ ազ-
բիւրներից.

58. Ու գանձերից եւ ազնիւ տեղերից.

59. Այսպէս եւ մենք դրանց ժառանգութիւն տւե-
ցինք Իսրայէլի որդկանցը :

60. Բայց նրանք հալածեցինք նրանց արեւածագին :

61. Եւ երբ այն երկու զօրախումբերն էլ միմեանց
տեսան, Մովսէսի ընկերներն ասացին, «մենք բռնե-
լու ենք» :

62. Նա էլ ասաց, «երբէ՛ք. ահա՛ իմ Տէրը ինձ հետ
է. նա ինձ առաջնորդելու է» :

63. Եւ մենք յայտնութիւն տւեցինք Մովսէսին, թէ
ժգաւազանդ զա՛րկ ծովին» : Նա էլ ճեղքեց. եւ ամեն
մի մասը մի մեծ սարի պէս էր :

64. Յետոյ մենք միւսներին մօտեցրեցինք.

65. Ու ազատեցինք Մովսէսին եւ նրա հետ եղող-
ների բոլորին էլ :

66. Յետոյ միւսներին խեղդեցինք ջրումը :

67. Ահա՛ սրանում նշան կայ. եւ նրանցից շատերը
հաւատացեալ չէին :

68. Ահա՛ քո Տէրն է զօրաւորը եւ ողորմածը :

69. Եւ կարգա՛ նրանց համար Աբրահամի պատմու-
թիւնը :

70. Իսկ նա երբ ասաց իր հօրը եւ իր ժողովրդին,
«դուք ինչ էք պաշտում» :

71. Նրանք էլ ասացին, «մենք կուռքեր ենք պաշ-
տում եւ նրանց ենք ծառայում» :

72. Եւ նա էլ ասաց, «դուք նրան ազաչած ժամանակը նրանք ձեզ լսո՞ւմ են արդեօք»:

73. «Կամ ձեզ օգուտ կամ յիշատակ են տալիս»:

74. Նրանք էլ ասացին, «մենք տեսել ենք արդէն, որ մեր հայրերն այսպէս էին անում»:

75. Նա էլ ասաց, դուք մտածել էք արդեօք թէ ինչ էիք պաշտում,

76. «Թէ՛ դուք, թէ՛ ձեր նախկին հայրերը»:

77. «Ահա՛ նրանք ինձ թշնամի են, բայց ոչ աշխարհքների Տէրը»:

78. «Որ ինձ ստեղծել է եւ նա ինձ առաջնորդում է»:

79. «Եւ նա է որ ինձ կերակուր եւ խմելիք է տուլիս»:

80. «Եւ երբ հիւանդանում եմ, այն ժամանակ նա է ինձ առողջութիւն տալիս»:

81. «Ինձ մահ է տալիս եւ յետոյ կենդանացնում,

82. «Որից ես, մաղթում եմ որ իմ սխալներս ինձ ներքէ դատատանի օրը»:

83. Ո՛վ իմ Տէր, ինձ իմաստութիւն տուր եւ ինձ արդարների դատումը համարի՛ր»:

84. Ինձ ճշմարտութեան լեզու էլ տո՛ւր ուրիշների մէջը»:

85. Եւ ինձ երջանիկ դրախտի ժառանգներիցը մէկն արա՛»:

86. Ների՛ր իմ հօր մեղքերը, որովհետեւ նա մոլորւածներիցն էր»:

87. Ինձ էլ ամօթով մի անիւր յարութեան օրը»:

Նոյն օրը, որ ստացւածք եւ որդիք չեն կարող օգնել»:

89. Իսկ միայն այն, որ մաքուր սրտով կրկայ Աստուծոյ մօտ,

90. Եւ դրախտը մօտ կը բերուի երկիւղ սծներու համար»:

91. Դժոխքն էլ կը ներկայացնուի անբարոյականներին»:

92. Եւ նրանց կ'աւելի, «ո՞ւր են այն բաները, որոնց դուք պաշտում էիք,
93. Եւ ոչ թէ Աստուծուն. արդեօք ձեզ կ'օգնեն, կամ իրանք իրանց կ'օգնեն»:
94. Նրա մէջը կը շարունակեն անբարոյականները,
95. Նաեւ սատանայի բոլոր գունդերը:
96. Նրանք կ'ասեն միմեանց թշնամութիւն անելով,
97. «Աստուած վկայ է, մենք յայտնի ժողովութեան մէջ էինք»:
98. «Երբ մենք ձեզ աշխարհքների Տիրոջ հետ հասար էինք համարում:
99. «Միմիայն յանցաւորները մեզ ժողովեցրեցին,
100. «Իսկ մենք բարեխօսներ չունենք»,
101. «Ոչ էլ մտերիմ բարեկամ»:
102. «Եթէ մեզ միւս անգամ պատեհութիւն լինի, մենք հաւատացեալներից կը լինենք»:
103. Ահա՛ սրանում նշան կայ. բայց նրանցից շատերը հաւատացեալ չէին:
104. Ահա՛ քո Տէրն է զօրաւորը ողորմածը:
185. Նոյի ժողովուրդը սուտ էր համարում մարգարէներին,
106. Նրանց եղբայր Նոյը երբ ասաց նրանց, «մի՞թէ չէք վախենում Աստուածանից»:
107. «Ձեզ համար ես յայտնի մարգարէ եմ.
108. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հրանազանեցէ՛ք»:
109. «Ես էլ սրա համար ձեզնից վարձք չեմ ուզում. որովհետեւ իմ վարձքը միմիայն աշխարհքների Տէրն է:
110. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հրանազանեցէ՛ք»:
111. Նրանք էլ ասացին, «մի՞թէ քեզ հաւատանք, մինչդեռ քեզ սրիկաներն են հետեւում»:
112. Նա էլ ասաց, «ես չը գիտեմ թէ նրանք ինչ են անում»:

113. «Նրանք միմիայն իմ Տէրոջն են հաշիւ տալու եթէ հասկանում են»:

114. «Ես էլ չեմ մերժի հաւատացեալներին»:

115. «Միմիայն մի յայտնի խրատիչ եմ ես»:

116. Նրանք էլ ասացին, «եթէ դու չը դադարես, ով նոյ, դու պիտի քարկոծես»:

117. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ահա՛ իմ ժողովուրդը ինձ ստախօս է համարում»:

118. «Եւ դու իմ ու նրանց մէջ մի վճի՛ռ դիր. եւ ինձ ու հաւատացեալներից ինձ հետ եղողներին փրկի՛ր»:

119. Իսկ մենք ազատեցինք նրան եւ նրա հետ լիքը տապանի մէջ եղողներին»:

120. Բայց յետոյ մնացեալներին ջրումը խեղդեցինք»:

121. Տե՛ս սրանում նշան կայ. բայց նրանցից շատերը հաւատացեալ չէին»:

122. Տէրն է ահա՛ զօրաւորը ողորմածը»:

123. Ադցիները սուտ էին համարում մարգարէնե՛րին»:

124. Նրանց հղբայր նուզը երբ նրանց ասաց, «դուք մի՞թէ չէք վախում Աստուածանից»:

125. «Ես ձեզ համար յայտնի մարգարէ եմ»:

126. Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ նընազանդեցէ՛ք»:

127. «Ես էլ սրա համար ձեզնից վարձք չեմ ուզում. ահա՛ իմ վարձքը միմիայն աշխարհների Տիրոջ մօտ է»:

128. «Արդե՞ք ամեն մի բլուրի վրայ ուզում էք նշան շինել, որ պարսպ խաղաք»:

129. Շինութիւններ էլ էք շինում, որ յաւերժանաք»:

130. «Եւ երբ քաջութիւն էք անում, բո՛նութեամբ էք քաջութիւն անում»:

131. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ նընազանդեցէ՛ք»:

132. «Վախեցէ՛ք էլ նրանից, որ ձեզ օգնում է ձեր արարքներում»:

133. «Որ ձեզ օգնում է անասուններով եւ որդիքներով:

134. «Եւ պարտէզներով ու աղբիւրներով:

145. «Վախում եմ հս, որ ձեզ վրայ մի մեծ օրւայ պատիժը գայ:

136. Նրանք էլ ասացին, «մեզ համար միեւնոյնն է, թէ՛ կուզ քարոզի՛ր թէ՛ կուզ քարոզող մի՛ լինիր:

137. «Որովհետեւ սա միայն հիների բնաւորութիւնէ:

138. «Եւ մենք չենք պատժել:

139. Բայց նրան սուտ համարեցին, եւ մենք նրանց բնաջինջ արեցինք: Ուրեմն սրանում նշան կայ, եւ նրանց շատերը հաւատացեալ չէին:

140. Քո Տէրն է զօրաւորը Ողորմածը:

141. Սամուղացիք սուտ հանեցին մարգարէներին:

142. Նրանց հղբայր Սալէհը երբ նրանց ասաց, «Մի՞թէ չէք վախում:

143. «Զեզ համար ես հաւատարիմ մարգարէ եմ:

144. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հընազանդեցէ՛ք»:

145. «Ես էլ զրա համար ձեզնից վարձք չեմ ուզում, իմ վարձքը միմիայն աշխարհքների Տիրոջն է:

146. «Մի՞թէ դուք այստեղի բաներումը ապահով կը թողնէք:

147. «Պարտէզներո՞ւմ եւ աղբիւրներո՞ւմ:

148. «Ցանքսերո՞ւմ եւ արմաւենիներո՞ւմ, որոնց պտուղը քնքուշ է:

150. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հընազանդեցէ՛ք:

151. «Եւ հնազանդութիւն մի՛ անէք շոայլների հըրամանին:

152. «Որոնք ապականում են երկիրը, եւ բարեկարգ չեն:

153. Նրանք էլ ասացին, «դու կախարդւած ես:

154. «Դու մի ուրիշ բան չես, եթէ ոչ մեզ նման մի մարդ, ուրեմն մի հրաշք բե՛ր եթէ ուղիղ ես:
155. Նա էլ ասաց «ահա ուղար. նա ունէ խմելիք եւ դուք էլ ունէք մի որոշ օր ձեր խմելիքը:
156. «Դուք նրան մի վնասով չը դպչէ՛ր. որովհետեւ մի մեծ օրւայ պատիժը ձեզ կը բռնէ:
157. Բայց նրանք ջլատեցին նրան եւ զղջացին:
158. Եւ պատիժը բռնեց նրանց: Արանուս ահա՛ նշան կայ. բայց նրանցից շատերը հաւատացեալ չէին:
159. Քո Տէրն է զօրաւորը ողորմածը:
160. Ղովաի ժողովուրդը սուտ համարեց մարգարէ-ներին.
161. Երբ նրանց եղբայր Ղովտն ասաց նրանց, «մի՞թէ դուք չէք վախենում»:
162. Ձեզ համար յայտնի մարգարէ եմ ես:
168. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հնազանդեցէ՛ք»:
164. «Ես էլ սրա համար ձեզնից վարձք չեմ ուզում. իմ վարձքը միմիայն աշխարհքների Տիրոջիցն է:
165. «Մի՞թէ դուք աշխարհքի արուներին էք մօտենում,
166. «Նաեւ թողնում նրանց, որ ձեր Տէրը ձեզ համար կնիկներ է ստեղծել: Այո՛, դուք անբարոյական ազգ էք»:
167. Նրանք էլ ասացին, «եթէ չը դադարես, ով Ղովտ, քեզ անպատճառ դուրս կ'անենք»:
168. Նա էլ ասաց, «ահա՛ ես ատում եմ ձեր արարքը:
169. «Ո՛վ իմ Տէր, ազատի՛ր ինձ եւ իմ ընտանիքը սրանց արածիցը»:
170. Եւ մենք նրան եւ նրա բոլոր ընտանիքին ազատեցինք.
171. Բացի մի պառաւ կնկանից որ ետ էր մնացել:
172. Յետայ այն միւսներին էլ փճացրեցինք
173. Եւ նրանց վրայ անձրեւ տեղացրեցինք, բայց ի՛նչ տաժանելի անձրեւ էր այդ խրատաւածների անձրեւը»:

174. Ահա՛ սրանու՛մ նշան կայ, բայց նրանցից շատերը հաւատացեալ չէին:

175. Քո Տէրն է զօրաւորը ողորմածը:

176. Էյքէյի ժողովուրդը սուտ հանեց մարգարէներին:

177. Երբ Շուէյըը նրանց ասաց, «մի՞թէ չէք վախենում»:

178. «Ես ձեզ համար հաւատարիմ մարգարէ եմ:

179. «Ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ ինձ հընազանդեցէ՛ք»:

180. «Ես սրա համար ձեզնից վարձք չեմ ուզում. իմ վարձքը միմիայն աշխարհքների Տիրոջիցն է:

181. Չափը ուղիղ վճարեցէ՛ք եւ մնաս տուղներ մի՛ լինէք:

182. Շիտակ կշիռքով կշռեցէ՛ք:

183. «Եւ մարդկանց բաներին մնաս մի՛ տաք. եւ չարութիւն մի՛ դործէք երկրի մէջ ապականելով:

184. Եւ վախեցէ՛ք նրանից որ ձեզ եւ նախկին աւարածներին ստեղծել է»:

195. Նրանք էլ ասացին, «դու իրաւ կախարդւած ես:

186. «Եւ դու ուրիշ բան չես, եթէ ոչ մեզ նման մի մարդ. եւ մենք քեզ ստախոս ենք կարծում:

187. «Ուրեմն մեզ վրայ մի կտոր վա՛ր գցիր երկրնքիցը, եթէ դու ճշմարտախոս ես»:

188. Նա էլ ասաց, «իմ Տէրը գիտէ, թէ դուք ինչ էք անում»:

189. Նրանք սուտ համարեցին նրան, դրա համար բոնեց նրանց շաքի օրւայ սպառի՞ծը, որ մի մեծ օրւայ պատիժն էր:

190. Ահա՛ սրանու՛մ նշան կայ, եւ նրանցից շատերը հաւատացեալ չէին:

191. Եւ քո Տէրն է զօրաւորը ողորմածը:

192. Եւ սա քո Տիրոջ իջեցրածն է:

193. Հաւատարիմ հոգին վար իջաւ նրանով

194. Քո սրտի մէջ որ խրատուած լինեսս,
195. Յայտնի արարելէն լեզուով՝
196. Ահա՛ նա նախնեաց գրքերումն է:
197. Մի՞թէ սա նրանց համար նշան չէ, որ նրան
գիտէին Իսրայէլի մարդկանց գիտունները՝
198. Եւ եթէ մենք նրան մի քանի օտարների հա-
մար իջեցրած լինէինք,
199. Եւ նա նրան կարգացած լինէր նրանց ատաջին,
նրանք չէին հաւատայ:
200. Մենք այսպէս էլ մտցրեցինք նրան յանցաւոր-
ների սրտի մէջը,
201. Նրանք չեն հաւատայ նրան, մինչեւ չը տես-
նան դաւալի պատիժը:
102. Բայց նա յանկարծակի կը գայ, եւ նրանք չեն
իմանայ՝
203. Եւ կ'ասեն, «արդեօ՞ք մեզ ժամանակ կը տրւի»:
204. «Կամ նրանք մեր պատիժը շտապելով բերե՞լ
կըտան»:
205. Դու ի՞նչ կը կարծես, եթ՛, մենք նրանց տա-
րիներով վայելչութիւններ տանք՝
206. Յետոյ էլ գայ նրանց վրայ, ինչ որ նրանց
սպառնալիք եղաւ.
207. Նրանց մի օգուտ կը բերէ՞ այն, որ վայելե-
ցին:
208. Մենք էլ մի քաղաք չենք ոչնչացրել առանց
խրատողների,
209. Որ յիշեցրեցին. եւ մենք չէինք զրկում:
210. Նրա հետ չեն իջիլ սատանաները.
211. Նրանց էլ չի վայելի, եւ չեն կարող,
212. Որովհետեւ նրանք հեռացրւած են լսելուց:
213. Նաեւ դու Աստուծոյ հետ միասին ուրիշ աս-
տուծոյ մի՛ աղօթիր. որովհետեւ դու կը պատժես:
214. Եւ քո մօտիկ ցեղակիցներիդ խրատի՛ր՝
215. Թեւերդ տալածի՛ր նրանց վրայ որ քեզ հետե-
ւում են հաւատացեալներից՝

216. Եթէ քեզ զէմ ազատամբուեն, այն ժամանակ
ասա՛. «ես ձեր արարքիցը մաքուր եւ հետու եմ» :

217. Եւ ապաւինի՛ր զօրաւոր Ողորմածին,

218. Որ քեզ տեսնում է աղօթքի կանգնելիս.

219 Ինչ երբ դու Խառնում ես երկրպագողների
հետ :

220. Որովհետեւ նա լսողն իմացողն է :

221. Ես ձեզ պատմեմ, թէ սատանաները որի վրայ
են իջնում :

222. Նրանք իջնում են ամեն մի զրպարտիչ մեղա-
ւորի վրայ,

223. Որոնք լսածը թելադրում են եւ սրոնց շատերը
ստախօսներ են :

224. Բանաստեղծներին էլ հետեւում են մոլորած-
ները :

225. Չե՞ս տեսնում, որ նրանք ամեն մի հովիտում
դատարկաչրջում են .

227. Էւ նրանք բաներ են ասում, որ իրանք չեն
անում :

227. Բացի նրանցից, որ հաւատում են եւ բարիք-
ներ գործում եւ Սատուծուն շատ յիշում.

228. Նաեւ նրանք իրանց օգնում են, երբ իրանց
զէմ անիրաւութիւն է եղել . եւ նրանք, որ անիրա-
ւութիւն են արել, շուտով իմանալու են, թէ ինչ դար-
ձուածքով են դարձել :



27) ՍՈՒՐԷ՛Ն ԵՒ Մ Լ

Մէքքէական, իննսուն հինգ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Թ. Ս. Սա Ղուրանի եւ յայտնի գրքի նշաններն են:

2. Արաջնորդութիւն եւ աւետիք հաւատացեալների համար.

3. Որոնք կատարում են ազօթքը եւ տալիս են մաքրութեան տուրքը եւ միւս աշխարհքին համողւած են:

4. Իսկ նրանք, որ միւս աշխարհքին չեն հաւատում մենք պատրաստել ենք նրանց համար իրանց գործքերը, եւ նրանք շիանալու են:

5. Նրանց համար չար տանջանք կայ եւ միւս աշխարհքում նրանք ամենից շատ թշւառներն են լինելու:

6. Հիմայ քեզ թեկազրվում է Ղուրանը մի իմաստուն գիտունի կողմից:

7. Երբ Մովսէս ասաց իր ընտանիքին, «ես մի կրակ տեսայ, ես յուսով նրանից ձեզ մի լուր կը բերեմ կամ նրանից մի բոցալաւ կրակի մասը կը բերեմ, որ տաքանաք»:

8. Նրա մօտ եկած ժամանակը մի ձայն հնչեց, թէ «օրհնեալ լինի՞ նա որ կրակի մէջն է եւ նրա շուրջ եղողները, եւ սուրբ է աշխարհների Տէրը՝ Աստուած»:

9. «Ո՛վ Մովսէս, զօրաւորը իմաստունը՝ Աստուած ես եմ»:

10. «Արդ գցի՛ր քո դաւազանը»: Իսկ երբ նրան տեսաւ որ նա սողում էր օձի նման, ետ ետ քաշեց եւ էլ ետ չը դարձաւ: «Ո՛վ Մովսէս, մի՛ վախի՛ր, իմ մարգարէները չեն վախի ինձ մօտ»:

11. «Բացի նրանից, որ անիրաւ է եղել, բայց չա-

բութիւն անելուց յետոյ լաւի է փոխել. որովհետեւ ես ներող ողորմած եմ:

12. «Ձեռնդ զի՛ր ծոցիդ մէջը, եւ նա սպիտակ դուրս կըրգայ առանց վնասի ինը հրաշքների հետ միասին Փարաւօնի եւ նրա ժողովրդի ստաջին. որովհետեւ նրանք անզգամ մարդիկ են»:

13. Իսկ մեր հրաշքները հրապտրակու. նրանց մօտ եկան, ասացին, «սա յայտնի կախարդութիւն է»:

14. Նրանք ուրացան եւ իրանց անձերոււմը համոզւած էին անիրաւարար եւ հպարտութեամբ: Եւ տե՛ս թէ՛ ինչպէս եղաւ ապականիչների վերջը:

15. Մենք էլ արդէ՛ն Դաւիթին եւ Սողոմոնին տեղինք գիտութիւն, եւ նրանք ասացին, «փառքը լինի՛ Աստուծուն, որ մեզ իր հաւատացեալ ծառաների շատերիցը գերազանց է արել»:

16. Սողոմոնն էլ ժառանգեց Դաւիթին եւ ասաց, «ո՛վ մարդիկ, մեզ սովորեցրել են թռչունների լեզուն եւ մեզ ամեն բան տրւել է. ահա՛ այն յայտնի գերտգանցութիւնն է»:

17. Սողոմոնի մօտ էլ ժողովեցին նրա դուերի, մարդկանց եւ թռչունների դունդերը. եւ նրանք առանձին առանձին էին առաջնորդոււմ,

18. Մինչեւ եկան մրջիւնների հովիտը: Մի մրջիւն ասաց, «ով մրջիւններ, մաէ՛ք ձեր բնակարանները. որ Սողոմոնը եւ նրա գունդերը ձեզ կօխ չըտան առանց գիտենալու»:

19. Նա էլ նրանց խօսքի վրայ ծիծաղեց քմծիծաղով եւ ասաց, «ո՛վ իմ Տէր, ինձ ուղեկցի՛ր, որ քո շնորհքի համար քեզնից գոհանամ, որ գուցոյց ես տւել ինձ եւ իմ որդուս, եւ որ ես բարիք գործեմ, որ քեզ հաճելի լինի. եւ ինձ մտցրօ՛ւ քո ողորմութիւնովը քո արգար ծառաների դասը»:

20. Եւ նա թռչուններին հանդէս անելիս ասաց, «սա ի՞նչ է որ ես յոպոսը չեմ տեսնոււմ, կամ նա բացակա՞ջ է:

21. «Ես նրան անպատճառ պիտի պատժեմ սաստիկ պատիժով կամ նրան պիտի մորթիմ, կամ թող ինձ մօտ կայ յայտնի պատճառաբանութիւնով»:

22. Բայց նա երկար չուշացաւ եւ ասաց, «ես մի տեղ եմ պտոյտ տւել, որ դու այնտեղը պտոյտ չես արել. եւ ես եկել եմ Սաբայից հաստատ լուրով»:

23. «Ես մէկ կիւն եմ գտել, որ թագաւորում է նրանց վրայ եւ նրան ամեն բան տրւած է, եւ նա մի մեծ գահ ունի»:

24. «Տեսայ որ նա եւ նրա ժողովուրդը բացի Աստուածանից արեգակին եւ երկրպագում. եւ սատանան պատրաստում է նրանց գործքերը եւ նրանց հեռացրնում է ճանապարհիցը եւ նրանք ուղիղ ճանապարհով չեն առաջնորդում»:

25. «Որ չ'երկրպագեն Աստուծուն, որ դուրս է հանում երկնքում ու երկրում եղած ծածուկ բաները, եւ գիտէ թէ ինչ էք գաղտնի պահում եւ ինչ յայտնում»:

26. «Աստուած՝ ուրիշ աստուած չըկայ նրանից ջոկ. նա է մեծ գահի Տէրը»:

27. Նա էլ ասաց, «չտեսով կը տեսնենք, թէ ճշմարիտ ես, թէ սուտ ես»:

28. «Վեր ա՛ռ, տա՛ւր այս նամակը գցի՛ր նրանց մօտ. յետոյ մէկ կողմ դարձի՛ր, եւ տես թէ ինչ պատասխան կը տան»:

29. Այն կիւնն ասաց, «ո՛վ մեծամեծներ, ինձ մօտ մի ազնիւ նամակ է գցւել»:

30. «Նա Սողոմոնիցն է, եւ անա՛ նա գթած ողորմածն Աստուծոյ անուշովն է»:

31. «Թէ մի՛ հպարտանաք ինձ դէ՛մ, այլ եկէ՛ք ինձ մօտ իբրեւ անձնատուրներ»:

32. Կիւնն ասաց, «ո՛վ մեծամեծներ, այս իմ գործի մէջ ինձ խորհուրդ տէ՛ք. ես մի բան չեմ որոշի, մինչեւ դուք ինձ վկայութիւն չը տաք»:

33. Նրանք էլ ասացին, «մենք գորութեան տէր ենք եւ խիստ զօրքեր ունենք. ուրիմն բանը քեզ է վերաբերում. տես թէ դու ինչ ես հրամայելու»:

34. Կ ի ն ն ասաց. «ա՛հա՛ երբ թագաւորները մի քաղաք են մտնում, նրան քանդում են, եւ նրա պատուաւոր բնակիչներին անպատիւ են անում. նրանք այսպէս են անում»:

35. «Նրանց ես մի բնծայ եմ ուղարկելու եւ սպասելու եմ, տեսնեմ թէ իմ ուղարկածները ինչպէս են ետ դառնալու»:

36. Եւ երբ նրանք Սողոմոնի մօտը եկան, նա ասաց, «գուք ուզո՞ւմ էք ինձ ստացւածքով օգնել. բայց Աստուծոյ ինձ տւածը աւելի լաւ է քան թէ նա որ ձեզ է տւել: Սակայն գուք ուրախացէ՛ք ձեր ընծայովը»:

37. «Դարձէ՛ք նրանց մօտ. մենք գունդերով ձեզ մօտ ենք գալու. որոնց գիմարութիւն՝ չի լինի նրանցով. եւ մենք նրանից գուքս կը հանենք նրանց անպատիւ կերպով, եւ նրանք պէտք է խոնարհեն»:

38. Ասաց, «ո՛վ մեծամեծներ, ձեզնից ո՞վ կը բերէ ինձ համար այն կնկան գահը՝ նրանց իբրեւ անձնատուրներ ինձ մօտ գալուց առաջ»:

39. Դեւերից Իֆրիթն ասաց, «ես կը բերեմ նրան՝ գու դեռ տեղիցդ վեր չը կացած. եւ ես այդ բանի համար կարող եմ եւ հաւատարիմ»:

40. Մէկը, որ գիրքը գիտէր, ասաց, «ես կը բերեմ նրան քեզ մօտ, գու քո աչքը մի ասարկայից դեռ ետ չ'առած»։ Եւ երբ նա տեսաւ գահը իր մօտ դրած, «սա իմ Տիրոջ պարգեւն է, որ ինձ փորձէ թէ երախտագէտ կը լինեմ թէ երախտամոռ»։ Եւ ով երախտագէտ է, նա իր անձի համար է երախտագէտ. բայց ով ապերախտ է, ա՛հա՛ իմ Տէրը հարուստ փառաւոր է»։

41. Սողոմոն ասաց, նրա գահը այնպէս արէք, որ չը ձանաչէի. տեսնենք, նա ուղիղ կ'առաջնորդուի թէ չի առաջնորդուի»։

42. Եւ երբ թագուհին եկաւ, ասեց նրան, «արդեօ՞ք քո գահը սրա նման էր»։ Նա էլ ասաց, «կարծես թէ նա է։ Մեզ գիտութիւնը աւելի առաջ է տրւած քան թէ դրան, եւ մենք միւսլիմներ էինք»։

43. Նրան մոլորեցրել է այն բանը որ Աստուածանից զատ պաշտում էր, ահա՛ նա անհաւատ ժողովրդից է:

44. Թագուհուն ասացին, «մտի՛ր պալատը»: Եւ երբ նա տեսաւ, կարծեց թէ մի լիճ է, եւ սրունքներ/ցը հագուստը վեր բարձրացրեց: Նա ասաց, «սա մի պալատ է ապակիներով սալայատակւած»:

45. Թագուհին ասաց, «ո՛վ իմ Տէր ես իմ անձի գէ՛մ անիրաւութիւն եմ գործել, եւ Սողոմոնի հետ անձնատուր եմ լինում Աստուծուն՝ աշխարհքների Տիրոջը»:

46. Մենք արդէն Սամուղցիների մօտ ուղարկեցինք իրանց եղբայր Սալէյճին, թէ Աստուծուն պաշտեցէ՛ք»: Այն ժամանակ նրանք երկու կուսակցութիւն եղան եւ միմեանց հակառակեցին:

47. Նա ասաց, «ո՛վ իմ ժեղովորդ, դուք ինչո՞ւ էք շտապելով չարիք ուղում դեռ բարիք չ'եկած: Եթէ թողութիւն խնդրէք Աստուածանից, գուցէ ձեզ ողորմի»:

48. Նրանք էլ ասացին, «մենք քեզնից եւ քեզ հետեողներից վատ բաներ ենք գուշակում»: Նա էլ ասաց, «ձեր գուշակածը Աստուծոյ մօտ է. սակայն դուք փորձելու մարդիկ էք»:

49. Եւ այն քաղաքի մէջ ինը մարդ կային, որ երկիրն ապականում էին, եւ մի բարիք չէին անում:

50. Սացին, «երգում արէ՛ք Աստուծոյ որ գիշերը նրա վրայ եւ նրա ընտանիքի վրայ յարձակուենք. եւ յետոյ նրա վրէժխնդրողին ասենք, «մենք նրա ընտանիքի կորչելը չենք տեսել. եւ մենք ճշմարտախօսներ ենք»»:

51. Նրանք մի խորամանկութիւն հնարեցին, եւ մենք էլ մի խորամանկութիւն հնարեցինք, երբ նրանք չը գիտէին:

52. Հիմայ տես, թէ ինչպէս եղաւ նրանց խորամանկութեան վախճանը. մենք նրանց եւ իրանց ազգը բոլորովին ջնջեցինք:

53. Եւ նրանց անելը դարտակ են նրա համար, որ անիրաւութիւն էին արել: Ահա՛ սրանում նշան կայ հասկացող մարդկանց համար:

54. Մենք էլ ազատեցինք նրանց, որ հաւատում են
և երկիրդած էին:

55. Եւ ուղարկեցինք Ղովտին. երբ ասաց, իր ժո-
ղովրդին. «դուք մի՞թէ անառակութիւն էք անում բաց
աչքերով տեսնելով:

56. Մի՞թէ դուք ցանկութիւնով արուհներին կը մո-
տենաք՝ կնիկները թողելով. բայց դուք անգէտ մար-
դիկ էք»:

57. Նրա ժողովրդի պատասխանն էլ միմիայն սա էր,
որ ասում էին, «Ղովտի բնտանիքին դուրս արէ՛ք ձեր
քաղաքիցը. որովհետեւ դրանք իրանց մաքուր համա-
բող մարդիկ են»:

58. Եւ մենք նրան և նրա ընտանիքին ազատեցինք
բաց ի կնկանից, որին մենք որոշել էինք որ ետ մնայ:

59. Մենք էլ նրանց վրայ անձրեւ տեղացրեցինք. և
ի՛նչ վատ է նրանց անձրեւը, որոնց սպառնալիք է
կղած:

60. Ասա՛, փառքը Աստուծուն և խաղաղութիւն նրա
ծառաներին, որոնց Աստուած ընտրել է: Նա լաւ է այն
բաներից, որ նրան ընկերներ են շինում:

61. «Կամ նա, որ ստեղծել է երկինքը և երկիրը
և իջեցրել է ձեզ համար երկնքից ջուր»․ և մենք
նրանով բուսցրել ենք ձեզ համար զւարթարար պար-
տէզներ, բայց դուք չէք կարող նրա ծառը վեր բուս-
ցընել: Մի՞թէ Աստուծոյ հետ միասին ուրիշ Աստուած
կա՞յ: Ո՛չ, նրանք մի անիրաւ ազգ են:

62. Կամ նա՞, որ երկիրը հաստատել է և նրա մէջ
գետեր է շիննել: Մի՞թէ Աստուծոյ հետ միասին մի ու-
րիշ աստուած կայ: Ո՛չ, նրանցից չատերը չեն հաս-
կանում:

63. Կամ նա՞, որ նեղեալի աղօթքին պատասխան է
տալիս և չարիքը նրանից վերցնում, և ձեզ երկրիս
յաջորդներ է շինում: Մի՞թէ Աստուծոյ հետ միասին
մի ուրիշ աստուած կայ: Դի՛չ են, որ մտածում են:

64. Կամ նա՞, որ ձեզ ասաջնորդում է ցամաքի և

ծովի խաւարներումը, եւ նա՞, որ իր ողորմութիւնից առաջ քամիններն ուղարկում է իբրեւ աւետիք: Մի՞թէ Աստուծոյ հետ մի ուրիշ աստուած կայ. բարձր է Աստուած այն բաներից, որ նրան ընկերներ են շինում:

65. Կամ նա՞ որ մի արարած է ստեղծում. եւ յետոյ նրան հա բերում. եւ նա՞ որ ձեզ կերակրում է երկրն֊ քիցն ու երկրիցը: Մի՞թէ նրա հետ միասին մի ուրիշ Աստուած կայ: Ասա՛, «բերէ՛ք ձեր ապացոյցը, եթէ ճշմարտախօս էք»:

66. Ասա՛, «եւրֆնքումը եւ երկրումս եզոզ մէկը չ'գիտէ գաղտնիքները բացի Աստուածանից»: Բայց նրանք չեն հասկանում,

67. Թէ երբ են յարութիւն առնելու,

68. Սակայն նրանք միմիանց գիտութեան են սովորեցրել միւս աշխարհի համար, բայց նրանք կասկածի մէջ են այդ մասին: Այո, դորանք այդ պատճառով կոյր են:

69. Անհաւատներն էլ ասում են, «Մի՞թէ երբ հող դարձած լինենք մենք եւ մեր հայրերը, մենք կրկին յարութիւն կառնենք»:

70. «Մեզ եւ մեր հայրերին եղել է արգէն այս խոստմունքը առաջուց էլ, բայց սա միայն նախնեաց առասպելներ են:

71. Ասա՛, «ման եկէ՛ք երկրիս մէջ եւ տեսէ՛ք, թէ ինչպէս է եղել յանցաւորների վախճանը»:

72. Մի՛ տրտմիր նրանց վրայ եւ մի՛ նեղւիր նրանց արած խորամանկութեան համար:

73. Եւ որ ասում են, թէ այս խոստացածը երբ պիտի լինի, եթէ դուք ճշմարտախօս էք:

74. Ասա՛, «գուցէ գալիս է ձեր հոռուից նրանից մի մասը, որ դուք նրանց գալը շտապեցնում էք»:

75. Իբաւի էլ քո Տէրը շնորհք ունեցող է մարդկանց դէմ. սակայն նրանց շատերը երախտագէտ չեն:

76. Իբաւի քո Տէրը գիտէ, թէ նրանց սրտերը ինչ են գաղտնի պահում եւ ինչ են յայտնում:

77. Եւ երկնքի ու երկիի մէջ մի բան չըկայ որ մի յայտնի դրքում չըլինի:

78. Իրաւի այս Ղուբանը պատմում է Իսրայէլի որդկանց այն բաներից շատը, որի մասին նրանք վիճաբանում են:

79. Եւ ահա՛ սա ճանապարհացոյց եւ ողորմութիւն է հաւատացեալների համար:

80. Իրաւի քո Տէրը դատելու է նրանց մէջ իր դատաստանովը, եւ նա է զօրաւորը իմացողը:

81. Դու էլ Աստուծուն ապաւինի՛ր, որովհետեւ դո՛ւ յայտնի ճշմարտութեան վրայ ես:

82. Իրաւի դու մեռելներին չես կարող լսել ապա եւ ոչ էլ խուլերին լսել ապա կոչը, եթէ նրանք իրանց մէջքները դարձնում են:

83. Դու կոյրերին իրանց մոլորութիւնիցն առաջնորդող չես. դու միայն նրանց կարող ես լսել ապա, որոնք հաւատում են մեր նշաններին եւ միւսլիմ են:

84. Եւ երբ խօսքը կը կատարուի նրանց վրայ, այն ժամանակ մենք երկրիցը մի կենդանի դուրս կը հանենք. որ կը խօսէ մարդկանց հետ որոնք մեր նշանների մասին հաստատ հաւատք չ'ունէին:

85. Այն օրն էլ մենք ամեն ազգից, որ մեր նշանները սուտ էին համարում, խումբեր ենք հաւաքելու, եւ նրանք պէտք է պահուին.

86. Մինչեւ կըզան. նա էլ կ'ասէ, «դուք սո՛ւտ համարեցիք իմ նշանները. թէ՛ եւ դուք նրանց չէիք ըմբռնում գիտութեամբ. դա ի՞նչ էք արել դուք»:

87. Եւ կը կատարուի նրանց վրայ այն խօսքը, որի դէմ նրանք անիրաւ էին գտնուել, եւ նրանք չեն կարողանայ խօսել.

88. Մի՞թէ չեն տեսնում, որ մենք գիշերը շինել ենք, որ նրանում հանգստանան եւ օրն էլ՝ լոյս տեսնուելու համար. — ահա՛ սրանում նշաններ կան հաւատացեալ մարդկանց համար:

89. Եւ այն օրը, որ փողը կը փչւի եւ սարսափահար

են լինելու նրկնքում եւ երկրում եղողները բացի Աստուծոյ ուզածիցը. եւ ամենը գալու են նրա մօտ խոնարհւած:

90. Դու էլ կը տնսնես սարերը, եւ կը կարծես թէ քարացել են, բայց նրանք կ'անցնեն ինչպէս ամպն է անցնում: Սա Աստուծոյ գործն է, որ ամեն բան կարգադրել է. որովհետեւ նա զիտէ ձեւ արարքը:


91. Ով որ բարեգործութեամբ կը գայ, նրա համար քարիք կայ նրանից, եւ նրանք այն ժամանակ ապահով կը լինեն այն սարսափահարութիւնից:

92. Ով որ էլ չարագործութեամբ կը գայ, նրանց երեսը կ'այլուի կրակի մէջը: Մի՞թէ դուք միմիայն այն բաների հատուցումը չէք անում, որ արել էք:

93. Հրաման ունեմ, միայն այս քաղաքի Տիրոջը պաշտեմ որ նրան սրբացրել է, եւ ամեն բան նրանն է, եւ ինձ պատուիրւած է, որ միւսլիմ լինեմ,

94. Եւ կարգամ Ղուրանը. եւ սվ որ նրանով կ'առաջնորդուի, իր անձի համար կ'առաջնորդուի, եւ ով որ կը մոլորուի, դու ասա՛ թէ «ես միմիայն մի իրատիչ եմ»:

95. Ասա՛. «փառքը լինի Աստուծուն. նա շուտով ձեզ ցոյց կը տայ իր նշանները, եւ դուք նրանց կը ճանաչէք. եւ քո Տէրը անդէտ չէ, թէ դուք ինչ էք անում»:



28) ՍՈՒՐԷ Գ Ը Ս Ա Ս.

Մէքքէական. Ութսուն ութը այէ:

Գթած ոգորմած Աստուծոյ անունովը:

1. Թ. Ս. Մ. Սա յայտնի գրքի նշաններն են.
2. Որ մենք Մովսէսի եւ Փարաօ օնի պատմութիւնիցը

քեզ կարդում ենք ճշմարտութեամբ հաւատացեալ մարդկանց համար:

3. Իբրաւ գոռոզացաւ Փարաւօնը երկրի վրայ եւ իր ժողովուրդը մի այնպիսի խումբ շինեց, որ մի ազգ թշւառեցրեցին, որ նրանց աղաներին մորթում էին, բայց նրանց էգերին կենդանի էին պահում որովհետեւ նա ապականիչ էր:

4. Բայց մենք ուզեցինք, որ շնորհք ցոյց տանք երկրի վրայ թշւառացրածներին, եւ մենք նրանց առաջնորդներ շինեցինք եւ նրանց ժառանգներ արեցինք:

5. Նրանց էլ բնակեցրեցինք այն երկրու՛ր, եւ ցոյց տւեցինք Փարաւօնին եւ Համանին եւ նրանց գունդերին այն բանը, որ նրանից վախում էին:

6. Նաեւ Մովսէսի մօրը յայտնութիւն տւեցինք, թէ նրան ծեծ տուր. իսկ եթէ նրա մասին վախես, նրան գցի՛ր ծովը, եւ երկիւղ մի՛ անիր եւ մի՛ տրտմիր. մենք նրան քեզ կը վերադարձնենք, եւ նրան մի մարգարէ կը շինենք:

7. Այն ժամանակ Փարաւօնի ընտանիքը նրան վերառաւ, եւ նրանց համար մի թշնամի եւ մի արտմացուցիչ եղաւ: Բայց Փարաւօն եւ Համան եւ նրանց գունդերը յանցաւորներ էին:

8. Փարաւօնի կիներն էլ ասաց, «սա իմ աչքիս լոյս է, նոյնպէս էլ քեզ: Նրան մի՛ սպանէք. գուցէ նա մեզ օգտակար կը լինի. կամ մենք նրան որդի կընդունենք»: Բայց նրանք չէին հասկանում:

9. Եւ Մովսէսի մօր սիրտը հանդարտ եղաւ, որ քիչ մնաց որ այդ բանը յայտնէր, եթէ մենք նրա սիրտը հաստատած չը լինէինք, որ հաւատացեալ լինէր:

10. Մայրն էլ ասաց նրա քրոջը, «գրա ետեւիցը գընա՛», եւ նա մէկ կողմից մտիկ էր աալիս նրան, եւ նրանք էլ չը գիտէին:

11. Եւ մենք առաջուց նրան արգիլել էինք ծեծ առնելը. եւ քոյրն ասաց, «ես ձեզ մի տան ընտանիք տա-

նե՞մ որ նրան խնամեն ձեզ տեղ, եւ նրանք նրա համար հոգ կը տանեն»:

12. Մենք նրան ետ դարձրինք էլ իբրան մօրը, որ աչքը լոյս լինի՛, եւ ինքը չը արտօի, այլ իմանայ որ Աստուծոյ խոստումը ճշմարիտ է. բայց նրանցից շատերը չէին հասկանում:

13. Իսկ երբ նա չափահաս եղաւ եւ հաստատուեց, մենք նրան իմաստութիւն եւ գիտութիւն տեցինք, եւ մենք բարեգործներին այսպէս ենք վարձատրում:

14. Նա էլ գնաց քաղաքը մի ժամանակ, որ նրա ժողովուրդը չը գիտէր, եւ նրանում երկու մարդ գտաւ, որ միմիանց հետ կալում էին, նրանցից մէկը իր ցեղիցն էր, իսկ միւսը իր թշնամիներէն: Նրա այն ցեղակիցը նրա օգնութիւնը խնդրեց իր թշնամու դէմ. եւ Մովսէսը բռունցքով նրան այնպէս խփեց, որ նա մեռաւ: Եւ նա ասաց, «սա սատանայի գործ է, որովհետեւ նա թշնամի է եւ յայտնի մոլորեցուցիչ»:

15. Ասաց, «ո՛վ իմ Տէր, ես իմ հոգու դէմ եմ մեղանշել. ինձ ների՛ր»: Եւ նա ներեց նրան, որովհետեւ նա ներող ողորմած է:

16. Եւ ասաց, «որովհետեւ դու ինձ շնորհք արեցիր, ուրեմն ես այլեւս երբէք չեմ օգնի յանցաւորներին»:

17. Միւս օրը վախում էր քաղաքումը եւ զգուշութիւն էր անում, եւ ահա՛ նա որին օգնել էր անցեալ օրը, աղերսում էր նրան: Մովսէս ասաց նրան, «դու մի յայտնի կուարար ես»:

18. Իսկ երբ նա ուզեց, որ բռնի ետ պահէ նրան, որ երկուսին էլ թշնամի էր, ասաց, «ով Մովսէս, ինձ սպանե՞լ ես ուզում ինչպէս երէկ մի մարդ սպանեցիր. դու միայն ազում ես մի բռնակալ լինես երկրումս, եւ դու չես ուզում բարեգործ լինել»:

19. Քաղաքի ծայրիցն էլ վազելով մի մարդ եկաւ, ասաց, «ո՛վ Մովսէս, մեծամեծները պտրում են, որ քեզ սպանեն. ուրեմն դո՛ւրս գնա. ես քեզ խորհուրդ եմ տալիս»:

20. Նա այնտեղից էլ գուրս եկաւ. զգուշանալով եւ ասաց, «ո՛վ իմ տէր, ինձ ազատի՛ր չար մարդկանցից»:

21. Ու երբ գնում էր հասաւ Մաղիան երկիրը, եւ ասաց, «գուցէ Տէրս ինձ ուղիղ ճանապարհով կ'առաջնորդէ»:

22. Մաղիանու ջրին հասած ժամանակը, նա այնտեղ մի խուճր մարդիկ տեսաւ, որ ջուր էին տալիս:

23. Բացի նրանցից երկու կնիկներ էլ տեսաւ, որ հետու կանգնած էին. եւ ասաց, «ի՞նչ էք ուզում»: Նըրանք էլ ասացին «մենք չենք կարող ջուր տալ մեր հօտերին մինչև հովիւներն իրանցը չը հեռաղնեն. եւ մեր հայրը մի մեծ ձեր է»:

24. Նաեւ նրանց հօտերին ջուր տեղ, եւ յետոյ ետ դարձաւ շուաքի մօտը, եւ ասաց, «ո՛վ իմ Տէր, ես կարօտ եմ, որ դու ինձ համար կ'ուզարկես»:

25. Այն երկուսից մէկն էլ ամաչելով եկաւ նրա մօտ եւ ասաց, «տե՛ս իմ հայրը քեզ կանչում է, որ տայ քո վարձը որ մեր հօտերին ջուր տեղցիր»: Եւ երբ նա նրա մօտ եկաւ, պատմեց նրան այն պատմութիւնը: Նա էլ ասաց «մի՛ վախի՛ր, դու անիրաւ ազդիցն ազատեի պրծել ես»:

26. Այն երկուսից մինն ասաց, «ո՛վ հայրս, վարձով բռնի՛ր գրան, որովհետեւ լաւ է, որ մի զօրաւոր հաւատարիմ մարդ վարձես»:

27. Նա էլ ասաց «ես ուզում եմ, որ իմ այս երկու ազդիկների մէկը քեզ հետ ամուսնացնեմ այն պայմանով, որ դու ութը տարի քեզ ինձ վարձես. իսկ եթէ դու ուզես տասը լրացնել, դա քո բանն է. եւ ես չեմ ուզում, որ քեզ համար դժարութիւններ չլինեմ: Աստուծով կը տեսնես ես բարի մարդ եմ»:

28. Եւ նա ասաց, «սա իմ եւ քո մէջ մնայ. հիմայ ես այս երկու որոշած ժամանակներից մինն էլ որ պահեմ, ես յանցաւոր չեմ լինի Աստուծոյ առաջին, եւ Աստուած մեր ասածին վկայ լինի»:

29. Ու երբ Մովսէս վերջացրեց պայմանեալ ժամանակը եւ գնում էր իր ընտանիքի հետ, Սինայ սարի

կողմին մի կրակ տեսաւ, ասաց իր ընտանիքին, կանգնեցէ՛ք. ես կրակ եմ տեսել. դուցէ այն աղիլից ձեզ համար մի լուր կը բերեմ, կամ մի բոցավառ կրակի մասը որ տաքանաք»:

30. Բայց երբ նա այնտեղ եղաւ. մի ձայն կանչեց հովիտի միջիցը աջ կողմից օրհնեալ ձորումը ծառիցը, թէ «ո՛վ Մովսէս, ես եմ աշխարհքների Տէրը Աստուած»:

31. Նաեւ թէ «գցի՛ր դաւազանդ». եւ երբ տեսաւ նա սողում էր ինչպէս մի օձ, ետ ետ գնաց եւ կրկին այնտեղ չբզնաց: «Ո՛վ Մովսէս, առաջ գնա եւ մի՛ վախիր, որովհետեւ դու ապահով ես»:

32. Ձեռնդ գի՛ր ծոցումդ, եւ նա դուրս կրտոյ սպիտակ առանց մի մնասի, եւ ձեռնդ կրկին քեզ մօտ քաշի՛ր առանց երկիւզի: Եւ սրանք երկու ապացոյցներ են քո Տիրոջ կողմանէ Փարաօնի եւ նրա մեծամեծների մօտ. որովհետեւ նրանք չար մարդիկ են»:

33. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ես նրանցից մի մարդ եմ սպանել. եւ վախենում եմ թէ ինձ կ'սպանեն»:

34. «Իմ եղբայր Ահարօնը լեզուով ինձնից ճարտարախօս է, նրան ինձ հետ ուղարկի՛ր, որ օգնէ եւ ինձ հաստատէ. ես վախում եմ թէ ինձ ոռւտ կը համարեն»:

35. Նա էլ ասաց, «մենք կը զօրացնենք քո բազուկը քո եղբորովը, եւ ձեզ երկուսիդ իշխանութիւն կըտանք, այնպէս որ նրանք ձեզ չեն հասնի մեր նշանների պատճառով. դուք երկուսդ եւ ով որ էլ ձեզ կը հետեւէ՝ յաղթողներ կը լինէք»:

36. Մովսէսն էլ երբ մեր յայտնի նշաններովը նըրանց մօտ եկաւ, ասացին, «սա մի ուրիշ բան չէ, եթէ ոչ խաբերայ կախարդութիւն, որ այսպիսի բան մեր նախկին հայրերից լսած չենք»:

37. Մովսէսն ասաց, «Իմ Տէրը աւելի լաւ գիտէ, թէ ով է նրա մօտիցը առաջնորդութիւնով եկել, եւ ո՞ւմը կը լինի միւս աշխարհի տունը. ահա անիրաւները երջանիկ չեն լինի»:

38. Փարաօնն էլ ասաց, «ո՛վ մեծամեծներ, ես չը գիտէի թէ դուք ինձնից զատ ուրիշ աստուած ունէք. արդ, ո՛վ Համան, ինձ համար ցեխից աղիւս այրի՛ր եւ ինձ համար մի ապարանք շինի՛ր որ ես վեր բարձրանամ Մովսէսի Աստուծուն մօտ. ահա՛ ես նրան ստախօս եմ կարծում»:

39. «Նա ինքը եւ իր զօրագունդները ամբարտաւան եղան այն երկրումը անխրաւութեամբ. եւ կարծեցին թէ ետ չեն դառնալու մեղ մօտ»:

40. «Մենք էլ բռնեցինք նրան եւ նրա զօրագունդներին ու շարահայրնք ծովը: Արդ մտիկ տուր, թէ ինչպէս եղաւ անխրաւների վախճանը»:

41. Նաեւ մենք նրանց առաջնորդներ շինեցինք, որ կանչում են մարդկանց կրակի մէջը, եւ յարութեան օրը օգնող չեն ունենայ:

42. Ու մենք նրանց ետեւիցն ուղարկեցինք այս աշխարհքում անէծք եւ յարութեան օրը նրանք կը պախարակեն:

43. Եւ մենք այն առաջի սերունդները ջնջելուց յետոյ տեցինք Մովսէսին գիրքը՝ իբրեւ սեսողութիւն մարդկանց համար եւ առաջնորդութիւն եւ ողորմութիւն որ մտածեն:

44. Իսկ դու արեւմտեան կողմում չէիր, երբ Մովսէսի բանը վճռեցինք, եւ դու ներկայ չէիր:

45. Բայց մենք առաջ բերեցինք ուրիշ սերունդներ, որոնց կեանքը երկայնացաւ. եւ դու Մադիանի ժողովրդի մէջ չես բնակուել, որ նրանց կարգայիր մեր նշանները: Բայց մենք ենք ուղաւորը:

46. Դու էլ Սինայի կողքին չէիր, երբ նրան կանչեցինք: Բայց իբրեւ ողորմութիւն քո Տիրոջ կողմանէ գնա՛, որ խրատես մի ժողովրդի, որ քեզնից առաջ մի խրատող չէ ունեցել. որ մտածեն:

47. Որ մի գուցէ նրանք, երբ իրանց ձեռների առած գործերի համար նրան մի պատուհաս հանգիպէ,

ասին, «ո՛վ մեր Տէր, ինչո՞ւ համար դու մեզ մի մար-
գարէ չ'ուղարկեցիր, որ մենք հետեւէինք քո խօսքե-
րիդ եւ հաւատացեալ լինէինք»:

48. Բայց երբ մեր կողմից եկաւ նրանց համար ճշ-
մարտութիւնը, ասում են, «ինչո՞ւ նրան չէ տրոււմ
ինչպէս Մովսէսին է տրուել»: Բայց մի՞թէ սրանից ա-
ռաջ Մովսէսին տրւածն չ'ուրացան: ասացին, «երկու
կախարութիւններ են, որ իրար օգնում են». եւ ա-
սացին, «մենք ո՛չ մէկին էլ չենք հաւատում»:

49. Ասա՛, «ուրեմն մի գիրք բերէ՛ք Աստուծոյ կող-
մից, որ աւելի լաւ առաջնորդող լինի քան թէ այս
երկուսը, եւ ես կը հետեւեմ նրան, եթէ ճշմարտախօս
էք»:

50. «Իսկ եթէ նրանք քեզ չը պատասխանեն, իմա-
ցի՛ր, որ նրանք իրանց հաճոյքների հետեւիցն են գը-
նում: Եւ ո՞վ կայ աւելի շատ մոլորող քան թէ նա,
որ առանց Աստուծոյ առաջնորդութեան իրանց հաճոյք-
ներին է հետեւում: Աստուած չարագործ մարդկանց չի
առաջնորդի:

51. Եւ մենք արդէն հասցրիւ ենք նրանց խօսքը որ
յիշեն,

52. նրանք, որոնց որ մենք իրանցից առաջ տուել
ենք գիրքը, հաւատում են նրան:

53. Ու երբ կարգացում է նրանց, ասում են, «մենք
հաւատում ենք դրան, որովհետեւ դա ճշմարտութիւնն
է մեր Տիրոջ կողմանէ: մենք արդէն վաղուց միւսլիմ-
ներ էինք»:

54. նրանց վարձք կը տրուի կրկնապատիկ, որ համ-
բերում են եւ չար բանը բարիքով են փոխարինում,
եւ մեր իրանց պարգեւածիցը ողորմութիւն են տալիս:

55. Եւ երբ դատարկարանութիւններ են լսում, նրա-
նից ետ են քաշուում, եւ ասում, «մեզ մեր գործքերը,
ձեզ էլ ձեր գործքերը, խաղաղութի՛ւն լինի ձեզ, տը-
գէտների հետ մենք գործ չունենք»:

56. Դու չիս կարող քո սիրածիդ առաջնորդել, բայց

Աստուած կ'առաջնորդէ իր ուղածին. եւ նա աւելի լաւ է ճանաչում առաջնորդւածներին .

57. Նրանք էլ ասում են, «եթէ մենք քեզ հետ առաջնորդութեան հետեւենք, մենք կ'աքսորւենք մեր երկրիցը»: Բայց մենք մի՞թէ նրանց մի ապահով սուրբ բնակավայր չենք տւել, որ ամեն բանից նրանց համար ընտիր պտուղներից սնունդ է բերում մեր կողմանէ. բայց նրանցից չատերը չեն իմանում:

58. Իսկ ո՞րքան քաղաքներ ենք մենք բնաջինջ արել, որոնք լիութեան մէջ էին ապրում, եւ որոնց այս բնակատեղիներում միայն քիչերն են նրանցից յետոյ բնակւում: Եւ մենք ենք ժառանգները:

59. Փո Տէրը չէր. որ քաղաքները բնաջինջ անէր, մինչեւ չ'ուղարկէր իրանց մայրաքաղաքը մի մարգարէ որ նրանց կարգար մեր նշանները. եւ մենք քաղաքներ բնաջինջ անողներ չէինք. այլ նրանց բնակիչներն էին անիրաւ:

60. Եւ ինչ ձեզ տրւած է, այս աշխարհքի կեանքի եւ նրա պաճուճանքի համար է, իսկ ինչ Աստուծոյ մօտ է, նա աւելի լաւ է եւ կը մնայ. մի՞թէ չէք հասկանում:

61. Ում էլ մենք մի լաւ խոստում ենք խոստացել, եւ նա նրան ստանալու է, մի՞թէ նա այն մարդու նրման է, որին մենք տւել ենք այս աշխարհքի ապրուստը, յետոյ նրանք յարութեան օրը զատաստանի պիտի քաշուին:

62. Մի օր նա կ'անչուելու է նրանց եւ ասելու, «ո՞ւր են այն աստուածընկերները, որոնց դուք կարծում էքք»:

63. Նրանք, որոնց համար ճշմարտացած է այն խօսքը, թէ «ո՞վ մեր Տէր, սա նրանք են, որոնց մենք մոլորեցրել ենք, մենք նրանց մոլորեցրել ենք. ինչպէս որ մենք մոլորւած ենք. հիմայ նրանցից մաքրւած քեզ մօտ ենք գալիս. նրանք մեզ չէին պաշտում»:

64. Եւ ասեց, «կանչեցէ՛ք ձեր աստուածընկերներին, եւ նրանք կը կանչեն նրանց, բայց նրանք չեն

պատասխանի նրանց եւ կը տեսնեն պատիժը. ո՛հ եթէ ուղիղ առաջնորդած լինէին:

65. Մի օր էլ նրանց կը կանչէ եւ կ'ասէ, «այն ինչ էր դուք պատասխանեցիք մեր մարգարէներին»:

66. Այն ժամանակ մի՛նեկու է նրանց համար պատասխանը, ե նրանք էլ միմեանց չեն հարցնի:

67. Սակայն ով ապաշխարէ եւ հաւատայ եւ բարիք գործէ, կարելի է երջանիկ դառնայ:

68. Իսկ քո Տէրը ստեղծում է իր ուզածը եւ ընտրում է. նրանք ընտրողութիւն չունեն: Սուրբ է Աստուած եւ բարձր է այն բանից, որ նրան ընկեր են շինում:

69. Եւ քո Տէրը գիտէ, թէ նրանց սրտերը ինչ է գաղտնի պահում եւ ինչ յայտնում:

70. Նա է Աստուած. նրանից բաց ուրիշ աստուած չըկայ. նրան լինի փառքը առաջինումը եւ վերջինումը. եւ իշխանութիւնը նրանն է, եւ նրա մօտն էք դառնալու:

71. Ասա՛, «ի՞նչ էք կարծում, եթէ Աստուած գիշերը միշտ ձեր վրայ գցէր մինչեւ յարութեան օրը: Ո՞վ է Աստուած Ալլահից զատ, որ ձեզ տար լոյսը մի՞թէ չէք լսում:

72. Ասա՛, «ի՞նչ էք կարծում, եթէ Աստուած ցերեկը ձեզ վրայ գցէր միշտ մինչեւ յարութեան օրը: Ո՞վ է Աստուած Ալլահից զատ, որ ձեզ գիշեր տար, որ նրանում հանգստանայիք: Մի՞թէ չէք տեսնում:

73. Նա իր ողորմութիւնիցը շինել է ձեզ համար գիշերը եւ ցերեկը, որ նրանում հանգստանաք, եւ նրա շնորհքը խնդրէք որ շնորհակալ լինէք:

74. Մի օր էլ նա նրանց կանչելու եւ ասելու է, «ո՛ւր են իմ ընկերները, որ դուք կարծում էիք»:

75. Իսկ մենք ամեն մի ազգից մի վկայ ենք բերելու եւ ասելու, «բերէ՛ք ձեր փաստերը» եւ կ'իմանան որ ճշմարտութիւնը Աստուծոյ մօտ է. եւ նրանցից կը հեռանան կը կորչեն, ինչ որ զբաբարում էին:

76. Ահա՛ կարունը Մովսէսի ազգիցն էր, բայց նա փոռզացաւ նրանց դէմ եւ մենք նրան գանձեր աւելցինք այնչափ, որ նրանց բանալիները մի քանի դօրաւոր մարդիկ էին կրում: Երբ նրա ժողովուրդը նրան սասց, «մի՛ ուրախանար, որովհետեւ Աստուած ուրախացողներին չի սիրել:

77. «Սակայն Աստուծոյ քեզ աւածովը պարի՛ր միւս աշխարհքը եւ մի՛ մոռանար քո բաժինը այս աշխարհքից, եւ դու բարի եղի՛ր ինչպէս Աստուած քեզ դէմ բարի է եղել, եւ երկրի մէջ ապակոնութիւն մի ուղի՛ք, որովհետեւ Աստուած ապակաւիչներին չի սիրել:

78. Նա էլ սասց, «այս բաներն ինձ տրեցին ինձ մօտ եղած գիտութիւնովը»: Բայց մի՞թէ չը գիտէր, որ Աստուած արդէն ուրիշ ազգեր է բնաջինջ արել նրանից առաջ, ո՞վ է զօրութեամբ աւելի զօրաւոր քան թէ նա, կամ աւելի հարուստ, եւ նա յանցաւորներին չէ հարցնելու նրանց մեղքերի մասին:

79. Նա էլ զուրս եկաւ իր ճոխութիւնովը իր ժողովրդի առաջին, եւ այս աշխարհքի կեանքն ուզողներն սասցին, «ո՛հ եթէ մենք ունենայինք այնպէս, ինչպէս տրւած է կարունին, ա՛հա նա մեծ զւարճութեան տէր է»:

80. Իսկ նրանք, որոնց գիտութիւն էր տրւած, սասցին, «լա՛յ մեզ, Աստուծոյ վարձքը աւելի լաւ է նրա համար, որ հուատում է եւ բարիք գործում, եւ սա միմիայն համբերողներին է տրեւում»:

81. Եւ մենք ճեղքեցինք նրա տակի եւ նրա տան տակի երկիրը, եւ բացի Աստուածանից մի մարդ չ'ուներ որ նրան օգնէր, եւ նրան օգնութիւն չ'եղաւ:

82. Միւս օրը նրան, որ անցեալ օրը նրա տեղին փափաքել էին, ասում էին, «հարկաւ, Աստուած իր ծառաներից որին ուզում է, առատ ապրուստ է տալիս եւ քիչ է տալիս, եւ երբ Աստուծոյ երախտիքը չը լինէր մեր վրայ, նա մեր տակին էլ կը ճեղքէր երկիրը եւ հարկաւ, անհաւատները երջանիկ չ'են լինի:

83. Սա է մի ս աշխարհքը, որ մենք նրան պատ-
րաստել ենք նրանց համար, որ չեն ուզում այս երկրի
մեծութիւնը և ոչ էլ ապականութիւնը. և վերջը եր-
կիւղածներինն է:


84. Ով որ բարիք կը գործէ, նրա համար բարի բան
կայ նրանից, և ով որ չար բան կը գործէ, չարու-
թիւններ անողների համար մի ուրիշ հաստուցում չը կայ
բացի նրանից, որ նրանք արել են:

85. Հիմայ նա, որ Ղուբանը քեզ համար պարտաւո-
րիչ է արել, որ քեզ ետ դարձնէ քո տեղը: Ասա՛, «իմ
Տէրը աւելի լաւ գիտէ, թէ ով է ուղիղ առաջնորդու-
թեամբ եկել և ով է յայտնի մոլորութեան մէջ»:

86. Դու էլ չէիր սպասում թէ գիրքը քեզ կը արել
առանց քո Տիրոջ ողորմութիւնը լինելու: Ուրեմն դու
անհաւատներին չը պիտի օգնես:

87. Թող նրանք քեզ չը մոլորեցնեն Աստուծոյ նշան-
ներէքը. որ արդէն քեզ մօտ է իջեցրել. և հրաւիրի՛ր
քո Տիրոջ մօտը և դու աստուածը նկերներ շինողներից
չը պիտի դառնաս:

88. Դու Աստուծոյ հետ մի ուրիշ աստուծոյ աղօթք
չ'անե՛ս. նրանից դատ ուրիշ աստուած չը կայ. ամեն
բան անցնող փձացող է բացի նրա գէմքից. դատելը
նրանն է. և դուք նրա մօտ էք գառնալու:



29) ՍՈՒՐԷ ԷՆՖԷՐՈՒԹ.

Մէքքէական. վաթսուհ ինը այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Մ. Մի՞թէ կարծում են մարդիկ, թէ նը-
րանց կամքին թողնեն նրանց, որ ասում են, «մենք
հաւատում ենք», թէեւ նրանք փորձւած չեն:

2. Սակայն մենք արդէն նրանցից առաջ Լիդղներին փորձել ենք. եւ աստուած անպատճառ գիտէ ճշմարտախօսներին եւ անպատճառ գիտէ նաեւ ստախօսներին.

3. Կամ մի՞թէ կարծում են նրան, որ չարութիւններ են գործում, թէ մեղնից առաջ կ'անցնեն: Վա՛տ է նրանց վճռածը,

4. Ով որ յոյս ունէր, թէ Աստուծոյ հետ հանդիպուելու է, իբրաւի Աստուծոյ սահմանած ժամանակը գալու է, եւ նա լսող իմացող է:

5. Ով որ կրօնքի համար է պատերազմում, որովհետեւ Աստուած անկարօտ է աշխարհքներին:

6. Նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում, մենք նրանց չար արարքները կը քաւենք նրանցից եւ նրանց զեղեցիկ վարձատրութիւն կ'անենք իրանց գործածների համար:

7. Մենք էլ հրամայել ենք մարդուս, որ բարի լինի իր ծնողների դէմ. եւ եթէ նրանք քեզ կը ստիպեն, որ ինձ ընկերներ դնես, որոնց մասին դու գիտութիւն չունես, դու նրանց մի՛ հնազանդիրս Դուք ինձ մօտ պիտի դասնաք, եւ եռ ձեզ պիտի իմացնեմ, թէ դուք ինչ էիք անում:

8. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարիքներ գործում, մենք նրանց արգարների մէջ կը դասենք:

9. Եւ կան մարդիկ, որ ասում են, թէ «մենք հաւատում ենք Աստուծուն, բայց երբ նրան նեղութիւն է լինում Աստուծոյ պատճառովը, նա մարդկանցից եղող փորձանքները Աստուծոյ պատիժ է համարում. եւ եթէ քո Տիրոջ կողմէ օգնութիւն է գալիս. այն ժամանակ ասելու է «մենք ձեզ հետ էինք»: Բայց մի՞թէ Աստուած չը գիտէ թէ մարդկանց սրտերումն ինչ կայ:

10. Աստուած էլ անշուշտ ճանաչում է հաւատացողներին եւ ճանաչում է կեղծաւորներին,

11. Եւ անհաւատներն ասում են հաւատացեալներին, «դուք մեր ճանապարհին հետեւեցէ՞ք եւ մենք կը կը-

քենք ձեր սխալները». բայց նրաք իրանց սխալներիցը մի բան չեն կրում. նրանք ստախօսներ են:

12. Սակայն նրանք կրելու են իրանց բեռները եւ իրանց բեռների հետ ուրիշ բեռներ էլ. եւ յարութեան օրը նրանք հարցաքննուելու են, թէ ինչ էին զրպարտում:

13. Մենք արդէն ուղարկել էինք Նոյին իր ժողովրդի մօտ եւ նա նրանց մօտ մնաց հազար տարուց յիսուն տարի պակաս. եւ ջրհեղեղը տարաւ նրանց որովհետեւ ամբարիշտ էին:

14. Մենք ազատեցինք նրան եւ տապանումը եղողներին, եւ այդ մի նշան շինեցինք աշխարհների համար:

15. Նաեւ Աբրահամին—երբ նա ասաց իր ժողովրդիին, «Աստուծուն պաշտեցէ՛ք եւ նրանից վախեցէ՛ք. սա ակելի լաւ է ձեզ համար, եթէ հականում էք»:

16. «Դուք Աստուծուն թողած միսիայն կուռքեր էք պաշտում, եւ սուտեր էք շինում. ա՜նա՛ նրանք որոնց դուք պաշտում էք Աստուածանից զատ, չեն կարող ձեզ ապրուստ տալ. բայց դուք ապրուստը Աստուածանից ինդրեցէ՛ք եւ նրան ծառայեցէ՛ք եւ նրան շնորհակալութիւն արեցէ՛ք. դուք նրա մօտ էք դառնալու»:

17. «Իսկ եթէ դուք սա սուտ համարէք, արդէն ձեզնից առաջ եղող ազգերն էլ են սուտ համարել. բայց մարդարէի պարաքը միայն մարդ առաջարկելին է»:

18. Մի՞թէ չեն տեսնում, թէ Աստուած ինչպէս է արարածները առաջ բերում եւ յետոյ զարձեալ ետ բերում. իրաւ սա հեշտ է Աստուծոյ համար:

19. «Ասա՛, «ման եկէ՛ք երկրումը եւ մտիկ տէք. թէ ինչպէս է նա արարածներին՝ առաջ բերում. եւ յետոյ մի ուրիշ շինածք է շինում Աստուած, որովհետեւ Աստուած ամենակարող է»:

20. Նա իր ուզածին տանջում է եւ իր ուզածին ողորմում է. եւ դուք նրա մօտ էք ետ դարձնուելու»:

21. Դուք էլ չէք կարող նրան տկարացնել երկրի

վրայ եւ ոչ էլ երկնքում, եւ դուք բացի Աստուածանից ոչ պաշտպան ունէք եւ ոչ օգնական,

22. Իսկ նրանք որ չեն հաւատում Աստուծոյ նշաններին եւ նրան հանդիպելուն, նրանք պիտի յուսահատեն իմ «ղորմութիւնիցը եւ նրանց համար տաժանելի տանջանք կայ:

23. Նրա ժողովրդի պատասխանը մի ուրիշ բան չէր, եթէ ոչ որ ասում էին, թէ «դրան սպանեցէ՛ք կամ դրան այրեցէ՛ք». բայց Աստուած ազատեց նրան կրակիցը: Ահա՛ սրտնում նշան կայ հաւատոցեալ մարդկանց համար:

24. Նա էլ ասաց «դուք բացի Աստուածանից իրաւ կոռքեր էք ընդունել իբրեւ սէր ձեր մէջը այս աշխարհքի կեանքում. բայց յետոյ յարսութեան օրը, դուք իրար ուրանալու եւ իրար անիծելու էք, եւ ձեր բնակատեղը լինելու է կրակը, եւ դուք ոչ մի օգնող չէք ունենայ:

25. Եւ Ղովտը հաւատաց նրան ու ասաց, «ես գաղթում եմ իմ Տիրոջ մօտ, որովհետեւ նա զօրաւոր իմաստուն է»:

26. Մենք էլ պարզեւեցինք նրան Իսահակը եւ Յակոբը եւ նրա սնրունդի մէջ շինեցինք մարգարէութիւնը եւ դիրքը, եւ նրան տեցինք իրան վարձքը այս աշխարհքում, եւ նա միւս աշխարհքում էլ արգարների հետ էր:

27. Եւ Ղովտին — երբ նա ասաց իր ժողովրդին, «դուք այնպիսի անբարոյականութիւն էք անում, որ ոչ մի մարդ ձեզնից առաջ արած չէ:

28. «Դուք մի՞թէ արուների էք մօտենում. դուք կտրում էք ճանապարհը, եւ ձեր կոչունքներում ապօրինի բան էք անում»: Եւ նրա ժողովրդի պատասխանը մի ուրիշ բան չէր եթէ ոչ, որ ասում էին, «բե՛ր Աստուծոյ պատիժը, եթէ դու ճշմարտախօս ես»:

29. Նա էլ ասաց, «ո՛վ իմ Տէր, ինձ օգնի՛ր այս ամբարիշտ ազգի ղէմ»:

30. Իսկ երբ մեր ուղարկւածներն Արքահամի մօտ եկան աւետիքով, ասացին, «մենք բնաջինջ ենք անելու այս քաղաքի բնակիչներին, որովհետեւ դրա բնակիչները անիրաւներ են»:

31. Նա էլ ասաց, «ահա՛ Ղովար այնտեղ է». նրանք էլ ասացին, «մենք աւելի լաւ գիտենք թէ այնտեղ ով կայ. մենք նրան եւ նրա բնօրինակն ազատելու ենք բացի նրա կնկանից, որ ետ է մնալու»:

32. Մեր ուղարկւածներն էլ երբ Ղովաի մօտ եկան, հոգս էր անում նրանց համար եւ բազուկը կարճ էր նրանց օգնելու համար: Եւ նրանք ասացին, «մի՛ վախենար եւ մի՛ օխրիր, ահա՛ մենք քեզ եւ քո բնօրինակն ազատելու ենք բացի քո կնկանից, որ ետ է մնալու»:

33. «Մենք այս քաղաքի բնակիչներին վրայ երկնքիցը մի պատիժ ենք իջեցնելու իրանց զործած անբարոյականութեան համար»:

34. «Իայց մենք նրանցից մի յայտնի նշան ենք թողուցել բան հասկացող մարդկանց համար»:

35. Եւ Մադիանցիների մօտ ուղարկեցինք Շուէյբին —եւ նա ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ, Աստուծուն պաշտեցէ՛ք. եւ սպասեցէ՛ք վերջի օրանս եւ երկրի մէջ ապականելով չարագործութիւններ մի՛ անէք»:

36. Իայց նրանք սուտ համարեցին նրան, եւ երկբաշարժը բռնեց նրանց, եւ միւս առուօտը նրանք իրանց տներուժը երեսի վրայ փռւած էին:

37. Եւ Ազեցիներին եւ Սամուզեցիներին մենք ջնջեցինք, որ նրանց բնակարաններիցը ձեզ յայտնի է. եւ սասանան պատրաստել էր նրանց համար իրանց զործքերը եւ նրանց ծոցերեց ճանապարհիցը, թէեւ աչքերը բաց մարդիկ էին:

38. Եւ Կարունին եւ Քարաւօնին եւ Համանին. եւ Մովսէսը եկել էր նրանց մօտ ապացոյցներով. բայց նրանք այն երկրուժը հպարտօտան եւ ատաջ չ'անցան:

39. Նաեւ ամեն մէկին բնաջինջ արեցինք իր մեղքի

պատճառով. եւ նրանցից ոմանց վրայ քարի կարկուտ տեղացրինք. եւ ոմանց բնաջինջ արեց փոթորիկը, եւ ոմանց տակին երկիրը ճեղքւեց, եւ ոմանց մենք ջրի մէջ ընկզմեցինք: Եւ Աստուած նրանց անխրատութիւն չ'արեց, իսկ նրանք էին իրանց անխրատութիւն անող- ները:

40. Նրանք, ուր բացի Աստուածանից ուրիշ պաշտպաններ են ընդունում, սարդի նման են, որ ստաւան է շինում, որ աներբից ամենաչնչինը սարդի տունն է, եթէ հասկանում են:

41. Իրաւ Աստուած գիտէ, թէ նրանք բացի Աստուածանից ուրիշ ինչ բանի են աղօթում. իսկ նա է զօրաւորը իմաստունը:

42. Եւ այս առակները, որ մենք բերում ենք մարդկանց համար, — նրանց միմիայն գիտուններն են հասկանում:

43. Աստուած երկինքը եւ երկիրը ճշմարտութեամբ է ստեղծել. ահա՛ սրանում նշան կայ հաւատացեալներին համար:

44. Կարգա՛ ինչ որ քնդ յայտնուել է գրքիցը եւ կատարի՛ր աղօթքը, որովհետեւ աղօթքը ետ է պահում անառակութիւնից եւ ապօրինի բաներից. եւ Աստուածուն յիշելը աւելի մեծ բան է. եւ Աստուած գիտէ ձեր արարքները:

45. Եւ գիրք ունեցողների հետ միմիայն քաղցր կերպով վիճարանեցէ՛ք, բացի նրանցից որ անխրատ են, եւ ասացէ՛ք, «մենք հաւատում ենք նրան, որ մեզ է իջեցրած եւ ձեզ է իջեցրած. եւ մեր Աստուածը եւ ձեր Աստուածը մէկ հաս է, եւ մենք նրան անձնատուր ենք»:

46. Եւ մենք քեզ համար այսպէս իջեցրեցինք գիրքը, եւ նրանք, որոնց մենք գիրք ենք աւել հաւատում են դրան, եւ միմիայն անհաւատներն են հակառակում մեր նշաններին:

47. Եւ դու առաջ գիրք չէիր կարդում եւ այն չէիր

գրում աջ ձեռքովը. եթէ ոչ այն ժամանակ ունայնացողները կը կասկածէին:

48. Բայց նա յայտնի նշաններ է նրանց սրտերում, որոնց գիտութիւն է տրւած. եւ միմիայն անիրաււներն են, որ մեր նշաններին հակառակոււմ են:

49. Եւ ասում են, «եթէ նրա համար հրաշքներ չ'իջեցնուեն իր Տիրոջ կողմանէ . . . , ասա՛ «հրաշքներն Աստուծոյ մօտ են. իսկ ես սոսկ մի յայտնի խրատող եմ»:

50. Սա նրանց բաւական չէ՞, որ մենք քեզ համար ուղարկել ենք գիրքը, որ կարգացում է նրանց. իբրև սրանում ողորմութիւն եւ յիշատակումն կայ հաւատացեալ մարդկանց համար:

51. Ասա՛ «իմ ու ձեր մէջ Աստուած բաւական վրկայ է»:

52. «Նա գիտէ թէ ինչ կայ երկնքում ու երկրում. իսկ նրանք որ ունայնին են հաւատում եւ Աստուծուն ուրանում, — դրանք են մնասուածները:

53. Եւ նրանք քեզնից պահանջելու են, որ պատիժը շուտով գայ: Բայց եթէ որոշւած ժամանակ չի լինէր. պատիժը անպատճառ կըզար նրանց վրայ յանկարծակի, եւ նրանք չէին իմանայ:

54. Նրանք քեզնից պահանջելու են, որ պատիժը շուտով գայ: Բայց ահա՛ դժոխքը շրջապատել է անհաւատներին:

55. Մի օր ծածկելու է նրանց պատիժը նրանց վերելիցը եւ նրանց ոտների տակիցը. եւ նա տօելու է, «ճաշակեցէ՛ք ձեր արած գործքերը»:

56. Ո՛վ իմ ծառաներ, որ հաւատում էք, ահա՛ իմ երկիրը ընդարձակ է. ուրիմն ինձ պատեցէ՛ք:

57. Ամեն մի հոգի պէտք է մահը ճաշակէ, յետոյ ինձ մօտ էք դառնալու:

58. Եւ նրանք, որ հաւատում եւ բարի գործեր են գործում, մենք գրախտումը նրանց զղեակներ ենք չինել իբրեւ բնակարան, որոնց տակովը գետեր են հոսում, որի մէջ նրանք միշտ կը մնան. ի՛նչ լաւ վարձք գործողներին համար»:

59. Որոնք համբերում են եւ ապաւինում իրանց Տիրոջը»:

60. Որքա՛ն անասուններ կան, որ չեն կարող իրանց սնունդը հայթայթել. Աստուած կերակրում է նրանց եւ ձեզ, եւ նա է լսողը եւ խնայողը:

61. Եւ եթէ դու նրանց հարցնես, «ո՞վ է ստեղծել երկիրքը եւ երկիրը եւ հպատակեցրել արեգակը եւ լուսինը», անպատճառ կ'ասեն «Աստուած»: Ապա ինչպէ՞ս էք սուտ խօսում:

62. Աստուած առատօրէն տալիս է իր ծառաներից որին ուղում է եւ քեզ էլ է տալիս նրան. որովհետեւ Աստուած ամեն բան գիտէ:

63. Եւ եթէ նրանց հարցնես, թէ «ո՞վ է երկնքից ջուր իջեցնում եւ արդէն մեռած երկիրը նրանով կենդանացնում». անպատճառ կ'ասեն «Աստուած»: Ասա՛, «փառք Աստուծոյ». բայց նրանցից շատերը չեն հասկանում:

64. Եւ ի՞նչ է այս աշխարհքի կեանքը, եթէ ոչ խաղ եւ զրօսանք. բայց միւս աշխարհինն է կեանքը, եթէ հասկանային:

65. Եւ երբ նրանք նաւն են մտնում, սրտի մտք ազօթում եմ Աստուծուն, եւ երբ նրանց ազատում եւ ցամաքն է հանում, այն ժամանակ նրանք աստուածընկերներ են շինում:

66. Եւ ուրանում են ինչ որ մենք տեսել ենք իրանց որ վայելեն. բայց չուտով կ'իմանան:

67. Չե՞ն տեսնում որ մենք մի ապահով սուրբ տեղ ենք շինել, եւ նրա չորս կողմերի մարդիկը միշտ կողոպտւում են: Ապա մի՞թէ նրանք հաւատում են պարագ բաների, իսկ Աստուծոյ շնորհքը ուրանում:

68. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա, որ Աստուծոյ մասին սուտեր է հնարում, եւ ճշմարտութիւնը սուտ համարում, երբ գալիս է նրա մօտը: Չէ որ անհաւատների բանակատեղին դժոխքումն է:

69. Եւ նրանք որ պատերազմում են մեզ համար,

մենք նրանց կ'առաջնորդենք մեր ճանապարհներումը.
և Աստուած իրաւ բարեգործների հետ է:



30) ՍՈՒՐԷ՝ Ր Ո Ի Մ

Մէքքէական. վաթսուհ ալէ:

Գլծած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Մ. Հոովմայեցիները յաղթեցան:
2. Մի մօտիկ երկրում. բայց նրանք իրանց յաղթութիւնից յետոյ յաղթելու են,
3. Մի քանի տարիներում: Բանը Աստուծունն է՝ առաջւանը եւ ետեւանը. եւ այն օրը կուրախանան հաւատացեալները,
4. Աստուծոյ օգնութիւնովը, որ նա իբր ուզածին օգնում է. եւ նա է զօրաւորը՝ ողորմածը:
5. Աստուծոյ խոստովմը. Աստուած իր խոստումը չի փոխի. մարդկանց շատերը չըզրտեն:
6. Նրանք գիտեն այս աշխարհքի արտաքին կողմը, իսկ հանդերձեալի մասին տգէտ են:
7. Մի՞թէ նրանք չեն խորհում իրանց սրտերումը, որ Աստուած ստեղծել է երկինքը եւ երկիրը եւ ինչ որ կայ դրանց մէջ տեղը՝ միմիայն արդարութիւնով եւ մի որոշ ժամանակով է. բայց մարդկանցից շատերը իրանց Տիրոջ հետ կրկին հանդիպելն ուրանում են:
8. Մի՞թէ նրանք ման չեն գալիս այս երկրում, որ տեսնեն ինչպէս է եղել իրանցից առաջ եղողների վախճանը. նրանք սրանցից աւելի ուժով էին զօրութիւնով եւ հետքեր թողուցին երկրումը եւ աւելի երկաթ

ապրեցին քան թէ նրանք են ապրել. եւ նրանց մարգարէները յայտնութիւններով եկան նրանց մօտ: Բայց Աստուած նրանց անիրաւութիւնն չէ արել, այլ իրանք էին իրանց անձերին անիրաւութիւն անում:

9. Յետոյ չարութիւն անողներին վերջը չար եղաւ, որ Աստուծոյ նշանները սուտ էին համարում եւ նրանց ծաղր էին անում:

10. Աստուած է երեւան բերել արարածները եւ նրանց ետ է դարձնելու. եւ յետոյ նրանք նրա մօտը ետ կը դառնան:

11. Եւ մի օր որ վերջի ժամը կը հասնի, յանցաւորները կը յուսահատուեն:

12. Եւ նրանց համար իրանց աստուածը նկերներից բարխօսներ չեն լինի. եւ նրանք իրանց աստուածը նկերներին կուրանան:

13. Եւ մի օր, որ վերջի ժամը կը հասնի, այն ժամանակ միմեանց կը բաժանուեն:

14. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում, կը զւարճանան պարտէզներում:

15. Բայց նրանք, որ չեն հաւատում եւ մեր նշանները սուտ են համարում, նաեւ միւս աշխարհի գոյութիւնը նրանք պատժի մէջ կը ներկայանան:

16. Եւ «սուրբ է Աստուած» կ'ասեն իրիկւայ ժամանակին եւ առաւօտայ ժամանակին:

17. Եւ փռօք լինի՝ նրան երկնքումը եւ երկրումը, երեկոյները եւ կէսօրւայ ժամանակին.

18. Որ հանում է կեանք ունեցողին մեռածիցը եւ հանում է մեռելը կեանք ունեցողիցը. եւ արդէն մեռած երկիրը կենդանացնում է. եւ դուք էլ այսպէս էք դուրս գալու:

19. Եւ նրա նշաններիցն է, որ նա ձեզ ստեղծել է հողից, եւ յետոյ դուք տարածուել էք իւրեւ մարդիկ:

10. Եւ նրա նշաններիցն է, որ նա ձեզնից զոյգեք է ստեղծել, որ նրա վրայ բնակուէք, եւ ձեր մէջ սեղը

դրել է սէր եւ ողորմութիւն ահա սրանում նշաններ կան խորհող մարդկանց համար:

21. Եւ նրա նշաններիցն է, որ ստեղծել է երկինքը եւ երկիրը եւ ձեր լեզուների եւ գոյների տարբերութիւնը. ահա՛ սրանում նշաններ կան աշխտրհքների համար:

22. Եւ նրա նշաններիցն է ձեր գիշերւայ եւ ցերեկւայ քունը ու ձեր շնորհքիցը ապրուստ պարելը. ահա՛ սրանում նշաններ կան լսող մարդկանց համար:

23. Եւ նրա նշաններիցն է, որ ձեզ վախեցնելով եւ յոյս տալով ցոյց է տալիս կայծակը, եւ երկնքիցը ջուր է իջեցնում, եւ կենդանացնում արզէն մեռած երկիրը. ահա՛ սրանում նշաններ կան խելացի մարդկանց համար:

24. Եւ նրա նշաններիցն է, որ երկինքը եւ երկիրը կանգնած են նրա հրամանովը. յետոյ երբ նա ձեզ երկրիցը կը կանչէ կոչումով, այն ժամանակ դուք դուքս կը գաք.

25. Եւ նրանն է, ինչ որ կայ երկնքումը եւ երկրումս. բոլորը հպատակ է նրան:

26. Եւ նա է, որ երեւան է հանում արարածներին եւ նրանց ետ գարծնում, եւ սա հեշտ է նրա համար. նրանն է ամենաբարձր նմանեցնելը երկնքում եւ երկրի վրայ. եւ նա է զօրաւորը իմաստունը:

27. Նա մէկ օրինակ է բերում ձեզ համար բուն ձեզնից. մեր ձեզ աւած պարգեւների մէջ ձեր ստրուկները ձեզ հետ ընկերներ են, եւ դուք դրանում հաւասար էք. եւ դուք նրանցից ա՞յնպէս վախում էք, ինչպէս վախում էք միմիանցից: Մենք այսպէս ենք բացատրում նշանները հասկացող մարդկանց համար:

28. Բայց անխրաւութիւն անողները հետեւում են իրանց հաճոյքներին առանց գիտութեան: Եւ ո՞վ կ'առաջնորդէ Աստուծոյ մտլութեցրածին. եւ նրանք օգնողներ չեն ունենայ:

29. Ուրեմն երեսդ դարձրո՛ւ կրօնքին ուղղափառ-

օրէն, որ Աստուծոյ կազմւածքն է, որի համար նա կազմել է մարդկանցը, Աստուծոյ արարչագործութեան մէջ փոփոխութիւն չըկայ. սա է հաստատուն կրօնքը. բայց մարդկանց շատերը չը գիտին:

30. Դէպի նրան դարձէ՛ք եւ նրանից վախեցէ՛ք. եւ կատարեցէ՛ք ազօթքը, եւ կռապաշաներ մի՛ լինէք:

31. Նրանցից, որոնք իրանց կրօնքը բաժին բաժին են արել եւ հերձւածներ դառել, ամեն մի խուժը պարծենում է իր ունեցածովը:

32. Եւ երբ մարդկանց մի մնաս է գիպչում, կանչում են իրանց Տիրոջը դէպի նրան դառնալով. բայց երբ նրանց ճաշակել է տալիս ողորմութիւնը, այն ժամանակ նրանց մի բաժինը իրանց Տիրոջը ընկերներ են շինում,

33. Եւ ուրանում են ինչ որ իրանց տւել ենք. բայց վայելեցէ՛ք, յետոյ կ'իմանաք:

34. Կամ մենք նրանց իրաւունք ենք տւել՝ վերելից, որ նրանց հետ խօսէ այն մասին որ աստուածը նկերներ շինեն:

35. Եւ երբ մենք մարդկանց ոգորմութիւն ենք ճաշակել տալիս, նրանով ուրախանում են. եւ երբ նրանց մի չարիք է պատահում իրանց կանխաւ գործածի պատճառով, այն ժամանակ յուսահատոււում են:

36. Մի՞թէ չեն տեսնում որ Աստուած իր ուզածին առատ ապրուստ է տալիս եւ քիչ է տալիս: Ահա՛ սրանում նշաններ կան հաւատացող մարդկանց համար:

37. Արդ տո՛ւր տղգականին ինչ որ նրա իրաւունքն է եւ տնանկին եւ ճանապարհորդին. սա լաւ է նրանց համար որ խնդրում են Աստուծոյ երեսը. դրանք երջանիկ են:

38. Ինչ վաշխով տալիս էք, որ մարդկանց ստացւածքը աճի, նա չի աճի Աստուծոյ մօտ. բայց ինչ տալիս էք իբրեւ մաքրութեան տուրք այն նպատակով,

որ Աստուծոյ երեսը տեսնէք նրանց կրկինը կը ստանան:

39. Աստուած է, որ ձեզ ստեղծել է, յետոյ ձեզ կերակրում է, յետոյ ձեզ մեռցնում է, յետոյ ձեզ կենդանացնում է: Արդեօ՞ք ձեր աստուածներից կայ մէկը, որ սրանցից մի բանը անէ: Նա սուրբ եւ բարձր է այն բաներիցը, որ նրան ընկեր էք դնում:

40. Յամաքի եւ ծովի վրայ աղականութիւն է երեւան եկել այն արարքների պատճառով, որ մարդկանց ձեռներն արել են, որ իրանց արածի մի մասի համն առնեն, որ դարձի գան:

41. Ասա՛, «գնացէ՛ք մա՛ն եկէք երկրումը եւ մտիկ արէ՛ք, թէ ինչպէս է եղել այն նախնոցս վախճանը, որոնց մեծ մասը կռապաշտներ էին»:

42. Դու երեսդ դէպի ճշմարիտ կրօնքը դարձրո՛ւ յառաջ քան թէ այն օրը կը գայ, որ ոչ ոք նրան ետ կը դարձնէ Աստուածանից, այն ժամանակ նրանք կը բաժանուեն:

43. Ով որ անհաւատ է, նրա դէմ կը մնայ իր անհաւատութիւնը, եւ ով որ բարիք է գործում, այնպէս ինքնը իրանց հոգիներովը կը հանգստանան,

44. Որ հաւատացեալները եւ բարիք գործողները հատուցում ստանան նրա շնորհքիցը. որովհետեւ նա չէ սիրում անհաւատներին:

45. Եւ նրա նշաններիցն է, որ աւետիք տուող քամիներ է ուղարկում, որ իր ողորմութիւնիցը նրանց ճաշակել տայ, եւ որ նաւը նրա հրամանովը սահէ, եւ որ նրա առատութիւնիցը ապրուստ խնդրեն եւ որ շնորհակալ լինէք:

46. Եւ մենք քեզնից առաջ մարգարէներ ենք ուղարկել իրանց ազգերին, եւ նրանք հրաշքներով եկան նրանց մօտ. բայց մենք վրէժ առանք յանցաւորներիցը եւ սա մեր պարտքն էր, որ օգնէինք հաւատացեալներին:

47. Աստուած է, որ քամիներն ուղարկում է եւ նը-

բանք բարձրանում են իրրեւ ամպ, եւ նա նրան տա-
րածում է երկնքի վրայ ինչպէս ուզում է նրան զըպ-
չում է. այն ժամանակ նրանք ուրախանում են:

48. Եւ նրանք՝ անձրեւն իրանց վրայ գալուց առաջ
յուսահատւած էին:

49. Արդ դու մտի՞կ տուր Աստուծոյ ողորմութեան
ճեաւեանքին, թէ նա ինչպէս է արդէն մեռած երկիրը
կենդանացնում: Ահա՛ նա մեռելներին կենդանացնողն
է, եւ նա ամենակարող է:

50. Իսկ եթէ մի խորշակահար քամի ենք ու-
ղարկում, այն ժամանակ նրան տեսնում են որ դեղ-
նում է, եւ յետոյ անհաւատ են դառնում:

51. Ահա՛ դու չես կարող կանչելդ մեռելներին լսել
տալ եւ չես կարող խաւերին լսել տալ, երբ նրանք
մէջքները քեզ են դարձնում:

52. Եւ դու կոյրերին առաջնորդող չես նրանց մո-
լորութիւնիցը. դու միայն նրանց կարող ես լսել տալ,
որ մեր նշաններին հաւատում են, եւ նրանք միւսիլմ-
ներ են:

53. Աստուած է որ ձեզ ստեղծել է տկար կազմւած-
քից, բայց տկարութիւնից յետոյ զօրութիւն է տւել,
եւ այդ զօրութիւնից յետոյ տկարութիւն եւ սպիտակ
մազեր է տւել. նա ստեղծում է իր ուզածը. եւ նա է
գիտացող կարողը:

54. Եւ այն օրը, որ վերջի ժամը կը հասնի, յան-
ցաւորները կը բաժնուեն:

55. Նրանք մի ժամից աւելի չեն մնացել: Նրանք
այսպէս էին սուա խօսում:

56. Եւ նրանք, որոնց որ գիտութիւնն եւ հաւատք
էր տրւած, կ'ասեն, «դուք արդէն Աստուծոյ գրքումը
գրւածի համեմատ մնացել էք մինչեւ յարութեան օրը,
եւ ահա՛ սա յարութեան օրն է, բայց դուք չը գիտէք»:

57. Եւ այն օրը այն անիրաւներին չի օգնի նրանց
ինքնապաշտպանութեանը, եւ նրանք չնորձք չեն
խնդրի:

58. Մենք այս Ղուբանի մէջ արդէն ամեն տեսակ օրինակներ ենք բերել. և եթէ դու նրանց հրաշք էլ ցոյց ասս, նրանք, որ չեն հաւատում, ասելու են, «դուք միմիայն դատարկասուններ էք»:

59. Աստուած այսպէս կնիք է դնում տգէտների սըրտերի վրայ:

60. Բայց դու համբերի՛ր, որովհետեւ Աստուծոյ խոստումը ճշմարիտ է. թող նրանք որ համոզւած չեն, քեզ չըստարանեն:



31) ՍՈՒՐԷ՝ ԼՕԳՄԱՆ

Մէքքէական. երեսուն չորս այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Մ. Սա իմաստուն գրքի նշաններն են:
2. Որ ուղեցոյց եւ ողորմութիւն է բարեգործների համար:
3. Որ կատարում են աղօթքը եւ տալիս են մաքրութեան տուրքը եւ միւս աշխարհքի մասին համոզւած են:
4. Դրանք ուղիղ ճանապարհի վրայ են իրանց Տիրոջ կողմից եւ դրանք երջանիկ են:
5. Եւ մարդկանցից կայ մէկը, որ զրօսացուցիչ պատմութիւն է ծախու անում, որ առանց գիտութեան մոլորեցնէ Աստուծոյ ճանապարհիցը. և դրան կատակի տեղ է դնում. դրանց համար նախատալի տանջանք կայ:
6. Եւ երբ նրան կարգացվում են մեր նշանները, նա գոռոզացած ետ է քաշում իբր թէ չէ լսել, իբր թէ ականջներումը ծանրութիւն կայ. ուրեմն դրան ցաւալի տանջան ի լուրը տո՛ւր:

7. Ահա՛ նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում, նրանց համար ցանկալի դրախտանիք կան:

8. Նրանք միշտ կը մնան նրանցում. Աստուծոյ խոստումը ճշմարիտ է, եւ նա է հզօրը իմաստունը:

9. Որ ստեղծել է երկինքը առանց նեցուկի, որ տեսնում ես, եւ երկրի վրայ գցել է Եօրերը, որ ձեզնով չը սասանէ, եւ նրա վրայ տարածել է ամեն տեսակ կենդանիներ, եւ իջեցրել է երկնքից ջուրը եւ բուսցրել է նրանով ամեն տեսակ ազնիւ բոյս:

10. Սա Աստուծոյ արարչագործութիւնն է: Հիմայ ինձ ցոյց տւէ՛ք, թէ ի՞նչ է որ ստեղծել են նրանից զատ եղողները: Սակայն անիրաւունքը յայանի մոլորութեան մէջ են:

11. Եւ մենք Լօզմանին տւել ենք խմաստութիւնը, թէ Աստուած անիդ շնորհակալ եղի՛ր. որովհետեւ ով որ շնորհակալութիւն է անում, նա միմիայն իր հոգու համար է շնորհակալութիւն անում. բայց ով որ երախտամուտ է, Աստուած անկարօտ օրհնեալ է:

12. Ու այն ժամանակ Լօզմանն ասաց իր որդուն, եւ ինքը նրան խրատում էր. «որդեակս, Աստուծուն ընկերներ մի շինի՛ր. որովհետեւ կշտապաշտութիւնը մեծ անիրաւութիւն է»:

13. Մենք էլ պատիբրել ենք մօրդուն իր ծնողներին նկատմամբ, որովհետեւ նրա մայրը կրել է նրան տկարութիւններով, եւ ծծից կտրել է երկու տարուց յետոյ— թէ շնորհակալ եղի՛ր ինձնից եւ ծնողներիցդ. — վերջը ինձ մօտ է ետ դառնալը:

14. Եւ եթէ նրանք քեզ ստիպեն, որ ինձ ընկերներ շինես, որոնց մասին դու տեղեկութիւն չունես, դու նրանց մի՛ հնազանդիր. եւ դու օրինաւորապէս ընկերութիւն արա՛ նրանց այս աշխարհքում, եւ գնա՛ դէպի ինձ դարձողի ճանապարհովը. յետոյ դուք ինձ մօտ էք դառնալու, եւ ես ձեզ կիմացնեմ թէ դուք ինչ էք:

15. «Ո՛վ որդեակս եթէ մի բան մանանիխի սերմի չափ ծանր լինի եւ ժայռի մէջ կամ երկնքումը կամ

երկրումը լինի, Աստուած նրան զուրս կը հանէ, որովհետեւ ամենուրեք եւ տեղեակ է»:

16. «Ո՛վ որդեակաւ կատարի՛ր աղօքքը եւ հրամայի՛ր օրինաւորը եւ արգելի՛ր ապօրինին եւ համբերի՛ր քեզ պատահածին. որովհետեւ սա է երկրի վիճակը»:

17. «Դու էլ երեսդ մի՛ ծոմսիր մարդկանց դէմ եւ երկրի մէջ մի՛ ման գար գոռոզանալով, որովհետեւ Աստուած չի սիրի հպարտ պարծեցողին»:

18. Չափաւոր եղի՛ր քո գնացքի մէջ եւ մեղմացրո՛ւ ձայնդ. որովհետեւ ձայների ամենազգուելին է շի ձայնն է:

19. Մի՞թէ չէք տեսում, Աստուած ձեզ համար հըպատակ է շինել ինչ որ կայ երկնքումը եւ երկրումս, եւ որ նա թափել է ձեղ վրայ պարգեւները արտաքուստ եւ ՚ի ներքուստ. եւ կան մտրդիկ որ վիճում են Աստուծոյ մասին առանց գիտութեան, որ չունեն ոչ առաջնորդութիւն եւ ոչ էլ լուսատու դիրք:

20. Եւ երբ նրանց ասվում է, «հետեւեցէք Աստուծոյ իջեցրածին», ասում են. «ո՛չ, մենք հետեւում ենք նրան, ինչպէս տեսել ենք մեր հայրերին»: Ապա եթէ սատանան նրանց կանչում է դէպի դժոխքի պատիժը:

21. Ով որ իր երեսը դէպի Աստուած ուղղէ, նա բարեգործ է, նա արդէն պինդ բռնել է հաստատ ունկիցը. եւ գործերի վերջը Աստուծոյ մօտ է:

22. Նա որ չէ հաւատում, թող նրա անհաւատութիւնը քեզ չը տխրեցնէ. նրանք մեզ մօտ պէտք է ետ դառնան, եւ մենք նրանց իմացնելու ենք իրանց արածները. որովհետեւ Աստուած գիտէ, թէ սրտերում ինչ կայ:

23. Մենք նրանց մի քիչ վայել ենք տալիս, բայց յետոյ նեղում ենք նրանց խիստ պատիժով:

24. Եւ եթէ նրանց հարցնես, թէ ո՞վ է ստեղծել երկինքը եւ երկիրը», անպատճառ կանեն, «Աստուած»: Դու ասա՛, «փռք Աստուծոյ». բացի նրանցից շատերը չեն իմանում:

25. Աստուծունն է, ինչ կայ երկնքումը եւ երկ-

բուժս, սրովհետեւ Աստուած անկարօտ օրհնեալ է :

26. Եւ եթէ երկրիս վրայ եղած ծառերը գրիչներ լինէին եւ ծովը նրանից յետոյ եօթնապատիկ թանաքի ծով դառնար, Աստուծոյ խօսքերը չէին սպառի. իբաւ Աստուած զօրաւոր իմաստուն է :

27. Նա մեզ ստեղծել է եւ չէ կանգնեցրել, եթէ ոչ իբրեւ մի հատ անձ. իբաւ Աստուած լսող տեսնող է :

28. Մի՞թէ չես տեսնում որ Աստուած գիշերը մրուցընում է ցերեկւայ մէջը եւ ցերեկը մոցնում է գիշերւայ մէջը, եւ հնոգանդեցրել է արեգակը եւ լուսինը, ամեն մինը գնում է իր սահմանւած ժամանակովը. եւ ահա՛ Աստուած գիտէ թէ դուք ինչ էք անում :

29. Սա նրա համար է, որ Աստուած ինքը ճշմարտութիւնն է, եւ բացի նրանից ինչ բանի աղօթք էք անում, ունայն է. եւ Աստուած է բարձր մեծը :

30. Չե՞ս տեսնում, նաւերը ծովի վրայ սահում են Աստուծոյ շնորհքովը, որ ձեզ ցոյց տալ իր հրաշքները. ահա՛ սրանում նշան կայ ամեն մի համբերող երախտագէտների համար :


31. Եւ երբ ալիքները ամպի պէս նրանց ծածկում են, այն ժամանակ մաքուր հուատքով աղերսում են Աստուծուն. բայց երբ նրանց ազատում եւ ցամաքն է հանում, այն ժամանակ նրանցից ոմանք ուղղամիտներ են. եւ մեր նշանները միմիայն անհաւատներն ու ապերախտներն են ուրանում :

32. Ո՛վ մարդիկ, վախեցէ՛ք ձեր Տիրոջից եւ երկխղ ունեցէ՛ք այն օրիցը, որ մի ծնող իր զաւակի համար մի բան կարող չէ անել, եւ ոչ էլ մի զաւակ կարող է մի բան անել իր ծնողի համար :

33. Աստուծոյ խոստումը ճշմարիտ է. ուրեմն թող այս աշխարհքի կեանքը ձեզ չըխարէ. եւ սատանան ձեզ չը խարէ Աստուծոյ դէմ :

34. Աստուծոյ մօտ է վերջի ժամւայ դիտութիւնը. եւ նա է անձրեւ տեղացնում եւ գիտէ արգանդներում եղածները. եւ մի անձ չըգիտէ էգուց նրան ինչ կը-

պատահի, եւ մի անձ չը գիտէ թէ ինքը ո՞ր երկրում է մզոնելու. իրաւ Աստուած է իմացող՝ գիտուն:



32) ՍՈՒՐԷՆ ՍԻՃԴԷ

Մէքքէական. երեսուն այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ա. Լ. Մ. Իջեցրած գիրքը, որի մէջ կասկած չկայ, աշխարհքների Տիրոջ կողմից:

2. Կամ ասում են, թէ «նա հնարել է նրան», ո՛չ, սա ճշմարտութիւն է քո Տիրոջ կողմից, որ յանդիմանես մի ժողովուրդ, որ քեզնից առաջ նրանց մօտ մի խրատող չէ եկել, որ ուղիղ առաջնորդեն:

3. Ստեղծել է Աստուած երկինքը եւ երկիրը եւ նրանց մէջ տեղը եղածները վեց օրւայ մէջ, յետոյ նըստել է աթոռի վրայ. նրանից ջուկ դուք մի պաշտպան եւ ոչ մի բարեխօս չունէք. մի՞թէ չէք յիշում:

4. Նա կարգադրում է գործերը եշկնքից երկրիւ վրայ, յետոյ վեր է ելնում նրա մօտ մի օրւայ մէջ, որի երկայնութիւնը հազար տարի է, ինչպէս դուք հաշւում էք:

5. Նա է դադանիքները եւ յայանիքները գիտեցողը, հզօր ողորմածը:

6. Որ իր ստեղծածների ամեն մէկը գեղեցիկ է շինել, եւ մարդու կազմւածքը ստեղծել է կաւից:

7. Յետոյ նրա սերունդը շինել է սերմից՝ ոչինչ ջըրից:

8. Յետոյ նրան զարգարեց եւ նրա մէջը փչեց իր հոգուցը. եւ ձեզ համար շինել է լսողութիւնը եւ տեսողութիւնը եւ սրտերը, բայց քիչերն են որ երախտազէտ են:

9. Նրանք էլ ասում են, «մի՞թէ երբ մենք հողի մէջը մտած լինենք, կրկին նոր արարած կը դառնանք»:

10. Բայց նրանք ուրանում են, թէ իրանց Տիրոջ հանդիպելու են:

11. Դու ասա՛, «ձեզ կը մեռցնէ մահի հրեշտակը, որ ձեր վերակացու է նշանակւած յետոյ դուք ձեր Տիրոջը կը դառնաք»:

12. Եւ եթէ տեսնէիր, երբ յանցաւորներն իրանց գլուխները կախում են իրանց Տիրոջ մօտ, թէ «ո՛վ մեր Տէրը, մտի՛կ տուր մեզ, եւ լսի՛ր մեզ, եւ մեզ ե՛տ ուղարկիր, որ բարիք գործեն. մենք հիմայ համոզւել ենք»:

13. Մենք էլ եթէ կամենայինք ամեն մի հոգու կրտայինք իրան անաջնորդութիւնը. սակայն ճշմարիտ է իմ այն խօսքը թէ ես անպատճառ պէտք է լցնեմ դժօխքը զեւերով եւ մարդիկներով բոլորովին:

14. Թէ «ճաշակեցէ՛ք, որ մոռանում էիք ձեր այս օրւայ հանդիպելը. ահա՛ մենք էլ ձեզ ենք մոռանում. եւ ճաշակեցէ՛ք մշտական պատիժը ձեր արարքների համար»:

15. Միմիայն նրանք են մեր նշաններին հաւատում, որոնք խոնարհվում երկրպագութիւն են անում եւ վառարանելով օրհնում իրանց Տիրոջը երբ յիշեցնում են նրանց այդ բանը, եւ նրանք չեն ամբարտաւանանում:

16. Եւ երբ իրանք պառկած անկողիններիցը վեր են կենում, աղօթում են իրանց Տիրոջը երկիւղով եւ յոյսով, եւ ինչ որ իրանց պարգեւել ենք՝ նրանից ողորմութիւն են տալիս:

17. Մի մարդ չը գիտէ, թէ ինչ աչքալուսանք է ծածուկ պահւած նրանց համար իբրեւ վարձատրութիւն իրանց արածների համար:

18. Մի՛ թէ նա, որ հաւատացեալ է, նման է ամբարիշտին. նրանք հաւտաբ են:

19. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարիք են գործում, նրանց համար դրախտներ կան իբրեւ բնակւե-

լու իջեւաններ իրանց ունեցած գործքերի համար :

20. Իսկ նրանց, որ ամբարշտութիւն են արել, նը-
բանց բնակարանը կրակն է. ամեն անգամ, որ ուղու՛մ
են այնտեղից գուրս գալ, նրանք ետ են դարձնում
եւ նրանց ասում է, «ճաշակեցէ՛ք այն կրակի պատի-
ժը որ դուք սուտ էիք համարում» :

21. Այն մեծ պատիժը թողած փոքր պատժի համը
առնել տանք նրանց, գուցէ ապաշխարեն :

22. Եւ ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա, որ, երբ
նրան յիշեցնում են իր Տիրոջ նշանները, նա նրանից
ետ է քաշում. բայց մենք յանցա՛որն երկը վրէժ ենք
առնելու :

23. Մենք արդէն աւել ենք Մովսէսին գիրքը. ու-
րեմն՝ դու կասկածի մէջ մի՛ լինիր նրան հանդիպելու
մասին, եւ նրանք շինել ենք ուղեցոյց Իսրայէլի որդ-
կանց համար .

24. Նաեւ մենք նրանցից մի քանիներին առաջ-
նորդներ շինեցինք. որ մեր հրամանովը առաջնորդեն,
եւ նրանք մեր խօսքերովը համոզւած էին :

25. Իրաւ քո Տէրը վճռելու է յարութեան օրը նը-
բանց մէջն այն բանը, որի մասին վիճում էին :

26. Մի՞թէ նրանց չէ յայտնել, թէ մենք որքան ցե-
ղեր ենք նրանցից առաջ բնաջինջ արել, որ նրանց
տեղերումը ման էին գալիս. ահա՛ սրանում նշաններ
կան. մի՞թէ չեն լսում :

27. Մի՞թէ չեն տեսնում, որ մենք ջուրը չոր երկրի
վրայ ենք թափում, եւ նրանով դուրս ենք բերում
վարածը, որ նրանից ուտում են նրանց անասունները
եւ իրանք. մի՞թէ սա չեն տեսնում :

28. Նրանք ասում են, «երբ է լինելու այս վճիռը,
եթէ դուք ճշմարտախօս էք» :

29. Դու. ասա՛, «այն վճռի օրը անհաւատներին օգուտ
չի բերի նրանց հաւատքը, եւ նրանց ժամանակ չը
աւրի» :

30. Դու նրանցից քաշել' ը, եւ սպասի' ը, նրանք էլ
են սպասում:



33) Ս Ո Ւ Ր Է ԷՆՉԱԲ.

Մէդիւնէական. եօթասուն երեք այէ:

Գլծած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ո՛վ մարդարէ, վախի' ը Աստուածանից եւ մի հը-
նազանդիր անհաւատներին եւ կեղծաւորներին, որով-
հետեւ Աստուած գիտուն՝ իմաստուն է:

2. Դու հետեւի' ը քեզ քո Տիրոջ կողմանէ եղած
յայտնութեանը, սրովհետեւ Աստուած ձեր արարքներին
տեղեակ է:

3. Եւ դու Աստուծուն ապաւինի' ը, եւ Աստուած բա-
ւական է իբրեւ պաշտպան:

4. Աստուած մարդու կուրծքի մէջ երկու սիրտ չէ
չինել, եւ ձեր կնիկներին, որոնց դուք «դու ինձ հա-
մար իմ մօր մէջքին պէս ես» ասելով արձակում էք,
ձեզ համար մայրեր չէ չինել եւ ոչ էլ ձեր որդեգրած-
ներին ձեզ համար որդիներ է չինել, սա ձեր խօսքն է
ձեր բերանիցը. բայց Աստուած է ճշմարտութիւնը խօ-
սում, եւ նա է ուղիղ ճանապարհով առաջնորդում:

5. Դուք նրանց կոչեցէ՛ք նրանց հօր անունովը, սա
աւելի ուղիղ է Աստուծոյ առաջին. իսկ եթէ չը գիտէք
նրանց հայրերին, այն ժամանակ նրանք կրօնակից եղ-
բայրներ կամ դաշնակիցներ են ձեզ համար. եւ ձեզ
համար յանցանք չէ, որ սխալւած էիք. բայց եթէ ձեր
սրտերը յամառւեն, սակայն Աստուած ներող ողորմած է:

6. Մարգարէն աւելի մօտ է հաւատացեալներին քան

թէ իրանք, եւ նրա կնիկները նրանց մայրերն են. եւ հաւատացեալ եւ զաղթած արիւնակիցները իրար զաշնակից են Աստուծոյ գրքի մէջ. միայն թէ օրինաւորապէս լարուէք ձեր զաշնակիցների հետ: Սա գրւած է գրքումը:

7. Եւ երբ մենք մարգարէների հետ զաշինք գրեցինք եւ քեզ հետ եւ Նոյի եւ Աբրահամի եւ Մովսէսի եւ Մարիամի որդի Յիսուսի հետ, եւ մենք խիստ զաշինք գրեցինք նրանց հետ.

8. Որ նա հարցնէ ճշմարտախօսներին իրանց ճշմարտախօսութիւնից, եւ նա պատրաստի է անհաւատների համար ցաւալի տանջանք:

9. Ո՛վ հաւատացեալներ յիշեցէ՛ք Աստուծոյ ձեզ աբած շնորհքը: Երբ ձեզ դէմ գունդեր եկան, եւ մենք նրանց դէմ քամի եւ գունդեր ուղարկեցինք, որ դուք չը տեսաք. եւ Աստուած տեսնում էր ձեր արածները:

10. Նաեւ երբ ձեր վերի կողմից եւ ձեր վարի կողմից եկան ձեզ մօտ, եւ ձեր աչքերը ծուեցին եւ ձեր սրտերը կոկորդիներիդ հաստն, եւ դուք Աստուծոյ դէմ կարծիքներ կարծեցիք.

11. Այնտեղ փորձեցին հաւատացեալները եւ սաստիկ շարժումով սարսեցին.

12. Այն ժամանակ կեղծաւորները, որոնց սրտերում հիւանդութիւն կար ասում էին Աստուած եւ նրա մարգարէն մեզ միմիայն խաբէութիւններ են խոստացել.

13. Այն ժամանակ էլ նրանցից մի խումբ ասաց, «ով Եսարէբցիներ, ձեզ համար տեղ չը կայ, ուրեմն ետ դնացէ՛ք»: Եւ նրանցից մի մասը հրաման խնդրեց մարգարէիցն ասելով, «անա մեր տները մերկ են». բայց նրանք մերկ չէին. սրանք միայն ուզում էին փախչել:

14. Իսկ եթէ մի կողմիցը ներս մտած լինէին եւ նրանցից հակառակութիւն պահանջած, նրանք այդ տւած կը լինէին. եւ նրանք միայն մի քիչ մնացած կը լինէին նրանում:

15. Բայց նրանք արդէն առաջուց ուխտ էին արել Աստուծուն, թէ ետ չեն դառնայ, եւ Աստուծոյ ուխտը պարտականութիւն է:

16. Դու ասա՛, «փախչելը ձեզ օգուտ չի տայ, եթէ դուք փախչէք մահից եւ սպանութիւնից, դուք այն մամանակ միայն քիչ կը վայելէք»:

17. Դու ասա՛, «ո՞վ կարող է ձեզ Աստուծոյ դէմ պաշտպանել, եթէ նա ուզէ ձեզ չարիք կամ ուզէ ձեզ ողորմութիւն անել: Նրանք բացի Աստուածանից պաշտպան չեն գտնի եւ ոչ էլ օգնական»:

18. Աստուած արդէն ճանաչում է ձեր միջից արդելողներին եւ նրանց, որոնք իրանց եղբայրներին ասում են, «եկէ՛ք այստեղ մեզ մօտ», եւ միայն քիչերն են պատերազմի գալիս:

19. Շահասիրութիւն ձեզ դէմ: Որովհետեւ երբ վրտանգր գալիս է, տեսում ես նրանց, որ իրանց աչքները շուտ տաշով փեղ են մտիկ տալիս, որ կարծես թէ մահից սարսափահար են եղել. բայց երբ վտանգն անցնում է, սուտ լեզուով դիմաւորում են ձեզ: Շահասիրնորութիւն բարեքներից: Նրանք չէին հաւատում. բայց Աստուած կը փճացնէ նրանց գործքերը. եւ սա Աստուծոյ համար հեշտ է:

20. Գունդերը կարծում էին, թէ նրանք չեն գայ. եւ եթէ գունդերը գային, նրանք կուզէին որ անապատումն արարների մօտ լինէին. ձեզնից տեղեկութիւն են ուզում, որ եթէ ձեզ հետ լինէին միայն քիչերը կը պատերազմէին:

21. Բայց մարգարէի անձումը ձեզ համար դեղեցիկ օրինակ կար այսինքն նրա համար. որ յոյսը դրել է Աստուծոյ վրայ եւ վերջի օրան վրայ. եւ յիշում է Աստուծուն շատ անգամ:

22. Եւ երբ հաւատացեալները տեսան գունդերը, ասացին, « սա այն է որ Աստուած եւ նրա մարգարէն մեզ խօստացիլ են, եւ Աստուած ու նրա մարգարէն ճշմարիտ են եւ սա միմիայն նրանց հաւտօքը եւ անձնախրութիւնը շատացրեց»:

23. Հաւատացեալներին կան այնպիսիներ, որ իրանց ուխտերը որ Աստուծուն արել են, կաատարում են. նրանցից ոմանք իրանց խոստացածը կատարել են, իսկ ոմանք էլ սպասում են, բայց ոչ մի փոփոխութիւն չեն անում:

24. Աստուած ճշմարիտներին իրանց ճշմարտութեան համար վարձատրելու է, իսկ կեզձաւորներին պատժելու է եթէ ուզէ, կամ դէպի նրանց կը զառնայ, որովհետեւ Աստուած ներող ողորմած է:

25. Աստուած էլ մերժել է անհաւատներին իրանց բարկութիւնովը. նրանք մի բարիքի չեն հասնի. իսկ Աստուած հաւատացեալներին բաւական է պատերազմի ժամանակ. եւ Աստուած ուժեղ զօրաւոր է:

26. Նա էլ իջեցրեց իրանց բերդերիցը զիրք ունեցողներին նրանց, որ օգնել էին նրանց եւ զրանց սըրտի մէջ երկիւղ գցեց. մի մասը դուք սպանեցիք եւ մի մասը գերի արեցիք:

27. Նաեւ ժառանգութիւն տւեց ձեզ նրանց հողը եւ նրանց երկիրը եւ նրանց ստացւածքը եւ մի երկիր, որ ի վրայ դուք ոտք չէիք դրել. եւ Աստուած ամենակարող է:

28. Ո՛վ մարգարէ, ասա՛ քս կնիկներին, «եթէ դուք այս աշխարհքի կեանքն էք ուզում եւ նրա զարդը, եկէ՛ք ձեզ օժիտ տամ եւ անուշ արձակումով ձեզ արձակեմ»:

29. «Իսկ եթէ ուզում էք Աստուծուն եւ նրա մարգարէին եւ միւս աշխարհքը, ա՛նա՛ Աստուած ձեզնից բարիք գործողներին համար մեծ վարձք է պատրաստել»:

30. Ո՛վ մարգարէի կանայք, ձեզնից ով յայտնի անբարոյականութեան մէջ գտնուի, նրա պատիժը երկու անգամ կրկնապատիկ կը լինի. եւ սա Աստուծոյ համար հեշտ է:

31. Իսկ ձեզնից ով խոնարհի Աստուծոյ եւ նրա մարգարէի առաջքն եւ բարիք գործէ, մենք նրան երկու անգամ վարձք կը տանք եւ նրան ազնիւ ապրուստ ենք պատրաստել:

32. Ո՛վ մարգարէի կանայք, դուք կնիկներից մէկի նման չէք: Եթէ դուք երկիւղած էք խօսելիս մի՛ մեղմանաք, որովհետեւ նա, որի սիրաւ տկար է, կը ցանկայ, եւ օրինաւոր բան խօսեցէ՛ք:

33. Մնացէ՛ք ձեր տներումը եւ առաջի գիտութեան ժամանակի պաճուճանքներովը մի՛ պաճուճէք. եւ կատարեցէ՛ք աղօթքը եւ աւէք մաքրութեան ատուքը եւ հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէին. որովհետեւ Աստուած կամենում է, որ ձեզնից հեռացնէ ընտանեկան ազտոտութիւնը, որ ձեզ լաւ մաքրէ»:

34. «Նաեւ յիշեցէ՛ք այն, որ կարգացուած է ձեր տներումը Աստուծոյ խօսքերիցը եւ խմաստութիւնիցը, որովհետեւ Աստուած նրբատես տեղեակ է»:

35. Իրաւ որ միւսլիմները, միւսլիմուհիները, հաւատացեալները եւ հաւատացելուհիները, խոնարհները եւ խոնարուհիները, ճշմարիտները եւ ճշմարտուհիները, համբերողները եւ համբերողուհիները, բարեպաշտները եւ բարեպաշտուհիները, ողորմածները եւ ողորմածուհիները, իրանց սեռականութեան հոգատարները եւ հոգատարուհիները եւ Աստուծուն յաճախ յիշողները եւ յիշողուհիները— Աստուած նրանց համար թողութիւն եւ մեծ վարձք է պատրաստել:

36. Մի հաւատացեալ մարդ եւ մի հաւատացեալ կնիկ իրաւունք չունեն իրանց գործերի մէջ ընտրութիւն անելու, երբ Աստուած եւ նրա մարգարէն մի բան արգէն վճռել են: Եւ ով որ Աստուծուն եւ նրա մարգարէին հակառակէ, նա արգէն յայտնապէս շատ մոլորուած է:

37. Եւ երբ դու նրան, որին Աստուած ողորմել է եւ դու էլ ես ողորմել, ասացիր, «կնկանդ պահիր մօտդ, եւ վախի՛ր Աստուածանից» եւ դու (ով Մուհամմէդ) ծածկում էիր քո սրտումը, ինչ որ Աստուած արգէն յայտնել էր, եւ վախում էիր մարդկանցից, թէ եւ աւելի է վայելում որ Աստուածանից վախես, — եւ երբ Ձէյքը պէտք եղածը իր կնոջ համար վճարեց, մենք քեզ նրա

հետ ամուսնացրեցինք, որ հաւատացեալների համար նեղութիւն չը լինի իրանց որդեգրածների կնիկներն առնելու, երբ նրանց ապահարզանը նրանք կը վճռեն և Աստուծոյ պատէրը պէտք է կատարել:

38. Յանցանք չէ մարդարէին համար, ինչ որ Աստուած պատուիրել է նրան անցեալ ազգերի աստուծոյ կրթօնական կանոնների համեմատ, որովհետեւ Աստուծոյ հրամանը սահմանւած սահմանադրութիւն է:

39. Որոնց Աստուծոյ կողմանէ մարդարէութիւն է տրուել եւ նրանցից վախում են նրանք, թող Աստուածանից դատ ոչ մէկից չը վախենան: Աստուծոյ հաշւարարութիւնը բաւական է:

40. Մուհամմէդը ձեր մարդկանցից ոչ մէկի էլ հայրը չէր, այլ նա Աստուծոյ մարդարէն է եւ մարդարէների վերջինը. եւ Աստուած ամեն բան զիտէ:

41. Ո՛վ հաւատացեալներ յիշեցէ՛ք Աստուծուն յաճախ յիշելով եւ փառաբանեցէ՛ք նրան առաւօտ եւ իրիկուն:

42. Նա է որ աղօթում է ձեզ համար եւ նրա հրեշտակները, որ ձեզ դուրս հանէ խաւարներիցը դէպք լոյսը, եւ հաւատացեալների գէճ ողորմած լինի:

43. Այն օրը, որ նրան կը դիմաւորեն, նրանց բարեւելը կը լինի «խաղաղութիւն». եւ նա նրանց համար ազնիւ վարձք է պատրաստել:

44. Ո՛վ մարդարէ, ես քեզ սեղարկիլ եմ իրրեւ վկայ եւ աւետիք տուող եւ սպառնալիք անող:

45. Եւ իրրեւ Աստուծոյ մօտը կանչող նրա հրամանովը, եւ իրրեւ մի լուսատու ճրագ:

46. Եւ աւետիք տուր հաւատացեալներին, որ մեծ շնորհք կայ Աստուծոյ կողմից նրանց համար:

47. Մի՛ հնազանդիւր էլ անհաւատներին եւ կեղծաւորներին, եւ թո՛ղ նրանց նեղութիւնը, եւ ապաւինի՛ր Աստուծուն, եւ Աստուծոյ պաշտպանութիւնը բաւական է:

48. Ո՛վ հաւատացեալներ, երբ հաւատացեալ կնիկ-

նիկներ էք անում եւ նրանց արձակում տակաւին նրանց չը մտեցած, դուք պէտք չուէք, որ նրանց կրկին ամուսնանալու ժամանակը ետ պահէք. այլ նրանց օժիտ աւէք եւ գեղեցիկ արձակումով արձակեցէ՛ք :

49. Ո՛վ մարգարէ մենք օրինաւոր ենք հրատարակում քեզ համար այն կնիկները, որոնց վարձքը դու աւել ես եւ քո այն ստրկուհիները, որոնց Աստուած աւել է քեզ. նաեւ քո հօրեղբոր աղջիկները եւ քո հօրաքրոջների աղջիկները եւ քո քեռուդ աղջիկները եւ քո մօրաքոյրների աղջիկները եւ նրանք, որ քեզ հետ զաղթել են եւ ամեն մի հաւատացեալ կին որ իր անձը մարգարէին կրնձայէ, եթէ մարգարէն նրան իբրեւ կին ընդունել ուզէ : Սա մասնաւորապէս քեզ համար է, եւ հաւատացեալներին չի վերաբերի :

50. Մենք արդէն գիտենք թէ նրանց համար ինչ ենք օրէնք դրել, եւ նրանց ստրկուհիները, որ քեզ համար գժւարութիւն չը լինի եւ Աստուած ներող ուղորմած է :

51. Դու կարող ես անտես անել կնիկները, որին ուզես, եւ նոյնիսկ քո դուրս արածներից որին փափագում ես, սա քեզ համար յանցանք չէ : Հեշտ է նրանց աչքերը ուրախացնել, որ չը տրամեն, այլ ամենն էլ գոհ լինեն քո իրանց աւածովը : Եւ Աստուած գիտացող մեզմ է :

52. Սրանից յետոյ այլեւս կնիկներ անելու իրաւունք չունես, եւ ոչ էլ նրանց փոխելու ուրիշ կնիկների հետ, թէեւ նրանց գեղեցկութիւնը քեզ զարմացընելու էլ լինի, բացի քո ստրկուհիներից, եւ Աստուած ամեն բանի հսկողն է :

53. Ո՛վ հաւատացեալներ, մի՛ մտնէք մարգարէի տները կերակուրի համար, եթէ նա ձէզ հրաման չէ

տւել, առանց նրա ժամանակին մտիկ տալու. բայց երբ կը կանչւէք, այն ժամանակ մտէք: Եւ ուտելուց յետոյ հեռացէ՛ք, եւ զրոյցներով մի՛ զբաղւէք իրար հետ, որովհետեւ սա նեղացնում էր մարգարէին. եւ նա ամաչում էր ձեզնից. բայց Աստուած ճշմարտութիւնից չէ ամաչում: Դուք էլ երբ նրա կնիկներիցը մի բան էք խնդրելու, վարագոյրի ետեւիցը խնդրեցէ՛ք նրանցից: Սա աւելի մաքուր է ձեզ համար եւ այն կնիկներին համաչ: Եւ դուք իրաւունք չունէք մարգարէին նեղացնելու, եւ ոչ էլ նրա կնիկներին հետ յաւիտեան ամուսնանալու նրանցից յետոյ, որովհետեւ սա Աստուծոյ մօտ մեծ մեղք է:

54. Եթէ դուք մի բան յայտնէք կամ ծածկէք, արդէն Աստուած ամեն բան գիտէ:

55. Այն կնիկներին յանցանք չըկայ իրանց հայրերի եւ իրանց որդիների եւ իրանց եղբայրների եւ իրանց հղբորորդիների եւ իրանց քեռորդիների եւ իրանց կնիկ ծ ա ո ա յ ո զ ն եր թ եւ իրանց սարկուհիների նկատմամբ, եւ Աստուածանից վախեցէ՛ք, ո՛վ կնիկներ, որովհետեւ Աստուած ամեն բան տեսնում է:

56. Աստուած եւ նրա հրեշտակները աղօթում են մարգարէի համար: Ո՛վ հաւատացեալներ, աղօթք արէ՛ք նրա համար եւ խաղաղութեան բարեւ տւէ՛ք:

57. Իրաւ. նրանք, որ նեղացնում են Աստուծուն եւ նրա մարգարէին, Աստուած նրանց անիծել է սյս եւ միւս աշխարհքում եւ նրանց համար նախատալից պատիժ պատրաստել:

58. Նրանք էլ, որ հաւատացեալ մարդկանց եւ հաւատացեալ կանանց նեղութիւն են տալիս առանց պատճառի նրանց կողմից, նրանք ետ կը քաշեն զըրպարտութիւնը եւ յանցանքը որ յայտնի է:

59. Ո՛վ մարդարէ, ասա՛ քո կնիկներին եւ աղջիկներին եւ հաւատացեալների կնիկներին, որ իրանց վերարկուներովը ծածկւեն. սա վայելուչ է, որ ճանաչւեն եւ չը նեղւեն: Եւ Աստուած ներող՝ ողորմած է:

60. Իսկ եթէ կեղծաւորները եւ նրանք, որոնց սրբ-տերոււմը հիւանդութիւն կայ եւ Մեղինայոււմ լինող խռովարարները չը գաղարեն, մենք ձեզ կը գրգռենք նրանց դէմ, որ նրանք քեզ դրացի կը մնան միայն մի քիչ ժամանակ:

61. Նրանք անիծեալ են. ուր էլ պատահեն թող բռնեն եւ անպատճառ սպանեն:

62. Աստուծոյ կանոնին համեմատ, որ կար անցած կացած ազգերի մէջ. եւ դու չես գտնի մի որ եւ է փո-փոխութիւն Աստուծոյ կանոնի մէջ:

63. Մարդիկ քեզ կը հարցնեն վերջի ժամւայ հա-մար, ասա՛, «նրան գիտե՞նալը Աստուծոյ մօտ է». եւ ո՞վ է քեզ ասել. գուցէ այդ վերջի ժամը մօտիկ է:

64. Իրաւ Աստուած անիծել է անհաւատներին, եւ պատրաստել է նրանց համար դժոխքը:

65. Որ պէտք է միշտ նրանում մնան. նրանք ոչ պաշտպան կը գտնեն եւ ոչ մի օգնական:

66. Նոյն օրը, որ նրանց երեսները կրակի մէջ դէս

67. Նաեւ նրանք ասելու են, «ով մեր Տէր մենք հնազանդում ենք մեր իշխաններին եւ մեծերին, իսկ նրանք մեզ ծռացնում են ճանապարհիցը.

ու դէն կը զարձնեն, նրանք կ'ասեն, «ո՛հ երանի թէ հնազանդէինք Աստուծուն եւ հնազանդէինք մարդա-բէին»:

68. «Ո՞վ մեր Տէր, նրանց կրկին պատիժ տո՛ւր եւ մեծ անէծքով անիծի՛ր նրանց»:

69. Ո՞վ հաւատացեալներ Մովսէսին նեղացնողների նմանող մի՛ լինէք, որովհետեւ Աստուած նրան արդա-բեցրեց այն բանից որ նրանք ասում էին: Եւ նա Աս-տուծոյ մօտ ընդունելի էր:


70. Ո՞վ հաւատացեալներ, վախեցէ՛ք Աստուածանից եւ խոհեմ խօսք խօսեցէ՛ք:

71. Որ ուղղէ ձեր գործքերը եւ ներէ ձեր մեղքերը, եւ ով կը հնազանդէ Աստուծուն եւ նրա մարգարէին, նա արդէն մեծ երջանկութիւնով երջանիկ է:

72. Իրաւ մենք հաւատքը առաջարկեցինք երկնքին եւ երկրին եւ սարերին, որ նրան կրեն, եւ նրանք դողալով հտ քաշեցին նրանից, բայց մարդը նրան

յանձն առաւ, որովհետեւ անիրաւ եւ տգէտ էր:

73. Աստուած պատժելու է կեղծաւոր մարդկանց եւ կեղծաւոր կանանց եւ կոապաշտ մարդկանց եւ կոապաշտ կանանց, սակայն Աստուած ետ է դառնալու դէպի հաւատացեալ մարդկանց եւ հաւատացեալ կանանց. եւ Աստուած ներող սղորմած է.



34) ՍՈՒՐԷ Ս Ա. Բ. Ա.

Մէքքէական. յիսուն չորս այլէ:

Գլխած սղորմած Աստուծոյ անունովը:

1. Փառքը լինի Աստուծուն, որ նրանն է երկնքումը եղածը եւ երկրումը եղածը, եւ նրան փառք լինի՝ հանգերձեալումը. եւ նա է իմաստունը՝ տեղեակը:

2. Նա գիտէ, թէ ինչ է մտնում երկրի մէջ, եւ թէ ինչ է դուրս գալիս նրանից, եւ թէ ինչ է իջնում երկրնքից եւ ինչ է վեր գնում այնտեղ. եւ նա է ողորմածը ներողը:

3. Անհաւատներն էլ ասում են, «վերջի ժամը մեզ չի գայ». ասա՛, «այո՛, իմ Տէրը, որ գիտէ զաղտնիքները, վկայ է. որ նա գալու է ձեզ մօտ. նրանից ծածուկ չէ մի մրջունի ծանրութեամբ բան ոչ երկնքումը եւ ոչ երկրումս, եւ ոչ սրանից փոքրիկը եւ ոչ սրանից մեծը. այլ յայտնի գրքումն է»:

4. Որ վարձատրէ նրանց, որ հաւատում են եւ բարիքներ գործում. նրանց համար թողութիւն կայ. եւ ազնիւ ապրուստ:

5. Իսկ նրանք, որ ջանք են անում որ մեր նշան-
ները տկարացնեն, նրանց համար ցաւալի տանջանքով
պատիժ կայ:

6. Նաեւ նրանք, որոնց գիտութիւն է տրւած, տես-
նում են այն բանը, որ քո Տէրից իջեցրել է քեզ հա-
մար, ճշմարիտ է, եւ առաջնորդում է դէպի զօրաւոր
օրհնեալ ճանապարհը:

7. Անհաւատներն ասում են «ձեզ մի մարդու մօտ
տանենք, որ ձեզ լուր տայ, թէ դուք բոլորովին հողու-
մոխիր դառնալուց յետոյ նոր արարած էք դառնալու:

8. «Նա Աստուծոյ դէմ սուտ զրպարտութիւն է ան-
ում, կամ նրանում դեւեր կան»: Այո՛, նրանք, որ
միւս աշխարհքին չեն հաւատում, պատժի եւ մեծ մո-
լորութեան մէջ են:

9. Մի՞թէ չեն տեսնում, թէ ինչ կայ իրանց առա-
ջին եւ իրանց ետքին երկնքից եւ երկրից, եթէ մենք
ուզենք կը ճեղքենք նրանց տակի երկիրը կամ երկըն-
քիցը մի կտոր կը գցենք նրանց վրայ: Ահա սրանում
նշան կայ ամեն մի ազաշխարհ դատալի համար.

10. Մենք էլ Դաւիթին տեղ էինք արդէն մեր
պարգեւը, թէ ո՛վ սարեր նրա հետ միասին օրհնեւ-
րեցէ՛ք եւ ո՛վ թռչուններ. եւ մենք կակուղացրեցինք
նրա համար երկաթը, թէ զրահներ չինիր. եւ շարիք
օղակների մէջ՝ եւ բարի գործքեր գործեցէ՛ք. եւ տես-
նում եմ ձեր արարքները:

11. Նաեւ Սողոմոնին տւեցինք քամին, որ փը-
շում էր առաւօտները մէկ ամիս, եւ փշում էր իրիկուն-
ները մէկ ամիս, եւ նրա համար մի հալած երկաթի
ազրիք հոսեցրինք, նաեւ դեւեր, որոնք նրա Տիրոջ
հրամանովը գործում էին նրա առաջքն: Եւ նրանցից
որն ծովում էր մեր հրամանից, նրան ճաշակել էինք
տալիս դժոխքի տանջանքիցը:

12. Նրանք չինում էին նրա համար, ինչ ուզում էր,
պալատներ, արձաններ եւ լճակների պէս կոնքեր եւ
հաստատ կեցող կաթսաներ: Ո՛վ Դաւիթի ընտանիք,

գոհութիւն մատուցրէ՛ք. բայց ի՛մ ծառաներից քիչերն են, որ գոհանում են:

13. Եւ երբ մենք նրա համար վճռեցինք մահը, միմիայն մի երկրի որդէք, որ ցոյց տուց նրա մահը, որ կերել էր նրա դաւադանը. եւ երբ նա վար ընկաւ, դեւերը յայտարարեցին, թէ գաղտնիքը գիտեցած լինէին, այդ նախատալից տանջանքի մէջ չէին մնայ:

14. Սարայի համար նրանց բնականեղբուհն էլ մի նշան կար՝ այսինքն երկու այգիներ ր մէկը աջ կողմում, միւսը ձախ կողմում: «Կերէ՛ք ձեր Տիրոջ պարգեւածիցը եւ նրան շնորհակալութիւն մատուցրէ՛ք. բարի երկիր է եւ Տէրը ներող»:

15. Բայց նրանք մերժեցին. եւ մենք էլ նրանց վրայ ուղարկեցինք թումբերի հեղեղը եւ փոխեցինք նրանց երկու այգիները ուրիշ երկու այգիների, որ լեղի պտուղներ ունէին եւ մոշայ եւ մի քանի լուտոս սենի:

16. Սա հատուցում տուցինք նրանց անհաւատութեանը: Եւ մի՞թէ մենք այսպէս կը հատուցանենք եթէ ոչ անհաւատներին:

17. Մենք էլ նրանց եւ այն քաղաքների մէջ, որ մենք օրհնել ենք, ուրիշ յայտնի քաղաքներ դրեցինք եւ նրանցում որոշեցինք որ ճանապարհորդեն. թէ «ապահով ման եկէք գրանում գիշերները եւ ցերեկները»:

18. Եւ նրանք ատացին, «ո՛վ մեր Տէր, միմեանցից հեռացրո՛ւ մեր ճանապարհորդութիւնները». եւ նրանք մեղանչեցին իրանց հողիների դէմ, եւ մենք նրանց առակ շինեցինք, եւ բոլորովին փշուրփշուր արեցինք նրանց: Ահա՛ սրանում նշաններ կան ամեն համբերող շնորհակալի համար:

19. Բայց սատանան ճշմարտացձեց նրանց մասին իր կարծիքը, եւ նրանք հետեւեցին նրան բացի հաւատացեալների մի խումբից:

20. Նա միայն նրա համար ունեցաւ նրանց վրայ

ի չխանութիւն, որ մենք իմանանք, թէ ով է նրանց ից միւս աշխարհքին հաստատացողը եւ ով է նրա մասին կասկածում եղողը, եւ քո Տէրը ամեն բանի հսկող է:

21. Դու ասա՛, «կանչեցէ՛ք նրանց, որ դուք նրանց մի բան էք կարծում բացի Աստուածանից. նրանք մի մըջիւնի ծանրութեամբ բան չեն կարող աւել երկնքումը եւ ոչ երկրումս, եւ նրանք այդ երկուսի մէջ նրա հետ բաժին չ'ունեն. եւ դրանք էլ չեն կարող նրան օգնել»:

22. Նրա մօտ էլ մի բարեխօսութիւն օգուտ չի անի բացի նրանից, որ նա նրան հրաման տայ, մինչեւ նրանց սրտերիցը վեր կ'առնել երկիւղը, նրանք կ'ասեն, «ի՞նչ որ ձեր Տէրն տեսլ է». նրանք էլ կ'ասեն, «ճշմարտութիւնը». եւ նա է բարձրը՝ մեծը:

23. Դու ասա՛, «ո՞վ է ձեզ կերակրում երկնքից եւ երկրից». ասա՛, «Աստուած»: Հիմա կամ մենք ենք ուղիղ առաջնորդութեան վրայ կամ յայտնի մոլորութեան մէջ, կամ դուք:

35. Դու ասա՛, «ձեզ չեն հարցնի մեր սրած յանցանքի համար, եւ ոչ էլ մեզ կը հարցնեն ձեր արածի համար»:

25. Դու ասա՛, «մեր Տէրը մեզ միասին է ժողովելու եւ մեր մէջը ճշմարտութիւնով դատելու, եւ նա է իմաստուն գատաւորը»:

26. Դու ասա՛, «ինձ ցոյց տէ՛ք այն ընկերները, որ դուք նրա վրայ աւելացրել էք»: Երբէ՛ք, այլ նա է զօրաւոր՝ իմաստունը:

27. Մենք էլ քեզ միմիայն իբրեւ աւետիչ եւ խրատող ենք ուղարկել ընդհանուր մարդկութեան համար. բայց մարդկանցից շատերը չեն իմանում:

28. Եւ նրանք ասում են, «այս գուշակածը երբ կատարւելու է, եթէ ճշմարտախօս էք»:

29. Դու ասա՛, «ձեզ համար մի օր կայ որոշւած, որ նրան կարող չէք ոչ մի ժամ ուշացնել, ոչ շտապեցընել»:

30. Եւ անհաւատներն ասում են, «մենք այս Ղուրանին երբէք չենք հաւատայ եւ ոչ էլ նրանից առաջ եղածին»: Եթէ տեսնէիր երբ անիրաւները իրանց Տիրոջ մօտ կանգնած խօսքը իրար ետ են դարձնում եւ տկար եղածներն ամբարտաւան եղածներին ասում են, «եթէ դուք չը լինէիք, մենք հաւատացեալներ եղած կը լինէինք»:

31. Ամբարտաւանացածները կ'ասեն տկարացածներին, «մենք հանեցինք ձեզ ուղիղ ճանապարհիցը, որ որդէն եկել էր ձեզ համար. ո՛չ, դուք էք յանցաւորը»:

32. Նաեւ տկարացածները կ'ասեն ամբարտաւանացածներին, «ո՛չ, այլ գիշեր-ցերեկի նենգութիւնը, երբ դուք մի դ հրամայում էիք, որ Աստուծուն չը հաւատանք եւ նրան նմանութիւններ չինենք»: Եւ երբ կը տեսնեն պատիժը կը թաքցնեն զղջումը: Եւ մենք անհաւատների վիզերին շղթաներ կը դնենք: Մի՞թէ նրանք ուրիշ բանի համար հատուցում կը ստանան քան թէ այն, որ իրանք յորձել են:

33. Մենք էլ ո՛չ մի քաղաք մի խրատիչ չենք ուղարկել, որ նրա մեծամեծները չեն տեսել, թէ «մենք ինչ բանով որ դուք ուղարկուել էք. նրան չենք հաւատում»:

34. Նրանք ասում էին, «մենք աւելի չափ ստացւածք որդիք ունենք, եւ մենք չենք տանջուի»:

35. Դու ասա՛, «իբրա իմ Տէրը իր ուղածին ստատապրուտ է տալիս, եւ քիչ է տալիս. բայց մարդկանց շատերը չեն հասկանում»:

36. «Եւ ոչ ձեր ստացւածքները եւ ոչ ձեր որդիքը կարող են ձեզ մօտեցնել մեզ. միայն նա որ հաւատում է եւ բարիք գործում. նրանք իրանց արարքների օհամար կրկնակի վարձք կ'ստանան, եւ նրանք ապահով վերնայարկներում կը լինեն»:

37. «Թեկ նրանք որ ջանք են անում մեր նշանները տկարացնելու, նրանք պատժի պիտի ներկայացուին»:

38. Դու ասա՛, «իմ Տէրն իր ծառաներից ուղածին

առտա ապրուստ է տալիս, եւ քիչ է տալիս նրան. եւ գուք ինչ որ ողորմութիւն էք տալիս, նա ձեզ կը փոխարինուի. եւ նա ամենալաւ կերակրողն է»:

39. Սոյն օրը, որ նրանց բոլորն էլ կը հաւաքէ, կ'ասէ հրեշտակներին, «սրա՞նք են որ ձեզ պաշտում էին»:

40. Նրանք էլ կ'ասեն, « դու սուրբ ես. դու ես մեր պաշտպանը եւ ոչ թէ նրանք». սակայն նրանք դեւերին էին ծառայում եւ նրանցից շատերը նրանց էին հաւատում.

41. Իսկ այսօր ձեզնից մէկը միւսին մի օգուտ բերել չէ կարող եւ ոչ էլ վնաս. եւ մենք կ'ասենք նրանց, որ ամբարիշտ էին «ճաշակեցէ՛ք կրակի տանջանքը որը գուք սուտ էիք համարում»:

42. Եւ երբ միք յայտնի նշանները նրանց կարգացվում են, նրանց ասում են, «սա միայն մի մարդ է որ ուզում է ձեզ շեղել տայ «յն բանից, որը պաշտում էին ձեր հայրերը». եւ ասում են, «սա միմիայն հնարած սուտ է»: Եւ նրանք, որ չեն հաւատում ճշմարտութեանը, երբ եկաւ իրանց, ասում են, «սա միմիայն պարզ խարդախութիւն է»:

43. Մենք էլ նրանց գրքեր չենք տւել, որ քննեն, եւ մենք քեզնից առաջ նրանց մի խրատող չենք ուղարկել:

44. Նրանցից առաջ եղողներն էլ էին սուտ համարում, թէ եւ մեր սրանց աւածի մի տասանորդին չէին հասած, բայց դարձեալ սուտ էին համարում իմ մարդարէններին: Յետոյ ի՛նչպէս եղաւ իմ պատիժը:

45. Դու ասա՛, «ես ձեզ միմիայն մէկ բան եմ խըրատում, որ երկու երկու կամ մ'էկ մէկ կ'անդնէք Աստուծոյ առաջին, յետոյ խորհէք, որ ձեր ընկերք մէջ դեւ չը կայ նա միայն մի խրատիչ է ձեզ համար մի սաստիկ պատիժից առաջ»:

46. Նաեւ ասա՛, «ես ձեզնից մի վարձք չեմ ուզում. դա ձեր բանն է: Իմ վարձքը միմիայն Աստուծոյ մօտ է եւ նա իկայ է ամեն բանի:

47. Դարձեալ տա՛, «իրաւ իմ Տէրը մերժում է ճշմարտութիւնով, որ ինքը գաղտնիքները գիտացողն է:

48. Կրկին ասա՛, «ճշմարտութիւնը եկել է եւ ունայնութիւնը չի երեւայ, եւ այլեւս չի կրկնուի:

49. Նաեւ ասա՛, «եթէ ես մոլորւած եմ, միայն իմ անձի համար եմ մոլորւած, եւ եթէ ուղիղ եմ առաջնորդւած, դա իմ Տիրոջ ինձ յայտնածն է: Իրաւ նախող՝ մօտիկ եղող է:

50. Եթէ տեսնէիր նրանց սարսափած, որ փախուստի տեղ չը կար, եւ նրանք բռնեցան մի մօտ տեղից:

51. Նաեւ ասում են, «մենք հաւատում ենք նրան»: Բայց նրանց համար դա ինչպէս հասանելի կը լինի մի հետու տեղից:

52. Բայց արդէն առաջուց էին ուրացել նրան եւ հետու տեղից նրան հայհոյել ծածկարար:

53. Եւ մի անջրպետ կը դուրի նրանց մէջը եւ իրանց ուզածի մէջ:

54. Ինչպէս գրանից առաջ իրանց կուսակից խումբերին եղաւ, որովհետեւ կասկածոտ տարակուսանքի մէջ էին:



35) Ս Ո Ի Ր Է Մ Է Լ Ա Յ Ի Ք Է Թ Ի

Մէքքէական. քառասուն հինգ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Փառքը լինի՛ երկինքը եւ երկիրը ստեղծող Աստուծուն, որ երկու երկու, երեք երեք եւ չորս չորս թեւերով հրեշտակներին պատգամարեւրներ է շինում, որ իր արարածների վրայ աւելացնում է իր ուզածը. իրաւ Աստուած ամեն բանի կարող է:

2. Աստուած ինչ ողորմութիւն որ շնորհում է մարդկանց, նրան խանգարող չի լինի. եւ ինչ որ նա խնայում է ոչ ով չէ կարող դրանից յետոյ նրան ուղարկել տալ. եւ նա է զօրաւորը խմաստուէնը:

3. Ո՛վ մարդիկ, յիշեցէ՛ք Աստուծոյ ձեզ արած չընորհքը. թէ արդեօ՞ք բացի Աստուածանից մի արարիչ կայ, որ նա ձեզ երկնքիցը եւ երկրիցս կերակրում է: Նրանից ջոկ ուրիշ Աստուած չը կայ: Ապա ի՞նչպէս էք ետ քաշլում:

4. Եթէ քեզ սուտ են համարում, արդէն քեզնից առաջ եղած մարգարէներն էլ են սուտ հանելի. բայց բաները Աստուծոյ մօտ են ետ դառնալու:

5. Ո՛վ մարդիկ, ահա՛ Աստուծոյ խոստումը ճշմարիտ է. թող այս սչխարհքի կեանքը ձեզ չը խարէ, եւ խաբերան ձեզ չը խարէ Աստուծոյ մասին:

6. Իրաւ սատանան ձեզ թշնամի է, եւ դուք նրան թշնամի համարեցէ՛ք: Իրաւ նա իրան խումբը կանչում է, որ դժոխքի ընկերներ դառնան:

7. Նրանք, որ չեն հաւատում, նրանց խիստ պատիժ կայ:

8. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում, նրանց համար թողութիւն եւ մեծ վարձք կայ:

9. Հիմայ արդեօ՞ք նա, որի գործքը իրբեւ չար է սահմանւած եւ նա լաւ է համարում նրան... իրաւ Աստուած իր ուղածին մոլորեցնում է եւ ուղիղ առաջնորդում որին ուզում է: Թող սիրտդ չը հառաչէ նրանց պատճառովը. որովհետեւ Աստուած գիտէ, թէ նրանք ինչ են անում:

10. Աստուած է որ ուղարկում է քամիները եւ գրողը ում է ամպերը, եւ մենք ջրում ենք մի մեռած երկիր եւ նրանով կենդանացնում ենք մի երկիր, որ արդէն մեռած էր. յարութիւնն էլ այսպէս է:

11. Ով որ փառք է պտրում, ահա՛ բոլոր փառքը Աստուծոյ մօտ է. նրա մօտն է բարձրանում անուշ խօսքը, եւ նա բարձրացնում է բարի գործը: Իսկ նրանք որ

չարութիւնն են նենգում, նրանց համար խիտ պատիժ կայ, եւ նրանց նենգութիւնը պիտի ոչնչանայ:

12. Աստուած ստեղծել է ձեզ հողից, յետոյ սերմի քրից, յետոյ ձեզ տեսակներ է շինել. եւ ոչ մի կրն չէ յղանում եւ չէ ծնում առանց նրա գիտութեանը. եւ մի ապրող աւելի չի ապրի եւ նրա կեանքիցը չի պակասցընւի բացի նրանից, որ գրքումն է: Իրաւ սա հեշտ է Աստուծոյ համար:

13. Նաեւ երկու ծովերը իրար հաւասար չեն. այս մէկը անաշ է թարմ է, խմելը գիւրին է. եւ միւսը ազի է, լեղի է. բայց երկուսիցն էլ թարմ միտ էք ուտում եւ զարդարանքներ էք հանում: որ հագնում էք. եւ տեսնում ես, որ նաւը նրա վրայ ստնում է, որ նրա շնորհքիցը մի բան խնդրէք, եւ որ շնորհակալ լինէք:

14. Որ գիշերը մտցնում է ցերեկւայ մէջ եւ ցերեկը մտցնում է գիշերւայ մէջ, եւ հնազանդեցրել է արեգակը եւ յուսինը, որ ամէն մէկ, գնում է իր որոշւած ժամանակին: Աստուած՝ ձեր Տէրն է. իշխանութիւնը նրանն է. եւ այն սր բացի նրանից կանչում էք, նրանք մի արմաւի կորիզի թեփն էլ չեն կարող:

15. Եթէ դուք նրանց կանչէք, նրանք չեն լսի, եւ եթէ լսէին էլ, ձեզ չեն պատասխանի եւ յարտիեան որը կուրանան ձեր կոպտաշտութիւնը. եւ քեզ յայտնում է այն մէկը, որ գիտացողի պէս է:

16. Ո՛վ մարգիկ, դուք Աստուծոյ առաջին ազբատ էք, իսկ Աստուած անկարօտ օրհնեալ է:

17. Եթէ կամենայ ձեզ կը ջնջէ նա նոր արարածներ կը բերէ:

18. Աս էլ Աստուծոյ համար դժուար չէ:

19. Նաեւ մի բեռնաւորածը ուրիշի բեռը չի կրի. եւ եթէ մի ծանրաբեռնածը կանչէ իր բեռի համար, որ օգնեն, նրանից ոչինչ չի վերցւի. թէեւ ազգական էլ լի. ի՛նչ որ միմիայն խրատի՛ր նրանց, որ վախենում են իրանց Տիրոջից ծածկարար եւ կատարում

են աղօթքը եւ ով իրան մաքրում է իր հոգուն համար եւ ետ դառնալը գէպի Աստուած է:

20. Կոյրն ու տեսնողը հաւասար չեն եւ ոչ էլ խաւարը եւ լոյսը, եւ ոչ էլ շաքը եւ տաք քամին:

21. Հաւասար էլ չեն կենդանիքը եւ մեռածները, եւ իրաւ Աստուած լսել է տալիս, որին կամենում է. իսկ դու լսել տւող չես գերեզմաններիցը. դու միմիայն մի խրատող ես:

22. Մենք քեզ ճշմարտութեամբ ուղարկեցինք իբրեւ աւետիք տւող եւ խրատող եւ մէկ ազգ չըկայ, որ մի խրատող ունեցած չը լինի:

33. Եւ եթէ նրանք քեզ սուտ են համարում, արդէն նրանցից առաջ եղածները սուտ էին համարում այն մարգարէներին, որ եկան իրանց մօտ հրաշքներով եւ սաղմոսներով եւ լուսատու գիրքով:

24. Յետոյ ես վերցրի անհաւատներին, եւ ի՛նչպէս էր իմ պատիժը:

25. Չն՞ տեսնում, որ Աստուած երկնքից ջուր է իջեցնում, եւ մենք նրանով գոյնզգոյն պտուղներ ենք հանում, եւ սարերիցը սպիտակ եւ կարմիր շերտեր այլ եւ այլ գոյներով եւ ազուաւի տեւութիւնով. նոյնպէս էլ մարդկանցից եւ անասուններից եւ շորքոտանիներից կան այլ եւ այլ գոյներով, այսպէս է: Աստուածանից վախողները միայն նրա ծառաներից գիտուններն են: Իրաւ Աստուած զօրաւոր ներող է:

26. Նրանք, որ Աստուծոյ գիրքը կարդում եւ աղօթքը կատարում եւ մեր իրանց տւածիցը ողորմութիւն են տալիս ծածուկ եւ յայտնի կերպով, նրանք մի վաճառաշահութիւն են սպասում, որ փճանայ:

27. Նա կը հատուցանէ նրանց վարձքը եւ իր շնորհքիցը կաւելացնէ էլ, որովհետեւ նա ներող շնորհակալ է:

28. Ինչ էլ մենք քեզ յայտնել ենք զբքիցը, ճշմարիտ է, նա հաստատում է իրանից առաջ եղածը. իրաւ Աստուած գիտէ իր ծառաներին եւ տեսնում է:

29. Մենք տւեցինք գիրքը ի ժառանգութիւն մեր

ձառաներիցը նրանց, որոնց մենք ընտրեցինք. նրանցից կան ոմանք, որ իրանց հոգու դէմ անիրաւութիւն են գործում, եւ ոմանք չափաւոր են, եւ նրանցից էլ ոմանք Աստուծոյ հրամանովը բարեգործութիւնով գերազանցում են միւսներից. սա մեծ շնորհք է:

30. Եզեմական դրախտնե՛ր, որ նրանց մէջ կը մըտնեն զարդարւած ոսկի ապարանջաններով եւ մարգարիաներով եւ նրանց հագուստը նրանում մետաքս է:

31. Նրանք էլ ասում են, «փառքը լինի Աստուծուն, որ մեզնից վերցրել է արտաութիւնը, որովհետեւ մեր Տէրը ներող շնորհակալ է»:

32. Նա. որ իր շնորհքովը մեզ մի մշտական բնական քանի մէջ է բերել, որի մէջ մեզ մի փորձանք չի դրուել, եւ ոչ էլ մեզ մի հոգածութիւն կը դպչի»:

33. Իսկ չը հաւատացողների համար կայ դժոխքի կրակը. նրանց վրայ այլեւս վճիռ չըկայ, նրանք մեռնելու են, եւ նրանց պատիժիցը ոչինչ չի թեթեւացընուի: Ամեն մի անհաւատին մենք այսպէս ենք պատժում:

34. Եւ նրանք գոռում են նրանում. «ո՛վ մեր Տէր, մեզ հանի՛ր այս տեղից. մենք մեր արածներից զատ բարիք կը գործենք»:
«Մենք մէ՞թէ ձեզ կեանք չէինք տուել, թէ, ով որ մտածում է, մտած էր նրանում, եւ ձեզ եկաւ խրատողը»:

35. «Ուրեմն ճաշակեցէ՛ք»:
Ամբարիշտները օգնական չունեն:

36. Աստուած գիտէ երկնքս եւ երկրի գաղտնիքները, իրաւ նա գիտէ սրտերում եղածները:

37. Նա է, որ ձեզ երկրի մէջ յաջորդներ է շինել: Ուրեմն ով անհաւատ է, նրա անհաւատութիւնը իրան դէմ է. եւ անհաւատների անհաւատութիւնը իրանց Տիրոջ մօտ միայն բարկութիւն է շատացնում, եւ անհաւատների անհաւատութիւնը միմիայն վնաս է շատացընում:

38. Ո՞ր, «ի՞նչ էք կարծում ձեր աստուածընկեր-

ների մասին, որոնց դուք աղօթում էր բացի Աստուածանից. ինձ ցոյց տւէ՛ք, թէ նրանք ինչ են ստեղծել այս երկրիցը. կամ նրանք մի ընկերութիւն ունին երկնքումը, կամ մենք նրանց մի գիրք ենք տւել, որ նրանից վկայութիւններ ունենան»: Ամբարիշտները միմեանց լոկ սուտեր են խոստանում:

39. Իրաւ Աստուած է. որ երկինքը եւ երկիրը պահում է փլչելուց. եւ եթէ նրանք փլչէին, ոչ մէկը չէր կարող նրանց պահել բացի նրանից: Իրաւ նա հեղձներող է:

40. Նաեւ խիստ երզումներով երզում են անում նրանք Աստուծով, եթէ նրանց մի խրատող գայ, նրանք անպատճառ ամենալաւ ատաջնորդած մի ազգ կը լինէին քան թէ միւս ազգերը. բայց երբ եկաւ նրանց համար մի խրատող, միմիայն նրանց զգւանքը շատացրեց,

41. Երկրի վրայ ամբարտաւանութիւնը եւ չար խոբամանկութիւնը. եւ չար խորտամանկութիւնը միմիայն նրան հնարողին է բռնելու: Մի՞թէ նրանք մի ուրիշ բան են սպասում քան թէ այն, որ արդէն ատաջ իննեւրին է եղել. եւ դու մի փոփոխութիւն չես գտնի Աստոծոյ վարքի մէջ:

42. Դու երբէք մի տարբերութիւն չես գտնի Աստուծոյ վարքի մէջ:

43. Նրանք ման չեն եկել երկրումը եւ չեն տեսել, թէ ինչպէս է եղել իրանցից ատաջ եղողների վախճանը. որ սրանից աւելի զօրաւոր էին. եւ Աստուծուն ոչ մի բան երկնքում եւ երկրում չի տկարացնի. որովհետեւ նա գիտէ կարող է:

44. Իսկ եթէ Աստուած պատժէր մարդկանց իրանց արածի համեմատ, նա երկրի երեսին մի կենդանի չէր թողնի. բայց հիմայ նրանց պահում է մինչև մի որոշ ժամանակ:

45. Եւ երբ այն որոշ ժամանակը կըգայ, այն ժամանակ Աստուած մտիկ կանէ իր ծառաներին:

36) ՍՈՒՐԷ՛ Ե՛ Ս՝

Մէքքէական. ութսուն երեք այլ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ե. Ս. Իմաստուն Ղուբանովը երգնում եմ,
2. Որ դու մարգարէ ես.
3. Ուղիղ ճանապարհի վրայ
4. Զօրաւոր ողորմածի իջեցրածն է,
5. Որ խրատես մի ժողովուրդ, որոնց հայրերը չեն խրատած եւ իրանք անհոգ են:
6. Բայց ճշմարտացեւ է նրանցից շատերի վրայ այն խօսքը, թէ եւ իրանք չեն հաւատում:
7. Մենք նրանց վիզերին շղթաներ ենք չինել որ մինչեւ ծնօտներին են հասնում եւ նրանք վեր բարձրացած են բռնում իրանց գլուխները:
8. Մենք էլ նրանց առաջից մի պատ ենք չինել եւ նրանց ետեւից մի պատ, եւ նրանց ծածկել ենք որ չեն տեսնում:
9. Նրանց համար էլ միեւնոյն է. թէ նրանց յանդիմանեո, թէ չը յանդիմանեո, չեն հաւատայ:
10. Դու միայն նրան կը խրատես, որ հետեւում է յիշեցուցմին եւ վախում է Ողորմածից ծածուկ տեղը: Արդ նրան աւետի՛ր մեղքի թողութիւն եւ ազնիւ վարձք:
11. Մենք կենդանացնում ենք մեռելներին եւ դրում ենք նրանց առաջուց արածները եւ նրանց հետեւանքները եւ ամեն մի բան հաշուում ենք մի որոշ առաջնորդի մէջ:
12. Դու նրանց համար մի օրինակ բե՛ր այն քաղաքի բնակիչներին, երբ առաքեալները նրանց մօտ եկան:
13. Երբ մենք նրանց մօտ երկուսին ոտաբկեցինք,

և նրանք սուտ հանեցին նրանց. յետոյ մենք նրանց զօրացրեցինք մի երրորդով. և ասացին, «մենք ձեզ մօտ ենք ուղարկած»:

14. Նրանք ասացին, «զուք միայն մարդ էք մեզ նրման և Ողորմածը ձեզ մի բան չէ իջեցրել. զուք միայն սուտ էք ասում»:

15. Նրանք էլ ասացին, «մեր Տէրը գիտէ, որ մենք ուղարկւած ենք ձեզ մօտ»:

16. «Մեր պարտականութիւնը միայն պարզ առաջարկութիւն է»:

17. Նրանք էլ ասացին, «մենք ձեզնից վատ բան ենք գուշակում. եթէ զուք չը դադարէք, մենք ձեզ կը քարկոծենք և մեզնից ձեզ դաւալի տանջանք կը դպչի»:

18. Եւ նրանք ասացին, «ձեր գուշակութիւնը ձեզ լինի. կուզէ՞ք որ ձեզ յիշեցնեն. սակայն զուք մի չըսայի ազգ էք»:

19. Քաղաքի ծայրիցն էլ մի մարդ էր գալիս վազելով. ասաց «ո՛վ իմ ազգ, հետեւեցէ՛ք այս առաքեալներին»:

20. «Հետեւեցէ՛ք նրան, որ ձեզնից վարձք չէ ուզում. սրանք ուղիղ առաջնորդւածներ են»:

21. «Բայց ինչո՞ւ ես չը պաշտեմ նրան որ ինձ ըստեղծել է և զուք ետ էք դարձնելու նրա մօտ»:

22. «Դ՞ի՞թէ ես նրանից դատ ուրիշ աստուած ընդունեմ: Եթէ Ողորմածն ինձ մի վնաս է ուզում, նրանց բարեխօսութիւնը ինձ ոչ մի բանում չի օգնի և չի ազատի»:

23. Նոյն ժամանակը ես յայտնի մոլորութեան մեջ կը լինէի»:

24. «Ես հաւատում եմ ձեր Տիրոջը. ուրեմն ինձ լըսեցէ՛ք»:

25. Սա էլ ասեց. «մտի՛ր դրախտը»։ Նա էլ ասաց, «ո՛հ երանի՛ թէ իմ ազգը հասկանար»:

26. «Թէ որքան ներել է ինձ իմ Տէրը եւ ինձ փառաւորներէցը շինել» :
27. Մենք էլ նրանից յետոյ նրա ազգի համար երկընքից մի գունդ չ'ուզարկեցինք :
28. Միայն մի գոչում եզաւ աւ նրանք ջնջեցին :
29. Ո՛հ, վա՛յ մարդկանցը. նրանց մօտ մի մարգարէ չէ գալիս որ նրան ծաղր չանեն :
30. Չե՞ն տեսնում թէ որքա՛ն ազգեր մենք բնաջինջ արեցինք նրանցից առաջ :
31. Իրաւ նրանք կրկին չեն գնայ նրանց մօտ :
32. Բայց նրանք ամենքն մեզ մօտ պէտք է ներկայացուին :
33. Նաեւ նրանց համար մեռած երկիրը մի նշտն է, որ նրան կենդանացնում ենք եւ նրանից հատիկներ ենք հանում, եւ նրանից ուտում են :
34. Մենք էլ նրանում արմաւի եւ խաղողի այգիներ ենք շինում եւ նրանում աղբիւրներ բղխեցնում :
35. Որ նրա պողիցն ուտեն եւ նրանից, ինչ որ գործել են նրանց ձեռները : Մի՞թէ չնորհակալութիւն չեն անի :
36. Սուրբ է նա, որ ստեղծել է ամեն տեսակը, որից բուսեցնում է երկիրը, եւ իրանցից, եւ նրանից էլ, որ նրանք չը գիտեն :
37. Մի նշան է նրանց համար գիշերը. որիցը մենք հեռացնում ենք ցերեկը. եւ այն ժամանակ նրանք մընում են խաւարած :
38. Արեգակը գնում է իրան համար սահմանւած ընթացքովը. սա մի որոշում է զօրաւոր իմաստունից :
38. Լուսնի համար էլ իջեւաններ ենք որոշել, մինչեւ որ մի հին արմաւենի ճիւղի պէս ետ դառնայ :
40. Արեգակին պէտք չէ որ լուսնին հասնէ ու բռնէ, եւ նոյնպէս պէտք չէ էլ գիշերը ցերեկից առաջ կայ. նրանցից ամեն մէկը փառք է տալիս մի երկընքում :

41. Եւ մի նշան է նրանց համար, որ մենք նրանց սերունդը կրեցինք լիքը տապանին մէջ:

42. Մենք էլ նրանց համար նրա նմանը շինեցինք, որը հիմայ հեծնում են:

43. Եթէ կամենաք, նրանց կ'ընկղմենք, եւ ոչ ոք նրանց չի ազատի եւ նրանք չեն պրծնի:

44. Առանց մեր ողորմութեան եւ իբրեւ շնորհք մինչեւ մի առ ժամանակ:

45. Եւ երբ նրանց առեց թէ, «վախեցէ՛ք նրանից, որ ձեր առաջին է եւ ձեր ետեւին է, որ ողորմութիւն գտնէք»:

46. Դու էլ յո Տիրոջ նշաններից մինը նրանց բերում ես, նրանք միայն մերժում են:

47. Եւ երբ նրանց առում է, թէ «Աստուծոյ ձեզ աւածիցը ողորմութիւն տէ՛ք», անհաւատներն ասում են հաւատացեալներին, «մի՞թէ մենք նրան կերակրենք, որին Աստուած կը կերակրէր եթէ կամենար. դուք միմիայն պարզ մոլորութեան մէջ էք»:

48. Նաեւ ասում են. «երբ է այս սպառնալիքը կատարելու եթէ դուք ճշմարտախօս էք»:

49. Նրանք միմիայն մի գոչումի են սպասում, որ նրանց յափշտակելու է, նրանք իրար հետ կուելիս:

50. Նրանք չեն կարողանալու կարգադրել եւ ոչ էլ իրանց ընտանիքին դառնալ:

51. Փողը հնչելու է, եւ այն ժամանակ նրանք գերեզմաններից կը տանին իրանց Տիրոջ մօտ.

52. Կ'ասին, «ո՛հ, վա՛յ մեզ, մեզ ով վեր կացրեց մեր պառկած տեղիցը. սա Ողորմածի սպառնացածն է. եւ մարգարէները ճշմարտացան»:

53. Միայն մի հատ գոչում եղաւ, եւ ահա՛ նրանք քոլորն էլ մեզ մօտ ժողովւեցին:

54. Այսօր էլ ոչ մի հոգու մի բան անիրաւութիւն չի լինի, եւ դուք միմիայն ձեր արածի հատուցումը կը ստանաք:

55. Իսկ դրախտի մարդիկը այն օրը զւարճութիւններով են գրադւած:

56. Նրանք եւ իրանց կնիկները չւաքների մէջ աթոռների են թիկնած:

57. Նրանց համար այնտեղ պառւղներ կան, եւ կնչ ուղին, կայ նրանց համար:

58. Ողարմած Տիրոջ կողմից «խաղաղութիւն» խօսքը:

59. Բաժանուեցէ՛ք այսօր, ո՛վ անիրաւներ:

60. Ես ձեզ ու խտ չե՞մ արել ու Ազամի որդիք, թէ սատանային մի՛ ծառայէք, որովհետեւ նա ձեզ թշնամի է:

61. Իսկ թէ ինձ ծառայեցէ՛ք, որ սա է ուղիղ ճանապարհը:

62. Բայց նա ձեզնից շատերին է արդէն մոլորեցրել. դուք միթէ խելացի չէ՞ք լինելու:

63. Ու ա՛յն դժոխքն է, որ ձեզ սպառնում է ինչ:

64. Հիմայ այսօր այրւեցէք, որովհետեւ չէիք հաւատում:

65. Ո՛յսօր մենք նրանց բերաններին կնիք ենք դրել. եւ նրանց ձեռներն են մեզ հետ խօսում, եւ նրանց ոտներն են վկայում, թէ նրանք ինչ են վաստակել:

66. Կամ եթէ կամենայինք նրանց աչքերը կը հանէինք. եւ երբ նրանք առաջ գնային այն ճանապարհով. ի՞նչպէս կը տեսնէին:

67. Նաեւ եթէ կամենայինք, մենք նրանց կերպարանքը վատի կը փոխէինք իրանց տեղերը, եւ նրանք չէին կաշեհայ գնալ եւ ոչ ետ դառնալ:

68. Ու էլ երկար կեանք ենք տալիս, նրա կաղմւածքը ծողմ էլ ենք. մի՞թէ չեն հասկանում:

69. Մենք նրան բանաստեղծութիւնը չենք սովորեցրել, են նրան պէտք չէ. սա միայն խրատ է և յայտնի Ղուրան:

70. Որ նա, որ կենդանի է, խրատի եւ խօսքը անհատներին մասին ճշմարտանա՛յ:

71. Մի՞թէ չեն տեսնում, որ մենք նրանց համար այն բանից, որ մեր ձեռները դործել են, անասուններ ենք սակո՞ղ. եւ նրանք տիրում են նրանց:

72. Մենք էլ անասունները հլու արեցինք նրանց, եւ նրանցից մի քանիսի վրայ հեծնում եւ մի քանիսին ուտում են:

73. Նրանք օգուտներ եւ խմելիքներ ունեն նրանցից. Մի՞թէ չնորհակալ չեն:

74. Բայց նրանք բացի Աստուածանից ուրիշ աստուած են ընդունում, որ նրանց օգնու թիւն լինի:

75. Սակայն սրանք չեն կարող օգնել, թէեւ նրանք խումբովին ներկայանում են նրանց:

76. Ուրեմն թո՛ղ նրանց խօսքը քեզ չը արտմեցնէ. մենք գիտենք, թէ նրանք ինչ են թաքցնում եւ ինչ յայտնում:

77. Մի՞թէ մարդս չէ տեսնում, որ մենք նրան ըստեղծել ենք սերմի ջրից. բայց նա յայտնի հակառակող է:

78. Մեզ էլ օրինակներ է բերում եւ մոռանում իր ստեղծւած լինելը: Նա ասում է ո՞վ կը կենդանացնէ ոսկորները երբ նրանք փոշի են դարձել:

79. Դու ասա՛, «նրան նա կը կենդանացնէ որ նրան կազմել է առաջի անգամը. եւ նա ամեն արարածը գիտէ:

80. Որ նա կանաչ ծառիցը ձեզ համար կրակ է շինել, եւ դուք էլ հիմայ դրանից վստում էք:

81. Մի՞թէ նա, որ ստեղծել է երկինքը եւ երկիրը, կարող չէ, որ նրանց նմանը ստեղծէ. այո՛. նա իմաստուն արարիչն է:

82. Միայն նրա հրամանն է. երբ նա մի բան է կամենում, որ նրան ասէ «եղի՛ր» եւ նա լինում է:

83. Նա սուրբ է, որի ձեռքում է ամեն բանի իշխանութիւնը. եւ դուք նրա մօտ էք դարձնւելու:



37) Ս Ո Ի Ր Է Ս Ա Ֆ Յ Ա թ .

Մէքքէական. հարիւր ութսուն երկու այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգում եմ անում շարքեր շարողուհիներովը.
2. Յետոյ երգում եմ անում յանդիմանոյ թիամբ յան-
դիմանողուհիներովը.
3. Յետոյ երգում եմ անում յորդոր կարգացողու-
հիներովը.
4. Որ ձեր Աստուածը մէկ հատ է.
5. Երկնքի եւ երկրի եւ այդ երկուսի միջեւ եղած-
ների Տէրը, արեւելքների Տէրը:
6. Մենք զարդարել ենք աչխարհքիս երկինքը աստ-
ղերի զարդարանքովը.
7. Եւ իրրեւ պահապան ամեն չար սատանայից.
8. Որ չը լսեն բարձունքի մեծամեծների խօսածը,
որ դէն են գցվում ամեն կողմից.
9. Նաեւ յարատեւ պատիժ կայ նրանց համար:
10. Իսկ նա որ մի գաղտնիք է գողանում, նրան
հալածում է մի վառած ասուպ:
11. Ուրեմն հարցրո՛ւ նրանցից, թէ՛ նրա՞նք են
բնութեամբ զօրեղ, թէ՛ նրա՞նք, որ մենք ենք ստեղ-
ծել. մենք նրանց ստեղծել ենք ամուր կաւից:
12. Բայց դու զարմանում ես, եւ նրանք ծաղրում
են:
13. Եւ երբ նրանք խրատվում են, խրտտ չեն ըն-
դունում:
14. Նաեւ երբ մի նշան են տեսնում, ծաղրում են:
15. Եւ ասում են ասա իրաւ պարզ վհուկութիւն է:
16. «Մի՞թէ երբ մեռած եւ հող ու փոշի եղած կը

լինենք, մենք յարութիւն կանենք:

17. «Եւ մեր նախնի հայրեօրն էլ:

18. Դու ասա՛, «հա՛րկաւ, եւ դո՛ւք խայտառակւած»:

19. Նա միայն մէկ հատ յանդիմանութիւն է. եւ նրանք այն ժամանակ մտիկ են անելու:

20. Եւ նրանք ասելու են, «ս'հ վա՛յ մեզ, սա դատաստանի օրն է»:

21. Սա այն վճոխ օրն է, որ դուք սուտ էիք համարում:

22. Ամբարիշտներին ժողովեցէ՛ք եւ նրանց կնիկներին եւ ինչ որ պաշտում էին

23. Բայցի Աստուածանից, եւ նրանց տարէ՛ք դէպի դժոխքի ճանապարհը:

24. Եւ նրանց կանգնեցրէ՛ք որ պատասխան պիտի տան:

25. Ինչո՞ւ էք միմեանց օգնում:

26. Այո՛, որովհետեւ այսօր անձնատուր են լինում:

27. Եւ միմեանց մօտենալով հարցնում են իրարից,

28. Եւ ասում, «դուք մեզ մօտ եկաք երզումով»:

29. Նրանք էլ ասում են, «բայց դուք հաւատացեալ էիք. եւ մենք ձեր վրայ իշխանութիւն չունէինք, այլ դուք ապստամբ ժողովուրդ էիք:

30. «Հիմայ մեր Տիրոջ խօսքը մեր վրայ ճշմարտացաւ. մենք ճաշակում ենք:

31. «Նրա համար մենք ձեզ հրապուրեցինք. մենք միայն հրապուրողներ էինք»:

32. Այսպէս նրանք այն օրը պատժակիցներ են:

33. Մենք այսպէս ենք վարվում յանցաւորներին հետ:

34. Երբ նրանց ասվում է, թէ «Սլլահից դատ ուրիշ Աստուած չը կայ», հպարտանում են,

35. Եւ ասում, «մենք մեր աստուածները թողնե՞նք մի դիւահար բանաստեղծի համար»:

36. Բայց նա ճշմարտութեամբ է եկել եւ հաստատել է մարգարէներին:

37. Դուք իրաւ ցաւալի տանջանք էք ճաշակում:

38. Դուք միմիայն ձեր արածի հատուցումը կը ըստանաք:

39. Բայց ոչ թէ Ստուծոյ հաւատարիմ ծառաները.

40. Նրանց համար իմացած ապրուստ կայ:

41. Լաւ պտուղներ կ'ստանան եւ կը պատեցնեն

42. Շնորհալի արքայութեան մէջ:

43. Բարձերի վրայ դիմացէ դիմաց նստած.

44. Նրանց շրջապատում են մօքուր ազրիւրից լիքը բաժակներով

45. Ճերմակ, անուշ խմողների համար.

46. Նրանում գլխացաւ տեղ բան չըկայ. եւ նրանից չեն հարբի նրանք:

47. Եւ նրանց մօտ կան պարկեշտ աչքերով կոյսեր, որ կարծես թէ ջայլամի պահած ձուեր են:

48. Եւ նրանք միմեանց մօտենալով հարցնում են:

49. Նրանցից ասողի մէկը ասում է «ես մէկ ընկերուն էի,

50. Որ ասում էր, «դո՛ւ էլ ես հաւատացողներիցը.

51. Եթէ մենք մեռած եւ հող ու ոսկորներ դառած լինենք, մի՞թէ մենք պէտք է դատինք:

52. Ասաց, «դուք արգեօ՞ք մտիկ էք տալիս»:

52. Եւ նա մտիկ տեց. եւ տեսաւ նրան դժոխքի մէջ:

53. Եւ նա ասաց, «Ատուած վկայ է, քիչ էր մը նացել որ ինձ վար քաշէիր»:

54. «Եւ եթէ իմ Տիրոջ շնորհքը չը լինէր, ես դատապարտեալներիցը կը լինէի»:

56. Մենք այլեւս չե՞նք մեռնի.

57. Բացի մեր առաջին մեռնելուց. եւ չե՞նք պատժուի:

58. Ահա՛ սա մի մեծ երջանկութիւն է:

59. Եւ մի աշապխտի բանի համար թող գործեն գործողները:

60. Ո՞ր է լաւ իջեալն թէ Զուգզգում ծառը:

61. Մենք դրան փորձութիւն ենք չինել անիրաւունքի համար:

62. Դա մի ծառ է, որ դժոխքի խորքիցն է բուսնոււմ:
63. Նրա պտուղները սատանաների գլուխներ են:
64. Նրանք պէտք է նրանից ուտեն եւ իրանց փոքրերը նրանցով լցնեն:
65. Յետոյ նրանց եռացող ջուր կը տան խմելու:
66. Յետոյ նրանք ետ կը դառնան դէպի դժոխքը:
67. Ահա՛ նրանք հանդիպեցին իրանց մոլորած հայրերին.
68. Եւ շտապեցին նրանց հետքերովը գնալու:
69. Սակայն արդէն առաջիններից շատերը շեղեւէլ էին:
70. Իսկ մենք նրանց մէջը խրատողներ էինք ուղարկել:
71. Մտի՛կ տուր տե՛ս ինչպէս եղաւ խրատւածների վերջը
72. Բացի Աստուծոյ հաւատարիմ ծառաներից:
73. Եւ Նոյ մեզ աղօթք արաւ աղերսով. եւ մենք առատապարգեւ պատասխան տւեցինք:
74. Եւ մենք նրան եւ իր ընտանիքը ազատեցինք մեծ վտանգից:
75. Եւ նրան սերունդ տւեցինք որ մնում են:
76. Եւ թողեցինք նրա համար յաջորդների մօտ
77. «Ողազաղութի՛ւն լինի Նոյին աշխարհներու մէջ:
78. Մենք բարեգործներին այսպէս ենք վարձատրում.
79. Նա մեր հաւատացեալ ծառաներիցն էր.
80. Յետոյ մնացեալներին ընկղմեցրինք:
81. Եւ ահա՛ նրա խումբիցն է Աբրահամը.
82. Երբ նա պարզ սրտով իր Տիրոջ մօտ եկաւ,
83. Այն ժամանակ ասացիր հօրը եւ իր ժողովրդին, «սա ի՞նչ է որ պաշտում էք:
84. «Ո՛ւտ աստուածներ էք ուզում Աստուածանից զատ:
85. «Եւ ի՞նչ էք կարծում աշխարհների Տիրոջ մասին»:

86. Եւ նա մէկ նայւածքով նայեց երկնքին.
87. Եւ ասաց, «ես հիւանդ եմ»:
88. Իսկ նրանք քաշւեցին նրանից, ետ գնացին:
89. Եւ նա գաղտուկ գնաց նրանց աստուածներէ մօտ եւ ասաց, «չէ՞ք ուտում»:
90. «Ձեզ ի՞նչ կայ, որ չէք խօսում»:
91. Եւ մօտեցաւ նրանց ու աջ ձեռքովը խփեց.
92. Եւ վազելով եկան նրա մօտ:
93. Նա էլ ասաց. «դուք ձեր տաշածներին էք ծառայում:
94. «Բայց Աստուած է ձեզ ստեղծել. եւ դուք չէ՞ք իմանում»:
95. Նրանք ասացին, «դրա համար մի խարոյ՛ շիւնեցէ՛ք, եւ դրան գցեցէք կրակը»:
96. Եւ նրա համար մի խորամանկութիւն հնարեցին, բայց մենք նրանց յաղթւած շինեցինք:
97. Նա էլ ասաց, «ես գնում եմ իմ Տիրոջ մօտ. նա ինձ կ'առաջնորդէ.
98. «Ո՛վ իմ Տէր, տո՛ւր ինձ մի արդարը»:
99. Եւ մենք նրան աւետիք տւեցինք մի հեզ որդու համար:
100. Եւ երբ նա նրա հետ չափահաս եղաւ,
101. Ասաց, «ո՛վ որդեակս, ես տեսայ երազում, որ ես քեզ զոհում էի. մտի՛կ տուր թէ ինչ ես մտածում»:
102. Նա էլ ասաց, «ո՛վ հայրիկս արա՛ ինչպէս որ քեզ հրամայւած է. դու կր տեսնես, որ ես համբերող եմ»:
103. Երբ երկուսն էլ հնազանդ եղան, նա գրեց նըրան ճակատի վրայ:
104. Եւ մենք նրան կանչեցինք. «ո՛վ Աբրահամ»,
105. «Դու տեսիլքդ կատարեցիր», եւ այսպէս վարձաբում ենք բարեգործներին
106. Սա միայն մի յայտնի փորձ էք.
107. Եւ մենք նրան փոխարինեցինք մի մեծ զոհով:
108. Եւ մենք թողեցինք յաջորդների մօտ
109. Այս խօսքը. «խաղաղութիւն լինի Աբրահամին»:

110. Մենք այսպէս ենք վարձատրում բարեգործներին.
111. Ահա՛ նա մեր հաւատացեալ ծառաներից մէկն է.
112. Եւ մենք նրան աւետիք տւեցինք Իսահակի մասին որ մի մարգարէ էր արդարներիցը.
113. Եւ օրհնեցէք նրան եւ Իսահակին, եւ այդ երկուսի սերունդներիցը կան բարեգործներ եւ անիրաւուներ, որ իրանց դէմ էին յայտնապէս:
114. Եւ մենք երախտիք ցոյց տւեցինք Մովսէսին եւ Ահարոնին.
115. Եւ աղատեցինք նշանց եւ իրանց ազգը մեծ տազնապից:
116. [Եւ մենք նրանց օգնեցինք եւ նրանք յաղթողներ եղան:
117. Եւ տւեցինք նրանց յայտնի գիրքը.
118. Եւ առաջնորդեցինք նրանց ուղիղ ճանապարհով.
119. Եւ նրանց համար թոշեցինք յաջորդների մօտ
120. Այս խօսքը «խաղաղութիւն լինի Մովսէսին եւ Ահարոնին»:
121. Մենք այսպէս ենք վարձատրում բարեգործներին:
122. Որովհետեւ նրանք մեր հաւատացեալ ծառաներն էին:
123. Եւ ահա՛ էլ իսան էլ է մարգարէներիցը.
124. Երբ ասաց իր ժողովրդին, «դուք չէ՞ք վախեանում»:
125. Դուք ամենաբարի արարչին թողած՝ բահաղին էք աղօթք անում»:
126. «Որ ձեր Տէրը եւ ձեր նախնի հայրերի Տէրն է»:
127. Բայց նրանք սուտ համարեցին նրան, եւ նրանք դատապարտւեցին.
128. Բաց ի Աստուծոյ հաւատարիմ ծառաներից.
129. Եւ նրա համար թողեցինք յաջորդների մօտ
130. Այս խօսքը, խաղաղութիւն լինի էլ իսասինին»:
131. Մենք այսպէս ենք վարձատրում բարեգործներին:

132. Որովհետեւ նա մեր հաւատացեալ ծառաներիցն էր:

133. Եւ ահա՛ Ղովան էլ է մարգարէնեբրիցը:

134. Երբ նրան եւ իր ընտանիքին ազատեցինք բոլորին:

135. Բացի մէկ պառաւից որ ետ մնացողներին մէջ:

136. Յետոյ մնացեալներին բնաջինջ արեցինք:

137. Եւ դուք ցերեկը անցնում էք նրանց մօտովը

138. Եւ գիշերը, մի՞թէ չէք հասկանում:

139. Եւ ահա՛ Եուսուսը մարգարէնեբրիցն էր: Երբ նա փախաւ լիքը նախին մէջ,

141. Վիճակ գցեցին եւ նա դատապարտեց:

142. Եւ ձուկը նրան կուլ տւեց, որովհետեւ նա մեղապարտ էր:

143. Եւ եթէ նա օրհնաբանողներիցը եղած լինէր,

144. Պէտք էր փորումը մնար, մինչեւ այն օրը, որ յարութիւն կ'առնեն:

145. Եւ մենք նրան գցեցինք չոր գետնի վրայ եւ նա հիւանդ էր:

146. Եւ նրա վրայ մի ծառ բուսցրեցին տամնուց:

147. Եւ ուղարկեցինք նրան հարիւր հազարի մօտ կամ էլ առաւելի մօտ:

148. Եւ նրանք հաւատացին, եւ մենք նրանց պարագեւներ տեցինք մինչեւ մի առ ժամանակ:

149. Եւ դու հարցրո՛ւ նրանց, թէ աղջիկնե՞քն ենք ՞ Տիրոջ համար, եւ տղերքը՝ նրանցը:

150. Կամ մենք հրեշտակներին է՞գ ենք ստեղծել, եւ նրանք տեսնո՞ւմ էին:

151. Զէ՛ որ նրանք սուտ են խօսում, ասելով,

152. «Աստուած ծնել է»: Նրանք իրաւ որ ստախօսներ են:

153. Նա աղջիկներին գերադասե՞լ է տղերքից:

154. Դուք պատճառ չունէք այսպէս վճռելու:

155. Մի՞թէ դուք չէք մտածում:

156. Կամ դուք յայտնի փա՞ստ ունէք:

157. Ուրեմն բերէ՛ք ձեր գիրքը, եթէ ճշմարտախօս էք:

158. Եւ նրա ու դուերի մէջը ազգականութիւն են դնում. բայց դուերը զիտեն, որ սրանք դատապարտելի են:

159. Սուրբ է Աստուած այն բանից, որ նրան վերագրում են:

160. Բացի Աստուծոյ հաւատարիմ ծառաներից:

161. Դուք եւ ձեր պաշտածները

162. Ձէք էարող մէկին փորձել

163. Բացի նրանից որ արդէն դժոխքին է հասել:

164. Մեզնից մէկը չըկայ, որ որոշ տեղ չ'ունենայ:

165. Եւ մենք չարվում ենք.

166. Եւ մենք նրան օրհնաբանում ենք:

167. Եւ եթէ նրանք ասէին,

168. Եթէ մեզ մօտ լինէր առաջինների քարոզը,

169. Մենք Աստուծոյ զուտ ծառաները կը լինէինք:

170. Բայց նրանք չեն հաւատում նրան, սակայն յետոյ կը հասկանան:

171. Բայց մեր խօսքը արդէն առաջուց եղել է մեր ուղարկած ծառաներին.

172. Որ նրանց օգնեն:

173. Եւ սեր զօրքերը յաղթող լինեն:

174. Ուրեմն ե՛տ քաշիր նրանցից մի ժամանակ:

175. Եւ մտիկ տուր նրանց, եւ նրանք էլ մտիկ կըտան:

176. Մի՞թէ նրանք կը շտապեցնեն մեր պատիժը:

177. Եւ երբ նա նրանց հրապարակներովը գայ, այն ժամանակ խրատածների առաջտը վատ է լինելու:

178. Եւ զու ե՛տ քաշիր նրանցից մի ժամանակ:

179. Եւ մտիկ տուր եւ նրանք էլ են մտիկ տալու:

180. Սուրբ է քո Տէրը, զօրութեան Տէրը այն բանից, որ վերագրում են նրան:

181. Եւ խաղաղութիւն լինի մարդաբէններին:

182. Եւ փառքը լինի աշխարհների Տիրոջը:

38) ՍՈՒՐԷ Ս.

Մէքքէական. ութսուն ութ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ս. Յորդորոշ Ղուբանով երգում եմ անում, ... սակայն նրանք որ չեն հաւատում, գոռազութեան եւ հերձաւորների մէջ են:

2. Ո՛րքան սերունդներ ենք մենք նրանցից առաջ բնաջինջ արել, եւ նրանք ազադակեցին, բայց ազատւելու ժամանակ չըկար:

3. Եւ զարմանում են, որ իրանցից մի խրատող է եկել, եւ անհաւատներն ասում են, թէ «սա վհուկ է, ստախոս է»:

4. «Աստուածներիցը մէկ Աստուած է չինել. ահա՛ սա զտրմանալի բան է»:

5. Եւ մեծամեծները նրանցից ետ գնացին ասելով, թէ «գնացէ՛ք եւ դիմացէ՛ք ձեր աստուածների հետ՝ որովհետեւ սա է սրա ուզած բանը»:

6. «Վերջի կրօնքի ժամանակ մենք այս բանը չենք լսել, սա միմիայն նորահնար բան է»:

7. Մի՞թէ մեր միջիցը միմիայն նրա է յայտնութիւն իջեցրւել»: Այո. նրանք իմ խրատի մասին կասկածի մէջ են. բայց իմ պատիժը չեն ճաշակել:

8. Կամ նրանց մօտ է քո հզօր բարերար Տիրոջ ողորմութեան զանձեքը.

9. Կամ նրա՞նցն է երկնքի եւ երկրի եւ դրանց միջեւ եղածների իշխանութիւնը: Ուրեմն թող վեր ել՞ նեն չուաններիով:

10. Բայց այստեղ մի գունդ յաղթւած է դաշնակիցներից:

11. Նրանցրց առաջ էլ Նոյի ազգը, Աղացիք եւ յամառ Փարաւօնը սուտ համարեցին,
12. Եւ Սամուղացիք եւ Ղովտի ազգը եւ Էյքէի բընակիչները, որ դաշնակիցներ էին:
13. Ամեն մէկը միմիայն սուտ էր համարում. եւ իմ պատիժը էլ իրագործեց:
14. Եւ սրանք միմիայն մէկ աղաղակ տեսան, եւ փրկութիւն չեղաւ նրանց:
15. Եւ ասացին, «ո՛վ մեր Տէր, շուտով արա մեր վճիռը հաշիւի օրիցն առաջ»:
16. «Համբերի՛ր նրանց ասածին եւ յիշի՛ր մեր Դաւիթ ծառային, որ ուժով էր եւ զարծի եկող»:
17. Մենք հնազանդացրել ենք նրա հետ սարերը իրփկունները եւ առաւօտները, որ փառաբանեն:
18. Նաեւ թռչուններին, որոնց բոլորն էլ նրա մօտ էին հաւաքւել կտ դառնալով:
19. Եւ մենք հաստատեցինք նրա թագաւորութիւնը,
20. Դու լսե՞լ ես արդե՞օք այն երկու հակառակորդների լուրը, որոնք վիճելով պարխսպի վրայով սենեակը մտան:
21. Երբ նրանք Դաւիթի մօտը մտան, նա սարսափեց նրանցից. նրանք էլ տասցին, «մի՛ վախենա՛ր. մենք միմեանց հետ վէճ ունենք. արդ մեր մէջը դատի՛ր արդարութեամբ. անիրաււութիւն չ'անես. եւ մեզ առաջնորդիր դէպի ուղիղ ճանապարհը»:
22. «Մա՛ իմ եղբայրս իննսուն ինն ոչխար ունէ եւ ես մէկ հատ ոչխար ունեմ. եւ նա ասաց, ինձ յանձնի՛ր դրան եւ խօսքով ինձ ստիպեց:
23. Դաւիթն ասաց, «նա իրաւ քեզ անիրաւութիւն է արել. որ քո ոչխարը ուզել է իր ոչխարների վրայ. եւ իրաւ իրար հետ յարաբերութիւն ունեցողներից շատերը միմեանց խաբում են բացի նրանցից, սր հաւատում են եւ բարիք գործում. եւ սրանք քիչեր են: Եւ Դաւիթը կարծեց, որ մենք իրան փորձում ենք, եւ նե-

րողութիւն խնդրեց իր Տիրոջից եւ ծուկով խոնարհու-
թիւն արեց եւ ապաշխարեց :

24. Եւ մենք ներեցինք նրան այն բանը, եւ նա մեզ
մօտիկ է, եւ նա լաւ տեղ ունէ :

25. «Մ'ի Դաւիթ, մենք քեզ մեր տեղ...դան ենք շի-
նել երկրումը, ուրիմն արդարութեամբ դատի'ր մարդ-
կանց մէջը, եւ հաճոյքին մի' հետեւիր, որովհետեւ դա
քեզ կը մոլորեցնէ Աստուծոյ ճանապարհիցը : Եւ որոնք
որ մոլորուում են Աստուծոյ ճանապարհիցը, նրանց հա-
մար խիստ պատիժ կայ, որովհետեւ մտանում են հաշ-
ւի օրը :

26. Եւ մենք երկիրնքն ու երկիրը եւ նրանց միջեւ
եղածները պարապ չեք շինել, սա անհաւատների կար-
ծիքն է, եւ վա'յ անհաւատներին կրակի ձեռքիցը :

27. Կամ մենք նրանց, որ հաւատում եւ բարիք են գոր-
ծում, ետկրումն ապականութիւն անողների պէ՞ս ենք
արել, կամ երկիւղածներին չարագործների պէ՞ս ենք
համարում :

28. Այն դիրքը, որ մենք իջեցրել ենք, օրհնեալ է,
որ մտածեն նրա նշանների վրայ եւ խելք ունեցող-
ները թող խորհրդածեն :

29. Եւ մենք տեցինք Դաւիթին Սողոմոնը, ի'նչ
բարի ծառայ, նա զղջացող էր :

30. Երբ նրան մի երեկոյ առաջարկեցին արագըն-
թաց նժոյզները,

31. Ասաց, «իրաւ ես աւելի սիրել եմ բարիքներ
սիրելը քան թէ իմ Տիրոջս յիշելը մինչեւ որ մար մը-
տա» :

32. Նրանց հա բերէ՛ք ինձ մօտ» եւ նա սկսեց նը-
րանց ջլատել եւ վիզերը կտրել :

33. Եւ մենք փորձեցինք Սողոմոնին եւ նրա գահի
վրայ մի մարմին գցեցինք, եւ նա ապաշխարեց :

34. Եւ ասաց, «ո՛վ իմ Տէր, ների'ր ինձ, եւ ինձ
մի թագաւորութիւն տո՛ւր, որ ինձնից յետոյ ոչ մէկը
նրա նմանը չունենայ, որովհետեւ դու բարերար ես» :

35. Եւ մենք քամին հպատակ արեցինք նրան, որ, նրա հրամանովը մեղմիկ կերպով այնտեղ էր գնում, ուր որ նա կամենում էր:

36. Նաեւ սատանաները, որոնց ամեն մէկը նրա համար առւն շինողներ եւ ջրատոյզներ լինեն:

37. Եւ ուրիշներ էլ տւեցինք, որ շղթաներով կաշկանդւած էին:

38. Սա մեր պարգեւն է. ուրեմն բաշխի՛ր կամ խնայի՛ր առանց հաշիւի:

39. Եւ նա մեզ մօտիկ էր եւ լաւ բնակավայր ունէր:

40. Եւ յիշի՛ր մեր Յովք ծառային, երբ ազաչեց իր Տիրոջը, թէ «սատանան ինձ դպչել է ցաւով եւ տանջանքով»:

41. Մենք ասացինք, «արփի՛ր ոտքովդ, ահա՛ պաղլւացուելու եւ խմելու ջուրը»:

42. Եւ մենք տւեցինք նրան իր ընտանիքը եւ նրանց չափ էլ նրանց հետ միասին իբրեւ զգուշութիւն խելք ունեցողների համար:

43. Եւ ձեռքդ ճիւղտաներ ա՛ռ եւ դրանով ձեռի՛ր եւ երդմնազանց մի լինի՛ր: Մենք նրան համբերող զրտանք:

44. Ի՛նչ լաւ ծառայ. նա զղջացող էր:

45. Եւ յիշի՛ր մեր ծառաները՝ Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին, որ ոյժ եւ հասկացողութիւն ունէին:

46. Մենք նրանց մաքրեցինք մաքրութիւնով՝ հանդերձեալը յիշելով:

47. Եւ նրանք մեզ մօտ ամենալաւ ընտրեալներն են:

48. Եւ յիշի՛ր Իսմայէլին, Եղիսէին եւ Զուլֆէֆլին. ամեն միւր լաւագոյններիցն է:

49. Սա մի յիշատակ է, եւ երկիւղածների համար լաւ տեղ կայ:

50. Եղեմական գրախոսներ, դռները բաց նրանց համար:

51. Նրանց մէջ նստած շատ պտուղներ եւ գինի են ուզում:

52. Եւ նրանց մօտ կան պարկեշտ աչքերով կոյսեր իրանց հասակակից:

53. Սա է, որ ձեզ խոստացվում է հաշի օրւայ համար:

54. Սա մեր պարզեւն է, որ սպառում չ'ունէ:

55. Այս է: Իսկ ապօտամբների տեղը վատ է

56. Դժոխքը. նրանում կ'այրւին. ի՛նչ վատ վայր:

57. Այսպէս է: Նրանց ճաշակը եռացող ջուր եւ աղ-բահիթ է.

58. Իւ էլ ուրիշ այդ տեսակ բաներ.

59. Սա մի խումբ է, որ ձեզ հետ միասին դժոխքի մէջ են շարուելու. բարեւ չը կայ նրանց համար. ոքովհետեւ այրուելու են կրակով:

60. Ասելու են նրանց. «ո՛չ բարեւ ձեզ. սա դուք շինեցիք մեզ համար. եւ ի՛նչ վատ հանգստեան տեղ է»:

61. Նրանք ասելու են, «ո՛վ մեր Տէր, ո՞վ պատ-րաստեց սա մեզ համար, դու էլ նրան կրկնակի պատիժ աւելցրո՛ւ կրակի մէջ»:

62. Եւ ասելու են, «ինչո՞ւ չենք տեսնում այն մարդկանց, որոնց մենք չարեր էինք համարում.

63. «Եւ նրանց ծաղր էինք անում- կամ մեր աչքերը ծուե՞լ են նրանցից»:

64. Եւ դժոխքի մարդիկն իրաւ այսպէս կուում են միմեանց հետ:

65. Դու ասա՛, «ես սոսկ մի խրատող եմ. մէկ հատ հղօր Աստուածանից զատ ուրիշ աստուած չը կայ.

66. «Որ երկնքի եւ երկրի եւ նրանց մէջը եղած-ների Տէրն է, զօրաւորը ներողամիտը»:

67. Դու ասա՛, «սա մի մեծ լուր է.

68. «Դուք նրանց մերժում էք.

69. «Ես այն բարձր մեծամեծներից տեղեկութիւն չ'ունէի, երբ իրար հետ կուռւմ էին».

70. «Ինձ միայն սա է յայտնւած, որ ես սոսկ մի պարզ խրատիչ եմ»:

71. Երբ քո Տէրն ասաց հրեշտակներին, «ես կաւից մարդ եմ ստեղծւմ».

72. «Նրան էլ երբ կազմեմ եւ նրա մէջը փչեմ իմ հոգուցը, այն ժամանակ խոնարհեցէ՛ք նրա առաջին երկրպագելով»:

73. Հրեշտակներն ամենն էլ միասին երկրպագեցին.

74. Բացի սատանայից, որ զոռոզացաւ եւ անհաւատ եղաւ:

75. Նա ասաց, «ո՛վ սատանայ, քեզ ի՞նչ արգիլեց, որ իմ ձեռներովս ստեղծածիս չ'երկրպագեցիր».

76. «Գոռոզացա՞ր կամ բարձրների՞ցն ես»:

77. Նա էլ ասաց, «ես նրանից լաւ եմ. դու ինձ ստեղծել ես կրակից, բայց դրան ստեղծել ես կաւից»:

78. Եւ նա ասաց, «դո՛ւքս եկ այստեղից. դո՛ւ քարկոծւածդ».

79. «Ահա՛ քեզ վրայ էլ լինի իմ անէծքը մինչեւ դատաստանի օրը»:

80. Եւ նա ասաց, «ահա՛ դու պայմանաժամ ունես».

82. «Խինչեւ յայտնի ժամանակւայ օրը»:

83. Նա էլ ասաց, «քո փառքովը երդում եմ անում, որ նրանց ամենին էլ մոլորեցնելու եմ»:

84. Բացի նրանցից հողդ քո մաքսար ծառաներից»:

85. Եւ նա ասաց, «ճշմարիտը ճշմարիտը ասում եմ, որ ես զժոխքը անպատճառ լեցնելու եմ քեզնով եւ բոլոր նրանցով որ քեզ հետեւում են նրանցից»:

86. Ասա՛, «ես ձեզնից դրա համար վարձ չեմ ուղում. եւ ես պահանջող չեմ»:

87. «Սա միայն մի յիշեցուցիչ է աշխարհքների համար».

88. Դուք էլ մի ժամանակից յետոյ նրա ասածները իմանալու էք»:

39) ՍՈՒՐԷ՛ ԶԱՄՐ

Մէքքէական. Եօթանասուն հինգ այէ:

Գլթած սղորմած Աստուծոյ անունովը:

1. Գրքի իջումը հզօր իմաստուն Աստուածանից:
2. Մենք գիրքը իջեցրել ենք քեզ համար ճշմարտութիւնով. արդ դու Աստուծուն ծառայի՛ր մաքուր կրօնքով:
3. Չէ՞ որ Աստուծուն վայելում է մաքուր կրօնք:
4. Նրանք էլ որ բացի Աստուածանից ուրիշ պաշտպանների են հաւատում, ասելով, «մենք միայն նրա համար ենք նրանց պաշտում, որ մեզ մօտիկ բերեն Աստուծոյ»: սակուած նրանց մէջը դատելու է այն քանի համար, որ վիճում են:
5. Իրաւ Աստուած չի առաջնորդի նրան, որ ստախօս ազերախտ է:
6. Եթէ Աստուած կամենար զաւակ ունենալ, իր քստեղծած իցը ուղածին կ'ընարէր: Սուրբ լինի նա. նա մէկ հատ հզօր Աստուած է:
7. Նա ստեղծել է երկինքը եւ երկիրը ճշմարտութեամբ. նա զլորում է գիշերը ցերեկւայ վրայ եւ զլորում է ցերեկը գիշերւայ վրայ. եւ նա հնազանդեցրել է արեգակը եւ լուսինը. ամենը գնում է իր որոշ ժամանակովը. չէ՞ որ նա է հզօրը՝ ներողը:
8. Նա ձեզ մէկ հատ անձից է ստեղծել, յետոյ նա նրանից շինեց նրա կիներ, եւ նա իջեցրել է ութը զոյգ անասուններ: Նա ձեզ ստեղծում է ձեր մայրերի արգանդներումը իրար հետեւից երեք խաւարներում ըստեղծելով: Սա ձեր Տէր Աստուածն է. նրանն է թագաւորութիւնը. նրանից բաց ուրիշ Աստուած չըկայ: Ուրեմն ինչպէ՞ս էք նրանից հա քաշում:

9. Եթէ դուք պակերախտ լինէք, Աստուած ձեզ կարօտ չէ, եւ իբր ծառաներից պակերախտութեանը չի հաւանի: Եթէ չնորձակալ լինէք, նա ձեզ կը հածէ. եւ մի բեռնաւորուած իբրեւ բեռ վեր չի առնի ուրիշի բեռը, յետոյ ձեր Տիրոջն էք դառնալու, եւ նա ձեզ կիմացնէ. թէ դուք ինչ էիք անում:

10. Ահա՛ նա գիտէ, թէ սրտերունն ինչ կայ:

11. Եւ եթէ մարդուս մի մնաս է պատահում, նրան դառնալով ազօթք է անում. բայց երբ նա ցոյց է պալիւ նրան իբր ողորմութիւնը, մտանում է առաջուց նրան մատուցրած ազօթքը եւ Աստուծուն պատկերներ է շինում, որ մոլորեցնէ նրա ճանապարհիցը: Ասա՛, «մի քիչ վայելի՛ք քո անհաւատութիւնովը, բայց զուգրակի բնակիչներէն»:

12. Կամ նա, որ դիշերուայ մէջ ծնրադրած կամ կահնդնած պաշտում է Աստուծուն եւ ուշադիր է միւս աշխարհքին եւ սպասում է իբր Տիրոջ ողորմութեանը, սաս՛ նրանք որ գիտեն, մի՞թէ հաւասար են նրանց որ չը գիտեն»: Միայն խելացիները կը մտածեն:

13. Դու սաս՛, «ո՛վ իմ ծառաներ, որ հաւատարիմ էք եւ վախենում էք ձեր Տիրոջից, այս աշխարհքում բարիք դրձեցէ՛ք», եւ Աստուծոյ երկիրը ընդարձակ է. անչուշա նա վարձատրելու է համբերողներին առանց հաշիւ առնելու:

14. Դու սաս՛, «ինձ պատիրւած է որ ջերմեռանդութեամբ ծառայեմ Աստուծուն, եւ ինձ պատիրւած է որ առաջին միւսիմը լինեմ»:

15. Դու սաս՛, «ես եթէ իմ Տիրոջ անհնազանդ լինում վախենում եմ մի մեծ օգուտ պատիժից»:

16. Դու սաս՛, «ես ջերմեռանդ կրօնքով պաշտում եմ Աստուծան»:

17. «Դուք պաշտեցէ՛ք նրանից ջոկ սրին ուղում էք»: Ասա՛, Քնաւածները նրանք են, որ իրանց անձերին եւ իրանց ընտանիքներին Քնաս հասցրած կը լինեն յարութեան օրը: Ահա՛ սա է յայտնի Քնասը:

18. Նրանց համար մի կրակի ծածկոց կայ իրանց վերելի կողմիցը եւ տակիցն էլ մի ծածկոց: Այսպէս է. Աստուած վախեցնում է իր ծառաներին. «ո՛վ իմ ծառաներ, վախեցէ՛ք ինձնից»:

19. Իսկ նրանք, որ զգուշանում են կուռքերիցը, որ չը ծառայեն նրանց, եւ դառնում են դէպի Աստուած. նրանցն է աւետիքը: Արդ աւետիք տուր իմ ծառաներին, որ խօսքը լսում են, որոնց Աստուած առաջնորդել է, եւ նրանք են խելացիները»:

20. Արդ կարո՞ղ ես դու նրան, որի վրայ կատարուել է պատիժի վճիռը, կրակիցն ազատել:

21. Իսկ նրանք որ վախենում են իրանց Տիրոջից, նրանց համար վերնատուններ կան վերելի կողմում, շինած վերնատուններ, որոնց տակովը գետեր են հոսում: Աստուծոյ խոստումը: Աստուած իր խօսքը չի փոխի:

22. Ձե՞ս տեսնում, Աստուած երկնքիցը ջուր է իջեցրնում եւ նրան ուղղում է իբրև աղբիւրներ երկրում. յետոյ նրանով բուսցնում է ցանքսեր այլ եւ այլ գոյներով. յետոյ թառամում է, եւ դու դեզնած ես տեսնում նրան. յետոյ նրան փոշի է շինում: Ահա՛ սրանում յիշեցուցիչ բան կայ խելացիների համար:

23. Արդ որի սիրտը, որ Աստուած բաց է արել իսլամի դէմ, նա լոյսի վրայ է իր Տիրոջ կողմանէ. բայց վա՛յ նրանց, որոնց սրտերը պինդ է Աստուծուն յիշելու համար. նրանք յայտնի մոլորութեան մէջ են:

24. Աստուած իջեցրել է ամենալաւ պատմութիւնը, մի գիրք, մի նմանութիւն մի երկրորդի. նրա լսելուց փշաքաղում են նրանց մորթերը, որոնք վախենում են իրանց Տիրոջից. յետոյ կակղում են իրանց մորթերը եւ նրանց սրտերը՝ Աստուծուն յիշելիս: Սա Աստուծոյ առաջնորդութիւնն է: Նա իր ուզածին առաջնորդուլ է, բայց որին Աստուած մոլորեցնում է, նրա համար առաջնորդ չի լինի:

25. Ուրեմն ո՞վ կարող է յարութեան օրը իր երե-

սովը դիմանալ տաժանելի պատիժին, երբ կասեն ամբարիչտներին, «ճաշակեցէ՛ք ձեր վաստակածը»:

26. Նրանցից առջ կղոզները սուտ էին համարում, եւ նրանց վրայ եկաւ պատիժը այնտեղից, որ չը գիտէին:

27. Աստուած էլ արդէն այս աշխարհքի կեանքում ճաշակել տւեց նրանց խայտառակութիւնը. բայց միւս աշխարհքի պատիժը աւելի մեկ է հիթէ գիտենային:

28. Մենք այս Ղուրանի մէջ արդէն ամեն տեսակ տուակ ասել ենք, որ մտածեն:

29. Նաեւ արաբերէն Ղուրանը առանց ծոռութեան է, որ վախենան:

30. Աստուած մի առակ է ասում, մի մարդ, որ միւմեանց հետ կռիւ անող ընկերներ ունի, եւ մի ուրիշ մարդ, որ մէկ մարդու է գործը յանձնել. արդիօ՞ք սըրանք իրար հաւասար են նմանութեամբ: Փա՛ռք Աստուծոյ: Բայց նրանցից շատերը չը գիտեն:

31. Դու մեռած ես, եւ նրանք էլ են մեռած:

32. Յետոյ դուք յարութեան օրը ձեր Տիրոջ մօտ վիճելու էք:

33. Ո՞վ է աւելի անիրաւ քան թէ նա, որ Աստուծոյ դէմ սուտ է հնարում եւ սուտ է համարում այն ճշմարտութիւնը, որ իրան հասել է: Չէ՞ որ դժոխքումն է անհաւատների տեղը:

34. Նա էլ, որ բերել է ճշմարտութիւնը, եւ նա, որ հաստատում է նրան, — նրանք են կրկիւղածները:

35. Նրանք ունենալու են իրանց Տիրոջ մօտ այն, ինչ ուզում էին. սա բարեգործների վարձքն է.

36. Որ Աստուած քաւէ նրանցից իրանց արած շարութիւնները եւ հատուցանէ նրանց վարձքը գեղեցիկ կերպով իրանց արածների համար:

37. Մի՞թէ Աստուած բուսական չէ իր ծառային. եւ նրանք քեզ վախեցնում են ուրիշներով բացի նրանից: Բայց որին Աստուած մոլորեցնում է, նա այլեւս առաջնորդ չ'ունէ:

38. Եւ որին Աստուած առաջնորդում է, նա այլևս մոլորեցնող չունենայ, չէ՞ որ Աստուած հզօր վրէժխընդէր է:

39. Իսկ եթէ դու նրանց հարցնես, թէ ո՞վ է ստեղծել երկինքն ու երկիրը. անշուշտ կ'ասեն, «Աստուած»: Դու ասա՛, «ապա մտածո՞ւմ էք, թէ դուք բացի նրանից ում էք աղօթք անում»: Եթէ Աստուած ինձ մի մնաս ուզէ, արդե՞օք այդ իզականները կարող են այդ մնասը հեռացնել: Կամ եթէ նա ինձ մի ողորմութիւն ուզէ, արդե՞օք այդ իզականները կարող են նրա ողորմութիւնը արգիլել: Դու ասա՛, «Աստուած բաւ է ինձ. ապաւինողները նրան են ապաւինում»:

40. Դու ասա՛, «ո՞վ իմ ժողովուրդ, դուք գործեցէք ձեր տեղերը, ես էլ եմ գործում. եւ դուք չուտով կը տեսնէք»:

41. Թէ որին է մի նուաստացնող պատիժ պատահելու, այնպիսի պատիժ որ միշտ կը տեւէ»:

42. Մենք քեզ իջնցրեցինք գիրքը մարդկանց համար ճշմարտութիւնով. արդ ով կ'առաջնորդէ իր հօգուն համար է, եւ ով կը մոլորուի՛ նա միմիայն իր հօգու գէ՛մ է մոլորում. ուրեմն դու նրանց տեղ պատասխանատու չես:

43. Աստուած մեռցնում է մարդու նրա մեռնելու ժամանակին, եւ նա որ չէ մեռնում իր քունի մէջ, թողնում է նրան, որի մահը նա վճռել է, եւ մի ուրիշն է ուղարկում որոշեալ պայմանաժամին: Ահա՛ սրանում նշաններ կան խորհող մարդկանց համար:

44. Կամ մի՞թէ բացի Աստուածանից բարեխօսներ են ընդունում. ասա՛, «ապա եթէ չը կարողանա՞ն մի բան անել», եւ նրանք չեն հասկանում:

45. Դու ասա՛, «բարեխօսութիւնը բոլորը Աստուծունն է, նրանն է երկնքի եւ երկրի թագաւորութիւնը. յետոյ դուք նրա մօտ էք դարձնելու»:

46. Եւ երբ Աստուծոյ մէկ յիշողութիւնն է լինում, սարսափում են այն մարդկանց սրտերը, որ միւս աշ-

խարհքին չեն հաւատում. բայց երբ բացի նրանից ուրիշներն են յիշում, այն ժամանակ նրանք զարձանում են:

47. Դու ասա՛, «՛վ Աստուած, երկնքս եւ երկրի արարիչ, գաղանիքներն ու յայտնիքները գիտացող, դու գտեալու ես քո ծառաների մէջ այն բանը, որի մասին նրանք վիճարանում են միմեանց հետ:

48. Եւ եթէ երկրումս եղածների բոլորը եւ նրա հետ միասին էլ նոյնչափը ունենային ամբարիշտները, նրանք կը ջանային յարութեան օրոյս պատիժի չարիքիցը նրանցով փրկուելու. բայց Աստուծոյ կողմանէ նրանց այնպիսի բաներ է ցոյց տուելու, սը նրանք մտքով չէին անց կացրել:

49. Նրանց էլ կերեւան իրանց արած չարագործութիւնները եւ կը կատարուի նրանց վրայ այն, որ ծաղրում էին:

50. Եթէ մարդուս մի վնաս է հանդիպում, նա ազատ է մեզ. բայց երբ մենք նրան ցոյց տեսնինք մեր շնորհքը, նա ասում է, «ես գիտութեան պատճառով եմ ստացել այս». Սակայն սա փորձել էր. Բայց նրանցից շատերը չեն հասկանում:

51. Նրանցից առաջ եղողներն էլ ասացին այդ բանը. Բայց իրանց աշխատանքը մի օգուտ չը բերեց իրանց:

52. Իսկ նրանց զպչեց իրանց արարքի պատիժը. եւ այս մարդկանցից նրանք որ ամբարիշտներ են, նրանց էլ անպատճառ դպչելու է իրանց արժանի պատիժը. եւ նրանք չեն կարող նրան տկարացնել:

53. Որքով է նրանք չը գիտեն, որ Աստուած իր ուզածին պարգևում է աստապէս կամ քիչ է տալիս. ահա՛ սքանում նշաններ կան հաւատացեալ մարդկանց համար:

54. Դու ասա՛, ով իմ այն ծառաներ, որ իրանց ուղիներէ դէմ շայլութիւն են անում, Աստուծոյ ուղորմութիւնիցը մի՛ յուսահատիք. որովհետեւ Աստուած ներում է բոլոր մեղքերը. եւ ներող ողորմած է:

55. «Դարձէ՛ք ձեր Տիրոջը եւ նրան անձնատուր եղէ՛ք յառաջ քան թէ պատիժը ձեզ կը հասնէ. յետոյ դուք օգնութիւն չէք ունենայ:

56. «Նաեւ լաւին հետեւեցէ՛ք, որ առաջուց ձեր Տիրոջ կողմանէ ձեզ համար իջեցրել է, որ պատիժը յանկարծակի ձեզ վրայ կը գայ, եւ դուք չը գիտէիք»:

57. «Որ այն ժամանակ մի հոգի կ'ասէ, «ո՛հ, արտա՛ստ ինձ, որ ես Աստուծոյ վերաբերմամբ զանցառութիւններ եմ արել, եւ որ ես ծաղրածու էի»:

58. Կամ կ'ասէ, «եթէ ինձ Աստուած առաջնորդած լինէր, ես երկիր զածներիցը կը լինէի»:

59. Կամ կ'ասէ, երբ պատիժը տեսնէ, «եթէ ես մի անգամ էլ ունենայի պատեհութիւն, ես բարեգործ կը լինէի»:

60. Ոչ. արդէն ամեն նշաններս եկան քեզ, բայց դու նրանց սուտ հանեցիր, եւ գոռոզացար եւ անհաւատ եղար:

61. Յարութեան օրն էլ դու նրանց երեսները սեւացած կը տեսնես, որ Աստուծոյ դէմ սուտ են խօսել. մի՞թէ ամբարտաւանների բնակատեղին դժոխքումը չէ:

62. Աստուած նրանց է ազատելոն, որ վախում են զգուշութեամբ. նրանց մի պատիժ չի դիպչի. եւ նըրանք չեն տրտմի:

63. Աստուած ամեն բանի Արարիչն է, եւ նա ամեն բանի տեսուչն է. երկնքի եւ երկրի բանալիքները նրա մօտ են. իսկ նրանք, որ Աստուծոյ նշաններին չեն հաւատում, նրանք վնասածներն են:

64. Դու ասա՛, «դուք ինձ հրամայում էք, որ Աստուածանից զատ ուրիշ բաներ պաշտեմ, ո՛վ տխմարներ»:

65. Բայց արդէն քեզ եւ քեզնից առաջ եղողներին յայտնութիւն է եղել, որ եթէ աստուածը նկերներ պաշտես, քո գործը կը փճանայ, եւ դու անպատճառ թշւառ կը լինես:

66. Բայց դու Աստուծուն պաշտի՛ր եւ երախտագէտ եղի՛ր:

67. Նրանք Աստուծոյ արժէքը չը գիտեն ըստ արժանոյն, որ բոլոր երկիրը յարութեան օրը նրա մի բունն է եւ նա երկինքը կը փաթաթէ իր աջ ձեռքովը. նա սուրբ եւ բարձր է ձեր շինած աստուածընկերներից:

68. Եւ փոխը փչելու է, եւ սոսկալու են նրանք, որ երկնքումն են եւ նրանք որ երկրի վրայ են բացի նրանցից, որ Աստուած կը կամենայ. յետոյ նա երկրորդ անգամ կը փչւի, եւ այն ժամանակ նրանք կը կանգնեն մտիկ կը տան:

69. Երկիրն էլ կը լուսաւորւի իր Տիրոջ լոյսովը, եւ գիրքը կը տուի եւ կը գան մարգարէներն ու վկաները եւ նրանց մէջը դատաստան կը լինի եւ անիրաւութիւն չի լինի նրանց:

70. Նաեւ ամեն մի հոգու կը տուի իր գործածի փոխարէնը. եւ նա աւելի լաւ գիտէ, թէ ինչ են արել:

71. Իսկ անհաւատները շարք շարք կը քշեն դէպի դժոխքը. եւ երբ այնտեղ կը հասնեն, կը բացուեն դռները եւ պահապանները կ'ասեն նրանց, «ձեզնից մարգարէներ չ'եկա՞ն ձեզ մօտ. որոնք կարգում էին ձեզ համար ձեր Տիրոջ խօսքերը եւ ձեզ խրատում էին, որ դուք այս օրան պիտի հանդիպէք»: Նրանք էլ կ'ասեն, «այո՛, բայց ճշմարտացաւ պատիժի խօսքը անհաւատների դէմ»:

72. Կ'աւելի, «մտէ՛ք դժոխքի դռներովը, նրանում միշտ պիտի մնաք»: Ի՛նչ վատ է հպարտների տեղը:

73. Նրանք էլ որ վախում էին իրանց Տիրոջից կը քաշեն շարք շարք դէպի դրախտը մինչեւ որ այնտեղ կը հասնեն, եւ նրա դռները կը բացուեն եւ նրա պահապանները կ'ասեն նրանց, «խաղաղութի՛ւն ձեզ դուք բարի էիք. արդ մտէք այստեղ միշտ կը մնաք նրա մէջ»:

74. Բայց նրանք կ'ասեն, «փառք լինի՛ Աստուծուն, որ իր խօսքը մեզ համար ճշմարտացրեց եւ երկիրը

մնդ ժառանգութիւն տեց որ դրախտունն, ուր ուզենք, բնակենք: Եւ ի՛նչ փառաւոր է գործողների վարձքը»:

75. Իսկ դու կը տեսնես, որ հրեշտակները շրջապատել են զահը, փառարանում են իրանց Տիրոջ օրհնութիւնովը, եւ նրանց մէջ դատաստան է լինում արգարութիւնով, եւ պսում, «փառքը լինի՛ աշխարհքների Տէր Աստուծուն»:



40) Ս Ո Ւ Ր Է ԷԼՄԷՕՄԻՒՆ

Մէքքէական. ութսուն հինգ այէ:

Գթած ոգորմած Աստուծոյ անունովը:

1. Հ. Մ. Փրքի իջումը հօօր իմաստուն Աստուածանից:

2. Որ մեղքներով, զզջում բնդունող եւ խիստ պատածող է:

3. Երկայնամիտ է. նրանից բաց ուրիշ Աստուած չըկայ. եւ դասնալը դէպի նրա մօտ է.

4. Աստուծոյ նշանների մասին միայն անհաւատներն են վիճաբանում. նրանց երկրի մէջ շրջապատութիւնը թող քեզ չը շարացնէ

5. Նրանցից առաջ սուտ էր համարում Նոյի մողոս վուրդը եւ նրանցից յետոյ գաշնակիցները. եւ ամեն մի ազգ ջանք էր գործ գնում իր մարգարէի դէմ, որ նրան բռնէ պատժէ, եւ ունայնարանօրէն վիճում էին որ դրանով ճշմարտութիւնը փճացնեն. բայց պատիժը նրանց բռնեց, եւ ի՛նչպիսի պատուհաս էր:

6. Այսպէս էլ ճշմարտացաւ քո Տիրոջ խօսքը անհաւատների մասին, որոնք կրակի ընկերներ են:

7. Նրանք, որ կրում են աթոռը եւ նրա շուրջը եղողները օրհնում են իրանց Տիրոջ փառաբանութեամբը եւ հաւատում են նրան եւ մեղաց թողութիւն են խնդրում հաւատացեալների համար ասելով՝ «դու բովանդակում ես ամեն բան ողորմութիւնով եւ գիտութիւնով, արդ ների՛ր նրանց, որ զղջում են եւ հետեւում են քո ճանապարհից. պահի՛ր նրանց հնոցի տանջանքիցը»:

8. «Ով մեր Տէր, եւ նրանց մացրո՛ւ եղեմական դրախտների մէջ, որ դու խոստացել ես նրանց եւ իրանց հայրերիցն ու կնիկներիցն ու սերունդներիցը այնպիսիներին, որ բարիք են գործում, որովհետեւ դու ես հզօրը՝ իմաստունը»:

9. Պահպանի՛ր նրանց չարիքներից. եւ ու՛մ դու այնօրը չարիքներից պահպանես, նրան արել ես քո ողորմութիւնը. եւ սա այն մեծ երջանկութիւնն է:

10. Նրանք կանչում են անհաւատներին. «Աստուծոյ ատելութիւնը աւելի մեծ է քան թէ ձեր ատելութիւնը որով դուք ատում էիք միմեանց. դուք հաւատքի հրաւիրած ժամանակ, ուրացաք»:

11. Նրան կ'ասեն, «ո՛վ մեր Տէր, դու մեզ երկուանդամ ես մեռցրել եւ երկու անգամ կենդանացրել եւ արդ մենք խոստովանում ենք մեր մեղքերը. արդեօ՞ք դուրս գալու ճանապարհ կայ»:

12. Սա նրա համար է լինում ձեզ. որ երբ դուք հրաւիրեցիք դէպի միակ Աստուծուն, ուրացաք, բայց երբ նրան աստուածընկերներ շինեցին, դուք հաւատացիք. սակայն վճիռը բարձր մեծ Աստուծունն է:

13. Նա է, որ ձեզ ցոյց է տալիս իր նշանները եւ իջնցնում է ձեզ համար երկնքիցը ասրուստը եւ միմիայն զղջացողն է մտածում այս բանը:

14. Ուրեմն ջերմեռանդ կրօնքով կանչեցէ՛ք Աստուծուն, թէ եւ անհաճելի լինի անհաւատներին:

15. Նրա աստիճանները բարձր են զահի տէր է, իր հրամանովը տալիս է իր հոգին, իր ծառաներից ում որ ուզում է, որ զգուշացնէ հանդիպման օրւայ մասին:

16. Նոյն օրւայ մասին, որ դուրս կը գան զերեզմաններից. նրանցից մի բան ծածուկ չի մնայ Աստուծոյ համար, որ այն օրւայ իշխանութիւնը այն մէկ հզօր Աստուծունն է:

17. Ամեն մի հոգի ստանում է այսօր իր արարքի վարձքը, այսօր անիրաւութիւն չը կայ, որովհետեւ Աստուած շուտով հաշիւ տեսնող է.

18. Եւ զգուշացրո՛ւ նրանց դատաստանի օրւայ մասին, երբ սրտերը կոկորդին կը հասնեն ու կը խեղդուին:

19. Մի բարեկամ չեն ունենայ ամբարիշտները, եւ ոչ մի բարեխօս, որ ընդունի:

20. Նա գիտէ խարդախ աչքերը եւ թէ ինչ են թագցընում սրտերը:

21. Աստուած էլ կը դատէ արդարութեամբ, իսկ նըրանք, որոնց կանչում էին բացի Աստուածանից, մի բան չեն դատի, որովհետեւ լսողը տեսնողը Աստուած է:

22. Մի՞թէ նրանք ման չեն գալիս երկրումը եւ տեսնում, թէ ինչպէս եղաւ նրանցից առաջ հղօղների վախճանը, որոնք սրանցից աւելի զօրաւոր էին ուժով եւ երկրումս թողած հետքերով. եւ Աստուած նրանց վերտոնց իրանց մեղքերի պատճառով, եւ նրանք մի պաշտպան չունէին Աստուծոյ դէմ:

23. Նրա համար, որ նրանց մարգարէները հրաչքներով եկան իրանց մօտ. իսկ նրանք չը հաւատացին, եւ Աստուած էլ պատժեց նրանց. որովհետեւ նա զօրաւոր եւ խիստ պատժող է:

25. Մենք էլ ուղարկեցինք Մովսէսին մեր հրաչքներովը եւ յայանի իշխանութիւնով

25. Փարաօնի եւ Համանի եւ Կարունի մօտ. իսկ նրանք ասում էին, «վհուկ է, ստախօս է»:

26. Բայց երբ նա ճշմարտութիւնով եկաւ մեր կողմ

մից, ասացին. «սպանեցէ՛ք հաւատացողների որդիներին նրա հետ միասին, եւ նրանց էզեբին պահեցէ՛ք կենդանի. սակայն անհաւատների նենգութիւնը սխալուեց»:

27. Եւ ասաց Փարաւօնը, «թողէ՛ք ես սպանեմ Մովսէսին, յետոյ նա իր Տիրոջը կանչէ. ես վախենում եմ որ նա փոխէ ձեր կրօնքը, կամ երկրումը մի խռովութիւն հանէ»:

28. Մովսէս էլ ասաց, «ես ամեն մի ամբարտաւանից, որ դատաստանի օրւայ չեն հաւատում, իմ Տիրոջս եւ ձեր Տիրոջն եմ ապաւինում»:

29. Փարաւօնի մերձաորներից էլ մի հաւատարիմ մարդ, որ իր հաւատքը թաղցնում էր, ասաց, «գուք մի՛թէ կ'սպանէք այնպիսի մարդ. որ ասում է իմ Տէրն Աստուածն է, եւ նա արդէն սպացոյցներով է եկել ձեզ մօտ ձեր Տիրոջ կողմանէ. եւ եթէ նա ստախօս է, նրա ստախօսութիւնը իրա՛ն դէմ. եւ եթէ նա ճշմարիտ է, նրա սպառնալիքներից մի քանիսը ձեզ կը դպչէ. որովհետեւ Աստուած ապիբատ ստախօս մարդուն չի առաջնորդի»:

30. «Ո՛վ իմ ժողովուրդ, այսօր իշխանութիւնը այս երկրում յայտնապէս ձերն է. եւ մեզ ո՛վ կարող է օգնել Աստուծոյ պատուհասի դէմ, եթէ նա մեզ դպչէ»:

Փարաւօն ասաց, «ես ձեզ միայն իմ միտքն եմ առաջարկում, եւ ես ձեզ միմիայն ուղիղ ճանապարհով եմ առաջնորդում»:

31. Նա էլ որ հաւատում էր ասաց, «ես ձեր մասին այնպիսի երկիւղ ունեմ ինչպէս դաշնակից իււմբերի օրը»:

32. «Նոյի ժողովրդի, Ազացոց եւ Սամուգացոց սովորութեան պէս»:

33. «Նաեւ նրանց պէս, որ նրանցից յետոյ էին. եւ Աստուած անիրաւութիւն չէ ուզում իր ծառաներին»:

34. «Եւ ո՛վ իմ ժողովուրդ, ես վախենում եմ ձեզ համար այն դոռում գոչումի օրից»:

35. Նոյն օրիցը, որ ետ ետ կը քաշէք, որ ձեզ Աստուծոյ ձեռքիցը մի ազատող չի լինի, որովհետեւ Աստուած որին որ մոլորեցնէ, նա առաջնորդող չի ունենայ»:

36. Մրանից առաջ Յովսէփ եկաւ ձեզ մօտ ապացոյցներով, բայց դուք չը դադարեցիք կասկածելու այն բանի մասին, որով նա եկել էր ձեզ մօտ, նոյնիսկ երբ նա մեռաւ. ասացիք, «նրանից յետոյ Աստուած այլեւս բնաւ մի մարդարէ չի ուղարկի». ահա՛ Աստուած այսպէս է մոլորեցնում ամեն մի ապիրատ երկմտողին:

37. Նրանք որ Աստուծոյ նշանների դէմ են վիճում առանց իրաւունքի, որ նա աւած լինի նրանց, նրանք շատ ատելի են Աստուծոյ առաջն եւ հաւատացեալներին առաջն: Աստուած այսպէս կնիք է դնում ամեն գոտող բռնացող սրտի վրայ:

38. Փարաւօն էլ ասաց, «ո՛վ Համան, ինձ համար մի պալատ շինի՛ր, որ ես գուցէ վեր ելնեմ չւանեկերով»:

39. «Ուրեմն երկնքի չւանեկերով, եւ անեմ Մովսէսի Աստուծուն. որոհեմեւ ես նրան ստախօս եմ կարծում»:

40. Եւ այսպէս պտորաստեց Փարաւօնի համազ նըրա շար արարքը, եւ նա կտրեց իմ ճանապարհիցը. եւ Փարաւօնի նենգութիւնը միայն կորստեան համար էր:

41. Նա էլ որ հաւատում էր, ասաց, «ո՛վ իմ ժողո՛ւղուրդ, դուք ինձ հեռեւեցէ՛ք, ես ձեզ ուղիղ ճանապարհով կ'առաջնորդեմ»:

42. «Ո՛վ իմ ժողովուրդ, այս աշխարհքի կեանքը մի անցաւոր վայելմունք է. բայց միւս աշխարհքը մշտընջենական տունն է»:

43. «Ով չարութիւն կ'անէ, նա այն նրա հատուցումը կը ստանայ. եւ ով բարիք կը գործէ, թէ՛ արուլինի թէ՛ էդ, նա հաւատացեալ է. նրանք կը մտնեն դրախտը, եւ նրանում կը վայելեն առանց հաշի»:

44. «Ո՛վ իմ ժողովուրդ, սա ի՞նչ է որ ես ձեզ հրա-
ւիրում եմ դէպի փրկութիւնը, եւ դուք ինձ հրաւի-
րում էք դէպի կրակը»:

45. «Ինձ կանչում էք, որ ես ուրանամ Աստուծուն
եւ նրան ընկերներ շինեմ այնպիսի բաներ, որոնց մա-
սին ես գիտութիւն չունեմ. իսկ ես ձեզ կանչում եմ դո-
րաւորին եւ ներողին մօտը»:

46. Դուք անտարակոյս ինձ միմիայն նրա մօտ էք
կանչում, որ նրան աղօթել չի լինի ոչ այս ոչ այն
աշխարհքում, եւ ահա՛ մեր կտ դառնալը դէպի Աստու-
ծուն է, եւ ապիբատները կրակի ընկերներն են:

47. Դուք յետոյ յիշելու էք, ինչ ես ձեզ ասում եմ.
Բայց ես իմ բանս յանձնում եմ Աստուծուն, որովհե-
տեւ Աստուած տեսնում է իր ծառաներին»:

48. Աստուած էլ նրան պահպանեց նրանց չար նեն-
գութիւնիցը եւ չըջապատեց Փարաօնի մարդկանցը
տաժանելի տանջանքով:

49. Նրանք առաւօտները եւ իրիկունները կը գցեն
կրակի մէջ, եւ այն օրը, որ կըզայ վերջին ժամը Փա-
րաօնի մարդիկը խիտ տանջանքի մէջ կը մտնեն:

50. Եւ այն ժամանակ վիճելու են կրակումը եւ տը-
կաքներն ասելու են ամբարտաւան եղածներին, «մենք
ձեզ էինք հետեւում, հիմայ դուք կարող էք մեզնից
վերցնել կրակից մի մասը»:

51. Նաեւ այն ամբարտաւան եղածները կասեն, «մենք
ամենս նրա մէջն ենք. Աստուած արդէն վճռել է իր
ծառաների մէջը»:

52. Կրակումը եղողներն էլ կ'ասեն դժոխքի պահա-
պաններին, «խնդրեցէ՛ք ձեր Տէրից, որ մէկ օր մեր
տանջանքը թեթեւացնէ»:

53. Նրանք էլ կասեն, «մի՞թէ ձեր մարգարէները
ձեզ մօտ չեն եկել յայտնութիւններով»: Նրանք էլ կ'ա-
սեն, «այո՛», եւ նրանք կ'ասեն «ուրեմն աղօթք արէք»:

բայց անհաւատների աղօթքը միմիայն մոլորութեան մէջ է .

54. Մենք անպատճառ օգնելու ենք մեր յարգարէներին եւ նրանց, որ աշխարհքի կեանքում հաւատում են, եւ այն օրը, որ յարութիւն կառնեն վկաները :

55. Մի օր, որ ամբարիշտներին օգուտ չի բերի իրանց պատճառարանութիւնը, եւ նրանցն է անէծքը եւ նրանցն է շար բնակարանը :

56. Եւ մենք տւել էինք Մովսէսին առաջնորդութիւնը եւ Իսրայէլի որդիներին տւեցինք իբր ժառանգութիւն՝ գիրքը, որ է առաջնորդութիւն եւ յիշում խելք ունեցողներին :

57. Դու համբերի՛ր ո՛վ Մ ու հ ա մ մ է գ, որովհետեւ Աստուծոյ խոստումը ճշմարիտ է, եւ քո մեղքիդ համար թողութիւն խնդրի՛ր եւ օրհնի՛ր քո Տիրոջը փառաբանութեամբը իրիկունները եւ առաւօտները :

58. Ուրեմն նրանք, որ Աստուծոյ նշանների համար վիճարանում են առանց ստացած հրամանի, նրանց սրտատերումը միայն հպարտութիւն կայ, բայց նրանք չեն յաջողի . իսկ դու Աստուծուն ապաւինի՛ր, որովհետեւ նա լսողը՝ տեսնողն է :

59. Իրաւ երկնքի եւ երկրի ստեղծումը աւելի մեծ է քան թէ մարդկանց ստեղծումը, բայց մարդկանց շատերը չը գիտեն :

60. Եւ կոյրը եւ տեսնողը հաւասար չեն, եւ ոչ էլ նրանք, որ հաւատում են եւ բարի գործեր կատարում, եւ շարագործները : Վիչ են որ խօրհում են այս բաները :

61. Իրաւ վերջի ժամը գալու է. կասկած չկայ դրանում. սակայն մարդկանց շատերը չեն հաւատում :

62. Ձեր Տէրն էլ ասաց, «ինձ աղօթք արէ՛ք, եւ ես ձեզ պատասխան կըտամ. որովհետեւ նրանք, որ հպարտանում են ինձ պաշտելուց, նրանք խայտառակութեամբ գժոխքը պիտի մտնեն» :

63. Աստուած է, որ շինել է ձեզ համար գիշերը, որ

նրանում հանգստանաք, եւ օրը շինել է լոյս. իրաւ
Ստուած բարեգութ է մարդկանց համար, սակայն
մարդկանցից շատերը շնորհակալութիւն չեն անում:

64. Սա ձեր Տէր Աստուածն է, ամեն բանի ստեղ-
ծողը. նրանից բաց ուրիշ Աստուած չըկայ: Ուրեմն
դուք ի՞նչպէս էք նրանից ետ քաշուում:

65. Միայն նրանք են այսպէս ետ քաշուում, որոնք
հակառակում էին Աստուծոյ նշաններին:

66. Աստուած է, որ երկիրը ձեզ համար բնակավայր
է շինել եւ երկիրքը շինել է մի շէնք եւ ձեզ կերպա-
բանք է աւել եւ ձեր կերպարանքները գեղեցկացրել եւ
ձեզ կերակրում է իր բարիքներիցը: Սա ձեր Տէր Աստ-
ուածն է. ուրեմն օրհնեալ լինի Աստուած՝ աշխարհք-
ների Տէրը:

67. Նա է կենդանին. նրանից զատ ուրիշ Աստուած
չըկայ. արդ ջերմոտանդութեամբ աղօթք արէ՛ք նրան,
փառք լինի Աստուծուն՝ աշխարհքների Տիրոջը:

68. Դու ասա՛, «ինձ արգիււած է, որ պաշտեմ նը-
բանց, որոնց դուք աղօթում էք բացի Աստուածանից,
որ իմ Տիրոջ կողմանէ ինձ համար ապացոյցներ են ե-
կել. եւ ինձ պատիրւած է. որ ես աշխարհքների Տի-
րոջը անձնատուք լինեմ»:

69. Նա է, որ ձեզ ստեղծել է հողից, յետոյ սերմի
ջրից, յետոյ կարծրացած արիւնից, յետոյ ձեզ դուրս
է հանել իբրեւ մանկիկ, որ յետոյ չափահասութեան
հասնէք, որ յետոյ ծերանաք, եւ ձեզնից էլ ոմանք
կանխաւ մեռնեն եւ հասնէք սահմանուած պայմանաժա-
մին, եւ որ հասկանաք:

70. Նա է որ կենդանացնում է եւ մեռցնում է. եւ
երբ նա մէկ բան կ'որոշէ, նա միմիայն կ'ասէ նրան,
«եղի՛ր» եւ նա կը լինի:

71. Մի՞թէ չըտեսար նրանց, որ Աստուծոյ նշանների
մասին վրձում են թէ ինչպէս են ետ գնում:

72. Որ նրանք զիրքը սուտ են հանում, եւ այն բա-
նը որ մենք ուղարկել ենք մեր մարգարէներովը, նը-
բանք չուտտ/ կը հասկանան:

73. Նոյն ժամանակ շղթաները նրանց վիզերին կը լինեն նաև կապերը, եւ այսպէս քաշ կը արւին դժւարքի մէջը եւ կայրւեն կրակումը:

74. Նետոյ նրանց կ'առի, «ո՛ւր են նրանք, որոնց դուք բացի Աստուածանից ընկերներ էք ընդունում»: Նրանք էլ կ'ատեն, «մեզնից հեռացել են. այո՛, մեր սրանից առաջ պաշտածները մի բան չէին»: Ահա՛ Աստուած այսպէս է մոլորեցնում անհաւատներին:

75. Սա ձեր երկրի վրայ անիրաւարար արած ուրախութիւնների համար է, եւ ձեր արած զւարճութիւնների համար:

76. Մտէ՛ք դժոխքի գոներովը. նրանում միշտ մնացէ՛ք. եւ ի՛նչ վատ է ամբարտաւանների ընակարանը:

77. Ուրեմն սպասի՛ր, որովհետեւ Աստուծոյ խոստումը ճշմարիտ է: Մենք կամ քեզ տեսնել կը տանք այն սպառնալիքներից մի մասը, որ մենք նրանց տեսել ենք, կամ մենք քեզ կը մեռցնենք, եւ նրանք ետ կը դառնան մեզ մօտ:

78. Մենք էլ արդէն քեզնից առաջ մարդարէ՛ներ ենք ուղարկել, նրանցից մի քանիսի պատմութիւնը քեզ արել ենք, եւ նրանցից մի քանիսինը չենք պատմել քեզ: Եւ ոչ մի մարդարէ՛ հրաշքով չէ՛ եկել առանց Աստուծոյ հրամանին. եւ երբ Աստուծոյ հրամանը կը կատարի, դատաստանը արդարութեամբ կը լինի. եւ ունայնացողները թշւառ կը լինեն այդ տեղ:

79. Աստուած է, որ ձեզ տւել է կենդանիները, որ նրանց վրայ հեծնէք եւ նրանցից ուտէք:

80. Եւ դուք նրանցից օգուտներ սունէք, որ դուք նրանց վրայ ձեր սրտերում որոշած բաներին կը հասնէք, եւ կը հեծնէք նրանց վրայ եւ նաւերի վրայ:

81. Նա էլ ցոյց է տալիս ձեզ իր նշանները, հիմայ դուք Աստուծոյ ո՞ր նշանն էք ուրանում:

82. Մի՞թէ նրանք ման չեն գալիս երկրում եւ տեսնում, թէ ինչպէս է հղել իրանցից առաջ եղածների վախճանը, որ սրանցից շատ էին եւ աւելի զօրաւոր

էին ուժով եւ երկրի մէջ թողած հետքերով, եւ որոնց մի օգնութիւն չ'արեց իրանց ստացւածքը:

83. Եւ երբ իրանց մարգարէները եկան իրանց մօտ յայտնութիւններով, նրանք ուրախանում էին իրանց մօտ եղած գիտութիւնովը. բայց չըջապատեց նրանց այն բանը, որ ծաղրում էին:

84. Նոյն ժամանակ երբ տեսան մեր պատուհասը, սասցին, «մենք հաւատում ենք Աստուծուն որ նա մէկ է, եւ ուրանում ենք այն բաները, որ մենք ընկերներ էինք շինում»:

85. Եւ նրանց հաւատքը նրանց օգուտ չը բերեց, երբ տեսան մեր պատուհասը. սա Աստուծոյ կանոնն է, որ արդէն իր անցած գնացած ծառայելու մէջ գործում էր. եւ անհաւատներն այսպէս թշւառացան:



41) ՍՈՒՐԷ՝ ՖԻԿՍՍԻԻԼԷԹ.

Մէքքէական. յիսուն չորս այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Հ. Մ. Վար իջեցրւած գլխած ողորմածի կողմանէ.
2. Մի գիրք. որի նշանները բացատրւած են. արաքերէն Ղուրան հասկացող ժողովրդի համար.
3. Աւետոյ եւ սպառնացող. բայց նրանցից շատերը նրանից հտ են քաշվում, եւ նրանք չեն լսում:
4. Եւ ասում են, «մեր սրտերը գոցւած են այն բանի համար, դէպի որը դու մեզ կանչում ես, եւ մեր ականջներու՛ր ծանրութիւն կայ, եւ մեր ու քո մէջ

արգելք կայ. ուրեմն դու գործի՛ր եւ մենք էլ ենք գործու՛մ»:

5. Դու ասա՛, «ես միմիայն ձեզ պէս մարդ եմ. ինձ յայտնութիւն է եղել, թէ ձեր Աստուածը մէկ Աստուած է. ուրեմն ուղիղ զէպի նրան գնացէ՛ք եւ նրանից թողութիւն խնդրեցէ՛ք. եւ վա՛յ աստուածընկերաներ շինողներին»:

6. «Եւ նրանց որ մաքրութեան տուրքը չեն տալիս եւ միւս աշխարհքն ուրանում են»:

7. Իսկ նրանք, որ հաւատում եւ բարիքներ են գործում, նրանց համար վարձք կայ ոչ թէ իբրեւ շնորհք:

8 Դու ասա՛, «դուք չէ՞ք հաւատում նրան, որ երկիրը ստեղծել է երկու օրւայ մէջ եւ նրա համար պատկերնե՞ր էք շինու՛մ: Նա է աշխարհքների Տէրը»:

9. Նա էլ սրա վրայ վերեւի կողմից սարեր է զրել, եւ նրան օրհնել եւ նրանում սահմանել է նրա սնունդատուները չորս օրւայ մէջ հաւասարապէս կարօտելուների համար.

10. Յետոյ բազմեց երկնքի վրայ որ ծուխ էր, եւ ասաց նրան եւ երկրին, «եկէ՛ք կամայ կամ ակամայ». եւ նրանք ասացին, «մենք գալիս ենք կամայ»:

11. Եւ նա կազմեց նրանցից եօթը երկինք երկու օրւայ մէջ եւ ամեն մի երկնքի յայտնեց նրա պաշտօնը, եւ մենք զարգարեցինք աշխարհքի երկինքը ճրագներով եւ պաշտպանութիւնով: Սա հղօրի եւ իմաստունի որոշումն է:

12. Իսկ եթէ նրանք ետ քաշուին, ասա՛, «ես ձեզ սպառնում եմ այն փոթորիկը. ինչպէս էր Ադի եւ Սամուգի փոթորիկը»:

13. Նրանց առջեւից եւ նրանց ետեւից երբ մարգարէներ եկան, թէ «բացի Աստուածանից ուրիշին մի՛ պաշտէք». նրանք պատասխանեցին, «եթէ մեր Տէրը կամենար, նա հրեշտակներ կ'իջեցնէր. բայց մենք չենք հաւատում այն բանին, որով ուղարկւած էք»:

14. Իսկ Ազացիները ա՛րարտաւանացին առանց ի-

բաւունքի, եւ ասում էին, թէ «ո՞վ է աւելի զօրաւոր մեզնից»: Մի՞թէ չէին տեսնում, որ այն Աստուածը, որ իրանց ստեղծել էր, իրանցից զօրաւոր էր: Եւ նըրանք հակառակում էին մեր նշաններին:

15. Մենք էլ դժբաղդ օրերում նրանց վրայ ցուրտ մրրիկ ուղարկեցինք, որ նրանց այս աշխարհքի կեանքում խայտառակութեան պատիժը ճաշակել տանք. իսկ միւս աշխարհքի պատիժն աւելի խայտառակ է. եւ նըրանց օգնութիւն չի լինի:

16. Բայց Սամուղացիները, — մենք նրանց առաջնորդում էինք սակայն նրանք աւելի սիրեցին կուրթութիւնը քան առաջնորդութիւնը, եւ նւաստացնող պատժի փոթորիկը նրանց յափշտակեց իրանց արարքների համար:

17. Իսկ մենք ազատեցինք նրանց, որոնք հաւատում եւ երկրւղած էին:

18. Նաեւ այն օրը, որ Աստուծոյ թշնամիները կը հաւաքեն զէպի կրակը, նրանք էլ քաշ կը տուեն:

19. Հէնց նրանք այնտեղ կը գան, նրանց ականջները եւ աչքերը եւ նրանց կաշիները կը վկայեն նըրանց զէմ իրանց արածների համար:

20. Նրանք էլ կ'ասեն իրանց կաշիներին, «դուք ինչո՞ւ էք մեզ զէմ վկայում». նրանք էլ կ'ասեն, «մեզ այն Աստուածը խօսեցրեց, որ ամեն բան խօսեցնել է տալիս. եւ նա ձեզ ստեղծել է առաջի անգամը եւ դուք նրա մօտն էք դառնալու»:

21. Իսկ դուք չէիք ծածկում, որ ձեր ականջները եւ ձեր աչքերը եւ ձեր կաշիները ձեզ զէմ չը վկայէին, բայց կարծում էիք, թէ Աստուած ձեր արածներից շտաբը չը գիտէ:

22. Եւ սա ձեր կարծիքն էր, որ կարծում էիք ձեր Տիրոջ մօտին. նա ձեզ կորուստի աւեց եւ դուք էլ վնասածներիցն եղաք:

23. Նաեւ եթէ նրանք դիմանան, կրակը կը լինի նրանց բնակատեղին. եւ եթէ նրանք շնորհք խնդրեն շնորհք չեն ստանալ:

24. Մենք էլ նրանց համար ընկերներ ենք նշանակել, որոնք պատրաստում են ինչ որ կայ նրանց առաջին եւ նրանց հետեւին, եւ արդէն իրանցից առաջ անցած գնացած դեւերից եւ մարդկանցից եղող ազգերի մէջ խօսւած խօսքը կատարել է նրանց վրայ, թէ նրանք վնասւածներ են:

25. Անհաւատներն էլ ասում են, «այս Ղուրանին ականջ մի՛ դնէք, այլ դատարկախօսութիւն արէ՛ք որ յազթէք»:

26. Բայց մենք անհաւատներին խիստ պատիժ ենք ճաշակել տալու:

27. Նաեւ նրանց հատուցանելու ենք այն չարութեան համար, որ նրանք արել են:

28. Սա Աստուծոյ թշնամիներին հատուցումն է, այսինքն կրակը, նրանց համար նրանում մշտական բնակարան կայ իբրեւ պատիժ նրա համար, որ մեր նշաններին հակառակում էին:

29. Եւ անհաւատները կ'ասեն, «մ'վ մեր Տէր, թող այն դեւերին եւ մարդկանցը, որ մեզ մոլորեցրել են, որ նրանց երկուսին էլ մեր ոտների տակն առնենք, որ նւաստացած դառնան»:

30. Իսկ նրանք որ ասում են, «մեր Տէրը Աստուած է» եւ ուղիղ վարք ունեն, նրանց մօտ կ'իջնեն հրեշտակները, թէ մի՛ վախէք եւ մի՛ տրտմէք, հապառախացէ՛ք այն խրատով, որ ձեզ խօստացւած է»:

31. Մենք ձեր զաշնակիցներն ենք այս աշխարհքի կեանքումը եւ միւս աշխարհքումը, եւ դուք նրանում կ'ունենաք, ինչ ձեր անձերը փափագում են, եւ ձեզ համար կը լինի, ինչ պահանջում էք»:

32 «Իբրեւ իջեալ շնորհք ներող՝ ողորմածի կողմից»:

33. Ուրիմն ո՛վ է աւելի գնդեցկախօս քան նա, որ հրաւիրում է զէպի Աստուած եւ բարիք գործում եւ ասում, «ես միւսլիմ եմ»:

34. Բարութիւնը եւ չարութիւնը հաւասար չեն. գե-

ղեցիկ կերպով մերժի՛ր չարը, եւ այն ժամանակ նա, որ քո եւ նրա մէջը թշնամութիւն կայ, կը դառնայ իբրեւ մտերիմ բարեկամ :

35. Միմիայն համբերողները կը ստանան եւ միմիայն նրանք կը ստանան այն, որ մեծ ճաշակի տէր են :

36. Իսկ եթէ սատանայի կողմանէ մի հրապոյր քեզ հրապուրէ, այն ժամանակ Աստուծուն ապաւինի՛ր, որովհետեւ նա լսող իմաստուն է :

37. Նաեւ նրա նշաններիցն են գիշերը եւ ցերեկը եւ արեգակը եւ լուսինը : Մի՛ երկրպագէք արեգակին եւ ոչ լուսինն, եւ երկրպագեցէ՛ք Աստուծուն որ նըրանց ստեղծել է, եթէ դուք նրան էք պաշտում :

38. Իսկ եթէ ամբարտաւանան, այն ժամանակ քո Տիրոջ մօտ եղողները գիշեր եւ ցերեկ օրհնարանում են առանց յոգնելու :

39. Նաեւ նրա նշաններիցն է, որ երբ երկիրը թառամած ես տեսնում եւ երբ մենք նրա վրայ թափում ենք ջուրը, նա շարժում է ու աճում է. իբրաւ նա, որ նրան կենդանացրեց, մեռելներին կենդանացնողն է : Ահա՛ նա ամենակարող է :

40. Իբրաւ նրանք, որ մեր նշաններն անարգում են, մեզնից ծածկւած չեն : Նա՞ է աւելի լաւ որ կրակի մէջն է դրում, կամ նա՞ որ յարութեան օրը ապահով է : Սրէ՛ք ձեր ուզածը, ահա՛ նա տեսնում է, թէ դուք ինչ էք անում :

41. Ուրեմն սրանք են, որ չը հաւատացին յիշատակութեանը, երբ նա հկաւ իրանց. եւ ահա՛ նա մի սուրբ գիրք է :

42. Նրա առջիւից ունայն բան չի գայ, եւ ոչ էլ նրա ետեւից. նա իջած է իմաստուն օրհնելալի կողմից :

43. Քեզ մի բան չէ ասում եթէ այն, որ աւել է արդէն քեզնից առաջ մարգարէներին, եթէ քո Տէրը թողութիւն տուող եւ սաժանելի պատիժ տուող է :

44. Իսկ եթէ մենք նրան օտարախօս Ղուբան շինած լինէինք, կ'ստէին, ձիւնու համար չեն բացատրւած

նրա խօսքերը, մի՞թէ նա օտարախօս է», եւ նա արա-
բերէն է: Դու ասա՛, «հաւատացողներքի համար առաջ-
նորդութիւն եւ առողջութիւն է. եւ նրանք, որ չեն
հաւատում, նրանց ականջներումը ծանրութիւն կայ,
եւ նա նրանց համար կուրու թիւն է. նրանց կանչում
են մի հետու ակզից»:

45. Մենք էլ արդէն տեղ էինք Մովսէսին գիրքը,
եւ նրանք վէճեր հանեցին նրա համար: Եւ եթէ քո
Տիրոջ կողմանէ կանխաւ որոշում եղած չը լինէր, նը-
րանց մէջ անպատճառ գատատան կը լինէր. իսկ նը-
րանք այդ մասին կասկածի տարակուսանքի մէջ են:

46. Ով բարիք է դործում՝ իր հոգուն համազ է, եւ
ով չարութիւն է դործում, նրա դէմ է. եւ քո Տէրը
ծառաներին անիրաւութիւն անող չէ:

47. Նրան է վերաբերւում վերջի ժամայ գիտու-
թիւնը. եւ մի պատու դուրս չի գայ որ բողբոջից եւ
մի յգի կին չի ծնի առանց նրա գիտութեան: Եւ այն
օրը որ նրանց կը կանչուի, թէ «ո՞ւր են իմ աստուած-
ընկերները», նրանք կ'ասեն. «մենք յայտնում ենք քեզ,
մեզնից մէկը վկայ չէ»:

48. Նրանցից էլ կը հեռանայ այն, որ առաջ կանչում
էին. եւ կը կարծեն, որ իրանց համար պրծնել չկայ:

49. Մարդս չի յոյնի բարիք ուզելուց. եւ եթէ նը-
րան մի չարիք է դպչում, նա շատ յուսահատում է:

50. Իսկ եթէ մենք նրան չարիք դպչելուց յետոյ
մեր կողմից ողորմութիւն ենք ճաշակել տալիս, նա
անպատճառ ասում է, «սա իմն է. եւ ես չեմ կարծում
թէ վերջին ժամը մօտ է. եւ եթէ ես իմ Տիրոջ մօտ
ետ դարձնւելու էլ լինեմ, ա՛հա՛ նրա մօտ ես բարիքներ
կունենամ»: Բայց մենք չը հաւատացողներին յայտնե-
լու ենք իրանց արարքը, եւ նրանց թանձր պատիժ
ենք ճաշակել տալու:

51. Եւ երբ մենք մի մարդու շնորհք ենք անում, նա
ետ է քաշում եւ մի կողմը դառնում, եւ երբ նրան
չարիքն է դպչում, նա ազաչում պաղատում է:

52. Դու ասա՛, «ի՞նչ էք մտածում. եթէ նա Աստուծոյ կողմից է, եւ դուք նրան չը հաւատացիք» . ո՞վ է աւելի մոլորեալ քան թէ նա, որ հետի սխալեալ է :

53. Մենք շուտով ցոյց ենք տալու. նրանց մեր նըշանները աշխարհքի ծայրերում եւ իրանց սրտերումը, մինչեւ նրանց համար պարզելի, որ նա ճշմարիտ է : Մի՛թէ քո Տէրը բաւական չէ, որ նա ամեն բանի վըկայ է :

54. Չէ՞ որ նրանք իրանց Տիրոջը հանդիպելու մասին կասկածի մէջ են : Չէ՞ որ նա ամեն բանը շրջապատող է :



42) Ս Ո Ւ Ր Է ՇՈՒՐՍ.

Մէքքէական. յիսուն երեք այէ :

Գթած ողորմած Աստուծոյ անունովը :

1. Հ. Մ. Ա. Ս. Գ. Այսպէս է լինում յայտնութիւնը քեզ եւ քեզնից առաջիններին : Աստուած զօրաւոր իմաստուն է :

2. Նրանն է ինչ որ կայ երկնքումը եւ երկրումը, եւ նա է բարձրը՝ Մեծը :

3. Քիչ է մնում որ երկինքը վերելիցը պատառի, եւ հրեշտակները օրհնարանում են իրանց Տիրոջը փառաբերելով եւ ներողութիւն են խնդրում երկրի վրայ եղողի համար : Չէ՞ որ Աստուած ներողն եւ ողորմածն է :

4. Նրանք էլ, որ բացի Աստուածանից ուրիշ պաշտպաններ են ընդունում, Աստուած է տեսուչ, եւ դու նրանց համար պտտասխանատու չես :

5. Մենք էլ քեզ այսպէս Ղուրանը արաբերէն յայտ-

նենք, որ դու խրատեցիր մտրաքաղաքին եւ նրա շրջակայքում եղողներին. եւ խրատես այն հաւաքման օրւայ մասին, որի վերաբերմամբ մի կասկած չըկայ. մի մասը դրախտումն է, եւ մի մասը դժոխքումը:

6. Իսկ եթէ Աստուած կամենար, նրանց մէկ հատ կրօնական ազգ կը շինէր, բայց իր ուզածին սղորմութեան մէջ է տանում. իսկ անիրաււները ոչ պաշտպան ունեն եւ ոչ օգնական:

7. Կամ նրանք բացի Աստուածանից պաշտպաններ են ընդունում: Բայց պաշտպանը Աստուած, է եւ նա է մեռելներին կենդանացնողը. եւ նա ամենակարող է:

8. Ինչ բանի համար, որ միմեանց զէմ վիճում էք, ահա՛ նրա վճիռը Աստուծոյ մօտ է: Սա է Աստուած իմ Տէրս. ես նրան եմ ապաւինել. եւ զէպի նրան եմ դառնում:

9. Նա է երկինքն եւ երկիրը ստեղծողը, որ նա ձեզնից շինել է ձեզ համար էգերս եւ անասուններիցը էգեր, որ ձեզ շատայնում է նրանց միջոցով. նրա նըման մի բան չըկայ՝ նա լսող տեսնող է:

10. Եքկնքի եւ երկրի բանալիքները նրանն են. նա ուզածին առատ ապրուստ է տալիս եւ քիչցնում. տնա՛ նա ամենագէտ է:

11. Նա ձեզ համար կրօնքից օրէնք է դրել այն բանը, որ պատւիրել է նոյին եւ այն, որ քեզ յայտնել ենք, եւ այն, որ պատւիրել ենք Արբահամին եւ Մովսէսին եւ Յիսուսին, թէ կրօնքը հաստատ պահեցէ՛ք, եւ դրա մասին բաժին բաժին մի՛ լինէք: Ծանր եղաւ կոապաշտների համար

12. Նա, որին համար դու կանչում ես նրանց Աստուած ընտրում է դրա համար իր սեղ-ծին, եւ զէպի դրան առաջնորդում է գարձի եկողին:

13. Նրանք էլ մի իրայն գիտութիւնը գալուց յետոյ բաժին բաժին եղան իրանց մէջ ըմբոստանալով. եւ եթէ արդէն առաջուց եղած չը լինէր որոշումը քո Տիրոջ կողմանէ մինչեւ մի սահմանուած ժամանակ. անպատ-

ճառ նրանց մէջ դատաստան կը լինէր. եւ նրանք նըրանցից յետոյ ժառանգել են գիրքը կասկածի եւ երկմըտութեան մէջ են նրա մասին:

14. Ուրեմն զու հրաւիրի՛ր եւ հաստատ կեցի՛ր ինչպէս քեզ պատւիրւած է, եւ զու նրանց հաճոյքներին մի՛ հետեւիր եւ ասա՛, «ես հաւատում եմ ինչ գիրք, որ Աստուած իջեցրել է. եւ պատւիրւած է ինձ որ դատեմ ձեր մէջը. Աստուած մեր Տէրն եւ ձեր Տէրն է. մեր գործերը մեզ եւ ձեր գործերը ձեզ կը վերաբերի, մեր եւ ձեր մէջ կռիւ չըկայ. Աստուած մեզ կը միացնէ, եւ ետ դառնալը դէպի նրան է»:

15. Նաեւ նրանք որ իրան համար պատասխան գալուց յետոյ Աստուծոյ մասին վիճում են, նրանց վէճը կ'ոչնչանայ իրանց Տիրոջ մօտ, եւ նրանց համար խիստ պատիժ կայ:

16. Աստուած է, որ գիրքը եւ կշիռը իջեցրել է ճշմարտութեամբ. եւ ի՞նչ է քեզ հասկացրել, զուցէ վերջի ժամը մօտ է:

17. Նրանք որ չեն հաւատում նրան, ասում են չուտով զայ, իսկ նրանք որ հաւատում են, սոսկում են նրանից եւ գիտեն, որ նա ճշմարիտ է. չէ՞ որ մեծ մոլորութեան մէջ են նրանք, որ վերջի ժամայ մասին կասկածում են:

18. Աստուած իր ծառաներին գթած է. նա կերակրում է. ում կամենում է, եւ նա հզօր զօրաւորն է:

19. Ով որ միւս աշխարհի համար է ցանկ ուզում, մենք նրա ցանքը կ'աւելացնենք. եւ ով որ այս աշխարհիս համար է ցանքս ուզում, մենք նրան կրտանք նրանից, բայց միւս աշխարհում նա բաժին չի ունենայ:

20. Կամ նրանք աստուածընկերնե՞ր ունին, որ նրանց համար մի կրօնք դնեն, որի համար Աստուած հրաման չէ տւել: Եւ եթէ սահմանուած խօսք չը լինէր, արդէն դատաստան եղած կը լինէր նրանց մէջ. եւ իրաւ ամբարիշտների համար ցաւալի տանջանք կայ:

21. Դու էլ կը տեսնես ամբարիշտներին, որ ստկում են իրանց վաստակածի վրայ, եւ նա եկել է նրանց վրայ: Իսկ նրանք որ հաւատում եւ բարիքներ են գործում, նրանք դրախտների պարտէզներումը կը լինեն, նրանք իրանց ուզածը կունենան իրանց Տիրոջ մօտը. սա այն մեծ շնորհքն է:

22. Սա այն է, որ Աստուած աւետում է իր ծառաներին, որոնք հաւատում եւ բարիքներ են գործում: Ասա՛, «ես ձեզնից սրա համար վարձատրութիւն չեմ պահանջում բացի սէրից դէպի ազգականները. եւ ով մի բարեգործութիւն վաստակի, մենք դրա համար նըքան մի բարիք կ'աւելացնենք. որովհետեւ Աստուած ներող երախտագէտ է»:

23. Կամ թէ ասում են, «Աստուծոյ դէմ սուտ է հրնարում»: Բայց եթէ Աստուած ուզէր, քո սրտի վրայ կնիք կը դնէր, եւ Աստուած փուճ բանը կը ջնջէր եւ ճշմարտութիւնը իր խօսքերովը կը հաստատէր. որովհետեւ նա սրտագէտ է:

24. Նա է որ իրան ծառաներիցը ընդունում է զըզջումը եւ ներում չարութիւնները, եւ գիտէ ձեր արածները:

25. Նա էլ պատասխանում է նրանց, որոնք հաւատում եւ բարիք են գործում եւ աւելացնում է նրանց համար իր շնորհքը. իսկ անհաւատներին համար խիստ տանջանք կայ:

26. Իսկ եթէ Աստուած իր ծառաներին առատ ապրուստ մատակարարէր, նրանք երկրի վրայ կըմբոստանային, սակայն նա իջեցնում է իր ուզած չափովը. ահա՛ նա անղեակ եւ տեսնող է իր ծառաներին:

27. Եւ նա է, որ մարդիկ յուսահատելուց յետոյ անձրիւ է իջեցնում եւ տարածում իր ողորմութիւնը. եւ նա է օրհնեալ պաշտպանը:

28. Եւ նրա նշաններիցն է երկնքի եւ երկրի արարչագործութիւնը, եւ որչափ կենդանիներ, որ այդ երկուսի մէջ սփռած են, եւ նա, երբ ուզէ, կարող է նրանց փոշուիլ:

29. Ուրեմն ինչ պատահաս, որ ձեզ պատահում է, ձեր ձեռքերի գործի պատճառովն է. եւ նա շատը դեռ ներում է:

30. Դուք երկրի վրայ նրան նւաճողներ չէք եւ դուք քայի Ստուծուց ո՛չ պաշտպան ունէք ո՛չ օգնական:

31. Դժոխի մէջի սարերի դէս էլ նաւերը նրա նշաններին են. եթէ նա ուզէ, կը դադարեցնէ քամին եւ նրանք անշարժ կը մնան նրա մէջքին վրայ, ա՛նա՛ սրբանում նշաններ կան ամեն համբարող երախտագէտի համար.

32. Կամ նա խորտակում է նրանց իրանց գործքերի համար, եւ շատ բաներ էլ ներում է.

33. Նա էլ զիտէ նրանց, որոնք վիճում են մեր նշաններին մասին. նրանց համար ազատել չը կայ:

34. Ինչ որ էլ ձեզ տրւած է, աշխարհքի կեանքի վայելմունք է, իսկ Աստուծոյ մօտ եղածը աւելի լաւ եւ մնայուն է նրանց համար, որ հաւատում են եւ իրանց Տիրոջը ապաւինում.

35. Նաեւ նրանք, որ մեծ մեղքերից եւ չարագործութիւններից զզուշանում են, եւ բարկանալիս ներում են.

36. Եւ իրանց Տիրոջը հնազանդում են եւ աղօթքը կատարում եւ իրանց գործերի համար իրանց մէջ խորհրդակցում են եւ մեր իրանց աւած ապրուստներիցը սղորմութիւն են տալիս.

37. Իսկ եբք նրանց մի գժտութիւն է պատահում, նրանց օգնութիւն է հասնում:

38. Նաեւ չարիքի փոխարէնը նրա նման չարիք է. իսկ ով ներէ եւ բարեկարգի, նրա վարձքը Աստուծոյ մօտ է. ա՛նա՛ նա անիրաււներին չի սիրի:

39. Ուրեմն ով որ անիրաւութիւն կրկուց յետոյ ինքն իրան օգնէ, այնպիսիների դէմ պատճառ չը կայ:

40. Սակայն ճշմարտապէս պատճառ կայ նրանց դէմ, որ մարդկանց անիրաւութիւն են անում եւ ըմբոստանում երկրի վրայ առանց իրաւունքի. նրանց համար

ցաւալի տանջանք կայ:

41. Իսկ ով համբերէ եւ ներէ, նա մեծ գործի աէր է:

42. Որին էլ Աստուած մոլորեցնում է, նրանից յետոյ նա այլեւս պաշտպան չ'ունի. եւ դու կը տեսնես անիրաւութիւն անողներին,

43. Որ պատիժը տեսնելիս կ'ասեն, «Եւս գառնալու համար միջոց չը կայ»:

44. Դու էլ նրանց կը տեսնես, որ դէպի զժոխքը տարւելիս նրանք նախատինքից նւաստացած են եւ աչքի տակով մտիկ են անում. եւ հաւատացեալները կ'ասեն, «Հա՛ ա՛յն փնտաւածները, որ իրանց հողիններին է. իրանց բնտանիքներին փնտում էին յարուսթեան օրւայ համար»: Չէ՞ որ ամբարիշտները հաստատ անոջանքի մէջ են:

45. Նրանք էլ պաշտպաններ չունէին բացի Աստուածանկէց, որ իրանց օգնէին, եւ որին Աստուած մոլորեցրնէ. նա այլեւս ճանապարհ չ'ունի:

46. Դուք ճանապարհեցէ՛ք ձեր Տիրոջը յառաջ քան այն օրը կըզայ, որ նրան ետ դարձնող չի լինի Աստուածանկէց. այն օրը դուք ապաստան չէք ունենայ, եւ դուք չէք կարող ուրանալ:

47. Իսկ եթէ նրանք կը մերժեն, մենք քեզ նրանց վրայ պահապան չենք ուղարկել. քո պարտականութիւնը միմիայն առաջարկել է: Մենք երբ մարդու մեր կողմանէ մի ողորմութիւն ենք ճաշակել տալիս, նա նքանով ուրախանում է. բայց երբ նրանց մի շարիք է զպչում իրբեւ իրանց ձեռքերի գործածի հետեւանք, այն ժամանակ մարդո ապերախտ է լինում:

48. Երկնքի եւ երկրի իշխանութիւնը Աստուծունն է. նա ստեղծում է ինչ կամենում է. որին կամենում է աղջիկներ է տալիս, եւ որին կամենում է աղերք է տալիս:

49. Կամ նրանց ամուսնացնում է՝ այրերին եւ կընիկներին. եւ որին ուզում է ամուլ է թողում. նա գիտէ. զօրաւոր է:

50. Ուրեմն մարդուս բանը չէ, որ Աստուած նրա հետ խօսէ, բացի միայն յայտնութիւնով կամ վարագոյրի ետեւից:

51. Կամ նա մի մարդարէ կ'ուղարկէ, որին նա կը յայտնէ իր ուղածը. ահա՛ նա բարձր իմաստուն է:

52. Եւ այսպէս մենք քեզ յայտնել ենք մեր հոգուցը այն, որ չը գիտէիր թէ ինչ է գիրքը եւ ոչ էլ հաւատաքը. բայց մենք նրան լոյս ենք շինել. որ նրանով մեր ծառաներից, որին ուզում ենք առաջնորդում ենք. եւ դու առաջնորդի՛ր դէպի ուղիղ ճանապարհը.

53. Դէպի Աստուծոյ ճանապարհը որ նրանն է, ինչ որ կայ երկնքումը եւ երկրի վրայ: Զէ՞ որ ամեն բաները Աստուծոյ մօտ են ետ դառնալու:



43) ՍՈՒՐԷ՛ ԶՈՒՐԱՅ՛

Մէքքէական. ութսուն ինը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Հ. Մ. Երզնում եմ պարզ գրքովը:
2. Մենք նրան արարերէն Ղուբան ենք շինել, որ նասկանաք:
3. Եւ նա մայր գրքի մէջ մեզ մօտ է. բարձր իմաստուն է:
4. Արդեօ՞ք հեռացնենք ձեզնից այն խրատը իրրեւներու թիւն, որ դուք մի շոայլ ժողովուրդ էք:
5. Որքա՛ն մարդարէներ ենք ուղարկել առաջիններին:

6. Եւ նրանց մի մարգարէ չէ եկել, որ նրան ծաղրած չը լինեն:

7. Մենք էլ բնաջինջ արեցինք նրանցից աւելի քաջերին, եւ առաջինների օրինակը անցել է:

8. Իսկ եթէ նրանց հարցնես, թէ ով է ստեղծել երկիրքը եւ երկիրը, կ'ասեն, «նրանց ստեղծել է հըղօրը խմաստունը»:

9. «Նա, որ երկիրը ձեզ համար անկողին է շինել, եւ ձեզ համար նրանում ճանապարհներ է շինել որ առաջնորդւիք»:

10. «Նա էլ, որ երկնքիցը ջուր է իջեցնում չափով, եւ մենք նրանով մի մեռած երկիրը կենդանացնում ենք. դուք էլ այսպէս էք դուրս բերւելու»:

11. Նաեւ նա, որ ստեղծել է բոլոր տեսակները, եւ ձեզ համար շինել է նաւերը եւ անասունները, որ նրանց վրայ նստում էք»:

12. Երբ նստում էք նրանց մէջքերին վրայ, յիշեցէ՛ք ձեր Տիրոջ պարգեւը նրա վրայ նստած ժամանակը եւ ասացէ՛ք. «օրհնեալ լինի նա, որ հնազանդեցրել է այս բանը մեզ, եւ մենք նրան չէինք կարող զսպել»:

13. Մենք էլ մեր Տիրոջն ետ ենք դառնալու»:

14. Նրա ծառաներիցը մի մասը նրա զէմ են շինում. իրաւ մարդս յայտնի ապերախտ է:

15. Կամ նա իրան ստեղծածիցը աղջիկնե՞ր է վերցրել, եւ ձեզ արու զաւակներ տւե՞լ:

16. Իսկ երբ նրանց մէկին աչքալոյս են ասում այն կերպով, ինչպէս Ողորմածի համար, այն ժամանակ նրաք երեսը սեւանում է, եւ ինքը ճնշւած է լինում:

17. Նա էլ, որ աճում է զարդի մէջ, մի՞թէ նա այդպիսի անյայտ թշնամութեան մէջ կը լինի:

18. Նրանք էլ այն հրեշտակները, որ Ողորմածի ծառաներն են, իգականներ են շինում: Մի՞թէ նրանք ներկայ էին ստեղծւելիս: Նրանց վկայութիւնը թող գրուի, որ նրանք հարցնւեն:

19. Եւ ասում են, «եթէ ողորմածը կամենար, մենք

նրանց չէինք պաշտի»: Նրանք այս մասին գիտութիւն չունեն. նրանք միայն սուտեր են խօսում:

20. Կամ մենք գրանից առաջ նրանց մի գի՞րք ենք տւել. որ նրանք հաստատ բռնեն նրան:

21. Բայց նրանք ասում են, «մենք տեսանք մեր հայրերը մէկ կրօնքի վրայ, եւ մենք նրանց հետքերովն ենք առաջնորդւում»:

22. Եւ այսպէս քեզնից առաջ մի խրատիչ շուղարկեցինք մի գիւղ, որ նրա մեծամեծները չ'առէին թէ, «մենք մեր հայրերը մի կրօնքի վրայ տեսանք եւ մենք հետեւում ենք նրանց հետքերին»:

23. Դու ասա՛, բայց նիթէ ես մի աւելի ուղիղը բերեմ քան թէ այն, որ դուք տեսել էք նրա վրայ ձեր հայրերին: Նրանք ասում էին, «մենք ձեր բերած բանին չենք հաւատում»:

24. Մենք էլ նրանցից վրէժ տեսցինք, տե՛ս թէ սուտ համարողների վախճանը ինչպէ՛ս եղաւ:

25. Իսկ երբ Արքահամն ասաց իր հօքը եւ իր ժողովրդին, «ես հետու եմ ձեր պաշտածիցը»:

26. Միմիայն նա, որ ինձ ստեղծել է, նա կ'առաջնորդէ ինձ»:

27. Նա էլ գրան մնայուն հանգանակ շինեց իր յաջորդների համար, որ ետ դառնան:

28. Իբաւ ես սրանց եւ իրանց հայրերին վայելմութեան տեցի, մինչեւ եկաւ նրանց համար ճշմարտութիւնը եւ յայտնի մարգարէն:

29. Նաեւ երբ ճշմարտութիւնը եկաւ նրանց համար, նրանք ասացին, «սա հմայութիւն է, եւ մենք չենք հաւատայ»:

30. Նրանք ասացին, «ինչո՞ւ համար չէ այս Ղուբանը այն երկու մեծ քաղաքներից մի մարդու համար իջեցրւել»:

31. Մի՞թէ նրանք բաժանում են քո Տիրոջ ողորմութիւնը. մենք նրանց մէջ բաժանել ենք իրանց ապօրոստը այս աշխարհքի կեանքումը, եւ նրանցից մէկը

միւսի վրայ բարձրացրեցինք, որ մէկը միւսին իբրեւ հպատակ առնէ . եւ քո Տիրոջ ողորմութիւնը նրանց գանձածիցը լաւ է :

32. Իսկ եթէ մարդիկ կրօնքով մէկ ազգ չը լինէին, այն ժամանակ մենք Ողորմածի չըհաւատադողներին տների կտուրները արծաթից կը շինէինք, եւ սանդուղքներն էլ որի վրա վեր են ելնում,

33. Նաեւ նրանց աների դռները եւ բազմօցները, որոնց վրայ թեկնվում են .

34. Եւ ոսկեզարդ . եւ այս բոլորը միմիայն աշխարհքիս կեանքի վայելուքն է . իսկ միւս աշխարհքը քո Տիրոջ մօտ է երկիւղածների համար :

35. Ով որ ետ քաշւի Ողորմածի խրատիցը, մենք նրա համար ընկեր կը շինենք սատանային, եւ նա նրա մտերիմը կը լինի :

36. Ուրեմն նրանք հանում են ճանապարհիցը նըրանց, եւ նրանք կարծում են թէ ուղիղ են առաջնորդուում :

37. Մինչեւ նա մեզ մօտ կըզայ, կ'ասէ «ո՛հ եթէ իմ եւ քո մէջ արեւելիքների հեռաւորութիւնը լինէր» . ո՛հ, ինչ վատ ընկեր :

38. Նաեւ այսօր ձեզ ոչինչ օգուտ չի անի, քանի որ անիրաւութիւն էիք անում . եւ դուք պատժին մասնակից էք :

39. Մի՞թէ դու լսել կըտաս խուլին կամ կ'առաջնորդես կոյրին եւ յայանի մոլորութեան մէջ ելողին :

40. Իսկ եթէ քեզ առնենք տաննք, մենք զարծեալ վրէժ ենք առնելու նրանցից :

41. Կամ եթէ քեզ տեսնել էլ տանք, ինչ որ կանխաւ ասել ենք նրանց, ահա՛ մենք նրանց վրայ կարողութիւն ունենք :

42. Ուրեմն հաստատ բռնի՛ր . ինչ որ քեզ յայանւած է, որովհետեւ դու ուղիղ ճանապարհի վրայ ես :

43. Նա էլ քեզ համար յիշեցուցիչ է եւ քո ժողովըրդի համար, եւ դուք շուտով պէտք է հարցնւիք :

44. Նրանց էլ հարցրո՛ւ, որոնց մենք քեզնից առաջ իբրեւ մեր մարդարէններ ուղարկել ենք, թէ արդեօք մենք Ողորմածիցը զստ մի ուրիշին Աստուած ենք շինել, որ պաշտեն :

45. Բայց մենք արդէն ուղարկեցինք Մովսէսին մեր հրաշքներովը Փարաօնի եւ նրա մեծամեծների մօտ եւ ասաց, «ես աշխարհքների Տիրոջ մարդարէն եմ» :

46. Եւ երբ նա մեր հրաշքներովը նրանց մօտ եկաւ, նրանք ծիծաղեցին նրանց վրայ :

47. Մենք էլ նրանց միմիայն այնպիսի հրաշքներ ցոյց տւեցինք, որ մէկը մեծ էր քան թէ միւսը. եւ մենք նրանց պատժեցինք. գուցէ կ'ապաշխարեն :

48. Նրանք էլ ասացին, «ո՛վ կախարդ, աղօթի՛ր քո Տիրոջը քեզ հետ արած ուխտին պէս, մենք առաջնորդուողներ ենք» :

49. Բայց երբ մենք հեռացրիցինք նրանցից պատիժը, այն ժամանակ նրանք դրժեցին :

50. Նաեւ Փարաօնը գոչեց իր ժողովրդի մէջ, ասելով, «ո՛վ իմ ժողովուրդ մի՞թէ Եգիպտոսի իշխանութիւնը իմը չէ նաեւ այս գետերը որ հոսում են իմ տակովը. մի՞թէ չէք նկատում» :

51. «Կամ ես լաւ եմ այս փանաքիից» :

52. «Որ հազիւ կարողանում է հասկացնել» :

53. «Ուրեմն ինչո՞ւ համար ոսկի ապարանջաններ չունի կախած, կամ ուղեկից հրեշտակներ չկա՞ն հետը» :

54. Նա իր ժողովրդին արհամարհեց, եւ նրանք հրեշտակների նրան որովհետեւ մի շարագործ ազգ էին :

55. Եւ երբ նրանք մեզ բարկացրիցին, նրանցից վերջէ՛մ առեցինք եւ նրանց ամենն էլ ձովի մէջ խեղդեցինք :

56. Մենք էլ նրանց նախորդ եւ օրինակ շինեցինք միւսներին :

57. Եւ երբ Մարիամի որդին օրինակ բերեց, այն ժամանակ քո ժողովուրդը հրաժարւեց նրանից,

58. Նաեւ ասացին, «մե՞ք աստուածներն են լաւ թէ

նա»։ նրանք միայն վէճի համար առարկեցին այդ նրանք իրաւ կուսասէր մարդիկ են։

59. Նա միայն մի ծառայ է, որին մենք շնորհք ենք ցոյց տւել, եւ նրան օրինակ ենք շինել Իսրայէլի որդկանց համար։

60. Իսկ եթէ կամենայինք, ձեզնից էլ երկրի վրայ հրեշտակներ կը շինէինք, եւ ձեզ կը հետեւէին։

61. Իւ ահա՛ նա վերջի ժամւայ գիտութիւնն է, ուրեմն նրա ժառին մի՛ երկմտէք, եւ ինձ հետեւեցէ՛ք, սա ուղիղ ճանապարհն է։

62. Սատանան էլ ձեզ ճանապարհից չը հանէ՛, որովհետեւ նա ձեր յայտնի թշնամին է։

63. Իսկ երբ Յիսուս հրաշքներով եկաւ, ասաց «ես եկել եմ ձեզ մօտ իմաստութիւնով եւ որ ձեզ բացատրեմ այն բաներից մի քանիսը, որոնց մասին վիճում էք, ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից եւ հետեւեցէ՛ք ինձ»։

64. Ահա՛ Աստուած իմ Տէրս է եւ ձեր Տէրն է, ուրեմն նրան պաշտեցէ՛ք, սա է ուղիղ ճանապարհը»։

65. Բայց կուսակցութիւնները իրանց մէջ վիճում էին, եւ վա՛յ նրանց այն ցաւալի օրւայ տանջանքից, որոնք անիրաւութիւն են անում։

66. Մի՞թէ նրանք մի բան են սպասում բացի այն ժամանից, որ յանկարծակի կըգայ նրանց վրայ, բայց նրանք չեն հասկանում։

67. Բարեկամները այն օրը իրար թշնամի կը լինեն բացի երկիւղածներից։

68. Ո՛վ իմ ծառաներ, այսօր ձեզ համար վախ չկայ, եւ դուք չէք տրտմի։

68. Նրանք, որ մեր նշաններին հաւատում էին եւ միւսլիմներ էին։

70. Մտէ՛ք դրախտը դուք եւ ձեր կիները ցնծալով։

71. Ոսկի անօթներ եւ բաժակներ են պտոյտ տալու նրանց շուրջը, եւ նրանցում կայ սրտի ուղածը եւ աչքի ախորժածը, եւ դուք նրանում յաւիտեան կը մնաք։

72. Սա էլ այն դրախտն է, որ ես նրան ձեզ ժառանգութիւն եմ տւել ձեր արած գործերի համար:

73. Ձեզ համար նրանում շատ պտուղներ կան, որ ուտէք:

74. Իսկ յանցաւորները յաւիտեան կը մնան դժոխքի տանջանքումը:

75. Նրանցից չի թեթեւացնւի, եւ նրանք պէտք է այնտեղ յուսահատուեն:

76. Մենք նրանց անիրաւութիւն չենք արել. բայց նրանք էին անիրաւութիւն անողները:

77. Նրանք էլ կը գոչին: «ո՛վ Մալիք, թող քո Տէրը մեր վճիռը տայ»· նա էլ կ'ասէ, «դուք պէտք է մնաք»:

78. Մենք արդէն եկանք ձեզ մօտ ճշմարտութիւնով, բայց ձեզնից շատերը զզվում են ճշմարտութիւնիցը:

79. Կամ մի բան խորհում. մենք էլ ենք խորհում:

80. Կամ կարծում են, թէ մենք չենք լսում նրանց գաղտնիքները եւ ծածուկ խօսածները. այո, մեր ուղարկածները գրում են նրանց մօտ:

81. Ասա՛, «եթէ Ողորմածը որդի ունենար, ես պաշտածների առաջինը կը լինէի»:

82. Սուրբ է երկնքի եւ երկրի Տէրը, ամոռի Տէրը այն բանից, որ վերագրում են նրան:

83. Թող նրանք խորասուզեն եւ խաղան մինչեւ որ կը հանդիպեն այն օրւան, որ ժամադրւած է իրանց:

84. Եւ նա է, որ Աստուած է երկնքումը եւ Աստուած է երկրումը, եւ նա է իմաստունը՝ գիտունը:

85. Օրհնեալ է նա էլ, որին է երկնքի եւ երկրի եւ այդ երկուսի մէջ եղածի իշխանութիւնը. եւ վերջի ժամւայ գիտութիւնը նրա մօտ է, եւ դուք նրա մօտ էք ետ դարձելու:

86. Իսկ բացի նրանից կանչւողները չեն կարող միջնորդել, եթէ ոչ նա, որ վկայում է ճշմարտութեանը, եւ նրանք գիտեն:

87. Նաեւ եթէ հարցնես նրանց, թէ ով է ստեղծել

իրանց, կ'ասեն «Ստուած» ապա ինչո՞ւ են ետ քաշ-
ւում:

88. Նա էլ ասում է, «ո՛վ իմ Տէր, սրանք անհաւատ
ազգ են»:

89. Բայց դու հրաժարուի՞ր նրանցից, եւ բարեւ տուր,
եւ նրանք շուտով կը տեսնեն:



44) Ս Ո Ւ Ր Է Ս Ա Գ Ո Ւ Խ Ս Ա Ն

Մէքքէական. յիսուն ինը այէ:

Գլթած սլորմած Աստուծոյ անունովը:

1. Հ. Մ. Երգում եմ անում յայտնի գիրքովը:
2. Մենք նրան մի օրհնեալ գիշերւայ մէջ ենք իջե-
ցրել. մենք խրատում ենք:
3. Նրանում որոշվում է ամեն իմաստուն բան.
4. Իբրեւ հրաման մեր կողմանէ. մենք մարգարէներ
ուղարկողներ ենք,
5. Իբրեւ ողորմութիւն քո Տիրոջ կողմանէ. որով-
հետեւ նա է լսողը իմացողը,
6. Երկնքի եւ երկրի եւ այդ երկուսի մէջ եղածի
Տէրը, եթէ համոզւած էք:
7. Նրանից բաց ուրիշ աստուած չը կայ. նա կեն-
դանացնում է եւ մեռցնում. ձեր Տէրը եւ ձեր նախնի
հայրերի Տէրը:
8. Բայց նրանք խաղում են երկմտութեան մէջ:
9. Ուրեմն հակի բ. մի օր գայու է երկինքը նրանց
վրայ յայտնի ծովտով:

10. Այս մարդկանցը ծածկելու է մի ցաւալի տանջանք:

11. Ո՛ւր մեր Տէր, հեռացրո՛ւ մեզնից տանջանքը. մենք հաւատացեալներ ենք:

12. Ո՞րտեղից է գալիս նրանց համար խրատը. եւ արդէն եկել է նրանց համար յայտնի մարգարէն:

13. Յետոյ նրանք ետ քաշեցին նրանից եւ ասացին, «դիւահար ուսեալ է»:

14. Մենք տանջանքը մի քիչ հեռացնում ենք. դուք դարձի եկողներ էք:

15. Այն օրը, որ մեծ յարձակումովը կը յարձակենք, մենք մեր վրէժը կ'առնենք:

16. Մենք արդէն նրանցից ասաջ փարսօտնի ժողովուրդին փորձեցինք եւ նրանց մօտ եկաւ մի ազնիւ մարգարէ:

17. Ասելով թէ «ինձ յանձնեցէ՛ք Աստուծոյ ծառաներին, ես ձեզ համար մի հաւատարիմ մարգարէ եմ»:

18. «Եւ թէ մի՛ բարձրանաք Աստուածանից վեր, ես որոյ ապացոյցով եկել եմ ձեզ մօտ»:

19. «Իսկ ես իմ Տիրոջը եւ ձեր Տիրոջն եմ ապաւիտում, եթէ ինձ քարկոծէք»:

20. «Նաեւ եթէ ինձ չէք հաւատում, ինձնից բաժանեցէ՛ք»:

21. Նա էլ կանչեց իր Տիրոջը, թէ «նրանք մի յանցաւոր ժողովուրդ են»:

22. Ուրեմն զիշերը ճանապարհ ընկի՛ր իմ ծառաների հետ, որովհետեւ ձեր ետքիցը գալիս են:

23. Ի՞նչովը հանգիստ թո՛ղ. որովհետեւ նրանք մի ընկրդմեող դունդ են:

24. Որչա՛փ թողուցին այգիներ եւ աղբիւրներ,

25. Արտեր եւ փառաւոր տեղեր.

26. Պարգեւներ էլ, որ նրանցում վայելում էին:

27. Այսպէս. եւ մենք դրանց ուրիշ ազգի տեղիներ իբրեւ ժառանգութիւն:

28. Եւ երկինքն ու երկիրը չը լացին նրանց վրայ:

և նրանց ժամանակ չը տրուեց:

29. Բայց մենք ազատեցինք Իսրայէլի որդեկանցը թշուառ տանջանքից,

30. Փարաւօնից, որ մի ամբարտաւան շոռյլ էր:

31. Մենք էլ նրանց արդէն ընտրել էինք, առաջուց գիտենալով, աշխարհքներից.

32. նրանց էլ տուել էինք նշաններ, որոնց մէջ յայտանի փորձութիւն կար:

33. Բայց սրանք անպատճառ ասում են.

34. «Մենք միայն մի առաջին մահ ունենք, եւ մենք յարութիւն չենք առնի:

35. «Ուրեմն բերէ՛ք մեր հայրերին, եթէ ճշմարիտ էք»:

36. Դրա՞նք են լաւ, թէ Թուրքայի ազգը:

37. նրանք էլ, որոնց մենք դրանցից առաջ բնաջինջ արեցինք, յանցաւորներ էին:

38. Մենք երկիրքը եւ երկիրը եւ նրանց մէջը եղածները չը ստեղծեցինք խաղալով.

39. Մենք նրանց միմիայն ճշմարտութեամբ ենք ըստեղծել, բայց նրանցից շատերը չը գիտեն:

40. Իբրաւ վճռի օրը նրանց ամենի համար որոշած ժամն է:

41. Մի օր, որ մի դաշնակից միւս դաշնակցին օգուտ չի տայ, եւ նրանց օգնութիւն չի լինի:

42. Բացի նրանից, որին Աստուած կ'ողորմի, որովհետեւ նա հզօր ողորմած է:

42. Ահա՛ զուգգումի ծառը.

44. Յանցաւորների կերակուրն է.

45. Հալւած պղինձի պէս փոքերը կը վազէ.

46. Եռացող ջրի պէս:

47. Բռնեցէ՛ք նրան եւ քաշ տալով տարէք դժոխքի մէջը.

48. Յետոյ նրա գլխի վրայ թափեցէ՛ք եռացող պատիժը.

49. «Ճաշակի՛ր, ով հզօր փառաւոր,

50. «Սա այն է որի մասին դուք երկմտում էիք»,
51. Բայց երկիրդածները ապահով տեղ կը լինեն.
52. Դրաստներում եւ արքիւրների մօտ,
53. Հագած մետաքս եւ թաւիչ գէժաղէմ:
54. Այսպէս. եւ մենք նրանց կ'ամուսնացնենք սեւ
սեւ աչքեր ունեցող կոյսերի հետ.
55. Այնտեղ ապահովարար կը պահանջեն ամեն տե-
տակ պտուղ.
56. Նրանք այնտեղ միմիայն առաջին մահը ճաշակած
կը լինեն, եւ ոչ ուրիշ մահ. եւ նա նրանց կը պահէ
դժոխքի պատժիցը:
57. Իբրեւ շնորհք քո Տիրոջ կողմանէ. սա մեծ փր-
կութիւնն է:
58. Եւ միմիայն սրա համար ենք մենք հեշտացրել
նրան քո բերանումը, որ նրանք յիշեն:
59. Ուրեմն հակի՛ր. նրանք էլ հակե՛ն:



45) ՍՈՒՐԷ ԱԼ-ՃԱՍԻՅԷԹԸ

Մէքքէական. երեսուն վեց այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Հ. Մ. Գրքի իջեցումը հզօր իմաստուն Աստուծոյ
կողմից է,
2. Իրաւ երկնքի եւ երկրի մէջ նշաններ կան հա-
ւատացեալների համար
3. Նաեւ ձեր ստեղծման մէջ. եւ ինչ անասուն որ
տարածւած է նշաններ են հատատահաւատների հա-
մար,
4. Գիշերւայ եւ ցերեկւայ տարբերութիւնն էլ, եւ

ինչ որ Աստուած երկնքիցը իջեցնու՞մ է իբրև սնունդ, եւ կենդանացնում է արդէ՛ն մեռած երկիրը եւ քամիների փոփոխութեան մէջ նշաններ կան խելացի մարդկանց համար:

5. Սա Աստուծոյ նշաններն են, որ կարգում ենք քեզ համար ճշմարտութիւնով. ուրեմն Աստուածանից եւ նրա նշաններից յետոյ ո՞ր խօսքի են հաւատում:

6. Վա՛յ ամեն զրպարտիչ յանցաւորի.

7. նա լսում է Աստուծոյ նշանները, որ իրան կարգացվում են յետոյ ամբարտաւանութեամբ յամառվում է իբր թէ չէ լսել նրանց. ուրեմն նրան ցաւալի տանջանքի լուրը տա՛ւր:

8. Եւ երբ նա մեր նշաններիցը մի բան է իմանում նրան ծաղրի տեղ է դնում. դրանց համար թշուառ տանջանք կայ:

9. Նրանց ետեւին կայ գոփաք. իրանց աշխատածն իրանց մի բան օգուտ չի տայ, եւ ոչ էլ նրանք, որ բացի Աստուածանից պահպաններ են ընդունել. նրանց համար մեծ պատիժ կայ:

10. Սա է առաջնորդութիւնը, իսկ նրանք որ իրանց Տիրոջ նշաններին չեն հաւատում, նրանց համար ցաւալի տանջանքով պատիժ կայ:

11. Աստուած է, որ ծովը ձեզ հպատակեցրել է, որ նրա հրամանովը նաւը նրանում գնայ եւ զուք նրանից շնորհք խնդրէք, որ երախտադէտ լինէք:

12. Եւ նա հպատակեցրել է ձեզ իբ կողմանէ երկընքումն ու երկրումն եզածի բոլորը. ահա՛ սրանում նշաններ կան խորհող մարդկանց համար:

13. Գու. ասա նրանց, որ հաւատում են, որ ներքին Աստուծոյ օրւանք չը յուսացողներին. թէ նա հատուցում է տալու մարդկանց իրանց գործքերի համեմատ:

14. Ով որ բարիք է գործում՝ իր հոգու համար է, եւ ով որ չար է՝ իր հոգուն դէմ է. յետոյ ձեք Տիրոջն էք գարձնելու:

15. Մենք էլ արդէ՛ն տեւ էինք Լսրայէլի որդեանցը

գիրքը եւ խմաստութիւնը եւ մարգարէութիւնը, եւ նրանց գերազանց արեցինք ամեն մարդկանցից.

16. Նրանց էլ յայանութիւններ էինք տւել այդ մասին, բայց նրանք միայն այն ժամանակ ըմբոստանալով իրանց մէջ վիճարանութեան սկսեցին, երբ իրանց համար եկել էր գիտութիւնը: Ահա՛ քո Տէրը յարութեան օրը նրանց մէջ դատաստան է անելու այն բանի համար, որի մասին վիճում էին:

17. Յետոյ մենք քեզ նշանակեցինք պատ իրանքի օրէնքին վրայ. ուրեմն դու նրան հետեւի՛ր եւ չխնայողներէ հաճոյքներին մի՛ հետեւիր:

18. Նրանք քեզ ոչ մի բան չեն օգնի՝ ստուծ յգէ՛մ, իսկ անիրաւներն իրար պաշտպան են. բայց Աստուծոյ երկիւղածներէ պաշտպանն է.

19. Սա մարդկանց համար աեսողութիւն եւ առաջնորդութիւն եւ ոգորմութիւն է հաստատահաւատներէ համար:

20. Կամ թէ կարծում են նրանք, որ չարութիւններ են գործում, որ մենք նրանց ապրելիս եւ մեռելիս հաւասար կը շինենք նրանց պէս որ հաստում են են բարեքներ գործում: Վա՛ս է նրանց դատողութիւնը:

21. Աստուած էլ ստեղծել է երկինքը ճշմարտութեամբ, եւ ամեն մի անձ հատուցում է ստանալու ք վարքի համեմատ եւ նրանց անիրատութիւն չի լինի:

22. Ի՞նչ եւ կարծում. ով որ իր հաճոյքն իրան համար աստուած չինէ, Աստուած նրան կը մոլորեցնէ գիտութեամբ, եւ կնիք կը դնէ նրա ականջի եւ սրտի վրայ եւ նրա աչքի վրայ ծակոյթ կը շինէ. եւ ով կ'առաջնորդէ նրան Աստուածանից յետոյ: Մի՞թէ չէ՞ մտածում:

23. Նրանք էլ ասում են, միմիայն այս աշխարհի կեանքն է, մենք մեռնում ենք. եւ եւ զանաւոր ենք. եւ մեզ միմիայն աշխարհիս ընթացքն է ոչ՛չա

ցընում»։ Նրանք այս մասին գիտութիւն չ'ունեն. նրանք միայն կարծում են։

24. Ու երբ նրանց առաջին կարգացում են մեր յայտնի նշանները, նրանց առարկութիւնը միայն սա է, որ ասում են «բերէ՛ք մեր հայրերին, եթէ ճշմարտախօս էք»։

25. Դու ասա՛, «Աստուած է ձեզ կենդանացնում, յետոյ մեռցնում, յետոյ նա ձեզ հաւաքելու է յարութեան օրը, որի մասին կասկած չը կայ. բայց մարդկանցից շատերը չը գիտեն»։

26. Աստուծունն է երկնքի եւ երկրի իշխանութիւնը, եւ այն օրը որ վերջի ժամը կը հասնի, այն ժամանակ անիրաււները կը վնասեն»։

27. Նաեւ կը տեսնես ամեն մի կրօնքի ազգը ծունկ դրած, ամեն մի կրօնքի ազգը կանչւում է իր գրքի մօտը թէ «այսօր հատուցում էք ստանում ձեր արած ներքի համար»։

28. Սա մեր գիրքն է, որ ձեզ համար խօսում է ճշմարտութիւնով. մենք արդէն գրել ենք ամեն ինչ որ գիտում էիք։

29. Իսկ նրանք, որ հաւատում եւ բարիք են գործում. նրանց Տէրը կը մտցնէ նրանց իր ողորմութեան մէջը՝ սա յայտնի փրկութիւնն է։

30. Իսկ նրանք, որ չեն հաւատում. «մի՞թէ ձեր առաջին չէին կարգացում մեր նշանները. բայց դուք ամբարտաւանացաք եւ մի յանցաւոր մոզովուրդ եղաք»։

31. Եւ երբ կ'ասուէր թէ «Աստուծոյ խօստումը ճշմարիտ է եւ վերջի ժամի մասին կասկած չը կայ». դուք ասում էիք, «չը գիտենք, թէ վերջի ժամը ինչ է. մենք միայն կարծիք է, որ կարծում ենք. բայց մենք համոզւած չենք»։

32. Նաեւ կերեւան իրանց արած չարութիւնները, եւ նրանց կը շրջապատէ այն, որ ծաղրում էին։

33. Եւ կ'ասուի նրանց, այսօր մենք ձեզ մոտանում ենք, ինչպէս դուք մոտացել էք այսօրւան հանդիպելը,

և ձեր բնականորէն կրակն է, եւ ձեզ օգնող չըկայ» :

34. Նրա համար որ դուք Աստուծոյ նշանները խաղալիքի տեղ գրեցիք եւ աշխարհքի կեանքը ձեզ յափըշտակեց. բայց այսօր նրանք դուրս չեն գայ եւ նըրանցից մի բան չի պահանջւի» :

35. Երկնքի Տիրոջն եւ երկրի Տիրոջը եւ աշխարհքների Տիրոջը՝ Աստուծուն փառք լինի՛ :

36. Նրանն է մեծափառութիւնը երկնքումը եւ երկրումը, եւ նա է հզօր իմաստունը :



46 ՍՈՒՐԷ ԱԼ-ԱՀԳՍՅ

Մէքքէական. երեսուն հինգ այէ :

Գթած ողորմած Աստուծոյ անունովը .

1. Հ. Մ. Գրքի իջեցումը հզօր իմաստուն Աստուծոյ կողմից է :

2. Երկինքը եւ երկիրը եւ նրանց երկուսի մէջեւ եղածները մենք միմիայն ճշմարտութեամբ ենք ստեղծել եւ որոշ վախճանով. իսկ նրանք որ անհաւատ են՝ իրանց եղած խրատիցը ետ չեն քաշում :

3. Ասա՛, «Ի՞նչ էք կարծում նրանց մասին, որոնց դուք կանչում էք բացի Աստուածանից. ցոյց տէք ինձ, թէ նրանք ինչ են ստեղծել երկրիցը. կամ նըրանք ընկեր ունեն երկնքումը. բերէ՛ք մի գիրք սրանից առաջ կամ մի գիտութեան հետք, եթէ ճշմարտախօս էք» :

4. Բայց ո՞վ է աւելի մոլորած քան նա, որ բացի Աստուածանից ուրիշի է աղօթում, որ նրան չէ պա-

տասխնում մինչեւ յարութեան օրը, բայց նրանք անտեղեակ են սրանց ազօթքիցը:

5. Եւ երբ մարդիկ կը հաւաքուին, նրանց թշնամիներ կը դառնան, նւ նրանց պաշտամունքը կու բանան:

6. Նաեւ երբ նրանց առաջին կարգացում են մեր նշանները, ասում են անհաւատները այն ճշարտութեան համար, երբ նրանց եկաւ, «սա յայտնի կախարդութիւն է»:

7. Կամ ասում են, «նա հնարել է գրան»: Ասա՛, եթէ ես գրան հնարած լինէի, դուք ինձ մի բան չէիք կայող անել Աստուծոյ դէմ. նա գիտէ ձեր այս մասին արած զբախտութիւնները. նա բաւական է իբրեւ վրակայ իմ եւ ձեր մէջը. եւ նա է ներող՝ ողորմածն:

8. Ասա՛, «ես մարգարէներից նոր բան չեմ, եւ չը գիտեմ թէ ինձ ինչ պիտի պատահի եւ ոչ էլ ձեզ. ես միմիայն ինձ եղած յայտնութեան եմ հետեւում, եւ ես մի ուրիշ բան չեմ եթէ ոչ մի յայտնի խրատիչ»:

9. Ասա՛, «ի՞նչ էք կարծում. եթէ Աստուծոյ կողմից է, եւ դուք նրան չէք հաւատում, թէեւ Իսրայէլի որդիներից մէկ վկայ վկայել է, թէ նրա նման է եւ հաւատացել է. բայց դուք ամբարտաւանանում էք. եւ Աստուած անիրաւ մարդկանց չի առաջնորդի»:

10. Եւ նրանք էլ չեն հաւատում, ասում են հաւատացողներին, «եթէ մի լաւ բան լինէր. նրանք մեզներից առաջ չէին անցնի». բայց երբ նրանով չեն առաջնորդուում, այն ժամանակ ասում են, «սա մի հին ստաբանութիւն է»:

11. Նաեւ նրանից առաջ էր Մովսէսի գիրքը իբրեւ ուղեցոյց եւ ողորմութիւն. իսկ սա մի գիրք է հաստատող՝ արարեալն լեզուով, որ խրատէ անիրաւութիւն անողներին եւ աւետէ բարեգործներին:

12. Ահա՛ նրանք, որ ասում են, թէ մեր Տէրը Աստուած է, յետոյ ուղիղ վարձք ունեն նրանց վրայ երկիւղ չի լինի եւ նրանք չեն տրամի:

13. Նրանք գրախտի ընկերներ են, նրանում միշտ կը մնան իբրև հատուցում իրանց արածին:

14. Եւ մենք խրատ ենք տալիս մարդկանց իրանց ծնողներին բարիքներ անելու, որ մայրը նրան կրեր է ցաւերով եւ ծներ է ցաւերով, եւ յղութիւնը մինչեւ կաթիցը կտրելը երեսուն ամիս էր մինչեւ որ չափահաս լինելով քառասուն տարեկան կը դառնայ, կ'ասէ, «ո՛վ իմ Տէր, ինձ ոգեւորի՛ր, որ ինձ եւ իմ ծնողներիս շնորհած շնորհքի համար զոհանամ եւ մի բարիք գործեմ, որ դու նրան հաւանես, եւ ինձ համար բարիքներ պատրաստի՛ր իմ զաւակների մէջը. ես քեզ եմ զարձեղ եւ ես միւսլիմ եմ»:

15. Սրանք են որոնց գործած բարի գործերը ընդունում են, եւ որոնց չար գործերիցը մենք անց ենք կենում. նրանք գրախտի ընկերների մէջն են այն ճըշմարիտ խոստման համեմատ, որ նրանց խոստացել է:

16. Բայց նա, որ իրան ծնողներին ասում է, «թի՛ւն ձեզ. դս՞ւք էք ինձ խօսք տալիս, որ ես դուրս եմ գալու գերեզմանից, մինչդեռ ինձնից առաջ սերունդներ են անցել գնացել»: Եւ նրանք պաղատում են Աստուծուն, եւ ասում, «վա՛յ քեզ, հաւատա՛, որովհետեւ Աստուծոյ խոստումը ճշմարիտ է»: Բայց նա ասում է, «սա միմիայն հիշերի առասպելներն են»:

17. Սրանք են, որոնց վրայ պիտի կատարուի այն խօսքը, որ ասւած է նրանցից առաջ անցած գնացած դեւերի եւ մարդկանց ազգերի մասին, այսինքն նրանք կորչելու են:

18. Եւ ամեն մէկի համար իրանց արածների փոխարէն հատուցման աստիճաններ կան, եւ նրանց ա՛ն իրաւութիւն չի լինի:

19. Եւ մի օր անհաւատները կրակին դէմ են տարւելու, թէ «դուք ձեր բարիքները ձեր աշխարհային կեանքում անցկացնելով վայելեցիք, եւ այսօր նախա-

տալի հատուցում էք ստանում նրա համար, որ երկրի վրայ ամբարտաւանանում էիք առանց կրաւունքի եւ ապականութիւն էիք գործում»:

20. Եւ յիշի՛ր Ադի եղբօրը, որ Ահգաֆում խրատում էր իր ժողովրդին, թէ եւ աչդէն նրանից առաջ եւ նրանից յետոյ խրատողներ եկել անցել էին, թէ միմիայն Աստուծուն պաշտեցէ՛ք: Ես ձեր մասին վախենում եմ մի մեծ օրւայ պատիժից:

21. Նրանք էլ ասացին, «դու եկար որ մեզ մեր մատուածներից հեռացնե՞ս. ուրիմն բե՛ր ինչ մեզ խոստանում ես. եթէ ճշմարտախօս ես»:

22. Նա էլ ասաց «գիտութիւնը միմիայն Աստուծոյ մօտ է, եւ ես ձեզ ներկայացնում եմ այն բանը, ինչո՞վ ես ուղարկւած եմ. բայց տեսնում եմ, որ դուք տըգէտ մարդիկ էք»:

23. Եւ երբ նրանք մի ամպ տեսան, որ յառաջանում էր դէպի նրանց հովիտները, ասացին, «սա մի ամպ է, որ անձրեւելու է մեզ համար»: Սակայն սա այն է, որի շուտով գալը ուզում էիք, մի մրրիկ է, որի մէջ ցաւալի տանջանք կայ»,

24. «Որ ամին բան աւերելու է իր Տիրոջ հրամանովը»: Եւ առաւօտը մի բան չը տեսան իրանց բնակարաններից ջոկ: Մենք այսպէս ենք հատուցանում յանցաւոր մարդկանց:

25. Եւ մենք նրանց բնակեցրել էինք նրանում, ինչպէս եթէ ձեզ բնակեցնէինք, եւ մենք նրանց տըւեցինք լսողութիւն եւ տեսողութիւն եւ սրտեր, բայց նրանց լսողութիւնը եւ տեսողութիւնը եւ ոչ էլ նրանց սրտերն իրանց մի բան օգնեցին, որովհետեւ նրանք հակառակում էին Աստուծոյ նշաններին, եւ նրանց բռնեց այն բանը, որ ծաղրում էին:

26. Բայց մենք բնաջինջ արեցինք ձեր շուրջը եղած զիւղերը եւ տեսակ տեսակ նշաններ տեցինք, որ դարձի գան:

27. Ուրիմն ինչո՞ւ չ'օգնեցին նրանց այն բաները որ

Աստուծոյ մօտենալիս ընդունել էին Աստուածանից ջուկ-
բայց նրանցից խոստրեցին: Եւ սա իրանց սուտն էր
եւ հնարած զրպարտութիւնը:

28. Եւ այն ժամանակ մենք մի քանի դուեր քեզ
մօտ դարձրեցինք, որ լսում էին Ղուբանը, եւ երբ նը-
բանք ներկայ էին լինում, ասում էին, «ուշադրու-
թիւն արէ՛ք»: Եւ երբ վերջացաւ, ետ դարձան իրանց
ազգի մօտ խրատելով:

29. Ասում էին, «ո՛վ մեր ազգ, մենք մի գիրք ենք
լսել, որ եկել է Մովսէսից յետոյ, որ հաստատում է ի-
րանից առաջ եղածը եւ որ առաջնորդում է դէպի ճշ-
մարտութիւնը եւ դէպի ուղիղ ճանապարհը»:

30. «Ո՛վ մեր ազգ, հնազանդեցէ՛ք Աստուծոյ հրա-
ւիրողին, եւ հաւատացէ՛ք նրան, որ նա ներէ ձեր
մեղքերը եւ ազատէ ձեզ ցաւալի տանջանքից»:


31. Եւ ով Աստուծոյ հրաւիրողին չի հնազանդի, նա
կարող չէ նւաճել երկրումը եւ նա բացի նրանից պաշտ-
պան չի ունենայ. նրանք յայտնի մօլորութեան մէջ են:

32. Մի՛թէ չհն տեսնում, թէ Աստուած է որ ստեղ-
ծել է երկինքը եւ երկիրը եւ նրանց ստեղծելիս չէ
յողնել որ կորոզ է մեռելներին կենդանացնել. այո՛,
նա ամենակարող է:

33. Եւ այն օրը, որ նրանց կը քաշեն կրակի առա-
ջը ասելով, «սա իրաւունքով չէ». կ'ասեն, «այո՛, մեր
Աստուածը վկայ է»: Նա էլ կ'ասէ, «արդ ճաշակեցէ՛ք
այն պատիժը որին չէիք հաւատում»:

34. Ուրեմն համբերի՛ր, ինչպէս ուրիշ հաստատամիտ
մարդարէներ էլ համբերել են, եւ մի՛ շտապեցնի՛ր նը-
բանց համար: Այն օրը որ նրանք կը տեսնեն իրանց
համար գուշակածը, նրանք այնպէս կը լինեն:

35. Որպէս թէ միայն մի օրւայ ժամ են մնացել, Մի
քարոզ է: Բայց սպականիչ մաքրկանցից էլ ո՛վ կը
կորչի:



47 ՍՈՒՐԷ ՄՈՒՀԱՄՄԷԴ

Մէգրինէական. քառասուն այլէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Նրանք, որ չեն հաւատում եւ Աստուծոյ ճանապարհիցը դուրս են գալիս, նա ծոցնեկու է նրանց գործքերը:

2. Իսկ նրանք, որ հաւատում են եւ բարիք գործում եւ հաւատում են այն բանին, որ իջեցրած է Մուհամմէդին, որ նա ճշմարիտ է նրանց Տիրոջ կողմից, նա կը թողնէ նրանց չարագործութիւնները եւ կ'ուզէ նրանց վիճակը:

3. Մա նրա համար է, որ չը հաւատացողները հետեւում են ունայնութեանը, իսկ հաւատացեալները հետեւում են ճշմարտութեանն իրանց Տիրոջ կողմից: Այսպէս օրինակներ է բերում Աստուած մարդկանց համար:

4. Ուրեմն երբ դուք հանդիպէք անհաւատներին, կտրեցէ՛ք նրանց վիզերը մինչեւ նրանց ջարդէք, գերեալների կապերը պնդացրէ՛ք:

5. Եւ յետոյ կա՛մ ձրի թող աւէք կա՛մ փրկանքով, երբ պատերազմը վերջացած կը լինի: Այսպէս: Եթէ Աստուած կամենար, նրանցից վրէժ կ'առնէր բայց կամենում է ձեզնից մէկին միւսի միջոցովը փորձէ. իսկ նրանք որ կրսպանուեն Աստուծոյ ճանապարհումը, նրանց գործքերը չեն կորչի:

6. Նա նրանց կ'առաջնորդէ եւ նրանց վիճակը կ'ուզէ:

7. Եւ նրանց կը մտցնէ գրախտը, որ նրանց իմացըրեկ է:

8. Ո՛վ հաւատացեալներ, եթէ օգնէք Աստուծուն, նա էլ ձեզ կ'օգնէ. եւ կը հաստատէ ձեր քայլերը:

9. Իսկ նրանք, որ չեն հաւատում, — թշւառութիւն նրանց, եւ նա կ'ոչնչացնէ նրանց գործքերը:

10. Սա նրա համար է, որ նրանք զզոււմ են Աստուծոյ իջեցրածիցը, ուրիմն կը կորչեն նրանց գործքերը:

11. Մի՞թէ նրանք ման չեն գալիս երկրի վրայ, որ տեսնեն, թէ ինչպէս է եղել իրանցից առաջ եղածների վախճանը: Աստուած քարուքանդ է արել նրանց, եւ նոյնպէս է լինելու եւ անհաւատներին:

12. Սա նրա համար է, որ Աստուած հաւատացեալների պաշտպանն է, բայց անհաւատները պաշտպան չ'ունին:

13. Ահա՛ Աստուած կը մտցնէ նրանց, որ հաւատում եւ բարիքներ են գործում, դրախտների մէջը որոնց տակովը գետեր են հոսում, իսկ նրանք որ անհաւատ են, վայելում եւ ուտում են ինչպէս անասուններն են ուտում. նրանց բնակարանը կրակն է:

14. Եւ քանի քաղաքներ մենք բնաջինջ ենք արել, որոնք աւելի զօրաւոր էին քան թէ քո քաղաքը, որ քեզ դուրս արեց, եւ նրանց օգնող չը կար:

15. Մի՞թէ նա իր Տիրոջ կողմանէ եղած յայտնութեան է հետեւում, նրա նման է, որի չար գործքը պատրաստած է, եւ որոնք իրանց հօճոյքին են հետեւում:

16. Ս'յն դրախտի նկարագրութիւնն է, որ խոստացւած է երկրեղածներին. նրանում անապական ջրի գետեր, համը չը փոխւող կաթի գետեր եւ խմողներին ախորժալի գինու գետեր:

17. Եւ մարութի մեղքի գետեր կան, եւ նրանց համար նրանում ամեն պտուղներ կան, եւ մեղաց թողութիւն իրանց Տիրոջ կողմանէ: Նման է նրան որ յաւիտեան կրակի մէջն է եւ ետացող ջուր են խմում, որ նրանց աղիքները կտոր կտոր են լինում:

18. Նրանցից կան ոմանք, որ քեզ ականջ են դրնում, մինչեւ քո մօտիցը դուրս են գալիս, ասում են

Նրանց, որոնց գիտութիւն է տրւած, «սա ի՞նչ էր որ հիմայ ասաց»: Սրանք են, որոնց սրտերի վրայ Աստուած կնիք է դրել եւ որոնք հետեւում են իրանց հաճոյքին:

19. Իսկ նրանք, որ առաջնորդութիւնն ընդունել են, նա աւելացնում է նրանց առաջնորդութիւնը եւ տալիս է նրանց իրանց երկիւղածութիւնը:

20. Մի՞թէ նրանք մի ուրիշ բան են սպասում քան թէ վերջին ժամը, որ յանկարծակի է գալու: Արդէն նրա պայմանները եկել են: Եւ նրանք ի՞նչպէս կընդունեն, երբ խրատը զայ նրանց համար:

21. Ուրեմն գիտացի՛ր, որ բացի Աստուածանից մի աստուած չը կայ եւ թողութիւն խնդրի՛ր քո մեղքի համար եւ հաւատացեալ մարդկանց եւ հաւատացեալ կանանց համար, եւ Աստուած գիտէ ձեռ վարքը եւ բնակութիւնը:

22. Եւ հաւատացեալներն ասում են, թէ «ինչո՞ւ չէ մի սուրէ իջեցնուած»: Բայց երբ մի վճռողական սուրէ իջեցնուի, եւ նրանում յիշած լինի կրօնքի պատերազմը, այն ժամանակ կը տեսնես նրանց, որոնց սրտերումը ծոութիւն կայ, քեզ մտիկ են տալիս այն աչքով իբր թէ մահը նրանց յախտակել է. բայց նրանց աւելի կը վայելէր հնազանգութիւն եւ օրինաւոր խօսք:

23. Բայց երբ վճիռը կայանայ նրանց համար աւելի լաւ կը լինէր, եթէ Աստուծուն ճշմարիտ համարէին:

24. Գուցէ դուք ետ դառնայիք, երկրի մէջ ապականութիւն գործէիք եւ արիւնակցութեան կապերը կըտրտէիք:

25. Սրանք են, որ Աստուած անիծել է եւ որոնց խուլացրել եւ աչքերը կուրացրել է:

26. Մի՞թէ նրանք չեն մտածում Ղուբանի վրայ, կամ թէ նրանց սրտերի վրայ կղպակներ կան:

27. Ահա՛ նրանք որ ետ ետ են դառնում երբ արդէն յայտնուել է նրանց առաջնորդութիւնը, սատանան խոտորեցրել է նրանց եւ լցրել է նրանց:

28. Սա նրա համար է որ նրանք Աստուծոյ իջեցրած իցը զգուղներին ասում են «մի քանի բաներում մենք ձեզ հնազանդելու ենք», բայց Աստուած գիտէ նրանց գազանիքները:

29. Այա ի՞նչպէս է, երբ հրեշտակները նրանց հոգիներն առնելիս ծեծեն նրանց երեսներն ու քամակները:

30. Սա նրա համար է որ նրան հետեւում են այն բանին, որ բարկացնում է Աստուծուն, եւ զգում են նրա հաճութիւնից: Բայց նա ոչնչացնելու է նրանց գործերը:

31. Կամ նրանք, որ իրանց սրտերումը ծռութիւն կայ, կարծող են, Աստուած նրանց վատութիւնը երբէք երեւան չի հանի:

32. Եւ եթէ կամենայինք, մենք քեզ ցոյց կը տայինք նրանց, եւ դու անպատճառ նրանց կը ճանաչէիր իրանց կերպարանքովը, եւ դու կը ճանաչես նրանց խկոյն նրանց բարբառիցը, եւ Աստուած էլ գիտէ ձեր գործերը:

33. Եւ մենք ձեզ փորձում ենք, մինչև իմանանք, թէ որոնք են ձեզնից պատերազմողները եւ համբարողները, եւ փորձում ենք ձեր համբաւները:

34. Ահա՛ նրանք, որ չեն հաւատում եւ չեղում են Աստուծոյ ճանապարհիցը, եւ հակառակում են մարգարէին, առաջնորդութիւնը նրանց յայտնելուց յետոյ, երբէք մի բան չեն վնասի Աստուծուն, եւ նրանց գործքերը կ'ոչնչանան:

35. Ո՛վ հաւատացեալներ, հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ հնազանդեցէ՛ք մարգարէին, եւ ձեր գործքերը մի՛ փճացնէք:

36. Ահա՛ նրանք, որ չեն հաւատում եւ չեղում են Աստուծոյ ճանապարհիցը, եւ յետոյ մեռնում են, մինչդեռ իրանք անհաւատ են, Աստուած նրանց երբէք չի ների:

37. Ուրեմն մի՛ զիջանէք եւ խաղաղութեան հրաւի-

րէք, քանի որ դուք յաղթողներն էք. եւ Աստուած
ձեզ հետ է, եւ նա ձեր գործքերը չի ոչնչացնի:

38. Ահա՛ այս աշխարհքի կեանքը միմիայն խաղ ու
կատակ է. եւ եթէ դուք հաւատաք եւ երկիւղած լի-
նէք, նա ձեզ կը տայ ձեր վարձքերը, եւ ձեր ստաց-
ւածքը չի պահանջի ձեզնից:

39. Եթէ նա դրանց պահանջէր ձեզնից եւ ձեզ բա-
տիպէր, դուք ազան կը լինէիր եւ ձեր վատութիւնը
դուրս կը գար:

40. Ահա՛ դուք այնպիսի կանչւածներ էք, որ Աս-
տուծոյ ճանապարհին համար նուէրներ տաք. բայց ձեզ-
նից ոմանք ազանութիւն են անում. եւ ով որ ազան
է իր անձի գէմ, իսկ Աստուած անկարօտ է բայց դուք
աղքատներ էք. եւ եթէ դուք ետ քաշէք, նա ձեզնից
զատ մի ուրիշ ժողովուրդ կը բերէ ձեր տեղը. եւ նը-
րանք ձեզ նման չ'են լինի:



48) ՍՈՒՐԷ ԱԼ-ՖԱԹՀ:

Մէդիւնէական. քսան ինը այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մենք քեզ համար մի յայտնի յաղթութիւն ենք
արել:

2. Որ Աստուած քեզ ներէ քո մեղքից անցածը եւ
մնացածը, եւ կատարէ քեզ վրայ իր շնորհքը եւ քեզ
առաջնորդէ ուղիղ ճանապարհով:

3. Եւ Աստուած քեզ օգնէ փառաւոր օգնութիւնով:

4. Նա է, որ իջեցրել է հովանին հաւատադիւնների
արտերի մէջ, որ նրանց հաւատքի հետ հաւատք աւե-

լացնէ: Եւ Աստուծունն են երկնքի եւ երկրի գունդերը. եւ Աստուած գիտուն իմաստուն է:

5. Որ հաւատացեալ մարդկանց եւ հաւատացեալ կանանց մտցնէ դրախաների մէջ, որոնց ատկովը գետեր են հոսում, որ նրանցում յաւիտեան մնան, եւ նրանցից քաւէ նրանց չարութիւնները. եւ սա Աստուծոյ կողմանէ մի մեծ փրկութիւն է:

6. Եւ նա պատժելու է կեղծաւորներին եւ կեղծաւորութիւններին եւ կոռուպտիւններին ու կոռուպտութիւններին եւ նրանց, որ Աստուծոյ մասին չար կարծիքներ են կարծում: Չար դարձեալք ինի նրանց վրայ եւ Աստուծոյ բարկութիւնը նրանց վրայ եւ նա անիծէ նրանց. եւ նա պատրաստել է նրանց համար դժոխք. եւ ի՛նչ վատ ընթացք է:

7. Եւ Աստուծունն են երկնքի եւ երկրի գունդերը, եւ Աստուած հօգօր իմաստուն է:

8. Մենք քեզ ուղարկեցինք իբրեւ լկայ եւ աւետող ու սպանացող.

9. Որ հաւատաք Աստուծուն եւ նրա մարգարէին, որ նրան օգնէք. նրան յարգէք եւ նրան օրհնարանէք առաւօտները եւ իրիկունները:

10. Իբաւ նրանք, որ քեզ են հաւատարմութիւն ուխտում, ա՛հա՛ նրանք Աստուծուն են հաւատարմութիւն ուխտում. Աստուծոյ ձեռքը նրանց ձեռնիբից վերեւ է. բայց ով ուխտը դժում է, նա իր հոգու դէմ է ուխտադրում լինում. իսկ ով կատարում է իր ուխտը որ մի բանի համար դրել է Աստուծոյ հետ. Աստուած նրան մեծ վարձք է տալու:

11. Արարներիցն այն անձինք, որ պատնարազօրից ետ մնացին, քեզ ասելու են, թէ «մեզ մեր ստացեալքները եւ մեր ընտանիքները մեզ զբաղեցրին. ուրեմն ներիբ մեզ». նրանք ասում են իրանց լեզուներովը այն ինչ որ չը կայ իրանց սրտերումը: Դու ասա՛՛ սով կարող է ձեզ մի բան օգնել Աստուծոյ դէմ, եթէ նա ձեզ մի վրաս տայ կամենայ, կամ ձեզ մէկ ոգուտ տալ

կամենայ: Սակայն Աստուած գիտէ ձեր դորձքերը:

12. Ոչ դուք կարծում էիք, թէ մարգարէն եւ հաւատացեալները բնաւ եւ յաւիտեան ետ չեն դառնալու իրանց ընտանիքների մօտը, եւ սա արդէն որոշած էր ձեր սրտերումը, բայց դուք չար կարծիք էիք կարծում, եւ դուք անպիտան մարդիկ էք:

13. Եւ ով Աստուծուն եւ նրա մարգարէին չէ հաւատում, ահա՛ մենք պատրաստել ենք անհաւատների համար դժոխքը:

14. Եւ երկնքի եւ երկրի իշխանութիւնը Աստուծունն է, նա ներում է, որին կամենում է, եւ պատժում է որին ուզում է, եւ Աստուած ներող ողորմած է:

15. Նրանք որ ետ են մնացել ձեր աւար անեղու ժամանակը, անպատճառ ասելու են, «թո՛ղ տէք ձեզ հետ գանք», ուզելով որ Աստուծոյ խօսքը փոխեն: Դուստա՛, «դուք մեզ հետ չէք գայ, այսպէս է ասել Աստուած առջուց»: Բայց նրանք ասելու են, «ո՛չ, այլ դուք մեզ նախանձում էք»: Սակայն միմիայն քիչերն էին հասկանում:

16. Դու ասա՛ արարներից ետ մնացողներին, «դուք շուտով կանչուելու էք մի խիստ չար ազգի դէմ, որ նրբանց դէմ պատերազմէք կամ միւսլիմ կը զանախ, արդ եթէ հնազանդէք, Աստուած ձեզ գեղեցիկ վարձք կը տայ, բայց եթէ ետ քաշէք ինչպէս առաջ ետ քաշուեցիք, նա ձեզ ցաւալի պատժով կը պատժէ:

17. Կոյրին համար յանցանք չէ եւ կաղին համար էլ յանցանք չէ եւ հիւանդին համար էլ յանցանք չէ. եւ ով հնազանդում է Աստուծուն եւ նրա մարգարէին, նրբան կը մտցնէ դրախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսուն, եւ ով ետ քաշի, նրան կը պատժէ ցաւալի պատժով:

18. Սակայն Աստուած գոհ էր հաւատացեալներիցը, երբ նրանք քեզ հաւատարմութեան ուխտ արեցին այն ծառին տակ, եւ նա գիտէր թէ ինչ կար նրանց սրբ-

տերութիւնը, եւ հովանին իջեց նրանց վրայ, եւ նա նըրանց մի մօտիկ յաղթութիւնով վարձատրեց :

19. Նաեւ շատ աւարներ առան՝ եւ Աստուած հզօր իմաստուն էր :

20. Եւ Աստուած ձեզ շատ աւարներ է խոստացել, որ անելու էք եւ սա միայն շտապով տւեց ձեզ, եւ մարդկանց ձեռքը ետ քաշեց ձեզնից, որ սա մի նշան լինի հաւատացեալնիրի համար եւ որ նա ձեզ ուղիղ ճանապարհով առաջնորդէ :

21. Եւ մի ուրիշն էլ, որ կարողութիւն չունեցաք նրա վրայ, բայց Աստուած նրան չըջապատել է, եւ Աստուած ամենակարող է :

22. Եւ եթէ անհաւատները քեզ դէմ պատերազմէին, անշուշտ ետ կտ պիտի դառնային, եւ մի պաշտպան չէին գտնի եւ ոչ էլ մի օգնական :

23. Աստուծոյ կանոնն է սա, որ արդէն վաղուց եղած է, եւ դու Աստուծոյ կանոնի մասին փոփոխութիւն չես գտնի :

24. Եւ նա է, որ նրանց ձեռները ձեզնից ետ պահեց եւ ձեր ձեռները նրանցից ետ պահեց Մէքքէի հովիտումը, երբ ձեզ յաղթութիւն էր տւել նրանց դէմ, եւ Աստուած ձեր արածները տեսում է :

25. Նրանք էին, որ անհաւատ են եւ ձեզ սուրբ տաճարիցը հեռացրեցին եւ ընծան ետ մերժեցին, որ իրան տեղը չըհասնէ : Եւ եթէ հաւատացեալ մարդիկ եւ հաւատացեալ կնիկներ եղած չըլինէին, որոնց դուք չէիք ճանաչում, նրանց կոխ տւած կը լինէիք, եւ ձեզ չ'իմանալով մի յանցանք պատահած կը լինէր : Աստուած մացնում է իր ողորմութեան մէջ, որին ուզում է : Եթէ նրանք միմեանցից զտուած լինէին, մենք նրանցից անհաւատ եղողներին անպատճառ ցաւալի պատիժով կը պատժէինք :

26. Երբ անհաւատների սրտերումը համառութիւնը հաստատուեց, եւ Աստուած իր հովանին ուղարկեց իր մարգարէի եւ հաւատացեալների վրայ եւ ամրացրեց

Նրանց համար երկիր զածութեան խօսքը, եւ նրանք արժանի էին նրան, եւ նրանց էր վայելում, եւ Աստուած ամենագէտ էր:

27. Աստուած էլ ճշմարտացրեց իր մարգարէի տեսիլքը իբր աւուռնքով, թէ «դուք մանելու էք սուրբ տաճարը, եթէ Աստուած կամենայ, ապահով՝ ձեր գլուխներն ածիլած եւ ձեր մազերը կտրած՝ առանց վախի. նա գիտէ ինչ դուք չբարեկէր, եւ բաց ի դմանէ մօտիկ յաղթութիւն էլ է նշանակել:

28. Նա է, որ ուզարկել է իր մարգարէին առաջնորդութեամբը եւ ճշմարիտ կրօնքովը, որ նրան յաղթել տայ ամեն կրօնքներ ի վրայ. եւ Աստուծոյ վկայութիւնը բաւական է:

29. Մուհամմէդը Աստուծոյ մարգարէն է, եւ նրանք որ նրա ձեռ են անհաւատների դէմ խիստ են, ողորմասիրտ իրանց մէջը. դու կը տեսնես նրանց ձեռք երկրպագութիւն անելիս որ Աստուածանից շնորհք են խնդրում եւ նրա հաճութիւնը. իրանց կերպարանքը ունի երկրպագութեան նշանը իրանց երեսների վրայ: Նրանց նկարագրութիւնը Օրէնքումը եւ Աւետարանումը սա է թէ ինչպէս ցանքս հանում է իր ծիլը եւ նրան զօրացնում եւ հաստացնում, եւ նա կանգնում է իր բունին վրայ եւ զարմացնում ցանողին, որ բարկացնէ անհաւատներին: Աստուած խօստացել է նրանց, որ հաւատում եւ բարիք են գործում, թողութիւն եւ մեծ վարձք:



49) Ս Ո Ւ Ր Է Ս Ա Ն Հ Է Ճ Է Ր Ա Թ

Մէդիներէական. տասներ ութը այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ո՛վ հաւատացեալներ, Աստուածանից եւ նրա մարգարէից ատաջ մի՛ անցնէք, եւ վախեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ Աստուած լսող իմացող է:

2. Ո՛վ հաւատացեալներ, ձեր ձայները մարգարէի ձայնիցը վեր մի՛ բարձրացնէք եւ դուք միմեանց հետ խօսելու պէս նրա հետ համարձակ մի՛ խօսէք, որ ձեր գործքերը չ'ոչնչանան որ դուք չէք հասկանում:

3. Իրաւ նրանք, որ իրանց ձայները խոնարհեցնում են Աստուծոյ մարգարէի մօտ, Աստուած փորձում է նրանց սրտերը երկիրդածութեան համար. նրանց համար թողութիւն եւ մեծ վարձք կայ:

4. Կամ նրանք, որ քեզ կանչում են սենեակների եւ տելից, նրանցից շատերը չեն հասկանում:

5. Իսկ եթէ նրանք համբերէին մինչեւ նա դուրս գար նրանց մօտ, նրանց համար աւելի լաւ կը լինէր. եւ Աստուած ներող ողորմած է:

6. Ո՛վ հաւատացեալներ, եթէ ձեզ մօտ մի չարագործ գայ մի տեղեկութիւնով, դուք քննեցէ՛ք, մի ազգի չը դպչէք տգիտութեամբ եւ յետոյ ձեր արածի վրայ զղջաք:

7. Ուրեմն իմացէ՛ք, ձեր միջումը Աստուծոյ մարգարէն կայ, եթէ նա շատ բաներում ձեզ հնազանդի, դուք թշառ կը լինէիք. բայց Աստուած ձեզ սիրելի տւեց հաւատքը եւ նրան պատրաստեց ձեր սրտերումը եւ զգւելի արեց ձեզ համար անհաւատութիւնը, չարագործութիւնը եւ ապստամբութիւնը. սրանք են ճշմարիտ ճանապարհով գնացողները:

8. Որ դա չնորհք եւ ողորմութիւն է Աստուծոյ կողմից, եւ Աստուած գիտացող իմաստուն է :

9. Նաև եթէ երկու հաւատացեալ ցեղեր իրար հետ երբ պատերազմեն, նրանց մէջ հաշտութիւն գցեցէ՛ք. իսկ եթէ նրանցից մէկը բո՛րոտանայ միւսի դէմ, այն ժամանակ այն բո՛րոտացածի հետ պատերազմ արէ՛ք մինչեւ ետ դառնայ Աստուծոյ հրամանին. եւ եթէ դարձաւ. հաշտեցրէ՛ք նրանց արդարութեամբ եւ իրաւունքով, որովհետեւ Աստուած սիրում է իրաւարարներին :

10. Որովհետեւ հաւատացեալները եղբայրներ են, ուրեմն ձեր եղբայրների մէջ խաղաղութիւն գցեցէ՛ք. եւ վախեցէ՛ք Աստուածանից որ ողորմութիւն գտնէք :

11. Ո՛վ հաւատացեալներ, մի ազգ չըզխտի ծաղրէ միւս ազգին, թէ եւ ինքը նրանցից լաւ էլ լինի. եւ ոչ էլ մի կնիկ ծաղրէ արիչ կնկան թէ եւ ինքը նրանցից աւելի լաւ էլ լինի. եւ միմեանց մի՛ բամբասէք եւ իրար մի՛ վատաբանէք գէշ մականուններով : Հաւատալուց յետոյ այդ անունը անզգամութիւն է : Եւ ով չհազաշխարէ, այնպիսիները ամբարիշտներ են :

12. Ո՛վ հաւատացեալներ. շատ կարծիքներ անելուց զգուշացէ՛ք, որովհետեւ կարծիքներ կան որ մեղք են. եւ հարցուվորձ մի՛ անէք. եւ մէկը միւսիցը չը բամբասէ. ձեզնից մէկը կուզէ՞ արդեօք իր եղբօր մեռած մարմինն ուտէ. դուք կը զուէք դրանից. ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ Աստուած զգացող ողորմած է :

13. Ո՛վ մարդիկ, մենք ձեզ արու եւ էգ ենք սոեղծել, եւ ձեզ ցեղեր եւ տոհմեր ենք շինել. որ մրմնանց հետ ծանօթութիւն անէք : Իրաւ ձեզնից ամենից շատ սպասուելոյրը Աստուծոյ անաջին ձեր ամենից երկխղածն է. անա Աստուած գիտացող տեղեակ է :

14. Անազատի արաքներն ասում են, թէ «մենք հաւատում ենք», ասա՛ «դուք չէիք հաւատում, այլ տանցէ՛ք, «մենք միւսլիմ ենք» . բայց հաւատքը դեռ չէ ստեղծել ձեր սրտերի մէջ. եւ եթէ դուք հնազանդէք Աս-

տուծուն եւ նրա մարգարէին նա ձեր գործքերիցը մի բան չի պակասացնի. որովհետեւ Աստուած ներող ուղորմած է :

15. Հաւատացեալ անա՛ միայն նրանք են, որ հաւատում են Աստուծուն եւ նրա մարգարէին եւ էլ չեն երկմտում եւ կրօնքով պատերազմ են անում իրանց բատացւած քներովը եւ անձերովը՝ ասուծոյ ճանապարհում. նրանք են ճշմարտախօսները :

16. Դու ասա՛, զուք Աստուծո՞ւն էք սովորեցնում ձեր կրօնքը. եւ Աստուած պիտէ թէ ինչ կայ երկնքումը եւ երկրումը. եւ Աստուած ամենագէտ է :

17. Նրանք քեզ երախտապարտ են անում, որ միւսլիմ են եղել : Դու ասա՛. « զուք ինձ երախտապարտ մի՛ անէք ձեր իսլամութեան համար. հապա Աստուած է ձեզ երախտապարտ անում որ ձեզ առաջնորդել է գէպի հաւատքը, եթէ զուք ճշմարտախօս էք :

18. Աստուած անա՛ գիտէ երկնքի եւ երկրի գաղտնիքը, եւ Աստուած տեսնում է թէ զուք ինչ էք անում :



50) ՍՈՒՐԷ՛ Գ.

Մէքքէական. քառասուն հինգ այէ :

Գլխած ուղորմած Աստուծոյ անունովը :

1. Գ. Երգնում եմ փառաւոր Ղուրանովը. . . .
2. Սակայն զարմացել են, որ իրանցից մի խրատող է կել իրանց մօտ. եւ տնհաւատներն ասում են, սա մի զարմանալի բան է :
3. Մի՞թէ երբ մենք մեռած եւ հող դարձած լինենք. . . . սա մի հեռու դարձած է :

4. Մենք գիտենք արգէն, թէ հողը նրանցից ինչ է պակասացրել, եւ մեզ մօտ կայ հսկող գիրքը:

5. Սակայն նրանք սուտ համարեցին ճշմարտութիւնը երբ եկաւ իրանց մօտ. իսկ նրանք մի աստանող գործի մէջ են:

6. Մի՞թէ նրանք չեն նայում երկնքին՝ դէպի վեր, թէ մենք նրան ինչպէս ենք շինել եւ զարգարել եւ նա ճեղքւածքներ չունի:

7. Նաեւ երկիրը տարածել ենք եւ նրանում սարերը գրել եւ նրանից բուսցրել ամեն անասի զարծալի բոյս:

8. Իբրեւ մտածողութեան նիւթ եւ յիշեցողիչ ամեն մի զգացող ծառայի համար:

9. Մենք էլ երկնքից օրհնեալ ջուր ենք իջեցնում եւ նրանով ծառաստաններ բուսցնում եւ հունձքի սերմը:

10. Եւ բարձր արմաւենին պտղալից ճիւղերովը:

11. Իբրեւ ապրուստ իմ ծառաների համար, եւ մենք նրանով կենդանացնում ենք մեռած երկիրը: Այսպէս է եւ յարութիւնը:

12. Նրանցից առաջ սուտ համարեցին Նոյի ժողովուրդը եւ Ռասի եւ Սամուսի բնակիչները:

13. Աղացիք եւ Փարաօնը եւ Ղուտին եղբայրները եւ Էյֆէի մարդիկը եւ Թուբրայի ժողովուրդը: Ամեն մէկը սուտ էր համարում մարգարէներին, բայց կատարւեց իմ խոստացածը:

14. Մի՞թէ մենք յոգնել ենք առաջի ստեղծագործութիւնովը. բայց նրանք կասկածի մէջ են նոր ըստեղծման մասին:

15. Սակայն մենք ստեղծեցինք մարդը եւ գիտենք թէ նրան ինչպէս է հրապուրում նրա անձը. բայց մենք աւելի մօտ ենք նրան քան թէ նրա վզի կրակը:

16. Եւ երբ պատահողները պատահում են նրան աջ եւ ձախ կողմին նստած,

17. Նա մի խօսք էլ չէ արտասանում, այլ նրա մօտ կայ պատրաստ հսկող:

18. Իրաւ գալիս են մահւանց ցաւերը, որոնցից գուփախչել պրծնել էիր ուզում:

19. Փողն էլ կը փչւի: սա սպառնալեաց օրն է:

20. Եւ ամեն մի հոգի կըզայ հետը մի քշող եւ մի վկայ:

21. Թէ «դու այս մասին անհոգ էիր, բայց մենք վերցրեցինք քեզնից ծածկոցը եւ քո աչքն այսօր սուր է:

22. Ընկերն էլ կ'ասէ, «սա է որ պատրաստ է ինձ մօտ:

23. «Գցեցէ՛ք դժոխքի մէջը ամեն յամառ անհաւատին»:

24. «Որ արգելում էր բարին, նեղացնում էր կասկածելով»:

25. «Որ Աստուծոյ հետ միասին ուրիշ աստուած էր շինում, ուրեմն գցեցէ՛ք խիստ պատժի մէջը»:

26. Նաեւ ընկերը կ'ասէ, «ո՛վ մեր Տէրը, ես չեմ նրան ապստամբացրել, այլ ինքն էր խոր մոլորութեան մէջ»:

27. Նա էլ կ'ասէ, «ինձ մօտ կաիւ մի՛ անէք, ես արդէն առաջուց եմ ձեզ զգուշացրել սպառնալիքով»:

28. Ինձ մօտ խօսքը չի փոխւի, ես իմ ծառաներիս անիրաւութիւն չեմ անի»:

29. Նոյն օրը մենք ասելու ենք դժոխքին, «արդեօ՞ք լցւել ես», եւ նա էլ կ'ասէ, «արդեօ՞ք աւելորդ կայ»:

30. Եւ դրախտն էլ կը մօտեցնւի բարեպաշտներին ոչ հետու:

31. Սա է որ ձեզ խոստացւել է, ամեն մի դարձողի հսկողի:

32. Նա որ երկնչում է Ողորմածիցը ծածուկ տեղը եւ գալիս է զղջացող սրտով:

33. Մտէ՛ք նրա մէջը խաղաղութիւնով, սա յաւիտենականութեան օրն է:

34. Նրանց համար կայ նրանց մէջ իրանց ուզածը, եւ մեզ մօտ կայ աւելորդ :

35. Մենք էլ քանի՛ քանի՛ սերունդներ ենք բնաջինջ արել նրանցից առաջ. որ աւելի զօրաւոր էին այժուի : Արդ պատեցէ՛ք երկիրների մէջ, թէ արդեօ՞ք մի ապաստանարան կայ :

36. Ահա՛ սրանում մի յիշեցնող բան կայ նրա համար որ սիրտ ունի, կամ ազանջ է դնում եւ վկայ է :

37. Մենք էլ երկիրքն ու երկիրը եւ նրանց մէջ եղածը ստեղծել ենք վեց օրւայ մէջ, եւ մեզ մի յոգնութիւն չէ դպչած :

38. Ուրեմն համբերի՛ր ինչ որ ասում են եւ օրհնաբանի՛ր քո Տիրոջ օրհնութիւնովը արեգակի ծագելուց առաջ եւ արեգակի մանելուց առաջ :

39. Գիշերիցն էլ մի մասում օրհնի՛ր նրան, նաեւ երկրպագութիւնից յետոյ :

40. Ուրեմն լսի՛ր այն օրը որ կանչողը կը կանչէ մօտիկ տեղից :

41. Նոյն օրը, որ իրաւ կը լսես գոչումի ձայնը, սա յարութեան օրըն է :

42. Մենք կենդանացնում ենք եւ մեռցնում ենք, եւ դէպի մեզ է ետ դառնալը :

43. Նոյն օրը, որ երկիրը կը ճեղքուի, նրանից կը վազեն. սա յարութիւնն է. սա հեշտ է մեզ համար :

44. Մենք գիտենք թէ նրանք ինչ են ասում. դու նրանց վրայ ստիպող չես :

45. Ուրեմն դու զգուշացո՛ւր Ղուրանով նրան, որ իմ սպառնալիքիցը վախենում է :



51 ՍՈՒՐԷՆ ԱՉ-ՉԱՐԻԱԹ

Մէքքէական. վաթսուսն այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը.

1. Երդնում եմ ցրիւ ցրողունիներով:
2. Երդնում եմ ծանրութիւն կրողունիներով.
3. Երդնում եմ թեթեւ վազողունիներով.
4. Երդնում եմ հրամանը բաժանողունիներով.
5. Որ այն ձեզ խոստացւածը ճշմարիտ է.
6. Նաեւ դատաստանը իրողութիւն է.
7. Երդնում եմ ուղիներ ունեցող երկնքովը,
8. Որ գուք հակասող խօսքի մէջ էք:
9. Նրանից ետ կը դարձեի, ով որ ետ է դարձել:
10. Մորթեալն սախօսները,
11. Որոնք անդունդներում խարխափում են:
12. Նրանք հարցնում են դատաստանը օրւայ համար.
13. Այն օրւայ մտին, որ կրակին վրայ փորձելու են.
14. Ընչակեցէ՛ք ձեր այս փորձելը, որ դուք ուղում էիք նրա շուտով գալը:
15. Իսկ երկիւղածները դրախտների եւ աղբիւրների մէջ են լինելու:
16. Նրանք ընդունելու են ինչ որ իրանց Տէրն իրանց կրտայ, որովհետեւ նրանք սրանից առաջ բարիք էիք գործում:
17. Գիշերւայ մի փոքր մասը քնում
18. Առաւօտներն էլ թողութիւն էին խնդրում:
19. Նաեւ նրանց ստացւածքներուժը ազքատի եւ զրկւածի համար բաժին կար:
20. Երկրի վրայ նշաններ էլ կան հաստատահաւատների համար.
21. Նաեւ ձեր անձերումը. մի՞թէ չէք նկատում:
22. Ուրեմն երկնքումն է ձեր ապրուստը, նաեւ ինչ որ ձեզ խոստացւած է:

23. Նաեւ երկնքի եւ երկրի Տէրը վկայ է, որ նա ճշմարիտ է հէնց այնպէս ինչպէս որ դուք էք խօսում:

24. Արդեօք հասել է քեզ Արրահամի յարգելի հիւրերի պատմութիւնը:

25. Իսկ երբ նրա մօտ մտան եւ ասացին «խաղաղութիւն», նա էլ ասաց, «խաղաղութիւն, ո՛վ անծանօթ մարդիկ»:

26. Նա կամաց զնաց իր ընտանիքի մօտ եւ եկամբի գէր որթ բերեց,

27. Նրան էլ զրեց նրանց առաջին ասելով, «օ՛ն, կերէ՛ք»:

28. Բայց վախով սոսկում էր նրանցից. նրանք էլ ասացին, «մի՛ վախիր», եւ նրան մի խելօք տղայի աւետիքը տւեցին:

29. Նրա կինն էլ առաջ եկաւ աղաղակելով եւ երեսը ձեռնհրովը ծածկած ասաց, »մի պառաւ ամուլ»:

30. Նրանք էլ ասացին, «այսպէս է ասել քո Տէրը՝ նա է իմաստունը գիտունը»:

31. Իսկ նա ասաց, «ի՞նչ է ձեր յանձնարարութիւնը, ո՛վ պատգամաւորներ»:

32. Նրանք էլ ասացին, «մենք ուղարկւած ենք մի յանցաւոր ժողովրդի մօտ»:

33. «Որ նրանց վրայ կաւից քարեր թափենք»,

34. Նշանագրւած քո Տիրոջ մօտ անառակներին համար»,

35. «Որ հանենք նրանում եղած հաւատացեալներին»:

36. «Բայց մենք նրանում միմիայն մի տուն գտանք միւսլիմների»:

37. Իսկ մենք նրանում մի նշան թողուցինք նրանց հտմար, որ ցաւալի պատժից վախում են»:

38. Նաեւ Մովսէսում նշան կար, երբ նրան յայտնի ապացոյցով Փարաօնի մօտն ուղարկեցինք:

39. Նա էլ իր մեծամեծներովը քամակը դարձրեց նրան եւ ասաց, «կախարդ է կամ գիւհար»:

40. Ու մենք նրան բռնեցինք եւ նրա գունդերին էլ

եւ չարեացինք ծովի մէջը, որովհետեւ նա պախարակելի էր :

41. Աղումն էլ նշան կար. երբ նրանց վրայ ուղարկեցինք աւերիչ փոթորիկը :

42. Որ մի բան չթողուց, որ նրա վրայով անցնելիս նրան փոշու պէտ արած չը լինէր :

43. Սամուգում էլ նշան կար, երբ ասեց նրանց, «վայելեցէ՛ք մի՛նչեւ մի ժամանակ» :

44. Բայց նրանք զանց արեցին իրանց Տիրոջ հրամանը եւ որոտալից մըրիկը բռնեց նրանց. եւ նրանք մտիկ էին անում :

45. Իսկ նրանք չէին կարողանում կանգնել եւ օգնութիւն չհղաւ նրանց :

46. Նոյի ժողովուրդն էլ նրանից առաջ ապականիչ ժողովուրդ էին :

47. Մենք էլ շինել ենք երկիրքը զօրութեամբ եւ մենք էլ տարածել ենք նրան :

48. Ու փռել ենք երկիրը. ի՛նչ շնորհալի բնակատեղ :

49. Նաեւ ամեն բանից զոյգ ենք ստեղծել, սր մտածէք :

50. Ուրեմն վախէ՛ք Աստուծոյ մօտ. ես նրա կողմից ձեզ համար յայտնի խրատող եմ :

51. Աստուծոյ հետ էլ մի ուրիշ աստուած չը շինէ՛ք, եւ նրա կողմից ձեզ համար յայտնի խրատող եմ :

52. Այսպէս էլ նրանցից առաջ նրանց մօտ մի մարգարէ չէ եկել, որ չասէին, «կախարդ է կամ դիւահար է» :

53. Արդեօ՞ք ժառանգել են այս. բայց նրանք մի ապստամբ ժողովուրդ են :

54. Հիմայ ետ գնայ նրանցից, եւ դու պաքսաւելի չես լինի :

55. Դու էլ յիշեցու՛ւր, որովհետեւ յիշելը օգուտ կը բերէ հաւատացեալներին :

56. Իսկ ես դեւերին եւ մարդկանցը միայն նրա հաւմար ստեղծեցի որ ինձ ծառայեն:

57. Նրանցից ես ապրուստ չեմ ուզում եւ չեմ ուզում որ ինձ կերակրեն:

58. Ահա՛ Աստուած է կերակրողը, զօրութեան տէր՝ հաստատը:

59. Նրանք էլ որ անիրաւութեամբ մեղանչում են, նման են իրանց ընկերների մեղքերին, նրանք չեն շտապեցնի պատիժը:

60. Բայց վա՛յ նրանց որ չեն հաւատում այն օրւայ մասին որ իրանց սպառնացւում է:



52) ՍՈՒՐԷ ԱԹ-ԹՈՒՐ:

Մէքքէական, քառասուն ինը այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգնում եմ թուրովը.
2. Երգնում եմ գրւած գիրքովը,
3. Որ տարածւած մագաղաթի վրայ է.
4. Երգնում եմ շէն՝ տունովը.
5. Երգնում եմ քարձրացեալ ձեղունովը,
6. Երգնում եմ ուռած ծովովը,
7. Որ քո Տիրոջ պատիժը իրողութիւն է.
8. Նա ետ մղող չ'ունի:
9. Նոյն օրը երեքալով երեքալու է երկինքը.
10. Սարերն էլ գնալու են ման գալու.
11. Իսկ վա՛յ այն օրը սուտ հանողներին,
12. Որոնք զւարճանում են վիճարանութեամբ.
13. Նոյն օրը որ շարաւելով կը գցենն դժոխքի կը-բակի մէջը,

14. Թէ սա այն կրակն է, որ դուք սուտ էիք համարում:

15. Հիմայ սա կախարդութիւն է, կամ թէ դուք չէք տեսնում:

16. Նրանում այրեցէ՛ք. թէ կուզ համբերէք կամ չը համբերէք, ձեզ համար միեւնոյնն է. դուք միմիայն ձեր արարքի հատուցումն էք ստանում:

17. Երկիրաճներն ահա՛ երանելի դրախների մէջ են.

18. Նրանք վայելում են այն, ինչ որ իրանց Տէրը տեղ է իրանց, եւ իրանց Տէրը նրանց պահպանում է գոտիքի տանջանքիցը:

19. Կերէ՛ք եւ խմեցէ՛ք համարձակօրէն ձեր արածների համար.

20. Կոթնելով շարած գահերի վրայ, եւ մենք նրանց կ'ամուսնացնենք սեւ սեւ աչքեր ունեցող կոյսերի հետ:

21. Նրանք էլ որ հաւատում են եւ իրանց զաւակներն էլ իրանց հետեւում են հաւատքով, մենք նրանց զաւակներին կը միացնենք իրանց հետ եւ նրանց գործերիցը ոչ մի բան չենք պակասացնի: Ամեն մարդ իր արարքի գրաւականն է:

22. Մենք էլ նրանց կը մատակարարենք պտուղներ եւ միս՝ ինչ որ կ'ախորժեն:

23. Նրանք այնտեղ միմեանց կ'առաջարկեն բաժակներ, որոնցում չը կայ վատ խօսք եւ ոչ յանցանք:

24. Նրանց մօտով շուռ են գալիս տղաներ, որ կարծես թէ պահած մարգարիտներ են:

25. Նաեւ միմեանց մօտենալով հարցնում են իրարից,

26. Ասելով, «մենք առաջ մերիների համար երկիր ունէինք,

27. Բայց Աստուած մեզ երախտիք է արել եւ մեզ պատսպարել է այրող տանջանքիցը:

28. Իրաւ մենք առաջ նրան էինք կանչում, որովհետեւ նա է մաքուր ողորմածը:

29. Ուրեմն յիշեցո՛ր, որ դու քո Տիրոջ ողորմութիւնովը ոչ վճուկ ես եւ ոչ զիւահար»:

30. Կամ թէ ասելու են, «բանաստեղծ է, մենք ըսպասում ենք նրա հետ ժամանակի որոշմանը»:

31. Դու ասա՛, «սպասեցէ՛ք, ես էլ ձեզ հետ սպասում եմ»:

32. Կամ նրանց երազներն են իրանց հրամայում այս բանը կամ նրանք աստատմբ մարդիկ են:

33. Կամ ասում են, «նա է նրան շարահիւսում».

այո՛, նրանք չեն հաւատում:

34. Հիմայ թո՛ղ նրա պէս մի խօսք բերեն, եթէ ճշմարտախօսներ են.

35. Կամ նրանք մի ուրիշ բանից են ստեղծւած, կամ իրանք են ստեղծողներ:

36. Կամ ստեղծել են երկիրքն ու երկիրը, բայց նըրանք համողւած են:

37. Կամ քո Տիրոջ գանձերը նրանց մօտ է՝ կամ նրանք իշխանու թիւն ունեցողներ են:

38. Կամ մի սանդուղք ունեն որ երկնքի գաղտնիքն են շում, թո՛ղ ուրեմն նա իր լսածը բերէ հաստատ ապացոյցով:

39. Կամ նա ազջիկնե՞ր ունի եւ դուք տղերք:

40. Կամ թէ նրանցից մի վարձատրութիւն կ'ուզես, որ նրանք ծանրարեւում են պարտքերով:

41. Կամ նրանց մօտ է գաղտնի՞քը, եւ նրա՞նք են գրում.

42. Կամ նրանք մի նենգութիւն են ուզում, եւ անհաւասաներին իրանց է ինելու նենգութիւն:

43. Կամ նրանք բացի Աստուածանից մի ուրիշ աստուած ունին սուրբ է Աստուած այն բաներից, որ ընկերներ են գնում:

44. Եւ եթէ տեսնեն, որ երկնքիցը մի կտոր վար է ընկնում, կ'ասեն, «մի թանձր ամպ է»:

45. Ուրեմն թո՛ղ տուր գրանց, մինչեւ կը հասնեն իրանց այն օրւան, որ նրանում կը նւաղեն:

46. Այն օրը, որ իրանց նենգութիւնը ոչինչ չի օգնի
իրանց, եւ օգնութիւն էլ չի լինի նրանց:

57. Եւ անիրաւների համար սրանից զատ էլ պատիժ
կայ, բայց նրանցից շատերը չը գիտեն:

48. Ուրեմն համբերի՛ր քո Տիրոջ վճռին. ահա՛ դու
մեր աչքի առաջքն ես, եւ փառաբանի՛ր Տիրոջդ օրհն-
անելով երբ կանգնում ես,

49. Եւ գիշերն էլ, եւ օրհնի՛ր նրան աստղերից յե-
տոյ:



53) Ս Ո Ւ Ր Է Ա Ն - Ն Ա Ճ Մ :

Մէքքէական. վաթսուէն երկու այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգնում եմ այն աստղովը, որ մար է մտնում.
2. Ձեր ընկերը մոլորած չէ եւ չէ սխալած.
3. Եւ իր հաճոյքիցը չէ խօսում.
4. Միմիայն յայտնութիւն է, որ յայտնում է:
5. Նրան սովորեցնում է մի խիստ զօրաւորը,
6. Մի ոյժի տէրը, որ յետոյ կանգնեց,
7. Եւ ինքը բարձր հորիզոնի վրայ էր.
8. Յետոյ մօտեցաւ եւ մօտը եկաւ.
9. Եւ եղաւ մինչեւ երկու աղեղի հեռաւորութիւն:
10. Եւ յայտնեց իր ծառային ինչ որ յայտնեց.
11. Սիրտը չը խաբեց ինչ որ տեսաւ.
12. Դուք հիմայ վիճում էք նրա տեսածի վրայ.
13. Նա էլ նրան տեսաւ մի ուրիշ անգամ իջած.
14. Վերջին յուսաս ծառի մօտը,
15. Որի մօտ էր բնակավայր գրախտը:

16. Իսկ երբ ծածկեց լուտաս ծառը ինչ որ ծածկեց,
17. Աչքը չը խտտուեց եւ չափազանցութիւն չ'արեց.
18. Բայց իր Տիրոջ մեծ գործքերը տեսաւ:
19. Դուք ի՞նչ էք կարծում Ալ-Լաթի եւ Ալ-Ուզզայի մասին:
20. Նաեւ Մանաթը, որ երրորդն է:
21. Մի՞թէ դուք արուններն ունէք եւ նա էգե՞րը:
22. Սա այն ժամանակ մի օնիրաւ բաժանում է.
23. Սա միմիայն անուներ եւ որ դուք եւ ձեր հայրերը անւանել էք. Աստուած այդ մասին հրաման չէ իջեցրել. նրանք միմիայն կարծիքի են հետեւում եւ այն բանին, որ սրտերը ցանկանում են. բայց իրանց Տիրոջ կողմանէ արդէն եկել է առաջնորդութիւնը:
24. Կամ մի՞թէ մարդ կը ստանայ իր ուզածը.
25. Բայց Աստուծունն է վերջինը եւ առաջինը:
26. Իսկ ո՞րքան հրեշտակներ կան երկնքումը, որոնց բարեխօսութիւնը ոչինչ օգուտ չ'ունի,
27. Բացի նրանից, որ Աստուած հրաման տւած լինի նրան, որ ուզում է եւ հաւանում է:
28. Նաեւ նրանք, որ միւս աշխարհքին չեն հաւատում, հրեշտակներին իզական անուներով են կոչում:
29. Բայց նրանք այդ մասին գիտութիւն չունեն. նրանք միմիայն կարծիքի են հետեւում, սակայն կարծիքը ոչինչ օգուտ չունի ճշմարտութեան նկատմամբ:
30. Դու հեռացի՛ր նրանից, որ ետ է քաշւում մեր խրատից, եւ միմիայն այս աշխարհքի կեանքն է ու գում:
31. Սա է նրա գիտութեան ստացւածքը. Քո Տէրը լաւ գիտէ, թէ ով է նրա ճանապարհիցը շեղւել, եւ նա լաւ գիտէ, թէ ով է առաջնորդութեան մէջ:
32. Ուրեմն Աստուծունն է, ինչ որ կայ երկնքումը, եւ ինչ որ կայ երկրումը, որ հատուցանէ չարութիւն գործողներին եւ բարիք վարձատրէ բարութիւն անողներին:

33. Որոնք զգուշանում են մեծ մեղքերից եւ անառակութիւններից, բացի փոքր մեղքերից: Իրաւ քո Տէրը թողութիւնով առատ է. նա լաւ ճանաչում է ձեզ երբ ձեզ ստեղծեց հողիցը եւ երբ դուք սաղմն էիք ձեր մայրերի արգանդներումը: Ուրեմն ձեզ մի՛ արգարացնէք. նա լաւ գիտէ, թէ ով է բարեպաշտ:

34. Ի՞նչ ես կարծում նրա մասին, որ ետ է քաշւում,

35. Տալիս է նաեւ մի քիչ եւ ետ պահում.

36. Մի՞թէ նրա մօտ գաղտնիքի գիտութիւնը կայ, որ նա տեսնում է.

37. Կամ նա տեղեկութիւն չէ՞ ստացել, թէ ի՞նչ կայ Մովսէսի գրքերումը:

38. Արբահամի գրքերումն էլ, որ հաւատարմութեամբ կատարեց.

39. Որ ոչ մի բեռնաւոր չեն բեռնի իրան ուրիշ բեռնով.

40. Մարդուս համար էլ կայ միմիայն իր աշխատանքը.

41. Նրա աշխատանքը շուտով յայտնեւելու է.

42. Յետոյ իր արժանացած հատուցումը իրան կը հատուցուի:

43. Իսկ վախճանը քո Տիրոջ մօտ է.

44. Նա է, որ ծիծաղեցնում է եւ լացեցնում.

45. Եւ նա է, որ մեռցնում է եւ կենդանացնում.

46. Եւ նա է, որ զոյգեր է ստեղծել՝ արուն եւ էգը.

47. Մի հեղուկ սերմից, որ թափւում է,

48. Եւ նրանն է նաեւ միւս արարչութիւնը.

49. Եւ նա է, որ հարստացնում է եւ ստացւածք է տալիս.

50. Եւ նա է Շունի տէրը.

51. Եւ նա է, որ բնաջինջ արեց նախնի Ադացիներին.

52. Ու Սամուղացիներին, եւ մի բան չը թողուց մնայ.

53. Եւ նրանից առաջ էլ Նոյի ժողովուրդը բնաջինջ

արեց, որովհետեւ նրանք աւելի անիրաւ եւ ապստամբ էին:

- 54. Իսկ տակն ի վեր դարձրւածները վար գցեց.
- 55. Եւ յետոյ նրան ծածկեց ինչ որ ծածկեց.
- 56. Դու քո Տիրոջ ո՞ր բարիքի վրայ կասկած ունես:
- 57. Մա նախնի խրատողներիցը մի խրատող է:
- 58. Մօտեցողը մօտենում է. բացի Աստուածանից մէկը չըկայ, որ նրան հեռացնէ.
- 59. Արդեօ՞ք դուք այս խօսքիցը զարմանում էք.
- 60. Ուրեմն ծիծաղո՞ւմ էք. ու լաց չէ՞ք լինում.
- 61. Եւ դուք ծաղրո՞ւմ էք.
- 62. Բայց Աստուծուն երկրպագեցէ՛ք եւ պաշտեցէ՛ք:



54) ՍՈՒՐԷ ԱԼ-ՂԱՄՍՐ:

Մէքքէական. յիսուն հինգ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

- 1. Վերջին ժամը գալու է, եւ լուսինը ճեղքւելու է,
- 2. Իսկ եթէ մի նշան էլ տեսնեն, կը գլխադրեն ու կ'ասեն «չարունակւող կախարդանք է»:
- 3. Նրանք էլ սուտ են համարում եւ հետեւում են իրանց հաճոյքներին. եւ ամեն բան հաստատ է:
- 4. Բայց արդէն եկել է նրանց համար լուրը. նրա մէջ հալածող չը կայ.
- 5. Հասած իմաստութիւն է. բայց խրատը չէ օգնում:
- 6. Սակայն նա ետ կը դառնայ նրանցից այն օրը, որ կանչողը կը կանչէ դէպի մի անորոշ բան.
- 7. Նրանք աչքերը խոնարհեցրած դուրս կը գան գեղեզմաններիցը, կարծես թէ տարածւած մտրեխներ են,

8. Կանչողին վրայ վաղելով կ'ասեն անհաւատները,
«սա մի դժւար օր է»:

9. Նրանցից առաջ Նոյի ժողովուրդն էր սուտ հա-
նոււմ, որ նրանք սուտ էին հանում մեր ծառային եւ
ասում էին «զիւահար է», եւ հալածւեց:

10. Բայց նա կանչեց իր Տիրոջը, «ես յաղթւեցի,
դու ինձ օգնի՛ր»:

11. Մենք էլ բացեցինք երկնքի դռները թափւող
ջրերով,

12. Նաեւ երկրիցը աղբւրներ բղխեցրեցինք եւ ու-
րուած հրամանի համեմատ ջրերը իրար հանդիպեցին:

13. Իսկ մենք նրան կրեցինք տախտակների եւ
բեւեռների վրայ:

14. Որ նաւում էր մեր աչքերի առաջին իբրեւ հա-
տուցում նրան, որ ապերախտութիւն արեց:

15. Մենք էլ թողուցինք այս բանը իբրեւ նշան.
բայց մէկը խրատե՞ց:

16. Ուրեմն ինչպէս էր իմ պատիժը եւ խրատը:

17. Արդէն Ղուրանը հեշտացրել ենք յիշելու համար.
բայց արդեօ՞ք խրատող կա՞յ:

18. Սուտ հանեցին Ադացիք, եւ ինչպէս եղաւ իմ
պատիժը եւ խրատը:

19. Մենք մի շարունակ անյաջող օր նրանց վրայ
մի ցուրտ մրրիկ ուղարկեցինք,

20. Որ վեր հանեց մարդկանց կարծես, թէ արմա-
տախիլ եղած արմաւենիներ են:

21. Բայց ինչպէ՞ս եղաւ իմ պատիժը եւ խրատը:

22. Նաեւ արդէն հեշտացրել ենք Ղուրանը յիշելու
համար. բայց մէկը խրատե՞ց:

23. Սամուգացիք էլ սուտ համարեցին խրատը

24. Նրանք ասացին, «մենք արդեօ՞ք մէկ հատ մար-
դու հետեւենք որ մեզնից է. այն ժամանակ մենք մո-
լորութեան եւ յիմարութեան մէջ կը լինէինք»:

25. Խրատելը մեզնից է արւած նրան. ոչ. նա մի
անամօթ ստախօս է»:

26. Բայց նրանք շուտով կ'իմանան վաղը, թէ ով է անամօթ ստախօսը:

27. Ահա՛ մենք ուղարկում ենք ուղտը իբրեւ փորձ նրանց համար. դու հսկի՛ր նրանց վրայ եւ համբերի՛ր»:

28. Նա էլ նրանց իմացրեց, որ ջուրը բաժանուած է նրանց մէջը. ամեն մի խմելը կարգով է լինելու:

29. Բայց նրանք կանչեցին իրանց մէկ ընկերին, եւ սա պատրաստեց եւ ջլատեց:

30. Բայց ինչպէ՛ս եղաւ մեր պատիժը եւ խրատը:

31. Մենք նրանց վրայ մի հատ գոռում գոչում ուղարկեցինք. եւ նրանք գոմերի մղեղի պէս դարձան:

32. Բայց մենք արդէն հեշտացրել ենք Ղուրանը յիշելու համար. սակայն մէկը խրատե՞ց:

33. Ղովտի ժողովուրդը սուտ համարեց սպանալիքը:

34. Մենք նրանց վրայ մի քամի ուղարկեցինք. միայն Ղովտի ընտանիքին աղատեցինք առաւօտը

35. Իբրեւ շնորհք մեր կողմանէ. մենք այսպէս ենք վարձատրում ամեն գոհացողին:

36. Նա սպանացել էր նրանց մեր խստութիւնը, բայց նրանք կասկածեցին այն սպանալիքի մասին:

37. Նրանք էլ պահանջեցին նրա հիւրերին. բայց մենք նրանց աչքերը հանեցինք, ասելով, «արդ ճաշակեցէ՛ք իմ պատիժը եւ սպանալիքը»:

38. Եւ միւս առաւօտը հասաւ նրանց որոշած պատիժը:

39. Ասելով, «արդ ճաշակեցէ՛ք իմ պատիժը եւ ըստ սպանալիքը»:

40. Մենք էլ արդէն հեշտացրել ենք Ղուրանը յիշելու համար, բայց մէկը խրատե՞ց:

41. Փարաւօնի ժողովուրդին էլ հասաւ խրատը:

42. Նրանք մեր նշանները սուտ համարեցին եւ մենք նրանց պատժեցինք սաստիկ զօրաւոր պատժով:

43. Մի՞թէ ձեր անհաւատները լաւ են նրանցից. կամ դուք ազատութիւն ունէ՞ք գրքերիցը:

44. Կամ նրանք ասում են, «ամենք ամեններս օգնութիւն ունենք» :

45. Նրանք շուտով յաղթւելու են բոլորն էլ եւ կըռնակ են դարձնելու :

46. Այո՛, վերջին ժամը նրանց համար որոշւած է, եւ վերջի ժամը վտանգաւոր եւ լեղի է :

47. Իբրաւ յանցաւորները մոլորութեան եւ դժոխքի մէջ են :

48. Այն օրը, որ քաջ են տրւելու իրանց երեսների վրայ դէպի կրակը, թէ ճշակեցէ՛ք դժոխքի շփումը» :

49. Մենք ամեն բան չափով ենք ստեղծել :

50. Մեր հրամանը մէկ հատ է, ինչպէս մի ակընթարթ :

51. Ձեր ցեղերիցն էլ այդին բնաջինջ ենք արել. քայց մի խրատող կա՞ջ :

52. Նաեւ ամեն ինչ որ անում են գրքերումն է .

53. Ամեն փոքրը եւ մեծը գրւած է .

54. Ահա երկիւղածները դրախտներումն են՝ գետերով :

55. Արդար ակումբի մէջ հզօր թագաւորի մօտ :



55) ՍՈՒՐԷ՝ ԱՐՐԱՀՄԱՆ

Մէքքէական, եօթանասուն ութը այէ :

Գթած սղորմած Սասուժոյ անունովը :

1. Ողորմածը սովորեցրել է Ղուրան .
2. Ստեղծել է մարդս,
3. Սովորեցրել է նրան բացատրութիւնը .
4. Արեգակը եւ լուսինը չափերով են .
5. Եւ աստղերն ու ծառերը երկրպագութիւն են ասնում :

6. Նա բացատրել է երկինքը, եւ դրել է կշիռքը,
7. Որ կշիռքի մէջ չափազանցութիւն չ'անէք՝
8. Կշռաքարերն էլ արդարութեամբ գնէ՛ք, եւ կշիռքի մէջ չ'պակասացնէք՝
9. Նաեւ երկիրը նշանակել է մարդկանց համար.
10. Նրանում կան պտուղներ եւ ծաղկալից արմաւենիներ,
11. Եւ հատիկներ կոթերով եւ անուշանոտութիւնով:
12. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:
13. Նա մարդու ստեղծել է ցեխից ինչպէս հողի աման,
14. Ստեղծել է դեւերն էլ մաքուր կրակից.
15. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:
16. Արեւելքների Տէրը
17. Եւ Արեւմուտքների Տէրը՝
18. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:
19. Նա զատել է երկու ծովերը միանում են,
20. Դրանց երկուսի մէջը անդունդ կայ, չեն ետում:
21. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:
22. Այն երկուսից էլ հանում է մարդարիտը եւ բուստը:
23. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:
24. Նաեւ նրանն են ծովումը սարերի պէս շինւած նաւերը՝
25. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:
26. Ով որ նրա վրայ կայ, անցողական է,
27. Նա կը մնայ քո փառաւոր եւ յարգելի Տիրոջ գէ՛մքը:
28. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

29. Նրան է աղերսում ինչ որ կայ երկնքումը եւ երկրումը, եւ նա ամեն օր գործում է:

32. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

31. Շուտով ձեզնից հաշիւ ենք պահանջելու, ո՞վ երկու խումբեր:

33. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

33. Ո՞վ դեւերի եւ մարդկանց խումբեր, եթէ կարող էք դուրս գալ երկնքի եւ երկրի սահմաններից, դո՛ւրս եկէք. դուք դուրս չէք գայ առանց հրամանի:

34. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

35. Ձեզ վրայ կրակի բոց է ուղարկւելու եւ հալած պղինձ, եւ դուք չէք պրծնի:

36. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

37. Ու երբ երկինքը ճզւի եւ վարդի պէս դառնայ ինչպէս անուշահոտ իւղ:

38. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

39. Նոյն օրը մարդիկ եւ դեւեր չեն հարցնւի իրանց մեղքի համար:

40. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

41. Յանցաւորները ճանաչւելու են իրանց կերպարանքովը եւ նրանց բռնելու են ճակատի մաղբրիցը եւ տաներիցը:

42. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրանում:

43. Սա դժոխքն է, որ յանցաւորները նրան ուրանում էին,

44. Նրանք պտոյտ են անում նրա եւ եռացող ջրի մէջ:

45. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ուրա-
նում:

47. Ով որ երկնչում է իր Տիրոջ տեղիցը, նրա հա-
մար երկու գրախտներ կան:

47. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

48. Ծիւղերով,

49. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

50. Նրանց մէջ վազող երկու աղբիւրներ,

51. Հիմայ ձեր Տերոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

52. Նրանցում ամեն պտուղից կայ երկու տեսակ.

53. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

54. Պառկելու են անկողինների վրայ, որոնց միջի
կողմը մետաքսից է, եւ երկու գրախտների պողպատը
մօտ է:

55. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

56. Նրանցում կայ խոնարհ աչքերով կոյսեր, որոնց
գրանից առաջ չեն դպչել ո՛չ մարդիկ եւ ոչ դեւեր:

57. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

58. Նրանք կարծես թէ յակինթ եւ բուստ են:

59. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

60. Մի՞թէ բարութեան վարձքը ուրիշ բան է քան
թէ բարիք:

61. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

62. Եւ բացի նրանցից երկու գրախտներ էլ:

63. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
րանում:

64. Երկուսն էլ կանանչաղարդ:

65. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

66. Նրանցում երկու մշտաբուզիս աղբիւրներ:

67. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

68. Նրանց մէջ կան պտուղներ, արմաւենիք եւ նըռ-
նենիք,

69. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

70. Նրանցում գեղեցիկ աղջիկներ,

71. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

72. Սեւ սեւ աչքերով կոյսեր վրանների մէջ.

73. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

74. Դրանից առաջ նրանց չեն դպչել ո՛չ մարդիկ ո՛չ
գիւեր:

75. Հիմայ ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

76. Կոնած կանաչ բարձերի վրայ եւ գեղեցիկ գոր-
գերի վրայ:

77. Հիմա ձեր Տիրոջ պարգեւներից ո՞րն էք ու-
քանում:

78. Որհնեալ լիւնի՛ քո փառաւոր եւ յարգեալ Տիրոջ
անուանը:



56) Ս Ո Ւ Ր Է Է Լ - Վ Ա Գ Ը Ա :

Մէքքէական, իննսուն վեց այէ :

Գ/Ժած ողորմած Աստուծոյ անունովը :

1. Երբ անհրաժեշտը պատահի.
2. Այն ժամանակ նրա պատահելը ուրացող չի լինի.
3. Նա խոնարհացնող է եւ բարձրացնող.
4. Նաեւ երբ երկիրը սարսելով սարաւի.
5. Եւ լեռները ճաքճաքեն.
6. Եւ ցրիւ գան մանր փոշու պէս.
7. Նոյն ժամանակ դուք երեք ցեղ կը լինէք.
8. Ուրեմն աջակողմեանները, եւ ի՛նչ աջակողմեաններ.
9. Նաեւ ձախակողմեանները, եւ ի՛նչ ձախակողմեաններ.
10. Նոյնպէս էլ առաջ անցնողները առաջ անցնողներ են.
11. Նրանք նրա մերձաւորներն են.
12. Դրախտների մէջ էլ երջանիկ.
13. Մի մեծ մաս առաջիններից.
14. Եւ քիչեր վերջիներից.
15. Ոսկէհուռ աթոռների վրայ.
16. Կոնած նրանց վրայ իրար դէմադէմ.
17. Նրանց կողմովը պտոյտ են գալիս մատղաշ տըղայք.
18. Բաժակներով, գաւաթներով, սկիհներով հեղուկ գինիով.
19. Նրանից գլուխներ չի ցաւի եւ խելքերը չի պղտորի.
20. Պտուղներ էլ, որոնցից կ'ընտրեն.
21. Եւ թռչունի միս, որը որ կ'ախորժեն.

22. Ու սեւ սեւ աչքերով կոյսեր ինչպէս պատեանի մէջ ամփոփւած մարդարիտ
23. Իբրեւ վարձք իրանց արածներին.
24. Նրանք նրանում մի վատ խօսք չեն լսի, եւ ոչ մի մեղադրութիւն.
25. Բնացի այդ խօսքից «խաղաղութիւն, խաղաղութիւն».
26. Բնաց աջակողմեանները, ի՛նչ աջակողմեաններ.
27. Անիուշ լուստս ծառերի մէջ.
28. Շարւած թալճ ծառերի մէջ,
29. Եւ երկար շուքի մէջ,
30. Մշտահոս ջրերի մօտ,
31. Եւ շատ պտուղների մէջ
32. Ջր վերջանալի եւ չ'արգիլւած.
33. Եւ բարձրացրւած անկողիններ,
34. Որ մենք հնք այդ իգականները կազմել՝ պատշաասել.
35. Նաեւ այդ իգականներին միշտ կոյս ենք շինել.
36. Սիրահար կնիկներ մարդկանցը հասակակից.
37. Ուրեմն աջակողմեանները.
38. Մի մեծ մաս առաջիններից.
39. Մի մեծ մաս վերջիններից.
40. Եւ ձախակողմեանները, ի՛նչ ձախակողմեաններ.
41. Եռացող ջրի եւ հրատապ քամու մէջ.
42. Սեւ ծուխի շուքին տակ.
43. Որ ո՛չ ցուրտ եւ ո՛չ հաճելի է,
44. Նրանք զւարճացողներ էին սրանից առաջ.
45. Եւ յամառուում էին մեծ անզգամութեան վրայ.
46. Ու ասում էին,
47. Մենք երբոր մեռնենք եւ հող ու ոսկոր դառնանք մի՞թէ յարութիւն կ'առնենք՝
48. Իսկ մեր նախնի հայրերը՝
49. Դու ասա՛, «անա՛ առաջիններն էլ վերջիններն էլ
50. «Սամամոււած օրւայ ժամադրութեանը պիտի ժողովեն»:

51. Յետոյ դուք, ո՛վ մոլորւածներ, ո՛վ սուտ հա-
մարողներ.

52. Զուգգում ծառիցն էք ուտելու.

53. Նրանից էլ լցնելու էք ձեր փորերը.

54. Ու նրա վրայ խմելու էք եռացող ջրիցը.

55. Նաեւ խմելու էք ինչպէս ծարաւ ուղտը.

56. Սա է դատաստանի օրւայ վճիռը նրանց համար.

57. Մենք ենք ձեզ ստեղծել, բայց ինչո՞ւ չէք ճշ-
մարիտ համարում:

58. Ի՞նչ էք կարծում. այն որ սերմում էք,

59. Դո՞ւք էք նրան ստեղծում, կամ մենք ենք ըս-
տեղծում.

60. Մենք որոշել ենք ձեր մէջը մահը, եւ մենք
չենք շտապեցնի նրան.

61. Որ ձեզ նման ուրիշներին բերենք ձեր տեղը եւ
ձեզ մի բան չինենք, որ դուք չը գիտէք:

62. Դուք արդէն գիտէք առաջին արարչագործու-
թիւնը. ապա ինչո՞ւ չէք յիշում:

63. Ի՞նչ էք կարծում ձեր ցանածի մասին.

64. Դո՞ւք էք նրան բուսցնում, թէ մենք ենք
բուսցնում:

65. Իսկ եթէ կամենայինք, նրան անպտուղ կ'անէ-
ինք. եւ դուք զարմացողներ կը դառնայիք:

66. Թէ մենք ծանր ծախքեր արեցինք, բայց զրկ-
ւեցինք:

67. Ի՞նչ էք կարծում ապա այն ջրի մասին, որ
խմում էք.


68. Դո՞ւք էք նրան իջեցնում ամպիցը, թէ մե՞նք
ենք իջեցնում.

69. Նաեւ եթէ կամենայինք նրան աղի կ'անէինք.
Ինչո՞ւ չնորհակալ չէք.

70. Ի՞նչ էք կարծում այն կրակի մասին, որ տես-
նում էք.

71. Դո՞ւք էք նրա ծառը շինում, թէ մե՞նք ենք
շինողը.

72. Մենք նրան յիշատակ ենք շինել եւ մի շահա-
ւէտ բան անապատումը լինողների համար:
73. Ուրեմն օրհնի՛ր քո մեծ Տիրոջ անունը:
74. Այո՛, ես երգնում են աստղերի լընկնելովը:
75. Սա մեծ երգում է եթէ հասկանաք,
76. Ահա՛ Ղուբանը յարգելի է:
77. Մի ծածկւած գրքի մէջ է:
78. Նրան միմիայն մաքուրները դպչեն:
79. Աշխարհքների Տիրոջ կողմից է իջած:
80. Մի՞թէ այո նոր պատմութիւնը դուք արհա-
մարհում էք:
81. Դուք շինում էք ձեր ապրուստը. դուք սուտ էք
համարում:
82. Բայց ինչո՞ւ համար երբ մէկ կ ի հոգի ն կոկոր-
զին է հասնում:
83. Իսկ դուք այն ժամանակ մտիկ էք տալիս:
84. Բայց մենք աւելի մօտ ենք նրանից քան թէ
դուք, թէ եւ դուք չէք տեսնում,
85. Նաեւ եթէ դուք դատապարտւած չը լինէիք,
86. Նրան եւ կը դարձնէիք, եթէ ճշմարտախօս-
ներ էք:
87. Բայց եթէ նա մերձաւորներիցն էր,
88. Այն ժամանակ հանգստութիւն, քաղցրութիւն
եւ երանելի դրախտ կայ:
89. Եւ եթէ նա աջակողմեաններիցն է,
90. Այն ժամանակ խաղաղութիւն լինի քեզ աջա-
կողմեաններից:
91. Իսկ եթէ սուտ համարողներիցն է:
92. Որ մոլորածներ են:
93. Այն ժամանակ բաժին կայ եռացող ջրից,
94. Կրակի մէջը կը գցւի:
95. Ահա՛ սա է հաստատ ճշմարտութիւնը:
96. Ուրեմն օրհնի՛ր քո մեծ Տիրոջ անունը:



57) ՍՈՒՐԷ ԱԼ-ՀԻՒԻՒՅ

Մէքինէական եւ ասու՛մ են Մէքքէական.

քսան ինը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Յրհնում է Աստուծուն ինչ որ կայ երկնքումը եւ երկրումը, եւ նա է զօրաւորը դատաւորը:

2. Երկնքի եւ երկրի իշխանութիւնը նրանն է, նա կենդանացնում է եւ մեռցնում է, եւ նա ամենակարող է:

3. Եւ նա առաջինն է եւ վերջինը, եւ արտաքինը եւ ներքինը, եւ նա ամենագէտ է:

4. Նա այն է, որ ստեղծել է երկինքը եւ երկիրը վեց օրւայ մէջ, յետոյ նստել է աթոռին վրայ: Եւ նա գիտէ, թէ ինչ է մտնում երկրի մէջը եւ ինչ է դուրս գալիս նրանից, եւ թէ ինչ է իջեցնում երկնքիցը եւ ինչ է վեր գնում նրա մէջը, եւ նա ձեզ հետ է ուր էլ լինէք, եւ ինչ որ անում էք Աստուած տեսնում է:

5. Երկնքի եւ երկրի իշխանութիւնը նրանն է, եւ բոլոր բաները նրա մօտն են հտ դառնալու:

6. Նա մտցնում է գիշերը ցերեկւայ մէջ, եւ ցերեկը մտցնում է գիշերւայ մէջը, եւ նա սրբագէտ է:

7. Հաւատացէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէին, եւ ողորմութիւն տէ՛ք այն բանիցը, որոնց նա ձեզ յաջորդողներ է շինել, եւ այնպիսիները ձեզնից, որ հաւատում են եւ ողորմութիւն տալիս, մեծ վարձք կայ նրանց համար:

8. Դուք էլ ի՞նչ պատճառ ունէք, որ չէք հաւատում Աստուծուն. քանի որ մարգարէն ձեզ կանչում է որ

հաւատաք ձեր Տիրոջը. նա արդէն ւրեի է ձեզնից խոս-
տումք. եթէ դուք հաւատացեալներ էք:

9. Նա է, որ իրան ծառային յայտնի նշաններ է ի-
ջեցրել, որ ձեզ գուրս հանէ խաւարիցը դէպի լոյսը,
ահա՛ Աստուած ձեզ ողորմած՝ գթած է:

10. Դուք ի՞նչ պատճառ ունէք, որ ողորմութիւն
չէք տալիս Աստուծոյ ճանապարհին հա՛ւար, քանի որ
երկնքի եւ երկրի ժառանգութիւնը Աստուծունն է:
Միեւնոյնը չէ նա, որ յաղթութիւնիցն առաջ ողորմու-
թիւն է տուել եւ պատերազմել. սրանք աւելի մեծ աս-
տիճան ունեն քան թէ նրանք, որ յետոյ են ողորմու-
թիւն է տուել եւ պատերազմել. սակայն Աստուած ամե-
նին էլ բարիք է խոստացել. քանի որ Աստուած ձեր
արարքները գիտէ:

11. Ո՞վ է նա որ Աստուծուն բարի պարտք է տալիս.
նա էլ կրկնապատիկն է հատուցանելու նրան, եւ նրա
հա՛ւար ազնիւ վարձք կայ:

12. Այն օրը կր տեսնես հաւատացեալներին եւ հա-
ւատացեալուհիներին, որ նրանց առաջից եւ աջ կող-
մից վազում է իրանց լոյսը, «այսօր է ձեր աւետիքը-
դրախտներ, որոնց տակովը գետեր են հոսում. միշտ
մնացողներ էք նրանում. սա այն մեծ երջանկու-
թիւնն է»:

13. Այն օրը կեղծաւորները եւ կեղծաւորուհիներն
ասելու են հաւատացողներին, «սպասեցէ՛ք մեզ. որ
ձեր լոյսիցը լոյս առնենք». նրանց էլ ասելու է, «ես
զնացէ՛ք ձեր ետեւը եւ լոյս պտուեցէ՛ք». այն ժամանակ
նրանց մէջ տեղը մի պար է քաշուել, որ մի դուռ
ունի. նրա ներքին կողմումը ողորմութիւնն է, խակ
դուրսը նրա գիմացը՝ պատիժը. նրանք կանչելու են
սրանց, «մենք մի՞թէ ձեզ հետ չէինք». սրանք էլ ա-
սելու են, «այ՛ս, բայց դուք վտանցի մէջ գցեցիք ձեր
հոգիները, եւ սպասեցիք եւ կասկածեցիք եւ ցանկու-
թիւնները ձեզ խաբեցին մինչեւ եկաւ Աստուծոյ հրա-
մանը. եւ խաբեքան խաբեց ձեզ Աստուծոյ մատին:

14. Իսկ այսօր փրկանք չի ընդունել ձեզնից եւ ոչ էլ անհաւատներիցը. ձեր բնակարանը կրակն է. նա ձեր պաշտպանն է. եւ սա վատ ընթացք է :

15. Հաւատացեալների համար չէ եկել ժամանակը, որ նրանց սրտերը խոնարհեն Աստուծուն յիշելու առաջին, եւ ինչ իջել է իբրեւ ճշմարտութիւն, եւ նրանց պէս չը լինեն, որոնց առաջուց տուած էր գիրքը. եւ երբ նրանց համար երկայնացուեց սպասելը, կարծրացան նրանց սրտերը, եւ նրանցից շատերը չարագործներ եղան :

16. Իմացէ՛ք որ Աստուած կենդանացնում է երկիրը նրա մեռնելուց յետոյ. մենք արդէն յայտնել ենք ձեզ նշանները. որ հասկանաք :

17. Ուրեմն նրանք որ ճշմարտութիւնը հաստատողներ եւ հաստատողուհիներ են եւ Աստուծուն բարեպարտք են տալիս, նա կրկնապատիկը կը հատուցանէ նրանց, եւ նրանց համար ազնիւ վարձք կայ :

18. Նրանք էլ, որ Աստուծուն եւ մարգարէներին հաւատում են, նրանք են իրանց Տիրոջ մօտ ճշմարիտները եւ վկաները. նրանք ունեն իրանց վարձքը եւ իրանց լոյսը : Իսկ նրանք որ չեն հաւատում եւ մեր նշանները սուտ են համարում, նրանք դժոխքի ընկերներն են :

19. Իմացէ՛ք որ աշխարհքի կեանքը խաղալիք եւ զւարճանք է եւ զարդ ու պարծանք ձեր մէջը, եւ ապրանքի ու որդիների բողմութիւնը անձրեւի նման է, որի բուսցրած բոյսերը զարմացնում են անհաւատներին, յետոյ աճում է եւ տեսնում ես որ դեղնում է, եւ յետոյ չոր խոտ է դառնում, եւ միւս աշխարհքումը խիստ պատիժ կայ :

20. Նոյնպէս էլ ներողութիւն Աստուծոյ կողմանէ եւ հաճութիւն. եւ ի՞նչ է աշխարհքիս կեանքը, եթէ ոչ խաբեբայութեան ապրանք :

21. Աշխատեցէ՛ք ձեր Տիրոջից ներողութիւն ստանալու եւ արքայութիւն, որի լայնութիւնը երկնքի եւ

երկրի չափ է, որ պատրաստուած է Աստուծուն եւ նրա մարգարէներին հաւատացողներին համար: Սա Աստուծոյ շնորհքն է, որ նա տալիս է իր ուզածին. Աստուած մեծ շնորհքի տէր է:

22. Երկրին եւ ոչ էլ ձեզ մի պատուհաս չի պատահի, որ չկայ առաջուց գրքին մէջ, որ մենք ենք նրան ստեղծել. ահա՛ սա զիւրին է Աստուծոյ համար:

23. Որ դուք չը տրամէք այն բանի համար, որ ձեզ նից կորչում է, եւ չ'ուրախանաք այն բանի համար որ տրոււմ է ձեզ. եւ Աստուած չէ սիրում ոչ մի հպարտ ինքնահաւանին:

24. Որոնք ազահ են եւ մարդկանց էլ ազահութիւն են սովորեցնում, եւ ով հրաժարւում է, Աստուած ինքը հարուստ օրհնեալ է:

25. Մենք ուրարկել ենք մեր մարգարէներին հըրաչքներով եւ նրանց հետ իջեցրել ենք գիրքը եւ կըշիւր, որ մարդիկ արգարութեամբ վարուեն: Եւ մենք իջեցրել ենք երկաթը, որի մէջ սաստիկ չարիք (պատերազմ) կայ եւ մարդկանց համար էլ օգուտներ, որ Աստուած իմանայ, թէ ով է օգնում նրան եւ նրա մարգարէներին ծածուկ սեղը. իրաւ Աստուած հզօր զօրաւոր է:

26. Մենք արդէն ուղարկել ենք նոյին եւ Աբրահամին եւ նրանց որդկանց մէջ շինել ենք մարգարէութիւնը եւ գիրքը նրանցից կան առաջնորդողներ, բայց շատերն էլ ամբարիշտներ են:

27. Յետոյ նրանց ետեւից ուղարկել ենք մեր մարգարէներին եւ յետոյ ուղարկել ենք Մարիամի որդի Յիսուսին, եւ նրան տւել ենք Աւետարանը, եւ նրան հետևողների սրտերումը գրել ենք գթութիւն եւ ուղորմութիւն. իսկ վանականութիւնը իրանք են հնարել. մենք այդ բանը նրանց չենք հրամայել. միայն պէտք էր Աստուծոյ հաճութիւնը խնդրէին. բայց նըրանք չը յարգեցին նրան ինչպէս որ արժան էր յարգել: Իսկ մենք նրանցից հաւատացողներին տւեցինք:

իրանց վարձքը եւ նրանցից շատերը ամբարիշտներ էին :

28. Ո՛վ հաւատացեալներ, վախեցէ՛ք Աստուածանից եւ հաւատացէ՛ք նրա առաքեալին, եւ նա կըտայ ձեզ իր ողորմութիւնիցը կրկնապատիկ, եւ նա ձեզ համար լոյս կը շինէ, որ նրանում ման գաք, եւ ձեզ կը ներէ՝ որովհետեւ Աստուած ներող ողորմած է :

29. Որ իմանան գիրք ունեցողները, որ Աստուծոյ շնորհքի դէմ չեն կարող մի բան անել, եւ որ շնորհքը Աստուծոյ ձեռքին է, նա նրան տալիս է ում որ կամ մենում է, եւ Աստուած մեծ շնորհքի տէր է :



58) ՍՈՒՐԷ՝ ՄԻԻՃԱԳԸԼԷ

Մէդինէական. բսան երկու այէ :

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը :

1. Աստուած արդէն լսել է այն կնկան ձայնը, որ քեզ հետ միճարանում էր իր մարդուն համար եւ զանգատում էր Աստուծուն՝ եւ Աստուած լսում էր ձեր երկուսի խօսակցութիւնը՝ որովհետեւ Աստուած լսող տեսնող է :

2. Ձեզնից նրանք, որ իրանց կնիկներին իրանց մայրերի մէջքին նստանցնելով նրանց արձակում են, նրանց մայրերը չեն նրանք. որ ծնել են նրանց, եւ ահա՛ նրանք միմիայն ապօրինի եւ զուր խօսք են խօսում :

3. Ուրեմն Աստուած ներող թողութիւն տւող է :

4. Նրանք էլ, որ իրանց կնիկներին իրանց մայ-

րերի մէջքին նմանցնելով նրանց արձակում. բայց յետոյ իրանց ասածիցը ետ են դառնում, նրանք իրար մօտենալուց առաջ պէտք է մի գերի ազատուի: Սա քարոզում է ձեզ. եւ Աստուած գիտէ ձեր արածը:

5. Բայց ով չը կարողանայ, նրանք իրար մօտենալուց առաջ, երկու ամիս շարունակ ծով պահել պէտք է: Եւ ով որ սա էլ չը կարողանայ, պէտք է վաթսուէն աղքատներ կերակրէ: Սա նրա համար է, որ հաւատաք Աստուծուն եւ նրա մարգարէին: Աստուծոյ սահմանները սրանք են, իսկ անհաւատների համար ցաւալի տանջանք կայ:

6. Նաեւ նրանք, որ հակառակում են Աստուծուն եւ նրա մարգարէին, պէտք է նւաստանան ինչպէս նրանցից առաջ եղողները նւաստացել են. եւ մենք արդէն յայտնի նշաններ ենք իջեցրել: Եւ անհաւատներին համար խայտառակող պատիժ կայ:

7. Նոյն օրը Աստուած նրանց ամենքին էլ յարութիւն է տալու եւ նրանց իմացնելու, թէ ինչ են արել որ Աստուած հաշիւ է արել, բայց նրանք մոռացել են. եւ Աստուած վկայ է ամեն բանի:

8. Մի՞թէ չե՞ս տեսնում, որ Աստուած գիտէ ինչ որ կայ երկնքումը եւ երկրումը: Երեքը չեն կարող ծածուկ իրար հետ փսփսալ, եթէ նա չորրորդը չը լինի. եւ ոչ էլ չի կարող եթէ նա վեցերորդը չը լինի. եւ ոչ էլ սրանից քիչը եւ ոչ էլ սրանից շատը, եթէ նա նրբանց հետ չը լինի, ուր էլ լինեն, յետոյ նա նրանց կիմացնէ յարութեան օրը ինչ որ արել են. ահա՛ Աստուած ամենազէտ է:

9. Մի՞թէ չես տեսնում նրանց, որոնց արգելեց ծածուկ փսփսալը բայց նրանք դարձեալ ետ են դառնում իրանց արգելւածին եւ մարգարէին դէմ մեղք, թշնամութիւն եւ յանցանք են փսփսում իրար հետ: Եւ երբ քեզ մօտ են դալիս, բարեւում են քեզ այնպէս, որ Աստուած այն կերպով քեզ չէ բարեւել. եւ ասում են իրանց մէջ, «մի՞թէ Աստուած մեզ պատժելու է մեր խօսածի համար»: Նրանց բաժինը դժոխքն է, որ նրանց այրելու է. եւ չաք ճանապարհ է այդ:

10. Ո՛վ հաւատացեալներ, երբ ծածուկ փսփսում էք, մարդարէին դէմ մեղք թշնամո թիւն եւ յանցանք մի փսփաք. այլ ծածուկ խօսեցէ՛ք արդարութեան եւ անկեղծութեան մասին, եւ վախեցէ՛ք Աստուածանից, որ նրա մօտ էք հաւաքուելու :

11. Արդարեւ ծածուկ փսփսալը սատանայիցն է, որ հաւատացեալներին արտմեցնէ, բայց նրանց վնասել նա չէ կարող, եթէ Աստուծոյ նրամանք չը լինի. բայց հաւատացեալները օտուծուն են ապաւինած :

12. Ո՛վ հաւատացեալներ, երբ ձեզ սոււում է, թէ ժողովքներումը տե՛ղ տւէ՛ք, այն ժամանակ դուք տեղ տւէ՛ք. Ասոււած էլ ձեզ տեղ կըտայ: Եւ երբ ձեզ սոււում է թէ վե՛ր կացէք, այն ժամանակ դուք վեր կացէք. Աստուած է, ձեզնից հաւատացողներին եւ նրանց, որ գիտութիւն է տրւած, վեր կը բարձրացնէ աստիճաններով, եւ Աստուած գիտէ, թէ դուք ինչ էք անում :

13. Ո՛վ հաւատացեալներ, երբ դուք մարդարէին հետ ծածուկ փսփսում էք, ձեր փսփսալուց առաջ ողորմութիւն տւէ՛ք. սա ձեզ համար լաւ է եւ աւելի մաքուր է. բայց եթէ բան չը գտնէք, Աստուած ներող սղորմած է :

14. Մի՞թէ վախում էք ձեր փսփսալուցն առաջ ողորմութիւններ տալուց, եթէ այսպէս անէք, այն ժամանակ Աստուած ձեր կողմը կը դառնայ, դուք էլ այն ժամանակ աղօթքը կատարեցէ՛ք, մաքրութեան տուրքը տւէ՛ք եւ հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ նրա մարդարէին. եւ Աստուած գիտէ, թէ դուք ինչ էք անում :

15. Դու մտի՞կ չ'արեցիր նրանց, որ մի ժողովրդի հետ բարեկամանում են, որի վրայ Աստուած բարկացած է. նրանք ձեզնից չեն. եւ ոչ էլ նրանցից, եւ նրանք գիտենալով սուտ երդում են անում :

16. Աստուած նրանց համար սաստիկ պատիժ է պատարասել, որովհետեւ չար է, ինչ որ նրանք գործում են :

17. Նրանք իրանց երգումները գիմակի տեղ են դրնում եւ խոտորում Աստուծոյ ճանապարհիցը. եւ նրանց համար նւաստացնող պատիժ կայ:

18. Ոչինչ օգուտ չեն տաւ Աստուծոյ դէմ ոչ նրանց ստացւածքները եւ ոչ նրանց զաւակները. նրանք կը քակի ընկերներ են, եւ պէտք է միշտ նրանում մնան:

19. Նաեւ այն օրը, որ Աստուած նրանց ամենին էլ յարութիւն կըտայ. նրանք երգում կ'անեն նրան ինչպէս ձեզ են երգում անում, եւ կը կարծեն թէ դա մի բան է դրանց համար. բայց ահա՛ դրանք ստախոսներ են:

20. Սատանան նրանց յաղթել է եւ նրանց մոռացրնել է տւել Աստուծուն յիշելը. նրանք սատանայի խումբն են. ահա՛ սատանայի խմբակիցները զժբազաներ են:

21. Որովհետեւ նրանք, որ Աստուծուն եւ նրա մարդարէին գիմադրում են, ամենանւաստներ են: Աստուած որոշել է, թէ «ես անպատճառ պիտի յաղթեմ, նաեւ իմ մարգարէն». որովհետեւ Աստուած հլօր զօրաւոր է:

22. Դու մի այնպիսի մողովուրդ չես գտնի, որ Աստուծուն եւ ետքի օրւանը հաւատում են. որ Աստուծուն եւ նրա մարգարէին գիմադրողներին սիրեն, թէ եւ նրանք իրանց հայրերը կամ նրանց որդիները կամ նրանց եղբայրները կամ նրանց ցեղակիցներն էլ լինեն. նրանց սրտերումը նա գրել է հաւատքը եւ հաստատել է նրանց իր հոգիովը, եւ նրանց մտցնելու է դրախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում, եւ նրանք պիտի միշտ մնան նրանցում: Աստուած նրանցից է գոհ լինելու: Սրանք են Աստուծոյ խումբը: Ահա՛ Աստուծոյ խումբն են երջանիկները:





59) ՍՈՒՐԷ ԱՂՆՍՇՐ:

Մէգիինէական, քսան չորս այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Օրհնել է Աստուծուն, ինչ որ կայ երկնքումը եւ երկրումը, եւ նա զօրաւոր իմաստունն է:

2. Նա այն է, որ դիրք ունեցողներից անհաւատ եւ զոզներին իրանց երկրիցը դուրս է հանել նախկին աքսորումովը: Դուք չը կարծեցիք, թէ նրանք դուրս են գալու: Եւ նրանք էլ կաշծում էին, թէ իրանց բերգերն իրանց կը պաշտպանեն Աստուծոյ դէմ: Բայց Աստուած մէկ կողմից եկաւ նրանց վրայ, որ նրանք չէին կարծում, եւ նրանց սրտերումն սարսափ է գցել: որ իրանց տները աւերակներ են շինում իրանց ձեռքերովը եւ հաւատացեալների ձեռքերովը, ուրեմն օրինակ առէք, ով բան հասկացողներ:

3. Իսկ եթէ Աստուած նրանց համար դաղթելը սրտչած չը լինէր, նրանց անպատճառ կը պատժէր այս աշխարհքում եւ նրանց համար միւս աշխարհքում կը բակի չարչարանքը կայ:

4. Սա նրա համար է որ նրանք հակառակ էին Աստուծուն եւ նրա մարգարէին, եւ ով որ հակառակ լինի Աստուծուն, ահա՛ Աստուած խիստ պատժող է:

5. Ինչ կտրեցիք տրմաւենիներից, եւ ինչ կանգնած թողեցիք իրանց արմատների վրայ Աստուծոյ հրամանովն էր, եւ որ խայաստակէ ամբարիշտներին:

6. Աստուած էլ նրանցից ինչ որ աւար է տւել իր մարգարէին, եւ դուք այն չը բերեցիք նրա համար

ձիւաւորներով եւ ուղտաւորներով, այլ Աստուած յաղթել է տալիս իր մարգարէներին որին որ ուղում է, եւ Աստուած ամենակարող է:

7. Ինչ որ Աստուած քաղաքների բնակիչներին տուել է իբրեւ աւար իր մարգարէին, դա Աստուծունն է եւ մարգարէինը եւ ազգականներինը եւ որբերինը եւ ազգաաններինը եւ ճանապարհորդներինը, որ ձեզնից հարուստ եղողների մէջ շուռ չի գայ. եւ մարգարէն ձեզ ինչ տալիս է՝ ընդունեցէ՛ք, եւ նա ձեզ ինչ արգելում է, նրանից ետ քաշեցէ՛ք, եւ Աստուածանից վախեցէ՛ք, որովհետեւ Աստուած խիստ պատժող է:

8. Նաեւ այն գաղթականներին, որ իրանց երկիրներինը եւ ստացւածքներինը դուրս արեցին եւ Աստուծոյ շնորհքն ու հաճութիւնն են խնդրում եւ օգնում Աստուծուն եւ նրա մարգարէին. սրանք են ճշմարիտները:

9. Նրանք էլ, որ բնակարաններ են շինել եւ առաջուց էլ հաւատք ունէին, սիրում են իրանց մօտ գաղթածներին եւ իրանց սրտերումը մի կարօտութիւն չեն գտնում այն բանի մասին, ինչ որ տրւում է նրանց, եւ նրանք զսպում են իրանց անձերը, թէեւ այն բաներին պէտք էլ ունենան: Եւ ով որ ձեր անձի շահասիրութիւնը զսպէ, երջանիկները նրանք են:

10. Նրանցից յետոյ եկողներն էլ ասում են, «ո՛վ Տէր, ների՛ր մեզ եւ մեր հղբայրներին որոնք հաւատքով մեզնից առաջ են անցել, եւ դու մեր սրտերումը քէն մի՛ գնիր գէպի հաւատացեալները, ո՛վ մեր Տէր, դու գթած՝ ողորմած ես:

11. Մի՞թէ մտիկ չես արել նրանց, որ ողորմութիւն են տուել, որոնք ասում են իրանց գիրք ունեցող անհաւատ հղբայրներին, որ, եթէ դուք գուրս արիք, մենք էլ անպատճառ ձեզ հետ դուրս կը գանք, եւ ձեր պատճառովը ոչ մէկի չենք հնազանդի

յաւիտեան: Եւ եթէ ձեզ հետ պատերազմեն, մենք անպատճառ կ'օգնենք. բայց Աստուած տեսնում է, որ նրանք սուտ են ասում:

12. Իսկ եթէ նրանք դուրս արին, իրանք նրանց հետ դուրս չեն գնայ եւ եթէ նրանց հետ պատերազմը ի, իրանք նրանց չեն օգնի. եւ եթէ նրանց օգնեն էլ, նրանք ետ կը դառնան եւ նրանց օգնութիւն չի լինի:

13. Իրաւ, դուք աւելի զօրաւոր էք, որովհետեւ Աստուած նրանց սրտերի մէջ վախ է գցել, սրա պատճառն էլ այն է: որ անմիա ժողովուրդ են:

14. Նրանք ամենքը միասին չեն պատերազմի ձեզ հետ, այլ միայն բերդաւոր քաղաքների ետեւից, կամ պարիսպների ետեւից: Նրանց պատերազմական աշխոյժը իրանց մէջը սաստիկ է. դու կարծում ես, թէ միացած են. սակայն նրանք բաժանւած են. նրա համար, որ չըհասկացող մտրդիկ են:

15. Որանք նման են նրանց, որոնք իրանցից մի քիչ առաջ էին եւ ճաշակեցին իրանց գործի հատուցումը. եւ նրանց համար սաստիկ տանջանք կայ:

16. Նման են սատանային, որ ասում է մի մարդու, թէ «անհաւատ եղի՛ր», եւ երբ նա անհաւատ է դառնում, ասում է «ես անմեղ եմ քո մասին, ես վախեցնում եմ աշխարհքների Տէր՝ Աստուածանից»:

17. Նրանց երկուսի էլ վերջը կբակն է, որի մէջ նրանք յաւիտեան պիտի մնան. եւ սա անիրաււների հատուցումն է:

18. Ո՛վ հաւատացեալներ, վախեցէ՛ք Աստուածանից. եւ թող մարդս նայի թէ վաղւայ համար ինչ է կանխաւ պատրաստել. եւ վախեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ Աստուած գիտէ ձեր արածը:

19. Դուք մի՛ նմանուիք նրանց, որ մոռացել են Աստուծուն, եւ նա էլ նրանց մոռանալ է տւել իրանց հոգիներին. նրանք ամբարիշտներ են:

20. Կրակի բնակիչները եւ դրախտի բնակիչները

հաւասար չեն. դրախտի բերկիչները երջանիկներ են:

21. Նաեւ եթէ մենք այս Ղուբանը մի սարի վրայ իջեցնէինք, դու անպատճառ կը տեսնէիր, որ նա Աստուծոյ երկիւղիցը կը խոնարհւէր եւ կը պատառէր: Եւ մենք այս առակներն ասում ենք մարդկանց համար, որ մտածեն:

22. Նա է Աստուած, որ բացի նրանցից ուրիշ Աստուած չըկայ, որ գիտէ գաղտնիները եւ յայտնիները, նա է գլխածը՝ ողորմածը:

23. Նա է Աստուած որ բացի նրանից ուրիշ Աստուած չըկայ. նա է թագաւորը, սուրբը, խաղաղութիւնը, հաւատարիմը, պահապանը, հզօրը, ամենակալողը. բարձրեալը. մաքուր է Աստուած այն բանից որ նրան ընկեր են շինում:

24. Նա է Աստուած, ստեղծողը, արարիչը, կազմողը. նա ունի գեղեցիկ անուէններ, օրհնում է նրան ինչ որ կայ երկնքումը եւ երկրումը. եւ նա է զօրաւոր իմաստունը:



60) ՍՈՒՐԷ ԱԼ-ՄՈՒՄԹԷՆԸՆԷԹԷ

Մէգինէական. տասներեք այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անուէնովը:

1. Ո՛վ հաւատացեալներ, դուք իմ եւ ձեր թշնամին բարեկամ մի՛ ընդունէք. որ նրանց սէք էք ցոյց տալիս. բայց նրանք արդէն չեն հաւատում այն բանին, որ եկել է ձեզ համար ճշմարտութիւնիցը. նրանք դուրս են արիւ մարգարէին եւ ձեզ, որովհետեւ հաւատում էք ձեր Տէր Աստուծուն: Եթէ դուք դուրս էք եկել, որ պատերազմէք իմ ճանապարհումը եւ ուզում էք իմ հաճութիւնը, բայց նրանց հետ ծածուկ բարեկամութիւն

էք անում՝ ա՛նա՛ ես գիտեմ ինչ որ ծածկում էք եւ ինչ որ յայտնում էք: Ձեզնից ով անէ այս, նա արդէն խոտորւած է ուղիղ ճանապարհիցը:

2 Ուրեմն եթէ ձեզ տիրապետեն, նրանք ձեր թշնամիները կը դառնան եւ չարութեամբ կ'երկայնացընեն ձեզ դէմ իրանց ձեռները եւ լեզուները, եւ կը փափագեն, որ չը հաւատաք:

3. Բնաւ ձեզ չեն օգնի յարութեան օրը ո՛չ ձեր ազգականները ո՛չ էլ ձեր որդիքը. նա է վճակու ձեր մէջը եւ Աստուած տեսնում է ձեր արածը:

5 Ուրեմն լաւ օրինակ էր ձեզ համար Արրահամը եւ նրա հետ եղողները, երբ ասացին իրանց մարդկանցը. «մենք ձեր մասին անմեղ ենք եւ այն մասին որ դուք բացի Աստուածանից ուրիշ բաներ էք սլաշտում՝ մենք ձեզ ուրանում ենք. եւ սկսել է մեր ու ձեր մէջ թշնամութիւնը եւ ատելութիւնը յաւիտեան, մինչեւ որ հաւատաք մէկ Աստուծուն»՝ բայց Արրահամ ասաց իր հօրը, «ես քեզ համար Աստուածանից ներողութիւն կը խնդրեմ, բայց չեմ կարող քեզ համար Աստուծոյ դէմ մի բան անել»՝ «ո՛վ մեր Տէ՛ր մենք քեզ ենք ապաւինած, եւ դէպի քեզ ենք դառնում եւ քեզ մօտ ենք գալու»:

5. Ո՛վ մեր Տէր, փոքձութիւն մի շինիր մեզ անհաւատներին համար, եւ ների՛ր մեզ, ո՛վ մեր Տէր, որովհետեւ դու հօր խմաստուն ես:

6. Ձեզ համար նրանում արդէն լաւ օրինակ կայ, այսինքն նրա համար որ յոյս ունի Աստուծոյ վրայ եւ վերջի օրուայ վրայ: Իսկ ով ետ քաշւի, Աստուած անկարօտ օրհնեալ է:

7. Գուցէ Աստուած ձեր եւ նրանց մէջ, որ նրանցից ձեզ դէմ թշնամի են, բարեկամութիւն կը շինէ, եւ Աստուած կարող է, եւ Աստուած ներող ողորմած է:

8. Աստուած ձեզ չէ արգելում, որ նրանց հետ հաշտ վարէք եւ իբրաւունք անէք նրանց, սրոնք ձեզ հետ պատերազմ չեն արել կրօնքի մասին եւ ձեզ ձեր երկ-

քիցը դուրս չեն արել. որովհետև Աստուած սիրում է իրաւունք անողներին:

9. Աստուած ձեզ արգելում է նրանց հետ բարնկամութիւն անելու, որոնք ձեզ հետ պատերազմ են արել կրօնքի համար եւ ձեզ դուրս են արել ձեր երկրիցը կամ ձեզ դուրս անելու համար օգնել են. եւ ով նրանց հետ բարեկամութիւն անէ, նրանք անիրաւունք են:

10. Ո՛վ հաւատացեալներ, երբ հաւատացեալ դադարեալ կնիկներ գան ձեզ մօտ, դուք նրանց փորձեցէք—Աստուած աւելի գիտէ նրանց հաւատքը—եւ երբ իմանաք, որ հաւատացեալ կնիկներ են, դուք նրանց հետ մի՛ գարձնէք գէպի անհաւատների կողմը: Այն կրնիկները նրանց համար օրինաւոր չեն, եւ ոչ էլ նրանք օրինաւոր են սրանց համար: Բայց մարդկանցը տէ՛ք ինչ որ նրանք ծախսել են. եւ ձեզ համար յանցանք չէ որ նրանց ձեզ համար կնիկ առնէք, երբ նրանց վարձքերը կը տաք: Եւ նրանց հետ մի՛ պահէք անհաւատների պաշտպանութիւնիցը. եւ պահանջեցէ՛ք ինչ ծախք որ արել էք, եւ թո՛ղ նրանք էլ պահանջեն ինչ որ ծախսել են: Սա Աստուծոյ վճիռն է, որ վճուում է ձեր մէջը. եւ Աստուած գիտէ իմաստուն է:

11. Իսկ եթէ ձեր կնիկներից մի բան անհաւատների կողմն անցնէ կորչէ, եւ դուք աւար անէք, այն ժամանակ տէք նրանց, որոնց կնիկները գնացել են այնչափ որչափ ծախք են ունեցել. եւ վախեցէ՛ք Աստուածանից, որին դուք հաւատում էք:

12. Ո՛վ մարգարէ, երբ հաւատացեալ կնիկներ են գալիս քեզ մօտ, եւ ուխտ են անում քեզ մօտ, որ Աստուծուն մի բան ընկեր չեն շինի, եւ չեն գողանաւ եւ չեն շնանայ եւ չեն սպանի իրանց զաւակներին եւ իրանց ձեռներին ու ոտներին մէջ տեղովը դուք զրպարտութիւն չեն անի, եւ օրինաւոր բանում քեզ դէմ չեն ապստամբի, այն ժամանակ դու նրանց ուխտը ընդունի՛ր եւ նրանց համար թողութիւն խնդրի՛ր Աստուածանից, որովհետև Աստուած ներող սղարմած է:

13. Ո՛վ հաւատացեալներ, դուք նրանց բարեկամներ մի՛ ընդունիք, որոնց վրայ Աստուած բարկացած է: Նրանք արդէն յուսահատուած են եկող աշխարհիցը, ինչպէս անհաւատներն են յուսահատուած գերեզմաններում եղողներին մասին:



61) ՍՈՒՐԷ ԱՌԻՍԱՅ.

Մէդինէական. տասն չորս այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը.

1. Օրհնեցին Աստուծուն երկնքումը եւ երկրումը եղողները. եւ նա է հզօրը իմաստունը:

2. Ո՛վ հաւատացեալներ, ինչո՞ւ էք ասում այն, որ չէք անում:

3. Սա Աստուծոյ մօտ ատելի է, որ ասում էք այն որ չէք անում:

4. Իրաւ Աստուած նրանց է սիրում, որ շարքով պատերազմում են Աստուծոյ ճանապարհումը, որ կարծես թէ հաստապինդ շինութիւն են:

5. Նաեւ երբ Մովսէս ասաց իր ժողովրդին, «ով իմ ժողովուրդ, ինչո՞ւ էք դուք ինձ նեղացնում, եւ դուք արդէն գիտէք, որ ես Աստուծոյ մարգարէն եմ ձեզ համար»: Բայց երբ նրանք խոտորեցին, Աստուած էլ խոտորեցրեց նրանց սրտերը, եւ Աստուած ամբարիշտ մարդկանցը չի առաջնորդի:

6. Բայց երբ Մարիամի որդի Յիսուսն ասաց, «ով Իսրայէլի որդիք, ես Աստուծոյ մարգարէն եմ ձեզ համար, որ հաստատում են ինձնից առաջ եկած օրէնքը եւ աւետում եմ մի մարգարէ, որգալու է ինձնից յետոյ, անունը Ահմէդ»: Նոյնպէս էլ երբ նա եկաւ յայտնու-

թիւններով, ասացին «սա յայտնի կախարդութիւն է»:

7. Եւ ո՞վ է նրանից անիրաւ, որ Աստուծոյ դէմ սուտ է նկարում, քանի որ նա դէպի իսլամն է կանչուում: Եւ Աստուած անիրաւ մարդկանց չի առաջնորդի:

8. Նրանք ուզում են, որ հագցնեն Աստուծոյ լոյսը իրանց բերաններովը, բայց Աստուած լրացնում է իր լոյսը, թէեւ զգւեն էլ անհաւատները:

9. Նա է, որ իրան մարգարէն ուղարկել է առաջնորդութիւնով եւ ճշմարիտ կրօնքով, որ նա յաղթէ բոլոր կրօնքների վրայ, թէեւ զգւեն էլ կոպակաշտները:


10. Ո՞վ հաւատացեալներ, արդեօ՞ք ես ձեզ մի առեւտուրի առաջնորդեմ, որ ձեզ ազատէ ցաւալի տանջանքիցը:

11. Հաւատացէ՛ք Աստուծուն եւ նրա մարգարէին, եւ պատերազմիցէ՛ք Աստուծոյ ճանապարհումը ձեր ըստացւածքովը եւ ձեր անձերովը, սա լաւ է ձեզ համար, եթէ հասկանում էք:

12. Որ ներում է ձեզ ձեր մեղքերը եւ մտցնում ձեզ դրախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում եւ երջանիկ տղերի մէջ Եդեմի դրախտումը. սա մեծ երջանկութիւնն է:

13. Ուրիշ բան էլ, որ սիրում էք: Ոգնութիւնը Աստուածանից է եւ յաղթութիւնը մօտ է: Եւ աւետի՛ր հաւատացեալներին:

14. Ո՞վ հաւատացեալներ Աստուծուն օգնողներ եւ դէք, ինչպէ՛ս ասաց Մարիամի որդի Յիսուսը առաքեալներին, «ո՞վ է իմ օգնականը Աստուծոյ սիրոյն համար»: Առաքեալներն ասացին, «մենք Աստուծոյ օգնականներն ենք»: Այն ժամանակ Իսրայէլի որդկանցից մի մասը հաւատաց եւ մի մասը անհաւատ եղաւ, եւ մենք հաւատացողներին զօրացրեցինք իրանց թշնամիների դէմ, եւ յաղթող եղան:



62) ՍՈՒՐԷ ԱԼ-ՃԻԻՄ՝ Է :

Մէգիբնէական. տասն մէկ այէ :

Գթած ողորմած Աստուծոյ անունովը :

1. Օրհնում են Աստուծուն ինչ որ կան երկնքումը եւ երկրումս, թագաւորին, Սուրբին, հօրին, իմաստունին :

2. Նա է, որ անգրագէտների մէջ իրանցից մի մարգարէ է ուղարկել որ կարգում է նրանց համար նրա նշանները եւ նրանց մաքրում, եւ սովորեցնում է նրանց գիրքը եւ իմաստութիւնը, թէ եւ նրանք առաջուց յայտնի մոլորութեան մէջ էին :

3. Նրանցից էլ մի քանի ուրիշները նրանց հետ չեն միացել. եւ նա գորաւոր իմաստուն է :

4. Սա Աստուծոյ շնորհքն է, որ տալիս է ում ուզում է, եւ Աստուած մեծ շնորհքի աէր է :

5. Նրանք որ բռնուած են (Մոլսիտական) օրէնքովը, բայց նրան չեն կրում, նվան են էշին. որ գրքեր է կրում : Վատ է այն ազգի նմանութիւնը. որ Աստուծոյ նշանները սուտ են համարում. եւ Աստուած անիրաւ ազգին չի առաջնորդի :

6. Դու ասա՛, ա՛ղ հրէութիւն անողներ, եթէ դուք կարծում էք, թէ դուք էք Աստուծոյ բարեկամներն ու միւս մարդիկը չեն, այն ժամանակ փախազեցէ՛ք մահը, եթէ ճշմարիտ էք :

7. Բայց նրանք երբէք չեն փախազի նրան այն բանի պատճառաւ, որ իրանց ձեռները առաջուց արել է. եւ Աստուած ճանաչում է անիրաւներին :

8. Դու ասա՛, թրաւ այն մահը որից դուք փախչում էք, ա՛նա՛ նա ձեզ պատահելու է, եւ յետոյ ետ էք բերւելու նրա մօտ, որ գիտէ գաղտնիքները եւ յայտնի-

ներքը. եւ նա ձեզ իմացնելու է, թէ դուք ինչ էիք անում:

9. Ո՛վ հաւատացեալներ, երբ ժողովքի օրը աղօթքի էք կանչում, շտապեցէ՛ք Աստուծուն յիշելու եւ թողեցէ՛ք առեւտուրը. սա աւելի օգտակար է ձեզ համար, եթէ հասկանում էք:

10. Իսկ երբ աղօթքը վերջանում է, այն ժամանակ ցրեցէ՛ք երկրի վրայ եւ խնդրեցէ՛ք Աստուծոյ շքնորհ֊քիցը եւ յիշեցէ՛ք Աստուծուն շատ անգամ, որ երջանիկ լինէ՛ք:

11. Սակայն երբ մի շահ են տեսնում կամ մի դարձալիք. վազում են նրա մօտը եւ քեզ ձգում են: Ասա՛, «ինչ Աստուծոյ մօտ կայ, աւելի օգտակար է քան դարձալիքը եւ քան թէ շահը. եւ Աստուած ամենալաւ կերակրողն է:



63) ՍՈՒՐԷ ԱԼ-ՄԸՆԱՅԸԳԻՆ՝

Մէդինէական տասն մէկ այէ:

Գլխա՛յ ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երբ կեղծաւորները քեզ մօտ են դալիս, ասում են, «մենք վկայում ենք, դու Աստուծոյ մարգարէն ես», եւ Աստուած էլ զիտէ, զու նրա մարգարէն ես, եւ Աստուած վկայում է, կեղծաւորները ստախօսներ են:

2. Նրանք իրանց խոստումները դիմակ են շինում, եւ Աստուծոյ ճանապարհիցը խոտորվում են, ա՛նա՛ վատ է ինչ որ նրանք անում են:

3. Սա նրա համար է, որ հաւատում եւ յետոյ անհաւատ են դառնում. եւ կնիք է դրած նրանց սրտերի վրայ, բայց իրանք չեն հասկանում:

4. Նաեւ երբ դու նրանց տեսնում ես, քեզ զարմացրնում է նրանց մարմինը, եւ եթէ խօսում են, դու ականջ ես դնում նրանց խօսքին, կարծես թէ նեցուկ դրած փայտաշէնքեր են, որ ամեն մի ձայնը իրանց դէմ են կարծում: Նրանք թշնամիներ են. նրանցից զգուշացի՛ր: Աստուած սպանէ՛ նրանց, ո՛հ որքա՛ն են խոտորւած:

5. Նոյնպէս էլ երբ նրանց ասում է. «եկէ՛ք, Աստուծոյ մարգարէն ձեզ համար ներողութիւն խնդրէ», նրանք ետ են դարձնում իրանց գլուխները, եւ դու տեսնում ես նրանց, որ ետ են քաշւում հպարտացած.

6. Նրանց համար միեւնոյն է, թէ դու նրանց համար ներողութիւն կը խնդրես կամ նրանց համար ներողութիւն չես խնդրի. Աստուած նրանց չի ների. որովհետեւ Աստուած ամբարիշտ մարդկանցը չի առաջնորդի:

7. Նրանք են, որ ասում են. «նպաստ մի տաք նրանց, որոնք Աստուծոյ մարգարէի մօտն են, մինչեւ կը բաժանուեն»: Բայց Աստուծոյ մօտն է երկնքի եւ երկրի զանձերը, սակայն կեղծաւորները չեն հասկանում:

8. Նրանք ասում են, «եթէ մենք ետ դառնանք Մեղինա, այն ժամանակ զօրաւորը նւաստին պէտք է դուրս անի»: Բայց զօրութիւնը Աստուծուն է եւ նրա մարգարէինը եւ հաւատացեալներինը, սակայն կեղծաւորները չեն հասկանում:

9. Ո՛վ հաւատացեալներ, թող ձեր ստացւածքը քեզ չըզբաղեցնէ, եւ ոչ էլ ձեր զաւակները, որ Աստուծուն չը յիշէք. ով անէ այս բանը, այնպիսիները լիսուածներ են:

10. Նաեւ այն բանիցը, որ մենք ձեզ տւել ենք իբրեւ կերակուր, ողորմութիւն տէ՛ք յառաջ քան թէ մահը ձեզնից մէկին կը գայ եւ նա կ'ասէ «ով իմ Տէրինձ մի կարճ ժամանակ էլ միջոց տայիր, որ ողորմութիւն տայի եւ բարեպաշտներից դառնայի»:

11. Աստուած էլ մի մարդու միջոց չի տայ, երբ նրա սահմանւած ժամանակը եկել է. եւ Աստուած գիտէ թէ զուք ինչ էք անում:



64) ՍՈՒՐԷ՝ ԱԼ-ԹԱՂԱԲՈՒՆԸ՝

Մէքբէական. տասն երկու այէ:

Գլթած ոգորմած Աստուծոյ անունովը:

1. Օրհնում են Աստուծուն, ինչ որ կայ երկնքումը եւ երկրումս. նրանն է իշխանութիւնը, եւ նրանն է փառաբանութիւնը, եւ նա է ամենակարողը:

2. Նա է, որ ձեզ ստեղծել է. եւ կան ձեզնից անհաւատներ, եւ կան ձեզնից հաւատացողներ. եւ Աստուած տեսնում է ձեր արածը:

3. Նա ստեղծել է երկինքը եւ երկիրը ճշմարտութիւնով, եւ նա է ձեզ կերպարանք տուել, եւ ձեր կերպարանքը գեղեցկացրել: Եւ ետ գնալը նրա մօտ է:

4. Նա գիտէ. թէ ինչ կայ երկնքումը եւ երկրումը, եւ նա գիտէ ձեր ծածկածը եւ ձեր յայտնածը. եւ Աստուած գիտէ. թէ սրտերում ինչ կայ:

5. Մի՞թէ ձեզ չէ հասել նրանց լուրը, որ սրանից առաջ անհաւատ էին եւ իրանց գործի հատուցումը ճաշակեցին. եւ նրանց համար ցաւալի տանջանք կայ:

6. Սա նրա համար է. որ նրանց մօտ գալիս էին իրանց մարգարէները, բայց նրանք ասում էին, «մի՞թէ մի մարդ է լինելու մեզ առաջնորդողը». ուստի անհաւատ եղան եւ հրաժարեցին. բայց Աստուած նրանց կարօտ չէր, որովհետեւ Աստուած հարուստ օրհնեալ է:

7. Նոյն անհաւատները կարծում են, թէ երբէք յա-

բութիւն չեն անհիւ: Դու սասա՛, այո՛, ես երդնում եմ
իմ Տիրոջով որ դուք անպատճառ յարութիւն էք առ-
նելու: յետոյ ձեզ իմացնւելու է, թէ դուք ինչ էիք
անում. եւ սա հեշտ է Աստուծոյ համար:

8. Աւրեմն հաւատացէ՛ք Աստուծուն եւ նրա մարգա-
րէին եւ այն լոյսին, որ մենք իջեցրել ենք. եւ Աստ-
ուած գիտէ ինչ որ դուք անում էք:

9. Եւոյն օրը, որ նա ժողովելու օրւայ համար ձեզ
կը ժողովէ, դա իրար խաբելու օրն է. եւ ով հաւա-
տում է Աստուծուն եւ բարիք գործում, նրանից կը
քաուին նրա չարութիւնները եւ նա կը մտցնուի զը-
բախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում, եւ
նրանք նրանցում կը մնան յաւիտեան՝ սա մեծ փրկու-
թիւնն է:

10. Իսկ նրանք որ անհաւատ են եւ մեր նշանները
սուտ են համարում, նրանք կրակի ընկերներն են, որ
միշտ նրանում պիտի մնան. եւ ինչ վատ ընթացք է:

11. Մի պատահաս չի պատահի առանց Աստուծոյ
հրամանին, եւ ով հաւատում է Աստուծուն, նա նրա
սիրտը կ'առաջնորդէ. եւ Աստուած ամենագէտ է:

12. Հնազանդեցէ՛ք Աստուծուն եւ մարգարէին. իսկ
եթէ ես քաշէք, մեր մարգարէի պարտքը միմիայն
յայտնի քարոզ է:

13. Աստուած է, նրանից ջոկ Աստուած չըկայ, եւ
հաւատացեալները նրան են ապաւինում:

14. Ո՛վ հաւատացեալներ, ահա՛ ձեր կնիկները եւ
ձեր սրդիները ձեզ համար թշնամիներ կան: զգուշա-
ցէ՛ք նրանցից: Բայց եթէ ներէք եւ զիջանէք եւ թո-
ղութիւն տաք, ահա՛ Աստուած ներող ողորմած է:

15. Իրաւ ձեր ստացածքը եւ ձեր սրդիքը ձեզ հա-
մար փորձանք են. բայց Աստուծոյ մօտ մեծ վարձք
կայ:

16. Աւրեմն վախեցէ՛ք Աստուածանից որչափ որ կա-
րող էք, եւ ականջ դրէ՛ք, եւ հնազանդեցէ՛ք եւ ձեր
հողիներէ հաւար բարի ողորմութիւն տէ՛ք, եւ ով իր

անձի շահասիրութիւնը զսպէ, նրանք են երջանիկները:

17. Իսկ եթէ դուք Աստուծուն լաւ պարտք տաք, նա ձեզ կրկնապատիկը կը հատուցանէ, եւ կը ներէ ձեզ. եւ Աստուած երախտագէտ հեղ է:

18. Գիտէ գաղտնիները եւ յայտնիները, հզօր իմաստունն է:



65) ՍՈՒՐԷ ԱԼ-ԹՐԼԱԳ:

Մէդիներէական. տասն երկու այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը

1. Ո՛վ մարգարէ, երբ արձակում էք ձեր կնիկներին, արձակեցէ՛ք նրանց իրանց որոշեալ ժամանակովը. եւ հաշուեցէ՛ք ժամանակը, եւ վախեցէ՛ք ձեր Տէր Աստուածանից. նրանց դուրս մի՛ անէք իրանց աներիցը, եւ նրանք պէտք է դուրս չը գնան եթէ յայտնի անբարոյակոնութիւն գործած չ'լինեն: Եւ սա Աստուծոյ սահմաններն են. եւ ով Աստուծոյ սահմաններիցն անցնէ, նա արդէն իր հոգուն դէմ անիրաւութիւն է արել: Դու չը գիտես, զուցէ Աստուած սրանից յետոյ մի ուրիշ հրաման կը տայ:

2. Նոյնպէս նրանց որոշ ժամանակը կը հասնի, նրանց պահեցէ՛ք օրինաւոր կերպով կամ բաժանուեցէ՛ք նրանցից օրինաւոր կերպով եւ ձեզնից եզոզ արդար անձինքը վկայ կանչեցէ՛ք, եւ Աստուծոյ առաջին վրկայութիւն դրէ՛ք: Սրանով խրատ է լինում ձեզնից այն մարդուն, որ հաւատում էր Աստուծուն եւ վերջի օրւանը. եւ ով որ վախում է Աստուածանից, նա նրա համար ելք կը չինէ եւ նրան կը կերակրէ այնտեղից, որ նա չէ կարծում:

3. Ով որ էլ Աստուծուն է ապաւինում, նա նրա բաժինն է. որովհետեւ Աստուած հասնում է իրան գործին. Աստուած արդէն ամեն բանի սահման է դրել:

4. Նաեւ ձեր կնիկներիցը նրանք, որոնք իրանց ամսական արիւնի համար յուսահատուում են, եւ եթէ դուք էլ կարծում էք, այն ժամանակ նրանց սահմանեալ ժամանակը երեք ամիս է, եւ նրանց համար էլ որ ամսական արիւնը չունենա: Իսկ յղիների ժամանակը մինչեւ նրանց ծննդարեւութիւնն է, եւ ով վախում է Աստուածանից, նա նրա համար կը հեշտացնէ բանը:

5. Սա Աստուծոյ հրամանն է, որ նա իջեցրել է ձեզ համար. եւ ով վախում է Աստուածանից, նա նրանից կը քուէ նրա շարութիւնները եւ կը մեծացնէ նրա վարձքը:

6. Դուք բնակութիւն տւեցէ՛ք նրանց, ուր դուք էք բնակւում ձեր հանգստութիւնովը, եւ դուք նրանց մի՛ վնասէ՛ք, որ չը նեղւին: Եւ եթէ նրանք յղի լինեն, այն ժամանակ նրանց կերակրեցէ՛ք, մինչեւ ծրնունը կը բերեն: Եւ եթէ դրանք ծեծ են տալիս ձեզ համար, այն ժամանակ տէ՛ք նրանց վարձքը եւ իրար հետ վարեցէ՛ք օրինաւորապէս: Եւ եթէ մի դժւարութիւն ծագի եւ մի ուրիշ կնիկ նրան ծեծ տայ,

7. Թո՛ղ կարողութիւն ունեցողը իր կարողութիւնից ապրուստ տայ եւ նա որ սակաւ ունի, պարտական է ապրուստ տալ, ուրեմն թո՛ղ ապրուստը տայ նրանից ինչ որ Աստուած տւել է իրան: Աստուած մի մարդուց մի աւելի պահանջ չի անի բացի նրանից որ տւել է նրան: Աստուած դժւարութեանից յետոյ հեշտութիւն կը չինէ:

8. Եւ որքա՛ն քաղաքներ են ետ քաշուել իրանց Տիրոջ եւ նրա մարգարէների հրամանիցը. եւ մեք էլ նրանց հաշիւը տւեանք խիստ հաշիւով, եւ սաստիկ պատիժով պատժեցինք նրանց:

9. Նրանք էլ ճաշակեցին իրանց գործքի հատուցումը, եւ նրանց գործքի վերջն էր կորուստ:

10. Աստուած նրանց համար սաստիկ պատիժ է պատ-
րաստել. ուրեմն վախեցէ՛ք Աստուածանից, ով խելա-
ցիներ:

11. Հաստացեալնե՛ր, Աստուած արդէն ձեզ համար
խրատ է ուղարկել եւ մարգարէ, որ Աստուած յայտնի
նշանները կարգում է ձեզ համար, որ նրանց, որ հա-
ւատում եւ բարիք են գործում, հօնէ խաւարիցը դէպի
լոյսը. եւ ով հաւատում է Աստուծուն եւ բարի գոր-
ծում, նա նրան կը մտցնէ դրախտների մէջ, որոնց տա-
կովը գեաեք են հոսում. նրանք մնալու են նրանում
յաւիտեանս Աստուած արդէն նրա համար գեղեցիկ ապ-
րուստ է որոշել:

12. Աստուած է, որ ստեղծել է եօթը երկիրքը, եւ
նրանց նման էլ երկրիցը. եւ պատէրը իջնում նրանց
միջովը, որ գիտենաք, որ Աստուած ամենակարող է,
եւ ահա՛ Աստուած շրջապատել է ամեն բանը իր գի-
տութիւնովը:



66) ՍՈՒՐԷ ԱԼ-ԹԱՀՐԻՄ:

Մէդիւնէական. տասն երկու այլ:

Գլժած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ո՛վ մարդարէ, դու արգիլած մի՛ համարիր այն
որ Աստուած քեզ համար մաքուր է հրատարակել: Դու
քո կնիկների հաճութիւնն ես ուզում: Աստուած նե-
րող ողորմած է

2. Աստուած արդէն ձեզ հրաման է տւել ձեր եր
գումները լուծելու. եւ նա ձեր Տէրն է. եւ նա գիտուն
խմաստուն է:

3. Իսկ երբ մարգարէն իբրեւ գաղտնիք յանձնեց իր

կնիկներ թի մէկին բայց այն մէկը պատմեց բանը, եւ Աստուած էլ իմացրեց նրան այդ. նա էլ հասկացրեց նրա մի մասը եւ մի մասը եւս պահեց, եւ երբ նա իմացրեց կնկանը այդ կնիկն ասաց, «դա քեզ ո՞վ իմացըրեց» նա էլ ասաց, «ինձ իմացրեց գիտաշարը՝ տեղեակը»:

4. «Դուք եթէ երկուսդ գէպի Սասունն դարձի գաք, որովհետեւ աէդէն ծուել են ձեր երկուսի սրտերը... բայց եթէ իրար օգնէք նրա գէմ, ա՛նձ այն ժամանակ Սասունը նրա պաշտպանն է. նաեւ Գարրիէլը եւ հաւատացեալներ յարգարը եւ հրեշտակները օգնականներ են այսուհետեւ:

5. Երբ նա ձեզ արձակէ, գուցէ նրա Տէրը նրան ձեզնից աւելի լաւ կնիկներ տայ ձեր տեղը՝ միւս լիմուհիներ, հաւատացողուհիներ, հնազանդողուհիներ, ապախարողուհիներ, աստուածապաշտուհիներ, ժուժկայուհիներ, ամուսին ունեցածներ եւ կոյսեր»:

6. Ո՞վ հաւատացեալներ, պահպանեցէ՛ք ձեր հոգիները եւ ձեր ընտանիքները այն կրակիցը, որի այրուող նիւթն մարդիկ են եւ քարերը. նրա վրայ դուած են խիստ եւ սաստակ հրեշտակներ, որ այն բանի մէջ, որ իրանց հրամայւած է, չեն մեզանչում, եւ ինչ իրանց հրամայւած է կատարում են:

7. Ո՞վ անհաւատներ, այսօր ձեզ մի՛ արդարացնէք. դուք միմիայն ձեր արածների հատուցումն էք ստանում:

8. Ո՞վ հաւատացեալներ, դարձի եկէ՛ք գէպի Աստուած ճշմարիտ զղջումով. գուցէ Աստուած կը քաւէ ձեզնից ձեր յանցանքները եւ ձեզ կը մացնէ գրախտների մէջ, որոնց տակովը գետեր են հոսում, այն օրը որ Սասունը իր մարգարէին եւ նրա հետ եղող հաւատացեալներին ամօթով չի անի. նրանց լոյսը գնալու է նրանց առջեւից եւ աջ կողմիցը, եւ նրանք ասելու են, «ո՞վ մեր Տէր մեր լոյսը կատարեալ արա եւ ներքի մեզ դու ամենակարող ես»:

9. Ո՛վ մարդարէ, պատերազմի՛ր անհաւատների եւ կեղծաւորների դէմ, եւ խիստ եղի՛ր նրանց դէմ. եւ նրանց բնակութեան տեղը դժոխքն է, եւ ի՛նչ վատ ընթացք է:

10. Աստուած անհաւատների համար օրինակ է բերում Նոյի կիներ եւ Աովտի կիներ, որոնք մեր ծառաներից երկու հաւասարիմ ծառաների իշխանութեան տակն էին, եւ այն կնիկները անհաւատարիմ եղան նըրանց, բայց սա նրանց ոչ մի օգուտ չը բերեց Աստուծոյ դէմ, եւ նրանց առեց, «մտէ՛ք երկուսդ էլ կրակի մէջը մտնողների հետ»:

11. Աստուած էլ օրինակ է բերում հաւատացեալներին համար Փարաօնի կիներ, որ ասաց, «ո՛վ իմ Տէր, ինչ համար մի տուն չինի՛ր քեզ մօտ զբախտի մէջ եւ ինձ ազատի՛ր Փարաօնիցը եւ նրա արարքներիցը, եւ ինձ ազատի՛ր անիրաւների ազգիցը»:

12. Նաեւ Իմրանի աղջիկ Մարիամը, որ զգուշութեամբ պահեց իր կուսութիւնը, եւ մենք նրա մէջը փչեցինք մեր հոգուցը, եւ նա հաստատեց իր Տիրոջ եւ նրա գրքերի խօսքերը եւ հնազանդներիցը եղաւ:



67) ՍՈՒՐԷ ԱԼ-ՄԻԻԼ:

Մէքքէական. երեսուն այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Օրհնեալ լինի նա, որի ձեռքումն է թագաւորութիւնը, եւ նա ամենակարող է.

2. Որ տեղծել է մահը եւ կեանքը, որ ձեզ փորձէ,

թէ ձեզնից որի գործքերն են բարի, եւ նա է զօրաւոր ներողը :

3. Նա որ ստեղծել է եօթր երկինքը կամարներով : Դու Ողորմածի արարչագործութեան մէջ տարբերութիւն չես տեսնում : Արդ զարձրու աչքդ, արդեօ՞ք մի ճեղքւածք կը տեսնես :

4. Յետոյ երկու անգամ դարձրու աչքդ, եւ աչքդ ետ կը դառնայ խոնարհւած եւ տխրած :

5. Մենք էլ արդէն զարդարել ենք երկինքը ճրագներով, եւ նրանցով քարկոծում ենք սատանաներին, եւ մենք պատրաստել ենք նրանց համար կրակը,

6. Իրանց Տիրոջ չըհաւատացողների համար էլ դժոխքը, եւ ինչ վատ ընթացք է :

7. Իսկ երբ նրա մէջ կը գցուեն, կը լսեն նրա գոռալը եւ նա վառւած կը լինի :

8. Քիչ է մնում որ բարկութիւնիցը պայթի. ամեն անգամ երբ նրա մէջը մի խումբ մարդիկ են գցուում, նրա պահապանները հարցնում են նրանցից, «ձեզ մօտ խրատող չէ՞ եկել» :

9. Նրանք էլ ասում են, «այո՛, մեզ մօտ իրաւ խրատող եկաւ, բայց մենք նրան սուտ համարեցինք, եւ ասացինք, թէ Աստուած մի բան չէ իջեցրել, դուք միայն մեծ մոլորութեան մէջ էք» :

10. Նաեւ ասում են, «եթէ յսած եւ մտածած լինէինք, մենք կրակի ընկերներ չէինք լինի» :

11. Նրանք կը խոստովանեն իրանց մեղքերը, բայց ճեղք է կրակի ընկերներինցը :

12. Ահա՛ նրանք ոչ վախենում են իրանց Տիրոջից ծածուկ տեղը, նրանց համար թողութիւն եւ մեծ վարձք կայ :

13. Թէկուզ ծածկէք ձեր խօսքը թէկուզ յայտնէք նրան, ահա՛ նա սքստագէտ է :

14. Ահա՛ ստեղծողը գիտէ եւ նա նուրբ խմացողն է :

15. Նա է որ երկիրը ձեզ ամօր տափարակ է շինել

ուրինն ման եկէ՛ք նրա շէն տեղերը եւ կերէ՛ք նրա արդիւնքները յարութիւնը դէպի նրան է :

16. Մի՛թէ ապահով էք, որ երկնքումը լինողը երկիրը ձեզ հետ չի խորտակի, որ նա այն ժամանակ քարձրանում է :

17. Կամ արդեօ՞ք ապահով էք, որ երկնքումը լինողը ձեզ վրայ աւազուտ հողմ չի բերի. այն ժամանակ կ'իմանաք թէ ինչպէս էր իմ խրատը :

18. Եւ արդէն նրանցից առաջ եղողներն էլ սուտ էին համարում. բայց ինչպէ՛ս եղաւ իմ վրէժը :

19. Մի՛թէ նրանք չեն տեսել իրանցից վերեւ եղող շարք շարք թռչունները. որ թռչելիս իրանց թեւերը իրանց անքաշում, եւ ոչ ոլ նրանց չէ պահում բացի Ոգորմածից. ահա՛ նա տեսնում է սմեն բանը :

20. Կամ ո՞վ է որ մի զօրագունդի պէս ձեզ օգնէ բացի Ոգորմածից. ահա՛ անհաւատները սխալմունքի մէջ են :

21. Կամ ո՞վ է նա որ ձեզ կերակրէ, եթէ նա դադարեցնէ իր կերակրելը : Բայց դարձեալ յամառում են հակառակութեան մէջ եւ փոխում են :

22. Նա՞ է լաւ ատաջնորդածը. որ երեսին վրայ կըբացած է ման գալիս, կամ նա՞ որ ուղիղ ճանապարհում է մտն գալիս շիտակ :

23. Դու ասա՛, «նա է, որ ձեզ ստեղծել է եւ ձեզ համար շինել է լսողութիւնը, տեսողութիւնը եւ սրբտիրը, եւ քիչերն են որ դժհանում են» :

24. Դու ասա՛ նա է որ ձեզ երկրիս վրայ ցրել է, եւ դուք նրա մօտ պէտք է ժողովւիք» :

25. Նրանք էլ ասում են, «այդ խոստումը ե՞րբ է յինելու, եթէ դուք ճշտարիտ էք» :

26. Դու ասա՛, «դիտութիւնը միմիայն Ոստուծոյ մօտ է, այն ժամանակ անհաւատների երեսները կը շարանայ եւ կ'առի, «սա այն է, որի մասին դուք պահանջ էիք յայտնում» :

27. Դու ասա՛, «ի՛նչ էիք կարծում, եթէ Աստուած

ինձ եւ ինձ հետ եզոզներին քնաջինջ աշի կամ մեզ ողորմի, բայց ով կարող է անհաստաներին պաշտպանել ցաւալի տանջանքից :

29. Դու ասա՛, «նա է ողորմածը՝ մենք հաւատում ենք նրան, եւ նրանք են ապաւինած՝ ուրեմն դուք էլ էք շուտով իմանալու, թէ ով է նա, յայտնի մոլորութեան մէջ» :

30. Դու ասա՛, ինչ էք կարծում, եթէ մի առաւօտ ձեր ջուրը չորացած լինի՝ այն ժամանակ ձեզ համար ո՞վ վազող ջուր կը բերէ» :



68) ՍՈՒՐԷ ԱԼ-ԳԱԼԱՄ :

Մէքքէական յիսուն երկու այէ :

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը :

1. Ն. Երգում եմ անում գրիչովը, եւ ինչ որ գըրում եմ :

2. Դու քո Տիրոջ շնորհքովը դիւահար չես :

3. Քեզ համար ահա՛ վարձք կայ, ոչ իբրեւ շնորհք :

4. Նաեւ ահա՛ դու մեծ բնասորութեան տէր ես :

5. Ուրեմն դու շուտով կը տեսնես, եւ նրանք էլ կը տեսնեն,

6. թէ ձեզնից որն է խելագարւած :

7. Հիմայ քո Տէրը գիտէ, թէ ով է մոլորւած նրա ճանապարհիցը, եւ նա գիտէ առաջնորդողներին :

8. Բայց դու սուտ համարողներին մի՛ հետեւիր :

9. Նրանք սիրում են, որ դու կակուղ վարես, որ նրանք էլ կակուղ վարեն :

10. Բայց դու ոչ մի յայտնի ուխտադրութի մի՛ հետեւիր,

11. Սրիկայի բամբասանքով պատողի,
12. Բարիբից հա քաշողի, պատուիրանազանցի յանջաորի.
13. Անողորմի եւ յետոյ էլ անհարազատի.
14. Թէեւ ստացւածքի եւ որդկանց տէր լինի:
15. Իսկ երբ դու նրան կարգում ես մեր նշաններն, նա ստում է, թէ «նախնեաց առասպելներ են»:
16. Մենք նրա քիթին վրայ խարան ենք դնելու:
17. Մենք նրանց փորձել ենք, ինչպէս մենք այդիի տէրերին փորձեցինք, երբ նրանք երգում արեցին, որ միւս առաւօտը պտուղները պիտի ժողովէին:
18. Բայց բացառական պայման չը դրին:
19. Դրա համար նրանց պատեց մի պատուհաս քո Տիրոջից մինչդեռ նրանք քնանում էին:
20. Միւս առաւօտն արդէն պտուղները քաղւած էին:
21. Առաւօտն էլ իրար կանչեցին,
22. «Կանուխ գնացէ՛ք ձեր արտերը, եթէ ուզում էք քաղել»:
23. Նրանք էլ գնացին ու իրար կամացուկ ստելով,
24. «Մի աղքատ պիտի չը մտնէ այսօր դրա մէջը ձեզ մօտ»:
25. Եւ առաւօտը կանուխ այս որսուճով գնացին:
26. Իսկ երբ նրանք տեսան այգին, ասացին, «մենք սխալւած ենք»:
27. «Այո՛ մենք զրկւած ենք»:
28. Նրանից միջինն ասաց, «ես ձեզ չ'ասայի՞ թէ ինչու չէք փառք տալիս»:
29. Նրանք էլ ասացին, «փա՛ռք լինի մեր Տիրոջը, մենք անիրաւունք ենք եղել»:
30. Եւ սկսեցին իրար նախատել:
31. Ասացին, «ո՛հ, վա՛յ մեզ, մենք ապստամբներ էինք»:
32. «Քուցէ մեր Տէրը սրանից լաւը տայ մեզ փոխարէն. մենք մեր փափազը մեր Տիրոջ վրայ ենք դրել»:

33. Սրա նման է պատիժը. բայց միւս աշխարհքի պատիժը աւելի մեծ է, եթէ հասկանայինս:

34. Տե՛ս երկիր-դաճների համար իրանց Տիրոջ մօտ երջանիկ դրախտներ կան:

35. Մենք մի՞թէ միւսլիմներին հաւասար կանենք յանցաւորների հետ:

36. Ի՞նչ ունէք. ի՞նչպէս էք դատում:

37. Կամ դուք մի գի՞ր ունէք, որի սովորում էք:

38. Տե՛ս նրանում կայ ինչ որ դուք ընտրում էք:

39. Կամ մեզ դէմ խոստումնե՞ր ունէք, որ մինչեւ յարութեան օրն են հասնում. ահա՛ ձերը այն է որ դատում էք:

40. Հարցրո՛ւ նրանց, թէ նրանցից ո՞րն է սրան պատասխանատու:

41. Կամ նրանք աստուածընկերնե՞ր ունեն. ուրեմն թող բերեն իրանց աստուածընկերներին, եթէ ճշմարիտ են:

42. Նոյն օրը որ երանքը կը բացւի եւ նրանք կը կանչւին երկրպագելու, բայց չեն կարողանայ:

43. Նրանց աչքերը կը խոնարհեն. նախատինք կը պաշարէ նրանց, որ արդէն երկրպագելու կանչուցին, եւ իրանք առողջ էին:

44. Ոնրեմն թո՞ղ տուր ինձ եւ այս խօսքը սուտ համարողին. մենք նրանց աստիճանարար կը քաշինք, որ չեն իմանայ թէ որտեղից է:

45. Ես էլ նրանց կեանքը կ'երկարացնեմ, որովհետեւ իմ խորամանկութիւնը հաստատ է:

46. Կամ դու նրանից վա՞րձք ես ուզելու, մինչդեռ նրանք պարտքից ծանրաբեռնւած են:

47. Կամ դադտնիքը նրա՞նց մօտ է, եւ նրանք գըրօ՞ւմ են:

48. Ուրեմն քո Տիրոջ հրամանին համբերի՛ր եւ մի՛ լինիր այն ձուկի մէջ բնակողի նման, որ կանչեց երբ նեղւած էր:


49. Իսկ եթէ նրան հասած չը լինէր իր Տէրոջ շը-

նորհօքը, նա դուրս կը գցուէր անապատի մէջը պախաւորակեամբ:

50. Բայց նրա Տէրը նրան ընտրեց եւ արդարներիցը շինեց նրան:

51. Ուրեմն քիչ է մնում, որ անհաւատները քեզ ծակեն իրանց նայեածքովը, երբ լսում են քարոզը եւ ասում են, թէ նա դիւահար է:

52. Բայց դա միմիայն քարոզ է բոլոր աշխարհքին:



69) Ս Ո Ւ Ր Է Ա. Լ - Հ Ա. Գ. Գ Ա. :

Մէքքէական. յիսուն երկու այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Անտարակոյսը.
2. Ի՞նչ է անտարակոյսը:
3. Ի՞նչը քեզ հասկացրեց թէ ինչ է անտարակոյսը:
4. Սամուդացիք եւ Ադացիք սուտ համարեցին բաղ-խողին:
5. Բայց Սամուդացիք սատկեցին մի սատրիկ փոթորիկով.
6. Իսկ Ադացիք սատկեցին մի խիստ կատաղի քամիով.
7. Որ նա նրանց վրայ իշխել տեսց եօթը գիշեր եւ ութը օր դժբաղդօրէն: Այն ժամանակ դու կը տեսնէիր մարդկանց նրանում վար ընկած՝ դարտակ արմատենի-ների բունի պէս:
8. Մի՞թէ դու նրանցից մէկը մնացած կը տեսնէիր:
9. Եւ Փարաւօնն էլ եւ նրանից առաջ եղող տակ-նուվրայ եղած քաղաքները մեղանչել էին.
10. Նրանք ապստամբել էին իրանց Տիրոջ մար-

գարէի դէմ, եւ նա նրանց պատժեց սաստիկ պատժով:

11. Ծուրը երբ բարձրացաւ, մենք ձեզ կրեցինք նաւ
ւով:

12. Որ մենք այդ ձեզ համար յիշատակ շինենք, որ
պահող ականջը պահէ:

13. Երբ էլ մէկ անգամ փչելով փողը կը փչւի,

14. Այն ժամանակ երկիրը եւ սարերը կը շարժուին
եւ մէկ կործանումով կը կործանուին:

15. Նոյն օրն էլ կը պատահի պատահելիքը:

16. Եւ երկիրքը կը պատառւի, եւ այն օր նա վար
կ'ընկնի:

17. Նոյն օրը հրեշտակները նրա կողմին կը լինեն
եւ կը կրեն քո Տիրոջ ամոթը, այն օրը նրանցից վեր
ութը կը լինեն:

18. Այն օրը դուք կը ներկայացուիք, եւ ձեզնից
մի ծածուկ բան՝ ծածուկ չի լինի:

19. Իսկ որի աջ ձեռքին որ ելաբուի նրա գիրքը,
այն ժամանակ նա կ'ասի, «առէ՛ք կարգացէ՛ք իմ գիրքը»:

20. Կարծում էի ես, թէ ես իմ հաշիւս եմ հանդիս
պելու:

21. Իսկ նա մի հաճելի կեանք է ունենալու:

22. Մի բարձր գրախտի մէջ:

23. Որի քաղաք պատուները մօտ են լինելու:

24. «Կերէ՛ք եւ խմեցէ՛ք առատօրէն այն բաների
համար որ անցած ժամանակներն արել էք»:

25. Իսկ նա որի գիրքը կը արել իրան ձախ ձեռքը,
այն ժամանակ նա կ'ասի, «ո՛հ, երանի՛ թէ ես այս
գիրքս ստացած չը լինէի»:

26. «Ես էլ չէի գիտենայ իմ հաշիւը»:

27. «Ո՛հ երանի՛ թէ նա ինձ վերջացրած լինէր»:

28. «Իմ ստացւածքս ինձ չ'օգնեց»:

29. «Իմ իշխանութիւնս ինձան ից կորել է»:

30. Ի՛նչեցէ՛ք նրան եւ կապեցէ՛ք նրան:

31. Յետոյ դժոխքի կրակի մէջ գցեցէ՛ք նրան, որ
այրւի:

32. Յետոյ մի շղթայով կապեցէ՛ք, որի երկայնու-
թիւնը եօթանասուն կանգուն լինի:

33. Որովհետեւ նա չէր հաւատում մեծ Աստուծուն.

34. Եւ աղքատի կերակուրի համար հոգ չ'ունէր.

35. Նրա համար էլ. այսօր այստեղ բարեկամ չըկայ.

36. Ոչ էլ ուտելիք, բայի հոտած փտածից,

37. Նա մի բան պիտի չ'ուտէ. եթէ ոչ մեղաւորների
կերածը:

38. Այո՛, եւ երգում եմ անում ձեր տեսածովը,

39. Եւ ձեր չը տեսածովը.

40. Որ սա մի ազնիւ մարգարէի խօսքն է.

41. Սա բանաստեղծի խօսք չէ. ձեզնից քիչերդ էք
հաւատում:

42. Այ էլ հմայող քուրմի խօսք է. ձեզնից քիչերդ
էք յիշում:

43. Աշխարհքների Տիրոջից եկող յայանութիւն է:

44. Իսկ եթէ նա իր խօսքերից մի քանիսը քեզ դէմ
խօսած լինէր,

45. Մենք անպատճառ նրա աջ ձեռքիցը բռնած կը
լինէինք.

46. Յետոյ կը կորէինք նրանից սրտի երակները.

47. Եւ ձեզնից ոչ մէկին չէինք արգելի նրան տան-
չելու:

48. Եւ ահա՛ սա յուշարար է երկիւղածների համար.

49. Եւ մենք քաջ գիտենք, որ ձեզնից կան սուտ
համարողներ.

50. Բայց նա ամոստանքի պատճառ է լինելու անհա-
ւատների համար:

51. Բայց նա հատուտ հաւատքի ճշմարտութիւն է:

52. Ուրիմն փա՛ռք տուր քո մեծ Տիրոջ անունովը:



70) ՍՈՒՐԷ՝ ԱԼ-ՄԷՍԸԻՃ

Մէքքէական. քառասուն չորս այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մի հարցնող հարցրեց այն պատժի մասին, որ պիտի լինի
2. Անհաւատներին. ոչ ով չէ կարող նրան ետ պահել
3. Աստուածանից, որ աստիճանների տէր է,
4. Որ նրանցով վեր են գնում նրա մօտ հրեշտակները եւ հոգին մէկ օրւայ մէջ, որի չափը յիսուն հազար տարի է:
5. Ուրեմն գեղեցիկ համբերութիւնով համբերի՛ր:
6. Նրանք տեսնում են նրան հեռու,
7. Բայց մենք տեսնում ենք նրան մօտիկ
8. Նոյն օրը որ երկիրքը հալւած պղինձի նման կը լինի.
9. Սարերն էլ գոյնզգոյն բուրդի կը նմանեն,
10. Այն ժամանակ մէկ բարեկամ իր բարեկամին չի հարցնի.
11. Նրանք միմեանց կը տեսնեն. յանցաւորը կ'ուզէ այն օր պատժիցն ազատւի՝ իր որդիք, փրկանք տալով
12. Նաեւ իր կինը եւ եղբայրները
13. Եւ այն ազգականները, որոնք նրան պատսպարել են.
14. Բոլոր երկրի վրայ եղողներն էլ, որ նրան ազատեն:
15. Բնա՛ւ. ահա՛ դժոխքի կրակը
16. Քաշում է որ խորովէ,
17. Կանչում է նրան, որ ետ է քաշում եւ ետ դառնում,

18. Եւ հաւաքում է եւ դիզում:
19. Իրաւ մարդս ժլատ է ստեղծւած.
20. Երբ նրան մի չարիք է պատահում, արանջում է:
21. Նրան էլ երբ մի բարիք է պատահում, կծծի է դառնում.
22. Բայց ոչ թէ աղօթք անողները,
23. Որոնք իրանց աղօթքներումը յարատեւողներ են:
24. Որոնք էլ իրանց ստացւածքի մէջ որոշ բաժին ունեն,
25. Մուրացողին եւ գրկւածին համար,
26. Որոնք էլ հաստատ հաւատում են դատաստանի օրւան.
27. Եւ որոնք էլ իրանց Տիրոջ պատժիցը վախում են:
28. Որովհետեւ իրանց Տիրոջ պատժիցը ապահովութիւն չըկայ
29. Եւ որոնք իրանց ողջախոհութիւնը պահպանում են
30. Բացի իրանց կնիկներից կամ բացի նրանցից, որոնց ստացել են իրանց աջ ձեռքովը. այնպէս որ նրանք պախարակելի չեն:
31. Իսկ ով որ սրանցից աւելի բան պահանջէ, ահա՛ նրանք պատւիրանազանցներ են:
32. Եւ որոնք իրանց ուխտերը եւ պայմանները պահող են.
33. Ու որոնք իրանց վկայութիւններին հաստատ են.
34. Եւ որոնք իրանց աղօթքների վրայ հսկող են.
35. Նրանք գրախտի մէջ պատոււածներ կը լինեն:
36. Ու մեմն ի՞նչ կայ որ անհաւատները իրանց աչքերը կախած,
37. Այլ ու ձախ կողմից քո առաջին խմբւած գնում են:
38. Ուզում է արդեօք ամեն մի մարդ նրանցից, որ երջանիկ դրախտը մանէ:

39. Բնաւ. նրանք գիտեն, թէ մենք իրանց ինչից ենք ստեղծել:

40. Իբաւ, երգում եմ անում արեւելքների եւ արեւմուտքների Տիրոջմովը, որ մենք կարող ենք

41. Որ փոխենք նրանցից լաւագոյնով, եւ ոչ ոք մեզ չի գերազանցի:

42. Ուրեմն թող վիճեն եւ խաղան, մինչեւ հասնեն այն օրան, որ կը կանչեն:

43. Նոյն օրը, որ շատպիւով իրանց գերեզմաններիցը դուրս կըգան, որ կարծես թէ իրանց զրօշակների մօտ են վազում:

44. Բայց իրանց նայւածքները կախելու են. նրանց պաշարելու է ամօթը: Այո՛ այն օրն է, որ նրանք կանչւած կը լինեն:



71) ՍՈՒՐԷՆ Ն Ո Յ

Մէքքէական. քսան ինը այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մենք Նոյին ուղարկեցինք իր ժողովրդի մօտ, թէ խրատի՛ր քո ժողովրդիդ դեռ նրանց համար չ'եկած ցաւալի տանջանք:

2. Նա էլ ասաց, «ո՛վ իմ ժողովուրդ ես ձեզ համար յայտնի խրատող եմ»:

3. «Որ ծառայէք Աստուծուն եւ վախէք նրանից եւ ինձ հնազանդէք»:

4. Նա էլ կը ներէ ձեզ ձեր մեղքերը եւ ձեզ երկար միջոց կըտայ մինչեւ մի որոշ ժամանակ: Իբաւ երբ Աստուծոյ որոշ ժամանակը եկաւ, նա ետ չի պահւի, եթէ դուք գիտէք»:

5. Նաեւ ասաց «ո՛վ Տէր իմ, ես իմ ժողովուրդս կանչեցի գիշերները եւ ցերեկները, բայց իմ հրաւէրը միմիայն նրանց փոխուեալ չատացրեց»:

6. «Ամեն անգամ էլ ես նրանց կանչում էի, որ դու նրանց ներես նրանք իրանց մատերը դնում էին իրանց ականջներուսը եւ ծածկուում էին իրանց հագուստներովը, յամառում եւ հպարտութիւնով հպարտանում էին»:

7. «Յետոյ ես նրանց կանչեցի հրապարակաւ»,

8. «Յետոյ ես նրանց հետ յայտնի խօսեցի եւ ծածուկ կերպով խօսեցի նրանց հետ առանձին»:

9. Նաեւ ասացի, «ներողութիւն խնդրեցէ՛ք, ահա՛ նա ներող է»:

10. «Երկնքին անձրեւ տեղալ կըտայ ձեզ վրայ»:

11. «Ձեզ էլ կը շատացնէ տոացւածքով եւ որդիներով, եւ ձեզ հատար դրախտն է կը շինէ եւ զհտեր»:

12. «Ի՞նչ ունէք որ Աստուծուն չէք յուսում ծանրապէս»:

13. «Դ՛անի որ նա ձեզ ստեղծել է զանազան կերպով»:

14. Աստուած եօթը երկինքը ստեղծել է կամարներով:

15. Եւ լուսինը նրանց մէջ լոյս է շինել, եւ արեգակը շինել է ճրագ»:

16. Աստուած էլ ձեզ համար երկրից բոյսեր է բուսցրնում:

17. Յետոյ ձեզ նրա մէջն է ետ դարձնելու եւ ձեզ նրանից դուրս է հանելու:

18. Նաեւ Աստուած երկիրը ձեզ համար տարածել է,

19. Որ դուք լայն ճանապարհներով ման գաք նրա վրայ:

20. Նոյ ասաց, «ո՛վ իմ Տէր, նրանք ապստամբել են ինձ դէմ, եւ հեռուում են նրան, որի ստացւածքը եւ որդիքը միայն նրա վրասն են շատացնում»,

21. Նրանք էլ մեծ խորամանկութիւն հնարեցին,

22. Ու ասացին, «մի՛ ձգէք ձեր աստուածները, եւ մի՛ ձգէք Վաղդր եւ ոչ էլ Սօլաման»:

23. Ոչ էլ Եաղուսը եւ ոչ էլ Նասրը .
24. Նրանք արդէն շատ մոլորած են, եւ անիրաւ-
ները մի բան չեն աւելացնի բացի մոլորութիւնից .
25. Իբանց գործած մեղքի պատճառով ջրի մէջ խեղ
ղըւեցին եւ կրակի մէջ մտան .
26. Նաեւ Աստուածանից զատ իբանց համար օդնող-
նէք չը գտան :
27. Նոյ էլ ասաց «ո՛վ իմ Տէր, անհաւատներից մի
ընտանիք մի՛ թողուր երկրի վրայ» .
28. Իսկ եթէ զու նրանց թողնես, նրանք քո ծա-
ռաներին կը մոլորեցնեն եւ նրանք միմիայն ամբա-
բիշտ և՛ անհաւատ սերունդ կունենան :
29. «Ո՛վ իմ Տէր, ների՛ր ինձ եւ իմ ծնողներիս եւ
ով որ իմ տունը մտնէ իբրեւ հաւատացեալ, եւ հաւա-
տացեալ մարդկանց ու հաւատացեալ կանանց, եւ անի-
բաւնիքին միայն կորուստը աւելացրո՛ւ :



72) ՍՈՒՐԷ ԱԼ-ՃԻՆՆ՝

Մէքքէական. քսան ութ այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը .

1. Դու ասա՛, «ինձ յայտնութիւն է եղել որ դեւե-
րից մի խումբ ականջ դրեցին եւ ասացին, մենք մի
զարմանալի Ղուրան ենք լսել .
2. Որ դէպի ուղղութիւն է ստաջնորդում, եւ մենք
հաւատում ենք նրան . եւ մենք մեր Տիրոջը մի ընկեր
չենք գնի երբէք :
3. Նաեւ մեր շատ բարձեալ Տէրը չունի ոչ կին եւ
ոչ որդի :

4. «Միմիայն մեզնից ամենայիմարն Աստուծոյ գէմ
ասում էք ստարանութիւններ»

5. Մենք էլ կարծում էինք, թէ ոչ մարդիկ եւ ոչ
զեւերը Աստուծոյ գէմ երբէք սուտ չեն ասիւ :

6. Մարդկանցից էլ կային ոմանք, որոնք զեւերից
ոմանց մօտ ապաստան էին պտրում, եւ միմիայն ի-
րանց յիմարութիւնն էին շատացնում :

7. «Նրանք կարծում էին ինչպէս զուք էք կարծում,
որ Աստուած ոչ մէկի յարութիւն չի տայ :

8. Մենք էլ շօշափեցինք երկիրքը եւ տեսանք, որ
էիքն է խիստ պահապաններով եւ ասուպներով :

9. «Եւ մենք նստում էինք նստարանների վրայ որ
ականջ դնենք, եւ ով որ հիմայ ականջ է դնում, իրան
համար մի հսկող ասուպ է գտնում :

10. Իսկ մենք չը գիտենք, թէ երկրի վրայ եղող-
ների համար մի չարիք է ուզում :

11. «Մեզնից էլ կան բարեպաշտներ, եւ կան որ նը-
քանցից տարբեր են, որովհետեւ մենք այլ եւ այլ տե-
սակներ ենք :

12. «Եւ մենք կարծում ենք, որ բնաւ չեն կարող
Աստուծուն տկարացնել երկրի վրայ եւ բնաւ չենք կա-
րող նրան տկարացնել փախչելով :

13. «Իսկ երբ մենք լսեցինք ուղիղ ճանապարհը, հա-
ւատացինք նրան, եւ ով որ իր Տիրոջը հաւատում է,
նա ոչ վարձքի կրճատումից եւ ոչ էլ մի անիրաւու-
թեան մասին երկիրդ կ'ունենայ :

14. Մեզնից էլ կան ոմանք, որ միւսլիմներ են եւ
կան մեզնից խոտորւողներ : Եւ ով որ ընդունում է
միւսլամը, այնպիսիները պտրում են ուղիղ առաջնորդու-
թիւն :

15. Իսկ նրանք որ խոտորւում են, նրանք գծոխքի
վառելանիւթ են :

16. Եւ եթէ նրանք ճանապարհի վրայ հաստատ մը-
նան, մենք նրանց առատապէս ջուր կըտանք :

17. Որ նրանով փորձենք նրանց. եւ ով ետ քաշուի իր Տարոջ յիշելուց, նա կը գնայ ցաւալի պատժի մէջը:

18. Իրաւ ազօթատեղիները Աստուծունն են. ուրեմն Աստուծոյ հետ միասին մի ուրիշին ազօթք մի՛ անէք:

19. Աստուծոյ ծառան երբ կանգնեց, որ նրան ազօթք անէ, քիչ էր մնացել որ նրան ճնշէ ինչպէս զեւերը:

20. Դու ասա՛, «ես միայն իմ Տիրոջն եմ ազօթում, եւ նրան ընկեր չեմ չինի ոչ մէկին»:

21. Նաեւ ասա՛, «ես չեմ կարող ձեզ մնասել եւ ոչ էլ ուղիղ առաջնորդել»:

22. Դու ասա՛, «ինձ ոչ ով չէ կարող պաշտպանել աստուծոյ դէմ»:

23. Ու երբէք չեմ գտնի մի պաշտպան բացի նրանից»:

24. «Միմիայն Աստուծոյ պատգամը եւ դեսպանութիւնն ունիմ. եւ ով ազատամբւի Աստուծոյ եւ նրա մարգարէի դէմ, նրա համար կայ դժոխքի կրակը, որի մէջ կը մնան այդպիսիները յաւիտեան»:

25. «Մինչեւ չը տեսնեն կանխաւ իրանց ասւածները այն ժամանակ կ'իմանան, թէ ով էր տկար օղնողը եւ ով էր սակաւթիւրը»:

26. Դու ասա՛, «ես չը գիտեմ թէ մօտ է այն բանը որ ձեզ կանխաւ ասւած է, թէ իմ Տէրը միջոցը կ'երկարացնի՝ նա գիտէ գաղտնիքները, եւ նա իր գաղտնիքը մէկի չի յայտնի»:

27. Բացի մէկ դեսպանից, որին նա կը հաւանի, որի առաջիցը եւ ետեւիցը հսկողներ կ'ուղարկէ:

28. Որ գիտենայ, նրանք իրանց Տիրոջ պատգամն են հասցնում. եւ նա շրջապատում է ինչ որ նրա մօտ է եւ ամեն բանը հաշուում է թւով:



73) ՍՈՒՐԷ՝ ԱՆՄԻԻԶԼՄՄԻԻԼ

Մէքքէական. քսան այէ:

Գլժած ողորմած Աստուծոյ անուհովը:

1. Ով փաթաթւած,
2. Վեր կաց գիշերը, բացի մի քիչից.
3. Կէսը կամ նրանից պակասեցրու մի քիչ.
4. Կամ աւելցրու նրա վրայ, եւ երգելով երգի՛ր Ղուրանը:
5. Իբաւ մենք քեզ ծանր խօսք ենք հրամայում:
6. Որովհետեւ գիշերը վեր կենալը դժւար է կանգնելու համար, եւ զօրաւոր է յորդորի համար:
7. Իբաւ դու ցերեկը չաս զբաղմունք ունես:
8. Նաեւ յիշի՛ր քո Տիրոջ անունը եւ քեզ բողբոլին նրան նւիրի՛ր:
9. Նա արեւելքի եւ արեւմուտքի տէրն է, նրանից բաց Աստուած չըկայ, ուրեմն նրան պահապան ընդունի՛ր:
10. Ուրեմն տա՛ր ինչ ասում են, եւ սիրուն կերպով ետ քաշի՛ր նրանից:
11. Եւ թո՛ղ մինակ եւ մնամ եւ սուտ համարող պարգեւների տէրերը եւ նրանց մի քիչ ժամանակ տուր:
12. Իբաւ մեզ մօտ պատիժ կայ եւ դժոխքի կրակ:
15. Նաեւ խեղդող կերակուր եւ ցաւալի տանջանք:
14. Նոյն օրը շարժելու է երկիրը եւ սարերը, եւ սարերը ինչպէս քամիով ժողովւած աւազների թումբեր են դառնալու:
15. Մենք ձեզ համար մի մարգարէ ենք ուղարկել, որ ձեզ դէմ վկայէ, ինչպէս որ Փարաւօնի համար էլ էինք մարգարէ ուղարկել:


16. Բայց Փարաւօնը մեր մարգարէի դէմ ապստամբ-
ւեց, եւ մինք նրան պատժեցինք ծանց պատիժով:

17. Հիմայ դուք ինչպէս էք վախենում այն օրից,
որ մանուկներին էլ ծեր է շինելու:

18. Նրանում պատուելու է երկիրքը, եւ նրա խոս-
տացածը կատարելու է:

19. Սա յիշեցնում է ուրեմն ով ուզէ, ճանապարհ
կընդունէ գէպի իր Տիրոջը:

20. Իրաւ քո Տէրը գիտէ, որ դու վեր ես կենում
գիշերայ երկու երրորդիցը պակաս, եւ կէսը եւ մի
մի երրորդը, եւ քեզ հետ լինողներից էլ մի խումբ.
Եւ Աստուած որոշում է գիշերը եւ օրը, եւ նա գիտէ
դուք չէք կարող հաշել. եւ նա ձեզ մօտ է դառնում,
ուրեմն կարդացէ՛ք Առաւելից ինչ որ գիւրին է. նա
գիտէ ձեզնից ոմանք հիւանդ են, եւ ոմանք ման են
գալիս երկրումը Աստուածանից պարզաւ խնդրելով, եւ
միւսներն էլ պատերազմում են Աստուծոյ ճանապար-
հումը. ուրեմն կարդացէ՛ք նրանից ինչ գիւրին է եւ
կատարեցէ՛ք աղօթքը, եւ տէ՛ք մաքրութեան տուրքը
եւ Աստուծուն զեղեցիկ պարտք տէ՛ք: Եւ ինչ բարիք
որ կանխաւ անէք, նրան կը գտնէք Աստուծոյ մօտ:
Նա բարի է եւ վարձատրութեամբ էլ աւելի մեծ, եւ
ներողութիւն խնդրեցէ՛ք Աստուածանից, որովհետեւ
Աստուած ներող ողորմած է:



74) Ս Ո Ւ Ր Է Ա Լ - Մ Ի Ի Գ Է Ս Ս Ը Ր

Մէքքէական. յիսուն հինգ այլ:

Գլխած ողորմած Աստուծոյ անդունովը:

1. Ո՛վ վերականոյ ծածկած.
2. Վե՛ր կա՛ց եւ խրատիր,
3. Դո Տիրոջն էլ փառք տուր,

4. Բո հազուցաք մաքրի՛ր :
5. Նախ ազատաութիւնիցը հեռացի՛ր ,
6. Եւ միշտ շնորհի՛ր որ շտացնես :
7. Բո Տիրոջ համար էլ համբերի՛ր :
8. Ու հրք փողը կը հնչի ,
9. Նոյն ժամանակը սա մի դժւար օր կը լինի .
10. Դա անհաւատներին համար գիւրին չի լինի :
11. Թող ամէր ինձ մինակ , եւ նա որ ստեղծել եմ ,
12. Եւ նրան էլ ընդարձակ ստացածք եմ տւել ,
13. Նաեւ որդիք՝ աչքի առաջին ,
14. Կւ նրան էլ սեղաւորել եմ լաւ տեղ .
15. Բայց նա ուզում է շտացնեմ :
16. Բնա՛ւ , նա մեր նշաններին հակառակ է :
17. Նրա համար ես դժւարութիւններ եմ շինելու :
18. Որովհետեւ մտածում եւ որոշում է :
19. Բայց նա սատկի՛ , ինչպէս որ որոշել է :
20. Դարձեալ՝ նա սատկի՛ , ինչպէս որ որոշել է :
21. Յետոյ մտիկ կըտայ :
22. Յետոյ տխուր կընայի եւ կը տրամի :
23. Յետոյ ետ կը գնայ եւ կ'ամբարտաւանանայ ,
24. Ու կ'ասի , «սա կախարդութիւնն է , ստացած .
25. Ու միժխայն մարդու խօսք է ,
26. Նրան շուտով կ'այրեմ ես դժոխքումը :
27. Բայց դու ի՞նչ գիտես թէ դժոխքը ինչ է :
28. Նա աւելորդ շունենայ . եւ մի բան չի ձգի .
29. Նա այրող է մարդու համար .
30. Նրա վրայ կան տասնինը պահապաններ .
31. Միայն հրեշտակներ ենք պահապան դրել կրա-
կին , եւ նրանց թիւը միայն փորձութիւնն ենք շինել
անհաւատների համար , որ գիրք ունեցողները համոզ-
ւին եւ հաւատացեալների հաւատքը շատանայ .
32. Նաեւ գիրք ստացողներն ու հաւատացեալները
չ'երկմանն :
33. Նրանք էլ որոնց սրտերումը ակարութիւն կայ ,
եւ անհաւատներն ասում են , Աստուած ի՞նչ է ուզում
այս առաքիւղը :

34. Ատուած այսպէս մոլորեցնում է իր ուզածին
և առաջնորդում է իր ուզածին, և միայն նա է ճա-
նաչում քո Տիրոջ զօրագունդերը: և նա միայն յիշե-
ցուցիչ է մարդկանց համար:

35. Բնա՛ւ, և երգում եմ անում լուսինովը,

36. Երգում եմ անում գիշերովը, երբ ես է դառ-
նում:

37. Երգում եմ անում առաօտովը, երբ լուսանում է:

38. Որ սա սոսկալեներիցը մինն է.

39. Խրատիչ է մարդկանց համար.

40. Ձեզնից յառաջադիմել կամ յետադիմել ուղողին
համար:

41. Իւրաքանչիւր հողի իր արածի գրան է բացի
աջակողմաններից,

42. Որո՞նք դրախտներում հարցնում են յանցաւոր-
ներին,

43. «Ձեզ ի՞նչ քչեց դժոխքի մէջ»:

44. Նրանք էլ ասում են, «մենք աղօթք անող չէ-
ինք»:

45. «Աղքատներին էլ չէինք կերակրում,

46. «Նաև գատարկախօսների հետ գատարկարանու-
թիւն էինք անում»:

47. «Եւ գատատանի օրը սուտ էինք համարում.

48. «Խինչև համոզումը եկտ. մեզ հասաւ:

49. Նոյն ժամանակ նրանց օգուտ չի անի բարե-
խօսների բարեխօսութիւնը:

50. Ուրեմն ի՞նչ ունեն, որ յիշեցումից ես են քաշ-
ւում:

51. Կարծես թէ խրդնած էշեր են. որ վախչում են
առիւծից:

52. Սակայն նրանցից ամեն մի մարդ ուզում է, որ
իրան բացւած նամակներ տրւին:

53. Բնա՛ւ, ապա նրանք միւս աշխարհքիցը չե՞ն
վախենում:

54. Բնա՛ւ, նա մի յիշեցում է. ով որ ուզէ, կը
յիշէ նրան:

55. Նրանք էլ չեն յիշի, եթէ Աստուած չը կամենայ:

56. Նրան կը պատկանի նրկիւղը. եւ նա է ներողութեան տէրը:



75) ՍՈՒՐԷ ԱԼ-ԳԻՍՄԷԹ.

Մէքքէական. քառասուն այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անուհովը.

1. Իրա՛ւ երդում եմ անում յարութեան օրովը.
2. Նաեւ իրա՛ւ երդում եմ անում ինքն իրան պահարկող հոգիովը
3. Մի՞թէ կարծում է մարդ, որ մենք նրա ոսկորները բնաւ չենք ժողովի միասին:
4. Իրա՛ւ մենք կարող ենք որ հաւաքենք նրա մատերն էլ:
5. Բայց մարդս ուզում է ամբարշտանալ իր առաջին:
6. Նա հարցնում է, «ե՞րբ է լինելու յարութեան օրը»:
7. Իսկ երբ տեսողութիւնը կը մթնէ,
8. Լուսինն էլ կը խաւարւի.
9. Ու արեգակն ու լուսինը կը միանան.
10. Նոյն ժամանակ մարդս կ'ասէ. «ո՛ւր է ապաստանուելու տեղը»:
11. Բնա՛ւ. ապաստանարան չըկայ:
12. Նոյն օրը կանգնելու տեղը քո Տիրոջ մօտ է:
13. Նոյն օրը մարդուս կ'իմացնեն թէ ինչ է արել եւ ինչ թողել:
14. Մարդս էլ ինքն իրան դէմ է վկայելու:
15. Իսկ եթէ իր պատճառանքներն էլ բերէ.
16. Լեզուդ դրանով մի՛ շարժիր, որ շտապես դրանով.

17. Որովհետեւ մեր գործն է, որ նրան ժողովենք
և նրան կարգանք.
18. Ու երբ մենք նրան կարգացինք, այն ժամանակ
հետեւ ի՛ր նրա ընթերցանութեանը:
19. Յետոյ մեր պարտքն է նրա բացատրութիւնը:
20. Բնա՛ւ. բայց դուք սիրում էք արագ գնացողը.
21. Նաև անտես էք անում հանդերձեալը.
22. Նոյն օրը մի քանի երեսներ կը փայլեն.
23. Իրանց Տիրոջը մտիկ կը անան:
24. Այն օրը մի քանի երեսներ կը տխրեն.
25. Կը կարծեն թէ իրանց վրայ թշուառութիւն է
գալու նրանով:
26. Բնա՛ւ. երբ հոգին կուրծքին կը հասնի,
27. Ու կ'առի, «ո՛վ է հմայում».
28. Եւ նա էլ կը կարծէ, որ բաժանումն է:
29. Իսկ ազգբը ազգբին կը մօտեցնէ.
30. Այն օրը նա կը սարբի քո Տիրոջ մօտը.
31. Որովհետեւ նա ոչ հաւատաց, ոչ աղօթեց.
32. Սակայն սուտ համարեց եւ հրաժարեց.
33. Յետոյ գնաց իր ընտանիքի մօտ գոռոզաբար:
34. Վա՛յ քեզ, եւ վա՛յ:
35. Յետոյ վա՛յ քեզ, եւ վա՛յ:
36. Մի՞թէ մարդս կարծում է, որ ազատ է թող-
նուած.
37. Մի՞թէ նա մի սերմի կաթիլ չէր, որ կաթեց.
38. Յետոյ թանձրացած արիւն եղաւ, բայց նա ըս-
տեղծեց եւ կազմակերպեց:
39. Եւ նրանից էլ երկու զոյգ չինեց՝ արուն եւ էգը:
40. Մի՞թէ սա կարող չէ, որ մեռելներին կենդա-
նացնէ:



76) ՍԻՐԷ-ԱԼ-ԸՆՍԱՆ:

Մէքքէական. երեսուն մէկ այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մի երկար ժամանակ չէ՞ անցել աշխարհփրցը մարդուս վրայ, քանի որ ինքը դեռ չէր յիշած մի բանի պէս:

2. Մենք ստեղծել ենք մարդը հեղուկ սերմերից խառնըւած, որ նրան փորձենք. և նրան շինել ենք լսող և անտնող:

3. Մենք նրան առաջնորդել ենք ճանապարհով, երբեմն իբրև երախտադէտ, երբեմն իբրև ապերախտ:

4. Մենք պատրաստել ենք անհաւատների համար շղթաներ, վզկապներ և դժոխքի կրակ:

5. Բայց արգարները կըլամեն մէկ բաժակից, որ խառնած է քափուրի հետ.

6. Մի աղբիւր, որի միմիայն Աստուծոյ ծառաներն են խմում, որից բղխումներ են բղխեցնում.

7. Նրանք կատարում են իրանց ուխտը, և վախում են այն օրից, որի չարիքը տարածուելու է.

8. և նրա սիրովը ուտելիքով կերակրում են աղքատին, որբին և գերիին.

9. Ու ասում են, «մենք ձեզ միայն Աստուծոյ սէրին համար ենք կերակրում. մենք ձեզնից ոչ վարձք ենք ուզում և ոչ շնորհակալութիւն»:

10. «Մենք վախում ենք մեր Տիրոջ կողմանէ մի տխուր և սոսկալի օրոյ համար»:

11. Բայց Աստուած նրանց պիտի պաշտպանէ այս օրոյ չարիքիցը և նրանց պարզուէ զւարթութիւն և ուրախութիւն,

12. և նրանց վարձատրէ իրանց համբերութեանը համար դրախտով և մետաքսեղէնով:

13. Որ նստեն նրանում ամոռնների վրայ, եւ չեն տեսնի նրանում ոչ արեւ ոչ սառնամանիք:

14. Եւ նրա շուքերն էլ կը մօտենան նրանցից, եւ նրանց քաղւելու պտուղները կը կախւին:

15. Ու նրանց շուրջը շուռ կը դան արծաթի անօթ-ներով եւ բաժակներով, որ ապակի են,

16. Եւ արծաթի ապակեղէններ են. չափը նրանք կ'որոշեն:

17. Եւ նրանց էլ խմել կը տան նրանում մի բաժակով, որ խառնւած կը լինի կոճապղպեղով:

18. Նրանում կը լինի մի աղբիւր՝ անուներ Սալսաքիւ:

19. Ու նրանց շուրջը շուռ կը գան մշտական պատանիներ: Դու նրանց տեսնելիս, կը կարծես թէ ցըրուած յարգարիտներ են:

20. Իսկ երբ մտիկ տաս, այնտեղ կը տեսնես երջանկութիւն եւ մեծ իշխանութիւն:

21. Նրանց վրայ եղած հագուստներ են կանաչ մետաքսից եւ ոսկեթել թաւիչից, եւ զարդարւած են արծաթեայ ապարանջաններով, եւ նրանց Տէրը կը խըմեցնէ նրանց մտքուր գինի:

22. Ուրեմն սա կը լինի ձեր վարձքը, եւ ձեր աշխատանքը կը ստանայ իր շնորհակալութիւնը:

23. Իբաւ մենք քեզ համար իջեցրել ենք Ղուրանը իբրեւ յայտնութիւն:

24. Ուրեմն քո Տիրոջ հրամանին սպասի՛ր, եւ նրանցից մի մեղաւորի կամ ապերախտի մի՛ հնազանդիր:

25. Եւ յիշի՛ր քո Տիրոջ անուներ առաւօտները եւ իրիկունները:

26. Գիշերն էլ երկրպագի՛ր նրան եւ փառք տո՛ւր նրան երկար գիշերը:

27. Հիմայ սրանք սիրում են արագ անցնողը, եւ անտես են թողնում իրանց հտեւին ծանր օրը:

28. Մենք նրանց ստեղծել ենք եւ կազդուրել նը-

բանց յօգւածքը. եւ եթէ ուզենանք, կը փոխենք նը-
րանց անպատճառ իրանց նմաններով,

29 Տե՛ս սա մի յիշեցումն է. ուրեմն ով ուզէ, նա
կը բռնէ ճանապարհը դէպի իր Տէրը:

30. Դուք էլ մի բան չէք ուզի բացի նրանից որ
Աստուած կ'ուզէ. որովհետեւ Աստուած գիտուն դատա-
ւոր է:

31. Նա իր ողորմութեան մէջ կը մտցնէ, որին կա-
մենայ, իսկ անիրաւների համար նա պատրաստել է
ցաւալի տանջանք:



77) ՍՈՒՐԷ ՄԻԻՐՍԻԻԼԱԹ

Մէքքէական. յիսուն այէ:

Գթած սղորմած Աստուծոյ անուէնովը:

1. Երգում եմ անում իրար ետեւից ուղարկւածու-
հիներովը.
- 2 Յետոյ երգում եմ անում արագ արագ շարժողու-
հիներովը.
3. Նաեւ երգում եմ անում տարածելով տարածողու-
հիներովը:
4. Յետոյ երգում եմ անում տարբերելով տարբերո-
ղուհիներովը.
6. Իբրեւ արգարացում կամ սպառնալիք.
7. Որ այն ձեզ կանխաւ աււածը անպատճառ կա-
ապուելաւ է:
8. Երբ ասողերը կը մթնեն,
9. Ու երբ երկինքը կը պատառի՝
10. Ու երբ էլ սարերը կը փոշրանան,
11. Ու երբ դեօպաններին ժամանակամբջոց կը տրւի,

12. Ո՞ր օրը կ'որոշւի իբրեւ սահման:
13. Բաժանմունքի օրը:
14. Բայց ի՞նչն է քեզ սովորեցնում, թէ ինչ է բաժանմունքի օրը:
15. Վա՛յ այն օրը սուտ համարողներին:
16. Մի՞թէ մենք բնաջրնջ չ'արեցինք անաջիննե-րին:
17. Յետոյ մենք վերջիններին էլ պիտի հետեւենք:
18. Մենք այսպէս ենք անում յանցաւորների հետ:
19. Վա՛յ այն օրը սուտ համարողներին:
30. Մենք ձեզ չ'ստեղծեցինք մի արհամարհելի ջրից:
21. Եւ նրան չը դրեցինք մի հաստատ տեղ:
22. Մինչեւ մի սահմանեալ ժամանակ:
23. Մենք կարողացանք. եւ ի՞նչ լաւ են կարողները:
24. Վա՛յ այն օրը ուտ համարողներին:
25. Մենք երկիրը ժողովատեղի չը չ'իւնցինք:
26. Կենդանիների եւ մեռելիների համար:
27. Նրանում էլ հաստատեցինք բարձր սարերը, եւ ձեզ թարմ ջուր խմեցրեցինք:
28. Վա՛յ այն օրը սուտ համարողներին:
29. «Գնացէք այն բանի մէջը, որ սուտ էիք հա-մարում»:
30. «Գնացէ՛ք երեւ ճիւղ ունեցող շուքի մօտը»,
31. «Որ ոչ սուեր ունի, եւ ոչ էլ բոցից կը պաշտ-պանէ»:
32. Ուրեմն նա կայծեր է ժայթքում ապարանքի մեծութեամբ:
33. Կարծես թէ կարմիր ուղտեր են:
34. Վա՛յ այն օրը սուտ համարողներին:
35. Նոյն օրը չեն խօսի,
36. Նրանց հրաման չի տրւի, եւ իրանց չեն ար-դարացնի:
37. Վա՛յ այն օրը սուտ համարողներին:
38. Սա բաժանմունքի օրն է, որ ձեզ կը ժողովենք եւ անաջիններին:

39. Իսկ եթէ մի խորամանկութիւն ունէք, խորամանկութիւն արէ՛ք :
40. Վա՛յ այն օրը սուտ համարողներին :
41. Իբաւ երկիւղածները շուքի եւ աղբւրների մէջ՝
եհ,
42. Նաեւ պտուղների մէջ, որոնցից որ կ'ախորժեն,
43. Թէ «կերէ՛ք եւ խմեցէ՛ք ազատօրէն՝ ձեր գործածների վտխարէն» :
44. Բարեգործներին մենք այսպէս ենք վարձատրում :
45. Վա՛յ այն օրը սուտ համարողներին :
46. Կերէ՛ք եւ վայելեցէ՛ք մի քիչ : գուք յանցաւորներ էք :
47. Վա՛յ այն օրը սուտ համարողներին :
48. Ու երբ նրանց ասում էր, «խոնարհեցէ՛ք»,
չէին խոնարհուում :
49. Վա՛յ այն օրը սուտ համարողներին :
50. Էլ այսուհետեւ ո՞ր լուրք էք հաւատալու :



78) ՍՈՒՐԷ ԱԼ-ՆԷԲԱ

Մէքքէական. քառասուն մէկ այէ

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Ի՞նչ բանից են հարցուփորձ անում :
2. Նոյն մեծ լուրիցը,
3. Որի մասին նրանք վիճում են :
4. Երբէ՛ք, նրանք շուտով պիտի իմանան :
5. Կրկին երբէ՛ք, շուտով պիտի իմանան :
6. Մենք երկիրը անկողին չը չինեցի՞նք :
7. Սարերն էլ բուհուն՞ք :
8. Մենք ձեզ երկու սեռ չըտեղծեցի՞նք :
9. Իսկ ձեր քունը՝ հանգստութի՞ւն :

- 10 Գիշերը հագուստ չը շինեցինք
11. Ճերեկն էլ ապրուստ չը շինեցի՞նք.
12. Նաեւ ձեր վրայ եօթը հաստատութիւն չը շինեցի՞նք.
13. Լուսաւառ ճրագ էլ չը շինեցի՞նք.
14. Օրալից ամբերիցն էլ առատօրէն ջուր չը տեղացրեցի՞նք.
- 15 Որ նրանով հատիկներ եւ բոյսեր բուսցնենք.
16. Ու իրար փաթաթած զբախտներ,
17. Իբաւ բաժանումնքի օրը սահմանուած է :
18. Նոյն օրը որ փողը կը փչի, եւ խումբ խումբ կը դառնայ.
19. Երկինքն էլ կը բացուի եւ դռներ կը դառնան :
- 20 Սարերն էլ ճանապարհ կը գցւին, եւ օդերեւուոյթ կը դառնան :
21. Բայց դժոխքը կը դառնայ մի դարան,
22. Բնակատեղ ապստամբների համար .
23. Ու որ նրանք կը մնան երկար ժամանակներ .
24. Որ այնտեղ չեն ճաշակի ոչ մի դուրս բան եւ ոչ խմիչք.
- 25 Բացի եռացող ջրից եւ հոտած փտած բանից,
26. Իբրեւ յարմար հատուցում :
27. Բայց նրանք հաշտաւութի ն չ'ին սպասում :
28. Իսկ մեր նշանները բոլորովին սուտ էին համարում :
29. Բայց մենք հաշտում էինք ամեն բան գրելով :
30. Ու բեմն «ճաշակեցէ՛ք» եւ մենք ձեզ բնաւ մի բան չենք աւելացնի բացի տանջանքից :
31. Բայց երկիւղածների համար կայ երջանկավայր
32. Պատէրով եւ որթերով անկւած,
33. Կլոր ծիծերով հասակակից աղջիկներ կան,
34. Նաեւ լիքը բաժակներ :
35. Նրանում չեն լսի մի վատ խօսք եւ ոչ սուտ :
36. Սա վարձատրութիւն է քո Տիրոջ կողմանէ իբրեւ հաշտ պարգև :

37. Նրանք երկնքի եւ երկրի եւ այդ երկուսի միջեւ եղածի Տիրոջ կողմանէ, որ Ողորմածն է, նրա հետ չնն համարձակի խօսել:

38. Նոյն օրը, որ հոգին եւ հրեշտակները շարքով կը կանգնեն, նրանք չեն խօսի բայի նրանից, որին հր բաման կըտայ Ողորմածը, եւ նա ուղիղը կը խօսի:

39. Սա է ճշմարիտ օրը, եւ ով կ'ուզէ կ'ապաստանի իր Տիրոջ մօտը:

40. Տե՛ս մենք ձեզ զգուշացնում ենք մօտաւոր տան ջանքով:

41. Նոյն օրը մարդս կը տեսնէ, թէ իր երկու ձեռ ներք ինչ են պատրաստել եւ կ'ասի անհաւատը՝ ո՛հ երանի թէ հող լինէ ինչ:



79) ՍՈՒՐԷ ԱԼ-ՆԱՋԸԱԹ:

Մէքքէական, քառասուն վեց այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգում եմ անում խստապէս դուրս հանողուհի ներովը.

2. Երգում եմ անում կակուղ դուրս քաշողուհինեւ ըովը.

3. Երգում եմ անում սահուն սահողուհիներովը.

4. Երգում եմ անում առաջից առաջ վաղողուհինեւ ըովը.

5. Երգում եմ անում հրաման կատարողուհիներովը.

6. Այն օրը որ դզրդայնողը կը գլրգահնէ.

7. Նրան կը հեռուեն հաեից եկողները:

8. Այն օրը սրտերը կը դողան.

9. Նրանց աչքերը կը ցածանան.

10. Կ'ասեն, «մենք նախկին վիճակի՞ն պիտի գառնանք.
11. Թէեւ փոխադատ ոսկորներ ենք:
12. Նրանք կ'ասեն, «սա այն ժամանակ մի կորստաբեր կրկնութիւն է»:
13. Բայց նա միմիայն մէկ հատ փող է փչել:
14. Ու ա՛նա՛ նրանք երկրի երեսի վրայ կը լինեն:
15. Դու արդեօ՞ք լսել ես Մովսէսի պատմութիւնը:
16. Նրա Տէր երբ նրան կանչեց Թօվա սուրբ հովիտում.
17. «Ինձ՝ Փարաօնի մօտ, նա ապստամբուել է:
18. «Ու աս՛, փախազ ունէ՞ս որ մաքրես:
19. «Եւ ես քեզ կոտաջնորդեմ դէպի քո Տէրը որ վախենաս»
20. Եւ նա նրան ցոյց տեց մեծ հրաշքը:
21. Բայց նա սուտ համոզեց եւ ապստամբեց.
22. Յետոյ ետ գնաց վազելով,
23. Ու ժողովեց աւագաց.
24. Եւ ասաց, «ես ձեր բարձրեալ Տէրն եմ».
25. Բայց Աստուած նրան պատժեց այն եւ այս աշխարհի պատիժով:
26. Հիմայ սրանում զգուշացուցիչ օրինակ կայ վախոգի համար:
27. Դո՞ւք էք աւելի դուար ստեղծելու համար, թէ կրկնորբ, սո՛ւնա հաստատել է:
28. Ես վեր է հանել նրա բարձրութիւնը եւ նրան հաւատարացրել.
29. Ես մի՛ աղքատ է նրա գիշերը եւ դուրս է բերել նրա արևը:
30. Նրանից յետոյ էլ ասարածել է երկիրը,
31. Նրանից անել է նաեւ նրա ջուրը եւ խոտը,
32. Մարերն էլ պնդացրել
33. Իրբեւ լայնօր ձեզ համար եւ ձեր անասուններին համար:
34. Ու բնին երբ կրգայ մեծ նաճող օրը,

- 35. Այն օրը մարդս կը յիշէ, թէ ինչ է գործադրել.
- 36. Դժոխքը կ'երեւայ նրան, որ մտիկ կըտայ:
- 37. Իսկ ով որ ապստամբի
- 38. Ու ընտրէ այս աշխարհքի կեանքը,
- 39. Ուրեմն դժոխքն է նրա բնակատեղին:
- 40. Բայց ով իր Տիրոջ ներկայութիւնից վախում եւ իր անձը պահպանում էր ցանկութիւնից,
- 41. Տե՛ս դրախտն է նրա բնակատեղը:
- 42. Քեզնից հարցնում են վերջի ժամայ մասին, թէ տ՞րն է նրա սահմանած ժամանակը:
- 43. Դու ի՞նչ կս հասկանում նրան յիշելուց.
- 44. Քո Տիրոջը կը վերաբերի նրա սահմանելը:
- 45. Դու միայն մի խրատիչ ես նրա համար որ նրանից վախում է:
- 46. Նոյն օրն, որ կը տեսնեն նրան, կարձես թէ միայն մի իրիկուն կամ մի առաւօտ են մնացել:



80) ՄՈՒՐԷ ԱԲՍՍԱ

Մէքքէական. քառասուն երկու պէ:

Գլծած ողորմած Աստուծոյ անունովը

- 1. Ճակատը խորշումացրից ու ետ քաշեց.
- 2. Որ իրան մօտ եկաւ կոյրը.
- 3. Եւ քեզ ի՞նչ իմացրեց. գուցէ ուզում էր մաքրուել.
- 4. Կամ խրատ էր ուզում, եւ խրատը նրան օգուտ կըտար:
- 5. Բայց նա, հարուստ է,
- 6. Դու նրան ընդունում ես մեծարանքով.

7. Ու հոգս չես անում, թէ նա ուզում է մաքրուել,
 8. Իսկ նա որ դիտմամբ քեզ մօտ եկաւ.
 - 9 Նա երկիւղած է.
 10. Եւ զու էլ անտես արիւր նրան:
 11. Բնա՛ւ, սա մի յիշեցումն է,
 - 12 Կամեցողը նրան էլ կը յիշէ
 13. Թուղթերի վրայ, որ յարգելի.
 13. Բարձրեալ, մաքրեալ են,
 15. Պատկասելի սուրբ գրողների ձեռներով գրած:
 16. Ստատկի՛ մարգս, ինչն է նրան անհաւատ անում:
 17. Նա ի՞նչ բանից է նրան ստեղծել.
 18. Սերմի կաթիլից.
 19. Նա նրան ստեղծեց եւ նրան սահմանեց,
 20. Յետոյ հեշտացրեց նրա ճանապարհը.
 21. Յետոյ նրան մեռցրեց եւ թաղեց,
 22. Յետոյ եթէ կամենայ, նրան կը յարուցանէ.
 23. Բնա՛ւ, մինչեւ ցարդ չը կատարեց. ինչ որ նրան հրամայեց.
 24. Թող մարգս իր ուտելիքին մօտիկ տայ.
 25. Մենք աստատայէս ջուր ենք տեղացրել.
 26. Յետոյ երկիրը ճեղքելով ճեղքել ենք.
 27. Նրանում էլ հատիկներ ենք բուսցրել.
 28. Նաեւ խաղող եւ խոտ,
 29. Ու ձիթապտուղ եւ արմաւ.
 30. Ու խիտ ծառոցներ,
 31. Պտուղներ ու կանաչեղէններ էլ.
 32. Իբրեւ վայելմունք ձեզ համար եւ ձեր անասուն-
- ների համար:**
33. Իսկ երբ փողի սաստիկ հնչումը կըզայ.
 34. Նոյն օրը մարգս իր եզրօրիցը կը փախչէ,
 35. Նաեւ իր մօրիցը եւ հօրիցը,
 36. Ու իր կնկանիցը եւ որդկանցիցը:
 37. Նոյն օրը նրանցից ամեն մի մարդ բաւական գօրծ է ունենալու:
 38. Մի քանի երեսներ այն օրը կը լինին զւարթ,

39. Ի՞ր իծ աղող, ուրախ՝
40. Ու մի յրանի երեսն երբ յլրայ այն օրը փոշի կը
լինի:
41. Ու նրանց կը պատէ խաւարը՝
42. Դրանք կը լինին անհաւատները. եւ չարագործ-
ները:



81) ՍՈՒՐԷ ԱԼ-ԹԷՅՎԻՐ

Մէքքէական. քսան ինը այէ

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Երբ արեգակը կը ծաւլի՝
2. Ու երբ աստղերը վար կը թափուին,
3. Ու երբ սարերը կը շարժուին,
4. Ու երբ տասնամուսայ յղի ուզտերը կաթնից կը
կարուին՝
5. Ու երբ վայրի անասունները միասին կը ժողվուին,
6. Ու երբ ծովերը կը վառուին,
7. Ու երբ հոգիները կը միանան,
8. Որ երբ ողջ ողջ թաղւած աղջիկները կը հարցնուին,
9. Թէ ինչ յանցանքի համար են սպանուել՝
10. Նաեւ երբ թղթերը կը տարածուին,
11. Ու երբ երկինքը ետ կը քաշի,
12. Ու երբ դժօխքը կը բորբոքուի,
13. Ու երբ դրախտը կը մօտեցնուի,
14. Այն ժամանակ ամեն մի անձը կ'իմանայ թէ ինչ
է գործել:
15. Իրաւ ես երդում եմ անում մօլորակ աստղերովը,

16. Որ աներեւութանում են արեգակի կշտին,
 17. Երդում եմ անում գիշերովը, որ գալիս է աւա-
 րելու,
 18. Երդում եմ անում առաւօտովը, որ շունչ է առ-
 նում •
 19. Որ սա մի՛ յարգելի մարգարէի խօսքն է,
 20. Որ կարողութեան տէր է հաստատ ամօռի Տիրոջ
 մօտ,
 21. Որին հնազանդում են եւ որը հաւատարիմ է :
 22. Ձեր ընկերը դիւահար չէ,
 23. Նա տեսաւ նրան յայտնի հորիզոնի վրայ •
 24. Նաեւ ծածուկ տեղ պահելով չէ խնայում •
 25. Որ քարկոծեալ սատանայի խօսքը չէ :
 26. Ուրեմն դուք ո՛ւր էք գնում :
 27. Սա միայն մի խրատ է բոլոր աշխարհքի համար :
 28. Մանաւանդ ձեզնից նրա համար, որ կուզէ ու-
 ղիղ վարել •
 29. Դուք էլ չէք ուղի, եթէ չ'ուզէ աշխարհքներէ
 Տէրը •



82) ՍՈՒՐԷ ԱԼ-ԼՆՖԼԹԱՐ

Մէքքէական. քսան ինը այէ :

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը •

1. Երբ երկինքը ճեղքուի,
2. Ու երբ աստղերը ցիրուցան դառնան,
3. Ու երբ ծովերը խառնւին.
4. Ու երբ գերեզմանները տակն ու վրայ դառնան •
5. Նոյն ժամանակ մարդս կ'իմանայ, թէ ինչ է գոր-
 ծել եւ ինչ է ձգել :

6. Ո՛վ մարդ, ի՞նչն է քեզ հրապուրել քո բարերար Տիրոջ գէժ:

7. Նա որ քեզ ստեղծել է, եւ կազմել է եւ ուզղել է:

8. Որ կերպով ուզել է, քեզ տւել է այն պատկերը:

9. Բնա՛ւ. բայց դարձեալ սուտ են համարում դասաստանը.

10. Բայց ձեր վրայ պահապաններ կան,

11. Ազնիւ գրագիրներ:

12. Որ գիտեն թէ ինչ էք գործում:

13. Իբաւ արդարները երջանկութեան մէջ են:

14. Եւ իբաւ չարազործները դժօխքի կրակի մէջ են:

15. Դասաստանի օրը նրանք նրա մէջ կը գցւին այ-

բըւելու համար:

16. Եւ նրանք այնտեղից երբէք բացակայ չեն ինի:

17. Եւ ի՞նչն քեզ իմացրել, թէ ինչ է դասաստանի

օրը:

18. Յետոյ. ի՞նչն է քեզ իմացրել, թէ ինչ է դաս-

աստանի օրը:

19. Այն օրը, որ մի անձ մի անձի համար մի բան չէ կարող, եւ հրամանը այն օրը Աստուծունն է:



83) ՍՈՒԻԷ՝ ՄՈՒԹԱՅՅԸՅԻՆ

Մէքքէական. երեսուն վեց այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Վա՛յ ծուռ չափողներին:

2. Որ իբանց համար չափելիս, կատարեալ չափ են պահանջում.

3. Բայց երբ ուրիշների համար են չափում կամ կըչաում, պակասեցնում են:

4. Մի՞թէ չին խորհում, որ նրանց յարութիւն է
է արեւելու:

այն մեծ օրը,

6. Այն օրը, որ մարդիկ կը կանգնեն աշխարհքներէ
Տիրոջ առաջին:

7. Բնա՛ւ. չարագործների գիրքը Սիճճի՛նումն է:

8. Եւ ի՞նչն է քեզ իմացրել թէ ինչ է Սիճճի՛նը:

9. Մի գրեւած գիրք:

10. Վա՛յ այն օրը սուտ համարողներին,

11. Որ սուտ են համարում դատաստանի օրը.

12. Եւ նրան միմիայն ամեն մի պատիրանազանց
մեղաւորն է սուտ համարում:

13. Որ մեր նշաններն իրան կարդացելիս, ասում է.
«նախնեաց առասպելներ են»:

14. Բնա՛ւ, նրանց արարքները նւաճել են նրանց
սրտերը:

15. Բնա՛ւ. նրանք այն օրը իրանց Տիրոջից դատ-
ւած են լինելու:

16. Յետոյ նրանք դժոխքի կրակն են գցւելու:

17. Յետոյ նրանց ասելու են, «սա այն է, որ դուք
սուտ էիք համարում»:

18. Բնա՛ւ. ճշմարտապէս արդարների գիրքը Իլլի-
յունի մէջն է:

19. Իսկ ի՞նչը քեզ իմացրեց, թէ ինչ է Իլլիյունը:

20. Մի գրեւած գիրք,

21. Որի մասին վկայում են մերձակաները:

22. Հիմայ արդարները երջանկութեան մէջ են.

23. Նրանք աթոռների վրայ նստած մտիկ են ապլիս.

24. Նրանց երեսների վրայ կը ճանաչես երջանիկ
զարծութիւն:

25. Նրանց խմել կրտան կնիքով կնքւած գինուց,

26. Որի կնիքը մուշկ է, եւ այդ մասին ջանք են
անում ջանացողները:

27. Եւ նրա խառնւածքն էլ Թասնիմիցն է,

28. Մի աղբիւր օրից խմում են մերձաւորները:

29. Տե՛ս նրանք, որ յանցանք են գործում, ծիծաղում են հաւատացեալներին վրայ.

30. Ու երբ նրանց մօտովը անց են կենում, իրար ակնարկութիւններ են անում.

31. Եւ երբ ետ են գնում իրանց ընտանիքների մօտը, ետ են դառնում կատակ անելով


32. Եւ նրանց էլ տեսնելիս ասում են, «որանք մուրաւանք են».

33. Բայց նրանց վրայ հակողներ չեն ուղարկւած:

34. Բայց այն օրը հաւատացեալներն են ծիծաղելու անհաւատների վրայ:

35. Նրանք աթոռների վրայ նստած մտիկ են տալու,

36. Թէ արդեօ՞ք վարձատրում են անհաւատներն իրանց արաւանքի համար:



84) Ս Ո Ւ Ր Է Ա. Լ. Ի Ն Շ Ը Գ Ա Պ.

Մէքքէական. քսան հինգ այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երբ երկինքը պատուի,
2. Նա էլ ականջ գնէ իր Տիրոջը եւ ստիպւի.
3. Ու երբ երկիրը երկայնացնուի,
4. Ու նա դուրս գցէ, ինչ որ կայ իրան մէջը, եւ պարպւի,
5. Նա էլ ականջ գնէ իր Տիրոջը եւ ստիպւի.
6. Ո՛վ մարդ, զու տենչալով կը տենչաս զէպի քո Տիրոջ կողմը, որ նրան հանդիպես:
7. Բայց որի գիրքը, որ նրա աջ ձեռքը կը գրուի,
8. Նա յետոյ մի թեթեւ հաշիւ կըտայ.
9. Ու ետ կը դառնայ իր ընտանիքի մօտ ուրախացած:

10. Բայց որի գիրքը որ նրա մէջքի ետեւը կը դրուի,
11. Նա յետոյ կ'աղաչէ բնաջինջ եղած.
12. Եւ կը գցւի դժոխքի կրակի մէջը. որ այրւի:
13. Որովհետեւ նա իր ընտանիքի մէջ ուրախ էր.
14. Որովհետեւ նա կարծում էր, թէ նա ետ չէ դատ-
նալու:
15. Ուղիղ է, բայց նրա Տէրը տեսնում էր նրան:
16. Իրաւ երդում եմ անում վերջալոյսովը.
17. Երդում եմ անում գիշերովը եւ ինչ որ նրան
քշում է.
18. Երդում եմ անում լուսինովը, երբ նա լրանում է:
19. Դուք անպատճառ պիտի փոխադրուիք աստիճա-
նից աստիճան:
20. Ուրեմն ի՞նչ ունեն, որ չեն հաւատում.
21. Ու երբ նրանց հաւար կարգացում է Ղուրանը,
երկրպագութիւն չեն անում.
22. Իսկ նրանք, որ անհաւատ են, սուտ են համա-
րում.
23. Բայց Աստուած գիտէ թէ նրանք ինչ են պա-
հում իրանց մտքերումը:
24. Ուրեմն սպառնացի՛ր նրանց ցաւալի տանջան-
քով.
25. Բացի նրանցից, որոնք հաւատում եւ բարի
գործքեր են գործում. նրանց համար վարձատրութիւն
կայ առանց շնորհակալութեան:



85) ՍՈՒՐԷ ԱԼ-ԲՐՈՒՃ՝

Մէքքէական. քսան երկու այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգում եմ անում աշտարակների ունեցող [երկըն-
քովը.
2. Երգում եմ անում խոստացւած օրովը.
3. Երգում եմ անում վկայովը եւ վկայողովը:
4. Կոտորվե՛ն Ուխտողի բնակիչները,
5. Որ վառելանիւթի տէր կրակ էր:
6. Նրանք երբ նստած էին նրա վրայ,
7. Հաւատացեալներին արածը տեսնում էին:
8. Նրանք էլ չարչարնցին նրանց միմիայն նրա հա-
մար, որ հաւատում էին հզօր օրհնեալ Աստուծուն.
9. Որ նրանն է երկնքի եւ երկրի իշխանութիւնը.
եւ Աստուած տեսնում է ամեն բանը՝
10. Նրանք, որ փորձանքի մէջ են գցում հաւա-
տացեալ մարդկանց եւ հաւատացեալ կանանց, բայց
յետոյ չեն ապաշխարում, նրանց համար զժոխքի պա-
տիժը կայ եւ նրանց համար կայ այրելու տանջանքը:
11. Որովհետեւ նրանք, որ հաւատում եւ բարի
գործքեր են գործում, նրանց համար կան զբախտներ,
որոնց տակովը գետեր են հոսում. սա մեծ փրկու-
թիւն է:
12. Իրա՛ւ քո Տիրոջ վրէժխնդրութիւնը խիստ է:
13. Իրա՛ւ նա ստեղծեց, եւ նա էլ կրկնելու է:
14. Նա էլ ներող սիրող է:
15. Փառաւոր գահի տէրն է.
16. Իր ուզածն անողն է:
17. Գեղ հասել է արդեօ՞ք գունդերի լուրը.
18. Փարաւօնի ու Սամուէլի լուրը:

19. Իսկ նրանք, որ անհաւատ են, սուտ համարելու մէջ են գտնուում:
20. Բայց Աստուած նրանց պաշարել է հտեւի կողմից:
21. Սակայն նա փառաւոր Ղուբան է:
22. Պահած տախտակի վրայ:



86) ՍՈՒՐԷ՛ Ա. Ա. - Թ Ա. Ր Ը Գ.

Մէքքէական, տասն եօթը այէ:

Գլխած շարմած Աստուծոյ անունովը:

1. Երգում եմ անում երկնքովը եւ գիշերւայ աստղովը.
2. Բայց ի՞նչը քեզ խմացրեց, թէ ինչ է գիշերւայ աստղը:
3. Լուսավառ աստղը.
4. Լմեն մի հողի որ կայ, ունի իր վրայ մի պահապան.
5. Ուրեմն թո՛ղ մարդս խորհէ, թէ ինչից է ստեղծւած:
6. Նա ստեղծւած է դուրս ցատքած ջրից.
7. Որ դուրս է եկել երանքի ու կուրծքի մէջ տեղից:
8. Իրաւ նա կարող է նրան ետ դարձնել.
9. Նոյն օրը, որ գաղտնիքները կը յայտնեն.
10. Ու այն ժամանակ նա ոչ ոյժ եւ ոչ օգնող կ'ուենայ:
11. Երգում եմ անում երկնքովը որ շուռ է գալիս.
12. Երգում եմ անում երկրովը, որ բացուում է,
13. Սա մի սրտող խօսք է.
14. Կատակ էլ չէ:
15. Նրանք խորամանկութիւն են հնարում.

16. Իսկ ես էլ եմ խորամանկութիւն հնարումս:

17. Ուրեմն ժամանակ տո՛ւր անհաւատներին. մի քիչ ժամանակ տո՛ւր:



87) ՍՈՒՐԷ Ա՛ՂԱ:

Մէքքէական. տասն ինը այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Փա՛ռք տուր քո բարձեայ Տիրոջ անունին.
2. Որ ստեղծել է եւ կազմել.
3. Նաեւ սահմանել է եւ առաջնորդել.
4. Ու զուրս է հանել արօտախօտը.
5. Իսկ յետոյ շինու՛մ է նրան չոր խոտ:
6. Մենք քեզ կը կարգացնենք. բայց զու չը մոռա-
նաս.
7. Բացի Աստուծոյ ուզածիցը. որովհետեւ նա գիտէ
յայտնին եւ ծածուկը:
8. Մենք կը հեշտացնենք քեզ համար դէպի հեշտու-
թիւնը.
9. Ուրեմն յիշեցրո՛ւ. որովհետեւ յիշեցումը օգտա-
կար է -
10. Ով որ երկխոզած է, նա իրան յիշեցնել կըտայ.
11. Շատ չար եղողն էլ կը հեռանայ նրանից.
12. Որ այրւելու համար մեծ կրակի մէջը պիտի
դգուի:
13. Յետոյ նրանում ոչ կը մեռնի եւ ոչ էլ կ'ապրի.
14. Բայց երջանիկ կը լինի, ով որ ինքն իրան
մաքրէ.
15. Ու յիշէ իր Տիրոջ անունը եւ աղօթէ:

16. Բայց գուք ընտրում էք այս աշխարհքի կեանքը:
17. Սակայն միւս աշխարհքն է բարի եւ տեւող:
18. Եւհա՛ սա նախնի թղթերումն է,
19. Արբանա՛ր եւ Մովսէսի թղթերումը:



88) ՍՈՒՐԷ ԱԼ-ՂԱՇԻՅԷԹԸ:

Մէքքէական. քսան վեց այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

- 1 Մի՞թէ քեզ հասել է ծածկողի պատմութիւնը:
2. Նոյն օրը մի քանի երեսներ կախած կը լինեն,
3. Նրանք ոչխատած եւ յոգնած կը լինեն.
4. Կը գցեն վտուած կրակի մէջը այրելու համար:
- 5 Նրանց կը խնայեն եռացող աղբիւրից.
6. Նրանց համար մի ուրիշ կերակուր չըկայ բացի փուչից.
7. Որ ոչ կը գիրացնէ եւ ոչ էլ սովածութիւնը կը կշտացնէ.
8. Մի քանի երեսներ էլ այն օրը երջանիկ կը լինեն,
9. Որ իրանց ունեցած ջանքովը գոհ կը լինեն.
10. Մի բարձր գրախօսի մէջ,
11. Որի մէջ դատարկ խօսք չի լաւի.
12. Նրանում մի աղբիւր կայ հոսող.
13. Նրանում կան նաեւ բարձր պատկելու տեղեր.
14. Դուած բաժակներ.
15. Շարած բարձեր.
16. Ու փուած գորգեր:
17. Մի՞թէ մտիկ չեն տալիս ուղարին, թէ ինչպէս է ստեղծւած:

18. Նաեւ երկիրնքին, թէ ինչպէս է բարձրացրւած:
19. Նաեւ սարերին, թէ ինչպէս են հաստատւած.
20. Նաեւ երկրին, թէ ինչպէս է տափարակցրւած:
21. Ուրեմն յիշեցրո՛ւ, որովհետեւ դու միայն յիշեցընող ես.
22. Դու նրանց վրայ տեսուչ ես:
23. Իսկ նա որ ետ կը քաշուի ու անհաւատ կը դառնայ.
24. Աստուած նրան կը պատժէ մեծագոյն պատժովը:
25. Նրանք մեզ մօտ պիտի դառնան,
26. Եւ յետոյ պիտի մեզ հաշիւ տան:



89) ԱՌԻՐԷ ԱԼ՝ՅԱՃՐ՝

Մէքքէական. երեսուն այէ

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգում եմ անում արչալոյսովը, եւ երգում եմ անում տասը գիշերովը.
2. Երգում եմ անում զոյգովը եւ երգում եմ անում կոճատովը.
3. Երգում եմ անում գիշերովը, երբ սկսում է:
4. Արդեօ՞ք սրանում երգում կայ խելք ունեցողք համար:
5. Չե՞ս տեսնում, թէ քո Տէրն ինչ արեց Ադացի-նեքի հետ.
6. Իրամի հետ, որ սիւնեք ունի.
7. Որի նմանը երկիրնեքումը շինւած չըկայ.
8. Նաեւ Սամուղի հետ, որոնք հովիտումը ժայռերը փորել են.
9. Նաեւ Բեւեռնեքի տէր Փարաւօնի հետ.

10. Որոնք ապստամբուեցին երկիրնեբում.
11. Ու աւերմունքները շատացրեցին նրանցում:
12. Դրա համար էլ քո Տէրը թափեց նրանց վրայ պատժի խարազանները.
13. Որովհետեւ քո Տէրը դարանի մէջն է:
14. Իսկ մարդս, երբ նրա Տէրը նրան փորձում է եւ նրան յարգօնք եւ պարգեւներ է տալիս.
15. Այն ժամանակ նա ասում է, «Իմ Տէրս ինձ յարգել է»:
16. Իսկ երբ նրան փորձում եւ ապրուստը նրա համար կարճացնում է.
17. Հէնց այն ժամանակն ասում է, «Իմ Տէրս ինձ արհամարհել է»:
18. Բնա՛ւ, բայց դու ք չէք յարգում որրին.
19. Եւ աղքատին չէք հրաւիրում կերակուրի.
20. Եւ սւտում էք ժառանգածը ազահութեամբ ու տելով.
21. Եւ ստացւածքը սիրում էք խիստ սիրով:
22. Բնա՛ւ, երբ երկիրը կը փշուի հող ու մոխիր կը դռնայ.
23. Քո Տէրն էլ կըղայ եւ հրեշտակը շարք շարք.
24. Եւ այն օրը զժոխքը կը բերւի. այն օրը մարդս միտքն է բերելու. եւ ի՞նչպէս է նրա համար այդ յիշելը:
25. Նա կ'ասի, «ո՛հ երանի՛ թէ կեսնքիս համար կանխաւ բարիքներ արած լինէիս Այն օրը ոչ մէկը չէ կարող նրա պատիժովը նրան պատժել:
26. Եւ ոչ ոք չէ կարող նրա կապովը կապել:
27. Ո՛վ ապահովացրւած հոգի,
28. Ե՛տ դարձիք քո Տիրոջ մօտը գոհ եւ զոհունակ.
29. Եւ մտի՛ր իմ ծառաների շարքի մէջը.
30. Եւ մտի՛ր իմ դրախտը.



90) ՍԻՐԷ ԱԼԻԲԷԼԷԴ:

Մէքքէական. քսան այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Այ՛, երգում եմ անում այս գաւառովը .
2. Նաեւ այս երկրովը, ուր դու բնակում ես.
3. Երգում եմ անում ծնողովը եւ ինչ որ ծնել է.
4. Մենք մարդս ստեղծել ենք տառապանքի համար .
5. Մի՞թէ նա կարծում է, թէ ոչ ոք նրանից գորաւոր չէ:
6. Նա ասում է, «ես արդէն մեծ ստացւածք եմ կորցրել»:
7. Մի՞թէ նա կարծում է, որ նրան ոչ ոք չէ տեսնում:
8. Մենք նրան մի՞թէ չենք տւել երկու աչքեր,
9. Ու լեզու եւ որկու շրթունք .
10. Մենք նրան դրել ենք երկու ճանապարհի վրայ:
11. Բայց եւ այնպէս նա չէ ուզում վեր գնալ գառիվերովը .
12. Ուրեմն ի՞նչն է քեզ իմացնում, թէ ինչ է գառիվերը:
13. Գերին ազատել.
14. Կամ սովի օրը կերակրել
15. Ազգական ունեցող որբին,
16. Կամ հողի վրայ ընկած աղքատին:
17. Նոյն ժամանակ նա կը լինի հաւատացեալներէցը, որ իրար յորդորում են համբերութեան եւ իրար յորդորում են գթասրտութեան:
18. Սրանք աջակողմեաններն են .
19. Իսկ նրանք, որ մեր նշաններին չեն հաւատում, ձախակողմեաններն են:
20. Սրանց վրայ կանգնելու է կրակը կամարածեւ:

92) ՍՈՒՐԷ ԱՆՆԻՅԷ

Մէքքէական. քսան մէկ այէ

Գթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Երբում եմ անում գիշերովը, երբ ծածկում է.
2. Երբում եմ անում ցերեկովը, երբ լուսանում է,
3. Նաեւ ինչ որ նա ստեղծել է, արուովը եւ էգովը.
4. Որ ձեր քանքերը զանազան են:
5. Իսկ նա, որ հնազանդ եւ երկիրդած է,
6. Ու գեղեցիկին հաստատութիւն է տալիս,
7. Մենք նրա համար կը հեշտացնենք դէպի երջանօ
կութիւնը.
8. Իսկ նա որ շահասէր է եւ հարստանալ է ուզում,
9. Ու գեղեցիկը սուտ է համարում,
10. Մենք նրա համար կը հեշտացնենք դէպի թըշ-
ւատութիւնը:
11. Երան էլ չեն օգնի նրա ստացւածքը, երբ նա
վար բնկի:
12. Տես մեր պարտքն է ճանապարհը ցոյց տալը,
13. Ու տես մերն է միւս եւ այս աշխարհքը.
14. Ուստի ձեզ սպաննացայ վառւած կրակովը.
15. Որի մէջ միմիայն չարագործը կ'այրուի,
16. Որ սուտ է համարում եւ հա քաշւում:
17. Նրանից էլ հետո կը մնայ երկիրդածը.
18. Որ իբ ստացւածքը տալիս է որ մտքուի:
19. Եւ ոչ ոքի համար նրա մօտ ողորմութիւնիցը
վարձք կայ.
20. Բացի նրանից, որ իբ բարձրեալ Տիրոջ երեսը
խնդրէ:
1. Սա էլ գոհ է լինելու:



91) ՍՈՒՐԷ ԱՂՇԱՄՍ

Մէքքէական. տասեւհինգ այէ

Գլթած, ողորմած Աստուծոյ անուհովը

1. Երգում եմ անում արեգակովը եւ նրա ճաճանչովր:
2. Երգում եմ անում լուսինովը, երբ հետեւում է նրան.
3. Երգում եմ անում ցեքեկովը. երբ նրան փայլեցընում է.
4. Երգում եմ անում գիշերովը, երբ նրան ծածկում է.
5. Երգում եմ անում երկնքովը, եւ ինչ նրան շինել է.
6. Երգում եմ անում երկրովը, եւ ինչ նրան տաքածել է.
7. Երգում եմ անում հողիով. եւ ինչ նրան կազմել է.
8. Եւ ինչ նրան ներշնչել է նրա շարութիւնները եւ նրա երկիրը զածութիւնը:
9. Արդէն երջանիկ է, ով նրան մաքրել է.
10. Բայց արդէն կորած է, ով որ նրան լճացնէ:
11. Սամուզը սուտ համարեց իր ապստամբութեամբը:
12. Նաեւ նրանց վատթարագոյնը մօտ եկաւ.
13. Աստուծոյ զեապանն այն ժամանակ ասաց, «սա Աստուծոյ էգ ուղտն է, եւ սա էլ նրա խճիւրքն է»:
14. Բայց նրան սուտ համարեցին եւ նրան ջլատեցին, եւ նրանց Տէրը նրանց բնաջինջ արեց իրանց սեղանի պատճառովը, եւ նրանց հաւասարացրեց:
15. Նա էլ նրանց հետեւանքիցը չի վախի:



93) ՍՈՒՐԷ ԱԼ-ՋՈՒՀԱ

Մէքքէական. տասնմէկ այէ

Գթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Երգում եմ անում արեւովը,
2. Երգում եմ անում դիշերովը. երբ մթնում է.
3. Քո Տէրը քեզ չէ ձգել եւ չէ ատել:
4. Նաեւ միւս աշխարհքը քեզ համար աւելի լաւ է քան թէ այս.
5. Շուտով քո Տէրը քեզ կըտայ եւ դու գոհ կը լինես:
6. Մի՞թէ նա քեզ որք չը գտաւ եւ պատապարեց.
7. Իսկ քեզ մոլորւած գտաւ եւ առաջնորդեց:
8. Եւ քեզ գտաւ աղքատ եւ հարստացրեց:
9. Դու էլ որբին մի անարգի՛ր.
10. Մուրացողին էլ դուրս մի՛ անի՛ր.
11. Բայց քո Տիրոջ ողորմութիւնը պատմի՛ր:



94) ՍՈՒՐԷ ԱԼՍՄ-ՆԱՇՐՄԱՀ:

Մէքքէական. ութ այէ.

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մի՞թէ մենք չենք բացել քո կուրծքը,
2. Քեզնից էլ վե՞ր առել քո բեռը.
3. Որ ճնշում է՛ր քո մէջքը.
4. Եւ բարձրացրել քո հոշակը:
5. Տե՛ս դժւարութեան հետ հեշտութիւն էլ կայ.
6. Իբաւ դժւարութեան հետ հեշտութիւն էլ կայ.
7. Եւ երբ դադարկցիր, այն ժամանակ աշխատի՛ր.
8. Ու Քո Տիրոջը փափաքի՛ր:



95) ՍՈՒՐԷ ԱԼ-ԹԻՆ.

Մէքքէական. ութ այէ:

Գթամ ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երգում եմ անում թուզովը. երգում եմ անում ձիթապտուղովը:
2. Երգում եմ անում Սիկայ սարովը:
3. Երգում եմ անում այս ապահով զաւատովը,
4. Որ մենք ստեղծել ենք մարդս ամենագեղեցիկ կերպով,
5. Բայց յետոյ իջեցրել ենք նրան ամենացած տեղերը:
6. Բացի նրանցից որ հաւատում եւ բարիքներ են գործում, եւ նրանք հատուցում կ'ունենան առանց չընորհակալութեան:
7. Ուրեմն ի՞նչն է քեզ այսուհետեւ ստիպում, որ դատաստանը սուտ ես համարում:
8. Մթթէ Աստուած դատաւորների դատողը չէ:



96) ՍՈՒՐԷ ԱԼ-ԱԼԱԳ.

Մէքքէական. տասնինը այէ

Գթամ ողորմած Աստուծոյ անունովը:

1. Կարգա՛ Քո Տիրոջ անունովը, որ ստեղծել է.
2. Որ ստեղծել է մարդս թանձրացած արիւնից.
3. Կարգա՛, եւ Քո Տէրը զթառատ է.
4. Որ սովորեցրել է գրիչովը.
5. Որ սովորեցրել է մարդուս այն որ չըգիտէր:

6. Բնա՛ւ. իրաւ է որ մարդս ապստամբ է.
7. Որ տեսնու՛մ է իրան հարստացած:
8. Բայց քո Տիրոջն էք դառնալու:
9. Ի՞նչ ես կարծում նրա մասին, որ արգելում է
10. Ծառային որ աղօթում է,
11. Կարծո՛ւմ ես, որ նա լաւ է առաջնորդած.
12. Կամ երկիրդածութիւնն է հրամայում.
13. Ի՞նչ ես կարծում, որ սուտ համարեց եւ հրա-
ժարեց.
14. Մի՞թէ չըգիտէ, որ Աստուած տեսնում է:
15. Բնա՛ւ. եթէ չը դադարէ, ճակատի մազիցը պի-
տի բռնենք.
16. Այն ճակատի մազիցը, որ ստախօս է յանցաւոր է:
17. Թո՛ղ այն ժամանակ պտտայ եւ կանչէ:
18. Մենք էլ կը կանչենք զժոխքի պահապաններին:
19. Բնա՛ւ. նրան մի՛ հնազանդիր. այլ երկրպագի՛ր
եւ մօտեցի՛ր:



97) ՍՈՒՐԷ ԱԼ-ԳԱՒՐ.

Մէքքէական. հինգ այէ.

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Մենք նրան իջեցրել ենք Գադր-գիշերը:
2. Ուրեմն ի՞նչն է քեզ իմացրել, թէ ի՞նչ է Գադր-
գիշերը:
3. Գադր-գիշերը աւելի լաւ է հազար ամիսներից:
4. Նրանում իջնում են հրեշտակները եւ հոգին՝ ի-
քանց Տիրոջ հրամանովը ամեն պատուէրով:
5. Նա խաղաղութիւն է մինչեւ արշալոյսի ծագումը:



98) ՍՈՒՐԷ ԱՂԲԷՅՅԻՆԷ:

Մէքքէական. ութը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Գիրք ունեցողներից անհաւատ եղողները չեն տարբերում մինչեւ յայտնութիւնը չէր եկել նրանց համար:

2. Աստուծոյ կողմանէ մի դեպքան է, որ կարգում է մաքուր թղթեր, որոնց մէջ կան հաստատ գրածքներ:

3. Նրանք էլ որ գիրք են ստացել, բաժին բաժին չ'եղան բացի յայտնութիւնը նրանց համար գալուց յետոյ:


4. Նրանց միայն այդ պատիրուեց, որ մաքուր կըրօնքը պաշտեն Աստուծուն իբրեւ կրօնասէրներ, եւ կատարեն ազօթքը եւ տան մաքրութեան տուրքը. որ սա է հաստատուն կրօնքը:

5. Տե՛ս գիրք ունեցողներից եւ կոսպաշտներից նըրանք որ անհաւատ են, գժոխքի կրակումը կը լինեն, եւ միշտ կը մնան նրանում. նրանք ամենաչար արարածներն են:

6. Իսկ նրանք որ հաւատում եւ բարիք են գործում. ամենաբարի արարածներն են:

7. Նրանց վարձքն իրանց Տիրոջ յօտ եղեմական գրախաներ են, որոնց տակովը գետեր են հոսում, եւ նրանք կը մնան նրանց մէջ յաւիտեան:

8. Նրանցից Աստուած գո՛հ կը լինի, եւ նրանք էլ Աստուածանից գո՛հ կը լինեն: Սա նրա համար է, որ երկնում է իր Տիրոջից:



99) ՍՈՒՐԷ ԱԼ-ՉԱԼՉԱԼԱԹ.

Մէքքէական, և կասուի Մէգինէական. ութը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երբ երկիրը շարժի իր երկրաշարժովը.
2. Ու երկիրը իր միջիցը դուրս աայ իր ծանր բաները.
3. Մարդն էլ կասի, «սրան ի՞նչ է պատահել».
4. Նոյն օրը դու նրան կը պատմես նրա լուրերը.
5. Այն, որ քո Տէրը նրան կըտայ յայտնութեամբ:
6. Այն օրը մարդիկ դուրս կըգան տեսակ տեսակ, որ տեսնեն իրանց դորձքերը.
7. Ուրեմն ով մի մըջիւնի ծանրութեամբ բարիք է արել, նա կը տեսնէ այն.
8. Նաև ով մի մըջիւնի ծանրութեամբ չարիք է արել, նա կը տեսնէ այն:



100) ՍՐԻՐԷ ԱԼ-ԱԴԻԱԹ.

Մէքքէական, և Մէգինէական. տասնմէկ այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երդում հմ անում աքալով վազողունքներովը.
2. Երդում հմ անում կրակի կայծեր հանողունքներովը.
3. Երդում հմ անում առաօտանց նախանձողունքներովը.
4. Որ դրանով փոշի են բարձրացնում.
5. Եւ միացածների մէջ տեղն են մտնում.
6. Իրաւ մարդս իր Տիրոջ դիմ ապերախտ է:
7. Նա ինքն էլ այս բանին վկայ է.

8. Տե՛ս, որ նա խիստ սիրում է կալւածքը.
9. Մի՞թէ նա չըզիտէ, որ ինչ գերեզմաններումը
գուրս պիտի գայ.
10. Ուրեմն ինչ սրտերումը կայ, պիտի յայտնուի:
11. Քո Տէրն ալ այն օրը զիտէ նրանց.



101) ՍՈՒՐԷ ԱԼ-ԳԱՐԸԱԹ:

Մէքքէական. ութը այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Դուռը թակողը. ի՞նչ է գուռը թակողը.
2. Ի՞նչն է քեզ իմացրել, թէ ինչ է գուռը թակողը:
3. Այն օրը մարդիկը փուած ցեցերի պէս կը լինեն.
4. Եւ սաքերը սանդրւած գոյնզգոյն բուրդի կը նը-
մանին.
5. Իսկ որի կշիռքը որ ծանրանայ, նա գո՛հ կեան-
քում կըլինի.
6. Բայց որի կշիռքը որ թեթեւանայ, նրա բնակա-
րանը գժոխքը կըլինի:
7. Ուրեմն ի՞նչն է քեզ իմացրել թէ ինչ է գժոխքը:
8. Վառւած կրակ է:



102) ՍՈՒՐԷ ԱԼ-ԹԱՖՍՍՈՒՐ:

Մէքքէական. ութը այէ:

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Չեզ գրադեցնում է աճումը.
2. Մի՞նչեւ կ'այցելէք գերեզմանները:
4. Բնա՛ւ, յետոյ կ'իմանաք.

4. Կրկին բնա՛ւ. յետոյ կ'իմանաք:
5. Բնա՛ւ. ո՛հ եթէ գիտենայիք հաստատ գիտո՛ւ թիւնը:
6. Հարկաւ դուք պիտի տեսնէք դժոխքի կրակը:
7. Յետոյ անպատճառ պիտի տեսնէք նրան համողւած աչքով:
8. Յետոյ ձեզ հարցնելու են այն օրը զարձանքնե՛րիցը:



103) ՍՈՒՐԷ ԱԼ-ՍԱՐ

Մէքքէական. երեք այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երդում եմ անում կէսօրից ետքի ժամանակովը:
2. Որ մարդս փնասի մէջ է:
3. Բացի նրանցից, որ հաւատում եւ բարիքներ են գործում. եւ իրար յորդորում են ճշմարտութեան եւ իրար յորդորում են համբերութեան:



104) ՍՈՒՐԷ ԱԼ-ՀՈՒՄԱԶԱԹ:

Մէքքէական. ինը այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Վա՛յ ամեն մի բամբասող հայհոյողի:
2. Որ ստացւածք է հաւաքում եւ հաշիւներ անում:
3. Նա կարծում է, թէ նրա ստացւածքը նրան անմահ կը շինեն:
4. Բնա՛ւ. նա գցւելու է Հութամայի մէջը:
4. Ուրիմն ինչն է քեզ իմացրել, թէ ինչ է Հութա՛ման:

6. Աստուծոյ կրակն է՝ վառւած,
7. Որ ծագում է սրտերի վրայ:
8. Նա նրանց վրայ կամար է կապում
9. Երկայն սիւների վրայ:



105) ՍՈՒՐԷ ԱԼ-ՖԻԼ:

Մէքքէական. հինգ այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Դու չը տեսա՞ր: Թէ քո Տէրը ինչպէս արեց փիղի տէրերին.
2. Նա նրանց մատնիչու թիւնը չ'ոչնչացրե՞ց,
3. Նրանց վրայ էլ ուղարկեց արաբիւ թոչունները,
4. Որ նրանց վրայ թափեցին քարեր չորացած ցեւից,
5. Ու նրանց շինեց արածւած տերեւների պէս:



106) ՍՈՒՐԷ ՂՈՒՐԷՅՇ:

Մէքքէական. չորս այէ:

Գթած, ողորմած Աստուծոյ անունովը:

1. Ղուրէյշի միութեանը համար,
2. Որ միացնեն ճանապարհներին ձմեռը եւ ամառը:
3. Նոյն ժամանակ նրանք կը պաշտեն այս տան տիրոջը,
4. Ու նրանց ապահովացնում է վխաից:



107) ՍՈՒՐԷ ԱԼ-ՄՍՈՒՆ.

Մէքքէական, կ'աւելի և Մէքինէական ևօթը այէ
Գթած ողորմած Աստուծոյ անուհովը:

1. Դու տեսա՞ր նրան, որ սուտ է համարում դասաստանը:
2. Սա նա է, որ դուրս է անում սրբին:
3. Ու չէ հրախրում աղքատին կերակուրի:
4. Ուրեմն վա՛յ նրանց, որ ազօթք են անում
5. Որոնք իրանց ազօթքներումը անհոգ են:
6. Որոնք երեւալու են աշխատելում:
7. Ու արգելում են ապաստանարանից:



108) ՍՈՒՐԷ ԱԼ-ՔՅՈՎՍԷՐ.

Մէքքէական, երեք այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անուհովը:

1. Մենք քեզ տեկ ենք Քօվսէրր:
2. Ուստի ազօթք արա քո Տիրոջը եւ զո՛հ բեր,
3. Տես որ քեզ ատողը անդաւակ է մնալու:



109) ՍՈՒՐԷ ԱԼ-ՔԱՅԸՐԻՆ

Մէքքէական, վեց այէ:

Գթած ողորմած Աստուծոյ անուհովը:

1. Ասա՛ սո՛վ անհաւատներ
2. Ես չեմ պաշտի ինչ որ դու ք էք պաշտում»:

3. «Գուք էլ չէք պաշտի ինչ ես եմ պաշտում» .
4. «Ոչ էլ ես պաշտում եմ, ինչ դուք էք պաշտել» .
5. «Եւ դուք էլ չէք պաշտում, ինչ ես եմ պաշտում» .
6. Գուք ունէք ձեր կրօնքը, եւ ինձ համար է իմ կրօնքը» :



110) ՍՈՒՐԷ ԱԼՆՍՍՐ.

Մէքքէական. կամ նաև Մէդլինէական երեք այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Երբ եկաւ Աստուծոյ օգնութիւնը եւ յաղթութիւնը.
2. Եւ դու տեսար, որ մարդիկ մտնում են կրօնքի մէջը խումբ խումբ .
3. Այն ժամանակ փառարանի՛ր քո Տիրոջը, եւ նեղողութիւն խնդրի՛ր, որովհետեւ նա ետ դարձող է:



111) ՍՈՒՐԷ ԹԷԲԵԷԹ.

Մէքքէական. հինգ այէ:

Գլխած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Կորչե՛ն Աբու-Լահարի ձեռքերը, եւ կորչի՛ ինքը.
2. Նրան չ'օգնէ նրա ստացածքը եւ վաստակածը:
3. Նա բոցալառ կրակի մէջն ընկնի՛
4. Նրա կիներն էլ փայտ շալակի՛ .
5. Ու իրան վզուժը մի շուան լինի՛ արմաւենու մանրաթիկերից:



112) ՍՈՒՐԷ ԱԼ-ԸԽԼԱՍ.

Մէքքէական, և ասու՛մ են Մէզինէական չորս այէ

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Դու ասա՛, «նա մէկ Աստուած է».
2. «Աստուած յաւիտենական է».
3. «Նա չէ ծնել և չէ ծնուել».
4. «Նրան էլ հաւասար ոչ ոք չէ եղել»:




113) ՍՈՒՐԷ ԱԼ-ՖԱԼԱԳ.

Մէքքէական և ասու՛մ են Մէզինէական. հինգ այէ

Գլթած սղորմած Աստուծոյ անունովը:

1. Ասա՛ «ես ապաստանում եմ լուսածագի Տիրոջ մօտ:
2. Այն չարիքիցը, որ նա ստեղծել է».
3. «Այն խաւարի չարիքիցը, երբ մտնում է».
4. «Եւ հանգոյցի մէջը փչողների չարիքիցը»:
5. «Նաեւ ատողի չարիքիցը, երբ ատում է»:



114) ՍՈՒՐԷ ԱԼ-ՆԱՍ.

Գլթած ողորմած Աստուծոյ անունովը

Մէքքէական, և ասու՛մ են Մէզինէական. վեց այէ:

1. Դու ասա՛, «ես ապաստանում եմ մարդկանց Տիրոջ մօտ».
2. «Մարդկանց թագաւորի մօտը».
3. «Մարդկանց Աստուծոյ մօտը».
4. «Փսիսացողի չարիքիցը որ ես է գնում».
5. «Որ փսփսում է մարդկանց սրտերի մէջը».
6. «Դեւերիցը եւ մարդկանցիցը»:

ՅԱՆԿ ՍՈՒՐԷՆԵՐԻ

ՍՈՒՐԷ		ԵՐԵՄ
1)	Ֆաթիհէթ Իւլ-Քիթապ	3
2)	Ալ-Բագարա	»
3)	Ալը Իմրան	45
4)	Ուն Նիսա	69
5)	Ալ-Մաըդէթի	95
6)	Էն'ամ	114
7)	Ալ-Արաֆ	135
8)	Էնֆալ	160
9)	Թոզրէ	169
10)	Եուսուս	187
11)	Հուդ	200
12)	Եուսուֆ	114
13)	Րա'դ	226
14)	Իբրահիմ	233
15)	Հէճր	239
16)	Նահլ	245
17)	Ասրա	258
18)	Քէահֆ	269
19)	Մարիամ	281
20)	Թահա	289
21)	Էնբիա	299
22)	Հիսճճ	309
23)	Մէօմընիին	318
24)	Նուր	327
25)	Ալ-Ֆուրգան	336
26)	Ալ Շուարա	343
27)	Նէ	356
28)	Գըսաս	364
29)	Էնքէբուլթ	374
30)	Րում	383
31)	Լոզման	388


ሀበተቦቲ	ኮቦቴሀ
32) ሀቦጥቲ	392
33) ኮንባዎ	395
34) ሀዎዎ	404
35) ሀጥገላገላዎቲ	410
36) ኮ. ሀ.	416
37) ሀዎቆቆዎ	416
38) ሀ.	430
39) ገዎዎ	436
40) ሀ-ሀጥገላገላዎ	444
41) ሀዎዎዎዎዎ	453
42) ሀዎ. ገዎ	459
43) ገዎዎዎዎ	465
44) ሀ-ገዎዎዎ	472
45) ሀ-ገዎዎዎዎ	475
46) ሀ-ገዎዎዎ	479
47) ሀዎዎዎዎ	484
48) ሀ-ገዎዎዎ	488
49) ሀ-ገዎዎዎ	493
50) ገ.	495
51) ሀ-ገዎዎዎ	499
52) ሀ-ገዎዎ	502
52) ሀዎ-ገዎዎ	505
54) ሀ-ገዎዎ	508
55) ሀ-ገዎዎዎ	511
56) ሀ-ገዎዎ	516
57) ሀ-ገዎዎ	520
58) ሀዎዎዎዎ	524
59) ሀ-ገዎዎ	528
60) ሀ-ገዎዎዎዎ	531
61) ሀዎዎዎ	534
62) ሀ-ገዎዎ	536
63) ሀ-ገዎዎዎ	537
64) ሀ-ገዎዎዎ	539
65) ሀ-ገዎዎ	541
66) ሀ-ገዎዎ	543

ՍՈՒՐԷ		ԵՐԵՍ
67)	Ա. Մ. Միւլք	545
68)	Ա. Գալամ	548
69)	Ա. Հազգա	551
70)	Ա. Մէտաբիճ	554
71)	Նոյ	556
72)	Ա. Ճիւնն	558
73)	Ա. Միւլքէմմիւլ	561
74)	Ա. Միւլքէսուրք	562
75)	Ա. Գիւտաթ	565
77)	Ա. Լիւսան	567
77)	Միւլքսիւլիթ	569
78)	Ա. Նէրա	571
79)	Ա. Նաղըաթ	573
80)	Ա. Բաս	575
81)	Ա. Թէքլիբ	577
82)	Ա. Լիւֆըթար	578
83)	Մութաֆֆըֆիւն	579
84)	Ա. Ինչըգազ	581
85)	Ա. Բրուճ	583
86)	Ա. Թարըզ	584
87)	Ա. Լա	585
88)	Ա. Ղաչիթիթը	586
89)	Ա. Յաճը	587
90)	Ա. Բէլէդ	589
91)	Ա. Շամս	590
92)	Ա. Լէյլ	591
93)	Ա. Յուհա	592
94)	Ա. Լամ-Նաչրահ	»
95)	Ա. Թիւն	593
96)	Ա. Ալագ	«
97)	Ա. Գադր	594
98)	Ա. Բէլիլիւնէ	595
99)	Ա. Չալըալաթ	596
100)	Ա. Աղիաթ	»
101)	Ա. Գաբըաթ	597

ՍՈՒՐԷ		ԵՐԵՍ
102)	Ալ-Թաքասուր	»
103)	Ալ-Ասր	598
104)	Հումազաթ	»
105)	Ալ-Յիլ	599
106)	Ղուրէյն	»
107)	Մաուն	600
108)	Ալ-Քուլսէր	»
109)	Ալ-Քաֆրիհն	»
110)	Ալ-Նասր	601
111)	Թէրթէթ	»
112)	Ալ-Լիլաս	602
113)	Ալ-Ֆալազ	»
114)	Ալ-Նաս	»



ԻՆՉ Է ՂՈՒՐԱՆԸ ԳԻՏԵՄ



Շատ խնդրեմ, ո՛վ հայեր, բաւական հասկացէ՛ք, թէ Ղուրանը ինչպիսի տկար, անճշմարիտ գիրք է:

Աշխարհքիս երեք մեծ մասերի մէջ՝ Ասիայում, Աֆրիկէյում եւ Եւրոպայում 200 միլիոնից աւելի մահմեդականներ կան: Դրանք շատ զանազան ազգեր են եւ տարրեր լեզուներ ունեն. բայց ամենքն էլ հաւատում են եւ արարելէն Ղուրանը պահում եւ կարգում են, թէ եւ նրա միտքը ընդհանրապէս չեն հասկանում: Այդ Ղուրանը գրեթէ հարիւրի չափ վկայութիւններով ընդունում է շին եւ Նոր Կտակարանը իբրեւ Աստուծոյ կողմից Մովսէսի, Դաւիթի, միւս մարգարէների եւ Մեսիա Յիսուսի միջոցով յայտնւած Սուրբ Գիրք, եւ Քրիստոսնեայ ազգերն մանաւանդ այժմեան բարձր լուսաւորեալ Անգլիացիք եւ Ամերիկացիք այդ շին եւ Նոր Կտակարանները աչքարհքիս շատ ազգերին համար չորս հարիւրից աւելի լեզուներով թարգմանում եւ շատ տարածում են, հարկաւ մենք հայերս էլ այդ Սուրբ գիրքը կարդալով համոզւած ենք, թէ դա Աստուծոյ խօսքն է, բայց այդ խիստ բազմաթիւ մահմէդականները ոչ թէ միայն մեր շին եւ Նոր Կտակարանը չեն կարդում եւ չեն հասկանում, այլ նոյնիսկ իրանց Ղուրանը չեն թարգմանում եւ նրա միտքը եւ գաղափարները ի՞նչ է, ընաւ չեն հասկանում:

Մենք հարցնում ենք, թէ ինչո՞ւ համար աշխարհիս այժմեան անթիւ գիտնական եւ արարելէն լաւ հասկացող մահմէդական արարները պարսիկները եւ թուրքերն արդէն իրանց կրօնքը սկսելուց մինչեւ այսօր այս հազար երեք հարիւր տարիների ընթացքում իրանց

Ղուրաբը անթիւ գաղափարներով եւ հնարած անուզիղ մեկնութիւններով կրկին եւ կրկին անգամ բացատրում են, բայց երբէք մէկ անգամ բառ առ բառ չեն թարգմանում: Պարզ յայտնի է, որ վախում են: Բնաւ տարակոյս չունեն եւ հաստատ գիտեն, եթէ Ղուրանը բառ առ բառ թարգմանի թուրքերէն կամ պարսկերէն կամ մի ուրիշ մահմէդական ազգի լեզուով, նրանցից շատերը դէն կը դցեն Ղուրանը եւ Մուհամէդին էլ չեն հաւատայ:

Մուհամմէդն ի՞նչպէս էր ասում Ղուրանը: Մեր հայ ազգը ընդհանրապէս չըզիտէ, թէ մահմէդականները կրօնքը ինչ է եւ նրանց Ղուրանը ինչպէս է գոյացել: Մենք որ այդ մուսուլման ազգերի հետ միասին խառն ենք բնակում, անհրաժեշտ պէտք է նրանց բոլոր կրօնքը ճանաչենք, եւ իրանց հասկացնենք իսլամի շատ սխալները եւ մեր քրիստոնէական հաւատքի աստուածային ճշմարտութիւնը: Նախ եւ առաջ պէտք է բուն մահմէդական գիտնականների գրքերից համառոտաբար սա պատմենք իրանց, թէ Մուհամէդը տակաւին 25 տարեկան եղած ժամանակը, ինքը որբ եւ կարողութիւն չունենալով, մի 40 տարեկան հարուստ վաճառականուհի՝ անունը Մաթիճէ՝ նրան ամուսին շինեց: Այդ ժամանակ Աբաբաւանում բաւական հրէաներ եւ քրիստոնեաներ կային, որոնք իրանց կրօնքները եւ վիպասանական պատմութիւնները խօսելով արաբներից բաւական մարդիկ իրանց կրօնքներին էին մօտեցրել: Բայց այն ժամանակ արաբները թէեւ Աստուծուն հաւատում էին, թէ նա այս ոչխարհքը ստեղծելուց յետոյ բոլոր երկինքներից ամենաբարձր աստուին վրայ առանձին նստած այս ոչխարհքի կառավարութիւնն իր բազմութիւ ազջիկներին է յանձնել: Եւ բացի դրանցից արաբները կռապաշտական մտքեր ունենալով արեգակին, լուսնին, աստղերին, սարերին, ձիերին ծառերին եւ ծառերի պտուղներին իրրեւ կուռքեր էին հաւատում: Մուհամմէդն էլ այն ժամանակ դրանցից էր: Մահմէ-

դական կրօնքի պատմաբաններն ասում են, թէ այն տարիները Արարատանում այլեւայլ կրօնքներ սարածող մարգարէներ կային: դրանցից մէկի անունը Թէլիճէ իբն Սուէյլէդ միւսի անունը էսվէդ իբն Գէ'բ եւ մի իգական մարգարէի անունն էլ Աէճճաճ (կամ Աէճճահ) Բէնիթը Հարբս էր, եւ ուրիշ մարգարէներ էլ կային, որոնք իրանց կրօնական այլեւայլ դաւանանքը տարածում էին: Այդ արար մարգարէներից զատ մի ուրիշն էլ կար Ռէհման կոչուածը եւ բուն անունը Միւսէյլէմէ էր, եւ ինքը Արարիայի Եէմամէ գաւառիցն էր, որ շատ ճարտար լեզուագէտ եւ խելացի խրատող լինելով հարիւր հազարից աւելի արարներ իրան կրօնական եւ քաղաքական հպատակներ էր շինել: Հիմայ էլ մահմէ-դական գրքերում այդ մարգարէի խօսքերիցը գրած քանիք գտնուում են: Բոլոր մահմէդականներից յարգած պատմաբան Իբն Հաշիմի գրած «Մուհամմէդի կենսագրութիւնը» սա էլ է պատմում, թէ իրանց մարգարէ Մուհամմէդը Մէքքէից գնացել էր Եէմամէ գաւառը եւ այնտեղ այն երեւելի Միւսէյլէմէ մարգարէի խրատները, քարոզները, կեանքը եւ նրա բազմաթիւ հլու հպատակները տեսնելով ինքն էլ նրա աշակերտ էր դառել եւ խորին համոզումով էլ այդ փափագն էր ստացել, որ ինքն էլ մարգարէ դառնայ: Աս իրողութիւն է, թէ Մուհամմէդն այն ժամանակ մի ծանրաբարոյ, խելացի խօսող մարդ էր, ստանաւորները սիրում եւ ասում էլ էր, սակայն քանաստեղծութեան միայն ոճը գիտէր եւ ոչ թէ որինաւոր կանոնները: Իր ստանաւորների վերջի իրար համաձայն բառերը բաւական գիտէր, ինչպէս եւ ուրիշ արար քէահիները, բայց սողերի չափը չէր ըմբռնում: Այդ մարգարէ լինել ցանկացող Մուհամմէդը արդէն ժամանակներից սկսած նոյնիսկ արար ազգի կոապաշտական կրօնքովը շատ կուռքերի անուններով էլ երդումներ է արել, որ այսօր Աւրանումը գրած են, եւ ինքն էլ երկու անգամ ասում է արարներին, «դուք այս նրաչալի ոճով մի բան գրել չըզիտէք»: Սակայն

նոյն իսկ այն ժամանակը շատ երևելի բանաստեղծներ կային Արարիայում, որոնք շատ օրինաւոր բաներ գրած են ևւ այսօր էլ ներկայ է:

Սրանից զատ այդ Մուհամմէդի այն ժամանակւայ կեանքումը մի ուրիշ զօրեղ զէպք է պատահել, որ նըրան մի որոշ ուղղութիւն տւեց մինչև իրան կեանքի վերջը: Եբբ նա իր վարպետ Միւսէյլէմէ մարգարէի նըման խօսքեր էր չինում, նրա խելացի Սադիճէ կինը մի պատուաւոր ևւ բանիմաց հօրեղբօր որդի՝ անունը Վարագէ ունենալով, որ Դուրէյշ արաբներէ նխմապաշտ կրօնքը ձգած շինելով քրիստոնեայ եղած էր ևւ նոր կտակարանն էլ, ինչպէս մահմէդական պատմաբանները յիշում են, լաւ հասկացել ևւ քարոզում էլ էր, գնաց գրա մօտ ևւ խնդրեց իր Մուհամմէդ ամուսինն պէտք եղած քրիստոնէական մատուր աղղեցութիւնն անէ: Նայեցէ՛ք տեսէ՛ք, թէ Սադիճէյի այդ աղաչանքի պատճառը ինչ էր: Թէև յուր մահմէդականներն այս պատմական իրողութիւնը չեն հաւատում, թո՛ղ չըհաւատան. իրողութիւնն արդէն իրողութիւն է: Ահա՛ այսպէս էր: Բո՛ւն ճշմարիտ հաւատացող միւսլիմ պատմաբանները, զոր օրինակ «Ռոզվէթ ուլ Էհրայ» քառաստոր գրքի հեղինակը պատմում է, ի հարկէ միմիայն Մուհամմէդի փառքին համար, թէ իրանց այդ մարգարէն ծնեց, եբբ նրա հայրը կամ արդէն մեռած էր կամ մի քիչ յետոյ մեռաւ, այն ժամանակ նրա մայրը Ամինէ իր փոքրիկ տղան յանձնեց մի դաշտաբնակ ընտանիքի, որ լաւ պահէն, մեծցնեն ևւ յետոյ ևւ րեւեն իրան տան: Այդ վեց տարեկան եղած Մուհամմէդ մտնուկը մի օր այն դաշտային ընտանիքի տղաների հետ միասին անասունների դաշտումը հսկած ժամանակը յանկարծ ուշաթափ եղած վար ընկաւ դողալով ևւ խըռխըռալով հողին վրայ: Սա էպիլէպսի, այսինքն լուսնոտ հիւանդութիւնն էր: Այդ դաշտի բնակիչը ետ րեւեց Մուհամմէդ երեխան Մէքքէ քաղաքը մօրը տալու համար. բայց մայրը խնդրեց տակաւին մի քոնի ժա-

մանակ էլ պահեն, նրանք էլ պահեցին: Յետոյ մօրը մօտ եկած ժամանակը մայրն էլ մեռնելով, նրա պապը՝ այսինքն հօրը հայրը Արղուլ-Մութթալիբը ընդունեց նրան իր տանը, բայց այդ ձերուկն էլ մեռած ժամանակը՝ ընդունեց նրան իրան մօտ նրա հօրեղբայր Աբու-թալէբը, որ երեւելի Ալիի հայրն էր: Այդ Մուհամմէդ երիտասարդը մէկ քանի անգամ էլ այդ տանը ուշաթափելու պատճառով, նրա հօրեղբայր Աբու թալէբը նրան տարեց մի բժշկի պէս քէանիւնի մօտ և հարցրեց թէ ի՞նչ է այս հիւանդութիւնը: Արարներն այդ հիւանդութիւնը բնաւ չէին հասկանում և ընդհանրապէս կարծում էին, թէ դա մի հիւանդութիւն չէ այլ սատանան յանկարծ մտնում է իր ուզած մի անձի մէջը և դրան այդպէս մի կարճ ժամանակ տանջում ու բաց է թողում: Թէև այն քէանինն ասաց, թէ դա սատանան չէ որ այդ խելացի և ծանրաբարոյ Մուհամմէդ երիտասարդին մէջն է մտնում, այլ Ատուծոյ բարի հրեշտակն է. բայց Մուհամմէդը ընդհանրապէս արարների պաղտարների համեմատ իր այդ ցաւալի վիճակը սատանայից համարելով ուզում էր Մէքքէի մօտ եղող բարձր սարիցն իրան վար գցէ, մեռնէ և սատանայիցն ազատի: Սակայն որովհետև իր Սադիճէ կիներ այդ ցաւի համար իրան բարի հօրեղբորը սրտուն հետ խօսել էր, նա լուր բացատրեց և հաստատեց, թէ դա բնաւ մի սատանայական գործ չէ, ուրեմն Սադիճէն էլ Մուհամմէդին համոզում էր, թէ այդ ուշաթափութիւնը սատանայից չէ, «այլ որովհետև դու բարի մարդ ևս ևս թէ՛ հրէաներից թէ՛ քրիստոնեաներից ճշմարիտ Ատուծոյ հաւատքը ընդունել ևս, ուրեմն Սուրբ Հոգին է քո սիրտը մտնողը և դու Ատուծոյ մարգարէն ևս»:

Երբօր Մուհամմէդը համոզւեց, թէ Սուրբ Հոգին է իրեն ուշաթափեցնողը, հաւատաց, թէ ինքը Ատուծոյ մարգարէն է, և սկսեց Մէքքէում եղող օտար քրիստոնեաներից և մասամբ էլ հրէաներից թէ՛ շիտակ և թէ՛ սխալ պատմութիւններ սովորել և այն

լսած բաները քարոզի պէս ատարածում էր իր հնարած փոփոխութիւններովը մանաւանդ այն պատճառով որ գրեւ կարգալը չ'գիտէր: Կուսպաշտ արարները նրան ասում էին, թէ «դու մարգարէ չես, այլ օտարներից սովորած բաներդ ես խօսում»: Իսկ նա էլ չէր կարողանում այդ խօսքերը ուրանալ եւ տկար պատասխան էր տալիս, «այն ինձ հետ խօսողները բուն արար չեն, օտարներ են, բայց իմ ասածներս արարելէն է»: տես 16, 105 եւ 25, 5: Նաեւ պարզ ասում է, թէ «առաջ ոչ Սուրբ Գիրքը գիտէր եւ ոչ հաւատքը»: 42, 52, Իւ ինչ որ առաջ կիտակտոր ոտանաւոր կերպով շատ կողմններ էր արել եւ յանդիմանութիւններ ու վստահութիւններ էր հնարել, բոլորն էլ գրել էր տեւ կաշիների, արմաւենի տերեւների, կտոր կտոր սախտակների, տափարակ սկորնների եւ այդպիսի ուրիշ նիւթերի վրայ, որովհետեւ այն ժամանակ Մէքքէյում եւ բոլոր Արարստանում ո'չ գիտուններ, ո'չ պատմաբաններ, ո'չ գալրոցներ եւ ո'չ գրքերի հեղինակներ կային, որոնք իրենց ոտանաւորներն ընդհանրապէս գաց գիտէին, եւ միմիայն մի քանի հատ երեւելի բանաստեղծների ոտանաւորները կաշիների վրայ գրում եւ բարձր պատերի վրայ կախում էին: Իսկ Մուհամմէդն էլ իր մարգարէական համարած միտքերը այն կաշիների, սկորնների եւ այդ տեսակ կտոր կտոր նիւթերի վրայ էր գրել տալիս եւ պահում, որովհետեւ այն ժամանակ Մէքքէյում թուղթ չըկար:

Նա իր բոլոր կեանքի մէջ չունէր այն քաջութիւնը, որ իրան իբր թէ Աստուածանից հրամայած խօսքերը հաւաքէր մի Ղուրան շինէր. նա գիտէր թէ իր ասած խօսքերին մէջ շատ հակասութիւններ, անկարգ շփոթութիւններ եւ ոչ-աստուածային այլ բուն մարդկային խօսքեր կային, եւ միմիայն նրա փեսան Ալին, նրա իննր տարեկան ամուսնացած Այիչէ կինը, իր կողմնապահ ընկեր իբն Մէս'ուդը եւ ուրիշ մի քանի մարդիկ նրանից լսած ղուրանական խօսքերը գրել էին

էին եւ մի քանի տրիչներ էլ նրանից շատ կրօնական
խօսքերը միտքով անգիր էին արել: Երբոր Մուհամ-
մէդը մեռաւ եւ այն Ղուրանի խօսքերն անգիր անող-
ներից մէկ անգամ եօթանասուն հոգի մի պատերազ-
մում սպանւեցին, եւ յետոյ դարձեալ Ղուրանը գիտցող
ուրիշ եօթանասուն հոգի սպանւեցին, նրա կնիկներէից
մէկի հայրը՝ Օմարը շատ համոզումներով Մուհամմէդի
միւս աներ Աբուբէքրին, որ նրա մահւանից յետոյ ա-
ռաջին գերիշխանն էր, հասկացրեց, թէ Ղուրանը ան-
պատճառ պէտք է ժողովել, թէեւ այդ Աբուբէքրը
նրան ասում էր, «մարգարէն որ Ղուրանը չէ ժողովել,
ապա մենք ինչպէս կարող ենք համարձակուել»: Վեր-
ջապէս Օմարը նրան համոզեց ասելով, թէ արդէն
Ղուրանի երկու երբորդ մասերը կորուսել են եւ մի-
միայն մէկ երբորդ մասն է մնացել»: Այն ժամանակ Ա-
բուբէքր գերիշխանը կանչեց իրանց մարգարէի երի-
տասարդ զրազիր՝ Ջէյդ իրն Սաբըթը, որ Ղու-
րանը ժողովէ մէկ գիրք չինէ: Ջէյդը պատասխանեց,
թէ դա անկարելի բան է, որովհետեւ Մուհամմէդի
խօսած մարգարէութիւնները կտոր կտոր տախտակների,
ոսկորների, կաշիների վրայ գրւած, խառնւած ցիր ու
ցան եղած են եւ մի քանի մարդիկ էլ կցկտուր եւ
անհամաձայն կերպով լսելով անգիր են արել, հիմա
ինչպէ՞ս կարելի է դրանից մի օրինաւոր գիրք չինել:
«Եթէ ինձ հրամայէք, ասաց, թէ գնա՛ այն սարը
կոնակդ ա՛ռ եւ տա՛ր այն ինչ տեղը, դա աւելի կա-
րելի է, բայց Ղուրանը կարգին գրելը անհնարին է»:
Սակայն նրան պարզեւ խոստանալով հրամայեցին գի-
տեցածին չափ Ղուրանը ժողովել, նա նա ժողովեց շատ
խստն կերպով:

Աբուբէքր իշխանի մեռնելուց յետոյ Օմարը իշ-
խան լինելով Ղուրանը իր մօտն առած քանի տարի
նոյն իսկ իր գաղափարներովը աւելացրեց, պակասա-
ցրեց եւ փոփոխեց, թէեւ մահմէդականները զոհ չէին:
Եւ երբ այդ Օմար իշխանը սպանեցին եւ Մուհամմէդի

փետոյ եղած Օսմանը մէկ անգամ ստիպուեց Ղուրանը իրբեւ իրանց մարգարէի ճշմարիտ պատւէրները բոլոր մուսուլմանների մէջ տարածել, որովհետեւ մահմէդականներ շատ տեղ իրար հակառակ Ղուրաններ ունէին, ինչպէս եւ Հայաստան ու Աղէրբայճան եղած այդ երկիրները յաղթած արաբ զօրքերը իրանց, տարբեր դուրանների խօսքերի համեմատ իրար հետ պատերազմ սկսեցին: Այն ժամանակ նրանց զօրապետը եկաւ Օսման իշխանին շատ խեղրեց, որ այդ տարբեր Ղուրանները ձգէ եւ մէկ հատ նորը շինէ: Օսմանն էլ իրամի նոր Ղուրան շինեց եւ ուրիշ որքան եւ որտեղ Ղուրաններ կային, բոլորը, եւ նոյնիսկ Մուհամմէդի հրամանով գրածները ժողովեց, ջնջեց եւ կրակով այրեց: Թէպէտեւ Մուհամմէդի մի շատ սիրելի բնկեր՝ Իբն Մէս'ուդ գրագիրը բուն իր մարգարէի ասելովը Ղուրանի խօսքեր էր գրել, Օսմանը նրա գրած Ղուրանն էլ նրանից պահանջեց, բայց երբ նա չբուեց, այն ժամանակ Օսմանը նրան ձեռնելով բռնութեամբ առեց այն Ղուրանը եւ այրեց: Իբն Մէս'ուդն էլ իր պատիժիցը մեռաւ: Ահա՛ որչափ էլ Մուհամմէդի բուն բարի հաւատացողները նրանից լսելով գրած էին, Օսման իշխանը բոլորն էլ փձացրեց ոչնչացրեց, այնպէս որ գրա ժամանակից մինչեւ այսօր ոչ թէ Մուհամմէդի ասած խօսքերն են, այլ ահա 1300 տարի միմիայն այդ Օսմանի ուղղած, աւելացրած եւ սլակսեցրած Ղուրանն է այս աշխարհքում: Շատ մահմէդականներ եւ մանաւանդ Պարսկաստանի շիրէները Օսմանի այդ մտքովն ու գաղափարներովը խռոնաշփոթած Ղուրանին չեն հաւատում: Նոյնիսկ 33-րդ Ազնար սուրէի մասին Մուհամմէդի Այիլէ կիրը ասում էր, թէ գա 200 տուներից բազկացած էր, բայց Օսմանը գրա միջիցը շատ բաներ հանելով տեղը շատ ուրիշ բաներ է խոթել եւ բոլորը սոսկ 73 տուն է դասել:

Հիմայ ամեն մի այս խօսքերը կորգացողը կը տեսնէ որ Ղուրանը Մուհամմէդը չէ ժողովել, իսկ նրա մահ-

ւանից յետոյ առաջ ժողովել է նրա աներ Արուբէքը իշխանը, որա մեռնելուց յետոյ Ղուբանը իր խելքովը սրբաբրել եւ ուղղել է նրա մի ուրիշ աներ՝ Օմար իշխանը, եւ վերջապէս Ղուբանների մէջ շատ հակասութիւն եւ մնասակար բաներ տեսնելով իր հակադաս կերպովը վերանորոգել է նրա փեսան՝ Օսման իշխանը, որ միւս ամեն ուղղակի Մուհամմէդի հրամանով գրած Ղուբանները բոլորովին այրեց ոչնչացրեց:

Օսմանը եթէ ուղիղ մարդ լինէր պէտք էր Մուհամմէդի ասած եւ այստեղ ու այնտեղ գրել տւած խօսքերը բոլորն էլ մէկ Ղուբանի մէջ ժողովելուց յետոյ այն կաշիների, սակորների, տերեւների վրայ գրած բոյլոր կտարները մի ոսկուց կամ գոնէ արծաթից կամ պղնձից շինած սնտուկի մէջ պահէր տարուց տարի ապացուցանելով, թէ իրան գրած Ղուբանը ճշմարտապէս Մուհամմէդի խօսքերն են:

Բայց սրովհետեւ խոստ թեամբ եւ մարդասպանութեամբ Մուհամմէդի խօսքերը փչացրեց, դա պարզ է որ իրան շինած Ղուբանը ճշմարտապէս Մուհամմէդի խօսքերը չեն: Այս մահմէդական իրողութիւնը պարզ կերպով յայտնուած ենք մեր հայերին. որ մէկ կողմից Ղուբանի սխալ գոյութիւնը ճանաչեն եւ մէկ կողմից էլ լաւ ճանաչեն նոր կտակարանի մաքուր աստուածային սուրբ ճշմարտութիւնը: Քրիստոսի երկու վկայ աշակերտները՝ Մատթէոսը եւ Յովհաննէսը գրեցին աւետարաններ որչափ որ իրանք տեսել եւ լսել էին: Մարկոսն էլ որ Պետրոս առաքեալի ընկեր էր, Պետրոսից իր բոլոր լսածները եւ մասամբ էլ իր տեսածները գրեց Աւետարան:

Իսկ Ղուկասը լաւ ուսեայ գլխանական լինելով հաւատացել է փրկիչ Յիսուսին, եւ Պօղոս առաքեալի հետ միասին այլեւայլ երկիրներ էր գնում եւ նա Յիսուսին լաւ ճանաչող ճշմարիտ քրիստոնեաներից նրա խօսքերը եւ գործքերը ժողովելով առաջ այդ Աւետարանը եւ յետոյ էլ Գործք Առաքելոցը գրել է: Հիմայ այդ չորս Ա-

ւետարանները գրողները միմեանցից զատ զատ լինելով բոլոր իրանց տեսածները եւ լսածները այնպիսի աստուածային սուրբ ճշմարտութիւններով են գրել, որ ահա 1900 տարի այդ չորս Աւետարանների մէջ ոչ ոք մի հակասութիւն չը տեսնելով հրաշալի սուրբ խօսքեր եւ սուրբ գործքեր են կարդում, եւ քրիստոնեաներոյ այն երեք մահմէդական իշխանների պէս երբէք եւ նրբէք տոյն չորս Աւետարանների մէջ մի հակասութիւն, մի սխալ կամ մի անկանոն խօսք չեն տեսներ, որ փոփոխէին ինչպէս Մուհամմէդի աներները եւ փեսան Ղուրանը փոփոխեցին: Եւ մենք այսօր այն չորս տարբեր գրած սուրբ Աւետարանների մէջ մէկ հատիկ սխալ կամ հակասական անկանոն խօսք չենք տեսնում:

Ահա՛ Ղուրանը թէպէտ երեք անգամ սրբագրւած, ուղղւած եւ նրա արմատական գրւածքները ոչնչացրւած են, այնու ամենայնիւ քանի՛ քանի՛ հարիւր հակառակ հակասութիւններ, եւ որչափ անհասկանալի մտքեր, անհաւանելի խրատներ եւ սխալ ու անօրէն հրամաններ ունի: Եւ այսօր յայտնի է, որ նոյնիսկ շատ երեւելի գիտնական մահմէդականներ Ղուրանը մեկնելով իրար հետ հակառակ (իսթիլաֆ) մտքեր են յայտնում, քանի՛ քանի՛ սուտ պատմութիւններ (բիվայէթ), են յօրինում եւ շատ անգամ էլ միեւնոյն Ղուրան մեկնողը այս կամ այն խօսքի մասին ասում է. «սա կա՛մ այսպէս հասկացէք, կա՛մ այսպէս, կա՛մ այսպէս հասկացէք»: այնպէս որ երկու, երեք եւ մինչեւ եօթը կամ ասուել եւս մեկնիչ խօսքեր են առում, որովհետեւ այս 1300 տարիների ընթացքում տակաւին չեն հասկացել Ղուրանը եւ երբէք էլ չեն հասկանալութէ Ղուրանը այստեղ եւ այնտեղ ինչ է ասում:

Հիմա ուշադրութիւն արեցէք, թէ բուն կրօնասէր մահմէդական գիտնականները, որ Ղուրանը չափազանց պաշտպանում են, նրանցից ամենախելօք մեկնիչներից մէկը՝ անունը Իմամ Սիութի որի բնգմաթիւ գրքերից Իթկան անունով մէկը շատ երեւելի գիրք է. գրա մէջը

վկայում է, թէ իրանց մարգարէի Մէդինէյում ասած խօսքերիցը գիտնալով կամ տգիտութեամբ մէքքէական սուրէնների մէջն են դրել եւ նոյնպէս էլ Մէքքէյում ասած Ղուրանի խօսքերը մէդինէական սուրէնների մէջն են մտցրել: Մենք այստեղ այս վերջի կերպը կը ներկայացնենք, այսինքն թէ որքան մէքքէական խօսքեր մէդինէական սուրէնների մէջն է խառնուած: Ահա՛ 2-րդ մէդինէական սուրէյում գրած են 103, 274 մէքքէական սուր. 6-րդում 10, 91, 93, 94, 114, 152 սուր. 7-րդում 163 173. 8-րդում 30, 65. 9-րդում 114, 129. 10-րդում 41—109 եւ այսպէս ուրիշ 40 մէդինէական սուրէններում շատ մէքքէական խօսքեր խառնուած են: Յաւն այս է, որ թշւոռ 200 միլիոն մահւմէդականները, որ արաբերէն Ղուրանը միշտ եւ մահաւանդ Բէմազան ամիսը այդ խորթին անհասկանալի արաբերէն Ղուրանը կարդում են, բայց բնու չեն հասկանում, թէ որչափ սխալներ, որչափ շինծու կիսատ պատմութիւններ, անօգուտ եւ խիստ սխալ եւ անօրինի խօսքեր կան կամ եթէ հազար կամ տասը հազար մուսուլմաններից մէկը արաբերէնը գիտէ, դարձեալ մութ եւ կիսատ պոստ Ղուրանը չի հասկանայ:

Սա էլ իմացէք թէ ինչպէս մահմէդականներն իրանք 120 տարի Մուհամմէդից յետոյ սկսեցին Ղուրանը գոնէ մի կերպ բացատրելու եւ ուղղելու համար, քանի քանի հազար հէգիսներ այսինքն Ղուրանից զատ իբրեւ Մուհամմէդի ասած խօսքեր եւ նրա արած գոծքեր այլ եւ այլ շատ գրքերում ժողովել եւ կրկնել են: Այստեղ այն շատ հագիսապետներից միայն մէկի անունը յիշենք՝ Ալ-Բուխարի, որ գրեթէ 200 տարի Մուհամմէդից յետոյ իբրեւ թէ նրա ասած 600 հազար խօսքերը ժողովել է, բայց զրանցից միայն 4000 ընդունել եւ 594 հազարը դէն է գցել այսինքն իբրեւ սուտ հնարած խօսքեր. եւ կան միւսլիմ գիտնականներ էլ որ նոյնիսկ Ալ-Բուխարիի 4000 իբրեւ թէ Մուհամմէդի ասած հէգիսները սուտ են համարում: Նոյնպէս էլ

ուրիշ շատ հազխագործ մարդիկ խիստ շատ բաներ են հնարել ևւ գրել իբրև թէ միւսլիմ մարդկանց կեանքի բոլոր օրէնքներն են իբր Մուհամմէդն է ասել, մինչգեռ Ղուրանը շատ քիչ ևւ խիստ անորոշ օրէնքներ ունի: Արդ բուն այդ Ղուրանի ևւ իբրև Մուհամմէդի հէգիս անուսով խօսած միտքերի ևւ օրէնքների մէջը գիտնական խելօք մուսուլմանների ասածին պէս, չորս հակասական կանոններ կան: Ա) Ղուրանը ոչնչացնում է Ղուրանի խօսքեր, Բ) Ղուրանը ոչնչացնում է հէգիսներ, Գ) հէգիսներ էլ կան որ ոչնչացնում են Ղուրանի խօսքեր ևւ Դ) կան հէգիսներ էլ որ ջնջում ոչնչացնում են դարձեալ հէգիսներ այսինքն սրանք ամենքն էլ միմեանց հակառակ խօսքեր են: Մահմէդականների այս հնարած կանոնից միայն այսչափը յայտնի է, որ Ղուրանը շատ քիչ օրէնքներ ունի մուսուլմանները կարգին կառավարելու համար, բայց այդ բոլոր Ղուրանը 114 սուրէի բաժնւած է, գրանցից կան այնպիսիներ, որոնք 3, 4, 5, 6 ևւ 10, 29 ևւ այդպէս քիչ ևւ շատ կարճ տուններ ունեն, բայց կան ևւ այնպիսիներ որոնց մէջ կան 100 կամ 200 կամ աւելի մեծ մեծ ոչ ոտանաւոր այլեթներ այսինքն տուններ: Այն կարճ ու տներով սուրէները կիսատ ոտանաւորների պէս կոտապաչա արարների գազափարնելովը ևւ երդումներովը Մուհամմէդի Մէքքէ քաղաքում յօրինածներն են, իսկ այնտեղից Մէդինէ քաղաքը փախչելուց յետոյ ինքը ևւ իր հաւատացող ընկերները շատ երկար ևւ հասարակ ու պարզ ոճով ընդարձակ սուրէներ են շինել: Մէքքէի ոտանաւոր տները պէսք էր բանաստեղծութիւն սիրող արարներին յափշտակէր: Բայց նա Մէդինայում հզօր իշխան ևւ զինուորագետ լինելով, այն պարզ, հասարակ ևւ անձաշակ երկար սուրէներն է գրել, որոնց մէջ գրելխաւորապէս պատերազմ է խրատում:

Առաջին սուրէ: Մուհամմէդի մի գրագէտ ընկերը Իբն Մէս'ուդ նրա խօսքերը լսելով ասում էր, թէ ինքը ամբողջ Ղուրանը գրել է, բայց Օամանի ժողոված

Ղուրանի առաջի ֆաթիհէ սուրէն եւ վերջի երկու սուրէն երբ Մուհամմէզի խօսքնրը չեն:

Երկրորդ սուրէ, «էյ բուզարա» այսինքն «կովը» 286 այէ ունէ: Մուհամմէզի մահից յետոյ միւս լիւմները սաիպուեցին Ղուրանը ժողովել ճիշդ արար բանաստեղծների գրքերին պէս, ուր ամենից առաջ գրում էին երկար ոտանաւորը եւ յետոյ կամաց կամաց կարճերը ու համառօտները. եւ այդ պատճառով «կով» սուրէն շատ տարբեր տարբեր խօսքերով ամենաերկար գլխաւոր սուրէն շինեցին:

Ղուրանի 114 սուրաներից 113ը սկսում են միշտ «բիսմիլլահ. ար-րէհմանր ար-րէհիմ» խօսքով, այսինքն «գթած ողորմած Աստուծոյ անունովը», որ մի կերպով նմանում են քրիստոնեաների «յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» խօսքին: Իսկ իններորդ սուրէն այդ «բիսմիլլահը» չունի: Միւս լիւմններից չատերը ոչ մի «բիսմիլլահ» չեն ընդունում ասելով, թէ շինած աւելորդ բան է. բայց ոմանք էլ ընդունում են, ուրեմըն իրարու հակառակ են:

¹⁾յս երկրորդ սուրէն ամենատկար գիտնականների գրւածքներից եւ շարադրութիւններից անկանոն եւ չափազանց խառնի խուսն եւ ընդհանրապէս անհասկընալի տարբեր բաներից բաղկացած է, այնպէս որ ոչ ամենախելօք մահմէդականներն են հասկանում եւ ոչ էլ քրիստոնեայ գիտնականները: Գիտնական մահմէդականները Ղուրանի այս երկրորդ մեծ սուրէն եւ միւս սուրէնները լաւ չը հասկանալով իրանց խելքի երեւակայութիւնից հարիւրներով շինծու անճշմարիտ պատմութիւններ են հնարում, որ անմեղ չը հասկացող ընթերցողներին խորամանկ հնարած պատմութիւններ ներկայացնեն: Բայց Մուհամմէզից 600—2100 տարի առաջ աստուածային զարմանալի իմաստութիւնով Նոր ու Հին կտակարանը որչա՛փ պարզ եւ որոշ հասկանալի է աշխարհիս քրիստոնեաներին, հրէաներին, մահմէ-

դականներին եւ նեթանոսներին, երբոր նրանք բառ առ բառ թարգմանւած կը կարգան առանց մեկնութիւն- ների եւ լաւ կը հասկնան:

Հիմայ նայեցէք Ղուրանի այդ «կով» սուրէին եւ կարգացէք, եւ կը տեսնէք, որ կցկտուր ու խառն ի խառն եւ թերի թերի կտորներ լինելով անհասկանալի է: Այս երկրորդ սուրէի առաջին համար յիշում է «երկիրդածներ» եւ շարունակում է մինչեւ հրդ տունը. բայց զրանք ո՞վ են, միւսիւմներ են, թէ քրիստոնեաներ կամ հրէաներ, յայտնի չէ: 5 եւ 6րդ տունը պատժում է անհաւատներին, եւ 7-22 տունը յանդիմանութիւն է ասում անհաւատներին, բայց ո՞վ գիտէ Մուհամմէդին չը հաւատացող արաբներին զէմ է թէ քրիստոնեաներին կամ թէ հրէաներին: 2: գովում է հաւատացողներին թէ զբախտը կը գնան, այնտեղ լաւ կերակուր կուտեն եւ մաքուր կնիկներ կունենան: (.)
24 խօսում է զարձակ չը հաւատացողների մասին: 25-26 խրատում է, որ Աստուծուն հաւատան: 27-37 խօսում է Սղամի մասին, 38-97 հրէաներին է խրատում շատ բան ասելով, նոյնպէս էլ թէ Աստուած նրանց մէկ անգամ մեռցրել է եւ զարձակ կենդանացրել. եւ մի ուրիշ անգամ էլ նրանց կապիկներ է շինել: (.)

98-112 գրեթէ ամեն մի տունը բոլորովին մի ուրիշ խօսք է ասում. նրանցից 100րդ տունը լկայում է, թէ Մուհամմէդն իր Ղուրանի խօսքերը կամ մոռանում եւ նրանց փոխարէնը ուրիշ խօսքեր է գրում, կամ Ղուրանի այս կամ այն խօսքը նոր խօսքով ոչնչացնում է: Մի՞թէ Աստուած թող կրտայ, որ իր մարգարէն մոռանայ իր հրամայած պատէրները կամ նոյն իսկ չը մոռացած այն առաջին ասածները նոր խօսքերով ոչնչացնէ: 113-115 խրատ եւ յանդիմանութիւն է ուղղակի Մուհամմէդին: 116-117 բառ առ բառ կրկնութիւն է 44-45-րդ համարներին: 118-135 կրկին խրատ է հրէաներին, թէ Յակոբը իր Աբրահամ, Աւմայէլ (.) եւ Իսահակ հայրերին հետ միւսլիմ էր, եւ որդիներին

խրատում էր, թէ միւսլիմ գաւնանս 135-145-րդ յանկարծ մի խրատ է միւսլիմներին որ աղօթք անեն եւ յանդիմանութիւն է Մուհամէզինս: Եւ երբ Մուհամէզը փախաւ եկաւ Մէզինէ, այնտեղի հրէաներին իրան հաւատացնելու համար սկսեց երկար ժամանակ զէպի Երուսաղէ՛մ նամազ անել, յայց որովհետեւ նրանք իրան չհաւատացին: սկսեց արարները շահելու համար զէպի Մէքքէի Քէ՛բէ տաճարը նամազ անել, թէ եւ այդ Քէբէում 360 կուսքեր կային եւ ինքն էլ 50-53 տարի միշտ այն կռապաշտական տաճարի մօտն էր իր նամազն արել: 146-153 Մուհամէզը կռապաշտ արարները շահելու համար բացի կուսքերով լիքք Քէբէից Մէքքէի մօտ եղած Սաֆան եւ Մարվա երկու սարերը՝ որոնք էլ կուսքեր պաշտելու տեղեր էին, ընդունեց իբրեւ ճշմարիտ կրօնական ուխտատեղիներ, եւ այսօր էլ ամեն Մէքքէ զնացող ճաճիներ այդ սարերի մօտ ճիշտ կռապաշտ հին արարների պէս փոքր քարերովն են պաշտօն կատարում: 154 անէճք հրէաներին: 155 մահմէտականներն իրանց օգուտին համար աւելացրեւ են: 156-166 միւսլիմների օւտելիքը: 157-166-ը անէճք անհաւատ արարներին: 167-168 մէկ պատէր արարներին, թէ ինչ պիտի օւտեն: 169-171 դարձեալ հրէաների դէմ: 172 դարձեալ մահմէտականների աղօթքի մասին: 173-175 արիւննեղութեան մասին: 176-181 պահք պահելու ամիսը: 182 բոլորովին նոր խօսք Մուհամէզին: 183-184 դարձեալ նոր խօսքք ատանց բացատրութեան: 185 այս տունի մէջ երկու բալորովին տարբեր խօսքեր՝ մինն ասում է լուսնի փոփոխութիւնների մասին իսկ միւսը յանկարծ թէ «Կաւելի կողմից ձեր տունը մի մանէք այլ առաջին զոնեքովը»: Եւ այն իսկ մահմէտականներն զարմանում են այս անյարմար խօսքերի մասին: 186-191 Իսլամ կրօնքի համար պատեքազմի հրատան: 192-199 ուխտազնացութեան օրէնք: 200-204 մի անորոշ խօսք մէկ անզգամիք եւ մէկ բարեպաշտի մասին: 205-206 մի խրատ միւս-

լիմների: 207—210 մի խօսք հրէաներին: 211 ողորմութիւն տալու համար: 212—215 դարձեալ կրօնքի համար պատերազմ: 216 մէկ յայտնութիւն գինու եւ զքրամով խաղալու մասին, նաեւ ողորմութեան խրատ: 217—219 մի աստուածային խրատ որբեր: Վերաբերեալ: 220—221 ամուսնութեան արգելք: 222—223 կանանց ամսական մաքրութիւն եւ մի խիստ անբարոյական խօսք, «ձեր կնիկները արա են ձեզ համար, ուրեմն մտէք ձեր արտը որ կողմից ուզում էք»: 224—225 Ալլահից նոր խօսք: 226—228 ամուսնութիւնը լուծել: 239—240 մի աղօթք: 241 բաց թողւած որբեւայրիների մասին: 242—248 դարձեալ լուծւած կանանց վերաբերեալ: 244 անձանօթ անձանց մասին: 245—253 դարձեալ պատերազմի հրաման: 254 մի շատ անորոշ խօսք: 255 դարձեալ ողորմութիւն տալու պատուէր: 256 մի նոր միտք: 257 սա էլ մի ուրիշ նոր խօսք: 258—259 Աստուծոյ վերաբերեալ: 260—262 Աբրահամի մասին: 263—275 երկու երրորդ մաս ողորմութեան: 276—281 վաշխատունների գէմ: 282—284 այլ եւ այլ խօսքեր Մուհամմէդի, հաւատքի եւ աղօթքի համար:—Այս երկրորդ սուրէն ս'րչափ անկանոն եւ անկարգ գլուխ է: Բոլոր աշխարհքում մի խասնիխուն բաներ մէկ գրքի մէկ գլխումը երբէք չըկայ: Նոյն իսկ ամեն մի մահմէդական, որ մի բան է գրել, որչափ էլ բարձր գիտնական չէ, կարգով եւ կանոնով է գլուխ գլուխ գրում. բայց Աուրանը անսահման անկանոն է գրեթէ սկզբից մինչեւ վերջը:

Ընդհանրապէս բոլոր սուրէների մէջ խիստ շատ անհասկանալի գրւածքներ կան, որոնց հասկանալուն համար մահմէդական խելացի մարդիկը քանի՛ քանի՛ հարիւր նոր նոր պատճառներ եւ պատմութիւններ են հրնարում եւ ասում, թէ այսպէս եւ այսպէս բան է պատահել, եւ այդ մասին է Աուրանը այսպէս ասում, բայց գրանց ամենն էլ սուտ եւ հնարած բաներ են: Այստեղ միայն մէկ օրինակ բերենք: Աուրանի 70-րդ սուրէի

սկզբումն այս խօսքը կայ՝ «սէէլէ սայըլուն», եւ դրա պարզ միտքը այսպէս է այսինքն «հարցրեց հարցնողը»՝ սակայն մահմէդական անթիւ գիտնականներէրց եւ ոչ մէկը չէ հասկանում, թէ այդ հարցնողը ով է: Ռւչազըութիւնն արէք թէ Ղուրանի խեղճ մեկնիչներն ինչ են ասում: մէկն ասում է, թէ կռապաշտ արաբ «նէզէբը իբն էլ Հարսէն է հարցրել», միւսը, թէ «Մուհամմէդի թշնամի Աբու Ճէհլն է հարցրել» կամ «Իրանց մարգարէ Մուհամմէդն է հարցրել»: Սիրելի հայեր, կը տեսնէ՞ք, թէ որչափ անհասկանալի է Ղուրանի մեծ մասը: Սա մի մեծ մութ բան է, որովհետեւ այն նէզէբը եւ Աբու-Ճէհլը Մուհամմէդի խիստ թշնամիներն են, եւ հիմա ամենագիտուն մահմէդականները չեն իմանում, թէ այն խօսքը «հարցրեց հարցնողը» թշնամիներն են ասել թէ իրանց մարգարէն:

Շատ անգամ էլ պատահած է Ղուրանում, որ գիտնական մէկը ուրիշի հնարած մեկնութեանը չէ հաւատում եւ ինքը մի նորն է շինում, եւ այսպէս շատ մութ տեղեր կան Ղուրանում, ուր երկու երեք չորս եւ մինչեւ հօթը եւ ասելի տեսակ տեսակ հնարած մեկնութեան պատճառներ կան: Բայց ոչ միայն Մուհամմէդի մութ խօսքերը հասկացնելու համար նրա ժամանակին վերարեւել միտքեր են հնարում, այլ նաեւ Մովսէսի, Փարաօնի, Աբրահամի, Նոյի եւ Ադամի մութ պատմութիւնները բացատրելու համար դարձեալ նոր նոր բաներ են մտածում եւ գրում: Ահա՛ սա է պատճառը, որ Ղուրանը իբր յօրինած կերպովը չէ հասկացում, եւ այդ մասին իսլամի բոլոր գիտնականները խիստ արգիլեր են, թէ Ղուրանը որոշ կերպով բառ առ բառ չը պէտք է թուրքերի, պարսիկների եւ ուրիշ մահմէդական ազգերի համար թարգմանել, այլ պէտք է անպատճառ մեկնութիւններով միասին թարգմանել, որովհետեւ առանց այդ հնարած մեկնութիւններին կամ

Ղուբանը բոլորովին չի հասկացել, կամ շատ անկարգ եւ անառակ բաներ կը կարգացուի:

Մահմէդական գիտնականներից ոմանք անհնում են թէ Ղուբանում Մուհամմէդի մէկ հասիկ հրաշքի համար մէկ խօսք չկայ, ուրեմն հաստատում են, թէ նրա հրաշագործութիւնը Ղուբանում նրա բացարձակ «ֆէսահէթ ու բէլադէթն» է, այսինքն նրա ճարտարաստութիւնը եւ ոտանաւորանման ոճերը: Բայց այդ հրաշագործութիւն չէ. առաջ պէտք է սա իմանալ, որ Ղուբանի միմիայն մի քառորդ մասը ունի կիսատ ոտանաւորի նման ոճեր, իսկ երեք քառորդը շատ պարզ հասարակ խօսքեր են: Եւ այն ոտանաւորների պէս զըրւած սուրէններն ու այէթները ամենալաւ արարելէն գիտցողներին համար մեծաւ մասամբ անհասկանալի են: Բայց հարիւրէն աւելի կատարեալ պերճանխօս արար բանաստեղծներ կան եւ հրաշագործ չեն: Մի երեւելի պարսիկ ասում է՝ մէկ անգամ, «բանաստեղծութիւնում երեք մարդարէներ կան՝ Ֆիրդուսի ու Սա'ադի ու Անվէրի»: Եւ մէկն էլ նրան ասում է, «այդա Հաֆըզը» նա էլ պատասխանում է, «ո՛հ, ո՛հ, Հաֆըզը աստուած է»: Ուրեմն Ղուբանը սկար բան է:

Բուն կրօնական մահմէդականներն ասել են եւ ասում են, թէ Ղուբանը այս աշխարհի ստեղծելուց առաջ Աստուած երկնքումն իր աթոռին մօտ գրել է եւ յետոյ մաս առ մաս յայտնել է Մուհամմէդին, ուրեմն այս Ղուբանը ճիշտ այն երկնային Ղուբանի օրինակն է. սակայն եզել են եւ այնպիսի շատ խելացի մահմէդական գիտնականներ, ինչպէս Մէ'մուն թաղաւորը եւ իր ժամանակից գիտնականներից ոմանք եւ մանաւանդ երեւելի մեկնիչ Ջամախարին պարզ խելքով իմանալով որոշ պնդում են, թէ Ղուբանը յաւիտենական հին գիրք չէ, այլ սոսկ Մուհամմէդի գաղափարներն են: Իրաւ եթէ Աստուծոյ խօսքերը լինէին, պէտք էր, որ Աստուած աշխարհի ամեն մարդկանցից աւելի պարզ խօսած լինէր. բայց չկայ:

ՂՈՒՐԱՆԻ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Աբու-Աբգու լ-
լահ Մուհամմէզ անունով լաւ մահմէդական գիտնականը
մի գիրք է հեղինակել, ուր բուն իսկ իրանց կրօնա-
հիմն Ղուրանից մի քանի հարիւր պարզ եւ որոշ հակա-
սութիւններ է ներկայացնում: Նա ասում է, թէ Ղու-
րանի հարիւր տասնչորս սուրէներէից եօթանասուն մէ-
կին մէջ իրար հակառակ եւ իրար ջնջող խօսքեր կան,
այսինքն վեց սուրէներում ջնջողներ, քառասուն սու-
րէներում ջնջւողներ եւ քսանհինգ սուրէներում ջնջող-
ներ եւ ջնջւողներ կան: Օրինակի համար նա քառա-
սունութ սուրէներէից հարիւր տասնչորս տուներ է բե-
րում, ուր Ղուրանը հրամայում է բազմատուած մար-
դիկների այսինքն կոսողացաների, քրիստոնեաների եւ
հրէաների հետ խաղաղ կերպով վարել, եւ այդ պատ-
ւէրները եղել են Մէքքէ քաղաքում, ուր տկար Մու-
համմէզը քիչ հաւատացողներ եւ շատ հակառակ մարդիկ
ունէր, իսկ երբ նա փախաւ եկաւ աղքատ Մէդինէ
քաղաքը եւ այնտեղ շատ զինւորական հաւատացողներ
գտաւ, այն ժամանակ Աստուածանից մի քանի հրա-
մաններ բերեց թէ «սպանեցէք բազմատուածներին
ուր որ նրանց գանէք», եւ այսպիսի մի քանի պատ-
ւէրները ջնջում ոչնչացնում են Ղուրանի այն խաղա-
ղութեան շատ խօսքերը: Նա սոյց է տալիս, թէ Ղու-
րանում ջնջւածներն են 2-րդ սուրէի մէջ 26, էլ Իմ-
րանում 5, Նիսայում 24, Մա'րքէյում 9, Էնանում 14,
Է'էրաֆում 2, Էնֆադում 6, Թովքէյում 7, Եունքսում,
4, Հուզում 3, եւ այսպէս վերեւ յիշւած եօթանասուն-
մէկ սուրէներում մի քանի հարիւր իրար հակառակ
ջնջւող եւ ջնջող այէներ կան, եւ այդ գիտնական
միւսընթիւն նպատակը միմիայն սա է, թէ Աստուած
Մուհամմէզին, մինչդեռ սա Մէքքէյումն էր, շատ հրա-
մաններ է տւել, իսկ երբ նա եկաւ Մէդինէ, այնտեղ
Աստուած ինքը իր տւած հրամաններն ու խրատները
ջնջեց եւ նոր հրամաններ տւեց: Սակայն ամէն մար-
դու լաւ յայտնի է, որ Մուհամմէզը Մէքքէյում եղած

իր տկար ժամանակը այնտեղի իրան հակառակ մարդկանց գէժ՝ մեղժ՝ խօսքեր էր ասում, իսկ նրբ փախաւ Մէդինէ, նա այնտեղ շատ հաւատացողներով հղօրացած իր հին խաղաղ կեանքը, նպատակները եւ կանոնները ոչնչացրեց իր Մէքքէցի թշնամիներին գէժ, եւ նոր արիւնտտ հրամաններ բերեց, եւ թէ՛ ինքը եւ թէ՛ իր բազմաթիւ հաւատակից միւսլիմները սկսեցին քարաւաններ, գիւղեր եւ քաղաքներ կողոպտել, շատ շատ մարդիկ սպանել եւ հազարներով կանայք, աղջկերք եւ տղերք գերի բռնել:

Թէեւ մահմէդականները Մուհամմէդին արդարացնելով իրանց Ղուրանի շատ հակասական խօսքերը Աստուծուն են վերագրում, իբր թէ Աստուած մէկ անգամ այսպէս եւ միւս անգամ այնպէս է հրամայել, բայց մենք Ղուրանը կարդալիս տեսնում ենք, ոչ թէ միայն այս եւ այն ասած վարչական պատուէրներն են փոխւած, այլ ուրիշ պատմական հակասութիւններ էլ շատ կան: Կարդացէք Ադամի, Նոյի, Աբրահամի, Իսմայէլի, Իսահակի, Յակոբի, Յովսէփի, Մովսէսի, Ահարօնի, Փարաօնի, Դաւիթի, Սողոմոնի պատմութիւնները Հին Կտակարանում, եւ կարդացէք Նոր Կտակարանի խօսքերը, ահա՛ կը տեսնէք, որ Մուհամմէդը անգրագէտ լինելով այստեղ այնտեղ տգէտ հրէաներից եւ քրքրխոտոնաններից շինծու պատմութիւններ լսելով ինքն էլ կոմ յիշողութեան տկարութիւնովը կամ դլխաւորապէս իր նպատակների համար նորանոր եւ այլանդակ աւելացրած պատմութիւններ է խօսել: Կարդացէք Ադամի մասին 2-դ սուրէի 28-32 համարը, 7-դ սուրէի 10-17 համարը: Կայնիի եւ Արէլի մասին 5-դ սուրէի 5, 33-34 համարը: Նոյի մասին 26, 105-121: Աբրահամի մասին 21, 51-69: Դաւիթի մասին 34, 11-13, 38, 29-39: Սողոմոնի մասին 27, 15-45: Մովսէսին համար Մուհամմէդը խիստ շաց պատմութիւններ է խօսում Ղուրանում, գրեթէ այդ գրքի մի երրորդ մասը միայն Մովսէսից, Ահարօնից եւ Փարաօնից է խօսում, նա

և 18-դ սուրէյում Մովսէսի մասին մի այլանդակ պատմութիւն անելով խօսում է նաև Ձուլգարնէյն Աղէքսանդր մակեդոնացուն հաշար, թէ նա ղէպի արեւմուտք գնալով աշխարհիս այն ստափարակ տեղը գտաւ, ուր արեգակը ցեխոտ դաշտին մէջ մար էր մտնում, նոյնպէս էլ իբր թէ գնաց ղէպի արեւելք եւ գտաւ աշխարհքիս այն դաշտը, որտեղից ծագում էր փոքրիկ արեգակը այս մեր շատ մեծ աշխարհքի գաշտիցը:

Այսպէս էլ Ղուրանի 2, 61. 5 65. 7 166 համարներում ասում է Մուհամմէզը, թէ Աստուած խորայէլացիներին պատժելով նրանց կապիկներ եւ խոզեր շինեց: Կամ Սինայ սարը բարձրացրեց եւ խորայէլացիներին գլխին վրայ կախեց նրանց վախեցնելով, որ իր պատիրանքները պահեն, 2, 60-87. 4, 153: Եւ որովհետեւ խորայէլացիները Մովսէսին չէին հաւատում եւ չէին հնազանդում, Աստուած իբր թէ նրանց մեռցրեց եւ լետոյ դարձեալ կենդանացրեց, 2, 52-53: Նաև ասում է Մուհամմէզը, թէ այս պատմութիւնները, որ չին եւ նոր կտակարանին հակառակ բաներ են, իբր թէ Աստուած ինքն է իրան յայտնել, կարգացէք 7, 99. 10, 51-102. 121. 12, 3, 103. 4, 161-162, եւ որովհետեւ Մուհամմէզն Աստուածաշունչը կորցաւ չը գիտէր եւ սոգէտ հրէաներից էր աւելորդ պատմութիւններ լրսում, եւ ինքը իր ուզածը շինում եւ ասում էր իբր թէ Աստուած է իրան մի քանի բաներ սովորեցնում եւ մի քանիոր ոչ, 40, 78: Սակայն արաբներն ասում էին իրան թէ «Ղուրանը սուտ է եւ ինքն է հնարում. 25, 5-6. կամ մի ուրիշ երկրացի է նրան պատմում, եւ նա էլ իրան պաշտպանելով չէ ասում թէ լսել է կամ ինքն է հնարում, այլ ասում է թէ Ղուրանը արաբերէն է. 16, 105 ուրեմն իրաւ արաբերէն է, բայց եւ շինած անճշմարիտ բաներ է:

Ղուրանը շատ անգամ գովում է Մովսէսի հինգ գիրքը, Սաղմոսը, մարգարէների գիրքը եւ նոր կտակարանը: Նա մէկ անգամ ասում է. «եւ պէտք է Աւե-

տարանի տէրերը դատեն նրանով ինչ որ Աստուած ուզարկել է նրանում. ուրեմն ով որ չը դատէ նրանով ինչ որ սւղարկել է Աստուած, ահա նրանք ամբարիշտներ են» (5, 51): Նա գովում է նոյնպէս եւ քրիստոնեայ քահանաները եւ վարդապետները: (5, 85):

Ղուրանի 19, 8 համարում ասում է Մուհամմէզը իբր թէ Աստուած ասեց Ջաքարիային թէ «քեզ մի որդի կրտամ անունը Յովհաննէս, մինչդեռ այսպիսի անուն տակաւին ոչ ով չէ ունեցել»: Ղուրանի այս խօսքն էլ լաւ ապացոյց է, որ Մուհամմէզը Աստուածաշունչը չը գիտէ. որովհետեւ Յոհաննան անունը կայ Դ. թագ. 25, 23, Երեմ. 40, 8, 13, 15, 16, 41, 11, 13-15, 42, 1, 8, 43, 2, 4, 5, Ա. մնաց. 3, 15, Եզր. 8, 12:

Մէկ ազիտական պատմութիւն ասում է Մովսէս մարգարէի համար. 18, 59-81:

Մահմէդականների այդ խիստ յարկած Ղուրանը ընդհանրապէս խրթին լինելու պատճառով լաւ չեն հասկանում, միայն միշտ կարգում են եւ անդիր էլ անում: Բայց եթէ բառ առ բառ թարգմանել ինչպէս Աստուածաշունչը մի քանի հարիւր լեզուների թարգմանած է, այն ժամանակ մահմէդականներից շատերը նրա սխալները, անկանոնները, հակառակութիւնները եւ անբարոյական ու անարդար դատողութիւնները կ'արդարով Ղուրանը իսկոյն կը մերժեն: Ուրեմն այտուղ մի քանի հակասութիւններն էլ միայն թւանշաններով յեշիմ կարգացէք 4, 45 եւ 6, 23, 23, 103 եւ 37, 27, 41, 8-9, 41, 10-11, 79, 27-30 եւ 7, 52, 10, 3, 10, 9, 25, 60, 32, 3, 50, 37, 54, 4. նոյնպէս էլ 15, 92, 37, 24, 7, 5 եւ 55, 39 եւ բացի սրանցից ուրիշ բազմապատիկ հակասութիւններ էլ կան:

Յովսէփի մայրը շատ վաղուց էր մեռել, Ծննդ. 35, 19. Մուհամմէզը նրան դեռ շատ երկաթի է ապրած համարում: 12, 100

28 սուրէի սկզբումը Մուհամմէզ Եսթերի գրքում Ասուերոս պարսիկ թագաւորի Համանը իրան ամենա-

բարձր կառավարչապետը շինուած անձը Եգիպտոսի Փա-
րաօնի մեծ իշխանն է կարծում:

Մուհամմէդի բնկերները նբա սիրուն կնոջ Այլէէի
մասին կասկածոտ բարոյական բաներ էին խօսում, նա
նրանց ծեծելով պատիժներ տւեց: Սուրէ 24.

Գիրք թւոց 19-դ եւ Բ. Օրինաց գրքի 21 դիւի
սկզբումը երկու կերպ կովերի մասին է գրւած, իսկ
Մուհամմէդն Աստուածաշունչը չգիտնալով խառնում է:
(2, 68-69):

Ղուբանի վերաբերեալ տակաւին շատ ասելիք խօս-
քեր ունենք: Մուհամմէդը մասամբ Արէստինացի թա-
գսուորին օգնութիւնը եւ մասամբ էլ Արարիայում ե-
ղող քրիստոնեաներին շահելու համար ասում Ղուբա-
նում, թէ «Յիսուսը ծնւել է կոյս Մարիամից» (3, 40-42),
«Նա գերագոյն անձ է այս աշխարհքում» (3, 40), «Աս-
տուծոյ մարգարէ է» (19, 31), «Աստուծոյ ծառան է»
(19, 31), «Աստուծոյ ուղարկածը» (4, 169), «Աստուծոյ
Հոգին» (4, 169), «Ճշմարտութեան խօսքը» (19, 35)
«Աստուծոյ խօսքը» (4, 169), «Մեսիան» այսինքն Գրիա-
սան է (3, 40): Բայց որովհետեւ բոլոր Ղուբանում
Յիսոսի դէմ մէկ հատիկ յանդիմանութիւն չկայ, ու-
րեմն նշանաւորը սա է, թէ ո՛րչափ շատ յանդիմանու-
թիւններ կան բուն Մուհամմէդի դէմ: Կարգացէք 6, 52
67. 176, 9, 43. 108. 114, 10, 94 եւ հետեւեալը, 10, 111,
19, 23. 27 25, 54 26, 213, 28, 85-88, 29, 7, 33, 1. 47, 68,
10. Մուհամմէդին վերաբերեալ այս յանդիմանութիւն-
ները օրինակի այսպիսի խօսքեր են, «ո՛վ Մուհամմէդ,
եթէ դու այս կամ այն բանն անես, դու անարդարնե-
րիցն ես», «կռապաշտներիցն ես եւ կեղծաւորներիցն
ես»: Կամ «որովհետեւ դու այս եւ այն բանն արել ես,
քո մեղքի համար ներողութուն խնդրի՛ր»: Կամ «վա-
խի՛ր Աստուածանից եւ մի՛ հնազանդիր կռապաշտնե-
րին եւ կեղծաւորներին»: Սա մարգարէի՞ կեանք է.
ո՛չ: Այս յանդիմանութիւնները ոչ թէ Աստուած է ա-
սել, այլ այն քրիստոնեաները, որ նրան կրօնական

բաներ էին պատուում: Մուհամմէզը երեւելի կռապաշտ արարների ընծաներ է տալիս. որ մահմէդական դասնան: (9, 60): Մուհամմէզը անուս աղէտ մարդ էր, լըսել էր, թէ Ահարոնը մի քոյր ունէր անունը Մարիամ, եւ որովհետեւ Յիսուսի մօր անունն էլ Մարիամ էր, կարծում էր թէ այս Մարիամը եւ այն Մարիամը մի եւ նոյն անձն են եւ Յիսուսի մօրը ասում է «ով Ահարոնի քոյր» 19, 29. մինչդեռ այն եւ այս Մարիամի մէջ 1500 տարիներ կան:

Տեսէք Ղուրանը ինչե՛ր է ասում:

Աստուած սուտ երդում անող մուսուլմաններին չէ պատճելու: (5, 91): Ուրեմն մուսուլմանները թող սուտ երդումներ անեն. որչափ էլ ուզեն:

Աստուած ամեն մի ազգի նրա մասնաւոր կրօնքն է տւել. ուրեմն Մուհամմէզն էլ պէտք է իր կրօնքումը մնայ: (5, 52-53): Ով որ իրան մարգարէին հաւատում է, պէտք է որ ոչ մի բանից չը վախենայ: (7, 33): Ապա ինչո՞ւ հա՛ւար Մուհամմէզը հարիւրներով իրան չը հաւատացող հրէաներ էր սպանում. եւ իրան ժողովուրդն էլ հիմայ այսչափ անթիւ հայեր են սպանում: Մուհամմէզն ասում է, թէ Աստուած ոչ կնիկ ունի եւ ոչ սղայ, (72 3). բայց իբր թէ քրիստոնեաները հաւատում են, թէ Մարիամը Աստուծոյ կնիկն է եւ Յիսուսն էլ տղան: (5, 116): Ո՛հ, ո՛րչափ սխալ: Դեւերը եկել Մուհամմէզից Ղուրանը լսել եւ իսլամ կրօնը ընդունել են: (սուրէ 72):

Մուհամմէզը մէկ անգամ քարոզելիս կուռքեր դաւանեց, բայց ասում է, թէ աստանան է այդ խօսքը իրան բերանը դրել որովհետեւ աստանան միշտ խօսքեր է դնում մարգարէների բերանը: (22, 51): Այս սուտ խօսքովն ինքն է իրան արդարացնում:

Աստուած մահմէդականներին իր ասած եւ տւած պատուիրանքները հեշտացնում է, (8, 67) որովհետեւ չեն կարողանում կատարել

Ղուրանի 33-դ սուրէյի 49 համարում գրւած է

ուղղակի Մուհամմէդին, «ով մարգարէ, ես քո կնիկներդ քեզ համար արտօնացրել եմ մաքրութեամբ», եւ երկու տուն յետոյ 52 համարում դրա հակառակ գրւած է «այսուհետեւ քեզ համար այլեւս կնիկներ արտօնւած չեն»: Մուսուլման գիտնականներից ոմանք ասում են, թէ Մուհամմէդն առաջ իրաւունք ունէր ուզած չափովը կնիկներ առնել, իսկ յետոյ արգիլւեցաւ նրան, բայց ուրիշներն էլ ասում են, թէ առաջ արգիլւած էր, բայց յետոյ Ալլահն իրան հրաման տւեց, որչափ կնիկներ ուզէ առնէ: Միայն սա յայտնի է, որ նրա իննը կնիկները շատ դէմ էին նրան, իսկ նա միշտ կնիկներ էր դանում մինչեւ իր կեանքի վերջը, ինչպէս Այիշէ կինն էլ ասում է:

Մուհամմէդի Ալլահը հեշտացնում է միւսիլմներին հրամայած օրէնքները, բայց խիստ պահանջում է միւս ազգերից: 8, 67: Կողմնապահութիւն է:

Չը հաւատացողներին պէտք է վիզը եւ մատերը կտրտել. 8, 12:

Ղուրանում մէկ անգամ ասում է, թէ քսան մուսուլմաններ պատերազմելիս երկու հարիւր թշնամի եւ հարիւր մուսուլմաններ հազար թշնամի կը յաղթեն, բայց դրանից յետոյ մի ուրիշ հակառակութիւն է, թէ «հարիւր մուսուլմանները երկու հարիւր թշնամի, եւ հազար թշնամի կը յաղթեն»: 8, 66-67: Շատ հաւանական է թէ առաջին գաղափարը Մուհամմէդն է ասել, իսկ երկրորդը կա՛մ Օմարը կա՛մ Օսմանն է ուղղել, մինչդեռ այդ երկրորդ միտքն էլ չափազանց է: Եթէ Ղուրանի խօսքը ճշմարիտ լինէր, պէտք էր Հնդկաստանի 70 միլիոն մահմէդականները իրանց վրայ իշխող մի միայն մէկ կամ շատ շատ երկու միլիոն անգլիացիներին վազուց յաղթած ոչնչացրած լինէին: Բայց ո՞ւր է:

Մուհամմէդն ուզում էր իր ասած պատիմները ուրանալ, որովհետեւ Աստուծոյ չէր կատարում, իսկ արարները ծիծաղում էին. 11, 15:

Նա ուզում էր կռապաշտ դառնալ. 4, 87:

Ալլահը որին ուզում է, տանում է ուղիղ ճանապարհը եւ որին էլ ուզում է ծուռ ճանապարհն է տանում. 4, 90. 6, 39 եւն. եւն.:

Ալլահը մահմէդականներին շատ կողոպուտներ է տալիս. 48, 19:

Մուհամմէդը պէտք է ինքը կասկածոտ եղած ժամանակը Սուրբ Գրքի ժողովուրդներէցը հարցնէ. 10, 94: Ուրեմն մանաւանդ մահմէդականներն էլ պէտք է քրիստոնեաներից շատ բան հարցնեն, բայց Աստուածաշունչն անգամ չեն կարգում:

Նա երբեմն ուզում էր ինքն իրան սպանել. 10, 5, 26, 2: Դա ճշմարիտ մարգարէ է՞:

Նա առաջ ոչ Սուրբ Գիրքը գիտէր եւ ոչ հաւատքը. 42, 52: Նա ծուռ ճանապարհում էլ էր եղած. 93, 7:

Մահմէդականներն իրանց շինած գրքերում պատմում են թէ իրանց մարգարէն չորս հարիւրից աւելի հրաշքներ է արել, բայց եթէ Ղուրանը կարգաք, կը տեսնէք որ այն ժամանակի կռապաշտ արարները նրանից հրաշքներ են պահանջում աւելի քան քառասուն տեղեր եթէ նա իրաւ Աստուածանից ուղարկւած մարգարէ է: Իսկ նա քառասուն անգամ էլ ասում է, թէ ինքը միմիայն վախեցնող եւ ուրախացնող է, բայց հրաշքները Աստուծոյ մօտն են: Կարգացէք գոնէ 7, 188, 29, 49, 38, 70, 46, 8 եւն.:

Մուհամմէդը շատ արարածներով է երգում անում եւ իր միտքերն ասում, բայց երեք անգամ էլ միմիայն երգում է անում եւ ոչինչ չէ վկայում. 79, 35 եւ 89 սուրէների սկզբումը:

Ղուրանը հրամայում է, թէ կնիկները ձեռեցէք. 4, 38:

Ղուրանն ասում է թէ ոչ ով իրաւունք չունէ Աստուծոյ խօսքը փոխելու. 6, 34, 115. 18, 26, բայց Մուհամմէդը ինքը փոխում է. 16, 103. 11, 100:

Ղուրանը շատ բաներ է կրկնում. նա յիշում է քա-

նի անգամ Ադամին, Նոյին 17 անգամ Իսրայէլին, 23 անգամ Արրահամին 24 անգամ Փարաօնին, 32 անգամ Մովսէսին: Աւրեմն Մուհամմէզը Աստուածանից յայտնութիւններ չունէր, եւ հրէաներից լսածներն էլ միշտ կրկնում:

Ով սիրելի հայեր, դուք այս համառօտ վկայութիւնները կարդալով տեսնում էք, թէ բնչքան անթիւ եւ անհամար տարբերութիւն կայ մեր Սուրբ Աւետարանի եւ այս արաբ Մուհամմէթի Ղուրանին մէջ: Սրբ. Աւետարանը Աստուծոյ որդի Քրիստոս Յիսուսի խօսքերը, հրաշքները եւ կեանքը սկզբանէ մինչեւ վերջ մաքուր, ճշմարիտ, համաձայն, սուրբ աստուածային են, բայց Ղուրանը որչափ ինքն իրան հետ հակասութիւններ ունէ, նոյնպէս էլ սկզբիցը մինչեւ վերջը Քրիստոսի Սուրբ Աւետարանին հակասակ կարգեր եւ կանոններ է խօսում: Դուք գիտէք, որ Մուհամմէզն ինքը շատ կողոպտումներ, գերիներ, մարդասպաններ է արել, իսկ Յիսուսը՝ ոչ ինքն արել է մի այդպիսի անիրաւութիւն եւ ոչ էլ իր աշակերտներին կամ քրիստոնեաներին այդպիսի հրաման տել: Մեր Հայ ազգը աճա՛ 1300 տարի է արարներից, ո՛րչափ հազարաւոր մարդիկ է կորցրել. ո՛րչափ գերիներ են արել, ո՛րչափ հողեր եւ երկիրներ յափշտակել, — եւ այս ամէնը նրանք անում են իրանց Ղուրանի եւ Մուհամմէզի խօսքերովը եւ օրէնքներովը որ իրանք միմիայն կողոպտումներով ապրեն: Բայց Աստուծոյ ճշմարիտ օրէնքը սա է, թէ «քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո». եւ նոր կտակարանն էլ ասում է, «ով որ չէ ջանք անում եւ աշխատում, թող չուտէ»: (ԲԹ. Ես. 3, 10) Ահա քրիստոնեաները Եւրոպայում եւ Ամերիկայում միշտ աշխատում, միշտ խելքով, մտքով ու քրտինտով գործում եւ լաւ յառաջադիմում են, իսկ խեղճ ու թշուառ մահմէդականները միմիայն ուրիշներին եւ շատ անգամ էլ իրանք միմեանց սպանելով ու կողոպտելով են ապրել մինչեւ այսօր, բայց հիմայ որ տկար են, ազքատ են

և այլեւս կողողտելու զօրութիւն և աշխատանքով
ապրելու գիտութիւն չունեն, խիստ աղքատացել և
տղէտ ու կարօտ են մնացել: Իսկ Ղուբանը հրամայել է
մահմէդականներին 14 սուրէներում, որ պատերազմ ա-
նեն, մարդիկ սպանեն, գերիներ բռնեն և շատերին
մուսուլման շինեն, որ աշխարհի բոլոր մարդիկը այդ
կրօնքով լինեն: Գոնէ կարգադէք 2, 214—215. 188,
189. 3, 136. 4, 76—79. 91, 93. 5, 39—59. 6 106. 8,
39—42 և.ն. 9, 5. 6 և նոյնիսկ մինչեւ 87—89 և.ն.:

Շատ պէտք է որ մենք քրիստոնեայ հայերս Աս-
տուծոյ մեզ տւած սուրբ և արդար խօսքովն ապրենք
ու միմեանց իբր ճշմարիտ եղբայրներ սիրենք և օգ-
նենք առանց մի մազի չափ միւս քրիստոնեայ եղբօր
փնաս հատուցանելու, այլ միւս կողմանէ էլ մեր բոլոր
կարողութեանը չափ մեր դրացի թուրքերին, պար-
սիկներին և քիւրտերին ճշմարտապէս սիրելով խրա-
տենք, ճշմարտութիւնն ասենք և օգնութիւններ ա-
նենք, և մանաւանդ նրանց իրանց կրօնքի անասն-
ման և անթիւ փնասակար սխալները և Սուրբ Աւե-
տարանի աստուածային ճշմարտութիւնը իմացնենք:
Ամենակարող աստուածը այս բարի և ճշմարիտ նպա-
տակների համար օրհնէ և օգնէ մեզ Սուրբ Հոգիովը
իր Որդի Յիսուս Կրիստոսի սիրոյն համար: Ամէն:



4920

2013

